Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱԿՈԲ ԶՈՐՅԱՆ

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2015

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)
Զ 834

Հրատարակության պատրաստեց
Պ. Հ. Հովհաննիսյանը

Զորյան Հ. Ն.
Զ 834 Պատմագիտական ուսումնասիրություններ: - Եր.: ԵՊՀ հրատ., 2015, 384 էջ:

Պատմագիտական ուսումնասիրությունների սույն ժողովածուն ընդգրկում է ԵՊՀ հիմնադիր դասախոսներից մեկի՝ Հայոց պատմության ամբիոնի վարիչ, պատմության ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Հակոբ Զորյանի (1894-1942)՝ միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերություններին ու հայ պատմագրությանը նվիրված ուսումնասիրությունները: Հավելված բաժնում տրվում են պատմաբանի հրապարախոսության առանձին միավորներ: Նման ընդգրկումով ու բովանդակությամբ Հակոբ Զորյանի կյանքն ու գործն առաջին անգամ է ներկայացվում:

Հասցեագրվում է հայագետներին և ընթերցող հանրությանը:

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 978-5-8084-1926-1

© ԵՊՀ հրատ., 2015
© Հովհաննիսյան Պ. Հ., 2015

ՀԱԿՈԲ ԶՈՐՅԱՆ

Մարդը, քաղաքացին և հայրենասերը

Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի դեկան, Հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ Հակոբ Նշանի Զորյանի կյանքն ու գործն առ այսօր չի արժանացել պատշաճ գնահատականի և ուշադրության: Լույս տեսած մեկ-երկու հոդվածները հնարավորություն չեն ընձեռում ճիշտ արժևորվելու նրա գործն ու դերակատարությունը ոչ վաղ անցյալի հայ ժողովրդի կյանքում:

Այս աշխատությամբ առաջին անգամ է Հակոբ Զորյանը ներկայանում հանրությանը ոչ միայն իր գիտական ժառանգությամբ, այլև ազգային-հայրենասիրական գործունեությամբ:

Հակոբ Զորյանը ծնվել է 1894 թ. օգոստոսի 25-ին Տրապիզոնի կուսակալության հայաշատ Օրդու քաղաքում՝ Նշան և Ազնիվ Զորյանների ավանդապահ արհեստավորական ընտանիքում: Ութ տարեկան հասակում՝ 1902 թ., կորցրել է հորը, որ պանդխտության էր մեկնել Սուխում: Մայրը անասելի զրկանքներով ու տառապանքներով մեծացրել է իր չորս զավակներին և նրանց տվել լիարժեք կրթության: Ծննդավայրի հայկական դպրոցն ավարտելուց հետո պատանի Հակոբը 1908 թ. մեկնել է Կ. Պոլիս և ընդունվել Պերպերյան համբավավոր վարժարանը, որը փայլուն առաջադիմությամբ ավարտել է 1912 թվականին: Հ. Զորյանը ուսումնառության ընթացքում հրապուրվել է ՀՀ Դաշնակցության գաղափարներով և 18 տարեկանում անդամագրվել այդ կուսակցությանը:

1912 թ. նա վերադարձել է ծննդավայր, ուր մինչև 1914 թ. զբաղվել է ուսուցչությամբ: Առաջին աշխարհամարտի սկսվելուց հետո զորակոչվել է թուրքական բանակ: 1915 թ. գարնանը լքել է զինվորական ծառայությունն ու փախել Բուլղարիա[1], ուր հաստատվել է Ֆիլիպպուպոլիս, ապա՝ Շումլե քաղաքներում: Շումլեում չորս տարի (1915-1919) եղել է տեղի հայկական վարժարանի տնօրեն: 1919 թ. կեսերին վերադարձել է Թուրքիա, փնտրել և գտել Հայկական Գողգոթայի մահասփյուռ ուղիներից հրաշքով փրկված մորը: Այդ օրերի մասին նա վերհիշում է. «Մայրս, որ անիմանալի պատահականությամբ էր փրկվել պատերազմի ընթացքում Օսմանյան Թուրքիայում տեղի ունեցած հայկական սարսափելի կոտորածներից, երկար պատմում էր, թե ինչպես տեղահանության ընթացքում իմ բազմաթիվ հարազատներ դաժանորեն սպանվել կամ մահացել են քաղցից ու ծարավից»[2]:

Հ. Զորյանը Կ. Պոլսում ծավալել է կուսակցական լայն գործունեություն. ընտրվել տեղի դաշնակցական կազմակերպության կոնֆերանսի պատգա-

---

[1] ՀՀ ազգային արխիվ, ֆ. 1191, ց. 1, գ. 1101, թ. 131:

[2] Նույն տեղում, թ. 337:

մավոր, կուսակցական-կազմակերպչական աշխատանք կատարել Պարտիզակ, Ադաբազար և Իզմիր քաղաքներում[1]:

Բարձրագույն կրթություն ստանալու նպատակով 1919 թ. սեպտեմբերին մեկնել է Շվեյցարիա և ընդունվել Լոզանի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետ: Այստեղ նա սովորել է ընդամենը մեկ ուսումնական տարի և 1920 թ. մայիսին տեղափոխվել Բեռլին, ուր ուսումնառությունը շարունակել է չափազանց հայտնի «Կայսր Ֆրիդրիխ Վիլհելմ» համալսարանի քաղաքատնտեսության ֆակուլտետում: Նույն թվականի ամռանից սկսել է աշխատակցել Բեռլինում ՀՀ դիվանագիտական առաքելությանը, որը գլխավորում էր Ջեյմս Գրինֆիլդը (1870-1939):

Հայկական առաքելությունում էլ նա ծանոթանում է հայոց ցեղասպանության գլխավոր հանցավորներին ահաբեկող «Նեմեսիս» գործողության[2] կազմակերպիչ, ԱՄՆ-ից ժամանած Շահան Նաթալիի (1884-1983) հետ: Այսպես Հ. Զորյանը անդամակցել է հույժ գաղտնի այն խմբակին, որը առաջադրանք է ստացել ահաբեկչական ակտ կազմակերպել գլխավոր հանցագործ, Օսմանյան կայսրության երբեմնի ներքին գործերի նախարար Մեհմեդ Թալեաթ փաշայի դեմ: Բացի Հ. Զորյանից՝ խմբակի մեջ էին մտնում նաև Սողոմոն Թեհլերյանը, Լիպարիտ Նազարյանցը, Հրաչ Փափազյանը և Վահան Զաքարյանը: Ահաբեկչական գործողության իրականացումը վստահվել է Ս. Թեհլերյանին, իսկ մյուսները պետք է այն նախապատրաստեին:

Հ. Զորյանի մասնակցությունը ահաբեկչական գործողությունն իրականացնելիս չափազանց մեծ է եղել: Նա Հրաչ Փափազյանի հետ օրեր, շաբաթներ և ամիսներ շարունակ փնտրել[3] և ի վերջո գտել է ծպտված Թալեաթի հետքը, որ Ալի Սալեհ ծածկանվան ներքո բնակվում էր Հարդենբերգ փողոցի N 4 շենքում: Հ. Զորյանն է ճանաչել Թալեաթին և Թեհլերյանի համար բնակարան (N 37) վարձել ճիշտ նրա տան դիմաց: Այդ իրադարձությունների մասին Ս. Թեհլերյանը հիշում է. «Մարտի 2-ն էր, կիրակի, իրիկնամուտ: Հազորը անմիջապես գործի անցավ: Եռանդուն, աչքաբաց, բարեխիղճ և կազմակերպչական ամեն աշխատանքի համար անփոխարինելի մեկն էր նա: Խորհրդակցությունից հազիվ անցել էր երկու-երեք ժամ, և ուզում էինք

[1] ՀՀ ազգային արխիվ, գ. 1093, ց. 1, թթ. 137, 138:

[2] 1919 թ. Երևանում հրավիրված ՀՀ Դաշնակցության 9-րդ ընդհանուր ժողովն ընդունել է հույժ գաղտնի մի որոշում, որը հետագայում անվանվել է «Հատուկ գործ» կամ «Հայկական Նեմեսիս». նպատակը Մեծ եղեռնի պատասխանատու թուրք ղեկավարներին հաշվեհարդարի ենթարկելն էր (**Ս. Վրացյան**, Հայկական նյութերթերգը, տե՛ս **Ա. Շիրակյան**, Կտակն էր նահատակներուն, Բեյրութ, 1965, էջ 55-61, «Թեհլիրյան արդարահատույցը», խմբ. Հ. Քյուրքճյան, Բեյրութ, 1981):

[3] Գործողության անմիջական կազմակերպիչ Շահան Նաթալին վկայում է. «Վեց հոգեհան ամիսներ տևեր էր Թալեաթի հասցեն գտնելը» (տե՛ս **Ա. Երկանյան**, Գիրք մատուցման և հատուցման, Բոստոն, 1949, էջ 108):

դուրս գալ ընթրելու, երբ Հազորը շնչահատ ներս մտավ, հայտնեց, թե Հարդենբերգի թիվ 4-րդ բնակարանի դիմաց՝ թիվ 37 բնակարանում, վարձել էր մի սենյակ, որի պատուհանը նայում էր փողոցին. կարելի էր փոխադրվել մարտի 5-ին»[1]:

Վերջապես 1921 թ. մարտի 15-ին՝ առավոտյան ժամը 10:00-ին, Բեռլինի Շարլոտենբուրգ պողոտայի Հարդենբերգ փողոցում Թեհլերյանը գնդակահարել է դահիճին[2]: Ազգային հերոսի դատավարության ընթացքում պաշտպանությունը իրականացրել են երեք դատապաշտպաններ: Նրանցից առաջին փաստաբան դոկտոր Ադոլֆ ֆոն Գորդոնի հետ հանդիպման ժամանակ Թեհլերյանն անակնկալի է մատնվել՝ տեսնելով Հ. Զորյանին, որ եկել էր իբրև թարգմանիչ: Վախենալով, որ Զորյանը կարող է ճանաչվել և վտանգի մատնվել, Թեհլերյանը նրան խնդրել է բանտում այլևս չերևալ[3]: Երեքամսյա դատավարությունից հետո, ի վերջո, Բեռլինի նահանգային դատարանը 1921 թ. հունիսի սկզբներին արդարացրել է Թեհլերյանին և նրան ազատ արձակել դատարանի դահլիճից:

Այս ամբողջ ընթացքում և հետագա տարիներին Հ. Զորյանը շարունակում է ուսումնառությունը Բեռլինի համալսարանի քաղաքատնտեսության ֆակուլտետում, խորացնում գիտելիքները սոցիալական ուսմունքների բնագավառում, հրապուրվում կոմունիստական գաղափարներով: 1922 թ. վերջերին նա հեռանում է և բոլոր կապերը խզում ՀՀ Դաշնակցությունից: Դժվար է ասել, թե որն է եղել այդ խզման պատճառը, բայց ակներև է, որ նա ամբողջությամբ իրեն նվիրել է Խորհրդային Հայաստանի իրականության քարոզչությանը: Այդ շրջանում գործուն մասնակցություն է ունեցել Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) Բեռլինյան գրասենյակի գործունեությանը, Գերմանիայի ուսանողական և երիտասարդական սոցիալիստական շարժմանը, Ի. Լեփսիուսի և Ջ. Գրինֆիլդի հիմնադրած «Գերմանա-հայկական ընկերության» աշխատանքներին: 1921-1923 թթ. եղել է Բեռլինում սովորող հայ ուսանողների միության, իսկ 1924-1925 թթ.՝ Խորհրդային Անդրկովկասի ուսանողների միության նախագահը[4]: Լայնորեն աջակցել է գրականագետ, լրագրող Սիմոն Հակոբյանի (1880-1942) խմբագրությամբ Վիեննայում, ապա Բեռլինում հրատարակվող գրական, գիտական և հասարակական «Արեգ» ամսագրի աշխատանքներին՝ որպես մշտական գործակից (1922-

---

[1] Տե՛ս **Սողոմոն Թեհլիրյան**, Վերհիշումներ (Թալեաթի ահաբեկումը), Բ տպագրություն, Կահիրե, 1956, էջ 295: Զգուշության նկատառումներով հուշագրությունում Թեհլերյանը Հակոբ Զորյանին անվանում է **Հազոր**, Վահան Զաքարյանին՝ **Վազա**, իսկ Հրաչ Փափազյանին՝ **Հրափ**:

[2] Մանրամասները տե՛ս **Ս. Թեհլիրյան**, նշվ. աշխ., էջ 235-427, հմմտ. «Թեհլիրյան արդարահատույցը», Բեյրութ, 1981, ՀՀ ազգային արխիվ, ֆ. 1191, ց. 1, գ. 1093, թթ. 113, 139:

[3] **Ս. Թեհլիրյան**, նշվ. աշխ., էջ 337:

[4] ՀՀ ազգային արխիվ, ֆ. 1191, ց. 1, գ. 1093, թթ. 113, 142:

1924), իսկ 1924 թ. օգոստոս - 1925 թ. մարտ ամիսներին՝ որպես խմբագիր: 1923-1925 թթ. «Արեգ»-ում և Նյու-Յորքում լույս տեսնող Ամերիկայի բանվորական կուսակցության հայկական հատվածի «Պրոլետար» շաբաթաթերթում տպագրել է շուրջ հինգ տասնյակ հրապարակախոսական բնույթի հոդվածներ, որոնք տոգորված են Խորհրդային Հայաստանի նկատմամբ ջերմ համակրանքով: Հ. Զորյանի գաղափարական շրջադարձն ու հայացքների էվոլյուցիան հստակորեն դրսևորվում են նրա «Աշխատավորական միջազգայնականներու պատմական զարգացումը»[1], «Հայաստանի խորհրդայնացման չորրորդ տարեդարձի առթիվ»[2], «Տնտեսական և սոցիալական կյանքը Խորհրդային Հայաստանի մեջ»[3] և այլ հոդվածներում: Նույն ամսագրում «Կովկասյան» ծածկանվան ներքո[4] հրատարակել է Խորհրդային Հայաստանի տնտեսությանը, մշակույթին և ժողովրդի առօրյային վերաբերող բազմաթիվ ակնարկներ: Հատկանշական է, որ 1924 թ. Հ. Զորյանը հրաժարվել է թուրքահպատակությունից և ընդունել խորհրդային քաղաքացիություն:

Այս շրջանում նա սերտ հարաբերություններ է հաստատել մեծ հումանիստ և հայասեր Իոհաննես Լեփսիուսի հետ: Պոտսդամում բնակվող Լեփսիուսին հրավիրել է Բեռլին՝ Դոյչենգոֆ հյուրանոցի հանդիսությունների սրահում Հայաստանի խորհրդայնացման 4-րդ տարեդարձի առթիվ կազմակերպված հոբելյանական հանդեսին: Իսկ 1925 թ. հունվարի 30-ին կնոջ՝ Էսթեր Զորյանի (1896-1962) հետ այցելել Լեփսիուսին վերջինիս Պոտսդամի բնակարանում[5]:

Բեռլինի համալսարանում ուսանելու տարիներին (1920-1925) Հ. Զորյանը աչքի է ընկնում արտակարգ աշխատասիրությամբ ու ընդունակություններով, մասնագիտանում սոցոլոգիայի, քաղաքատնտեսության և պատմագիտության բնագավառներում: Փայլուն տիրապետելով գերմաներենին, ֆրանսերենին ու թուրքերենին, մասամբ նաև անգլերենին՝ նա բնագրով ընթերցում է պատմա-տնտեսագիտական բազմաթիվ նշանավոր ուսումնասիրություններ, որոնցից տարբեր նյութեր հետագայում լայնորեն կիրառում է իր գիտահետազոտական աշխատանքներում: 1925 թ. մայիսին համբավավոր գիտնականներ Վ. Զոմբարտի և Յու. Մարկվարտի գիտական ղեկավարությամբ մեծ հաջողությամբ պաշտպանում է «Սոցիալական շեր-

[1] Տե՛ս «Արեգ», Բեռլին, 1923, N 9, էջ 545-560, N 10, էջ 617-624, N 11, էջ 689-697:

[2] Նույն տեղում, Վիեննա, 1924, N 17, էջ 1074-1087:

[3] Նույն տեղում, N 18, էջ 1134-1140:

[4] ՀՀ ազգային արխիվ, ֆ. 1191, ց. 1, գ. 1104, թ. 13:

[5] Տե՛ս **Г. Гольтц, Р. С. Корхмазян,** доктор **И. Лепсиус**. Страницы жизни (По материалам архива И. Лепсиуса), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ». XII. Թուրքիա, Երևան, 1985, էջ 128, նաև ծան. 74:

տավորումը միջնադարյան Հայաստանում» խորագիրը կրող ատենախոսությունը, որի համար արժանացել է փիլիսոփայական գիտությունների դոկտորի աստիճանի (մասնագիտությունը՝ պատմություն): Երկու տարի անց ատենախոսությունը լույս է տեսնում որպես առանձին մենագրություն[1]:

1925 թ. հոկտեմբերին Խորհրդային Հայաստանի կառավարությունը Հ. Զորյանին հրավիրել է Երևան՝ դասավանդելու պետական համալսարանում: Ուշագրավ է, որ միաժամանակ նա հրավեր էր ստացել նաև Փարիզից՝ այստեղ հիմնադրելու և խմբագրելու քաղաքական, ընկերային և գրական «Երևան» եռօրյա թերթը: Առանց երկմտելու՝ Զորյանը ընդունում է Հայաստան տեղափոխվելու առաջարկը: Արդեն հոկտեմբերի վերջերից նա Երևանի պետական համալսարանի հասարակագիտական և պատմագրական ֆակուլտետներում սկսում է դասավանդել «քաղաքատնտեսություն» և «Հայ ժողովրդի հին և միջնադարյան պատմություն» առարկաները:

Հ. Զորյանը բուռն գործունեություն է ծավալել՝ անմիջապես ներգրավվելով հանրապետության գիտական, մանկավարժական և հասարակական կյանքի բնագավառներում: Երիտասարդ ու տաղանդավոր մտավորականը ամենապատասխանատու պաշտոններ է զբաղեցրել վերը նշված բոլոր ոլորտներում՝ Հանրային գրադարանի տնօրեն (1928-1929), Երևանի պետական համալսարանի սոցիալ-տնտեսագիտական ֆակուլտետի դեկան (1928-1930), Առևտրակոոպերատիվ տնտեսագիտական ինստիտուտի տնօրեն (1930-1931), համալսարանի Հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ (1930-1937), ՀԽՍՀ գիտությունների ինստիտուտի գիտնական-քարտուղար (1931), ՀԽՍՀ կուլտուրայի և պատմության ինստիտուտի տնօրեն (1932-1935), Պատմության պետական թանգարանի տնօրեն (1935-1936), Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի դեկան (1936-1937): Գիտամանկավարժական անդուլ գործունեության համար 1926 թ. ընտրվել է ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի պատմա-հասարակագիտական բաժնի թղթակից-անդամ, 1929 թ. նրան շնորհվել է դոցենտի, 1936 թ.՝ պրոֆեսորի կոչում: Գործուն մասնակցություն է ունեցել Մարքսիստ-պատմաբանների հանրապետական ընկերության ստեղծմանը (1928), եղել նրա հիմնադիր նախագահը[2]:

1930 թ. պետական, կուսակցական ու գիտական նշանավոր գործիչներ Հայկ Գյուլիքեխյանի, Հակոբ Հովհաննիսյանի, Արտաշես Կարինյանի

---

[1] **Agop Sorian**, Die Soziale gliederung des Armenischen volkes in mittelalter, Leipzig, 1927, 115 S. Նախապես լույս է տեսել «Armeniaca» հայագիտական հանդեսում (Leipzig, 1927, fasc. II, S. 11-113):

[2] Մաքսիստ-պատմաբանների ընկերությունը գործել է մինչև 1931 թվականը: Ընկերության խնդիրների ու գործունեության մասին տե՛ս **Շ. Հարությունյան**, Պատմագիտության զարգացումը Սովետական Հայաստանում. 1920-1963 (ուրվագծեր), Երևան, 1967, էջ 18-19, 23:

և Հայկ Ազատյանի երաշխավորագրերով ընդունվել է ՀամԿ(բ) կուսակցության շարքերը: Նա կարևոր մասնակցություն է ունեցել համալսարանի և հանրապետության հասարակական կյանքին. եղել է համալսարանի արհմիութենական տեղկոմի նախագահ, բնակարաններ բաշխող հանձնաժողովի նախագահ, ՀԱՄԽ-ի նախագահության անդամ և այլն: Մասնակցել է և զեկուցումներով հանդես եկել Մարքսիստ-պատմաբանների համամիութենական առաջին համագումարում (Մոսկվա, 1929), իրանական արվեստի պատմության հարցերին նվիրված միջազգային կոնգրեսում (Մոսկվա, 1935) և գիտական այլ նստաշրջաններում (Երևան, Թբիլիսի):

Հ. Զորյանի հասարակական-մանկավարժական ու վարչա-կազմակերպչական գործունեությունը զուգակցվել է գիտական բուռն աշխատանքով: Ճիշտ է, նրա գիտական ժառանգությունը մեծ չէ, և չի թողել ծավալուն մենագրություններ, սակայն ընդամենը տասը տարում (1927-1937) գրված նրա քսանից ավելի հոդվածները գրված են մեծ բարեխղճությամբ, գիտական պատասխանատվությամբ՝ հագեցված փաստական հարուստ նյութերով: Դրանցից շատերը այսօր էլ չեն կորցրել իրենց գիտական արժեքը և համարվում են հայ պատմագիտության մեծագույն ձեռքբերումներից: Խորհրդահայ պատմագիտության ավագ սերնդի մյուս ներկայացուցիչների նման Հ. Զորյանը ուսումնասիրության առարկա դարձրեց հին և միջնադարյան Հայաստանի հասարակական-տնտեսական կյանքը: Իր ուսումնասիրություններում նա համակողմանիորեն ներկայացնում է ավատատիրական Հայաստանում ծավալված դասակարգային պայքարի դրվագները, շահագործվող դասակարգերի ձգտումներն ու մտածումները, նրանց գաղափարախոսությունը, միջնադարում քաղաքայնացման գործընթացը, ավատատիրական քաղաքի ու գյուղի միջև ստեղծված հակադրությունը և այլն: Խորհրդային պատմագիտության մեջ Հ. Զորյանն առաջինն էր, որ սկսեց զբաղվել Հայաստանում արաբների վարած հարկային քաղաքականության և դրանից բխող հետևանքների մանրազնին հետազոտությամբ՝ ցույց տալով արաբների վարած տնտեսական ու հարկային քաղաքականության բոլոր բացասական հետևանքները:

Հ. Զորյանը զգալի ներդրում ունի նաև հայ պատմագրության հարցերի լուսաբանման բնագավառում: Նա առաջինն էր, որ փորձեց գնահատել ու արժևորել խորհրդային շրջանում ստեղծված պատմագիտական երկերը և հրատարակեց մի քանի հոդվածներ: Սակայն նրա այս աշխատություններում միակողմանի, սուբյեկտիվ դիրքերից են ներկայացվել խորհրդահայ պատմագրությանն ու նրա առանձին ներկայացուցիչներին (հատկապես Լեոյին, Բ. Բորյանին, Հ. Մանանդյանին) վերաբերող հարցերը, ճիշտ չեն դասակարգվել նախախորհրդային շրջանի պատմագիտական ուղղություններն ու հիմնախնդիրները: Հասկանալի է, որ նրա՝ այդ կարգի շատ մոտե-

ցումներ ու մեկնաբանություններ մեծ չափով աղերս ունեին և հետևանք էին այն տարիներին խորհրդային պատմագիտության մեջ տեղ գտած սխալ մտայնություններին, ինչպես նաև տիրապետող, քաղաքացիություն ստացած գռեհիկ-սոցոլոգիական տեսակետներին[1]: Այս կարգի տեսակետները, ինչպես իրավացիորեն նշում է Ա. Գ. Հովհաննիսյանը, «դժբախտաբար, ոչ միայն պատահական չէին, այլև հետզհետե ընդարձակվելով ու ներգործուն բնույթ ստանալով՝ հանգեցրին այն գրոհին, որին 1930-ական թվականներին անարդարացի կերպով ենթարկվեցին Երևանի համալսարանի կադրերը, սրանց թվում՝ նաև ինքը՝ պրոֆ. Հ. Զորյանը»[2]:

1935 թ. Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Աղասի Խանջյանի հանձնարարությամբ Զորյանը ձեռնամուխ է եղել միջնակարգ դպրոցների համար հայ ժողովրդի պատմության դասագրքի ստեղծման աշխատանքներին: Պատմության և գրականության ինստիտուտում նրա գլխավորությամբ ստեղծվել է հեղինակային խումբ, ուր ներգրավվել են ժամանակի ճանաչված պատմաբաններ Ս. Մարկոսյանը, Մ. Հասրաթյանը, Կ. Ղազարյանը և Վ. Պարսամյանը[3]: 1936 թ. ձեռնարկի առաջին մասը (սկզբից մինչև IX դարը), որի հեղինակը Հ. Զորյանն էր, արդեն շարադրված-ավարտված էր և քննարկման հանձնված Պատմության և գրականության ինստիտուտի գիտխորհրդին: Սակայն այդ ձեռնարկի հետագա ճակատագիրը մնում է անհայտ[4]: Ձեռնարկի երկրորդ մասի նյութերը հավաքված էին, և սկսվել էր շարադրման գործընթացը, երբ Հ. Զորյանը ձերբակալվեց: Դարձյալ Ա. Խանջյանի և հանրապետության Լուսավորության ժողովրդական կոմիսար Ա. Եղիազարյանի հանձնարարությամբ Հ. Զորյանի գլխավորած մասնագետների խումբը առաջին անգամ խորհրդահայ իրականության մեջ կազմել է Հայաստանի պատմական անցյալը (Ք.ա. II-I դդ.) ներկայացնող ուսումնական մի քարտեզ[5], իսկ հայ ժողովրդի պատմության ամբիոնում դասավանդվող առարկաների ցանկում

---

[1] Հ. Զորյանի երկերի սույն ժողովածուում տեղ գտած նմանաբնույթ աշխատանքներից բացի՝ տե՛ս նաև նրա մի շարք գրախոսություններ՝ նվիրված Բ. Բորյանի («Նոր ուղի», 1929, N5, տե՛ս նաև Բ. Բորյանի պատասխանը, նույն տեղում, 1929, N 7-8) և Հ. Մանանդյանի («Նորք», 1926, N 1, էջ 236-242, «Նոր ուղի», 1931, N 4, էջ 131-144, տե՛ս նաև Ա. Ստեփանյանի (Ակսել Բակունց) ընդդիմախոսությունը Զորյանին, «Նոր ուղի», 1931, N 5, էջ 153-159) առանձին ուսումնասիրությունների:

[2] **Ա. Գ. Հովհաննիսյան,** Հուշեր և բնութագրումներ, Երևան, 1969, էջ 121:

[3] ՀՀ ազգային արխիվ, ֆ. 1191, ց. 1, գ. 1093, թթ. 117, 133, գ. 1101, թթ. 166բ, 286, գ. 1104, թ. 324:

[4] Տարիներ անց՝ 1943 թ., Խ. Սամուելյանի, Հ. Հարությունյանի, Ս. Պողոսյանի հեղինակությամբ ԱրմՖԱՆ-ի հրատարակությամբ լույս տեսած «Հայ ժողովրդի պատմություն». միջնակարգ դպրոցների համար, մաս I (հնագույն ժամանակներից մինչև XVIII դ. վերջը) ձեռնարկը թե ի՞նչ աղերսներ ունի Հ. Զորյանի կողմից ստեղծվածի հետ, մնում է երկբայելի:

[5] Հ. Զորյանի ձերբակալության ժամանակ ուսումնական այդ քարտեզը բռնագրավվել է ներքին գործերի նախարարության աշխատակիցների կողմից. այժմ գտնվելու վայրը անհայտ է:

ավելացվել «Հայաստանի պատմական աշխարհագրություն» դասընթացը[1]:

Դժբախտաբար, Հ. Զորյանի այսքան բուռն գիտական, մանկավարժական և կազմակերպչական գործունեությունն ընդհատվել է ուժերի ամենածաղկուն շրջանում: Այդ տարիներին Խորհրդային երկրում մոլեգնող կամայականությունների և հետապնդումների գաղջ մթնոլորտը չշրջանցեց նաև նրան: Հ. Զորյանը ևս դարձավ պետական-կառավարական ջարդարար մեքենայի զոհը: Իսկ չշրջանցելու «հիմքերը» չափից դուրս շատ էին: Արտասահմանում, մանավանդ Գերմանիայում, տարիներ շարունակ բնակվելը, օտար լեզուների իմացությունը, արտասահմանյան քաղաքացիների և ոչ միայն հարազատների հետ նամակագրական կապը, այնտեղից գրականություն ստանալը, ՀՀ Դաշնակցության անդամ լինելը, վերջապես մասնակցությունը Թալեաթ փաշայի սպանությանը և բացահայտ, անսքող այլ հանցանշաններ: Խորհրդային պատժիչ մարմինների համար սրանցից յուրաքանչյուրը հիանալի առիթ կարող էր ծառայել ձերբակալության օրդերը ստորագրելու համար: Եվ այդ պահը չուշացավ:

1937 թ. օգոստոսի 8-ին Հ. Զորյանը կալանավորվել է՝ «ընդհատակյա հակահեղափոխական ազգայնական կազմակերպության անդամ» հանդիսանալու համար՝ ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 63, 67 և 68-րդ հոդվածներով նախատեսած մեղադրանքով[2]:

Հետագայում՝ 1939 թ. փետրվարի 7-ին, Հ. Զորյանին առաջադրվել է նոր մեղադրանք՝ ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 58, 59 և 19-65-րդ հոդվածներով: Նա մեղադրվել է խորհրդային իշխանությունը տապալելու և Հայաստանում բուրժուա-դաշնակցական կարգեր հաստատելու նպատակով զինված ապստամբություն, ինչպես նաև Համ(բ)ԿԿ և Խորհրդային Միության ղեկավար գործիչների նկատմամբ ահաբեկչական գործողություններ նախապատրաստելու մեջ[3]: Բացի այդ՝ նրան մեղադրանք է առաջադրվել 1930 թ. մարտին Դարալագյազում բռնկված գյուղացիական ապստամբությունը նախապատրաստելու և այն գաղափարապես ղեկավարելու համար[4]:

Հ. Զորյանի քրեական գործի (N 6585) յոթ ստվարածավալ հատորնե-

---

[1] Հետաքրքրությունից զուրկ չէ այն հանգամանքը, որ հարցաքննության ընթացքում սույն դասընթացը ներկայացվել է որպես անհերքելի փաստ դրա հեղինակի «ազգայնական, բուրժուական, դաշնակցական» թափթփուկ լինելու վերաբերյալ (տե՛ս ֆ. 1191, ց. 1, գ. 1091, թ. 67):

[2] ՀՀ ազգային արխիվ, ֆ. 1191, ց. 1, գ. 1091, թ. 55: Երևանի պետական համալսարանում դաշնակցական գաղտնի հակահեղափոխական կազմակերպության անդամ հանդիսանալու վերաբերյալ մեղադրանք է առաջադրվել նաև համալսարանի 19 այլ պրոֆեսորների: Ահա թե ինչու այս գործը ստացել է «պրոֆեսորների գործ» անվանումը:

[3] Նույն տեղում, ֆ. 1191, ց. 1, գ. 1091, թ. 70: Հ. Զորյանը մասնավորապես մեղադրվել է Անաստաս Միկոյանի նկատմամբ մահափորձ նախապատրաստելու մեջ:

[4] ՀՀ ազգային արխիվ, գ. 1104, թ. 311:

ը պարունակում են 1937 թ. օգոստոսից 1941 թ. սեպտեմբերը՝ չորս տարի շարունակվող հարցաքննությունների արձանագրություններ, մեղադրական եզրակացություններ, մեղադրյալի պաշտպանական ճառեր, հանրապետության ու երկրի ղեկավարությանը (Լ. Պ. Բերիա, Գ. Ա. Հարությունյան և այլոց) ուղղված դիմումագրեր և այլ փաստաթղթեր:

Չնայած պարբերաբար կրկնվող ծեծին, կոտանքներին ու բռնաճընշումներին՝ Հ. Զորյանը, պահպանելով մարդկային ու քաղաքացու արժանապատկությունը, ոգու արիությունն ու հավատը արդարության նկատմամբ, իր պաշտպանական ճառերից մեկում շեշտել է. «Իմ նկատմամբ հատուցված բոլոր մեղադրանքները սուտ են, զրպարտություն, շինծու և արդյունք քննիչների հիվանդ երևակայության: Այո՛, ես 1912-1922 թթ. եղել եմ դաշնակցություն կուսակցության անդամ: Ահա՛ իմ կենսագրության այն գլխավոր կետը, որից ելնելով՝ քննիչները հորինել-սարքել են իմ գործը: Մեղադրանքի հիմնական կետերից մեկն էլ այն է, որ ես՝ որպես դաշնակցական, 1921 թ. մարտին կազմակերպչորեն մասնակցել են Էնվեր փաշայի գործակից, պանթուրքական շարժման պարագլուխ, իմպերիալիստական պատերազմի ընթացքում Օսմանյան Թուրքիայի ներքին գործերի մինիստր, ապա մինիստր-պրեզիդենտ Թալեաթ փաշայի դեմ կազմակերպված տեռորին»[1]:

Երկարատև ու բացահայտ բռնազբոսիկ քննության արդյունքում Անդրկովկասի զինվորական տրիբունալի՝ 1939 թ. սեպտեմբերի 6-ի որոշման համաձայն՝ պրոֆ. Հ. Զորյանը դատապարտվել է պատժի առավելագույն չափի՝ մահապատժի: Ի պատասխան զինվորական տրիբունալի այս որոշման՝ Հ. Զորյանը վերին ատյաններին ուղղված բողոքագիր է ներկայացրել. «Իմ գործում չկա ոչ մի փաստաթուղթ, արձանագրություն կամ իրեղեն ապացույց, որը կհաստատի մեղադրանքի որևէ կետ, - բացատրում է նա:

- Ինչպես նախնական, այնպես և դատական նիստին մերժեցին իմ միջնորդությունը՝ փորձաքննության միջոցով պարզելու միջնակարգ դպրոցների համար իմ կազմած «Հայոց պատմության» դասագրքի քաղաքական սկզբունքայնությունը, իսկ այդ դասագրքի կազմելը հանդիսանում է Ռազմական տրիբունալի ընդունած մեղադրանքի կետերից մեկը: Այդ դասագրքում ամբողջությամբ արտացոլվում է իմ աշխարհայացքը, հետևաբար ճիշտ գնահատական տալու համար անհրաժեշտ պայման է փորձաքննության կատարումը, առավել ևս, երբ ինձ մեղադրում են, որ դասագիրքը կազմված է Աղասի Խանջյանի պատվերով և ազգայնական դրույթներով:

Ես կտրականապես հայտարարեցի և հայտարարում եմ, որ նշված դասագիրքը կազմված է կուսակցության ու կառավարության պահանջներին համապատասխան և քաղաքականապես միանգամայն սկզբունքային փաստաթուղթ է, սակայն անհիմն կերպով ճանաչվել է ազգայնական և դրվել

[1] ՀՀ ազգային արխիվ, ֆ. 1191, ց. 1, գ. 1104, թթ. 11, 12:

իմ մեղադրանքի մի մասի հիմքում: Անհասկանալի է, թե ինչով է բացատրվում իմ օրինական և արդարացի պահանջների մերժումը: Չէ՞ որ այն ամենը, ինչն ուղղված է ճշմարտության բացահայտմանը, պետք է ընդունվի, այլ ոչ թե մերժվի: Ո՞վ է շահագրգռված անմեղ մարդկանց դարձնել հրեշավոր հանցագործությունների կատարման մեղավորներ, որոնք մեր իրականության մեջ տեղի չեն ունեցել: Ինչո՞ւ ոչ ոք ուշադրություն չի դարձնում մեր բողոքների վրա և չի ցանկանում հավատալ ֆիզիկական ներգործության անթույլատրելի եղանակների գործադրման և այդ ճանապարհով մեղադրական նյութ հավաքելու մասին մեր հայտարարությունների ճշտությանը: Արդյո՞ք աչքի չի զարնում աղաղակող փաստի՝ կադրերը ջարդելու ցանկության առկայությունը: Ո՞ւմ հայտնի չէ, որ վերջին տարիներին պատմական իրադարձությունները ապացուցեցին, որ ժողովրդի թշնամիները վնասարարության ամենանախասիրելի եղանակ են ընտրել կադրերի ոչնչացման եղանակը՝ լավ իմանալով, որ կադրերն են որոշում ամեն ինչ:

Արդյո՞ք մեր գործի առաջացումը չի հանդիսանում վնասարարության վառ օրինակներից մեկը: Դժբախտաբար, դատավարության ժամանակ ևս դրան ուշադրություն չեն դարձրել, և դատավճիռը կայացվել է վարկաբեկված նյութի հիման վրա, որը հավաքվել է ներգործության պատժիչ միջոցների գործադրմամբ»[1]:

Յոթ ամիս մահապարտների խցում մնալուց հետո՝ 1940 թ. մարտի 27-ին, ԽՍՀՄ Գերագույն դատարանի զինվորական տրիբունալի կողմից այդ դատավճիռը բեկանվել է, և N 6585 գործը վերադարձվել լրացուցիչ քննության: Այս որոշումը Հ. Զորյանի մոտ հույսեր է արթնացրել գործի վարույթը կարճելու և իր արդարացվելու վերաբերյալ: Նման լավատեսության մասին է վկայում 1940 թ. հունիսի 20-ին ՀԽՍՀ լուսավորության ժողովրդական կոմիսարին ուղղված նրա դիմումը. «Այժմ ես 46 տարեկան եմ և գտնվում եմ գիտական աշխատանք կատարելու ամենահասուն տարիքում: Հսկայական քանակությամբ նյութեր եմ կուտակել՝ մի շարք գիտահետազոտական աշխատություններ գրելու: Հարգելի՛ կոմիսար, Ձեր միջոցով դիմում եմ հանրապետության Կոմիսարների խորհրդին և նրա հարգելի նախագահին՝ բոլորովին անմեղ մեկին վերադարձնելու աշխատանքներին, որոնք նրա էությունն են կազմել: Ես խորապես համոզված եմ, որ խորհրդային արդարադատությունը իր արդար խոսքը կասի»[2]:

Առավել անհիմն հուսադրական է 1941 թ. հունվարի 2-ին ՀԽՍՀ դատախազության կալանավորների վրա հսկող բաժնի դատախազին ուղղված դիմումը.

---

[1] ՀՀ ազգային արխիվ, ֆ. 1191, ց. 1, գ. 1093, թթ. 149, 150:

[2] Նույն տեղում:

«Քաղաքացի՛ դատախազ,

չորրորդ տարին է, որ ես լուր չունեմ իմ հարազատների մասին: Համաձայն իմ ունեցած տեղեկության՝ կինս դեռևս հոկտեմբեր ամսին պետք է բանտից ազատված լիներ. այս տեղի՞ է ունեցել, թե՞ ոչ[1]: Խնդրում եմ ինձ հայտնել, թե երկու երեխաներս (այժմ 12 և 14 տարեկան[2]) ո՞ւմ խնամքի տակ են գտնվում: Խնդրում եմ ինձ հայտնել, թե կինս ապրո՞ւմ է և որտե՞ղ է, երեխաներս ո՞ւմ խնամքի տակ են գտնվում: Այդ մասին կարելի է հարցնել իմ մորաքրոջ աղջկան՝ Եվնիկեին: Նա է, որ ինձ կանոնավոր ամեն ամիս փողի պերեդաչա է բերում: Խնդրում եմ միաժամանակ միջնորդել՝ ուր որ հարկն է, որ թույլատրվի ինձ ստանալ ձմռան համար կոշիկ և կրկնակոշիկ: Մորաքրոջս աղջիկը այդ կբերի: Չորրորդ տարին է՝ ամառային կոշիկով եմ և զբոսանքի ժամանակ մրսում եմ:

Հույս ունեմ, որ չեք մերժի իմ այս խնդիրքները կատարել:

Երևան, Կենտրոնական բանտ

3-րդ կորպուս, N 4 կամերա»[3]:

Սակայն լավատեսության որևէ հիմք չկար: Խորհրդային արդարադատությունը, հանձին ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության «Հատուկ խորհրդակցության», 1941 թ. սեպտեմբերի 3-ի որոշմամբ Հակոբ Զորյանին դատապարտել է ութ տարի ժամկետով ուղղիչ-աշխատանքային ճամբարային ազատազրկման[4]: Այս որոշումից անմիջապես հետո Զորյանը տեղափոխվել է Ուրալ՝ Չելյաբինսկից ոչ հեռու գտնվող քաղբանտարկյալների ամենադաժան կալանավայրերից մեկը: Այստեղ էլ, 1942 թ. ծանր ու երկարատև հիվանդությունից ամբողջովին հյուծված և ուժասպառ[5], վախճանվել է[6]:

---

[1] Էսթեր Տիգրանի Զորյանը, որ գերմաներեն է դասավանդել Երևանի պետական համալսարանում և Ռուսական երկամյա ուսուցչական ինստիտուտում, ձերբակալվել է 1938 թ. հունվարի 5-ին: Չնայած անմարդկային խոշտանգումներին՝ հրաժարվել է ամուսնուն մեղադրող որևէ փաստաթուղթ ստորագրել: Բանտարգելությունից ազատվել է 1946 թ.՝ առանց Երևանում բնակվելու իրավունքի: 1949 թ. դարձյալ ձերբակալվել և աքսորվել է Կրասնոյարսկ: Ազատվել է Ի. Ստալինի մահից հետո՝ 1954 թվականին:

[2] Խոսքը Հակոբ Զորյանի դստեր՝ Էռնա Զորյանի (ծն. 1929 թ., հետագայում՝ բժշկական գիտությունների թեկնածու) և որդու՝ Զորի Զորյանի (ծն. 1927 թ., հետագայում՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու):

[3] ՀՀ ազգային արխիվ, ֆ. 1191, ց. 1, գ. 1101, թ. 113:

[4] Նույն տեղում, գ. 110.2, թթ. 281:

[5] Ըստ բանտային բժիշկ Գ. Ի. Օկոնի եզրակացության՝ Հ. Զորյանը տառապել է ջղագրությամբ, այսինքն՝ նյարդային-հոգեկան ֆունկցիոնալ (ենրոզ) և նստանյարդի սուր բորբոքային (իշիաս) հիվանդություններով (տե՛ս ֆ. 1191, ց. 1, գ. 1091, թ. 69):

[6] Հ. Զորյանի կյանքի վերջին ամիսների վերաբերյալ տեղեկություններ չեն պահպանվել: Միայն հայտնի է, որ 1941 թ. դեկտեմբերի 31-ի գիշերը Չելյաբինսկի բանտում Նոր տարին դիմավորել են Կարո Մելիք-Օհանջանյանի հետ:

Տարիներ անց՝ Ի. Ստալինի մահից հետո, երբ Խորհրդային երկրում աստիճանաբար վերականգնվել են կյանքի բնականոն և բարոյական նորմերը, հետմահու արդարացվել է նաև Հ. Զորյանը: 1955 թ. ապրիլի 2-ին ԽՍՀՄ գլխավոր դատախազի հրամանով 1941 թ. սեպտեմբերի 3-ի՝ Հ. Զորյանի վերաբերյալ որոշումը բեկանվել է (չեղյալ հայտարարվել)՝ ապացույցների լիակատար բացակայության պատճառով[1], այսինքն՝ այն, ինչ չորս տարի շարունակ անհույս հետևողականությամբ փորձում էր ապացուցել ինքը՝ Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի դեկան, Հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, անբասիր, առաքինի ու ճշմարիտ հայրենասեր Հակոբ Զորյանը:

Հակոբ Զորյանի երկերի սույն ժողովածուն կազմելն ու այն հրատարակության հանձնելը միայն մի համեստ, սակայն անհրաժեշտ տուրք է նրա հիշատակին, անհայտ շիրիմին, գնահատական նրա ապրած կարճատև, սակայն բովանդակալից կյանքին ու գործին: Անհերքելի փաստ է, որ հանրությունը, ընթերցող և անգամ գիտական հասարակության մի զգալի մասը հնարավորություն չեն ունեցել ծանոթ լինելու ոչ միայն Հ. Զորյանի ժառանգությանը, որ ցրված է տարաբնույթ պարբերական մամուլի էջերում, այլև հենց իրեն՝ անհատին ու քաղաքացուն, որի մասին տեղեկությունները գտնվում են արխիվային դժվարհասանելի ֆոնդերում: Լիահույս ենք, որ այս գիրքը մասամբ լրացնելու է այդ բացը:

Հ. Զորյանի աշխատությունները լույս են տեսնում այն տեսքով, որ գրել է հեղինակը, միայն փոխվել է ուղղագրությունը: Մեր կողմից կատարված անհրաժեշտ հավելումներն ու ուղղումներն առնված են [ ] ուղղանկյունաձև փակագծերում:

Պ. Հ. Հովհաննիսյան

[1] ՀՀ ազգային արխիվ, ֆ. 1191, ց. 1, գ. 1105-1, թ. 1:

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵՆ: ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՇԵՐՏԱՎՈՐՈՒՄԸ

1. Հայաստանի նախաբնիկները

Խոսիլ հայ ժողովրդի ներքին շերտավորումներու մասին, հիմնվելով պատմական տվյալներու վրա, ծանր գործ է, որովհետև պատմական տվյալները, որ օտար և հայ պատմիչներեն կհասնին մեզ, չափազանց աղքատ գրականություն կներկայացնեն այս ուղղությամբ: Անշուշտ, թերևս շատ պահանջած կըլլայինք օտար պատմիչեն, որ մեր ժողովուրդի ներքին կյանքը մեզ նկարեր: Այստեղ երկու ազդակ գործած են, նախ՝ այդ շրջանի պատմություն գրելու հասկացողությունը, երկրորդ և կարևորը՝ հաղորդակցության նախնական միջոցները և այն դժվարությունները, որոնք գոյություն ունեին երկրե երկիր երթալու: Ուստի օտար պատմաբանները՝ հույն, հռոմայեցի, արաբ, բավականացած են զենքի հաջողություններ արձանագրելով և ատոր կողքին՝ ժողովրդային բարքերու, երկրի արգասավորության մասին լսածը կամ բախտի բերմամբ տեսածը հարևանցի արձանագրած: Ինչ կվերաբերի հայ պատմիչներուն, ասոնց մոտ թե՛ առաջին ազդակը իր դերը կատարած է, թե՛ այն հանգամանքը, որ անոնք կպատկանեին կրոնավորական դասի մը և ունեին ենթակայական հայեցակետ: Բացի այս, ըլլալով արքունի կամ իշխաններու քարտուղարներ, ժողովուրդի զանգվածը անտեսած են և ընդհանրապես հյուսած են արքային կամ նախարարին գովքը:

Այն շրջանին, երբ եվրոպական անխոնջ մտքի մշակներ հետաքրքրված են անցյալի ժողովուրդներով և երկրե երկիր թափառելով՝ պեղումներ կատարած, այս կերպով ժողովուրդի պատմության ու անոր տնտեսության վրա որոշ չափով լույս սփռած են, նույն այդ շրջանին տիրող կառավարությունը քաղաքական նկատումներով թույլ չէ տված, որ այդ պեղումները լայն չափով կատարվին Հայաստանի մեջ: Մեր ժողովրդային տնտեսությանը լուսաբանելու տեսակետե ապագային կատարվելիք այդ պեղումները մեծ դեր ունին խաղալու:

Ձեռնարկելով այսպիսի աշխատանք մը՝ մեր գլխավոր նպատակն է **հարցեր արծարծել** ապագայի համար, երբ թերևս ավելի բախտավոր պայմաններու տակ հայ ժողովուրդի տնտեսության հատկանշական գիծերը կարելի պիտի ըլլա վեր հանել:

Այս գետնի վրա մեծ ծառայություններ կարելի էր մատուցանել, եթե գտնվեին անհատներ մեր վերածնունդի շրջանեն, որոնք հետաքրքրվեն մեր ժողովրդային արդի տնտեսությունով, քանի որ ներկայի հայ ժողովուրդի տնտեսությունը, դժբախտաբար, իր հետամնաց հանգամանքով անցյա-

լեն շատ բան է պահած: Այս անտեսված ուղին որքան գիտության համար, նույնքան և մեր ազատագրության հարցին մեջ ունեցած է իր ճակատագրական հետևանքները:

Պատմությունն առանց կանգ առնելու իր ուղին կշարունակե, և եթե այժմեն չգիտակցինք ժամանակի պահանջներուն, հետևանքները ապագային շատ ավելի ճակատագրական կրնան ըլլալ: Նոր սերունդի գործը պետք է ըլլա երկրի անցյալի և ներկայի տնտեսական պայմանները ուսումնասիրել: Քաղաքական անցուդարձերը, որոնք վերջիվերջո իրանց հիմնական պատճառները տնտեսական գործոններուն մեջ ունին, այս ուղիով միայն հնարավոր կըլլա առարկայեն դատել: Ռոմանտիզմը տեղի պետք է տա այս նոր մտածելու և գործելու կերպին:

Անցյալի սոցիալ-տնտեսական պայմանները ուսումնասիրողին գլխավոր նպատակը պիտի ըլլա ցույց տալ այն տարբերությունը, որ գոյություն ունի ներկային և անցյալին մեջ: Իսկ այս նպատակին հասնելու համար մասնավորաբար հայ իրականության մեջ կհարկադրվինք ինդուկտիվ մեթոդին օգնության կանչել դեդուկտիվը:

Եթե ճիշտ է, որ հայ իրականության մեջ ներկայիս դասակարգերու բաժանումը եվրոպական երկիրներու պես խիստ շեշտված կերպով արտահայտված չէ, մյուս կողմե անուրանալի է, որ արդեն գոյություն ունեցող կամ կազմվելու պրոցեսին մեջ մեր դասակարգերը, մղվելով դասակարգային տնտեսական շահերե, կաշխատին իշխանությունը ձեռք ձգել: Ուրեմն իսկ երևույթներ, որ տնտեսապես առաջացած ժողովուրդներու մոտ այս գետնի վրա հայտ կուգան, նույն երևույթներուն առավել կամ նվազ չափով կրկնությունը կտեսնենք և հայ ժողովուրդին մեջ:

Որպեսզի անցյալը մեզ ավելի պայծառորեն ներկայանա, անհրաժեշտ է ներկայի տնտեսական, դասակարգային բաժանման հատկանշական գիծերը վեր հանել:

Դասակարգ (**Klasse**) բառը իր իսկական դիմագծությունը ստացած է կապիտալիստական իրավակարգին մեջ: Այժմու դասակարգին հատկանշական գիծերն են՝

ա. տնտեսական շահը (**ökonomische Interesse**),

բ. դասակարգային (**Klassen-und**),

գ. իշխանության սկզբունքները (**Machtprinzip**):

Տակավին կանուխեն ընկերաբաններ աշխատած են ընկերական անհավասարության դարման մը գտնել: Ասոնց հետախուզությունները առաջնորդած են երկու վարդապետություններու՝ լիբերալիզմի և սոցիալիզմի: Միջնադարյան ավատապետությունը, անոր հաջորդող մեծ հողատիրությունը և այժմու բուրժուազիան այլազան տնտեսական էպոխաներու արտահայտություններն են: Ընկերային այս շերտավորումները այլազան ժամանակներու

մեջ տարբեր բառերով արտահայտված են, այսպես՝ *խմբավորում* (**Gruppe**), *վիճակ* (**Stand**), *դասակարգ* (**Klasse**):

Հին քաղաքակիրթ ժողովուրդներու մոտ նույն երևույթը հայտ եկած է մի կամ մյուս դասակարգին ավելի կամ նվազ ուժեղ արտահայտությամբ: Միջին դարուն Եվրոպայի ընկերային շերտավորումը կրկնություն է դարեր առաջ Առաջավոր Ասիայի մեջ պատահածին:

***

Հայերու Հայաստան հասնելե առաջ Հայաստանի նախաբնիկները քաղաքակրթական որոշ աստիճանի հասած, զարգացուցած են մետաղական ճարտարարվեստը և արհեստական ջրաբաշխությունը. «Նշանավոր են անոնց ժայռերու մեջ փորած բնակարանները և սանդուխները, քաղաքները և ջրանցքները, որոնք հետո հայերու կողմե գործածվեցան և պահպանվեցան»[1]:

Պատմական այս հիշատակարանները տնտեսության որոշ շրջան կարտահայտեն: Նախքան ընկերային շերտավորումներու մասին խոսելը հարկ է այդ տնտեսական աստիճանը վեր հանել, քանի որ ժողովուրդներու ներքին շերտավորումները անմիջական հետևանք են անոնց ստեղծած տնտեսական շրջանին: Տնտեսական շրջաններու բաժանումը տնտեսագետներու կողմե երկար ատեն վիճաբանության նյութ դարձած է: Մեկնելով արտադրության և սպառման ձևերու և բաշխումի ու փոխանակության համար գործածված այլազան միջոցներե՝ զանազան տնտեսագետներ (**Friedrich List** և **Wildebrand**) հասած են տարբեր եզրակացություններու: **Karl Bücher** իր «Entstehung der Volkswirtschaft» նշանավոր գործով կթվի, թե վերջ է տված այս վեճին: Ըստ անոր՝ ժողովուրդներու տնտեսությունը կբաժնվի հետևյալ երեք աստիճաններու՝

ա. տնային տնտեսություն (Hauswirtschaft),

բ. քաղաքի տնտեսություն (Stadtwirtschaft),

գ. ժողովրդային տնտեսություն (Volkswirtschaft):

Յուրաքանչյուր տնտեսական շրջան ծնունդ տված է յուրահատուկ տընտեսական խմբավորումներու: Աշխատանքի բաժանումի բարդացումով այդ շերտավորումները սկսած են իրենց իսկական դիմագծությունը ստանալ:

Դժբախտաբար, ուրարտական հիշատակարաններու կողքին չունինք անոնց արտադրության ձևին նկարագրությունները: Այս մասին թերևս որոշ չափով լույս կսփռե Ստրաբոնի՝ Հայաստանի հարավային սահմաններու վրա ապրող ժողովուրդներու ընկերային շերտավորումներու մասին տված

[1] Prof. Dr. **J. Marquart**, Die Entstehung und die Wiederherstellung der armenischen Nation, Berlin, p. 14.

շահեկան տեղեկությունը[1]: Հավանական է, որ պատերազմեն առնված գերիներ և ժողովրդի այն մասը, որ իբրև ստրուկներ կգործածվեր, շինած են այդ հսկա հիշատակարանները: Հիմնվելով այդ պատմական շինություններու վրա, որոնք ահագին թվով բանվորներու աշխատանքին կկարոտին, կրնանք ենթադրել, որ Հայաստանի նախաբնիկները տնային տնտեսության շրջանը անցուցած են, այսինքն՝ արտադրության համար, տան անդամներեն զատ, գործածված են ուրիշ աշխատող բազուկներ:

Ժ. Մորգան այն տեսակետին է, որ Հայաստանի նախաբնիկները Ասորեստանի նման ունեցած են ավատական կարգեր. դրություն մը, որ շատ կհարմարեր անջատ իշխանություններու բաժնված երկրի մը[2]: Ավատական այս ձևը անհավանական չթվիր, քանի որ **Maximilian Streck**-ի և **Eberhart Schrater**-ի բաբելական և ասորական սեպագիր արձանագրություններու թարգմանության մեջ հաճախ կհանդիպինք Ասորեստանի թագավորներու նվաճումներ կատարելու ձևի նկարագրություններուն, որոնք ցույց կուտան, թե երկրի իշխանը բարձունքներու վրա շինած է իր դղյակը: Երևույթ մը, որ հատկանշական է ավատական իշխաններու մոտ:

Ամբողջ արձանագրություններու մեջ ժողովուրդի դասակարգային բաժանումներու մասին խոսք չըլլար: Կհիշատակվին միայն **երկիր**, **քաղաք** և **բնակիչ** հավաքական բառերը: Ասորա-բաբելական աշխարհակալներու համար ավելի արժեք կներկայացներ Առաջավոր Ասիայի վրա գերիշխանություն տարածելը, և կհետաքրքրվեին առավելապես այդ ժողովուրդներեն վերցված ավարներով, քան թշնամիին ներքին կյանքով:

Առնված ավարներեն կարելի է հետևցնել, թե ժողովուրդի պարապմունքը ինչ է եղած: Այսպես՝ ամեն արձանագրության մեջ հիշատակված «Ավար առինք արջառ, ոչխար, ձի և այլն» պարբերությունները ցույց կուտան, որ Հայաստանի նախաբնիկները վաղուց անասնապահությամբ պարապած են, իսկ ատոնց կողքին ցորեն, արմտիք, գինի հիշելը ցույց կուտա, որ ժողովուրդը պարապած է երկրագործությամբ: Արհեստավորներու գոյությունն ալ կասկած չվերցներ, քանի որ ավարներու ցանկին մեջ կհիշատակվին նաև «պղնձե անոթներ և գույնզգույն զգեստներ» առնված ըլլալը:

Ասորեստանի թագավորներու կողմե առնված երկրագործական այս արտադրությունները կամբարվին որոշ քաղաքներու մէջ[3]: Այդ շտեմարան-

---

[1] «Չորս մարդկային դասակարգեր կբնակին այս երկիրը՝ բացի այն դասեն, ուրկե թագավորներ կընտրվին: Առաջինը՝ գերագույն դատավորները և պատերազմի առաջնորդողները, երկրորդը՝ քահանական դասը, որ միաժամանակ դրացի ժողովուրդներու հետ սահմանային վեճերը կկարգադրե, երրորդը՝ պատերազմիկները և երկրագործները, չորրորդը՝ հասարակ ժողովուրդը, որ թագավորին ստրուկներն են և կգործածվին ամեն կարգի աշխատանքներու», **Strabo**, Geographie, էջ 923:

[2] **J. de Morgan**, Histoire du people Arménien, Paris, p. 58.

[3] «Սինաբու, Տիտու, Դամրամուսա և Տուշհա շտեմարան եղավ, ուր կհավաքվին Նայիրիե առնված բերքերը»:

քաղաքները ճիշտ ավատական քաղաքներու ձևով կնկարագրվին. «Տուշհայի սեպագիրերու համաձայն՝ Ասուրնասիրպալի թագավորության երկրորդ տարին Նիրբուե ճամբա կելլե դեպի Տուշհա, որ բավական ինկած էր: Քաղաքը նորեն ծաղկեցնելու համար պարսպով մը կպատե և մեջը արքունական դղյակ մը կառուցանել կու տա»:

Ուրեմն այս բոլորը կուգան ապացուցանել, թե այդ շրջանին տիրած է ավատական ռեժիմ մը, ուր անջատ իշխաններ ունեցած են դղյակներ և ագարակներ (**Hof**), ուր աշխատած են անոնց հպատակները և ավատապետին վճարած են բնական հարկ:

Կենտրոնական իշխանությունը գոյություն ունեցած չէ տևական կերպով: Հավանական է, որ պատմական այլազան էպոխաներու մեջ այս կամ այն զորավոր իշխանը իր հպատակության տակ առած ըլլա դրացի ավատապետները: Բայց անոր մահվնե վերջ իրերը ստացած են իրենց նախկին վիճակը, այսինքն՝ յուրաքանչյուր ավատապետ իր սահմաններուն մեջ գտնըված հպատակները ինքնուրույն սովորույթով և օրենքներով կառավարած է: Ինչպես պատահած է այս միջին դարու ավատապետներու մոտ, արտաքին թշնամիի հարձակումներու դեմ հաճախ մեկ ճակատ կազմած, և կամ ոմանք, վախնալով թշնամիին զորութենեն, անոր կողմը անցած են: Դղյակը ունեցած է յուրահատուկ տնտեսություն: Ագարակը, միջնադարյան Եվրոպայի իմաստով առնված, սեփականությունը կըլլա ավատապետներուն: Արդյունաբերող դասը, զուրկ արդյունաբերության բոլոր միջոցներեն, ենթարկված է ավատապետին, որուն տնտեսության բոլոր անհրաժեշտ հում նյութերը կհայթայթե բնական տուրքի դրությամբ: Արձանագրություններուն մեջ ոչինչ հիշված է հպատակին և ավատապետին հարաբերություններուն մասին:

Եթե նկատի ունենանք կրոնքի՝ նախապատմական շրջանեն սկսյալ ժողովուրդներու վրա ունեցած ազդեցությունը և քաղաքակրթական որոշ շրջանի հասած ժողովուրդներու մեջ կրոնական դասի կազմակերպումը, սխալ ենթադրություն մը ըրած չենք ըլլար, եթե ըսենք, թե հեթանոս նախաբնիկներու մոտ քահանայական դասը գոյություն ունեցած է յուրահատուկ առանձնաշնորհումներով, ինչ որ ապագա հայ պատմիչներու մոտ որոշակի հիշատակված է:

Ասորա-բաբելական հաճախակի հարձակումներուն ենթարկվող այս ավատական իշխանները, շատ բնական է, որ ունենային նաև պատերազմիկներ: Ասոնք, ըլլալով իշխանի շահերուն անմիջական պաշտպանը, անշուշտ, անոր կողմե որոշ առանձնաշնորհումներ վայելած են:

2. Ընդհանուր ակնարկ

Հայ ժողովուրդի հնագույն պատմության մեջ ոչ միայն սոցիալական հարցերու շուրջ, այլև առհասարակ պատմական անցուդարձերու մասին մթություն կտիրե[1]: Մեզ անծանոթ է, թե Քրիստոսից առաջ XIII դարեն մինչև VIII դարը հայ ժողովուրդը Փոքր Ասիայի մեջ ի՞նչ դեր կատարած է, և ի՞նչ եղած է անոր ներքին սոցիալական կարգ ու սարքը: Այն հանգամանքը, որ Արարատյան դաշտը տեղավորվելեն ի վեր (Ք. ա. VI դար) հայերը հարկատու եղած են պարսկական իշխանության, թույլ կուտա մեզ եզրակացնելու, որ եկվոր հայը Հայաստանեն դուրս անցուցած է իր թափառական ժողովուրդ ըլլալու շրջանը, այնտեղ հաստատվելեն հետո սկսած է արդյունաբերել և տիրապետողին կողմե իր վրա դրված հարկը վճարել[2]:

Դժվար է ենթադրել, թե եկվոր հայը Հայաստանի նախաբնիկներու հետ գոնե սկզբնական շրջանին բարեկամական հարաբերություններու մեջ մտած ըլլա, քանի որ դարեր պետք եղան, որ այդ ձուլման պրոցեսը տեղի ունենա: Անշուշտ, պայքար մը կար եկվորին և նախաբնիկին միջև, որ եթե շատ սուր կերպարանք չէ ստացած, պետք է վերագրել թերևս պարսկական լուծին: Պարսկական ազդեցությունը կասկածե վեր է: Նախքան այդ մասին խոսիլը անհրաժեշտ է հայ նահապետական ընտանիքին դիմագծությունը տալ, որ, անկասկած, հետագա սոցիալական շերտավորման պրոցեսին մեջ նշանակալից դեր խաղացած է:

Հայկական ընտանիքի սահմանադրությունը եղած է արենակցական: Տանուտերը, որ գլուխ կգտնվեր այդ բազմանդամ ընտանիքին, անսահման իշխանություն ուներ: Ընտանիքն ինքն իր մեջ տնտեսական ամբողջություն մը կկազմեր: Տնտեսական կարիքներու բավարարություն տալու համար ընտանիքի անդամներու մեջ ըստ սեռի աշխատանքի բաժանում մը տեղի ունեցած էր[3]: Այս ձևով կազմված ընտանիք մը ժամանակի ընթացքին ծնունդ պիտի տար նահապետին կամ ցեղապետին, որոնք պիտի ունենային նաև գավառին կամ նահանգին մեջ ներքին կառավարչական իշխանություն[4]:

Բարքերու և սովորություններու վրա հիմնված ընտանեկան այդ սահմանադրությունը թույլ չէր տար ընտանիքին անհատ անդամներուն ուրիշներու

---

[1] Ըստ նորագույն ենթադրության՝ հայերը, Կապադովկիայեն վերին Եփրատը անցնելով, գաղթած են VIII և VII դարերու ընթացքին նախ Կարնո բարձրավանդակը և հետզհետե սկսած են իրենց գաղութները տարածել դեպի Արարատյան դաշտը: Անոնց Բոսփորեն անցնելը կհաշվի Ք. ա. XIII դարում: **J. de Morgan**, Hist. du people Arménien, էջ 43-45:

[2] Քսենեփոնի արշավանք, գլուխ IV:

[3] Dr. **J. Karst**, Grundriss der Geschiehte des armenischen rechtes, Zeitschr. für Vergl. Rechtswiss, 1907, p. 22.

[4] Նույն տեղում, էջ 17:

հետ առանձնապես տնտեսական հարաբերություններու մեջ մտնել: Մինչ նոր ժամանակներու տնտեսական միությունը անհատն է, այդ ձևի ընտանիքներու մոտ տնտեսական միությունը ընտանիքն է իր ամբողջությամբ: Վրաստանի կարգ մը լեռնային մասերու մեջ, ինչպես և Հայաստանի այլազան վայրերու մեծ ընտանիքները շատ բան պահած են անոնցմե մինչև այսօր[1]:

Ընտանիքին կարիքներուն լիովին բավարարություն տալու ազդակն էր առավելապես, որ ծնունդ տված է մեծ ընտանիքին: Իսկ այդ ազդակին կողքին ոչ նվազ կարևոր գործոն մ'ալ ստիպած էր, որ անոնք միանային: Այդ գործոնը արտաքին թշնամիեն պաշտպանվելու հարցն էր: Հարց մը, որ մեծապես ազդած է նաև գաղութներ հիմնելու ձևին վրա: Այսպես, օրինակ, փոխանակ առանձնացած ագարակներու՝ սկզբնական շրջանին իսկ հիմնված են գյուղեր[2]:

Նահապետական ընտանիքի սկզբնական շրջանին դասակարգային շերտավորման սաղմերը գոյություն ունեցած են: Մեկ կողմեն նախաբնիկներու մոտ գոյություն ունեցած ավատական կարգերը, մյուս կողմե պարսկական ազդեցությունը փութացուցին այդ շերտավորումը: Տիրապետողին բարքերն ու սովորությունները առավելապես մուտք գործեցին գոյություն ունեցող ազնվականության մեջ: Ժողովրդային խավերու մեջ անոնք չի կրցան արմատ ձգել: Պարսկաստանեն ներմուծված իրավունքը եղավ և մնաց պաշտոնական, ազնվական դասի իրավունքը, ոչ թե ժողովրդային իրավունք[3]:

Արևելքի ավատական կարգերու դասական հայրենիքը եղող Պարսկաստանը կներկայացներ տակավին շատ հնագույն ժամանակեն դասակարգային անհավասարությունը: Բարևելու ձևը նույնիսկ ըստ դասակարգի կտարբերեր[4]: Երբ դասակարգային անհավասարությունը արտաքին այս բարքերուն մեջ այսպիսի համեմատություններու հասած է, ապա ուրեմն կարելի է դյուրավ եզրակացնել ներքին տնտեսական կյանքի մեջ անոր գործած ավերները:

---

[1] Dr. **Philipp Gogitschayschwili**, Gewerbe in Georgien, էջ 12-21: Հմմտ. **Leist**, Altarisches jus civile, I, 497:

[2] Քսենեփոնի արշավանք, գլ. IV. «… Երբ կեսօրին գետը անցան, հասան հայերու երկիր՝ հարթ դաշտավայրերե և ցած բլուրներե անցնելով, հինգ հրասախտ ճամբա ըրին՝ Կորդվաց հետ տևական պատերազմներ ընելնուն համար, գետին մոտ գյուղեր չկային: Իսկ գյուղը, ուր եկան, մեծ էր, և նախարարի դարպասներ կային. շատ տուներու վրա աշտարակներ կբարձրանային…»:

[3] **Tacitus**, Annal, XIII, 34. **Strabo**, 11, 525. Քսենեփոնի արշավանք, գլ. IV:

[4] **Հերոդոտոս**, § 194, «… Երբ փողոցը իրարու (պարսիկներու համար է խոսքը) հանդիպեին, այն ատեն կհարցվեր, թե **հանդիպողները իրարու հավասար** անձե՞ր են, թե՞ ոչ: Եթե իրարու հավասար են, փոխանակ բարևելու՝ կհամբուրեն զիրար բերնեն: Եթե հանդիպողներեն մին ավելի վար դասի կպատկանի, այն ատեն իրարու երես կհամբուրեն: Եթե մին շատ ավելի վար դասի պատկանի, այն ատեն վերջինը կծնրադրե գետին և իր մեծարանքը կհայտնե»:

Դասակարգային անհավասարությունը գոյություն ունեցած է նաև Հայաստանի մեջ: Այդ մասին Մովսես Խորենացի նշանակալից հիշատակություն կընե: Արշակունի թագավորն է, որ կհրամայե. «քաղաքացի մարդերու ավելի հարգ ու պատիվ ընել, քան գեղջուկներու, և գեղջուկները պետք է քաղաքացիները հարգեն իբրև իշխաններ[1]»:

Հնագույն շրջանի նահապետական ընտանիքը դարերու ընթացքին շատ բան կփոխեր իր սկզբնական սահմանադրությունեն: Նախապատմական շրջանին թերևս «մեկ հովիվ՝ մեկ հոտի» ասացվածքը արդարանա: Բայց ժամանակի ընթացքին այն հավասարությունը, որ գոյություն ունեցած է հողի սեփականության նկատմամբ, փոխված է: Նախարարը տերն էր գավառին: Յուրաքանչյուր գավառ ունեցած է իր առանձին նախարարը, որի «փառասիրության» զոհ կերթային ժողովուրդին ընդհանուր շահերը[2]: Ներքին պայքար կար կենտրոնական իշխանության և առանձին գավառներու տերերու միջև: «Երկրի տերերը բազմաթիվ ավատական իշխաններ էին, որոնց մոտ մի անզոր թագավոր գոյություն ուներ. երկրի լեռնային դիրքի պատճառով անկարող էր ան այդ իշխաններու ըմբոստությունները զսպելու[3]»:

Հավանական է, որ հնագույն շրջանին ամբողջ ժողովուրդը միաժամանակ տնտեսող և երկրի պաշտպանողը եղած ըլլա: Սակայն ժամանակի ընթացքին ծնունդ կառներ զինվորականներու հատուկ կաստա մը: «… Երբ դրացի ազգերու հետ պատերազմ ծագեր, թագավորը կկանչեր մեծ վասալները, որոնք իրանց հաշվին բազմաթիվ զենքի մարդեր կպահեին[4]»: Այս երևույթը պատահական չէր Հայաստանի մեջ: Կթվի, թե այս ալ Պարսկաստանեն ազդված է, որովհետև այնտեղ մեծ սատրապները կզինվորագրեին իրանց ստրուկները[5]:

Երբ տնտեսությունը միայն ընտանիքի կարիքներուն բավարարություն տալու համար տեղի կունենա, և արտադրվածեն փոխանակելով կամ ծախելով՝ շահ չակնկալվիր, այն ատեն այդ ձևի տնտեսության մեջ հողային հավասարությունը երկար ատեն կրնա պահպանվիլ: Բոլորովին ուրիշ երևույթ կստացվի, երբ տնտեսությունը միաժամանակ կառաջադրե ընտանի-

---

[1] **Մովսես Խորենացի**, Բ, էջ 117, գլ. Ը:

[2] **Եղիշե**, էջ 18:

[3] Dr. **H. Hübschmann**, Zur Geschichte Armeniens, p. 1.

[4] **Fr. Tournebize**, Hist. polit. Et relig. de l´Arménie, էջ 71, ինչպես նաև **Եղիշե**, էջ 7. «… Թեև գանձը պարսիկներու արքունիքը կերթար, սակայն հայերու ամբողջ այրուձին նախարարներու ձեռքն էր, որոնք պատերազմի կառաջնորդեին», էջ 7:

[5] «… Պարթևներու մոտ ազնվականներու, ազատներու և ձերբազատվածներու սահմանափակ դասեն հետո կուգան ստրուկները, որոնք բազմաթիվ էին և ժողովուրդի զանգվածը և բանակի մեծագույն մասը կկազմեին: Այդ բանակը տևական չէր. մեծ սատրապները իրանց ստրուկները կզինվորագրեին: Այսպես՝ Անտոնիոսի դեմ մղված պատերազմին մեջ 50.000 մարդերեն միայն 400-ը ազատ պայմաններով էին», **Joseph**, Antiquit, XIV, XIII, 5:

քին կարիքներեն ավելի արտադրել զայն փոխանակելու համար: Բոլոր ժողովուրդներու մոտ տնտեսությունը անցած է այս շրջանեն: Դիտված է, որ երբ ընտանիքի անդամներուն աշխատանքը չի բավեր՝ անոնց կարիքներուն բավարարություն տալու, և կամ հողը, որ կմշակեն, այդ կարիքներուն համապատասխան այլազան բերքեր չարտադրեր, այն ատեն կդիմեն փոխանակության միջոցին: Մյուս կողմե, գործիքներ շինելու անհրաժեշտութենեն մղված, ծնունդ կառնե տնային ճարտարարվեստը: Վերջինը պիտի զարգանար՝ ժամանակի ընթացքին նախանյութը աշխատելով: Մինչ հնագույն շրջանին ընտանիքին կարիքներեն ավելցած բերքը զուրկ էր նշանակութենե և ոչնչանալու դատապարտված էր, այժմ ոչ թե այդ կկորսվի, այլ հետզհետե ջանք կթափվի քիչ աշխատանքով մեծագույն արդյունքը ձեռք ձգել: Տնտեսական այս պայմաններուն մեջ կդադրի ընդհանուրին բարօրության մասին մտածելը: **Տնտեսական շահը** կսկսի գերակշիռ դեր կատարել: Հողի հավասարության և ազատության մեջ պայքարը ծայր կուտա:

Հնագույն ժողովուրդներու մոտ հողային բարենորոգումները զբաղեցուցած են առավելապես կառավարողները: Թե՛ Հրեաստան, թե՛ Հունաստան դարերով զբաղած են այդ հարցով: Dr. **J. Karst**-ի «Հայկական իրավունքի» հրատարակութենեն վերջ ապացուցված է, որ մովսեական իրավունքեն շատ բան ներմուծված է հայկական իրավունքին մեջ[1]: Մյուս կողմե, **Dr. Karst** կընդունի, որ հայկական իրավունքն իր մեջ շատ բան կպարունակե հունական-հռոմեական իրավունքեն: Եվ որքան նմանություն կա Սոլոնի երգին և մինչև մեր օրերու հայ գեղջուկի ճակատագրին միջև[2]: «Քարե պարտամուրիակները շատեր մայր հողի թուխ երկրին շղթայեցին», և գեղջուկն ու ռամիկը, կապված սեպուհին և ոստանիկին կալվածին, ոչ միայն պարտավոր էին իրանց աշխատանքը ամբողջությամբ տալու, այլև ֆիզիկապես կպատկանեին անոնց[3]: Եվ երբ երկրի ամենավտանգավոր պարագային ժողով կգումարվի, ժողովուրդի հսկա զանգվածը, որ շինականներեն և ռամիկներեն բաղկացած էր, ժողովին կհրավիրվեր բացառիկ կերպով և իբրև շնորհ[4]:

---

[1] **V. Aprowitzer**, Beiträge zur mosaischen Rezeption im armenischen Recht, Sitzungsberichte der Wiener Akademie, 1908.

[2] «Քարե պարտամուրիակներ շատեր հողի թուխ երկրին շղթայեցին: Կամայականությունը և խիստ օրենքը շատեր ստրկության լուծին ենթարկեցին: Այսպես շատեր, պարտքեն վախենալով, երկրե երկիր փախան՝ բոլորովին մոռանալով իրենց մայրենի լեզուն և ծննդավայրը», **Damaschke**, Geschichte der Nationalökonomie, էջ 13:

[3] Dr. **J. Karst**, Grundriss der Geschichte des armenischen Rechtes, Zeitschr. Für Vergl. Rechtsw., p. 15.

[4] **Փավստոս Բուզանդ**, էջ 54, գլ. ԻԱ. «… Հետո Հայաստանի ժողովուրդը գումարեց ժողով մը. ներկայ էին մեծամեծ նախարարներ, ավագներ, կուսակալներ, աշխարհակալներ, ազատներ, զորագլուխներ, դատավորներ, պետեր, իշխաններ: *Բացի զօրավարներեն՝ շինականներ ևս, նոյնիսկ ռամիկներ կային*»:

Հողի սեփականության մեջ առաջացած անհավասարությունը և անհատական շահի գերակշռությունը ստեղծած էր անազատ գյուղացիության դասակարգը[1]:

Այսպես գոյություն ունեցած են կեղեքողներու և կեղեքվողներու դասակարգեր: Վերջին խոնարհ դասակարգը իր աշխատությամբ և արդյունաբերությամբ զարմանք առթած է մինչև իսկ տիրապետողին[2]:

Այս դասակարգին մոտ կարելի է դնել բոլոր անոնք, որոնք պատերազմի դաշտին վրա կպարտվեին և հաղթական թագավորին կողմեն կբերվեին Հայաստան: Այս պատահած է մասնավորաբար Տիգրանի օրով[3]: Միապետին հրամանին վրա գերիներու այդ դասը մեկ տեղեն մյուսը կփոխադրվեր: Կգործածվեին առհասարակ քաղաքներու շինության և շենցնելու համար: Թե հին ատենները գերեվաճառություն գոյություն ունեցած է, այդ մասին պատմական տվյալ չունինք. թերևս հետաքրքրական ըլլա հիշել Կիլիկյան շրջանին Լևոն Գ թագավորի՝ 1288 թվին Ճենովայի հանրապետության հետ կնքած վաճառականական առանձնաշնորհումեն մեկ հատված[4]:

Հավանաբար, ինչպես **Dr. Aprowitzer** կկարծե, մովսիսական իրավունքի՝ հայկականին վրա ունեցած ազդեցությունը պետք է հրեա գերիներուն Հայաստան մուտքին վերագրել:

Այժմ քննենք, թե տնտեսական բարիքներու փոխանակությունը պատմական ի՞նչ հնություն ունի. ի՞նչ ձևով կատարված է և ի՞նչ հավանական ազդեցություն ունեցած է դասակարգային շերտավորման վրա:

Առաջին պատմաբանը՝ Հերոդոտոս, որ Հայաստանի մասին կխոսի, ցույց կուտա հայ ժողովուրդի առևտրական հարաբերությունները հարավի դրացի ժողովուրդներու հետ: Եփրատի վրայով անոր նկարագրած հայ առևտրականներու ճամփորդությունը դասական դարձած է: Հերոդոտոսեն վերջ ավելի հետաքրքրական տեղեկություններ կգտնենք Ստրաբոնի մոտ[5]: Պատմական այս փաստեն երկու բան կրնանք հետևցնել:

Առաջին Aorser-ները ըլլալով կովկասյան ցեղ մը՝ հայերը հարաբերու-

---

[1] «§ 7. Հայերեն «մշակ» բառը «գյուղացին» է. սա առաջացած է Փոքր Հայքի ավատական կարգերեն, հողին կապված ստրուկն է, որ ամբողջությամբ կպատկանի տիրոջ», **J. Karst**, Armenisches Rechtsbuch, հատ. II, էջ 21:

[2] «… Մինչև իսկ իրենք (պարսիկները) մեծապես կզարմանային, թե ուրկե՞ կելլե այս հարստությունը, ինչպե՞ս կմնա երկիրը», **Եղիշե**, էջ 19:

[3] **Մովսես Խորենացի**, Բ, գլ. ԺԶ, էջ 130, գլ. Ծ, էջ 177, գլ. ԾԳ, էջ 182 և **Փավստոս**, գլ. ԾԵ, էջ 176:

[4] «Եւ ի ծառայքն, որ կու գեն ու ի յերկրէն հանեն, նայ իրաւունք կուտան, նայ զտան իրաւունք. ապա թէ քրիստոնէ ծառայք գեն նայ երդնուն, որ տաճկի չծախին ու ոչ հայնց մարդոյ, որ կամենան տաճկի ծախել», **J. Karst**, Armenisches Rechtsbuch, հատ. II, էջ 241:

[5] «…**Aorser**-ները ուղտերով կը բերէին հնդկական և բաբելական ապրանքներ, զոր հայերէն և մոտերէն կ՚ընդունէին, և իրանց հարստութիւնը եղող ոսկին կը կրէին իրանց վրա», **Strabo**, էջ 933:

թյուն ունեցած են անոնց հետ ալ. ուրեմն Ասորեստանի, Հնդկաստանի և Կովկասի միջև եղած են առևտրական կապ հաստատող:

Երկրորդ՝ հիշված ոսկին ցույց կուտա, որ տակավին այդ ժամանակեն ոսկին իբրև փոխանակության միություն գործածված է. ընդգծելի պարագա է, քանի որ ոսկին, տնտեսական բարիքներ կուտակելու հանգամանք ունենալով, դասակարգային շերտավորումը ժողովուրդի մոտ կփութացնե: Պատմական տվյալներու վրա հիմնվելով՝ կրնանք ըսել, որ ոսկեդրամը Հայաստանի մեջ պետության կողմե իբրև փոխանակության միություն Ք. ա. II դարուն գոյություն ունեցած է[1]՝ առանց նկատի առնելու այն հանգամանքը, որ Հայաստանի անկախութենեն առաջ տիրապետող պետություններ ներմուծած են զայն:

Փոխանակության ձևին մասին գլխավոր պարագան հիշեցինք: Մյուս հիմնական պայմանն է, որ շուկաներ գոյություն ունենան, այսինքն՝ այնպիսի վայրեր, ուր խնդրողը և առաջարկողը հավաքվին, և տեղի ունենա բաղձացված փոխանակությունը: Այդ մասին տվյալներ ունենք Քսենոփոնեն մեզ դրացի պետության՝ Պարսկաստանի համար[2]: Իսկ թե հայերը այդ շուկաներու մեջ իրանց մասնակցությունը բերած են, կհետևի հետևյալներեն[3]:

Գոյություն ունեցած են ներքին շուկաներ. այդ մասին Սմբատի «Օրինագիրքի» § 112-ը կուտա մեզ պերճախոս փաստեր, ինչպես նաև պատմական այն իրողությունը, որուն համաձայն՝ Հայաստանի կարգ մը քաղաքներ դարձած են վաճառականական կենտրոններ[4]: Թե ինչպե՞ս առաջացած է առևտրականներու այդ դասը, ատոր քննությունը մեր նյութեն դուրս կմնա:

Այժմ կմնա քննել, թե այդ առևտրականներու դասը, որ հավանաբար արհեստավորներու դասին հետ քաղքենի տարրը կկազմեր, և, ըստ Մովսես Խորենացիի, ավելի հարգ պետք էր վայելեր, քան գեղջուկները, իբրև առանձին դասակարգ յուրահատուկ գծեր ուներ և պատմական դեր կատարած է ընկերային շարժման մեջ: Եթե այդ դասի ստեղծումով տնտեսության շրջանը ուրիշ աստիճանի մեջ մտած է, հավանական չի թվիր, որ նա իբրև ուրույն դասակարգ ժողովուրդի ճակատագրին վրա ազդող շարժումներ ստեղծած ըլլա: Բազմաթիվ նախարարական ըմբոստություններու կողքին մեր պատ-

---

[1] **J. de Morgan**, Histoire de l'Arménie, p. 65-66.

[2] «… Ունեին հրապարակներ, ուր տեղի կունենային գնումները և վաճառումները, և որպեսզի անոնց աղմուկը ժողովուրդը չի խանգարե, անոնց համար մասնավոր տեղեր հատկացված էին», **Քսենոփոն**, Խրատ Կիւրոսի:

[3] «… Եթե մեկը հայերու հանդիպի, խնդրե անոնցմե, որ իրանց տեղը ուտեստեղեն և ըմպելիք բերեն ծախելու համար», **Քսենոփոն**, Խրատ Կիւրոսի:
«… Տաճե ընդհանուրի վաճառական հրապարակ էր, ասիական և եվրոպական ժողովուրդներու համար», **Ստրաբոն**, Աշխարհագրություն, էջ 911:

[4] **J. de Morgan**, Histoire de l'Arménie, p. 134.

մությունը չարձանագրեր **tiers ètat**-ի ընդվզումներ: Էպոխայի տնտեսական և մտավոր զարգացումի հետամնացությունը հավանաբար մեծագույն արգելք է եղած ատոր: Բացի այս՝ այն կարևոր իրողությունը, որ ժողովուրդը ինքնին միություն չէր կազմեր, անջատ իշխաններու գավառներուն մեջ պարփակված էր, զուրկ հաղորդակցության միջոցներե, **tiers ètat**-ի անհրաժեշտ բանակը չէր ներկայացներ:

Այսպես՝ պարսպապատ քաղաքներու մեջ գոյություն ուներ անհատներու այս խումբը, որուն պաշտոնն էր հավանաբար նախարարներու և «փափկասուն տիկնանց» համար արևելյան ճոխություններ բերել, որպեսզի անոնք «ոսկեհուռ զգեստներով» զարդարվեին, «բազմաղիմի անկողիններու մեջ» քնանային և «անուշաբույր հոտերով» օծվեին[1]: Իսկ քաղքենին գոհ էր անով, որ «քաղաքի օդը ազատ կըներ զինք»:

Եզրափակելե առաջ պետք է հիշատակել կղերական և զինվորական դասերը: Կղերական դասը արքաներեն ստացած էր մեծ քանակությամբ հողեր, որոնք կմշակվեին մշակներու կողմե, և որոնց արդյունքը ամբողջությամբ կստանար այդ դասը: Բացի այս՝ կղերական դասը ազդեցություն ուներ երկրի իրավական կարգերու վրա: Կարելի է ըսել, որ հայկական իրավունքը առավելապես կղերական դասի կողմե խմբագրված է[2]: Այս դասը ազատ է եղած նույնպես հարկեր վճարելե:

Գալով զենքի մարդերու դասին՝ անոր պաշտոնն էր երկրի պաշտպանությունը: Թե այդպիսի առանձին դաս գոյություն ունեցած է, այդ մասին տարակույս չկա: Բացի այս՝ իբրև դասակարգ վայելած են մասնավոր առանձնաշնորհումներ. դասված են ազատներու կարգը և ըստ ցույց տված քաջագործություններու՝ առավել կամ նվազ պատիվներու և նվերներու արժանացած: Իբրև արդյունաբերող դասակարգ անոր մասին կարենալ բան մը ըսելու համար պետք էր մեզ համար պարզ ըլլար հետևյալ հարցը: Գոյություն ունեցա՞ծ է տնական բանակ, թե՞ նախարարը կամ իշխանը երկիրը վտանգի տակ գտնված պարագային զենքի տակ կոչած է զանոնք և պատերազմը լրանալուն արձակած: Այս մասին պատմութենեն ստույգ տեղեկություններ չունինք. միայն գիտենք, թե մասնավոր տարբերություն կդրվեր այդ դասին և ժողովուրդին միջև[3]:

---

[1] **Ղազար Փարպեցի**, Դրուագ Գ, գլ. ԿԱ, **Եղիշե**, էջ 155-156:

[2] **J. Karst**, Grundriss der Geschichte des armenischen rechtes, Zeitschrift für Vergl. Rechtswissenschaft, p. 323.

[3] «… Որովհետև Կուառս ուներ երեք հազար տասներկու երդահամար և հազար հինգ հարյուր հեծյալներ: Տում՝ ինը հարյուր ծուխեր և չորս հարյուր հեծյալներ. Խորն՝ հազար ինը հարյուր վեց ծուխեր, յոթ հարյուր հեծյալներ և հազար յոթ հետևակներ: …Բուղու, որ շատերու կայան կնշանակե, երեք հազար երկու հարյուր ծուխեր, հազար քառասուն հեծյալներ, ութ հարյուր քառասուն աղեղնավոր հետևակներ, վեց հարյուր ութսուն տեգավորներ, երեք հարյուր ութսուն պարսավորներ», **Զենոբ Գլակ**, Պատմութիւն Տարօնոյ, էջ 37: «Օրենքը կիրամայե,

Այսպես՝ պատմական Հայաստանի դասակարգային շերտավորումը գրեթե հետևյալ պատկերով կներկայանա մեզ. նախապատմական հնագույն շրջանին գոյություն ունեցած են գլխավորաբար երկու դասակարգ. 1. ավագորյարներ՝ գավառական իշխանները, քաղքենի ազնվականությունը, պատրիկները, 2. գեղջուկները՝ գյուղը բնակողներ, որոնք բնակչության մեծագույն մասը կազմած են:

Տնտեսական զարգացումով և պատմական այլազան դեպքերու բերումով դասակարգային շերտավորման մեջ առաջացած են փոփոխություններ: Արդեն Արշակունիներու շրջանեն սկսյալ որոշակի կարելի է ըսել, թե գոյություն ունեցած են.

1. ազնվականությունը, որ կբաժնվեր մեծ և փոքր ազնվականության. մեծերուն կպատկանեին նախարարները և իշխանները և հավանաբար սկզբնական տանուտերերը և նահապետները, իսկ փոքրերուն՝ **սեպուհները**, մեծ հողատերերը, հավանաբար և ասպետները, այսինքն՝ զինվորական դասը:

Ասոնց հավասար և թերևս կարգ մը շրջաններու ավելի մեծ իշխանություններով կուգար **2. կղերական** դասը:

Հետո՝ **3. քաղքենի** տարրը, որ հավանաբար իր մեջ կընդգրկեր ոստանիկները, փոքր հողատերերը, առևտրականները և արհեստավորներու որոշ մեկ խումբը:

Այս երեքը իրանց վայելած տնտեսական և իրավական առանձնաշնորհումներուն համար կկոչենք **ազատներու** դասը:

Ասոր կհակադրվի անմիջապես 4. դասակարգը, որ ժողովուրդին ճնշող մեծամասնությունը կկազմեր և ծանոթ է պատմության մեջ **անազատներու** անվան տակ. ասոր մեջ կմտնեն ռամիկները, գեղջուկները, մշակները և վերջապես գերիները:

Անազատներու այդ դասը, կապված հողին, տիրոջը սեփականությունը, պարտավոր էր աշխատել և՛ ավատական իշխաններուն, և՛ կղերական դասին, և՛ սեպուհներուն համար:

Եղած է ուրեմն տիրողներու և կեղեքողներու փոքրամասնություն մը, որ դարերու ընթացքին անազատներու դասակարգը իր տիրապետության տակ պահած է: Եվ այդ փոքրաթիվ կեղեքողներու տիրապետությունը դարերու ընթացքին այլազան ձևերով և այլազան անուններու տակ զարմանալի նմանություններով կրկնված է մեր պատմության ամբողջ ընթացքին:

որ մարդկային ազգը շատ մը դասակարգերու բաժնվի, որովհետև կան ազնվականներ և ասպետներ, և անոնք, որ ասոնց չեն պատկանիր, և որոնք այլազան գործերով կպարապին», **J. Karst**, Armenisches Rechtsbuch, § 142, էջ 188:

3. Ազնվականություն

Նախորդ երկու հոդվածներով աշխատեցանք ցույց տալ, որ պատմական Հայաստանի մեջ տնտեսական և կառավարչական դրությունը եղած է ավատական: Պատմական տվյալներու վրա հիմնվելով՝ հասանք այն եզրակացության, որ գոյություն ունեցած են չորս դասակարգեր՝ 1. **ազնվականություն**, 2. **կղերական դաս**, 3. **քաղքենի դաս** և 4. **անազատներու դաս**:

Այժմ կուզենք այս դասակարգերուն ինքնուրույն դիմագիծը տալ: Ասոր կրնանք հասնիլ երկու ճանապարհով՝ ա) **իրավական**, բ) **տնտեսական**: Մեթոդի տեսակետե անհրաժեշտ եղող այս բաժանումները կյանքի մեջ այնքան սերտորեն իրարու շաղկապված են, որ այս բաժանումը կարդարանա միայն ընելիք որևէ ուսումնասիրություն դյուրացնելու տեսակետե: Այստեղ մեր նյութեն դուրս կմնա իրավունքի և տնտեսության ծագումի և գաղափարի սահմանավորման հարցի քննությունը:

Երբ կըսենք, թե հայ ժողովուրդի տնտեսությունը ավատական հիմերու վրա դրված է, կուտանք միայն տնտեսության հիմնական գիծը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ նույն այդ ավատական դրությունը այլազան էպոխներու և այլազան միջավայրներու մեջ այլ ձևով հայտ եկած է, կմնա վեր հանել այն հատկանշական գիծերը, որոնք հատուկ են հայ ժողովուրդի ավատական տնտեսության: Մեր նպատակն է այժմ հայ ժողովուրդի դասակարգային շերտավորման մոտենալ իրավական տեսակետե:

Այստեղ ալ պետք է որոշ սահմանափակում ընել: Մեր ուսումնասիրության սահմանեն դուրս կմնա էպոխի իրավունքի հասկացողության և անկե ծնունդ առնող օրենքներու ծագման քննությունը: Ինչպես նաև բոլոր արտաքին այն ազդակներու քննությունը, որոնք մեծ դեր կատարած են օրենքի կազմավորման և գործադրման մեջ:

Արծարծված հարցին իրավական տեսակետե մոտենալ ըսելով՝ կըմբըռնենք **ցույց տալ դասակարգերու փոխհարաբերությունը**, ոմանց վայելած առանձնաշնորհումները և ուրիշներու կրած զրկանքները: Բացի այս՝ հնարավորության սահմանին մեջ ցույց տալ դրված օրենքներուն ըրած ազդեցությունը ժողովուրդի տնտեսության վրա և ներկայացնել հայ ժողովուրդի անցյալի ներքին կյանքին իրական պատկերը: Այս աշխատանքը կամբողջանայ, երբ պատմական տվյալներով արծարծված հարցերու տնտեսական կողմը կպարզաբանվի:

Այս ուսումնասիրության հիմ կծառայե Dr. **Josef Karst**-ի գնահատելի երկու հատոր երկասիրությունները[1], որոնցե առաջինը կպարունակե Սըմ-

[1] Dr. **J. Karst**, Armenisches Rechtsbuch, հատ. I և II, Atrassburg, Verlag von **Karsl J. Trübner**, 1905: Մեր հետագա հիշումներուն մեջ այս գիրքը կնշանակենք RB տառերով, Սմբատի «Օրինագիրքը»՝ **Սմբատ**, Օրին., «Դատաստանագիրքը»՝ Դատ.:

բատի «Օրինագիրքը»՝ խմբագրված Ռուբինյան շրջանին՝ XIII դարուն, և Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը»՝ XII դարեն: Վերջինը կվերաբերի Հայաստանի օրենսդրության: Երկրորդ հատորը կկազմե այս երկու օրինագիրքերու մեկնությունը:

Ժողովուրդներու ձևավորած օրենքներուն հիմը կկազմեն՝ ա) այդ ժողովուրդը ներկայացնող ընկերության մեջ գոյություն ունեցող բարքերն ու սովորությունները, որոնց ծագումը պետք է փնտրել նախապատմական շրջաններե, բ) էպոխի աշխարհայացքը, որ ժամանակի ընթացքին ենթակա է ավելի շուտ փոփոխելիության, քան առաջինները: Այդ փոփոխելիությանը երկու ձևով կրնա տեղի ունենալ՝ կա՛մ այդ ժողովուրդի (թագավորին կամ իշխանին հին ատեն) կամավոր հոժարությամբ, և կա՛մ տիրապետող իշխանության կողմե կպարտադրվի ան: Երկու պարագաներու տակ ալ օրենքը իր ձևավորումը կփոխե և այսպես մի տեսակ հայելին կներկայացնե հայ ժողովուրդի ծոցին մեջ տեղի ունեցած պատմական բնաշրջումին:

Այսպես՝ իրավական տեսակետե այս հարցին մոտենալ կնշանակե նկատի առնել հայ ժողովուրդի հոգեբանությունը և որոշ չափով նաև պատմական անցուդարձերը:

Այս ընդհանուր օրենքեն բացառություն չէ կազմած նաև հայ ժողովուրդի օրենսդրությունը[1]:

***

Իշխողներու և կառավարողներու ուժը կրթնած է բոլոր ժամանակներուն մեջ այն ըմբռնումին վրա, որ գոյություն ունեցած է ժողովուրդին մեջ անոնց մասին: Դարեր շարունակ տիրապետվողը կրոնական ըմբռնումներով կապանքված, տիրապետողը իբրև Աստուծո երկրային պատկերը ներկայացված է անոր: Այստեղ պետք է փնտրել այն սերտ գործակցությունը, որ եղած է ու կա տակավին տիրապետողներու և կղերական դասի ներկայացուցիչներու միջև՝ վերջին դասը ըլլալով երկնային իշխանության երկրային քարոզիչը:

Պարտադրված այս ըմբռնումը առավելապես պատճառ եղած է, որ ինքնակալներ և միապետներ, ըստ իրանց քմահաճույքին և փառասիրական ձգտումներուն, կառավարեն երկիրն ու ժողովուրդը:

Հայ ժողովուրդը զերծ չէ տիրապետող դասի տրված այդ ըմբռնումեն. «Ան (թագավորը) հայրապետին և Աստուծո հետ իբրև օրենք սահմանող միևնույն աստիճանի վրա գտնվի (**Սմբատ**, Օրին., § 1, RB., հատ. I, էջ 17)»: Կամ՝ «թագավորք և իշխանք պատկեր են Աստուծոյ»[2]:

---

[1] Dr. **J. Karst**, Geschichte des armenischen Rechtes, Zeitschr. Für Vergl. Rechtswiss., հատ. XIX և XX, 1906, 1907:

[2] «… Եթե որևէ մեկը թագավորները և իշխանները անիրավաբար թշնամանե, պիտի պատժվի…

Ուրեմն այսպես՝ օրենքը կըսե՝ «թագավոր, իշխան պատկեր են Աստուծո»: Սա փոքրիկ նախադասությունը կամփոփե իր մեջ շարանը այն բոլոր սոցիալական և տնտեսական առանձնաշնորհումներուն, որոնք դարեր շարունակ պարտադրված են իշխողներու կողմե արտադրող զանգվածին:

Թագավոր և իշխաններ, որոնք *ազնվականություն* բառին տակ կմիանան, ունեն իրենց մեջ շերտավորումներ:

Այդ շերտավորումները կարելի է բաժնել հետևյալ կերպով՝

ա. թագավոր,

բ. բարձր ազնվականություն (ավագ, տանուտեր),

գ. ավատական վասալներ կամ փոքր ազնվականություն:

Բարձր ազնվականության մեջ կմտնեն «նախնիները», որոնք իրանց իշխանությունը հիմնած են զենքի հաջողություններու վրա, և իշխանաց իշխանները կամ պարոնայք պարոնները, որոնք ավելի պետականորեն ունեցած են լայն իրավասություններ, վերջապես իշխանները կամ պարոնները:

Ավատական վասալները կազմած են ասպետները (ձիավորներ) և ցած ասպետները (հեծելվոր)[1]:

Ազնվականության մեջ գոյություն ունեցող այս շերտավորումներն իրենց կարգին առավել կամ նվազ առանձնաշնորհումներ վայելած են:

Թագավորը իբրև պետը տերության ինքնակալ է[2]: Եվ երկրի ինքնակալը «կարող է իր կենդանության, ինչպես նաև մահվան ժամուն կտակ ընել և թողուլ լեռ ու դաշտ, ինչպես նաև ամբողջ երկիրը, որու որ ուզե: Որդիները և որևէ մեկ ուրիշը չեն կրնար անոր կամքին հակառակել (**Սմբատ**, Օրին., § 1[3])»:

Եվ ինքնակալին այդ նվիրատվութենեն օգտվողները եղած են կամ ազնվական դասի պատկանողները և կամ կղերական դասը:

Ինքնակալներու կամ միապետներու տրված այս առանձնաշնորհումը, հաճախ կամայականորեն գործածվելով, պատճառ հանդիսացած է անթիվ դժգոհություններու:

«Թագավորի ներկայության ոչ մի մեծամեծ իշխան նստի, այլ միայն այն ատեն, երբ հրամայե: Թագավորի սեղանը հայրապետեն զատ ոչ ոք

Եվ այս պետք է վարդապետները և եպիսկոպոսները դատեն, որովհետև «թագավորք և իշխանք պատկեր են Աստուծոյ», Դատ. II, ԺԸ, RB., հատ. I, էջ 87:

[1] Ասոնց ծագման մասին տե՛ս **Karst**, RB., հատ. II, էջ 95 և 97 (204, 205, 206 և 213): Ռուբինյան շրջանի արքունիքը, արևմտյան ավատական իշխաններու հետ սերտ հարաբերության մեջ ըլլալով, կրած է մեծ ազդեցություն. այդ ազդեցությունը հայտ կուգա Սմբատի «Օրինագրքի» և «Դատաստանագրքի» անվանակոչության մեջ:

[2] «… Ինքնակալության աթոռը», **Սմբատ**, Օրին., § 1, RB., էջ 15: Ներսես Լամբրոնացին Լևոն II-ի գրած նամակին մեջ կհիշվի. «Առ քրիստոսազօրն իշխողն մեր ինքնակալությամբ Լևոն, RB., հատ. II, էջ 3»:

[3] Հմմտ. **Փավստոս Բուզանդ**, էջ 10 և 237, **Յովհան Մամիկոնեան**, էջ 30:

նստի, իսկ արքան հայրապետին տունը չնստի, միայն հրամանով (Դատ., II, Ա.)»: Արտաքին այս ձևականության օրենքի կարգ անցնիլը ցույց կուտա աստիճանավորին հանդեպ ցույց տրվելիք հարգանքի անհրաժեշտությունը:

Որպեսզի հնարավոր ըլլար թագավորական տան ազնվական դիրքը պահպանել, ժառանգության պարագային թագավորին զավակներուն մեջ հավասարության սկզբունքը կպահպանվի, «որովհետև հարմար չէ, որ թագավորին որդիները ցած աստիճանի իջնան (Karst-ի թրգմ., auf eine niedere soziale Stufe Herabsinken)»:

Իսկ թագավորի աղջիկներու ամուսնության մասին օրենքը կսահմանե միայն աստիճանին հավասար տուներ հարս երթալ[1]:

Գահի հաջորդականության համար եղած օրենքներուն մեջ նշանակելի են հետևյալ կետերը. ա) Սմբատի «Օրինագիրքը», ազդված ըլլալով արևմտյան ավատական իշխաններու օրենսդրութենե, կներմուծե թագավորին զավակներեն արժանավոր հաջորդը ընտրելու դրությունը: Մինչդեռ ըստ հայկական օրենքի՝ անդրանիկ զավակը գահ կբարձրանա[2]:

բ) Անժառանգ թագավորի մը հաջորդը ընտրելու իրավունքը, ըստ Դատաստանագրքի, թողված է իշխաններու և ազատներու միայն. «Բայց ի թագավորեցուցանելն մի առանց հայրապետի լիցի» (Դատ., II, Ա.): Մինչդեռ Սմբատի «Օրինագիրքը» կըսե այս առթիվ. «Հայրապետին, եկեղեցիին, իշխաններուն և երկրին տեսովը ընտրեն մեկը, որ լավ նկատեն»:

Այստեղ «երկրին տեսովը» հավաքական բառին տակ ի՞նչ պետք է հասկանալ: Իշխաններուն սեփականությունը եղող անազատներու դասին կարծիքն ալ կառնվեր, թե իշխանը, ըլլալով այդ դասին իրավական ներկայացուցիչը, միայն անոր հավանությունը արդեն ամբողջ գավառին բնակիչներուն հավանությունը կենթադրեր: Վերջին ենթադրությունը հավանական կթվի, քանի որ իրավական տեսակետե շատ ավելի նվազ կարևորություն ներկայացնող հարցերու մեջ ժողովրդային զանգվածին կամքը կանտեսվեր:

Որպեսզի գահի շուրջ կռիվներ չծագին, թագավորական տան մյուս անդամները կհեռացնեն ուրիշ վայրեր[3]: Իսկ այդ հեռու վայրեր ուղարկվածները կունենան հատուկ ռոճիկ թագավորական տունեն[4]:

Աստուծմե նշանակվածներու և մարդոց կողմե ընտրված թագավորնե-

---

[1] «… Պետք է որ աղջիկները (թագավորին) նահապետական տան հետ ամուսնանան, որ է թագավոր կամ բրինց կամ մարքիզ կամ այսպիսիքն» (**Սմբատ**, Օրին., § 1, RB., հատ. I, էջ 15):

[2] Karst դիտել կուտա, թե այս օրենքը կյանքի մեջ չէ գործադրված, և անդրանիկի հաջորդությունը, ինչպես հին ժամանակ, պահպանված է նաև Ռուբինյան շրջանին, RB., հատ. II, էջ 3(3):

[3] «… Եվ մյուսները հեռու պետք է բնակեցնել, ինչպես այս սովորություն էր առաջին թագավորներու մոտ» (Դատ., II, Ա, RB., հատ. I, էջ 16):

[4] **Մովսես Խորենացի**, Բ, գլ. ԻԲ, էջ 137:

րու միջև տարբերություն կդրվի[1]:

Այսպես՝ Աստուծմե նշանակվածը կարելի միայն անոր կողմե հրաժարեցնել. կնշանակե՝ ժառանգականորեն գահ բարձրացող մը օրենքի միջոցով հնարավոր չէ հրաժարեցնել, որքան ալ անոր իշխանությունը անտանելի ըլլա: Իսկ մարդերու կողմե ընտրվածը, եթե գեշ կառավարե երկիրը և հպատակները, ընտրողներուն կողմե կարելի է միայն հրաժարեցնել (տե՛ս Դատ., II, ՃԺԴ.)[2]: Թագավորը իր կողմե ընտրած իշխանները կրնա ուզած ժամանակ հրաժարեցնել, իսկ անոնք, որ իր կողմե չեն նշանակված, իշխաններու կողմե կպատժվին[3]:

Ի՞նչ կիետևի այս ձև օրենսդրութենեն:

ա) Ավատական կարգերու հատուկ դատաստանական ձև, այսինքն՝ միայն իրարու հավասար, սոցիալական միևնույն աստիճանի վրա գտնվողներ կրնան զիրար դատել: Շատ բնական է, որ այս ձևի դատման մեջ նկատի առնվին միայն իրենց կաստայի շահերը, և հանցանք նկատվին միայն այդ շահերու վտանգումը: Իշխանը անազատները դատելու խնդրին մեջ ինքնակոչ է (սպանության պարագային թագավորին կողմե ինքնակալ չճանցվածներու սահմանափակում կընե օրենքը):

բ) Թագավորին իրավունքը ժառանգավոր իշխանները դատելու մեջ սահմանափակված է. այս կշեշտվի մասնավորաբար Ռուբինյան շրջանին, ինչ որ ցույց կուտա իրավական գետնի վրա այն պայքարը, որ գոյություն ունեցած է թագավորական տան և ազնվական դասին միջև:

Դրամ կտրելու, պատերազմական ճամբարներ շինելու, կամուրջներ կառուցանելու իրավունքը կպատկանի թագավորին. իշխանը կրնա թագավորին հրամանով այս իրավունքներեն օգտվիլ:

Երբ ժառանգավոր մի իշխան իր սահմաններուն մեջ բերդ կամ ավան շինե իր սեփականությունն է: Այդ բերդերու և ավաններու շինության ատեն «պատեհ է, որ ամբողջ ժողովուրդը ամեն կերպով օգնե, որովհետև ամենին կպատկանի և տեղին բնակիչները՝ ավելի» (**Սմբատ**, Օրին., § 1):

Բաղդատելով Սմբատի «Օրինագիրքը» «Դատաստանագիրքին» հետ՝

---

[1] RB., հատ. II, էջ 94:

[2] Թագավորի հրաժարեցման պարագային Սմբատի «Օրինագիրքի» և «Դատաստանագիրքի» միջև նշանակալից տարբերություն կա. ըստ Դատ. II-ի՝ ՃԺԴ-ի տրամադրության թագավորը հրաժարեցնելու պարագային ուրիշ թագավորի մը կամքով ըլլալը կշեշտվի, մինչդեռ այդ մասին Սմբատի «Օրինագիրքը» ո՛չ մի հիշատակություն կընե և անոր տեղ կդնե. «Ամեն բնակչոք երկրին կարեն աքսորել» պարբերությունը:

[3] «Դատաստանագիրքը» այս առթիվ թագավորի միջամտության մասին լուռ կանցնի: Սմբատի «Օրինագիրքը» որոշակի կսահմանե այդ պարագան. «Բայց զայլ ինքնակալքն, որ ինք (թագավորը) չլինի իշխան գրել (ապա իշխան լինի գտնել), **նա չկարէ առանց այլ իշխանաց՝** (որ իր ընկերք լինի) **ոչ զնա աքսորել և ոչ ձգել**» (**Սմբատ**, Օրին., § 70, RB., հատ. I, էջ 103):

այդ շինված բերդերու և ավաններու ժառանգականության համար կգտնենք դարձյալ թագավորական տունեն ձերբազատվելու ձգտումը: Մինչդեռ, ըստ «Դատաստանագիրքի», «իշխանի մահվնե վերջ թագավորի հրամանով անոր որդիներուն կձգվի»: Սմբատի «Օրինագիրքը» որոշակի կսահմանե. «Իշխանի զավակներուն ժառանգ կմնա. թագավորին չվերաբերիր անոնց ձեռք զարնել. իշխաններուն անձնական, տեսական սեփականությունը կմնա[1]»:

Շատ բացորոշ երևան կուգա նաև այս պայքարը տնտեսական գետնի վրա, մասնավորաբար երկրի բնական հարստություններեն օգտվելու հարցին մեջ: Առանց մանրամասնություններու մտնելու այստեղ կարելի է ըսել, որ, ըստ «Դատաստանագիրքի», «ոսկեհանքերը և արծաթահանքերը կպատկանին թագավորին», իսկ Սմբատի «Օրինագիրքը» արծաթահանքերուն մեկ մասը իշխաններուն մնալու տրամադրությունը կավելցնե: Նույն պարագան նաև պատերազմական ավարներու և կողոպուտներու բաժանման հարցին մեջ: Պատերազմական այս ավարներու ընթացքին թեև Սմբատի «Օրինագիրքին» մեջ գերիի մասին խոսք չըլլար, սակայն «Դատաստանագիրք» որոշ կհիշե. «Եվ գերվույն, ավարին կեսը թագավորին ըլլա («Դատաստանագիրք», II, Ա»): Սմբատի «Օրինագիրքը» վաճառականության վերաբերող օրենսդրության մեջ այդ մասին հիշատակություն կընե:

Հողեն գնված գանձերը թագավորին և իշխաններուն մեջ կբաժանվին հատուկ կարգադրությամբ:

Թագավորին և իշխանին գանձը, բացի այս երեք աղբյուրներեն, առատորեն կհոսին արդյունաբերող շինական դասի վճարած հարկերը: Մանրամասն սահմանված են այդ տուրքերը. տեղի կունենան բնական հարկի ձևով: Այդ տուրքերու մասին առանձնապես կխոսվի անազատներու մասին գրված ատեն:

Տնտեսականորեն ազնվական դասը տիրապետող տարրն էր: Երկրագործությամբ և անասնապահությամբ պարապողներու դասը հողազուրկ էր, քանի որ «*հողը միայն թագավորի և իշխանի սեփականությունն է*» (Դատ. II, Ա, RB., էջ 22):

Ազնվական դասի մեջ գոյություն ունեցող հակամարտությունը մեկ կողմե, ժողովրդային զանգվածի հողազուրկ ըլլալու պարագան մյուս կողմե, ընկերության ծոցին մեջ ստեղծած են ախտավարակ դրությունը:

Դասակարգի տարբերությունները որոշակի երևան կուգան սոցիալա-

[1] «Դատաստանագիրքի» մեջ միայն իշխանին անձնական միջոցներով շինվածները ժառանգական են. այստեղ ժառանգություն, սեփականություն որոշակի կզանազանվի թագավորեն ստացված ավատական կալվածներեն: Մինչդեռ Սմբատի «Օրինագիրքի» մեջ ավատական իշխանը միաժամանակ ժառանգական է: Թագավորին կալվածներուն տիրացողները եղած են թագավորին վասալները, որոնք պարտավոր են «թագավերին ուժ տալ»:

կան հարաբերություններու մեջ: Ըստ «Օրինագիրքի»՝ երեք տեսակի դատարան գոյություն ունին՝ ա) թագավորական, բ) աշխարհական, գ) կղերական:

Հայրենիքի դավաճանը, թագավորական գանձեն գողություն ընողը, ոճրագործը կդատվին թագավորին կողմե: Մի շարք ուրիշ հանցանքներ աշխարհական դատարանին կողմե: Իսկ «գաղտուկ մեղքերը» (խղճի հատուկ) կդատվին կղերական դատարանին կողմե:

Յուրաքանչյուր իշխան իր վասալները դատելու իրավունք ունի: Վասալները առանց իշխանի հրամանին որևէ դատ չեն կրնար տեսնել:

Հայրենիքի դավաճաններ և թագավորին գանձեն գողություն ընողներ մահվամբ կպատժվին[1]:

Այսպես՝ թագավորն իր վասալներուն, ավատական իշխաններն իրենց ճորտերուն հանդեպ կվերաբերվին այնպես, ինչպես վերաբերվեին անշարժ ստացվածքի: Հանցավորը կյանքովը մեղքը քավելեն վերջ անոր պարագաներն իբրև ստրուկ կվաճառվին, և այս, ըստ «Դատաստանագիրքի», «արժան» է:

Հարց է, թե թագավորին սահմանած այս պատիժները առավելապես ո՞ր դասի դեմ ուղղված էին: Երբ կըսվի «հայրենիքի դավաճան», ատոր տակ կմտնեն թագավորին վասալ իշխանները, որոնց բերդերու պաշտպանությունը հանձնված է, «զբերդովքն և զայնպիսիքն»:

Մյուս կողմեն, թագավորին գանձեն գողություն ընելու հնարավորություն ունին առավելապես անոնք, որոնք պալատական ծառայության մեջ են և կամ պալատին մատակարարներն են:

Երկու պարագաներուն ալ փոքր ազնվականության պատկանող անհատներ են:

Ուրեմն այդ աստիճանի վրա գտնվող անհատներու պատժումը զանոնք անազատներու դասին իջեցնել կնշանակե: Այս որոշակի ցույց կուտա այն հարաբերությունը, որ կա ազատներու և անազատներու դասին միջև: Իբրև սոցիալական անհատներ՝ վերջիններս ենթարկված են բոլորովին թագավորին կամ իշխանին քմահաճ կարգադրության:

Քրիստոնյայի և մահմեդականի միջև սպանության պարագային տարբերություն դրվիլը որոշակի կերևա: Այստեղ միայն կուզեինք հետևյալը ընդգծել. մահմեդականին վճարելիք տուրքը սպանած անձին աստիճանին և դիրքին համեմատ կավելնա[2]:

---

[1] «… Կինն ու զավակները արքունիքը իբրև ստրուկ կառնվին», **Սմբատ**, Օրին., § 1, իսկ Դատ., II, Ա-ի մեջ կավելցվի նաև «… Եվ կարե ծախել», ինչպես նաև «… վաճառե և զրկե ժառանգութենե իբրև ուրիշներու օրինակ», Դատ., II, Ա:

[2] «…Սպանված մարդուն և աստիճանին համեմատ պարտավոր է ան (մահմեդականը) հավելյալ գումար վճարել» (**Սմբատ**, Օրին., § 1): «… Այդ գին ըստ բանականի շնորհին և ըստ քրիստոնեության կրկին լիցի ու ըստ աստիճանաց հավելցի» (Դատ. II, Ա): Հետաքրքրական

Այս սպանության դեպքերու առթիվ ոչ միայն վնասվող կողմը կստանա հասցված վնասը, այլ թագավորը և իշխանը կստանան արյան տուրք: Այս արյան տուրքի դրությունը մեզ թույլ կուտա ենթադրելու, որ սպանվողը, ազնվական դասին սեփականությունը ըլլալով, անոր սպանելու պարագային տուրք գանձելու իրավունք կունենա ան:

Եթե երկու հոգի կռվին, օրենքը այդտեղ աստիճանի տարբերություն կդնե, և, ըստ այնմ, սահմանվելիք պատիժը կավելնա[1]:

Իսկ իշխող դասը, երբ անազատներու հանդեպ որևէ հանցանք գործե, օրենքը թեև պատիժը կսահմանե, սակայն կփութա արդարացման դուռ բանալ:

Այսպես՝ արմտիքի հորը իջած և մեռած մշակի տերը արյան տեր է, սակայն նախ պատիժը սահմանելը «պետք է փոսը մտնելու ձևի մասին խիստ քննության ըլլա, ինչպես նաև պետք է քննվի այն պարագան, թե նախապես օրավարձը ստացած է, թե ոչ», Սմբատ, Օրին., § 6, RB., հատ. I, էջ 30:

Տարապայման աշխատանքի տակ մեռած մշակին տերը դատելու ատեն՝ օրավարձը, աշխատանքը և գործ դրված բռնությունը նկատի առնելե վերջ, պետք է վճիռը արձակել և «պարտի ապաշխարել», Սմբատ, Օրին., § 6, RB., հատ. I, էջ 30[2]:

Այսպես՝ դասակարգային արդարադատության նմուշներ են, որոնք ծառայած են միայն ընկերության մեջ հարաճուն դժգոհություններու դուռ բանալու:

Տնտեսական և սոցիալական տեսակետե այսպես առանձնաշնորհյալ ապրող ազնվական դասը բնական էր, որ ունենար անբավ արքունական և իշխանական գանձ, որ կկազմեր թագավորին և իշխանին ուժը: Այդ գանձի ուժը ավելի որոշակի երևան կուգա, երբ նկատի ունենանք, որ այդ ավատական շրջաններուն գերեվաճառությունը օրինավորապես արտոնված էր. պարագա մը, որ հնարավոր կդարձներ դրամի ուժի կռվողներու բանակը

է այս տեսակետե այն դաշինքը, որ կնքված է Լևոն III թագավորի և սուլթան Քելսունի միջև 1285 թվին երկու երկիրներու մեջ փոքրամասնությանց իրավունքները պաշտպանելու համար. «… Սպանության պարագային սպանվածին հարստությունը տրվելե վերջ պետք է անոր աստիճանին հավասար մեկը փոխարեն տրվի. ասպետի դեմ ասպետ, վաճառականի դեմ վաճառական, զինվորի դեմ զինվոր և գյուղացիի դեմ գյուղացի» (**V. Langlois**, Cart. Pag., 228):

[1] «Եթե երկու մարդեր կռվին, և **համահավասար** աստիճանի մարդեր ըլլան, անիրավ կողմի տուգանքը սակավ ըլլա: Այն պարագային, որ մին, ստորին աստիճանի վրա գտնվելով հանդերձ, կհամարձակի լրբանալ, անոր մազը պետք է փետել և ավելի շատ տուգանք առնել» (**Սմբատ**, Օրին., § 5, RB., էջ 29):

[2] Բաղդատելով օրենքի այս տրամադրությունը «Դատաստանագիրքի» հետ կտեսնենք, որ ազնվական դասը ժամանակի ընթացքին ավելի առանձնաշնորհումներ ձեռք բերած է իրեն ենթակա դասին հանդեպ: Փոխանակ վնասվողին հարկ վճարելու կապաշխարե անոր տեղ. մինչդեռ «Դատաստանագիրքի» մեջ որոշակի վնասուց հատուցման տուրքը կսահմանվի ուղղակի վնասվող կողմի համար:

ստվարացնելու: Եվ իրապես ունեցած է արքունիքը անթիվ հարստություն[1]:

Այսպես՝ թագավորական գանձը միայն բերդեն իջեցնելու համար բանակի զինվորներ ինը օր ինը գիշեր պետք կունենան:

Այն արդյունաբերական ուժը, որ ունեցած է հայ ժողովուրդը, իշխող տզրուկներու կողմե ծծված է: Իսկ արևելյան և բյուզանդական փարթամությունն ու շքեղությունը թագավորական արքունիքը և իշխանական դղյակներու մեջ ի՞նչ չափերու հասած էր… Այդ զեղխ կյանքի և ազնվական դասի մեջ գոյություն ունեցող աստիճանավորման հոյակապ ապացույցներ են այդ մասին եղած օրենքի տրամադրությունները[2]:

Արքունական պալատներու և իշխանական դղյակներու մեջ տեղի ունեցած որոգայթներն ու դավերը կարելի է բացատրել գոյություն ունեցող այդ աստիճանավորումեն:

Այսպես՝ ազնվական դասն իբրև սոցիալական երևույթ ունեցած է իր մեջ՝ մեկ կողմե աստիճանի, դիրքի պայքար՝ առաջացած փառասիրական զգացումներեն, մյուս կողմե գոյություն ունեցած է թագավորական տան և ավատական իշխաններու միջև հարատև պայքար. վերջիններս ձգել են հաճախ անկախության, որպեսզի հնարավորություն ունենան իրանց կամքը պարտադրելու և քմահաճ կարգադրություններ ընելու:

Հարցին տնտեսական տեսակետե մոտենալով՝ կտեսնենք այն բոլոր աղբյուրները, որոնք գանձ կհոսեցնեն արքունական պալատը և իշխանական դղյակը: Իսկ անդին մշակը իր ստորերկրյա խիճիթներեն դարերու ընթացքին չի կրնար ազատվիլ իբրև մարդ՝ իր կարգին գոնե բնության պարգևած լույսն ու օդը վայելելու:

---

[1] Տիգրանի պարտութենեն վերջ հռովմեական հաղթական բանակը անկե կստանա 6.000 տաղանդ (33.750.000 ֆր.), **J. de Morgan**, Hist. arm., էջ 78-79: Նույնպես Փավստոսի պատմության մեջ կկարդանք. «Պարսից զորավարներ բերդն ի վեր կելլեին, բերդը գտնվող թագավորին գանձը կգերեին. ինն օր և ինն գիշեր իջեցուցին ինչ որ գտան», գլ. ԾԷ, էջ 176:

[2] «…Թագավորական պալատի աստիճանավորները հետևյալներն են:
Առաջին՝ Եղենտիարքն (Silentiaren), որոնք թագաղիրներն են, որ ոսկեբանված դիպակե սքեմ ունին, կկրեն ոսկե գավազան և թագավորին ուզած հագուստը կտանին անոր առջև:
Երկրորդ դասը Վեստիտորան է, որ միայն թագավորական թագաղիրներն են, թեև սքեմը և գավազանը նույնն են, սակայն շատ ավելի ճոխ կհագվին:
Երրորդը Կանտիտարան է, որոնք ոսկե նիզակները կկրեն: Ոսկե սքեմ կունենան՝ արաբական զարդարանքով վզին փաթաթած: Եվ տերունական խաչը թագավորին առջև կտանին» (**Սմբատ**, Օրին., § 60 և Դատ., I, ՃԺԳ, RB., հատ. I, էջ 86):
Երկար է շարքը այս թվումներուն. հետզհետե կուգան դագաղակիրները, մանտատորները, արքունի ախոռապետները, դրոշակակիրները, աղեղնավորները, վերջապես արքունի պահակախումբը: Բոլոր այս դասերը ունին իրենց աստիճանին հատուկ առավել կամ նվազ փարթամ զգեստներ: Իսկ բացի այս 9 դասերեն՝ կուգան ուրիշ 5 դասեր՝ արքունիքին այլազան ծառայություններ մատուցանելու համար:

4. Կղերականություն

Պատմական Հայաստանի սոցիալական կյանքին մեջ կղերական դասի դիմագծությունը տալու համար հարցին կմոտենանք հետևյալ կարգով՝

I. կղերը իբրև ուրույն դասակարգ,

II. կղերական դասի հասույթները,

III. սոցիալական կյանքի մեջ ունեցած դերը,

IV. փոխհարաբերությունը մյուս դասակարգերուն հետ:

I. Կղերը իբրև ուրույն դասակարգ

ա) Կղերական դասի վայելած առանձնաշնորհումները:

Ասոնք կարելի է երեք մասի բաժնել՝ 1. կղերականին անձը, 2. ինչքը, 3. պաշտոնը:

Իբրև երկնային իշխանության երկրային ներկայացուցիչ՝ եկեղեցիին պետը հասարակության մեջ ամենեն ավելի հարգանք վայելողը պիտի ըլլա, նույնիսկ թագավորեն ավելի[1]: Երբ հայրապետին ցույց կտրվի այդ աստիճանի հարգանք, բնական էր, որ ամբողջ կղերական դասը վայելեր նմանօրինակ առանձնաշնորհյալ դիրք՝ բաղդատմամբ մյուս դասակարգերուն[2]:

«Դատաստանագրքե» հայտնի կերևի, որ պայքար տեղի ունեցած է ազնվական և կղերական դասի միջև՝ վերջինները տուրքե ազատ մնալու համար[3]:

Հարկե ազատ ըլլալու պտրագայեն կհետևի նաև, որ կղերական դասը ամուսնություն չէր կնքեր անազատներու հետ:

Երբ նկատի ունենանք, որ, բացի ներքին իշխող դասակարգեն, այլազան ժամանակներու տիրապետողները ծանր հարկեր դրած են Հայաստանի ժողովուրդի վրա, այն ատեն հասկանալի կըլլա, թե ինչ մեծ նշանակություն կրնա ունենալ այս տեսակետեն առանձնաշնորհյալ դիրքը: Եվ երբ պարսիկներու տիրապետության օրով կղերական դասեն ալ տուրք գանձված է, այդ երևույթը հայ պատմիչին կողմե իբրև աննախընթաց երևույթ ար-

---

[1] **J. Karst**, RB I. **Սմբատ**, Օրին., § 1, էջ 17 և Դատ., II. «…Ինչպես նաև թագավորը չնստի հայրապետին մոտ, զի չէ հրաման»:

[2] «… Բոլոր մյուս դասակարգերեն ավելի հարգանքի առաջնությունը կվերաբերի վարդապետներուն, քանի որ անոնք հոգիի բժիշկներն են և եկեղեցիին հաստատությունը» (RB. I, էջ 24, § 1): Դատ., II, Ա. «…Սակայն պիտանի և հարկավոր ի բանական արվեստս և փրկական վարդապետություն է, նախապատիվ լիցի «յիշխանս և յարքունիս», զի հասարակաց հայր է և բժիշկ հոգվոց»:

[3] «Երբ ազատները իրանց ագարակը և մարդը կբաժնեն, գեշ կերպով կընեն և եկեղեցիին զավակները կփափագին ծառա ընել և ստրկության մեջ պահել, ինչ որ քրիստոնյաներուն չի վայելեր» (RB. I, էջ 65, «Դատաստանագիրք», I, ՃԶ):

ձանագրված է[1]:

Որպեսզի կղերականի կալվածները ուրիշ դասակարգի չփոխանցվի, օրենքը այս ուղղությամբ ալ որոշ սահմանափակում կընե եկեղեցականի կալվածներու ծախվելու պարագային[2]:

Բացի անձի և ինչքի մասին վայելած առանձնաշնորհումներեն՝ կա և պաշտոնի մասին. այսպես՝ թույլատրված չէր ամեն անհատի կղերական դասի մաս կազմել[3]: Սմբատի «Օրինագիրքի» այս տրամադրությունը ցույց կուտա այն բացառիկ դիրքը, որ կվայելեր կղերական դասը այնպես, ինչպես ազնվական դասը:

բ) Կղերականի հաջորդականությունը: Սոցիալական տեսակետե կարեվոր նշանակություն ունի նաև կղերականի հաջորդականության իրավունքը: Նշանակովի և ընտրովի եկեղեցականի մեջ կա որոշ տարբերություն, մանավանդ երբ նկատի ունենանք, որ անցյալ շրջանին եկեղեցականի պաշտոնը միայն եկեղեցական արարողություններ կատարելուն մեջ չէր, այլև հասարակական արժեք ուներ: Նշանակովի կատարված պարագային ժողովուրդի կամքը կանտեսվի, իսկ երբ ընտրությամբ ըլլա, ոչ միայն որոշ չափով այս կամքը նկատի կառնվի, այլև ընտրողները իրավասու կըլլան իրանց ընտրածները վար առնելու այն պարագային, երբ չեն գտներ ընտրված եկեղեցականի մոտ պաշտոնին արժանավոր անձը:

Այն կարծիքը կտիրե, թե հայ եկեղեցին սկիզբեն առաջնորդված է դեմոկրատիք սկզբունքներով, այսինքն՝ ժողովրդի կողմե ընտրված է եկեղեցական պաշտոնյան: Առանց եկեղեցական պատմության մանրամասնություններ-

---

[1] «…Նույնպես եպիսկոպոսներեն և երեցերեն տուրք կառնեին»: «…Եվ Սուրբ եկեղեցին, որ մեր նախնիքներու գրած կարգերով շնորհիվ Քրիստոսի ազատ էր, դու հարկի տակ դրիր», **Եղիշե**, Վենետիկ, 1859, էջ 19 և 35:

[2] «Օրենքը կհրամայե, որ քահանայի տունը և ագարակը երեցե կամ եկեղեցականե զատ ուրիշ մեկը չգնե, և եկեղեցիին հողը եկեղեցիե և եկեղեցականե զատ ուրիշ մեկու չծախել» (RB. I, էջ 96): Սմբատ, Օրին., § 65, Դատ. այս որոշման վրա կավելցնե նաև: «…Եվ միշտ ընդ փրկանոք լիցին առավելությամբ, քան աշխարհականաց վաճառք»: RB. I, էջ 96, Դատ., I, Թ: **Dr. Karst** այս փոփոխությունը կվերագրե «Դատաստանագիրքի» այս որոշումը գործնական կյանքի մեջ չգործադրվելուն, RB. II, էջ 96:

[3] «… Պարոնին և եկեղեցիին հավանությամբ միայն մեկը կրնա իր ծառան ժառանգեցնել. Նույնպես թույլատրված չէ ծառան երեց ընել» (RB. I, էջ 169, **Սմբատ**, Օրին., § 115): Սմբատի «Օրինագիրքին» այս հոդվածին համապատասխանող «Դատաստանագիրքի» II-ի օրենքը այս տրամադրութենեն զերծ է: Հարց է այժմ, թե արդյո՞ք այս միայն Կիլիկյան շրջանին ծնունդ առած է, թե՞ նախապես Հայաստան ալ գործադրված, բայց հիշատակված «Դատաստանագիրքի» մեջ: Թեև տվյալներ չունինք այս մասին, բայց նկատի ունենալով կղերական դասի այդ բացառիկ դիրքը՝ չէ հակառակը ըսելու հիմք չունինք: Քանի որ «Դատաստանագիրքի» կղերական դասի հարկերու վերաբերող հոդվածին մեջ որոշակի կշեշտե, որ «կղերականները «ազատներու» հետ միևնույն աստիճանի վրա կգտնվին»: Արդ ազատները՝ իբրև բարձր դասակարգ, անազատներեն միշտ հեռու մնացած են՝ նկատելով զանոնք իբրև ստորին դասակարգ:

րուն մեջ մտնելու տեսնենք, թե XII և XIII դարերուն խմբագրված օրինագրքեր այս մասին ինչ տրամադրություններ կպարունակեն: Այստեղ պետք է զանազանել եպիսկոպոսի պաշտոնը երեցի պաշտոնեն: Օրենքը կարգիլե եպիսկոպոսին իր աթոռը ժառանգ թողուլ իր ազգականներուն[1]:

Օրենքի այս տրամադրությունը գործնական կյանքի մեջ պատահածին արգելք մ'է, որ կգնե: Գրիգոր Լուսավորչեն սկսյալ այդ եղած է ժառանգական մինչև որոշ շրջան: Նույնը հայտ եկած է IX դարուն Պահլավունյաց ժամանակ:

Ներսես Լամբրոնացի այս հաստատության դեմ կպայքարի[2]: Այս պատմական տվյալներուն Dr. **Karst** կավելցնե իր կողմե. «Եպիսկոպոսության ժառանգությունը ընդհանրապես կկիրարկվեր, և գոյություն ունեցող սովորությունը իբրև օրենք կանցներ»:

Ի՞նչ կհետևի այս բոլոր փաստերեն. այն, որ եպիսկոպոսը թեև օրենքով սահմանված է ընտրությամբ պաշտոնի կոչել, սակայն կղերական դասը ինքզինքը այնքան զորավոր զգացած է, որ օրենքի այս տրամադրությունը երկար ժամանակ ոտնակոխ ըրած է, և թափուր մնացած առաջնորդական աթոռներու վրա ոչ թե ժողովրդյան ընտրելին, այլ եպիսկոպոսին ազգականը կամ անոր հաճելի անձը բազմած է:

Եթե եպիսկոպոսներու, այսինքն՝ եկեղեցական դատավորներու և քաղաքներու առաջնորդներու մասին օրենքը ընտրություն կսահմանե, թեև գործնականին մեջ, գոնե պատմական որոշ ժամանակաշրջան չգործադրված, քահանայության պաշտոնի համար օրենքի տրամադրության մեջ ընտրության կամ ժողովուրդի հավանության խոսքն անգամ չըլլար[3]:

գ) Աստիճանավորում և օրենքի գործադրման ձև կղերի հանդեպ: Որպեսզի կղերականության դիմագիծը՝ իբրև ուրույն դասակարգի, պարզ ըլլա մեզ, պետք է ցույց տալ նաև այս դասին մեջ գոյություն ունեցող աստիճանավորումը և օրենքի գործադրումը հանցավոր եկեղեցականներու հանդեպ: Առաջինը այն չափով մեզ կշահագրգռե, ինչ չափով որ ան կանդրադառնա

---

[1] «Երբեք չէ սահմանված սուրբ եկեղեցիի կողմե, որ եպիսկոպոսը իր եպիսկոպոսական աթոռը ժառանգ թողու: Այս տեղի կունենա Աստուծո, պատրիարքին և ընդհանուր ժողովրդյան ընտրությամբ», **Սմբատ**, Օրին., § 16: «… Թե հաճո բազմացն թվեսցին օրհնությամբ մասնավորավ հաստատել», Rb. I, էջ 36, Դատ., I, ԼԱ:

[2] «… Եվ եպիսկոպոսները չեն սպասեր իրանց մահվան ժամուն և շատեր իրանց կենդանության ժառանգ կթողուն իրանց աթոռները իրանց ընտանիքի անդամներուն, և ոչ ոք կընդդիմանա և Աստուծո արդարության համար կմիջամտե», ավելի հեռուն կշարունակե. «… Եպիսկոպոսները ժառանգ կթողուն իրանց թեմերը, աբեղաները իրանց վանքերը, քահանաները եկեղեցիները իրանց ազգականներուն իբր մարմնավոր ժառանգություն…», **Ներսէս Լամբրոնացի**, Վեն., 524, 535-536:

[3] «… Քահանայությանն կամ ծխերուն չկարե դնել (հաջորդք) առանց եպիսկոպոսի կամացն և հրամանացն», RB. I, էջ 64, **Սմբատ**, Օրին., § 41:

սոցիալական կյանքի վրա, այսինքն՝ այս դասին մեջ գոյություն ունենալով բարձր և ցած աստիճաններ՝ դիրքի պայքարը պատմության ընթացքին անխուսափելի եղած է, և ասկե տուժողը անմիջականորեն եղած է բուն ժողովուրդը: Որովհետև բարձրագույն դիրքի հասնելու համար կղերը պետք ունեցած է հարստության, կաշառելու համար իշխանություն ունեցողները, իսկ այդ հարստությունը դիզած է ի վնաս արտադրող դասին:

Գոյություն ունեցած են ինը աստիճաններ[1]:

Եկեղեցականները կդատվին կղերական դատարանի առջև. սա՝ իբրև ավատական կարգերու հատուկ հաստատություն, ժողովուրդի մը սոցիալական կյանքին վրա կանդրադառնա անով, որ եկեղեցական դատավորը ժողովուրդին շահերը պաշտպանելե ավելի իր պաշտոնակիցը պիտի պաշտպանե, և այս ձև դատավարության բացասական կողմերուն մինչև մեր օրերը ականատես կըլլանք: Ահա թե ինչո՛ւ կաշխատվի դատավորները բացարձակապես ազատ ընել որևէ արտաքին ազդեցութենե: Երբ հարցը կուգա եկեղեցական մը հրաժարեցնելուն, կղերն ու ազնվականը իրարու հետ դաշնակցած, խոսքն անգամ չըլլար ժողովրդային զանգվածի մասին[2]:

II. Կղերական դասի հասույթները

Ժողովրդային տնտեսության տեսակետե կղերական դասը եղած է սպառող դասակարգ և մասնակցած չէ ժողովրդային արդյունաբերության: Այսպես ըլլալով մեկտեղ՝ տեր եղած է մեծ հարստություններու: Ահա այս հանգամանքն է, որ ժողովուրդի սոցիալական կյանքի վրա ունեցած է բացասական ազդեցություն: Եվ կղերի ժողովրդային արդյունաբերության մասնակցիլը օրինական կերպով կնվիրագործվի[3]: Իսկ ժողովուրդեն տուրք վերցնելը՝ իբրև կղերին իրավունքը, օրենքի կարգ կանցնի[4]:

---

[1] Հմմտ. RB. I, էջ 81, **Սմբատ**, Օրին., § 60: Նույնպես Դատ. I, ՃԺԳ. RB. II, էջ 65(132):

[2] Հմմտ. RB. I, էջ 42, **Սմբատ**, Օրին., § 24, «… Դասակարգային դատարանի կանոնադրության հիմք կծառայե նույն այն սկզբունքը, որուն կհանդիպինք աշխարհական դասակարգերու դատաստանական կանոնադրության մեջ, առանձին աստիճանավոր կարգերը իրանցմե աստիճանով ավելի բարձր կարգերուն կողմե կդատվին», RB. II, էջ 98:

[3] «… Ապա երեցն պարտ է, որ երբ զայս առնու (մատաղի բաժին), նա հերիք անի ու այլ մարմնավոր գործ չանի և այլ չգիտենա «յաշխարհի» բանեքան զեկեղեցիին մեն և զժամն», RB. I, էջ 97, **Սմբատ**, Օրի., § 66:

[4] «… Եվ ան (եպիսկոպոսը) տուրքերը նշանակված չափով գանձե…, որովհետև յուրաքանչյուր կղերական եկեղեցիին մատուցած ծառայության փոխարեն յուր կալվածին մեջ այնպես հաստատված է, ինչպես ապետը, որ սուրովը կստանա թոշակը», RB. I, էջ 33, **Սմբատ**, Օրին., § 11: «… Վասն զի օրենքն Աստուծո հրամային՝ որք սեղանույն պաշտոնյայքն են ի սեղանո անտի կերակրել», Դատ., I, ԻԳ, RB. I, էջ 33:

Այսպես՝ կղերականը՝ իբրև Աստուծո պաշտոնյա, միայն այդ պարտականությամբ պետք է զբաղի, և ատոր փոխարեն հասարակությունը պետք է անոր կարիքներուն բավարարություն տա:

Սոցիալական տեսակետե մեզ հետաքրքրողը այս կետին մեջ հետևյալ հարցն է. արդյոք ժողովուրդի ո՞ր մասն էր, որ առավելապես ծանրաբեռնված էր եկեղեցական տուրքերով: Որպեսզի այս հարցին կարենանք բացորոշ կերպով պատասխանել, քննենք, թե ի՞նչ տեսակի տուրքեր կգանձեր կղերական դասը:

Այս տուրքերը կարելի է բաժանել 3 մասի՝

ա) եկեղեցապատկան կալվածներե ստացված եկամուտ,

բ) կանոնավոր տուրքեր,

գ) արտաքո կարգի տուրքեր:

ա) Նախաքրիստոնեական շրջանեն քուրմերու կաստան ունեցած էր առանձին տնտեսություն: Այդ դրությունը կշարունակվի քրիստոնեական շրջանին: Հեթանոս քուրմերու կալվածները փոխանցված են քրիստոնեական եկեղեցիին: Բացի այս՝ ժամանակի ընթացքին կղերական դասը արքունիքեն և նախարարական տուներեն ստացված կալվածներով ընդարձակած է հողերը: Այդ եկեղեցապատկան կալվածներու վրա հայ շինականը աշխատած է, և միայն ան եղած է արտադրողը: Պատմական մեկե ավելի տվյալներ ունինք, որոնք որոշակի կհաստատեն եկեղեցապատկան ընդարձակ կալվածներու գոյությունը[1]:

Եվ երբ պատահած են թագավորներ և իշխաններ, որոնք ձեռնամուխ եղած են եկեղեցապատկան կամ վանապատկան կալվածներուն, կղերական պատմագիրը մեղադրած է զանոնք իբրև անհատներ, որոնք ոտնակոխ կընեն նախնիքներուն դրած կարգ-կանոնը[2]:

Այսպես, եթե ազնվական դասը ունեցած է մեծ կալվածներ, որոնք իշխանական դղյակներու տնտեսական բարիքներ մատակարարած են, կղերական դասը իր ոչ նվազ ընդարձակ կալվածներով այս տեսակետեն տարբեր դիրքի վրա չէ գտնված: Ավելին կըսենք: Եթե մեծ հողատիրությունը պատմա-

---

[1] «…Եվ Խոսրով Մանազյան նահապետի ավանը և բուն նախարարանիստ գյուղը տվավ Աղբիանոս եպիսկոպոսի եկեղեցիին, Մանավազակերտը բոլոր սահմաներով և անոր շուրջը գտնվող գավառները, որոնք մինչև Եփրատ գետը կընդարձակեին: Եվ Որդունյաց բուն գյուղը, որ ուներ Որդպու բոլոր սահմանները, Բասենու եպիսկոպոսին …», **Փավստոս**, Վենետիկ, 1889, էջ 10, գլ. Գ: … Եվ 18 գյուղ ազատեց և տվավ եկեղեցիին, արքունի դիվանեն ջնջեց անոնց անունները», **Յովհան Մամիկոնեան**, Պատմութիւն Տարօնոյ, Վենետիկ, 1889, էջ 30:

[2] «… Եվ արքունիքին յուրացուց Պապ թագավորը եկեղեցիին հողը, զոր Տրդատ թագավոր և Գրիգոր քահանայապետը եկեղեցիի պաշտամունքի համար տված էին ամբողջ Հայոց երկրի մեջ: 7 հողեն 5-ը կյուրացներ, և երկուքը կթողուր միայն», **Փավստոս**, Վենետիկ, 1889, էջ 237, գլ. ԼԱ: «…Կյուրեղ հայրը բարկանալով անիծեց իշխանները գյուղերը վանքերեն կտրելնուն համար», **Յովհան Մամիկոնեան**, Վենետիկ, 1889, էջ 12:

կան Հայաստանի մեջ սկսած է տարածվել, ատոր ծագումը պետք է փնտրել եկեղեցապատկան և վանապատկան կալվածներուն մեջ[1]:

Իսկ այս բոլորին վրա, երբ ավելցնենք, որ եկեղեցիին պետերը հաճախ այդ եկեղեցապատկան կալվածները իբրև իրանց անհատական սեփականությունը ժառանգ թողած են իրանց զավակներուն[2], այն ատեն սոցիալական տեսակետե կղերական դասի կատարած դերը որոշակի կշեշտվի: Այս կամայականություններուն առջևը առնելու համար օրենքը այս մասին հատուկ տրամադրություն կմշակե[3]:

բ) Բացի եկեղեցապատկան կալվածներե ստացված եկամուտներե՝ կղերական դասը ունեցած է կանոնավոր տուրքեր: Ըստ հայ եկեղեցիի հատուկ քահանայական կազմակերպության՝ հայ հասարակությունը ծուխերու բաժնված էր, և յուրաքանչյուր ծուխ սկզբնական շրջանին բնական տուրք պարտավոր էր վճարել իր համայնքին պատկանող եկեղեցականին[4]: Եվ մինչև մեր օրերուն գոյություն ունեցող վարդապետին «պտուղ» ժողվելու սովորության ծագումը պետք է ասոր մեջ փնտրել: Որպեսզի կղերական դասի մեջ այս գետնի վրա առաջ եկած տարակարծությունները վերնան, օրենքը այս մասին եկեղեցիին և վանքին կանոնադրության մեջ որոշակի սահմանած է «մատաղեն» յուրաքանչյուրին ստանալիք բաժինը, ինչպես և տոները, որոնց միջոցին ուխտավորները մեծ նվիրատվություններ կընեին եկեղեցիին և վանքին[5]:

գ) Բացի այս տուրքերեն՝ կղերական դասը պատերազմական ավարներեն թագավորին բաժնեն կստանար, ըստ այլազան կարգադրություններու՝ ոսկիին $^1/_{10}$-ը, ավարին $^1/_{10}$-ը: Նույնը պարտավոր էին նաև իշխանները վճարել. իշխանական ավարներուն ոսկին և գերին թագավորին կմնար, ուրկե $^1/_{50}$-ը կստանար եկեղեցին[6]:

Ավարներեն մաս առնելու այս սովորությունը մնացած է դարձյալ հեթանոսական շրջանեն[7]:

Ստացված այս տուրքերը, ինչպես և եկեղեցիին եղած պատահական

---

[1] «...Թե ազատ գյուղացիության կողքին հին հայկական շրջանին արդեն մեծ հողատիրության կազմության տարերքը գոյություն ունեցած են, որևէ կասկածե վեր է: Նախ գոյություն ունեին եկեղեցիները և վանքերը, որոնց մեծ կալվածներ կնվիրվեին անոնց վրա արդյունաբերող համայնքներով, և այսպես հետզհետե ազատ գյուղացիության դասը կնվազեցնեին», Dr. Karst, Grundr. Der Gesch. Des arm. Rechtes. Zeitschr. f. vergl. Rechtswiss, Band XX, 1907, էջ 56:

[2] «...Աստծո տուրբ այրը՝ Սահակ, յուր գյուղերու և ագարակներու ստացվածքները, ինչպես և բոլոր ունեցածը, տվավ իր աղջկան զավակներուն իբրև ժառանգություն», **Ղազար Փարպեցի**, Տփղիս, 1904, գլ. ԺԸ»:

[3] Հմմտ. RB. J, էջ 32, **Սմբատ**, Օրին., § 10:

[4] Dr. **Karst**, Grundr. Der Gesch. Des arm. Rechtes. Z. f. vergl. Rw. B. XX, 1907, p. 21:

[5] Հմմտ. RB. I, էջ 54, **Սմբատ**, Օրին., § 34 և § 66:

[6] Հմմտ. RB. I, էջ 408, § (49), § (50), § (53):

[7] Հմմտ. RB. II, էջ 419:

նվիրատվությունները, կոչեցինք արտաքո կարգի տուրքեր:

Այսպես՝ այս երեք կարգի հասույթներեն պարզ կերպով կարելի է բացատրել այն հարստությունը, որ կենտրոնացած է կղերական դասի ձեռքը դարերու ընթացքին: Ըսվածներեն որոշակի կարելի է հետևցնել, որ ինչպես եկամուտները, նույնպես և կանոնավոր տուրքերը, ամբողջովին ծանրացած են արտադրող շինական դասին վրա:

III. Սոցիալական կյանքի մեջ ունեցած դերը

Եկեղեցին՝ իբրև ինքնուրույն հաստատություն, սոցիալական կյանքի մեջ պատմական խոշոր դեր կատարած է:

Հասարակության մեջ արդարադատության գործադրությունը պետության պատկանած է իբրև սոցիալական բարձրագույն օրգանի: Մեր դրացի ազգերու մոտ կրոնքը նույնացած էր իրավունքին հետ, և կրոնական իշխանությունը միևնույն ատեն աշխարհական դատավորի դերը կկատարեր: Մյուս կողմե քրիստոնյա կղերը՝ իբրև բարոյականի քարոզիչ, իր այդ կոչումին մեջ կտեսներ երկրային մեղքերը դատելու իշխանությունը[1]: Այս ազդակներուն մոտ, երբ ավելցնենք նաև այն պարագան, որ հեթանոս քուրմերը իրավական գետնի վրա վայելած են մեծ իշխանություն, այն ատեն պարզ կըլլան այն ազդակները, որոնցմե ծագում առած է կղերական դասի երկրի արդարադատության մեջ ունեցած դիրքը:

Սկզբնական շրջանին կղերական դասը այս իշխանությունը սովորույթի վրա հիմնված կգործադրեր քաղաքական դեպքերու բերումով, թագավորի իշխանության նվազելուն և չքանալուն հետևանքով: Հետո բարքերու վրա հիմնված այս իշխանությունը առաջին անգամ Շահապիվանի Սինոդեն (447 թվին) կդառնա օրենսդրություն: Իսկ թագավորական իշխանությունը գրեթե ամբողջությամբ ժամանակի ընթացքին կփոխանցվի կղերականության ներկայացուցչին, կաթողիկոսին[2]:

Եկեղեցական դատարաններու մանրամասնությունները մեր նյութեն դուրս մնալով՝ կուզեինք դատարանի վկայություններու համար պահանջած պայմանները հիշել միայն՝ ցույց տալու համար դատավորները առաջնորդող սկզբունքները[3]:

---

[1] Հմմտ. **Մովսես Կաղանկատվացի**, էջ 245, գլ. ԺԱ:

«… Դատական իշխանությունը՝ իբրև աստվածային հրամայական, կվերաբերի իր ծագումեն հոգևորական իշխանության»: «Դատաստանագիրքի» մեջ եպիսկոպոսը իբրև **առաջին դատավոր** ցույց տրված է, RB. II, էջ 314:

[2] Պատմական այս զարգացման համար հմմտ. RB. II, էջ 345, ինչպես նաև Dr. **Karst**, Grundr. Der Gesch. des arm. Rechtes. Z. f. vergl. R. Wiss., B. XIX և XX, էջ 322, 323, էջ 20, 21 և 98:

[3] Հմմտ. RB. II, էջ 379, 380:

Գերիներու, կիներու, ոչ քրիստոնյաներու (մահմեդական, հերձվածող, հերետիկոս) վկայությունը չընդունվիր, ինչպես նաև կպահանջվին «անարատության» և անկասկածելիության նման ընդհանուր պայմաններ, որոնք, ըստ անհատի հասկացողության, կրնան կամայականություններու դուռ բանալ:

Հասարակության վրա ունեցած իրավունքի այս իշխանությունը կտարածվեր նաև թագավորական տան վրա: Այսպես՝ թագավորի ընտրության միջոցին «Օրինագրքին» մեջ կհիշատակվի «հայրապետին տեսովը» պարբերությունը[1]: Իսկ նույնը նաև թագավորը հրաժարեցնելու պարագային:

Իրավական գետին վրա կղերական դասի վայելած այս բացառիկ դիրքին շնորհիվ կարելի է բացատրել այն ազդեցությունը, որ ունեցած է երկրի միապետներուն վրա: Պատմությունը մեկե ավելի դեպքեր արձանագրած է, ուր միապետը հայրապետին կողմե կհանդիմանվի[2]:

Այդ հիշատակություններեն հայտ կուգա, որ միջադեպերուն պատճառները հաճախ կրոնաբարոյական են: Սակայն կարժեր ընդգծել միևնույն ատեն այն պարագան ևս, որ մեկե ավելի եկեղեցականներ գտնված են, որոնք, փորձառությամբ գիտնալով հանդերձ, թե միապետին ուղղած հանդիմանություններեն վերջ մահ կսպառնա իրանց, չեն քաշված:

Բացի իրավական գետնի վրա պետական իշխանության միջամուխ ըլլալե՝ կղերական դասը իր հիմնած հասարակական նշանակություն ունեցող հաստատություններով՝ որբանոց, անկելանոց և այլն, կատարած է այդ ժամանակաշրջանին պետական պաշտոն:

Վերջապես երկրի պետական կյանքի մեջ քաղաքական գետնի վրա ունեցած են որոշ գործունեություն: Այսպես՝ հաշտարարի դեր կատարելով մեկ կողմե՝ ներքին քաղաքականության մեջ իշխաններու և թագավորներու միջև ծագած անհամաձայնությունները հարթելու, մյուս կողմե՝ արտաքին քաղաքականության մեջ թշնամի պետություններու մոտ իբր հաշտության պատվիրակներ երթալով:

IV. Փոխհարաբերությունը մյուս դասակարգերուն հետ

ա. Կղեր և ազնվական դասակարգ,
բ. Կղեր և անազատներու դասակարգ:

ա) Տեսանք, թե ինչպես կղերական դասը իր տնտեսական շահերով կապված էր ազնվական դասին հետ՝ մեկ կողմեն ստանալով անկ ընդարձակ

[1] Հմմտ. RB. I, էջ 16, **Սմբատ**, Օրին., § 1:

[2] «… Այլ դու, Արշակ, քանի որ Կայենի գործեր ըրիր, Կայենի անեծքը ընդունիս. կենդանությանդ թագավորութենեդ իյնաս և չարչարվիս Տիրան հորմեդ ավելի և դառն մահով կյանքդ մեծ նեղությամբ վճարես», **Փավստոս**, Վեն., 1889, էջ 123, գլ. ԺԵ:

տարածությամբ կալվածներ, մյուս կողմե՝ արտաքո կարգին հասույթներ: Տնտեսական այս շահերու կողքին, երբ նկատի ունենանք, որ բազմաթիվ վանքեր և եկեղեցիներ թագավորներու և իշխաններու կողմե կառուցված են, ինչպես և այլ բոլոր ոսկեղեն և արծաթեղեն զարդերու անմիջական նվիրատուները եղած են այս վերջինները, այն ատեն հասկանալի կըլլա այն սերտ գործակցությունը, որ գոյություն ունեցած է անցյալին մեջ կղերին և ազնվական դասին, իսկ ներկայիս՝ կղերին և ունևոր դասին միջև:

Առանց մանրամասնություններու մեջ մտնելու՝ կբավականանք միայն՝ հիշելով, որ «ազատներ» ու մոտ ծառաներու դրությունը կնվիրագործվեր «եկեղեցիի վկայությամբ»[1]:

Ամբողջ պատմության ընթացքին այս երկու դասակարգերը գոյություն ունեցող կարգերը պահպանելու և իրանց շահերը հետապնդելու գետնի վրա միշտ իրարու հետ դաշնակցած են:

բ) Երբ կքննենք կղերական դասի և անազատներու փոխհարաբերությունը, վերջինը, ըլլալով մասնավորապես արտադրող դասակարգը, կուզենք ցույց տալ կղերական դասի ժողովրդային տնտեսության վրա ունեցած ազդեցությունը:

Բացի կղերական դասի հասույթներեն, որոնք ամբողջությամբ ծանրացած են արտադրող դասին վրա, կա և կրոնական հավատալիքներու ըրած ազդեցությունը ժողովրդային տնտեսության վրա:

Սուրբերու նշխարներու և կամ խաչերու համար եկեղեցին հազարավոր դահեկաններ վճարած է՝ զանոնք Հայ եկեղեցիին սեփականությունը դարձնելու համար[2]:

Այս բոլորեն վերջ կա սոցիալական կյանքի մեջ կատարած դերը: Տեսանք, թե ինչպես եկեղեցապատական և վանապատական կալվածները մեծ հողատիրությունը առաջացուցած են: Գոյություն ունեցող փոքր սեփականատեր գյուղացիությունը, հողազուրկ դարձնելով, ստվարացուցած է անազատներու բանակը:

Քրիստոնեական բարոյականը անզոր եղավ գոյություն ունեցող անարդար սոցիալական կարգերը բարեփոխելու, և հինը շարունակվեցավ: Եվ եթե

---

[1] «…Եթե ծառան վերստին իր տիրոջ դառնա և ըսե՝ «տուր ի կինս և տղաք», տերը եկեղեցիին վկայությամբ կրնա զայն հավիտենապես ծառա դարձնել», RB. I, էջ 169, § 115:
«…Զի ըստ առաքելո ի Տեր կոչեցյալ ծառան ազատ տյառն է», Դատ., II, Ի:

[2] «… Բազմաթիվ պատերազմներ եղան մինչև նախարարները քահանայապետին կամ քաղաքապետին *դասներկու հազար դահեկան* կշռեցին և այնպես բռնությամբ առնելով (Հովհաննես Մկրտչի նշխարը)՝ քաղաքեն (Կեսարիայեն) հեռացան…», **Զենոբ Գլակ**, Պատմութիւն Տարօնոյ, Վենետիկ, 1889, էջ 24:
«… Այդ տարին Վահան Կամսարական Կեսարիա գնաց և երեսուն վեց հազար դահեկան տվավ Հովհաննու Հայրապետին և խաչը առնելով՝ բերավ Գլակի Սուրբ Կարապետ վանքը», **Յովհ. Մամիկոնեան**, Պատմութիւն, էջ 57:

գտնվեցան եկեղեցականներ, որոնք ընդհանուր թշվառությունը մեղմելու համար հաստատություններ բացին, այդ կիսամիջոցները անզոր էին ընդհանուր տառապանքը վերացնելու, քանի որ չարիքը բուն իսկ տիրող կարգին մեջն էր:

5. Անազատներու դասը

Անազատները ներկայացուցած են պատմական Հայաստանի ժողովրդային մասսան: Անոնք եղած են արտադրող դասը, որուն աշխատանքով ապրած են անվական և կղերական դասերը:

Հին Հայաստանի արտադրության ազդակներն եղած են հողն ու աշխատանքը: Արտադրող դասի սոցիալական պայմանները կախված են եղած այն փոխհարաբերութենեն, որ գոյություն է ունեցած աշխատավորի և հողի սեփականության միջև:

Պատմական այլազան շրջաններու մեջ այս փոխհարաբեությունը տարբեր ձևերով է հայտ եկած: Այդ ձևերը անմիջականորեն ազդեցություն ըրած են աշխատավոր դասի հասարակական կյանքի վրա:

Մեզ կզբաղեցնե հողի և աշխատավորի սեփականության հարաբերությունը, և այս տեսակետեն մեկնելով՝ տնտեսական վերոհիշյալ շրջանները **կբննենք** պատմական հետևյալ շրջաններու մեջ՝

ա. նախապատմական շրջան,

բ. Արշակունյաց շրջանեն մինչև Ռուբինյանց շրջանը:

ա. Նախապատմական շրջան

ա) Հավանական է, որ նախապատմական շրջանի սկիզբը **համայնավարական** սեփականության ձևը գերիշխող եղած ըլլա: Փաստեր չունինք այս ենթադրությունը հաստատող, սակայն անհավանական չթվիր այս, մանավանդ որ Մխիթար Գոշի «Դատաստանագիրքեն» և Սմբատի «Օրինագիրքեն» մնացորդներ ունինք անցյալի այդ ձև տնտեսությունը հիշեցնող[1]: Նույնպես համայնավարական սկզբունքի իբրև մնացորդ կարելի է նկատել «Դատաստանագիրքի» ներքին գաղութներ հիմնելու մասին սահմանած հետևյալ տրամադրությունը. «Երբ առաջին անգամ գյուղ կշինվի, պետք չէ

[1] «Եվ եթե մտանիցես ի հունձ ընկերի քո, քաղեսցես ձեռովք քովք հասկն, և մանգաղ մի՛ արկանիցես հոճ ընկերի քո…», «Եվ եթե մտանիցես յայգի ընկերի քո, կերիցես խաղող մինչև հագենալ անձին քո, բայց յամանս մի՛ ամանիցես…», Դատ., II, 78 և 79, նույնպես **Սմբատ**, Օրին., § 164: **Karst**, RB. I, էջ 97. Հմմտ. այս մասին՝ **Karst**, Zeitschr. f. vergl. Rechtswissensch., հատ. XX, էջ 55:

հաստատուն կերպով հողը, ջուրը և այս կարգի բաները բաժնել, այլ պետք է սպասել, որ բավական թվով բնակիչներ ժողվին, և ապա տեղի ունենա հաստատուն բաժանումը», Դատ., II, 106, **Karst**, Rb. I, էջ 190:

Ժամանակի ընթացք ծնունդ առած է մասնավոր սեփականությունը: Այստեղ ալ անհատը չէ եղած տնտեսական ենթական, այլ ընտանիքը իր ամբողջությամբ:

Հողի սեփականության հետ առաջացած է և սոցիալական անհավասարությունը: Հասկանալու համար, թե այդ անհավասարություն ինչ չափով է շեշտված, պետք է պարզ ըլլան հետևյալ հարցերը: Այն, թե հողային արտադրությունը ի՞նչ ձևով է կատարված: **Գյուղ**, **շեն** և **ագարակ** բառերը տարբերա՞ծ են իրամե տարածությամբ, թե՞ երկրագործական արտադրություններու ձևով և հողային օրենքներով: Տնտեսական միություն կազմող յուրաքանչյուր ընտանիք ունեցա՞ծ է իր սեփական արտավար հողը: Տնտեսական տեսակետե սեպուհները և ոստանիկները ի՞նչ դեր կատարած են: Այս հարցերը առավելապես հողային պատմության նյութ կկազմեն, սակայն, դժբախտաբար, այս գետնի վրա հետազոտություններ չեն կատարված: **Karst** իր «Հայկական իրավունքի պատմություն» գրվածքի մեջ այն միտքը կհայտնե, թե գեղջուկը եղած է նախապատմական շրջանին ազատ[1]: Ուրեմն, ըստ **Karst**-ի, գեղջուկը ունեցած է իր արտավար հողը, մշակած է այն և իր ընտանիքի կարիքներուն բավարարություն տված:

Նույնիսկ երբ արտավարելու գոյությունն ընդունինք, տակավին այդ չնշանակեր, որ այն մշակողը ազատ եղած է: Այսպես՝ նմանօրինակ պատկերի կհանդիպինք գերման հողային պատմության նախապատմական շրջանին: Արտադրող դասի սոցիալական կյանքի մասին այստեղ կա երկու կարծիք: Մին կընդունի, որ նախապատմական շրջանին արոտավարի սահմանադրությամբ գերման գյուղացիության ճնշիչ մեծամասնությունը եղած է ազատ, մինչդեռ անազատներու թիվը ատոր փոխարեն շատ չնչին: Իսկ մյուս տեսակետը պաշտպանողները կըսեն. «1. Արոտավարը համայնքի ազատին բնական ստացվածքը չէր, այլ հողի մշակության միություն էր: 2. Ազատը գյուղացի չէր: 3. Նախապատմական շրջանի գյուղացին ազատ չէր, այլ անազատ կամ նվազ ազատ: 4. Նախապատմական շրջանի գերման ժողովուրդի ազատներու ընկերությունը տնտեսապես հիմնված էր անազատներու վրա»[2]:

Երբ նկատի ունենանք, որ նախապատմական շրջանի Հայաստանի

---

[1] «… Այս վիճակին կհամապատասխանե հնադարյան շրջանի *ավագորդյարի* և *գեղջուկներու* խմբավորումը, որոնց վերջինները հավանաբար հետագա շինականներուն նման տիրոջ պատկանողներ եղած չեն, այլ ազատ», Zeitschr. f. vergl. Rechtswissenschaft, հատ. XX, էջ 16:

[2] **W. Wittch**, Գերման հողային պատմության շրջանները: **Grundr. d. Sozialökonomik**, Abt. VII, 1, էջ 4:

բնիկները ունեցած են դրացի ազգերու հետ տնտեսական բարիքներու փոխանակություն, ուրեմն հողային արտադրությունը սահմանափակված չէ միայն ընտանիքի կարիքներուն բավարարություն տալով, այլ աշխատված է նաև օտար շուկաներու համար հավելյալ արտադրություն առաջ բերել: Այս իրողությունը կառաջադրե այնպիսի տնտեսություն, որ չկրնար կատարվիլ միայն ընտանիքի անդամներով, և իրագործելու համար պետք են նաև օտար բազուկներ: Այդ օտար բազուկները հողազուրկները եղած են:

բ. Արշակունյաց շրջանեն մինչև Ռուբինյան շրջանի վերջ

Ժամանակի ընթացքին մանր հողային սեփականությունները կլանված են մեծ հողատերերու կողմե[1]:

Թե ինչպե՞ս այդ մեծ հողատիրությունը առաջ եկած է, և թե ի՞նչ ձևով այդ իշխանապատկան և եկեղեցապատկան կալվածներու վրա տնտեսական արտադրությունը տեղի ունեցած է, լուսաբանության կարոտ հարցեր են, և այստեղ մեր նյութեն դուրս կմնան: Մենք կարձանագրենք այն փաստը, որ ժամանակի ընթացքին քաղաքական և սոցիալական տարբեր պայմաններու տակ առաջացած է հողազուրկ անազատներու դասը, և Գոշի «Դատաստանագիրքը» նվիրագործած է գոյություն ունեցող սոցիալական այս երևույթը՝ հայտարարելով. «Չի հող միայն է թագավորի և իշխանի» (Դատ., II, 1. **Karst**, RB. I, էջ 22):

Սոցիալական կյանքի համար մի շատ հատկանշական պարբերություն է նաև «Դատաստանագիրքի» հետևյալ հիշատակությունը. «Արարչեն ազատ ստեղծվեցավ մարդը, սակայն տերերուն ծառայելը հողի և ջուրի պետքերուն համար եղավ» (Դատ., II, 3. **Karst**, Rb. I, էջ 172):

Տնտեսական կանոնադրությունը «ազատ ծնած» անհատը տիրոջ ծառայության կենթարկե: Տիրոջ ենթակա ըլլալու այս հանգամանքը այլազան ժամանակներու մեջ տարբեր ձևերով հայտ կուգա, և այս կախում ունի տիրոջ և ծառայի սոցիալական կյանքի մեջ ունեցած ուժի փոխհարաբերու-

---

[1] «Կասկածե դուրս է, որ նախապատմական ազատ գյուղացիության շրջանին մեծ հողատիրության տարերքը գոյություն ունեցած են: Մեկ կողմեն գոյություն ունեին եկեղեցին և վանքերը, որոնք իրենց ընդունած հողային նվիրատվություններով ազատ գյուղացիության հողը կնվազեցնեին, մյուս կողմե ավատական կարգը բռնությամբ մեծ հողատերերու կենթարկեր գյուղացիությունը: Նախկին ազատ գյուղացիությունը կլանվեցավ մեծ հողատիրութենեն: Ռուբինյան շրջանին կատարելության հասած էր այս զարգացումը: Հողային սահմանադրությունը որոշապես կտեսնվի X-XV դարերու արձանագրություններու և այլ փաստաթուղթերու մեջ, ուր միայն ազնվականներու հողերու և կալվածներու, վանքերու և եկեղեցիներու հողերու մասին խոսք կըլլա, մինչդեռ ազատ գյուղացիության ոչ մեկ հետք կա: Նշանակելի է իրավունքի զարգացման համար այն պարագան, որ *սեփական* և *սեփականության* բառերը համարժեք են *ազնվական* և *ազնվականություն* բառերուն», **Karst**, Zeitschr. f. vergl. Rechtswissensch., հատ. XX, էջ 56:

թենեն: Զարմանալի նմանություններով այս երևույթի կրկնության կհանդիպինք ուրիշ ժողովուրդներու սոցիալական խմբավորման և անոնց փոխհարաբերություններու մեջ[1]:

«Կու հրամայե օրենքս, որ մարդկային ազգս շատ ազգեր են, և են, որ ազատք են և հեծելվորք և են, որ չեն և այլ գործերն, որ գործ անեն», **Սմբատ,** Օրին., § 142, **Karst**, RB. I, էջ 188:

Այստեղ որոշակի հայտ կուգա, որ անազատներու գոյությունը օրինապես ճանչցված է: Մեզ կհետաքրքրե այժմ հետևյալ հարցը, թե անազատներու դասին մեջ պատմական տարբեր շրջաններուն անհատի ազատությունը ինչ չափով կաշկանդված է, և թե ինչ խմբավորումներ առաջ եկած են:

Երկու օրինագրքերու ուսումնասիրությունը մեզ կառաջնորդե հետևյալ բաժանումներուն՝

ա. շինականներ,

բ. պարիկոսներ,

գ. գերիներ:

Որոշ է, որ շինականները պատմական տեսակետե ավելի հին են, քան պարիկոսները. վերջինները հայտ կուգան Ռուբինյանց շրջանին: Այս երկու խմբավորումները պատմական Հայաստանի մեջ գոյություն ունեցող հողային օրենքներու ծնունդ են: Թեև գերիներուն գոյությունը ծագումով իբր հայկական հաստատություն կասկածի տակ կդրվի[2], սակայն այստեղ մեզ հետաքրքրողը անոր գոյություն ունենալն է, և, ինչպես օրինագիրքերուն տրամադրությունները ցույց կուտան, զանցառելի քանակություն չեն ներկայացներ, քանի որ անոնց մասին օրենքը հատուկ տրամադրություններ մշակած է[3]:

Ազատության կաշկանդումի և տիրոջ ենթակա ըլլալու տեսակետե շինականները և պարիկոսները իրարմե ի՞նչ տարբերություն կներկայացնեն: Երկու օրինագիրքերն ալ տերմիններու ճշգրիտ գործածության հարկ եղած ուշադրությունը չեն դարձուցած: Այսպես՝ կհանդիպինք այս դասի անհատները որակող այլազան բառերու՝ «անկատար», «մարազ, իրապիսի մարդ չէր», Sippe, 492. **Սմբատ**, Օրին., § 5. «յուրոց», Դատ., II, 13 և **Սմբատ**, Օրին., § 124. «ընդ հարկիվ անկելոց», Դատ., II, 14. «Մշակ», II, **Սմբատ**, Օրին., § 7, «հնազանդ», **Սմբատ**, Օրին., § 142:

Այս բոլոր անվանումներեն կրնանք հետևյալ երկու կարևոր եզրակացություններու հասնիլ.

ա) անազատներու դասի պատկանող անհատը ուներ իր տերը, որուն

---

[1] **W. Wittich**, Գերման հողային պատմության շրջանները, Grundr. d. Soslalsökonomik, Abt. VII, I, էջ 12:

[2] Հմմտ. **J. Karst**, Zeitschr. f. vergl. Rechtswissensch, հատ. XX, էջ 16:

[3] **Սմբատ**, Օրին., §§ 115, 116, 117: Դատ., II, 20,21,22,27,30,77: **Karst**, RB. I., էջ 169-172:

պարտավոր էր հնազանդիլ և մշակել անոր հողերը,

բ) սոցիալական տեսակետե ան կնկատվեր անկատար մարդ և ազատ անհատներու հետ նմանություն չուներ:

Ժամանակի ընթացքին, երբ տիրոջ դիրքը կուժեղանա, և արտաքին ազդեցություններ մուտք կգործեն երկրին մեջ, ինչպես օրինակ՝ Ռուբինյանց շրջանին միջնադարյան Եվրոպայի ավատական ազդեցությունը, շինականի կողքին կհայտնվի նաև պարիկոսը: Կարելի է ենթադրել, որ ժողովուրդի զանգվածի մեծագույն մասը կազմող շինականը, տնտեսապես և սոցիալապես բոլորովին տիրոջ ենթարկված ըլլալով, թերևս իր ներքին ընտանեկան գործերուն մեջ կվայելեր փոքր ազատություններ. մեկ խոսքով՝ տակավին ստրուկի վիճակի չէր հասցված: Մինչդեռ պարիկոսը իբրև ստրուկ կգործածվեր տիրոջ կողմե[1]:

Գերիներու վիճակը շատ ավելի դառն եղած է: Այսպես, ըստ Սմբատի «Օրինագիրքի» § 18-ի և § 115-ի, ան՝ իբրև սոցիալական անհատ, իրավունք չունի ժառանգելու, մինչև որ «տերը գա և թուղթով որոշի բաժնել իր ծառաներեն», և կամ, ըստ § 94-ի, «հայրը կարող է անհնազանդ որդիները զրկել և ըստ իր կամքին՝ ծառային տալ…, սակայն պարոնին գիտակցությամբ և կամքովը»: Ուրեմն գերին տնտեսապես զուրկ է որևէ իրավունքե:

Տնտեսական այս ենթակա վիճակը անդրադարձած է նաև անոր սոցիալական կյանքի վրա: Գերեվաճառություն գոյություն ունենալու մասին կասկած չկա: Այդ մասին Սմբատ, Օրին., §§ 115, 116 և Դատ., II, 21, 22 որոշակի ցույց կուտա: Տերը գերիներուն հետ կվարվի այնպիսի խժդժությամբ, ինչպես պիտի վարվեր իր գրաստին հետ. «Եթե մեկը քրիստոնյա ծառայի աչքը հանե կամ փորե և կամ ակռան թափե, ծառան կազատի», և պատիժ չսահմանվիր, քանի որ «այդպեսով գինը առած եղավ» (**Սմբատ**, Օրին., §117): Այսպես գոյություն ունեցող շինականները, պարիկոսները և գերիները որոշ աստիճանավորումներով անազատ են:

Ի՞նչ եղած է անազատներու դասին փոխհարաբերությունը ազատներու դասին հետ: Այս հարցին պատասխանելու համար պետք է այս երկու դասերու տնտեսական հարաբերությունը քննել:

Տնտեսական այս հարաբերությունը բացորոշ հայտ կուգա այն տուրքերեն, որոնք անազատներու կողմե կվճարվին մեծ հողատերերուն:

Գանձված այս տուրքերը, ըստ գավառներու այլազան իշխաններու կամքին, տարբեր եղած են, բայց, այսուհանդերձ, կներկայացնեն միաժա-

[1] «Օրենքը կհրամայե, որ եթե պարիկոսը իր պարոնեն փախի, որքան ատեն որ ան կապրի, պարոնը իրավունք ունի զայն իր մոտ վերադարձնելու…», **Սմբատ**, Օրին., § 118, **Karst**, RB. I, էջ 172: «Այս շրջանի դաշտային բնակչության մեծ մասը կբաղկանա տիրոջ պատկանող շինականներե: Կիլիկյան Հայաստան հայտ կուգան նաև այսպես կոչված պարիկոսները, որոնք շինականներեն անով կտարբերին, որ հողին կապված ստրուկներ և տիրոջ սեփականությունը եղած են», **Karst**, Zeitschr. f. vergl. Rechtswissensch., հատ. XX, էջ 57:

մանակ ընդհանուր հետևյալ կետերը:

1. Իբրև հողի տուրք ճանաչցված է բերքին $^1/_5$-ը, անջրդի հողերեն իբրև բացառություն $^1/_{10}$-ը:

2. Բնական տուրք կվերցվին բոլոր այն ընտանի կենդանիներեն, որոնք տիրոջ ծառայության չեն գործածվիր:

3. Ձրի ծառայություններ թե՛ ձեռական աշխատանքներու և թե՛ փոխադրություններու համար:

Տնտեսական այս վիճակի մեջ ապրելով՝ գեղջուկն ու շինականը՝ իբրև ժողովուրդի ստորին խավը, ոչ մի դեր կատարած են պետական, կառավարչական և օրենսդրական հարցերու մեջ: Իբրև զանցառելի քանակություն նկատված՝ այդ հարցերով զբաղած է փոքրամասնություն մը, և երբ ճգնաժամային մեկ րոպեին հարկ եղած է ռամկին ալ կարծիքն առնել, այս երևույթը պատմագրին կողմե «նույնիսկ ռամիկն ալ հրավիրված էր ժողովի» պարբերությամբ անցած է պատմության մեջ:

Եզրափակում. նախապատմական շրջանի սկիզբը համայնավարական տնտեսությամբ գեղջուկը արտադրած է իր ընտանիքի կարիքներուն համար: Մասնավոր սեփականության ստեղծումով առաջացած է սոցիալական անհավասարություն, որ, հետզհետե շեշտվելով, իր կերպարանավորումը ստացած է Արշակունյաց շրջանի հետ, և քաղաքական այլազան փոփոխություններու ընթացքին շուրջ 14 դար արտադրող դասը, թե՛ ներքին և թե՛ արտաքին տերերուն հարկատու ըլլալով, տառապած է դարեր շարունակ: Արշակունյաց շրջանեն մինչև Ռուբինյան շրջան, հողի և աշխատավորի փոխհարաբերությունը հետզհետե ի վնաս արտադրողի ընթացած է, և Կիլիկյան Հայաստանի մեջ տիրած է մեծ հողատիրությունը իր կատարելությամբ:

Անազատներու անվան տակ ստեղծված այս դասը՝ շինականներու, պարիկոսներու և գերիներու աստիճանավոր խմբավորումներով, վերջիվերջո կապված է եղած տիրոջ շեմքին, և «**բնութենեն ազատ ծնած մարդը**» ոչ մեկ դեր կրցած է ունենալ երկրի հասարակական կյանքի մեջ[1]:

[1] Այս թվով վերջացնում ենք մեր աշխատակից պարոն Հ. Զորյանի հոդվածաշարքը, որ պետք է դիտել իբրև փորձ հին Հայաստանի սոցիալական խմբավորման շուրջ: Այս հոդվածների մեջ արծարծվեցին խնդիրներ, որոնք բազմակողմանի լուսաբանության կարոտ են: Ցանկալի էր, որ մեր պատմագետները և մանավանդ մեր երիտասարդ ուժերը քննության նյութ դարձնեին այս շատ հետաքրքրական խնդիրը (ծանոթ. խմբ.):

ԱՐԱԲՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՎԱՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1

Ամեն մի ուսումնասիրություն, որ կոչված է որևէ երկրի պատմական կյանքի մի մութ անկյունը լուսաբանելու, դնում է ուսումնասիրողի առաջ հետևյալ հարցը. ինչպիսի՞ տնտեսական ֆազումն էր գտնվում տվյալ երկիրը այդ ժամանակաշրջանում:

Բացի այդ՝ չի կարելի տնտեսական կյանքը վերցնել կայուն վիճակի մեջ և նկատի չառնել հարաշարժ ընթացքը, որ պայմանավորվում է տվյալ երկրի արտադրական փոխհարաբերություններով:

Ընդհանրապես տիրող կարծիքը եղել է այն, որ պատմական Հայաստանը ապրել է ավատական տնտեսության մի շրջան: Այս բնորոշումը թեպետև ընդհանուր առմամբ ճիշտ է, բայց չի կարելի նկատի չառնել նաև մի շարք այլ տնտեսական գործոններ, մասնավորաբար VII դարու կեսից սկսյալ մինչև XI դարի կեսը, որոնք կարծես կոչված էին հեղաշրջելու ավատական Հայաստանի արտադրական եղանակը: Երկրի արտադրական եղանակում առաջացած այս փոփոխությունները կատարվել են ավատական տնտեսության հատուկ դանդաղկոտությամբ:

Տնտեսական ասպարեզում կատարված այս պրոգրեսիվ շարժումը իր պատմական զարգացման շրջանը չէ բոլորել, ուստի, նրանով պայմանավորված, արտադրական փոխհարաբերությունները չեն ստացել հասարակական այն արտահայտությունը, որին հանդիպում ենք Եվրոպայի միջնադարում:

Այն ժամանակաշրջանը (655-1045), որ մենք առաջադրել ենք ուսումնասիրել, պայմանավորվել է արաբների՝ Առաջավոր Ասիայում վարած հարկային և հողային քաղաքականությամբ:

Մինչև այժմ ավատական Հայաստանի պատմությունը ուսումնասիրողները թողել են մի հիմնական բաց: Այդ բացը առաջացել է, մասնավորապես ուսումնասիրողների՝ դեպի պատմական դեպքերը ունեցած մերձեցման եղանակի: Ուստի, երբ առաջադրվում է անցյալի դեպքերի ուսումնասիրությունը նոր հունի մեջ դնելու հարցը, բոլորովին պարզված պիտի լինի ուսումնասիրության մեթոդի հարցը:

Մինչև այժմ աշխատել են ավատական Հայաստանի պատմական երևույթները բացատրել երկրի հասարակական կյանքում գոյություն ունեցող հակասությունների ստացած արտաքին արտահայտություններով: Ուստի այդ ձևով գրված պատմությունը ներկայացնում է դեպքերի շարահարությու-

նը և ոչ թե այդ դեպքերի ծնունդ տվող պատճառների վերլուծում և անցյալի իրական ճանաչողություն: Այսպես՝ մենք գտնում ենք այդ պատմագիրների մոտ «կրոնական հակամարտություն», «իշխողների քաղաքականություն» և նման ընդհանուր խոսքեր և ոչ թե հարցի կոնկրետ լուսաբանում, որ պիտի պարզեր և բացատրեր սկզբական պատճառները այն հակասությունների, որոնք, հասունանալով, ստացել են այս կամ այն պատմական արտահայությունը: Այս հակասությունները առաջացել են արտադրական այն եղանակից, որ գոյություն ունեցել է տվյալ երկրում: Ուստի այդ դեպքում նրանց ստացած պատմական այս կամ այն արտահայտությունը պայմանավորվել է մի կողմից ավատական Հայաստանի և մյուս կողմից՝ Հայաստանին տիրող ժողովուրդների արտադրական եղանակով: Մի տեղ այդ ստացել է կրոնական հալածանքի, մի այլ տեղ՝ կոտորածի, մի ուրիշ տեղ և մի ուրիշ անգամ՝ նախարարական ապստամբության արտահայտություն:

Հիմնականը այն է, որ այդ իշխողները, լինեն դրանք պարսիկներ, բյուզանդացիներ, թե արաբներ, ձգտել են գրավված երկիրը տնտեսապես հիմնովին իրենց գերիշխանության ենթարկել: Այս նպատակին հասնելու համար նրանք վարել են որոշ քաղաքականություն:

Այժմ հարց է առաջանում. մի երկրի պատմական զարգացման ընթացքում տարված քաղաքականության ի՞նչ մերձեցում պետք է ունենալ, ինչպե՞ս և ի՞նչ չափով հարկավոր է այդ քաղաքականությունը արժեքավորել:

Մի երկիր, ինչպիսին Հայաստանն է, որն իր ամբողջ պատմության ընթացքում ենթարկվել է արտաքին ուժերի վարած տնտեսական քաղաքականության, մի երկիր, որի արտադրական ուժերի զարգացումը չէ ընթացել ուղիղ գծով, այլ կատարել է հետադարձ շարժումներ. այդպիսի մի երկրի տնտեսական և պատմական կյանքը ուսումնասիրելիս անհրաժեշտ է վերև տրված հարցի մասին տալ որոշ պատասխան:

Մենք գիտենք, որ արտադրական ուժերի զարգացումից առաջ է գալիս մի նոր արտադրական եղանակ, վերջինս իր կարգին ծնունդ է տալիս նոր արտադրական փոխհարաբերությունների, որոնցից առաջանում և նոր քաղաքական իշխանության դրությունը: Այս ուղիով է վերլուծում պատմական մատերալիզմը բոլոր երկրների պատմության զարգացումը[1]:

Եթե արտադրական ուժերի այդ զարգացումը կազմում է հիմնական պատճառը, որով պայմանավորվում է պատմական զարգացումը, ապա

[1] Այս հիմնական միտքը Կ. Մարքսը շատ որոշակի ձևակերպել է հետևյալ տողերում. «Իսկապես մարդ պետք է պատմական ծանոթություններից բոլորովին անտեղյակ լինի, որպեսզի չգիտենա, թե բոլոր ժամանակների ինքնակալները պարտավորված էին տնտեսական հարաբերություններին հարմարվել, որ երբեք նրանք չեն եղել վերջիններին օրենք թելադրողը: Ինչպես քաղաքական, նույնպես և քաղաքացիական օրենսդրությունը հռչակում, արձանագրում է միայն տնտեսական հարաբերությունների կամքը», տե՛ս **K. Marx**, Das Elend der Philosophie, Berlin, 1923, էջ 62:

պատմական մատերիալիզմի հիմնադիրները չեն ժխտում այն հանգամանքը, թե քաղաքական մոմենտները պատմության մեջ ունեն նշանակություն:

Այստեղ մենք պարտավոր ենք աչքի առաջ ունենալ այն իրողությունը, որ տվյալ մի հասարակարգում պատճառները և ազդեցությունները ոչ միայն միևնույն ուղղությամբ չեն ընթանում, այլ ազդեցություններից հակազդեցություններ են առաջ գալիս, հակազդեցություններ, որոնք փոխհարաբերությունների, փոխազդեցությունների մի հյուսվածք են կազմում, որը պետք է հասկանալ, երբ մարդ տվյալ հասարակարգը բոլորովին ճանաչել է ցանկանում:

Իշխանությունը իր խտացյալ և կազմակերպյալ ձևում, ինչպես և պետական իշխանությունը, կամ հեղափոխական և հակահեղափոխական դասակարգերի ազատ կազմակերպությունների ձևում, պատմական զարգացման ընթացքում նշանակալից դեր է կատարում: Այդպիսի մի իշխանություն կարող է պատմական զարգացման բողբոջներն իր սկզբնական աստիճանում խեղդել, նա կարող է տնտեսական-սոցիալական զարգացումը արագացնել, արգելիչ պատճառները վերացնելով՝ օրենքները և սեփականության իրավունքը հասցնել իրենց լիակատար զարգացման:

Այսպես, ըստ Մարքսի, բուրժուազիան հասկացավ գաղութային քաղաքականությամբ, պետական պարտքերի և նորաձև հարկային դրությամբ ավատական արտադրության եղանակից անցնել կապիտալիստականի՝ կրճատելով փոխանցման շրջանները[1]:

Ուրեմն վերցնել լոկ տարված քաղաքականությունը իր արտաքին ձևին մեջ և նրանով բացատրել պատմական երևույթների զարգացման պրոցեսը պիտի լիներ միանգամայն ոչ ճիշտ մերձեցում: Առաջին հերթին կոնկրետ կերպով պետք է ներկայացնել տարված քաղաքականությունը, ապա հարց տալ՝ ի՞նչ անդրադարձում ունեցավ այդ քաղաքականությունը տվյալ երկրի արտադրական եղանակի և արտադրական փոխհարաբերությունների վրա: Քաղաքական այդ ազդակին տվյալ հասարակարգում ինչպիսի՞ հակազդեցություններ պատասխանեցին, որոնք իրենց հերթին պայմանավորեցին հետագա տնտեսական և սոցիալական զարգացումը:

Ավատական Հայաստանի մեր ուսումնասիրության նյութը կազմող ժամանակաշրջանում առաջ է եկել քաղաքական տեսակետից խոշոր փոփոխություն: Արտաքին մի ուժ՝ արաբականը, եկել արշավել է ոչ միայն Հայաստան, այլև իրեն է հպատակեցրել մի շարք ուժեղ պետություններ, ստեղծվել է մի ընդարձակ արաբական պետություն:

Խալիֆաթը ավատական Հայաստանում տարել է երկու հիմնական քաղաքականություն՝ 1) հարկային, 2) հողային: Այս ուսումնասիրությամբ մենք կաշխատենք պարզել արաբական հարկային քաղաքականությունը և նրա

[1] **K. Marx**, Das Kapital I, Hamburg, 1921, 24. Kap. 6, p. 716.

անդրադարձումը ավատական Հայաստանի արտադրական եղանակի վրա: Հարկային այդ քաղաքականության առանցքն են կազմել դրամական հարկերը: Ուրեմն հարցը կոնկրետ կերպով դրվում է այսպես. VII դարու կեսից սկսած մինչև XI դարու կեսը արաբները ի՞նչ չափով դրամական հարկեր են վերցրել ավատական Հայաստանից, ի՞նչ անդրադարձում է ունեցել այս քաղաքականությունը երկրի արտադրական եղանակի վրա:

2

Արաբների՝ դեպի Առաջավոր Ասիա և Եվրոպա առաջխաղացումը բոլորովին մի նոր ժամանակաշրջան է բաց անում արաբներին հպատակվող երկրների համար:

Արդեն 636 և 641 թվերին Օմարն ու Օսմանը գրաված էին արաբական Իրաքը, Կտեսիֆոնը, Հիրան և Հյուսիսային Միջագետքը: Պարսկաստանի և Բյուզանդիոնի միջև մղված երկարատև պատերազմներից, պարսիկների և բյուզանդացիների հալածանքներից և ներքին խռովություններից քայքայված Հայաստանը արաբների ուժեղ խուժման առջև գտնվում էր անպաշտպան: 640 թվից սկսած՝ Հայաստանը 15 տարի շարունակ արաբների և հույների միջև կռվախնձոր դարձավ: 655 թվին Հայաստանը, Վրաստանը և Աղվանից երկիրը արաբների գերիշխանության տակ ընկան[1]: Հետագա տասնամյակներում արաբները իրենց աշխարհակալական քաղաքականությունը ավելի համառորեն մղեցին: Աֆրիկյան եզերքներից թափանցեցին Իսպանիա, և, այսպիսով, 711 թվից՝ Քսերքսեսի ճակատամարտից և Քուտաիբա Բին Մուսլիմի հաղթություններից հետո, կիսալուսնի դրոշակը ծածանվեց Կաշգարի սահմաններից մինչև Ատլանտյան օվկիանոսը:

Այս ընդարձակ արաբական պետությունն իր հսկա իշխանությունը ամուր պահելու համար պետք ուներ ամեն բանից առաջ դրամի՝ բանակի սարքավորման, վարձկան զինվորների վարձատրման, ամրոցների շինության կամ վերանորոգման, ճանապարհների կառուցման և արագ թղթատարական հաղորդակցության համար:

IX դարու վերջին արաբական բանակի մասին եղած մի նկարագրությունից իմանում ենք, որ Մուհամմեդի ժամանակ մի հասարակ վահան արժե մի դինար[2]: Ուրեմն միայն մեկ վահանի համար հարկավոր էր վճարել 11.6 ոս-

---

[1] **Ղևոնդ**, Պետերբուրգ, 1887, գլ. Գ, էջ 9. **Ասողիկ**, Պետերբուրգ, 1885, էջ 130, **Սեբեոս**, Պետերբուրգ, 1879, գլ. ԼԸ, 149. **Տաբարի,** I, 2808, 2506, 2666, 2674/75. **Բալատուրի**, 184, 197, **Տաքուս** I, 1549, **Իբն ալ Ֆաքի**, 293. **M. Ghazarian**, Armenien unter der arabischen Herrschaft, Marburg, 1903, Diss, էջ 16-36:

[2] **Schwarzlose**, Die Waffen der alten Araber, էջ 356. Ինչպես երևում է պատմական տվյալներից,

կի մարկ: Այդ ժամանակ ամեն մի զինվոր պետք ուներ մեկ ձիու, մեկ զրահի (հարակից մասերով), գոտիով սուրի, մեկ նիզակի, աղեղի, նետի, պարկի և այլն: Գրեթե այս բոլոր զենքի մարդիկ ունեին երկաթյա կամ պղնձյա գոտի, ոսկե կամ արծաթե զարդեր: Ինչպես հեծվորները, նույնպես և ձիերը երկաթով ծածկված էին[1]:

Կարինի բերդի նորոգության համար 756 թվին խալիֆը կես միլիոն դիրհեմի (=482.000 ոսկի մարկի) ծախք արավ[2]:

Փոստային վերատեսուչ Իբն Խորդադբեյի տված տեղեկության համաձայն՝ IX դարում փոստի կայանների թիվը հասնում էր 930-ի:

Եվ երբ զինվորներին վճարված փողերը, ինչպես նաև Բաղդադի խալիֆների շքեղության համար անհրաժեշտ գումարները նկատի ունենանք, այն ժամանակ խալիֆաթի դրամի կարիքի մասին կստանանք կատարյալ պատկեր:

Նկատի ունենալով արաբական պետության այս ծախսերը՝ մենք երբեք չենք զարմանում, որ արաբ տիրապետողները հենց սկզբից խիստ բռնություններով աշխատում էին դրամական հարկեր գանձել: Եվ եթե խելացի իշխողներ իրենց ուշադրությունը դարձնում էին նվաճած երկրների տնտեսական վիճակը բարձրացնելու, նրանց հիմնական նպատակը կայանում է ավելի մեծ չափով մաքսեր և հարկեր գանձելու մեջ[3]:

Ինչպես ստորև պիտի տեսնենք, հարկերը դրամով գանձելու այս եղանակը նոր չէր ավատական Հայաստանում: Հին շրջանը մեկ կողմ թողած՝ դրամական հարկեր գանձվում էին նաև Սասանյան Պարսկաստանի տիրապետության շրջանում: Ուրեմն դեռևս այն ժամանակ երկրի արտադրական եղանակը հասել էր այնպիսի աստիճանի, որը հնարավորություն էր տալիս հարկերը դրամի ձևով գանձելու: Արաբական տիրապետության շրջանում այս ուղղությամբ տարվեց ավելի հետևողական հարկային քաղաքականություն, որն իր հերթին անդրադարձավ արտադրական եղանակի վրա, և նրա ծոցում առաջացած փոփոխությունները ավելի խորացրեց և հաստատացրեց:

Հարկային քաղաքականության զուգընթաց նվազ դեր չի կատարում նաև արաբների վարած հողային քաղաքականությունը, որը վերջին հերթով անդրադառնում է նախարարական կալվածների սեփականատիրական

մինչև Հարուն ալ Ռաշիդը օտար դրամներ գործածվում էին արաբական պետության մեջ: Զանազան ժամանակների նրանց արժեքը որոշելու հարցը դեռևս ուսումնասիրության կկարոտի: Համաձայն մինչև այժմ եղած ուսումնասիրությունների՝ արծաթ դրամ 1 դիրհեմը=0.964 ոսկի մարկի, ոսկի դրամ 1 դինար=դահեկան=11.66 ոսկի մարկի: Հմմտ. **H. Thopdschian**, Die inneren Zustände von Armenien unter Asot I., Berlin, 1904, էջ 31:

[1] **Հովհաննես Կաթողիկոս**, Երուսաղեմ, 1867, գլ. 59, էջ 379, 390, հմմտ. **Thopdschian**, էջ 37:

[2] **Բալատուրի**, էջ 199, հմմտ. **Thopdschian**, էջ 16/17:

[3] **W. Tomaschek**, Sitzungsberichte d. Wiener Akademie Phil, Kl. Bd. 133, 4. Էջ 32, 1895, հմմտ. **M. Ghazarian**, էջ. 65:

փոխհարաբերությունների վրա: Սրանով պայմանավորվում է մեծ չափով քաղաքների բարգավաճումը, որը մեծ զարկ է ստանում Արևելքի և Արևմուտքի միջև ուղիղ հաղորդակցության վերահաստատումով:

Տնտեսական այս երևույթները, սերտորեն շաղկապված լինելով, միմյանց վրա անմիջական, փոխադարձաբար ներգործելով, չի կարելի առանձին վերցնել: Մեր ուսումնասիրությունը մենք սահմանափակում ենք հարկային քաղաքականությամբ. մեր նպատակը պիտի լինի վեր հանել այն փոխադարձ ազդեցությունը, որ ունեցել է վերջինս ավատական Հայաստանի արտադրական եղանակի վրա, որով և պայմանավորվել են դրամական հարկերը:

Տակավին հին պարսկական իշխանության ժամանակ Հայաստանը՝ որպես հպատակ երկիր, տիրապետողներին հարկ էր վճարում: Հերոդոտոսը պատմում է, որ Հայաստանը՝ որպես 13-րդ սատրապություն, պարտավոր էր 400 տաղանդ վճարել. կարծվում է, թե Կյուրոս 100 տաղանդի տուրք էր դրած[1]:

Աքեմենյանների ժամանակ Հայաստանը բնահարկ էր վճարում և ստիպված էր որոշ քանակությամբ ձի Պարսկաստան ուղարկել[2]:

Սասանյանների կողմից Արշակունիների գահընկեցությունից հետո (428 կամ 429 թ.) Հայաստանը պարսից իշխանության պարտավորված էր հարկ վճարել[3]: Այս մասին տվյալներն այնքան քիչ են և այնպես ընդհանուր ձևով ասված, որ նրանցից հնարավոր չէ կոնկրետ եզրակացության հանգել:

Եղիշե պատմիչը, որ Սասանյան Պարսկաստանի տիրապետության շրջանում է ապրել, Հազկերտ II-ի գործի դրած հալածանքները հետևյալ ուշագրավ տողերով է հաղորդում.

«… Վասն այնորիկ և ոչ ոք ընդդիմացաւ նմա, թէպէտ և էր ծանրութիւն հարկացն: Քանզի ուստի արժան էր առնուլ հարիւր դահեկան, նոյնչափ կրկնէին և առնուին, սոյնպէս և եպիսկոպոսաց և երիցանց դնէին, ոչ միայն շինաց՝ այլ և աւերակաց: Նա բնաւ ո՞վ իսկ կարէ պատմել վասն ծանրութեան մտից և սակից, բաժից և հասից, լերանց և դաշտաց և մայրեաց: Ոչ ըստ արքունի արժանաւորութեանն առնուին, այլ հինաբար յափշտակելով, մինչև ինքեանք իսկ մեծապէս զարմանային՝ թէ ուստի այս ամենայն գանձ ելանէ՝ զիարդ շէն կայցէ աշխարհն Հայաստանեայց»[4]:

---

[1] **Xenophon**, Cyropädie, III 1 § 34, գերմ. թարգմ. **A. Forbiger**:

[2] **Strabo**, XI 14, 9 էջ 530, գերմ. թարգմ. **A. Forbiger**:

[3] **Ղազար Փարպեցի**, Թիֆլիս, 1907, էջ 39:

[4] **Եղիշե**, Մոսկվա, 1892, գլ. II, էջ 26/27: Բացի Եղիշեից՝ ունենք տեղեկություններ նաև Մովսես Խորենացուց, II, գլ. 77 և Թովմա Արծրունուց, II, գլ. 1: Հյուբշմանը, համաձայն Զաքարիա Հռետորի, այսպես կոչված, «Եկեղեցական պատմությունից» (էջ 173), տուրքերի մասին հետևյալ տվյալն է առնում. «Պարսկաստանի պատկանող Աղձնիք գավառի գյուղերից

Եղիշեի այս վկայությունը մի շարք տեսակետներից հետաքրքրական է. 1. Այս ժամանակաշրջանում (451 թ.) Հայաստանը վճարում էր դրամական հարկ, 2. այդ հարկը բավականին բարձր էր, 3. հարկահավաքների կամայականությունը խոշոր դեր էր կատարում: Այս վերջին պարագան կարևոր է շեշտել այն պատճառով, որ հարկահավաքների և կառավարիչների կամայականությունների պատճառով երկիրը քայքայման էր ենթարկվում[1]:

Ինչպես տեսնում ենք, հայկական աղբյուրները հնարավորություն չեն տալիս գանձված հարկերի քանակը իմանալու. ստիպված ենք մի բաղդատության դիմել, որը թերևս հնարավոր կդարձնի մեզ այս ուղղությամբ մի ընդհանուր գաղափար կազմել.

Ալֆրեդ Կրեմերը, Իբն Խորդադբեյի և Կոդամայի տված տեղեկությունների վրա հիմնվելով, Սասանյան վերջին թագավորների գանձած հարկերի մասին գալիս է հետևյալ եզրակացության. «Համեմատելով Իբն Խորդադբեյի բավականին աղճատված տվյալը Կոդամայի հետ՝ պարզվում է, որ Խոսրով II-ի ժամանակ (590-628) պարսկական պետության գանձած հարկը հասնում էր 420-600 միլիոն դիրհեմի»[2]: Հայտնի է, որ Խոսրով II-ի ժամանակ Հայաստանի մեծագույն մասը 591 թվին անցնում է Բյուզանդական կայսրության: 571 թվից մի տվյալ մեզ ցույց է տալիս որոշակի, թե ինչպես Հայաստանի գավառները բաժանված էին, և թե ինչպես տուրքերը Դվին էին ուղարկվում[3]: Դժբախտաբար, այն դիվանները, ուր արձանագրվում էին հարկերը, մեզ չեն հասել: Մինչդեռ Սավադը (Բաբելոն)՝ ամենահարուստ գավառը Սասանյան Կավատ թագավորի ժամանակ, 214 միլիոն դիրհեմ վճարում էր, նույն գավառը արաբացիների կողմից գրավելուց հետո՝ Օմար I խալիֆի ժամանակ, միայն 120 միլիոն դիրհեմ վճարեց, ուրեմն միայն կեսը: Մուավիայի ժամանակ նույն գավառից վերցրած հարկը կազմում էր միայն 100 միլիոն դիր-

---

հավաքվում էր թագավորական գանձի համար գլխահարկ, բացի այդ հարկից՝ այդ գյուղի բնակիչները պարտավոր էին վճարել բդեշխին ռոճիկը, որը նստում էր այնտեղ որպես թագավորին փոխանորդը», **H. Hübschman**, Die altarmenischen Ortsuamen, Indo-germanische Forschungen, 1904, Bd XVI, էջ 222/3:

[1] Առիթ պիտի ունենանք այս կամայականություններին անդրադառնալու: Այդ կամայական հալածանքներին հետևում էին հաճախ սովի տարիներ: Հմմտ. **Spiegel**, Eranische Altertumskunde, 1878, III, p. 366.

[2] **Alf. v. Kremer**, Kuiturgeschichte I, էջ 257:

[3] «571 թվից, Սյունյաց իշխան Վահանի ցանկության համաձայն, Սյունիքը բաժանվեց մյուս հայկական գավառներից, դիվանը Դվինից փոխադրվեց Փայտակարան, մինչև Սասանյան իշխանության անկումը (640 թ.) մնաց այնտեղ», **H. Hübschman**, Diè altarmen. Ortsnamen, էջ 223: Նույն երեսի վրա Հյուբշմանը ծանոթության մեջ հետևյալն է ասում. «Մինչև այս ժամանակ (571 թ.) Սյունիքը կապված էր Դվինի մարզպանին, որը իր հերթին ենթարկվում էր Ատրպատականին, 571 թվից հետո Սյունիքը ենթարկվում էր ուղղակի Ատրպատականին և մաս չէր կազմում Հայաստանի: Նախապես իր հարկերը Դվինին էր վճարում, այժմ Փայտակարանին»:

հեմ[1]: Մուավիայի ժամանակ Հայաստանը վճարում էր միայն 500 դահեկան (**Ղևոնդ**, գլ. Դ, էջ 14):

Այս բոլոր տվյալներից հաստատապես հետևում է այն, որ արաբական տիրապետությունից առաջ դրամական հարկեր էին գանձվում Հայաստանից[2]: Անկասկած է նաև այն իրողությունը, որ բնահարկերը խոշոր դեր էին կատարում:

Արաբացիները գրված երկրներում հիմնում էին իրենց հարկային քաղաքականությունը արդեն իսկ նախապես գոյություն ունեցող հիմունքների վրա[3]:

Ուրեմն արաբները Հայաստանում շարունակում էին Սասանյան իշխանության հարկային քաղաքականությունը: Ի՞նչ չափով էին գանձվում այս հարկերը: Ինչպիսի՞ տատանումների ենթակա էին: Ի՞նչ հետևանքներ ունեցավ հարկերի այս ձև գանձումը:

Արաբ աշխարհագիրներին և պատմիչներին ենք պարտավոր մի շարք կարևոր տեղեկությունների համար տուրքերի գանձման եղանակի և նրանց քանակի մասին: Արաբները **Ermeniata** անվանում էին ոչ միայն Հայաստանը, այլև Վրաստանն ու Աղվանից երկիրը (այժմյան Ադրբեջանը):

Մի կողմից արաբական, մյուս կողմից հայկական և սուրիական աղբյուրները մեզ բերում են այն եզրակացության, որ մեր ուսումնասիրության նյութ կազմող ժամանակաշրջանը պետք է բաժանել երեք տարբեր շրջանների՝

ա. Օմայադների շրջան (655-755),

բ. Աբբասյանների շրջան (755-887),

գ. Բագրատունիների շրջան (887-1045):

3
Ա. ՕՄԱՅԱԴՆԵՐԻ ՇՐՋԱՆԸ

Սեբեոս և Ղևոնդ պատմիչների տված տեղեկությունների հիման վրա կարող ենք ընդունել, որ Օմայադների շրջանում գանձված դրամական հարկերի գումարը հետագա շրջանների հարաբերությամբ ցած էր:

---

[1] **Alf. v. Kremer**, Kulturgeschichte I, p. 258.

[2] Թաբարի արաբ պատմիչը, անեկդոտային ձևով պատմում է Սասանյան Կավատ թագավորի ժամանակ բնահարկից դրամական հարկի անցնելու պրոցեսը: Դեռ հողաչափությունը ամբողջովին չավարտած՝ Կավատը մեռնում է և դրամական հարկերի տիրապետված երկրներից լիակատար գանձումը տեղի է ունենում նրա հաջորդի՝ Խոսրովի II-ի ժամանակ: Հմմտ. **Թաբարի**, ֆրանս. թարգմ. **Hermann**, Zotenberg-ի, Paris 1859, հատ. II, գլ. XXX, էջ 153/64 և XLII:

[3] Նույն տեղում, էջ 256:

Այս հասկանալի կլինի, երբ նկատի ունենանք Օմայադների շրջանի սկզբնավորության երկրի տնտեսական դրության ծանր կացությունը: Բացի այս՝ պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ նոր դարերը սկզբնական շրջանում իրանց ամրացած չէին զգում: Ամբողջ VII դարի ընթացքում նրանք աշխատում էին բյուզանդական ազդեցությունը տկարացնել տիրող ներքին ազնվականության վրայից: Երրորդ հանգամանքը կազմում էր այն, որ այդ ժամանակաշրջանում հետզհետե ընդլայնվում էր արաբական աշխարհակալությունը, և նոր նվաճած երկրներում հարկային խիստ քաղաքականություն վարելը նկատվում էր վտանգավոր: Տեղական ազնվականության ամեն մի ճնշում առիթ պիտի տար ժողովրդական զանգվածը նոր տիրողների դեմ ապստամբեցնելու:

Մի երկիր, ուր ազգաբնակությունը գրեթե ամբողջությամբ երկրագործական արտադրություններից կախում ունի, ուր հողերի ոռոգման հարցը գյուղացիության համար կյանքի և մահու խնդիր է, տարիների ավերիչ պատերազմներից հետո հանգիստի պետք ուներ. սրանից հետո այդ երկիրը կարող կլիներ հարկային պահանջները իրագործել:

Ժամանակագրական կարգով հետևենք[1]:

Մուավիայի և Թեոդորոս Ռշտունու միջև 652 թվին կնքված մի դաշնագրության համաձայն, որով Հայաստանը երեք տարվա տուրքերից ազատվում էր[2], 662-680 թիվը Հայաստանը վճարում էր տարեկան 500 դահեկան: Ղազարյանը (էջ 65, ծանոթ. 2) ու Թոփչյանը (էջ 31, ծանոթ. 4) Ղևոնդի այս տվյալի ճշմարտության մասին կասկածում են: Մենք չենք բաժանում այս կարծիքը: Բացի վերև մեջբերած պատճառներից՝ մենք ունենք նաև հետևյալ վկայությունը: Մուավիայի և Թեոդոս Ռշտունու միջև կնքված դաշնագրության մեջ որոշակի ասված է.

«… Եվ ոչ առնում ի ձենջ սակ զերրեամ մի. **ապա յայնժամ տաջիք երդմամբ, որչափ դուք կամիջիք**…»:

«Որպես իսկական արաբ՝ Մուավիան ագահ էր, սակայն, իբրև իմաստուն պետական մարդ, իմանում էր հարկավոր դեպքում դրամ բաշխել» (**Alf. v. Kremer,** Kulturgeschichte I, էջ 160):

---

[1] Գանձված հարկերի թվական տվյալները սկսում են 775 թվից: Նախորդ շրջանի համար պիտի հետևենք ժամանակակից պատմիչ Ղևոնդին, որի նկարագրությունները մեզ հնարավորություն են տալիս որոշ եզրակացությունների հանգելու:

[2] **Սեբեոս**, Պետերբուրգ, 1879, գլ. ԼԵ, էջ 138: Արաբական աղբյուրներում հաղորդված ուրիշ մի պատմական վավերաթղթից երևում է որ Դվինը դեռևս 653 թվին հարկատու էր դառնում: Հաբիբ իբն Մասլաման 653 թվին Դվինը գրավելուց հետո հետևյալ գրությունն է ուղղում քաղաքի ազգաբնակության. «… Ձեզ շնորհեցի ձեր կյանքի և ինչքի, եկեղեցիների և տաճարների և ձեր քաղաքի պարիսպների ապահովություն, ապահով եղեք: Մենք մեր խոսքը պիտի հարգենք, որքան ժամանակ դուք հնազանդ մնաք և գլխահարկ ու հողային տուրք վճարեք», **Բալադուրի, 200, Յաքուտ** II, 549, հմմտ. **M. Ghazarian**, էջ 22:

Այս ժամանակաշրջանում հարկերի ծանրության մասին ոչ մի տրտունջ չենք լսում: Նույն գումարը վճարվում է նաև 680-687 թվերին: Հետագա երեք տարիներում, խալիֆաների երկրի ներքին խռովություններից օգտվելով, հայերն ու վրացիները ոչ մի տուրք չեն վճարում:

725 թվին առաջին անգամ լսվում են տրտունջներ տուրքերի ծանրության մասին: Հիշամ խալիֆը հրամայում էր Հարիթ[1] զորավարին.

«Աշխարհագիր առնել ընդ աշխարհս Հայոց վասն ծանրացուցանելոյ զանուր լծոյ ծառայութեան հարկատրութեան ազգ ազգի չարեօք...» (**Ղևոնդ**, գլ. ԺԷ, էջ 100):

Հարիթը կատարում է այդ հրամանը. գրի է առում ոչ միայն ազգաբնակությունը, այլև անասունները[2]:

732-744 թվերին կրկին դադարում են տրտունջները: Աշոտ Բագրատունին ստանում է նույնիսկ իր պաշտոնավարության ընթացքում արաբների կողմից հայ զորքերի համար հատկացված և երեք տարի չվճարած տարեկան 100.000-ի[3] գումարը:

750 թվին Աբբասյանների՝ Օմայադների վրա տարած հաղթանակով դրությունը բոլորովին փոխվում է:

---

[1] Եթե Ղևոնդի մոտ (գլ. ԺԷ, էջ 100) հիշված Հերթը Հարիթն է, վերջինս, ըստ արաբ աղբյուրների, Հայաստանի ոստիկան նշանակվեց Եզիդ II-ի ժամանակ, հմմտ. **M. Ghazarian**, էջ 65: Մարկվարտը հետևյալն է նկատում. հայերի (Ղևոնդի և Մ. Կաղանկատվացի) և արաբների ժամանակագրությունները այստեղ տարբերվում են միմյանցից: Ըստ Տաբարիի՝ Հիշամը 724 թվին Հայաստանի էմիր է նշանակում Հագգագը: 729 թվին գալիս է Հարիթը, սակայն եկուքի մոտ էլ վերջնույն հաջորդում է Հաքամին, Ղևոնդի մոտ, անշուշտ, երեք տարի հետո:

[2] **Մովսես Կաղանկատվացի**, էջ 258, հմմտ. **Ghazarian**, էջ 65: Ինչ որ Միջագետքում 691/92 թվերին կատարվում էր, մենք այդ հանդիպում ենք Հայաստանի մասին 35 տարի հետո: Հմմտ. Chronique de Denys de Tell-Mahré, IV-me partie, ֆրանս. թարգմ. I. B. Chabot, Paris 1895, էջ 10:

[3] 652 թվին, Մուավիայի և Թեոդորոս Ռշտունու միջև կնքված դաշնագրի համաձայն, հայերը 15.000 հոգի զորք էին պահում, որոնց ռոճիկ վճարվելու էր խալիֆի կողմից (**Սեբեոս**, գլ. ԼԵ, էջ 138): Որքան վճարվում էր, չգիտենք: Միայն իմանում ենք Ղևոնդի տվյալից (գլ. ԻԱ, էջ 113, ԻԸ, էջ 128), որ 732-744 թվերին խալիֆը հրամայում է «... Կշռել ի ձեռս նորա (Աշոտի) ամի ամի ՃՌ զերից ամացն»: 128-րդ երեսի վրա ասված է «... Զի յայնմիետէ հատաւ սակ արծաթոյն, որ զայր ամի ամի յարքունուստ զօրացն հայոց»: Հայտնի չէ, թե այդ 100 հազարի գումարը դիրհե՞մ, թե՞ դահեկան էր: Եզյանցը («Պատմ. Ղեւոնդեայ», էջ հգ) և Ղազարյանը ընդունում են որպես դահեկան: Կարելի է առարկել, որ դահեկան կամ դինար կարող էր լինել այն ժամանակ, երբ դրամական միությունը (Währung) լիներ ոսկի: Կրեմերի ուսումնասիրությունից (Über das Einnahme – Budget u. s. v. Densjsch. D. Wiener Akade mie Phil kl., 1888) պարզվում է, որ արաբական պետությունը դրամական ոսկի միությունը 868 և 891 թվականներին ներմուծում է: Մեր ստորև բերած հարկի թվական տվյալները որոշակի ասում են, որ Աբբասյանների ամբողջ շրջանում Ermeniata-ի հարկերը դիրհեմով են գանձվել: Ուստի, մեր կարծիքով, առանց հիմնավորելու, վճարված այդ 100.000-ի գումարը ներկայացնում է դիրհեմ: Նույն կարծիքը հայտնում է նաև **Daghbaschian**, Gründung des Bagratiden Reiches dureh Asot Bagratuni, Berlin, 1893, Diss, էջ 53:

Բ. ԱԲԲԱՍՅԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԸ

750 թվից Աբբասյանների իշխանությամբ սկիզբ է առնում հարկային խիստ քաղաքականություն:

Թերևս այս փոփոխության գլխավոր պատճառներից մեկը լինի այն, որ Աբբասյանների հաղթությամբ խալիֆայական երկիրները բաժանվեցին երկու մասի՝ արևելյան և արևմտյան: Եգիպտոսի և Ափրիկեի փոխարքաները անկախ հռչակեցին իրենց: Այսպես՝ Աբբասյաններն իրենց հարկային ծանրությունը կենտրոնացուցին խալիֆայության արևելյան մասում, ուր գտնվում էր և Ermeniata-ն: Բացի սրանից՝ արդեն մոտ մի դար էր անցել արաբների՝ Հայաստանին տիրելուց. այդ ժամանակաշրջանում երկրի արտադրական ուժը, անկասկած, ավելի բարձրացած լինելու էր և առևտրական կապիտալը արաբական ընդարձակ պետության սահմաններում ազատ շրջանառության ամեն տեսակի հնարավորություն ուներ: Մյուս կողմից նոր հիմնվող Բաղդադ մայրաքաղաքը խալիֆայից պահանջում էր հսկա գումարներ:

Աս-Սաֆֆա (750-754), նրա եղբոր և հաջորդի՝ Ալ-Մանսուրի (755-775), Աբբասյան առաջին խալիֆաների օրով Հայաստանում կյանքը դառնում է անտանելի:

«… Որ նախ ելեալ յաշխարհս հայոց՝ բազում վշտօք և նեղութեամբ վտանգէր զամենեսին և հասուցանէր ի չքավորութիւն տնանկութեան, մինչև պահանջել հարկս և ի մեռելոցն… Խոշտանգէր և զբնակիչս աշխարհիս բըռնագոյն և դառն հարկապահանջութեամբ, առնուլ զգլխոյ բազում զուզէս (սուրիական դրամ) արծաթոյ, և դնել կնիք կապարեայ յամենեցուն պարանոցս»[1]:

Խալիֆը Մուավիայի կողմից հայ զորքերի համար խոստացված գումարը չէր վճարում: Հայ ազնվականները պարտավոր էին իրենց զինվորները սեփական միջոցներով պահել (**Ղևոնդ**, գլ. ԻԸ, էջ 128/129):

Ալ-Մանսուրի իշխանության ժամանակ հարկահավաքությունը և նրա հետևանքները եղել են սոսկալի: Խոսքը տալիս ենք ականատես պատմիչ Ղևոնդին.

«… Զի վախճանեաց զգիւտ արծաթոյ ի յերկրէս, և ամենայն ոք տալով զպաճարանս ընչից իւրեանց՝ ոչ գտանէին զգինս փրկանաց անձին իւրեանց. և չար կտտանօք, գելարանօք և կախաղանօք և դառն տանջանօք կեղէին զկեանս մարդկան: Յորմէ փախստեայ եղեալ բազումք յայրս և ի փապարս

[1] **Ղևոնդ**, գլ. ԻԸ, էջ 127, **Ասողիկ**, II, 6, էջ 135: Կ. Շահնազարյանի ֆրանսերեն թարգմանած Ղևոնդի պատմությունը այս կետում պետք է զգուշությամբ գործածել: Այդ թարգմանության մեջ ասված է «ամբողջ երկրի ազգաբնակությունը» (հմմտ. ֆրանս. թրգմ. Ch., Ի, 124): Բնագրից որոշակի երևում է, որ հարկը ըստ գլխի գանձվում էր. «Առնուլ ըստ գլխոյ բազում զուզեա»:

երկրի՝ ղօղեալ թագչէին և ոմանք ձիւնահեղձ և գետավէժ լինէին վասն անտանելի աղետիցն:

… Քանզի զռամիկ բազմութիւն մարդկան խոշտանգէին ազգի ազգի չարեօք, զոմանս փոկահարութեամբ լլկէին վասն հարկապահանջութեան դառնապէս, և զոմանս գերալանօք և կախաղանօք, և զոմանս մերկացեալ ի զգեստուցն՝ արկանքին ի մեջ լճից յաւուրս դառնաշունչ ձմերայնոյ» (**Ղևոնդ**, գլ. ԻԸ, էջ 135,137):

Ղևոնդի այս տեղեկությունները հաստատվում են նաև 768 թվին Պարտավում գումարված մի եկեղեցական ժողովի կանոնում.

§ ժդ. «Որք չև հասեալ ի ժողովրդականաց յայն, որ ի նեղութենէ հարկաց անձինքն հանեն ի վաճառ և սակաւ ինչ ի գոյութեան լինի և վաճառեսցէ զեկեղեցի կամ զսպաս սրբութեան, կամ ի կարասեաց, կամ յանդաստանաց եկեղեցւոյ, նզովեսցի յԱստուծոյ և ի մէնջ…» (Կանոնագիրք Հայոց, Թիֆլիս, 1914, էջ 169)[1]:

Նույնը հաստատվում է նաև սուրիացի ժամանակագիր Դրնիի կողմից[2]:

775-786 թթ. Մահդի և Հադի խալիֆաների իշխանության ժամանակ Ermeniata-ն վճարում էր 13.000.000 դիրհեմ տարեկան, այսինքն՝ տարեկան 12.532.000 ոսկի մարկ[3]:

Իբն Խալդունի հաղորդած այս տեղեկությունը դեռևս բավական չէ մեզ հարկերի ծանրության մասին որոշ գաղափար տալու, այս գումարը վերաբերում է, ա) բացի Հայաստանից, նաև Վրաստանին և Աղվանից երկրին, բ) առանց հարկատուների թիվը իմանալու՝ բոլորովին անհնարին է յուրաքանչյուրի վրա ինկած տուրքի ծանրությունը իմանալ, գ) ինչ որ ամենակարևորն է, չգիտենք, թե այն ժամանակ վերցրած տուրքերը ի՞նչ հարաբերության մեջ էին գտնվում հարկատուի տարեկան եկամուտի հետ:

Քանի որ այս տվյալները պակասում են, ստիպված ենք փորձ անել անուղղակի ճանապարհով գանձված այս հարկի գումարի մասին մի գաղափար կազմել: Այս հնարավոր կլինի, երբ մենք կարողանանք այդ ժամանակվա դրամի գնողական կարողության մասին մի բան ասել: Սամուել Անեցին 773-775 տարիների համար հաղորդում է հետևյալ ուշագրավ տեղեկությունը.

«Սաստիկ ձմեռ. մի ոչխարը ծախվում է մեկ դրամի. մի եզը՝ 7 դրամի (ֆրանս. թարգմ., հմմտ. **Brosset**, էջ 417)»:

---

[1] Այս վկայության սկզբի նախադասությունը անհասկանալի է: «Կանոնագիրքի» այս հատվածը համեմատեցինք Երևանի պետական թանգարանում գտնված № 693 ձեռագիր «Կանոնագիրքի» հետ, դժբախտաբար, վերջնույն մոտ ավելի աղճատված ձևով հասնում է մեզ:

[2] Chronique de Denys de Tell-Mahrè, IV-me partie, p. 54.

[3] **Alf. v. Kremer**, Kulturgeschichte, J, էջ 343, 358. Հմմտ. նաև **Thopdschian**, Die Inneren Zustände p. 31. **Ghazarian**, Armenien unter d. Araberberrschaft, p. 66:

Եթե պատմիչի հաղորդած այս տեղեկությունը վերաբերում է քաղաքներում ծախված ոչխարին և եզին, ապա սաստիկ ձմռան համար նշանակված այս գները պետք է նկատի ունենալ որպես բարձր գին, որը պատմիչի ուշադրությունն է գրավել, կարելի է սրանից հետևցնել, որ սովորական ժամանակ սույն գումարով հնարավոր էր ավելի գնել: Իսկ եթե ցուրտի պատճառով ոչխարի և եզի գների անկումն է ցույց տալիս, այնուամենայնիվ, մեզ տալիս է մի ընդհանուր գաղափար:

Սուրիացի ժամանակագիր Գրինին Միջագետքի առատության տարիների համար (766-770) մեզ հաղորդում է ապրանքների գների մասին հետաքրքիր վկայություններ. ստորև բերված այս վկայություններից առաջինը վերաբերում է նաև Հայաստանի հարավարևմտյան մասին.

766/67 թվին	25-30 գրիվ (gribê) ցորենը	= 1 դինարի
	40-45 kailtê գինին	= 1 դինարի
768/69 թվին	30 կապիճ (gephizê) ցորենը	= 1 զուզեյի
	40 spâdè գինին	= 1 զուզեյի
	8 լիտր ձիթայուղը	= 1 զուզեյի

Ամենից հետաքրքրականն է երրորդ վկայությունը, որ ժամանակագրական կարգոց մոտ է Սամուել Անեցու վկայության.

469/770 թվին	30-40 գրիվ (gribê)	= 1 դինարի
	1 գառնուկ	= 1 զուզեյի
	1 այծ	= 1 զուզեյի
	1 կով	= 5 զուզեյի
	1 էշ	= 4 զուզեյի[1]:

Ապրանքների այս գների մասին գաղափար կազմելու համար հարկավոր է վերև բերված չափերը հասկանալի դարձնել: Որքան մեզ ծանոթ է այդ չափերը, դեռևս չեն լուսաբանված մանրամասնորեն: Ավգերյանի «Բացատրություն չափուց և կշռոց» աշխատությունը (Վենետիկ, 1821), լինելով բարեխիղճ մի ուսումնասիրություն, չի ընդգրկում վերև մեր բերած ժամանակաշրջանը: Հիշած ապրանքների մեջ գլխավոր տեղը բռնում է ցորենը. հարկավոր է ուրեմն որոշել գրիվի և կապիճի արժեքը: Ըստ Գամուսի (արաբական ընդարձակ բառարանը)՝ ստանում ենք հետևյալը.

1 գրիվ = 4 կապիճ = 48 սա՝ա, = 192 մոդ, իսկ մի մոդը = 1 կիցք ցորենի:

Այս կերպ վերև բերված գրիվներից 30-ը վերցնելով՝ որպես միջին չափ 5 տարիների համար ստանում ենք՝ 5460 կիցք ցորեն = 1 դինարի = 11.66 ոսկի մարկի:

Լսենք այս ժամանակաշրջանի համար ականատես Ղևոնդ պատմիչը.

---

[1] **Chronique de Denys de Tell-Mahrè**, IV-me partie, ֆրանս. թրգմ. I. B. Chabot, Paris, 1895, p. 83, 90, 113:

«Եւ սա (Մահդի խալիֆը՝ 775-785) … երբաց զամենայն տունս գանձուց զորս աղխեալ պահէր ամբարիշտն Աբդլա, և բաշխեաց պարգևս զօրաց իւրոց: Համարձակեաց և զդրունս մարզից՝ հանել զվաճառականս ի վաճառս իւրեանց և լնուլ զպէտս կարպտելոց. և եղև առատութիւն երկրի, և գիւտ արծաթոյ ընդարձակեցաւ. և բնակչաց երկրի անդորրութիւն եղև ի հարկապահանջ բռնութենէն. *զի թէպէտեւ զանուր լծոյ հարկին ծանրացոյց՝* սակայն վասն գիւտի արծաթոյն հանգեաւ երկիրս առ փոքր մի ի չար տառապանաց վտանգին. *քանզի եւ լերինք արծաթոյ յայտնեցան յաշխարհիս Հայոց առ ի հանել ի նոցունց խանութս*[1] արծաթոյ զտոյ ի պէտս մարդկան յաւուր իշխանութեան նորա»[2]:

Այսպիսով՝ մենք տեսնում ենք, որ թեպետև Մահդիի իշխանության օրով ազգաբնակությունը ավելի հարկ էր վճարում, այնուամենայնիվ, նա ի վիճակի էր այդ հարկերը վճարելու: Մինչդեռ Ալ-Մանսուրի օրով, երբ ավելի նվազ հարկ էր դրված, մենք վերև կարդացինք այդ ժամանակաշրջանում ստեղծված անտանելի պայմանների մասին:

Ինչպե՞ս հնարավոր է այս տարբերությունները բացատրել:

Պատճառն այն է, որ վաճառականները կարողանում էին խալիֆաթի երկրներում ազատ առևտրական հարաբերություններ վարել, այնպես որ մեծ քանակությամբ դրամի շրջանառություն սկսվեց[3]:

Ապա և այն հանգամանքը, որ 754 թվին Ալ-Մանսուրի կողմից հիմնված Բաղդադ քաղաքը «775-786 թվերին սկսեց դառնալ այն, ինչ որ հիշողության և առասպելի մեջ ապրում է – աշխարհի ամենափառավոր և ամենաշքեղ քաղաքը» (**Helmolt**, Weltgeschichte, II, 1913, էջ 327)[4]:

---

[1] Կ. Շահնազարյանի ֆրանս. թարգմանությունը (Ch. 8, Ի, 149) այս կետի վերաբերյալ սխալ է: «Ձխանութս արծաթոյ»-ն թարգմանած է "I'hôtel des monnaies", այստեղ «խանութ» բառը նշանակում է. «մթերված բան», «դեզ», «պահեստ» (հմմտ. **Հ. Աճառյան**, Արմատական բառարան, Հայկազյան բառարան): Այս կերպ իմաստը բոլորովին փոխվում է:

[2] **Ղևոնդ**, գլ. ԼԷ, էջ 154/55:

[3] «… Համարձակեաց եւ զդրունս մարզից՝ հանել զվաճառականս ի վաճառս իւրեանց…» նախադասությունը բացատրվում է սուրիացի ժամանակագիր Դիոնիի մեկ վկայությամբ, որտեղ խոսվում է Ալ-Մանսուրի ծանր հարկահավաքության մասին, և ասված է ի միջի այլոց. «… Գրավում էին ճանապարհները և կողոպտում նրանց, ովքեր անց ու դարձ էին անում…» (**Denys**, էջ 104):

[4] Կիրակոս Գանձակեցու մոտ (Վենետիկ, 1865, գլ. ԾԸ, էջ 224) մի շատ հետաքրքրական տեղեկություն ունենք Բաղդադ քաղաքի մասին: Սույն տեղեկությունը վերաբերում է 1258 թվին, երբ թաթարները գրավում և թալանում են Բաղդադը: Պետք է նկատի ունենալ, որ այս տեղեկությունը վերաբերում է սույն քաղաքի անկման շրջանին:
«… Եւ լցան ոսկւով եւ արծաթով եւ մեծագին հանդերձիւ, զի էր քաղաքն յոյժ փարթամ, որ ոչ գտանիւր նման նմա ի վերայ երկրի. եւ ինք Հուլաւու իւր բաժնի զգանձն խալիֆին, եւ եբարձ ի նմանէ 3600 բեռինս ուղտուց. եւ ձիոյ եւ ջորւոյ եւ իշուց ոչ գոյր թիւ. եւ զայլ տունսն լի գանձիւք՝ կնքեաց մատանեաւ իւրով, եւ եթող պահապանս, զի ոչ կարաց բառնալ զամենայն,

Ղևոնդ պատմիչի տված տեղեկության մեջ ուշադրության արժանի է նաև արծաթահանքերի շահագործումը այդ ժամանակաշրջանում[1]: Շատ հավանական է, որ արծաթի արտադրությունը և առևտրական կապիտալի ակտիվացումը այդ ժամանակվա ապրանքի գների մեջ առաջ բերած լինեն որոշ փոփոխություն և այս կերպ անդրադարձած երկրի սոցիալ-տնտեսական փոխհարաբերությունների վրա:

Եթե առհասարակ ճիշտ է, որ տնտեսական միևնույն երևույթները առաջ են գալիս նույն պատճառներից, ուրեմն մենք կկարողանանք բաղդատական ուղիով այս մասին մի քանի հավանական ենթադրություններ անել:

Այսպես՝ մեզ ծանոթ է, որ միջնադարյան Եվրոպայի այն շրջաններում, ուր արծաթն ու ոսկին աժան է ձեռք բերվել, այդ վայրերում ապրանքների գների մեջ առաջ է եկել մի հեղաշրջում: Այս երևույթին ավելի խոշոր չափերով ականատես ենք լինում հետագա դարերում, երբ նորանոր ոսկու հանքեր են գտնվում:

Նույն այս երևույթի կրկնումը անհավանական չի թվում մեզ Հայաստանում ութերորդ դարու վերջին քառորդում: Արծաթի գնի անկման մասին մենք ունենք ուշագրավ մի տեղեկություն, որ զուգադիպում է այս ժամանակաշրջանին: Կրեմերի ուսումնասիրությունից երևում է, որ Հարուն ալ Ռաշիդ խալիֆի օրով (786-809) ոսկու և արծաթի փոխհարաբերությունը բարձրանում է 1:10-ից 1:20/22[2]:

Դրամական միությունը լինելով արծաթ՝ վերջինիս գնի անկումը նշանակում է ապրանքների գների բարձրացում: Ի՞նչ սոցիալական անդրադարձում է ունենում ապրանքների գների մեջ առաջ եկած այս հեղաշրջումը:

Մի հասարակարգում, ուր դրամական ձևով է կատարվում ապրանքային փոխանակությունը, ապրանքների գների մեջ առաջ եկած հեղաշրջումը առաջ պիտի բերեր սոցիալական հակադրություն: Այն դասերը, որոնք դրամական եկամուտների կարիք ունեն, առանց ուժ ունենալու համապա-

---

որ անչափ էր բազմութեամբ»: Հետաքրքիր է պատմիչի բացատրությունը Բաղդադի այնքան հարստանալու մասին. «Եւ զամենայն (ժամանակն զոր) կացեալ էր ի թագաւորութեան իբրեւ անյագ տզրուկ կլեալ զամենայն տիեզերս»:
Բաղդադի լյուքսի մասին լիակատար գաղափար կարելի է կազմել **G. le Strange**-ի Bagdad during the Abbasid Caliphate աշխատությունից (Oxford, 1900):

[1] Չորրորդ Հայքում արծաթե և կապարի հանքերի օգտագործման մասին ունենք շատ հետաքրքրական տեղեկություն նույն սուրիացի ժամանակագիր Դընիի մոտ (Chronique de Denys de Tell-Mahré, էջ 172/75):

[2] Դինարի արժեքը նշանակալից տատանումների ենթակա էր: Նախապես դինարի (ոսկի միություն) արժեքային փոխհարաբերությունը դիրհեմի (արծաթ միություն) հետ ներկայացնում էր 1:10: Հարուն ալ Ռաշիդի օրով այդ փոխհարաբերությունը բարձրացավ 1:20/22: Կողամայի ժամանակ ինկավ 1:15, Մոկտատիրի ժամանակ բարձրացավ կրկին 1:20, **Alf. v. Kremer**, Das Einnahme-Budget des Abbassidenreiches vom Iahre 918/919, **Denkschriften d. Wiener**, Akademie Phil. Hist. kl, 1888, էջ 287:

տասխան դրամը ձեռք բերելու, ամենից ավելի ազդվելու էին: Այդպիսիններ հանդիսանում են աշխատավարձով աշխատողները և փոքր ազնվականությունը: Արտադրող դասի աղքատացումը դեռևս 768 թվին, ինչպես այդ երևում է վերև հիշված Պարտավի ժողովի մի կանոնում, հասել էր մեծ համեմատությունների.

§ ԺԷ «… Այժմ, ի տեղիս տեղիս այդ աւերեալ է, ու ելանին տկարքն յայլ մուրողաց վիճակաց, առնուն զմուրողին նոքա զրկին ի միմեանց, և չքավորեալ շրջին» (Կանոնագիրք Հայոց, Թիֆլիս, 1914, էջ 170):

Փոքր ազնվականությունը, հնարավորություն չունենալով աճող նորանոր տնտեսական կարիքները իր կալվածների հասույթով բավարարելու, ստիպված էր լինում փոխառության դիմել, հավանաբար մեծ հողատերերից: Այս հանգամանքը պատճառներից մին է հանդիսանում, թերևս սրանց վասալական դրության, որը IX դարում կատարված փաստ է:

Վերադառնալով կրկին Ղևոնդ պատմիչի տվյալներին՝ կարող ենք արձանագրել այն փաստը, որ թեև 775-786 թվերին հարկի քանակը, համեմատած նախորդ տարիների, ավելի բարձր էր, այնուամենայնիվ, երկրի արտադրողականությունը հնարավորություն տվեց նախկին շրջանում «յայրս և ի փապարս» փախչողներին այս ծանր տուրքերը վճարելու[1]:

786-809 թվերին՝ Հարուն ալ Ռաշիդ խալիֆի օրով, հարկերի քանակը մնում է նույնը՝ 13.000.000 դիրհեմ[2]:

Հարուն ալ Ռաշիդի ժամանակ Ermeniata-ից վերցրած տուրքերի քանակը, որը ո՛չ Թոփչյանի, ո՛չ էլ Ղազարյանի մոտ հիշատակված են, հաստատում են Խալդունի հաղորդած հարկային ցուցակի ճշտությունը:

Ազգաբնակությունը ի վիճակի էր այս տուրքերը վճարելու:

Օմար իբն Մոտարիֆի ներկայացրած ձևով, որ նույն հարկային գումարը գանձվելը հաղորդում է, առաջին ակնարկով այնպես է թվում, թե ազգաբնակությունը, ինչպես 775-786 թվերին, ի վիճակի էր նույն գումարը առանց դժվարությունների Հարուն ալ Ռաշիդի ժամանակ էլ վճարելու: Սակայն, 787-790 թվերին Ղևոնդ պատմիչի մոտ այնպիսի տրտունջներ ենք լսում,

---

[1] Եթե Ղազարյանը Ղևոնդի տված այս տեղեկության ուշադրություն դարձրած լիներ, հետևյալ խոսքը չպիտի գրեր. «Տվյալների պակասության պատճառով չենք կարող ասել, թե այս ժամանակ (775-786) երկիրը հարկերը վճարելու մեծ ուժ ուներ, թե ոչ», **Ghazarian**, Armenien, էջ 66: **Դաղբաշյանը** (Gründung des Bagratiden reiches, էջ 82/83) հիշատակում է Հայաստանից վերցրած հարկերը: Արաբական աղբյուրները չէ օգտագործել: Այս շրջանը առանց արաբական աղբյուրների հնարավոր չէ լիակատար ուսումնասիրել:

[2] Հարկային այս ցուցակի հեղինակը՝ Օմար իբն Մոտարիֆը, Մահդի, Հադի և Հարուն ալ Ռաշիդ խալիֆաների կառավարության ժամանակ որպես բարձր պաշտոնյա պետական պաշտոններ է վարել: **Alf. v. Kremer,** Über das Budget d. Einnahmen unter d, Regierung des Harun al Rasid, Wien, 1887, էջ 11:

որոնք հիշեցնում են Ալ-Մանսուրի ժամանակները[1]:

Ազգաբնակությունը այն աստիճան նեղվում է, որ իր փրկությունը արտագաղթի մեջ է գտնում: Համաձայն սույն պատմիչի տվյալների՝ 12.000 հայեր հույների կողմն են անցնում (**Ղևոնդ**, գլ. ԽԲ, էջ 168):

Արդյոք դրամական հարկերի բարձր լինե՞լն էր, որ ազգաբնակությունը մղել էին այդ հուսահատական քայլն անելու, թե՞ տարբեր պատճառներ կային: Այս հարցի պատասխանը գտնում ենք Ղևոնդի մոտ, երբ նա ասում է.

«… Զի յայնմհետէ ոչ ոք էր տէր ընչից իւրոց. (**Ղևոնդ**, նույն տեղում):

Ուրեմն տիրողների կամայականությունն էր օրենքը, և անհնարին է, նույնիսկ թվական տվյալները ունենալով, հպատակների շահագործման չափը ճանաչել: «Ակնհայտնի կերպով պետական բարձրագույն պաշտոնյաները իրենց դիրքը շահագործում էին հարստանալու համար»[2]:

Այն թանկարժեք պարգևները, որոնց շնորհիվ աշխատում էին տիրողների բարկությունը մեղմել, ներկայացնում էին մի ուրիշ տեսակի ծանրաբեռնում (հմմտ. **Ղևոնդ**, գլ. ԻԸ, **Իբն Հաուք.**, էջ 254): Տիրող այդ պայմանները ամենից ավելի արտահայտվում են Աշոտ Արծրունու մի նամակում՝ 851 թվին ուղարկված Յուսուֆ Բին Աբի Սայիդ Մուհամմադ էմիրին:

«Ելեր դու յաշխարհս հայոց հրամանու արքունի՝ առնուլ զհարկս արքունի. մի՞թէ և հարմար ունիս յարքունուստ, գերել, գերփել յաւեր դարձուցանել զաշխարհս մեր… Մեք տացուք քեզ զհասս հարկացն և հաճեսցուք զմիտս քո, և մի յանխնայ ասպատակելով յաւեր դարձուցանես զերկիր իմ» (**Թովմա**

---

[1] Ղևոնդի պատմությունը ավարտում է 787-790 թվերի: Ստույգ է, որ Ղևոնդից հետո գալիս է Շապուհ Բագրատունին: 1921 թվին Վաղարշապատում Շապուհի պատմությունը հրատարակված երկը բանասերների կողմից մերժվել է որպես այդպիսին: Ուստի սույն պատմությունը դեռևս կորած պետք է համարել: 790-841 թթ. ոչ մի ժամանակակից պատմիչ չունենք: Թովմա Արծրունիի պատմությունը 908 թվից առաջ ավարտում է, սրանից հետո գալիս է Հովհաննես Կաթողիկոսը, որ հասցնում էր իր պատմությունը մինչև 925 թիվը: Թովմա Արծրունին 847 թվից հետո կարելի է որպես ականատես պատմիչ նկատի ունենալ: Նախկին ժամանակաշրջանի համար ասում է. «Որ այս ժամանակի դեպքերը ուրիշների կողմից գրված են, և մենք ավելորդ նկատեցինք կրկնել»:
774/5 թվականներին արաբների, հրեաների, քրիստոնյաների, եգիպտացիների, հայերի վրա դրած ծանր տուրքերի համար գանգատվում է Zuqnin-ի ժամանակագրությունը (Chronique de Denys de Tel-Mahrè, IV-e partie, էջ 63, trad. Chabot): Ուշագրավ են նույն հեղինակի մոտ հարավային Հայաստանից (Armenia IV) վերցված գլխահարկի հետևանքների մասին տված տեղեկությունները:

[2] **Alf. v. Kremer,** Denkschriften d. Wiener Akademie 1888, էջ 289: Ղազարյանը (էջ 67) իրավամբ նկատում է այդ կամայականությունների մասին, որ «պաշտոնական թվերը (հարկերի մասին) իրականության չեն համապատասխանում. պետական գանձարկղը շատ ավելի քիչ էր մուծվում, քան բյուջեի մեջ նշանակված թիվը, մեծ ու փոքր հարկահավաքների գրպանները շատ բան էր մնում, և իրականության մեջ Հայաստանից վերցված հարկերի քանակը շատ ավելի բարձր էր: Բացի այս՝ հպատակները պահում էին նաև տեղացի իշխանները և հոգևորականները: Հազիվ թե ընդունելի լինի այն, որ բռնատեր ազնվականությունը շատ մեղմ վերաբերված լինի իր սեփական հպատակների հետ»:

Արծրունի, Պետերբուրգ, 1887, II, 6, էջ 111/12)[1]:

819-852 թվերին, համաձայն Քուդամայի հարկային ցուցակի, Հայաստանը վճարում էր 4 միլիոն դիրհեմ. Տարոնը հաշվում է Հայաստանի մասը, որը վճարում էր 100.000 դիրհեմ: Արծն ու Մայաֆարիքին միասին՝ 4.100.000 դիրհեմ: Ուրեմն վերջին այս գավառների հետ Հայաստանը վճարում էր ընդամենը 8.200.000 դիրհեմ[2]:

Քուդամայի այս տվյալը հաստատվում է Իբն Խուրդադբեյի մի ուրիշ տվյալով, որ վերաբերում է 836-851 թվականներին:

Իբն Խորդադբեն Հայաստան ասելով հասկանում է Վրաստանը, Աղվանից երկիրը և ամբողջ Հայաստանը, վերջինս՝ 4 միլիոն դիրհեմով ծանրաբեռնված: Համաձայն նրա ցուցակին՝ երեքը միասին վճարում էին 8.000.000 դիրհեմ[3]:

Այս ժամանակաշրջանի համար հայ պատմիչներից աչքի են ընկնում Թովմա Արծրունին և Հովհաննես Կաթողիկոսը: Նրանք թեև հաստատում են հարկերի գանձումը, սակայն մենք չենք լսում նրանցից այդ առթիվ տրտունջներ[4]: Ինչպես երևում է 861 թվից, երբ Աշոտ Բագրատունին «իշխանաց իշխան» է նշանակվում, և նրան է հանձնվում հարկահավաքությունը, երկիրը մինչև 890 թիվը սկսում է բարգավաճել[5]: Այս կերպ հասնում ենք Բագրատունիների հարստության շրջանը:

Գ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՇՐՋԱՆԸ

Այս շրջանի դրամական հարկերի գանձման հարցը լուսաբանելուց առաջ հարկավոր է պարզել հետևյալը. Բագրատունիների շրջանում Հայաստանը «անկախ» եղե՞լ է: Այս հարցի պատասխանը կտրվի մեր ուսումնասիրության ընթացքում: Սակայն հարկավոր է այստեղ կոնկրետ կերպով ասել, թե ի՞նչ պետք է հասկանալ «անկախություն» իմացությամբ (Begriff):

Տնտեսական այլազան ֆազերում երկիրների փոխհարաբերությունը արտահայտվել է այլազան կերպ: Ուստի ընդհանուր ձևով հարցադրությունը

---

[1] Հմմտ. նաև **Հովհաննես Կաթողիկոս**, Երուսաղեմ, 1867, գլ. 24, էջ 142/43: Նմանօրինակ կամայականությունների հանդիպում ենք Արշակունյանց ժամանակ տեղական իշխանների կողմից, հմմտ. **Փավստոս**, II, գլ. 10, էջ 24:

[2] **Alf. v. Kremer,** Kulturgeschichte I, էջ 368: Կրեմերը Տարոնից վերցված հարկը 1 միլիոն դիրհեմ է ցույց տալիս, մինչդեռ աղբյուրը՝ Քուդաման, երկու տեղերում էլ ունի mâetun alf dirham, հմմտ. **Ghazarian**, էջ 67, Anm. 2:

[3] **Alf. v. Kremer,** Kulturgeschichte I, էջ 377, հմմտ. նաև **Ghazarian**, էջ 67, **Thopdschian**, p. 33.

[4] **Թովմա Արծրունի**, II, գլ. 5, էջ 107, **Հովհաննես Կաթողիկոս**, գլ. 825, էջ 145/46:

[5] **Հովհաննես Կաթողիկոս**, գլ. 27, էջ 169, գլ. 28, էջ 171-179:

այս խնդրի մասին պիտի լիներ ոչ ճիշտ:

Մինչ համաշխարհային տնտեսության շրջանում, երբ յուրաքանչյուր երկրի տնտեսական ամբողջ կյանքը կազմում է մի օղակը ամբողջական շղթային, երբ աշխարհակալական պատերազմից և ռուս պրոլետարիատի հաղթությունից հետո ամբողջ աշխարհը բաժանվում է կապիտալիստական և սոցալիստական երկու հակամարտ մասերի, այս շրջանում, երբ խոսքը վերաբերում է որևէ մի երկրի ուրիշ երկրների հետ ունեցած փոխհարաբերության մասին, հարցը դրվում է այս կերպ. այդ երկիրը ո՞ր մասին է պատկանում: «Անկախություն» գաղափարը, համաշխարհային տնտեսության այս շրջանում, դարձել է կապիտալիստական և սոցիալիստական երկրների պատկանելության մի իմացություն:

Եթե կապիտալիզմի շրջանում «անկախության» հարցը համաշխարհային արտադրական փոխհարաբերություններով այս կերպ է ձևակերպվում, ապա միջնադարյան, ավատական շրջանում հարցին այս կերպ չենք կարող մոտենալ, այն պարզ պատճառով, որ տնտեսական այս ֆազում երկրների արտադրական փոխհարաբերությունները ներկայացնում են բոլորովին այլ բովանդակություն:

Տնտեսական այդպիս մի էպոխայի համար կարելի է թերևս հարցը կոնկրետ կերպով այսպես ձևակերպել:

Տվյալ մի երկիր, այս դեպքում ավատական Հայաստանը, ուրիշ երկրների հետ ունեցած իր փոխհարաբերություններով հնարավորություն ունե՞ր իր արտադրական ուժերը անարգել զարգացնելու: Երկրո՞ւմ մնում էր արտադրությունների կուտակումը, թե՞ այն դուրս էր գնում տրիբուտի ձևով: Ուրեմն խնդրո առարկա ավատական Հայաստանը տվյալ ժամանակաշրջանում ուրիշ երկրների տրիբուտ վճարո՞ւմ էր, թե՞ ոչ:

Ի՞նչ են ասում այս հարցի մասին պատմական աղբյուրները Բագրատունիների շրջանի համար:

899 թվից Բագրատունի թագավորները հարկատու էին ոչ միայն Մուսուլի արաբական էմիրին, այլև Ատրպատականի իրանական էմիրին[1]:

Այս կացության բացասական հետևանքները հայտ են գալիս 908/09 թվերին, երբ Յուսուֆ Բին Աբու-Սաճը Աղրբեջանը և Հայաստանը կառավարելու պաշտոնը գնեց տարեկան միանվագ մի գումարով՝ 120.000 դինարի[2]:

---

[1] **Հովհաննես Կաթողիկոս**, գլ. 42, էջ 258, **Ասողիկ**, III, գլ. 18, էջ 186, III գլ. 46, էջ 273/74, **Lane-Poole**, The Mohammedan Dynasties, էջ 126:

[2] **Իբն Ատիր**, VIII, 74, 75, հմմտ. **Alf. v. Kremer**, Denkschriften Wiener Akademie, 1888, էջ 289, հմմտ. նաև **Defremery**, Mèmoires sur les Sadjites, X, 399, note 2: Այս ժամանակից սկսած՝ տուրքերը սկսան Հայաստանից գանձվել ոսկով: Նշանակալից է, որ Հովհաննես Կաթողիկոսի մոտ «ոսկի» բառը հիշատակվում է: Այս փոփոխությունը երկրի տնտեսական կյանքում կարևոր մի խնդիր է: Այն երկրներում, որտեղ միայն արծաթը շրջանառության մեջ էր (շատ հավանական է, որ Հայաստանում էլ նույն դրությունն էր), այդ երկրները ստիպված էին ոսկու

Պետք է հիշատակել, որ Հայաստանի տուրքերի կապալով տրվելու ձևին առաջին անգամ ենք հանդիպում:

Հովհաննես Կաթողիկոսը, որ Սմբատ I-ի և Յուսուֆի միջև մղված կռիվներին մասնակից է եղել և վերջինի կողմից բանտարկվել, մեզ հայտնում է, որ 908/909 թվերին Հայաստանը Յուսուֆ էմիրին վճարում էր 60.000 դահեկան[1]:

Այս հարկերը վճարելու համար Սմբատ թագավորը հրամայում է.

«Եւ ապա ընդ բոլոր աշխարհս տէրութեան իւրոյ հինգերորդել հրամայէ զամենայն երամակս ձիոց և զանդեայս արջառոց և զհօտս ոչխարաց՝ և տալ ի զրադատ՝ տուգանս սակին» (**Հովհաննես Կաթողիկոս**, գլ. 42, էջ 258):

Մխիթար Գոշի «Դատաստանագիրքում», II, § 1, էջ 315/16, կարդում ենք, որ ոչխարներից որպես տուրք վերցվում է 10 գառնուկից մին, կովը տալիս է մի ֆ. կարագ, եզը, հողը հերկելով, վճարում է իր հարկը, ջորին, ձին, էշը զերծ են տուրքից, քանի որ հաճախ տիրոջը ծառայում են:

Եթե Մխիթար Գոշը մեզ տալիս է երկրում գոյություն ունեցող սովորույթը, այն ժամանակ մեզ համար պարզ է լինում, թե ինչո՞ւ նախարարների հարաբերությունը, դրված այդ հարկերի համար, դառնում է թշնամական և հանգում նույնիսկ զինված ապստամբության: Թագավորական տունը կարողանում է հաղթել նախարարներին (**Հովհաննես Կաթողիկոս**, գլ. 42, էջ 259 շար.): Սմբատ I-ի դեմ նախարարների կռվի դուրս գալը իր սկզբնապատճառով, բայց ոչ վախճանով մեզ հիշեցնում է 1215 թվին Անգլիայում բարոնների և ասպետների ապստամբությունը Հովհան թագավորի դեմ:

Սմբատի՝ Ադրբեջանի էմիրի դեմ մղած երկարատև պայքարները և ներքին նախարարական խռովությունները վերին աստիճանի տկարացնում են տիրող դասը, և մենք տեսնում ենք 915 թվին ընդհանուր գյուղացիական ապստամբություն: Այստեղ մենք չենք կարող այս վերին աստիճանի հետաքրքրական երևույթի վրա կանգ առնել:

Ալ-Մուկտադիր խալիֆի և Յուսուֆի միջև կնքված համաձայնության հիման վրա 918/919 թվին Հայաստանն ու Ադրբեջանը վճարում են 226.370 դինար[2]:

«Հարկերը կապալով վերցնելու դրությունը վաղուց գոյություն ուներ, սակայն նրա բացասական հետևանքները սկսան առավել ևս հայտ գալ այն

և արծաթի տարբերությունից առաջացած վնասն էլ կրել:

[1] **Հովհաննես Կաթողիկոս**, գլ. 43, էջ 270: Այստեղ *Հայաստան* բառի տակ պետք է հասկանալ նաև Վրաստանն ու Աղվանից երկիրը, հմմտ. **Հովհաննես Կաթողիկոս**, գլ. 44, էջ 274, գլ. 54 և 133: **Daghbaschian**, էջ 84, Anm., 1:

[2] Այս արժեքավոր տեղեկությունը պարտական ենք գիտնական **Alf. v. Kremer**-ի, Über das Einahme Budget des Abbassiden Reiches von 918/19. Denkschriften d. Wiener Akademie Phil. Hist. Kl. 1888, էջ 315: Այս գրության հեղինակն է Ալի իբն Իսան, որ Մուկտադիր խալիֆի օրով նախ վեզիրի, ապա վեզիրի փոխանորդի պաշտոնը վարած է: Հարկերի այս ցուցակում Արզանն ու Մայաֆարիկինը առանձին հարկային շրջաններ են կազմում և միասին վճարում են դրամական հարկ՝ 56.750 և բնահարկ՝ 82.422 դրամի արժեքով, նույն տեղում, էջ 316:

ժամանակաշրջանում, երբ խալիֆայական պետությունը քայքայման ճանապարհն էր բռնել: Եվ երբ պետության կենտրոնի գավառներում, որոնք անմիջական հարաբերության մեջ էին մայրաքաղաքի հետ, այդպիսի շահագործումներ և սանձարձակություններ էին տեղի ունենում, հեշտ է պատկերացնել, թե ծայրագավառներում ինչեր կարող էին պատահել[1]:

955/956 թվին, երբ Հայաստանը բաժանված էր այլազան մանր թագավորական տուների միջև, համաձայն արաբ պատմիչ Իբն Հաուքալի տվյալների՝ Ermeniata-ն վճարում էր 2.450.000 դիրհեմ և 100.000 դինար, որոնք բաշխվում էին հետևյալ կերպով.

1. Շիրվանշան 1.000.000 դիրհեմ
2. Վայոց ձորը 50.000 դինար
3. Վրաստանը 200.000 դիրհեմ
4. Առը և Վաչականը 50.000 դինար
5. Արծրունիները 100.000 դիրհեմ
6. Բագրատունիները 1.000.000 – || –
7. Խաչենը 100.000 – || – || –
8. Անասուններ և ուրիշ նվերներ 50.000 – || – || – [2]:

Այս թվականից դադարում են արաբական աղբյուրները: Թե Հայաստանը հետագա տարիներում ևս հարկեր է վճարել, այդ տեսնում են Ասողիկ պատմիչի տված տեղեկություններից, որ, 987 և 1000 թվերին կատարված անցքերին ականատես լինելով, մեզ տալիս է արժեքավոր տվյալներ:

Այսպես՝ սույն պատմիչը հայտնում է, որ 987 թվին Ադրբեջանի էմիրը՝ Աբլհաջան, գալիս է Դվին և Սմբատ II-ից պահանջում է «անցած տարիների հարկերը»: Սմբատը «բազմաթիվ ինչքերով գոհացնում է էմիրին, որ վերադառնում է իր երկիրը» (**Ասողիկ**, III, գլ. 18, էջ 198/199): Երբ 1000 թվին բյուզանդական կայսրը Հայաստան էր եկել, «մերձակա արաբ խալիֆին մի գրություն էր ուղարկում»՝ Վասպուրականից վերցված տուրքը նվազեցնելու համար (**Ասողիկ**, III, գլ. 46, էջ 281):

Ի՞նչ են ասում այս բոլոր տվյալները, սկսած 899 թվից 1000 թիվը, Բագրատունիների շրջանի մասին:

Այն, որ այս ժամանակաշրջանում Հայաստանը ոչ թե մեկ խալիֆի հարկատու էր, ինչպես մենք այդ տեսանք Աբբասյանների շրջանում, այլ նա ենթարկվել էր թե՛ խալիֆի և թե՛ էմիրի գերիշխանության: Ուրեմն, լինելով կրկնակի հարկատու, երկրի արտադրությունից գոյացած կուտակումը (շատ դեպքերում արտադրող դասի անմիջական սնունդը) գնում էր խալիֆին և էմիրին: Այս կերպ երկրագործության ասպարեզում արտադրական ուժերը զարգանալու ոչ մի հնարավորություն չունեին:

---

[1] **Alf. v. Kremer**., Denkschriften d. Wiener Akademie Phil. Hist. Kl. 1888, p. 295.

[2] **Իբն Հաուքալ**, էջ 254, **Ghazarian**, Armenien unter d. Araberherr., էջ 67:

Մինչև այժմ «ազգասեր» պատմիչները մեզ ներկայացրել են ավատական Հայաստանի պատմության այս էջը նրա «անկախության», «փառավոր» մի շրջանը: Նրանք աչքի առաջ ունեցել են միայն արտաքին այն հանգամանքը, որ այդ ժամանակաշրջանում երկիրը կառավարել են մի շարք տեղացի իշխաններ «թագավոր» անվան տակ և աճապարել են հանգելու վերոհիշյալ անհիմն եզրակացության: Երկրի արտադրական ուժերի զարգացումը կախում ունի ոչ թե իշխողների տեղացի կամ օտար լինելու հանգամանքից (որովհետև նրանք հանդիսանում են նույն ավատական դասի ներկայացուցիչները), այլ գլխավորապես նրանից, թե ինչպիսի արտադրական փոխհարաբերություններ և ի՞նչ հնարավորություններ գոյություն ունեին նրանց զարգացման համար:

Այժմ հարց է առաջանում, եթե Բագրատունիների շրջանում երկրի արտադրական ուժերի համար այդպիսի արգելքներ գոյություն ունեին, ինչո՞վ բացատրել ավատական Հայաստանի քաղաքների բարգավաճումն ու հարստացումը: Մի՞թե նրանց բարգավաճումը հակասության մեջ չի մտնում վերև հանած մեր եզրակացության հետ:

Այդ շրջանի ավատական Հայաստանի քաղաքների բարգավաճումը ունի տնտեսական այլ պատճառներ. գյուղի շահագործումը քաղաքի կողմից հանդիսանում է վերջնույն զարգացման ազդակներից գլխավորը: Արաբների վարած հողային քաղաքականությունը և մի քանի ուժեղ նախարարների ձեռքում կալվածների կենտրոնացումը հանդիսանում է երկրորդ հիմնական պատճառներից մին: Բացի սրանցից՝ գլխավոր պատճառներից մին հանդիսանում է նաև դարու երկու նշանավոր քաղաքների՝ Բյուզանդիոնի և Բաղդադի միջև ստեղծված առևտրական հարաբերությունը, որը կատարվում էր մեծ չափով Հայաստանի վրայով:

Մենք կանգ ենք առնում այս գործոնների վրա մեր աշխատության հետագա գլուխներում:

Դրամական հարկերի կողքին շարունակում են գոյություն ունենալ նաև բնահարկերը: Ընդհանրապես վերցվում էին անասուններ և տնայնագործական արտադրություններ: Իբն Խալդունի մեզ հասցրած հարկային ցուցակի համաձայն՝ Հայաստանից վերցվել են հետևյալ բնահարկերը. «20 գորգ, 580 ֆունտ ըաքմ (?), 10.000 ֆունտ սուռմահի (աղած ձուկ), 10.000 համեմված ձուկ, 200 ջորի, 30 բազե»[1]: Անշուշտ, այս բնահարկերի շարքին են վերաբերում այն բազմաթիվ պարգևները, որոնք այլազան առիթներում տրվում էին: Այդ մասին վերև մենք առիթ ունեցել ենք խոսելու: Նույնպես բնահարկերի շարքը պետք է դասել պատերազմների ընթացքում արաբական բանակի կարիքների համար վերցված իրերը. «… Եվ անտի ևս առնուին աւար ի պատճառս ռոճկաց պիտոյից այրուձիոյն» (**Թովմա Արծրունի**, Ս. Պետերբուրգ, 1887, II, 6, էջ 111):

[1] **Alf. v. Kremer**, Kulturgeschichte, I, p. 358.

4

Հարկային քաղաքականության ասպարեզում խոշոր նշանակություն ունի այն հարցը, թե ի՞նչ տեսակ հարկեր էին գանձվում:

Հայ պատմիչները գործ են ածում գանձված հարկերի համար այլազան տերմիններ՝ առանց մեզ ուղղակի հայտնելու, թե ինչ տեսակ հարկեր են դրանք: Ինչ վերաբերում է արաբական հարկային վավերաթղթերին, նրանցում Ermeniata-ից վերցված հարկերը նշանակված են ընդհանուր գումարով և ոչ թե ըստ հարկերի տեսակների դասավորված: Ուստի այս հարցի լիակատար պարզաբանումը, մեր կարծիքով, այն ժամանակ միայն հնարավոր կլինի, երբ բանասիրական ուսումնասիրություններով հայ պատմիչների մոտ այլազան վայրեր ցրված հարկային տերմինները կլուսաբանվեն: Այդ տերմինները, որոնք ժամանակի ընթացքում այլազան նշանակություններ ստացել են, հարկավոր է պարզել, թե արաբական տիրապետության շրջանում ի՞նչ տեսակի հարկերի համապատասխանում էին: Սրանով կպարզվի արդեն գանձված հարկերի տեսակները: Այդ բանասիրական ուսումնասիրությունները, անկասկած, ելակետ պիտի ունենան մի կողմից Օմայատների և Աբբասյանների շրջանում գոյություն ունեցող ֆինանսական սիստեմը, մյուս կողմից՝ ավատական Հայաստանի արտադրական եղանակը:

Ա. Կրեմերը արաբական աղբյուրների ուսումնասիրությամբ հանգել է այն եզրակացության, որ Օմայատների շրջանում արաբական պետության սահմաններում գանձվում էին՝ 1. գլխահարկ (նվաճված ազգերից), 2. հողային հարկ, 3. աղքատների համար վերցված տուրք (մահմեդականներից), 4. տասանորդ՝ մահմեդականների հողերից, 5. առևտրական և ապրանքային մաքս, 6. բանակի կարիքների համար նվաճված ժողովուրդներից վերցված նյութեր, 7. անձնատուր եղած երկրներից և քաղաքներից վերցված տրիբուտ, 8. մեկ հինգերորդը՝ ա) պատերազմական ավարների, բ) շահագործման մեջ եղող հանքերի արդյունքի, գ) ծովերից գոյացած հասույթի, դ) առևտրական նպատակով մուսուլմանական երկիր եկող մուսուլմանների, ռայաների և օտար ժողովուրդների ապրանքներից մաքս, 9. փրկագին, որոնք ուղղակի մուծվում էին պետական գանձը[1]:

Աբբասյանների շրջանում հարկերի այս տեսակները ենթարկվում են որոշ դիֆերենցիացիայի, որը բավականին պերճախոս է հպատակ երկրների արտադրական եղանակում առաջացած փոփոխությունների համար՝ 1) հողային հարկ՝ ա) ըստ հողաչափության, այսինքն՝ յուրաքանչյուր գարիբի (400 քառ. մետր) պարտավոր էին սահմանված չափով վճարել, բ) ըստ բերքի, գ) վարձակալական դաշինքի, 2) կարողության վրա դրված հարկ, 3) նավերի հասույթի տասանորդը, 4) հանքերի և արոտատեղինե-

[1] **Alf. v. Kremer**, Kulturgeschichte I, p. 161.

րի արդյունքի մեկ հինգերորդը, 5) գլխահարկ, 6) փողերանոցի վրա դրված տուրք, 7) մաքսատների հասույթը, 8) աղի արտադրության և ձկնորսության վրա դրված տուրքեր, 9) հասարակաց հրապարակները, փողոցները, շուկաները և այլն գործածելու համար վերցված հարկերը, 10) ջրաղացներից և արհեստանոցներից գանձված հարկերը, 11) պերճանքի առարկաների և սպառողական հարկ[1]:

Ապագային թողնելով Հայաստանից գանձված հարկերի տեսակների լիակատար պարզաբանումը, այնուամենայնիվ, հնարավոր է պատմական տվյալների վրա հիմնվելով՝ երևան հանել Հայաստանից գանձված մի քանի տեսակ հարկեր:

Վերև հիշատակված Հաբիբ իբն Մասլամայի՝ 653 թվին Դվին քաղաքի ազգաբնակության ուղղած գրության մեջ որոշակի ասված է. «… Որքան ժամանակ դուք հնազանդ մնաք և գլխահարկ ու հողային տուրք վճարեք»: Ղևոնդ պատմիչի մոտ գտնում ենք. «… Առնուլ ըստ գլխոյ բազում զուզես» (**Ղևոնդ**, գլ. ԻԸ, էջ 127), «…Զի ոչ եր գիւտ զոր հայցէինն, գտանել պահանջումն սակի արծաթոյն, այլ ըստ գլխոյ արանց» (**Ղևոնդ**, գլ. ԼԳ, էջ 135): Նույն տեղը Ղևոնդ գործածում է նաև հետևյալ հետաքրքիր դարձվածքը. «...Եվ ամենայն ոք տալով զպաճարանս ընչից իւրեանց՝ ոչ գտանէին զգինս փրկանաց անձին իւրեանց»:

Այս տվյալներից հետևում է՝ 1. Հայաստանից վերցվում էր գլխահարկ, 2. հողային տուրք և 3. կարողության տուրք: Հավանաբար անասուններից ևս վերցվում էր առանձին հարկ, որովհետև, հակառակ դեպքում, վերև մեր հիշած հարկահավաքության համար անասունների արձանագրումը իմաստ չպիտի ունենար: Երբ Սմբատ Ի-ը հրամայում էր, հակառակ երկրում տիրող սովորույթի, անխտիր բոլոր անասունները տասանորդել, հավանաբար կիրառում էր արաբական հարկային ձևը:

Բացի մատենագրական վկայություններից՝ X դարու սկզբից մենք հանդիպում ենք «Վիմական տարեգրում» ամփոփված արձանագրություններում մի շարք հարկերի տեսակների: Սրանց լիակատար պարզաբանումը կլինի այն ժամանակ, երբ սույն արձանագրությունների թերությունները նորագույն ուսումնասիրություններով կլրացվեն:

Մեր աշխատության այն գլուխները, որտեղ խոսվում է ավատական Հայաստանի քաղաքների բարգավաճման, նախանյութի վերամշակման և ապրանքային փոխանակության մասին, պարզում են երկրի արտադրական եղանակը: Վերջինս, կազմելով հիմքը հարկերի ասպարեզում առաջացած դիֆերենցիացիայի, այստեղ մենք հիշում ենք միայն արձանագրություններում հիշատակված հարկի տեսակները:

[1] **Alf. v. Kremer**, Kulturgeschichte I, p. 278.

Բացի վերև հիշատակված գլխահարկից, հողային և կարողության վրա դրված հարկերից՝ գալիս են՝ 4. «**ղապալ**», հավանաբար գետերի օգտագործումը մենաշնորհի ձևով էր տրվում, որը կազմում էր հասույթի աղբյուր[1], 5. «**չար**», աղահանքերի շահագործումը Հայաստանում հաստատված փաստ է. այս տուրքը հիշատակվում է որպես աղահանքերից գանձված մի հարկ[2], 6. «**խալա**», Հայաստանը, լինելով առհասարակ ջրասակավ մի երկիր, ուր հնաղարյան շրջանից կանալիզացիայի հարցը նրա երկրագործական արտադրույթների համար կազմել է մի հիմնական խնդիր, XI դարում ջուրի համար վճարված հարկը այսպես է կոչվում[3], 7. «**կոռ**» և «**բեկար**» տերմինները հանդիսանում են ավատական տնտեսության հատուկ ձրի, պարտադիր ծառայությունները բնորոշելու[4], 8. երկրագործության վնասակար միջատների բնաջնջման համար գյուղացիության վրա պարտավորություն էր դրված տարեկան որոշ չափով այդ վնասակար միջատներից սպանված ներկայացնել. այդ կոչվում է «**նեպակ**»[5], 9. «**բաժ**», մաքս:

Դեռևս լուսաբանության կարոտ են «պաշղխոտ», «թաստակ», «ծուծ», «մրուր» և «շարյատ» հարկի տեսակները[6]: Վերջինս «շարիատ» ձևով հիշատակվում է նաև V դարում «վաշխ», «տոկոս» իմաստներով (հմմտ. **Հ. Աճառյան**, Արմատական բառարան): Հետագայում նրա իմաստը փոփոխություն է կրել, և հայտնի չէ, թե XI դարում ի՞նչ իմաստով է գործածված:

Թոփչյանը (Die Innere Zustände, էջ 35) հայտնում է այն կարծիքը, թե Աբբասյանների ժամանակ՝ VIII դարում, վերև հիշատակված արաբական հարկերի տեսակները գանձվել են նաև Հայաստանից, սակայն շարունակում է. «Հայ իշխանների անվերջ ապստամբությունների և բողոքների պատճառով

---

[1] «… Եւթն հարիւր դրամ ի Դեղձանգետոյ Ղապալէն», «… ինն հարիւր իննսուն (դրամ) ի Կարբին գետերէն և ի նաւերէն», **Կ. Կոստանյանց**, Վիմական տարեգիր, Պետերբուրգ, 1913, էջ 5 և 6. 901 և 903 թվերի արձանագրություն:

[2] «… Եւ 100 բեռն աղ յամենայն ամի ազատ յամենայն չարե», Ibid, էջ 21, 1038 թ. արձանագրութ.:

[3] «… Եւ գ. աւր ջուր ազատ ի խալաէ եւ ի գեղջէ ամենայն հասու», Ibid, էջ 20, 1036 թ. արձանագրութ.:

[4] «… Ազատեալ եմ զՄրենոյ կոռն, որ ի Նախճաւանի էր, զմարդոյ եւ զեզին», Ibid, էջ 10, 992 թ. արձանագր.: «… Եւ այլ բազում սպասաւորս ազատ արարի յարքունական ծանրութենէ եւ ի բեկարէ», Ibid, էջ 4. 901 թվի արձան.: Հ. Աճառյանի Արմատական բառարանը վերջնույն համար ունի, ըստ վրացերենի, բեգարա-պարտադիր ծառայություն, որ գյուղացիք կատարում են կալվածատերի կամ պետության համար, ինչպես հողի կամ պարտեզի մշակություն, խոտ հնձել և այլն:

[5] **Հ. Աճառյան**, Արմատական բառարան:

[6] «Թողեալ եմ զՏեկորոյ զպաշղխոտս…», Վիմական տարեգիր, էջ 22, 1042 թվի արձանագրութ.: «Թողեալ եմ զհարկն բնովիմբ յաւիտենից եւ զթաստակն», Ibid, էջ 13, 14, 21. 1008, 1013, 1038 թվերին. «… Ազատեալ եմ զՄրենոյ հարկն, զծուծ եւ զմրուր…» Ibid, էջ 22,1041 թվին, «…Թողեալ եմ զՏեկորոյ շարյատն», Ibid, էջ 13, 1006 թվին:

IX դարու սկզբից կրկին նրանց տեղ մուքադա՛ա սիստեմը կիրառվեց, այսինքն՝ հայ իշխանները վճարում էին ընդհանուր մի գումար»: Հեղինակը, հավանաբար, նկատի ունի Աշոտ Արծրունու մի նամակը՝ ուղարկված Յուսուֆ Բին Արի Սահդ Մուհամմադ էմիրին, որտեղ ասված է.

«…Արդ դու յարուցեալ գնասցես ի մի քաղաքացդ Հայոց, որպէս օրէն է աշխարհակալաց. եւ մեք տացուք քեզ զհասս հարկացն եւ հաճեսցուք զմիտս քո, և մի յանխնայ ասպատակելով յաւեր դարձուցանես զերկիր իմ» (**Թովմա Արծրունի**, II, 6, էջ 111/12):

Կարելի է առարկել, որ հարկերի միանվագ գումարով գանձումը դեռևս չի նշանակում հարկերի տեսակների վերացումը. այստեղ արդեն պարզ ասված է՝ «զհասս հարկացն»: Այս ուղղությամբ, ինչպես ասացինք, հարկավոր է լուսաբանել հարկերի տերմինները՝ նկատի ունենալով ավատական Հայաստանի արտադրական եղանակը և տվյալ ժամանակներում գոյություն ունեցող արաբական ֆինանսական սիստեմը[1]:

5

Մեզ մնում է պատասխանել այն հարցին, թե ի՞նչ անդրադարձում ունեցավ հարկային այս ձևի քաղաքականությունը երկրի արտադրական եղանակի և արտադրական փոխհարաբերությունների վրա:

Վերև ասացինք, որ դեռևս արաբներից առաջ երկրի արտադրական եղանակը հնարավորություն էր տալիս հարկերը դրամով գանձելու: Արաբների հետևողական հարկային քաղաքականությունը և մեծ չափերով գանձված տուրքերը ստիպեցին գյուղացիության իր արտադրույթները շուկա հանել ավելի մեծ չափով, որպեսզի կարողանա նրանց փոխարժեքով այդ հարկերը վճարել: Գյուղացիությունը սկսում է ժամանակի ընթացքում ներքին շուկայի համար արտադրել: Սպառողական արժեքը տեղի է տալիս փոխանակային արժեքին: Սրա հետևանքը լինում էր այն, որ հետզհետե բնատնտեսությունը սկսում է տեղի տալ ապրանքային փոխանակության:

Գյուղացիության մեկ մասը սկսում է ժամանակի ընթացքում մասնավորապես նախանյութի վերամշակությամբ պարապել: Նախկին շրջանում այս կազմում էր ավելի կողմնակի պարապմունք: Մի կողմից զգալի դարձող սակավահողությունը, մյուս կողմից հողի արտադրույթներով ստացված փոխարժեքի հարկերի վճարման համար անբավարար լինելը գյուղացիության

[1] Պրոֆեսոր Հ. Մանանդյանը Երևանի գիտական ինստիտուտում, հարցին զուտ բանասիրական ուղիով մոտենալով, Մարզպանական Հայաստանի հարկերի մասին կարդացած մի հետաքրքրական զեկուցման մեջ հիշատակեց մի շարք հարկերի տեսակներ: Նմանօրինակ ուսումնասիրություններ կարող էին խոշոր չափով լույս սփռել արաբական շրջանի մասին: Մինչ այդ եղած ենթադրությունները, մեր կարծիքով, վաղաժամ են:

մղում էին **արտադրական աշխատանքի մեջ բաժանում առաջացնելու**: Այս պրոցեսին մեծապես զարկ էին տալիս բարգավաճման ճանապարհի վրա գտնվող ավատական քաղաքները:

Անկասկած, բնատնտեսությունից ապրանքային փոխանակության անցնելը, ինչպես նաև արտադրական աշխատանքի մեջ առաջ եկած մասնագիտականացումը ներկայացնում են տնտեսական պրոգրեսիվ մի երևույթ: Այս տեսակետից արաբների վարած հարկային քաղաքականությունը հանդիսանում է դրական մի գործոն այն չափով, ինչ չափով նա երկրի տնտեսական կյանքում սկսված շարժումը ավելի խորացնում է: Սակայն այս փոխանցումը չէր կատարվում առանց երկունքի:

Նույն գործոնի սոցիալական անդրադարձումը լինում էր բոլորովին այլ՝ բացասական: Ժամանակակից պատմիչի տված տեղեկությունները այս մասին մեր առջև պարզում են սոցիալական այն ծանր դրությունը, որի մեջ գտնվում էր խնդրո առաջիկա ժամանակաշրջանում արտադրող դասը:

Արդյոք առաջ եկած այս փոփոխությունը նո՞ւյն ձևի անդրադարձում ունեցավ առհասարակ արտադրող դասի՝ գյուղացիության վրա:

Այն գյուղերը, որոնք ճանապարհների չգոյության պատճառով հնարավորություն չունեին ներքին շուկայում իրենց երկրագործական արտադրությունները արժեքավորելու, այդ գյուղացիությունը համեմատաբար նվազ չափով էր մտնում երկրի փոփոխված արտադրական եղանակի շրջանակը, և այդ վայրերում շարունակվում էին բնատնտեսության նախկին ձևերը, որոնք հակադրություն էին կազմում դրամական շրջանառության:

Հարցը բոլորովին այլ բնույթ էր ստանում գյուղացիության այն մասի համար, որ հնարավորություն ուներ ավելի սերտ կապ պահպանել ներքին շուկայի հետ: Առաջին ակնարկով այնպես է թվում, որ արտադրական ուժերի զարգացմամբ ստեղծում է սոցիալական ներդաշնակություն: Ոչ երբեք: Եթե այս դեպքում գյուղացին ցանկանում է բնահարկը և ավատատիրոջ համար կատարելիք ծառայությունը դրամով փոխարինել, հողատիրոջ ախորժակը բարձրանում է: Որքան շատ դրամ (ոսկի կամ արծաթ) հնարավոր է վերցնել, աշխատում է այդ անել: Այս երևույթը առաջանում է ոսկեդրամի և արծաթդրամի յուրահատուկ բնույթից: Փոխված արտադրական եղանակի համապատասխան տնտեսական իդեոլոգիա է սկսում զարգանալ:

Գյուղի և քաղաքի միջև կապ ստեղծվելով՝ գյուղացու տնտեսական կարիքները բազմանում են: Մի ժամանակ, երբ նա բնահարկ էր վճարում, նա չուներ այս կարիքները: Աճող կարիքը պահանջում է դրամ՝ նրանց բավարարություն տալու համար: Այսպես՝ գյուղացուց պահանջված դրամի գումարը նրան ծանր է դառնում:

Արտադրող դասից դուրս դրամական հարկերի գանձումը անմիջական ազդեցություն է թողնում մեծ և փոքր ազնվականության վրա: Առաջին հերթին ազնվականության եկամուտները կիսվում էին արտաքին տիրողների

կողմից: Բնատնտեսությունից ապրանքային փոխանակության անցումը առաջացնում էր մի շարք նորանոր պահանջներ, որոնց բավարարման համար փոքր ազնվականության եկամուտները չէին բավարարում, իսկ նա չէր կարողանում իր տնտեսությունը հարմարեցել նոր պահանջներին: Սրանից առաջանում էր շինական դասի ավելի խիստ չափերով շահագործումը: Ապրանքների գների մեջ առաջացած փոփոխությունը, որի մասին վերև խոսեցինք, փոքր ազնվականությունը կախյալ էր դարձնում խոշոր ազնվականությունից:

Ինչ վերաբերում է ազատների դասի հոգևորական հատվածին, սրանք ընդհանուր առմամբ զերծ են լինում հարկերից: Այս հանգամանքը մեծապես նպաստում է այս ժամանակաշրջանում սրանց տնտեսապես և քաղաքականապես ուժեղանալուն:

Առևտրական և վաշխառուական կապիտալի ակտիվացումը, արտադրական աշխատանքում առաջացած մասնագիտականացումը, քաղաքների բարգավաճումը, նախանյութի վերամշակման ասպարեզում առաջ եկած զարգացումը ծնունդ էին տալիս պրոգրեսիվ մի դասի՝ առևտրականների: Մինչդեռ միջնադարյան Եվրոպայում առևտրական կապիտալը, ուղղակի կռվի մտնելով ֆեոդալական կարգերի դեմ, վերածնունդի ազդակն է հանդիսանում: Ավատական Հայաստանի առևտրականները, տնտեսական շահերով սերտորեն կապված լինելով հողատեր ազնվականության հետ, աշխատում էին ավատական կարգերի հատուկ կաշկանդիչ կապանքները միայն թուլացնել: Այսպես՝ մի կողմից ստեղծվում է հակադրություն հին կարգերի պաշտպան հիմնարկության, եկեղեցու և նոր առաջացած այս դասի միջև, մյուս կողմից վաշխառուական կապիտալը խորացնում է քաղաքի և գյուղի միջև հակադրությունը:

Այս կերպ ավատական Հայաստանի հասարակական կյանքում առաջ են գալիս մի շարք հակասություններ: Արդյոք երբևիցե այս կուտակվող հակադրությունները հանգե՞լ են իրենց վերջնական արտահայտության: Ի՞նչ ձևով են նրանք արտահայտվել և ի՞նչ վախճան են ունեցել: Այս հարցերի պատասխանները սերտորեն կապ ունեն տնտեսական այլ բնագավառներում առաջացած փոփոխությունների հետ, որոնք կազմում են մեր աշխատության հետագա գլուխները:

ԱՐԱԲԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԵՎ ԳՅՈՒՂԻ ՄԻՋԵՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ֆեոդալական Հայաստանի քաղաքի և գյուղի միջև ստեղծված հակադրությունը մի բարդ թեմա է: Լիովին ըմբռնում ենք այդ: Դրությունը ավելի բարդանում է, երբ նկատի ենք առնում այն հանգամանքը, որ ֆեոդալական Հայաստանի՝ մեր վերցրած ժամանակաշրջանի մասին բոլորովին բացակայում են մոնոգրաֆիկ ուսումնասիրությունները, և կարևորը, որ դեռևս անցյալի քաղաքների ավերակները սպասում են իրենց պեղումներին: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ մատենագրական աղբյուրներից (հայ թե օտար) մեզ հասած վկայություններում կան բավականաչափ նյութեր, որոնք հնարավորություն են տալիս մեզ երևան հանելու այդ հակադրությունը:

Հայաստանի անցյալի հասարակական կյանքը լուսաբանելու տեսակետից մեր առաջադրած հարցի քննությունը հիմնաքարն է կազմում:

«Բոլոր զարգացած և ապրանքափոխանակությամբ պայմանավորված աշխատանքի բաժանման հիմքը կազմում է քաղաքի և գյուղի (Land) բաժանումը: Կարելի է ասել, որ հասարակության տնտեսական ամբողջ պատմությունը ամփոփվում է այս հակադրության շարժման մեջ»[1]:

Կ. Մարքսը սրանով ոչ միայն քաղաքի և գյուղի միջև ստեղծված հակադրության շարժման մեջ է տեսնում հասարակության ամբողջ տնտեսական պատմությունը, այլ նա միաժամանակ մատնանիշ է անում սրա շուրջ կատարվելիք **ուսումնասիրության մեթոդը**:

Քաղաքի և գյուղի բաժանումը կապվում է անմիջականորեն աշխատանքի բաժանման հետ: Մի բաժանում, որ զարգացել և պայմանավորվել է ապրանքափոխանակությամբ, ուրեմն արտադրական ուժերի զարգացման որոշ աստիճանում:

Այս տեսակետից մեր ուսումնասիրությունը երկու հիմնական հարց պիտի շոշափի.

ա) երևան հանել այն շարժիչ ուժերը, որոնք VII դարու կեսից ֆեոդալական Հայաստանի հասարակական աշխատանքում բաժանում են առաջացնում:

բ) ցույց տալ ստեղծված հակադրության այն չափը, որ գոյություն է ունեցել արաբական շրջանի ֆեոդալական Հայաստանի քաղաքի և գյուղի միջև:

Մեր կարծիքով՝ արաբական շրջանում շարժիչ ուժեր հանդիսանում են՝ ա) բնահարկերի մեծագույն մասի դրամական ձևով գանձումը և բ) ֆեոդալական հողային սեփականությունների շուրջ առաջացած փոփոխությունները:

Սրանից առաջինը մեր կողմից առանձին ուսումնասիրության նյութ է

[1] **K. Marx**, Das Kapital, գլ. 12, IV, Stuttgart, 1921, p. 299:

դարձել և տպագրվել «Պետական համալսարանի գիտական տեղեկագրի» երկրորդ համարում: Այդ ուսումնասիրության հիմնական եզրակացություններից մին եղել է **Ֆեոդալական Հայաստանում արտադրական աշխատանքի մեջ առաջացած բաժանումը**:

Առաջադրված երկրորդ հարցը պարզաբանելու համար մենք կանգ կառնենք խնդրո առարկա ժամանակաշրջանի քաղաքային կյանքի լուսաբանման վրա:

Այս կերպ մեր ուսումնասիրությունը բաժանվում է չորս հիմնական գլուխների՝

I. Արաբական նվաճումի անդրադարձումը ֆեոդալական հողատիրության փոխհարաբերությունների վրա,

II. Քաղաքների բարգավաճումը,

III. Արհեստավորական արտադրությունը ֆեոդալական Հայաստանի ապրանքափոխանակության շրջանում,

IV. Առևտրական և վաշխառուական կապիտալ:

I. ԱՐԱԲԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄԻ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄԸ ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ

Արաբների վարած հարկային քաղաքականության զուգընթաց տարվում էր նաև հետևողական կերպով Հայաստանի հողատեր ֆեոդալների տկարացման քաղաքականություն: Եթե այդ քաղաքականությունը սկզբնական շրջանում ընթանում էր արաբական պետության համար նպաստավոր կերպով, ապա խալիֆաթի տկարացման շրջանում մենք ականատես ենք լինում հողատիրական փոխհարաբերությունների տեսակետից մի այնպիսի երևույթի, որ մի շարք տեսակետներից վերին աստիճանի ուշագրավ է:

Հայտնի է, որ արաբական տիրապետությունից հետո վերստին հանդիպում ենք ֆեոդալական Հայաստանում քաղաքների զարգացման: Ներքին տնտեսական կյանքում առաջացած այս փոփոխությունն ուներ իր խոր պատճառները: Ուստի նախքան ֆեոդալական Հայաստանի քաղաքների մասին խոսելը հարկավոր է երկու հիմնական հարցի պատասխանել:

1. Արաբական նվաճումը ի՞նչ անդրադարձում ունեցավ ֆեոդալական Հայաստանի հողատիրական փոխհարաբերությունների վրա:

2. Առաջացած հողատիրական այս նոր փոխհարաբերությունները ի՞նչ անդրադարձում ունեցան իրենց հերթին քաղաքների զարգացման վրա:

1. Ինչպես ամեն մի տիրողի, նույնպես արաբների հիմնական նպատակն էր կազմում ֆեոդալական Հայաստանը տնտեսապես նվաճել: Այս տեսակետից խոշոր խոչընդոտ հանդիսանում էին բազմաթիվ մեծ ու փոքր

հայ ֆեոդալները: Միապետական արաբ պետությունը չէր կարող երբեք հանդուրժել նման ֆեոդալների գոյությունը, մանավանդ երբ նկատի ունենանք, որ այդ ֆեոդալներից ոմանք արաբական և բյուզանդական աշխարհակալական պայքարների ընթացքում արաբական պետության անհավատարմության մի շարք փաստեր էին տվել:

Տեղական ֆեոդալների տնտեսական ապա և քաղաքական իշխանությունը տկարացնելու ասպարեզում արաբների վարած քաղաքականության մեջ մենք կարողանում ենք երկու հիմնական գիծ մատնանշել:

Ա. Որոշ պատմական վկայություններ թույլ են տալիս մեզ ասելու, որ արաբական պետությունը ձգտում ուներ տեղացի ֆեոդալները փոխարինելու արաբացիներով: Օմարի (634-644) հին սկզբունքը, որով արգելվում էր արաբացիներին գրաված երկրներում հողային սեփականություններ ունենալ, վերանում էր Օտմանի (644-656) ժամանակ: «Իսկական արաբները դարձան առաջին կարգի մեծ հողատերեր»[1]:

Ուրեմն արաբների՝ նախքան Հայաստանը վերջնականապես գրավելը (653/55[2]) Օմարի դրամի օրենքը վերացած է լինում:

Համաձայն Բալատուրի վկայության՝ Հաբիբ իբն Մասլաման Մուավիայի առաջարկով Կարին փոխադրել է 2000 հոգուց բաղկացած մի պահակախումբ և նրանց շնորհել է ավատներ: Հավանաբար սրանք այն հողերն էին, որոնց սեփականատերերը գաղթել էին: Ըստ այդ վկայության՝ այդ հողերը մշակվում էին տեղացիների կողմից, որոնք կոչվում էին «**aje**», և վճարում էին «**charaq**» կոչված տուրքը[3]: 734 թ. փորձ է արվում բանակի մարդկանց հող տալ մշակելու, սակայն տալիս է բացասական արդյունք, և օրենքը վերացվում է[4]:

756 թվին Կարին տեղափոխված արաբացիների մասին Ղևոնդ պատմիչի մոտ կարդում ենք.

«…Եւ կարգեաց (Եզիտ ոստիկանը) նոցա պատրաստութիւն կերակրոց յաշխարհէս Հայոց»[5]:

Այս մասին մի ուշագրավ վկայություն ունենք նաև սուրիացի պատմիչ Դիոնիի կողմից, որը, խոսելով 766/67 թվին սուրիացի գյուղացիության վրա գործ դրված ճնշումների մասին, հայտնում է.

«…Նրանք (գյուղացիները) ոչինչ չունեին աշխատելու համար, որով-

---

[1] **H. Topdschian**, Die lnnere Zustände u. s. w., Halle, 1904, p. 14.

[2] **M. Ghazarian**, Armenien unter d. Araberherrschaft, p. 96.

[3] **Baladuri**, 197, 20 նն:

[4] **Alf. v. Kremer**, Denkschriften d. Wiener Akademie, 1888, p. 325.

[5] **Ղևոնդ**, գլ. ԻԹ, էջ 130, Պետերբուրգ, 1887:

հետև նրանց հողերը արաբացիների կողմից ծախված էին»[1]:

Հողերը ծախելու պատճառ ցույց է տրվում գյուղացիության վրա դրված հարկերը չգանձվելը: Գյուղացիությունը ճարահատյալ գաղթում էր:

Եթե պետական հողերի մասին այս ձևի քաղաքականություն էր տարվում, ուրիշ պատմական վկայություններ թույլ են տալիս մեզ եզրակացնելու, որ արաբական իշխանությունը հովանավորում էր այն արաբներին, որոնք բռնի գրավումներով տեղացի ֆեոդալները քշում էին իրենց սեփականություններից: Այսպես՝ Բերկրիի Գնունիները քշվում էին Ուտմանիկների կողմից[2]: Կամսարականները Արշարունիքից՝ արաբ Ջահապյանների կողմից. սրա հետևանքով է, որ Կամսարականները այդ մասը վաճառում են Աշոտ Մսակերին[3]:

Արաբները դեպի հոգևոր իշխանները վարում էին մեղմ քաղաքականություն: Սակայն, մի շարք պատմական փաստաթղթեր ցույց են տալիս, որ արաբական տիրապետության շրջանում տնտեսապես ուժեղացող հայ եկեղեցին[4] ևս զերծ չէր այդ բռնագրավումներից:

Ստեփանոս Օրբելյան պատմիչի IX և X դարերից մեզ հասցրած մի քանի փաստաթղթեր, որոնք վերաբերում են եկեղեցիին եղած նվիրատվություններին, պարունակում են հետևյալ հետաքրքիր վերջաբանները.

«…Եւ եթէ տաճիկ աւագութիւն փոխի և յափշտակել ջանայ, հազարէն հազար **նալաթ** ի վերայ նորա գայ, և յիւր **փեղամբարէն ապիզար** լինի»:

Կամ՝

«…Եվ թէ ի տաճիկ աւագութիւն հասանի և յափշտակել ջանայ յաստուծոյ և յիւր **փեղամբարէն ապիզար** եղիցի, և բիւր 1.000 **նալաթ** եղիցի…»:

Եվ կամ՝

«…Եվ թե տաճիկ աւագ լինի և յափշտակ՝ յաստուծոյ և յիւր **փեղամբարէն** որոշած լինի և յամենայն սրբոց նզովեալ և 100.000 **նալաթ**»[5]:

Այս փաստաթղթերը կասկած չեն թողնում, որ տիրողների կողմից հողային բռնագրավումները սովորական մի երևույթ են եղել: Եթե որոշ արտոնություններ վայելող հոգևոր իշխանների հանդեպ բռնագրավումներ լինում էին, ապա շատ հավանական է, որ նրանք ավելի մեծ համեմատություններով պիտի արտահայտվեին աշխարհիկ իշխանների մասին:

---

[1] Chronique de Denys de Tel Mahrè, IV-ème partie 1888. Trad fr. Par I. B. Chabot, p. 74/75, Paris, 1895.

[2] **Թովմա Արծրունի**, III, 28, էջ 247, հմմտ. նաև **Jo. Marquart**, Streifzüge, էջ 404:

[3] **Վարդան**, էջ 76, հմմտ. նաև **Jo. Marquart**, Streifzüge, էջ 403/5, 451/54:

[4] Հիշյալ դարերում եկեղեցիին խոշոր սեփականատեր դառնալու մասին ունենք ուշագրավ փաստաթղթեր Ստեփանոս Օրբելյան պատմիչի մոտ: Սյունիքում եկեղեցական հողային սեփականությունը երևան հանելու տեսակետից հետաքրքիր, մոնոգրաֆիկ ուսումնասիրության նյութ կարող են լինել հիշյալ պատմիչի մեզ հասցրած փաստաթղթերը:

[5] **Ստեփանոս Օրբելյան**, գլ. Խ, էջ 265, գլ. ԾԱ, էջ 13, գլ. ԾԶ, էջ 47, Փարիզ, 1859, մաս I և II:

Բանակի մարդկանց ավատներ տալու, ինչպես և հողային բռնագրավումների կողքին պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ մի շարք քաղաքներ, սկսած VII դարուց, դառնում են արաբների բնակատեղին, այսպես՝ Ամիդը, Մանազկերտը, Բերկրին, Արզնը, Դվինը, Դատվանը, Նախիջևանը և Կարինը[1]: Հետագա դարերում այս քաղաքներում առաջանում են խոշոր հողատերեր, որոնք դառնում են որոշ քաղաքական ուժ: Անշուշտ, հետագա դարերի այդ արտահայտությունը արդյունք էր աստիճանական այն պրոցեսին, որ կատարվում էր այդ քաղաքներում հաստատվող եկվորների կողմից:

Մատնանշված այս երեք հիմնական մոմենտները, անտարակույս, խոշոր փոփոխություններ առաջացնում էին հողային սեփականության փոխհարաբերություններում: Սակայն, սրանք դեռևս անզոր էին արաբական պետության առաջադրած նվաճումը լրիվ իրագործելու:

Բ. Տեղացի ֆեոդալների տնտեսական և քաղաքական իշխանությունը տկարացնելու տեսակետից բացի՝ այն, որ միայն 15.000 հոգինոց բանակ ունենալու իրավունք էր տրվում, արաբական պետությունը շարունակում էր այն հալածանքները, որոնք տեղի էին ունեցել նախորդ դարերում: Այս տեսակետից բավական է հիշատակել միայն Աբդուլ Մելիք խալիֆի օրով Միջագետքի, Հայաստանի և Ատրպատականի էմիր Մուհամմեդ բին Մերվանի՝ Նախիջևանում և Խրամում հայ ավատապետների համար կազմակերպված ջարդը VIII դարու սկզբում[2]: Նույն դարու վերջին կեսին տեղի էր ունենում Բագրևանդի ճակատամարտը, որը ճակատագրական նշանակություն ունեցավ այնքան ուժեղ Մամիկոնյան նախարարության համար: Այդ ճակատամարտից հետո անցյալ հասարակական կյանքում խոշոր դեր կատարող Մամիկոնյան տոհմը չքանում էր հրապարակից: Նրանց կալվածները բաժանվում էին նախարարական տուների միջև, որոնք խալիֆաթի վստահությունն էին վայելում՝ Բագրատունիները և Արծրունիները: Այդ բաժանման մեջ անմասն չէին մնում նաև արաբ ֆեոդալներ[3]:

Բացի հալածանքներից՝ արաբացիները կիրառում էին նաև տեղացի ֆեոդալները իրար հետ կռվեցնելու և այս կերպ նրանց տկարացնելու քաղաքականությունը՝ պետական պաշտոններ այլազան նախարարությունների հանձնելով կամ միաժամանակ նույն պաշտոնը երկու տարբեր նախարարական տուների տալով: Այս կերպ նրանց միջև ստեղծվում էր մրցակցություն, որ հաճախ վերջանում էր արյունահեղ կռիվներով:

Թե՛ առաջին և թե՛ երկրորդ պարագաներում ամենից ավելի տուժողնե-

---

[1] Արաբական գաղութների մասին հմմտ. **Թոփչյան**, Die lnnere Zustände u. s. w., էջ 14-22:

[2] **Ղևոնդ**, գլ. Զ, էջ 56. **Marquart**, Streifzüge, էջ 448:

[3] **Ղևոնդ**, գլ. Զ, էջ 56. **Marquart**, Streifzüge, էջ 37, 403 նև, 452 նև, նույնպես **Ghazarian**, Armenien unter d Araberherrschaft, էջ 49:

ը լինում էին ազնվականները, որոնք ուժեղ ֆեոդալների մոտ պաշտպանություն էին որոնում և մտնում նրանց ծառայության մեջ և դառնում վասալներ: Ժամանակի ընթացքում նրանց հողերը կլանվում էին մեծերի կողմից: Այս տեսակետից նվազ դեր չէր կատարում նաև դրամական հարկային քաղաքականությունը, որի մասին խոսել ենք վերև մեր մատնանշած ուսումնասիրության մեջ և ցույց տվել, թե ինչպես դրամական այդ հարկերը քայքայման էին հասցնում փոքր ազնվականությունը: Հաճախ տուրքերի պատճառով նրանք ստիպված էին լինում վաճառել իրենց սեփականությունը:

Արաբների՝ Հայաստանը տնտեսապես նվաճելու այս հետևողական քաղաքականությունը ստանում էր IX դարում բոլորովին այլ բովանդակություն, երբ բազմաթիվ ֆեոդալները վերանում կամ վասալ դառնում էին, և ստեղծվում էին փոքրաթիվ, սակայն տնտեսապես վերին աստիճանի ուժեղացած նախարարական տուներ: Այդ ուժեղ ֆեոդալները, օգտվելով խալիֆաթի տկարացումից և արաբական պետության սահմաններում ծագած ապստամբություններից, կարողանում էին իրենց տնտեսական զորությամբ քաղաքական իշխանություն ձեռք բերել: Հ. Դաղբաշյանը իրավացի է, երբ գրում է.

«Բաբեկը մեծագույն ազդակն է IX դարում հայ մասնակի իշխաների ուժեղացման համար. քսան տարի շարունակ իր հաղթություններով ան խալիֆաթը զբաղեցրեց, նրանց ազդեցությունը Հայաստանի վրա բոլորովին թուլացրեց, և մինչ այդ հայ մասնակի իշխաններ ժամանակ շահեցան տնտեսական և զինվորական տեսակետից ամրանալու»[1]:

Թեև մի կողմից այնքան նշանավոր նախարարական տուներ, ինչպիսիք Մամիկոնյանները, Կամսարականները, Սահառունիները, Ռշտունիները, Գնունիները և ուրիշներ, որոնք նախորդ դարերին խոշոր հասարակական ազդեցություն ունեին, ժամանակի ընթացքում անհետացան կամ դադրեցան որևէ մի դեր խաղալ Հայաստանի հասարակական կյանքում[2], մյուս կողմից մի քանի իշխանական տուներ, ինչպիսիք՝ Բագրատունիները, Արծրունիները և Սյունիք, իրենց հողամասերը մեծ չափով մեծացրին:

Հայաստանի ֆեոդալների հողային սեփականությունների մեջ առաջացած այս փոփոխությունների մասին Թոփչյանի կատարած ուսումնասիրությունից գալիս ենք հետևյալ եզրակացության:

IX դարի վերջին քառորդում Հայաստանում որպես խոշոր հողատերեր հանդես են գալիս՝ 1. Բագրատունի, 2. Արծրունի, 3. Սյունիքի, 4. Անձևացյաց, 5. Մոկքի, 6. Զանարքի, 7. Խաչենի, 8. Ուտիքի, 9. Գուգարքի, 10. Գարդմանի իշխանները (6-10 հիշվածները գտնվում են Աղվանից երկրում):

---

[1] **Daghbaschian**, Gründung des Bagratiden Reiches u. s. w. p. 7.

[2] **H. Topdschian**, Polit. u. Kirchengesch. Atmen. Mit. d. Sem. f. orient. Sprachen jahrg. III, 2 Abt., էջ 139, Berlin, 1905.

Աշոտ Ի-ի ժամանակ Բագրատունիները տեր էին օրինակ՝ Բագարանի, Շիրակի (մայրաքաղաք Շիրակավան), Վանանդի (մայրաքաղաք Կարս), Անիի, Տայքի մի մասին և Արագածոտնի լեռնամասին մինչև Երևան քաղաքը: Նոր գրավումներով այս երկրամասերն ավելի ընդարձակվում են[1]: Արծրունիները, որոնք նախապես Աղբակում կալվածներ ունեին, վերև հիշած ժամանակաշրջանում տեր էին Վասպուրականի և կարողացան նոր նվաճումներով, մանավանդ Գագիկ Ի-ի օրով իրենց կալվածները նմանապես ընդարձակել (904-909): Հետևանքը լինում է այն, որ Բագրատունիների և Արծրունիների միջև իշխանության հարցի շուրջ պայքար է առաջանում: Պայքարը մղվում էր նախ Խոյ քաղաքի համար, ապա՝ Բերկրիի, Մանազկերտի, Խլաթի և Բաղեշի մահմեդականների վրա գերիշխանության հարցի շուրջ[2]:

Սյունիքի երկու իշխանական տուները իշխում էին ամբողջ Սյունիքին:

Այս երեք իշխանական տուները այն ժամանակ ամենից ուժեղն էին: Որովհետև Մոկաց և Անձևացյաց իշխանական տուները՝ գտնվում էին Արծրունյաց ազդեցության տակ և վերև հիշած 6-10 իշխանական տուները Բագրատունիների ազդեցության տակ[3]: Աղվանից իշխաններին առավելապես վտանգ էր սպառնում Ատրպատականի մահմեդականների կողմից, ուստի նրանք հենվում էին Բագրատունիներին:

Հոգևոր իշխանների կալվածների մասին բավական տեղեկություններ ունենք Ստ. Օրբելյանի՝ մեզ հասցրած փաստաթղթերում և «Վիմական տարեգրի» արձանագրություններում, որոնցից որոշակի երևում է, որ տնտեսապես ուժեղացած աշխարհիկ իշխանները «իրենց հոգևոր փրկության» համար առատորեն հողային նվիրատվություններ են անում եկեղեցիներին և վանքերին: Այդ նվիրատվությունները լինում են երբեմն «հայրենատեր» գյուղացիության հաշվույն[4]:

Այն հանգամանքը, որ արաբական պետությունը, առհասարակ, դեպի հոգևորականները և նրանց սեփականությունները համեմատաբար զիջող քաղաքականություն է վարել, մեզ թույլ է տալիս եզրակացնելու, որ այս ժամանակաշրջանում նրանք հանդիսանում են առնվազն նախորդ դարերի խոշոր հողատերերը:

Մի քանի նախարարական տուների ձեռքում գավառների կենտրոնացումը հոգևոր իշխանների համար ստեղծում էր նպաստավոր հանգամանք:

Մեր դրած առաջին հարցի քննությունը մեզ բերավ հետևյալ եզրակացություններին:

ա) Ֆեոդալական Հայաստանում առաջացել էին արաբ հողատերեր:

---

[1] Ibid., էջ 135/36, 195.

[2] **J. Markwart**, Südarmeniwn u. die Tigrisquellen, էջ 301/2 note 311:

[3] **H. Topdschian**, Polit. u. Kirchengesch.ichte u. s. w., p. 142/152, 156/57, 198/200.

[4] **Ստեփանոս Օրբելյան**, գլ. ԼԶ, էջ 209, գլ. ԼԷ, էջ 218 շ., գլ. ԼԹ, էջ 253 շ., գլ. Խ, էջ 259:

Իբն Հաուքալի կողմից արտաքին Ermenia անվանված մասում գոյություն ունեցող քաղաքներում, մասնավորաբար հաստատվում են արաբներ, հավանաբար առևտրականներ: Այս մասին ունենք Դընիի մի վկայությունը՝ 769/770 թ. վերաբերող, որից երևում է, որ այդ քաղաքներում Մուսուլից գաղթած ժողովուրդը խոշոր հարստություններ տեր է դարձել[1]:

բ) Ներքին ֆեոդալներից մի քանիսը կարողացել էին կլորացնել իրենց տերիտորիաները և վասալ դարձնել մանր ֆեոդալները: Նրանց տնտեսական այս ուժեղացումը հետագայում հնարավորություն է տալիս «թագավորիկ» դառնալ: Այդ ֆեոդալները ապրում են իրենց մայրաքաղաքի ապարանքներում, որտեղ հավաքվել էին նաև վասալ իշխանիկները: Փոքրաթիվ, սակայն տնտեսապես ուժեղ այդ աշխարհիկ ֆեոդալներն իրենց քաղաքական իշխանության համար կարիք ունեին հոգևոր իշխաններին: Եթե Ամենայն հայոց կաթողիկոսը Բագրատունիներին էր հովանավորում, Արծրունի և Սյունյաց իշխանները ևս ունեին իրենց եպիսկոպոսները[2]: Այդ հոգևոր իշխաններն իրենց կատարած ծառայությունների համար լիուլի վարձատրվում էին:

2) Ի՞նչ անդրադարձում ունեցավ հողատիրական այս նոր փոխհարաբերությունը ֆեոդալական Հայաստանի քաղաքների զարգացման վրա:

Այս անդրադարձումը գլխավորաբար տեղի էր ունենում երկու ուղղությամբ:

ա) Փոքրաթիվ, սակայն տնտեսական ուժեղացած այդ խոշոր ֆեոդալները բնակություն էին հաստատում գոյություն ունեցող և զարգացման պրոցեսում գտնվող քաղաքներում, այդպես հնարավորություն էր ստեղծվում այդ վայրերում խոշոր ֆեոդալին ենթակա գավառներից հարկի ձևով գանձվածները կուտակելու: Բացի այս՝ այդ խոշոր ֆեոդալի շուրջ ավելի մեծ թվով անաշխատ սպառողներ էին հավաքվում: Թե՛ մին, թե՛ մյուսը հարմարագույն պայմաններ էին ստեղծում դրամական հարկերի պառճառով հասարակական աշխատանքի մեջ սկսած բաժանումը խորացնելու:

Պետք է նկատի ունեալ նաև մի շարք հանգամանքներ ևս, որոնց կոմպլեքսի մեջ և նրանց միջոցով միաժամանակ կատարվում է այդ փոխազդեցությունը:

Մեթոդական տեսակետից կատարած մեր բաժանումներում տնտեսական ազդակները գործնական կյանքում խաչաձևում, ներգործում են միմյանց վրա:

Բացի արտաքին հարկերի մեծագույն մասի դրամական ձև ստանալուց՝ պետք է նկատի ունենալ զարգացման պրոցեսում գտնվող քաղաքները, և, որ կարևոր է այդ քաղաքներից անցնող արևելքի և արևմուտքի առևտրական

[1] Chronique de Denys de Tell-Mahré, tr. fr. I. B. Chabot, p. 92.

[2] **H. Topdschian**, Polit. u. Kirchengeschichte u. s. w., p. 159.

ճանապարհների ցանցը: Իսկ առևտրական կապիտալի կողքին նրա անբաժան ընկերակից վաշխառուական կապիտալը, որի շահագործումները, ինչպես կտեսնենք մեր ուսումնասիրության վերջում, օրինականացվում են:

Տնտեսական այս խաչաձևող ազդակների մեջ առայժմ անհրաժեշտ է ընդգծել այն, որ ապրանքափոխանակության այս ժամանակաշրջանում թե՛ հոգևոր և թե՛ աշխարհիկ իշխանների տնտեսական պահանջները ավելանում և բազմանում են՝ այս կերպ անդրադառնալով իր հերթին առևտրական կապիտալի աշխուժացման վրա:

Այս երևույթը անդրադառնում էր այն բանի վրա, որ նախկին շրջաններում, երբ բնահարկը գանձվում էր ֆեոդալական իշխանների սպառողական կարիքների համար առավելապես, այժմ կուտակված այդ բարիքները դառնում էին ապրանք: Սրանով մի կողմից բնահարկի գանձման սահմանները վերանում էին, և մյուս կողմից հարկահավաքման պահանջը դառնում էր անսանձ:

Մեր կարծիքով՝ այս մասին է Արիստակես Լաստիվերտցիի ակնարկությունը, որ անում է ժամանակի առևտրական կենտրոններից Արծնի մասին (1049 թ.).

«… Վաշխից և տոկոսեաց օրէնք եդան, և **ցորենոյ բազմապատկութիւն**, որով երկիր պղծի…»[1]:

Առաջին պարբերության մասին մենք ստորև խոսելու ենք: Այստեղ հետաքրքրականը «ցորենոյ բազմապատկութիւն» դարձվածքն է, որ անկասկած արտադրող դասից գանձվող բնահարկն է ակնարկում: Պատմիչը իր այս տողերում մեզ տալիս է զարգացման այն պրոցեսը, որով ընթանում էին այս քաղաքները:

Որ այդ կուտակվող ցորենը ապրանք էր դառնում, այդ հաստատվում է արաբ պատմիչ Տաբարիի վկայությամբ, որի համաձայն՝ Հայաստանից դեպի Բաղդադ հացահատիկ արտածվելիս է եղել[2]:

Արդյո՞ք իշխանական դասը իր տնտեսական կարիքները բավարարելու համար միայն բնահարկ էր գանձում, թե՞ հարկի որոշ տեսակներ դրամական էին վերածվել: Այս մասին ունենք շահեկան վկայություններ Ստեփանոս Օրբելյանի փաստաթղթերում և «Վիմական տարեգրի» արձանագրություններում: Երկու վկայություններ ցույց են տալիս, որ իրապես ներքին իշխանների կողմից գանձվել են որոշ դրամական հարկեր:

Այսպես՝ Ստեփանոս Օրբելյանի մոտ կարդում ենք 903 թ. հայոց սպարապետ Շապուհ Բագրատունիի թողած մի փաստաթղթում.

«…Եւ ետու հինգ գեղոց սահման՝ Կոթաքարն, Աղաբոյ վանսն, Շաւառ-

---

[1] **Արիստակես Լաստիվերտցի**, գլ. ԺԲ, էջ 53/55, Վենետիկ, 1844:

[2] **Տաբարի**, III, 272, 275, տե՛ս **Ghazarian**, Armenien unter der Arberherrschaft, էջ 68:

նահողն, Գետամէջն, Կթանոցն, Գետավանաց ծովն, 260 դրամ ի Կոթաքարէն, 530 ի Բրտենեացն, 660 յԱղաբոյ Վանացն ծովէ, 990 ի Կարբին գետերէն և ի նաւերէն:»[1]

901 թ. Մաքինացոց վանքին եղած նվիրատվության մեջ կարդում ենք.

«…Ես՝ Սուփան, Սյունյաց իշխան…, ետու որս ձկանց… և եւթն հարիւր դրամ ի Դեղձանգետոյ դապալէն, երկու հարիւր դրամ ի Կաթկայ, երեք հարիւր յիսուն յԱնմեռէն, որ լինի ՌՄԾ դրամ, և ետու հինգ կուղպակ յԱնի…»[2]:

Ստեփանոս Օրբելյանի պատմության վերջում բերված «Սիւնեաց երկոտասան գաւառաց հարկ եկեղեցւոյ ըստ հին սահմանին» ցուցակում գյուղերի առջև դրված թվանշանների մասին Կ. Շահնազարյանցը (հրատարակիչը) հետևյալ ծանոթությունն է տալիս մեզ.

«Արաբացի թիւքն ցուցանեն զորքանութիւն մարզանից ցորենոյ զոր շէն իւրաքանչիւր իբր գաւազանապտուղ, և նոյնքան դահեկան (փանահապատ) որ է կէս դռան իբր աթոռահարկ, տայ ամի ամի Տաթևայ վանիցն»[3]:

Համաձայն այդ ցուցակի՝ 682 գյուղեր 1304 թ. առաջ վանքին հարկատու են եղել: Շահնազարյանցը, ինչպես տեսնում ենք, չի տալիս մեզ, թե ի՛նչ հիման վրա գավազանապտուղը բնահարկով էր վճարվում և աթոռահարկը՝ դրամահարկով:

Բրոսեն էլ ընդունում է թե՛ բնահարկ և թե՛ դրամահարկ և հաշվում է 189.870 բեռ ցորեն և 1012 ռ. 12 կոպ.[4]: Ղևոնդ Ալիշանը ընդունում է միայն բնահարկ[5]:

Եթե թաթարական շրջանին վերաբերող այս վկայության մեջ դրամահարկի գոյությունը պարզաբանվի, կարող է այս վկայությունը մեծ չափով լույս սփռել նաև անցյալ դարերի վրա:

Մի կողմից արտաքին իշխողների վճարված հարկերը, մյուս կողմից տեղացի աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների գանձած հարկերը գյուղացիությունը մատնում էին ծանր կացության: Ան ստիպված պիտի լիներ, բացի հողամշակությունից, ապրուստի այլ միջոցներ որոնել: Դրամական հարկերի ներմուծող հասարակական աշխատանքում սկսած բաժանումը այս վերջնի պատճառով էլ ավելի խորանում էր:

Ապրանքափոխանակությամբ ֆեոդալների տնտեսական կարիքնե-

---

[1] **Ստեփանոս Օրբելյան**, I, գլ. ԼԷ, էջ 226/27: Հմմտ. նաև **Կ. Կոստանյանց**, Վիմական տարեգիր, էջ 6:

[2] **Կ. Կոստանյանց**, Վիմական տարեգիր, էջ 5. **Ստեփանոս Օրբելյան**, I, գլ. ԼԷ, էջ 223/24. Այստեղ շահեկան է այն հիշատակությունը, որ Սուփանը՝ Սյունյաց իշխան, Անիում կուղպակներ է ունեցել:

[3] **Ստեփանոս Օրբելյան**, II, գլ. ՀԴ, էջ 259, ծանոթ. 190:

[4] **Brosset**, Histoire de Siunie, I, ch 74, p. 289, note 4.

[5] **Ղևոնդ Ալիշան**, Սիսական, էջ 22/23:

ի ավելացումը և բազմազան դառնալը, եթե արտադրող դասի վրա այս անդրադարձումն էր ունենում, ապա հողամասերի կենտրոնացումը փոքրաթիվ ֆեոդալների ձեռքում մի այլ ուղղությամբ գալիս էր շահագործման այս պրոցեսը խորացնելու:

Մենք ակնարկում ենք վարչական այն փոփոխության, որին վերստին հանդիպում ենք IX դարում:

բ) Փոքրաթիվ նախարարական տուների միջև հողամասերի կենտրոնացումը առաջին հերթին առաջացրել է այդ հողամասերի կառավարման մեջ վարչական փոփոխություն: Խոշոր ֆեոդալը, որ գտնվում էր քաղաքում, ի վիճակի չէր անձամբ հսկողությունը կատարելու և հարկերը հավաքելու: Այս մասին ուշագրավ վկայություններ ունենք Թովմա Արծրունիի մոտ, որոնք վերաբերում են Արծրունիների հողամասերին.

«…Բայց զերկրորդ մասն Անձաւացեաց հանդերձ Նորաբերդ ամրոցաւն Դերանիկն նուաճեալ ընդ իւր գործակալօք, և զՄարդաստան գաւառ զբուն բաժին տուեալ ցԳուրգէն, և նորա զիւր գործակալս թողեալ անդր»[1]:

Եւ կամ՝

«…Բայց զաշխարհն Յիսէ որդին Շեհայ բռնազբօսեալ յինքն գրաւեաց և կացոյց ի վերա նոցա զիւր գործավարս»[2]:

«…Եւ զտուն և զստացուածս հանեալ ի նմանէ (Հասանից) և կացոյց աշխարհին զիւր գործակալս»[3]:

Եւ կամ՝

«… Տեղի տայր (Գագիկ) բովանդակ գաւառապետաց զօրագլխաց…»[4]:

Իսկ Սյունիքի մասին Ստեփանոս Օրբելյանի մոտ կարդում ենք.

«Ժողովեալ ժամանեցին և ամենայն ազատք և գործակալք Սիսական աշխարհիս»[5]:

Այս վկայություններում հիշատակված «գործակալ», «գործավար», «գավառապետ» բառերը ցույց են տալիս հողամասերի ընդարձակումով դրանք կառավարելու համար ստեղծված վարչական փոփոխությունը[6]:

Այս կերպ նախկին մանր ֆեոդալներին փոխարինում էին վարչական

---

[1] **Թովմա Արծրունի**, III, գլ. ԺԵ, էջ 209:

[2] Նույն տեղում, III, գլ. Ի, էջ 221:

[3] Նույն տեղում, III, գլ. Ի, էջ 225:

[4] Նույն տեղում, III, գլ. Ի, էջ 228:

[5] **Ստեփանոս Օրբելյան**, II, գլ. ԾԸ, էջ 57/58:

[6] Այս մասին Թոփչյանը նկատում է հետևյալը (Dic lnnere Zustände, էջ 25/26). «IX դարի երկրորդ կիսուն, առաջին անգամը լինելով, սկսան խոշոր հողատերերը (հայ), արաբական օրինակին հետևելով՝ մի պաշտոնություն կազմել: Այն նոր հողամասերը, որ անոնք գրավում էին, բաժանում էին գավառների և նշանակում վարչական պաշտոնյաներ, կուսակալներ (գավառակալ)»:

պաշտոնյաներ: Եթե այդ նախկին մանր ֆեոդալների շահագործումը առավել կամ նվազ չափով նահապետական էր, որովհետև նրա հպատակները ֆեոդալի իշխանության տնականացման միջոց էին ծառայում, նոր վարչական պաշտոնյաներին այս վերջին մոմենտը ոչ մի շահագրգռություն չէր ներկայացնում: Այդ պաշտոնյաներից նրանք, որոնց հանձնված էր հարկահավաքման պաշտոնը, կատարում էին այդ՝ առանց որևէ բան նկատի առնելու:

Բացի այն, որ այս կերպ արտադրող դասը ստիպված էր լինում ձրիակերների մի նոր խումբ ևս կերակրելու, ավելանում էին սրա վրա այդ պաշտոնյաների բազմաթիվ կամայականությունները, որոնք, անկասկած, հաճախ ավելի ծանր էին լինում, քան սահմանված հարկերի գանձումը:

Այս ցավոտ հարցն է շոշափում Ներսես Շնորհալին իր «Ընդհանրական թղթում», երբ նա խոսքը ուղղում է իր ժամանակի իշխաններին.

«Եւ արդ՝ առաջին զայս պատուիրան աւանդեմք ձեզ, մի՛ անիրաւաբար վարիք առ հնազանդեալսդ ծանր և դժուարակիր հարկադրությամբ՝ զոր ոչ կարեն բառնալ:

…Մի՛ չար և անիրաւ գործակալս և գաւառապետս կացուցանէք ի վերայ աշխարհի ձերոյ…, այլ զարդարամիտս և զարդարադատս ընտրեցէք ունել ի վերայ մարդկան զգործակալութիւն, զի մի՛ զարքունական սահմանեալ իրաւունսն վաստակաւորացն՝ թողցեն վասն սակաւ կաշառացն զբազումն, և կամ ինքեանք գողասցեն. և մի՛ առաւել քան զիրամայեալսն նեղեսցեն զնոսա և առցեն…»[1]:

Այս կերպ ոչ միայն ապրանքափոխանակությամբ ստեղծված նոր փոխհարաբերություններում արտադրող դասի շահագործումը ավելանում էր, այլ հողամասերի կենտրոնացումով առաջացած այս փոփոխությունը խորացնում էր շահագործման պրոցեսը:

Եթե այս շահագործումը մի կողմից հանդիսանում էր հասարակական աշխատանքում առաջացած բաժանումը խորացնող ազդակ, մյուս կողմից հանդիսանում էր քաղաքներում ապրող ֆեոդալական դասի ստեղծած հակադրությունը քաղաքի և գյուղի միջև:

Այս շահագործումով պայմանավորվում էր մի այլ ավելի քայքայիչ շահագործում, որը կատարվում էր քաղաքների վաշխառուական կապիտալի ներկայացուցիչների կողմից:

Այժմ հարկավոր է քննել, թե ի՞նչ էին ներկայացնում իրանցից ֆեոդալական Հայաստանի այդ քաղաքները:

[1] **Ներսես Շնորհալի**, Ընդհանրական թուղթ, Վենետիկ, 1871, էջ 69:

II. ՔԱՂԱՔՆԵՐԻ ԲԱՐԳԱՎԱՃՈՒՄԸ

Արաբների դրամական հարկային քաղաքականությունը, հողատիրական նոր փոխհարաբերությունները, ինչպես տեսանք, մի շարք տեսակետներից սաստկացնում էին արտադրող դասի կեղեքումները:

Այս դրության անմիջական հետևանքը լինում էր այն, որ արտադրական աշխատանքում բաժանում էր առաջանում, և վերջինս, խորացման պրոցեսով ընթանալով, առաջ էր բերում արտադրական նոր հարաբերություններ, որոնց անմիջական արտահայտությունը մենք տեսնում ենք տվյալ ժամանակաշրջանում քաղաքների բարգավաճման մեջ:

Մեր այս դիտողությունը պիտի լիներ անկատար, եթե մենք նկատի չառնեինք մի շարք ուրիշ հանգամանքներ ևս, որոնք գալիս էին ներքին այս շարժումը ավելի խորացնելու և կերպարանավորելու:

ա) Արաբական տիրապետության շնորհիվ Առաջավոր Ասիայում ստեղծվել էր քաղաքական մի ամբողջական երկրամաս: Մանր ֆեոդալական սահմանները և նրանց հարուցած դժվարությունները, ընդհանրապես և մեծ մասամբ, վերացել էին: Մի պարագա, որ վերին աստիճանի նպաստավոր էր մի երկրի համար, որտեղ ապրանքափոխանակություն էր կատարվում:

բ) Ֆեոդալական Հայաստանում տիրապետող պետության բանակները հաստատվում էին այն վայրերում, որտեղ բերդեր գոյություն ունեին, և որոնց պաշտպանությունը զինվորական տեսակետից անհրաժեշտություն էր ներկայացնում: Վերև մենք հիշատակեցինք արդեն Կարինի մասին: Ֆեոդալական Հայաստանի միջնաշխարհում երկրորդ հիմնական վայրը հանդիսանում էր Դվինը: Այդ զինվորական պաշտպանությունը անհրաժեշտ էր ամբողջ դարերի ընթացքում, քանի որ Բյուզանդիոնի և Արաբիայի միջև Առաջավոր Ասիայի շուրջ հակամարտությունները շարունակվում էին: Այդ բերդաքաղաքներում բանակների հաստատումը տնտեսական տեսակետից նշանակում էր այն, որ անաշխատ սպառողների քանակը ավելանում էր և ստեղծվում էր արտադրող դասի (երկրագործ թե արհեստավոր) արտադրույթների շուկա:

Բացի բանակից, ինչպես տեսանք, Հայաստանի հարավային մասի մի շարք քաղաքներում հաստատվում էին արաբացիներ, որոնք անմիջական հարաբերություններ պահպանում էին Հայաստանից դուրս: Մի պարագա, որ կարևոր է նկատի առնել ապրանքափոխանակության աշխուժացման տեսակետից:

գ) Գլխավոր ազդակ հանդիսանում էր և այն, որ սույն ժամանակաշրջանի երկու գլխավոր քաղաքների՝ Բյուզանդիոնի և Բաղդադի միջև Հայաստանի վրայով ստեղծվում էր տարանցիկ առևտուր, և Միջերկրական ափերից քշվում էին հույն առևտրականները:

Այս կերպ VII դարու կեսից սկսած՝ արդեն իսկ գոյություն ունեցող քաղաքները մեծ թափով զարգանում էին, և կամ ժամանակի ընթացքում ստեղծվում և բարգավաճում էին ուրիշ քաղաքներ:

X դարում ֆեոդալական Հայաստանը ներկայացնում է իրենից քաղաքների իշխանության պատկերը. այնպես այդ տեղի էր ունեցել Հին Հունաստանում և միջին դարում Իտալիայում:

Այս դարում մենք հաշվում ենք ֆեոդալական Հայաստանում յոթ թագավորություն՝ իրենց մայրաքաղաքներով:

1. 885 թ. հիմնվեց Մեծ Հայքի Բագրատունիների հարստությունը, որի մայրաքաղաքը եղավ Անին 954 թվականին[1]: Սմբատ I-ի օրով երկիրը վերածվում է գաճաճ Հայաստանի:

2. 909 թվին Արծրունիները դառնում են ինքնավար՝ Վան մայրաքաղաքով[2]:

3. 914 թվից Սյունիքի իշխանությունը գրեթե բոլորովին ինքնավար էր: Սյունիքի Սմբատը (մեռած 998 թվին), X դարում երկրորդ կիսուն Խորասանի սուլթանից հրաման առնելով, թագավոր է հռչակում իրան[3]:

4. Նույնպես Տայքը, որ Մամիկոնյանների ժառանգական գավառն էր, անցավ Բագրատունիների տան վրացական ճյուղին՝ որպես ինքնավար սեփականություն:

5. Շապուհի որդին և Աշոտ II Երկաթի եղբայրը՝ Աշոտ, Դվինի թագավոր էր անվանվում շնորհիվ Յուսուֆ էմիրին 921 թվից: Առանց հաջորդի՝ մեռած է 936 թվին:

6. 962 թվին Վանանդի գավառը Կարս մայրաքաղաքով բաժանվում էր Բագրատունիների հարստությունից: Այս թվականից Բագրատունիների հարստությունը կոչվում է «Անիի թագավորություն»:

7. Ավելի ուշ՝ 982 թվին, Բագրատունիների մեկ ուրիշ ճյուղը Գուգարաց աշխարհում՝ Վրաստանի և Աղվանից սահմանի մոտ, հիմնում է թագավորություն, որի վերջին մայրաքաղաքը լինում է Լոռին[4]:

---

[1] «Առաջին Բագրատունիները ընդհանուր մայրաքաղաք չունեին…: Միայն ավելի հետո… հետզհետե կառուցում էին խոշոր Անի բերդաքաղաքը, որ պատմության մեջ ծանոթ է որպես Բագրատունիների մայրաքաղաք», տե՛ս **H. Topdschian**, Polit. Kircheng. u. s. w., էջ 165: Թոփչյանը այն կարծիքին է, որ Բագրատունիները Անին սկսում են կառուցել, «երբ նրանք խալիֆաթից ամբողջովին անկախ են դառնում»: Մեր կարծիքով՝ Բագրատունիների ամբողջական անկախության մասին խոսք չի կարող լինել, տե՛ս մեր հոդվածը «Արաբական հարկային քաղաքականությունը ֆեոդալական Հայաստանում», «Պետական համալսարանի գիտական տեղեկագիր», № 2, Երևան, 1927:

[2] **Թովմա Արծրունի**, էջ 264: Այս թագավորությունը Արծրունի նախարարության տրվում էր Յուսուֆի կողմից երկու խոշոր ֆեոդալների կռվեցնելու և տկարացնելու նպատակով: Յուսուֆը հասնում է իր նպատակին, տե՛ս **Թովմա Արծրունի**, IV, գլ. Գ, էջ 284:

[3] **Ստեփանոս Օրբելյան**, II, գլ. ծե, էջ 43:

[4] **A. Akulian**, Einverleibung armenischer Territorien durch Byzanz im 11 jahrh, էջ 10/13. **Brosset**,

Ժամանակի ընթացքում հիմնվող այս թագավորական փոքր տուների հետևանքով տեղացի իշխանների և օտար կառավարիչների պահակազորքի թիվը ավելանում էր: Այս վերաբերում է մասնավորաբար Անի, Դվին, Կարս, Վան, Ախլաթ, Արճեշ, Արծն, Բերկրի քաղաքներին, որոնք՝ իբրև իշխանանիստ քաղաքներ կամ բանակատեղեր, ֆեոդալական Հայաստանի տնտեսական կյանքի վրա սկսան խոշոր ազդեցություն ունենալ:

Հայ և արաբ պատմիչների և աշխարհագիրների, ինչպես նաև այլ ճամփորդների տված տեղեկությունները և անցյալի քաղաքների ավերակների մասին եղած ուսումնասիրությունները (վերջինները շատ քիչ են մինչև այժմ) մեզ հնարավորություն են տալիս հետևյալ եզրակացությունները անելու:

1. Ֆեոդալական Հայաստանի քաղաքների մեծ մասը, անկասկած, տարբերվում էին այժմյան քաղաքներից նրանով, որ նրանց ազգաբնակության որոշ մասը կապված էր դեռևս երկրագործության հետ: Այս հանգամանքը անհրաժեշտ է ընդգծել երկու տեսակետից:

ա) Արտադրական աշխատանքի մեջ առաջացած բաժանումը ֆեոդալական շրջանում դեռևս չէր հասել իր լրման և չէր էլ կարող հասնել տվյալ արտադրական ուժերի զարգացման սահմաններում:

բ) «Քաղաքի» բնակիչների որոշ մասը երկրագործական արտադրությունների սպառողներ չէին հանդիսանում: Այս կերպ գյուղատնտեսական մթերքների համար ներքին շուկան դառնում էր ավելի նեղ:

Ֆեոդալական շրջանի «քաղաքը» այս հիմնական կետում տարբերվում է կապիտալիստական շրջանի քաղաքներից:

Թովմա Արծրունին IX դարու երկրորդ կեսի՝ Դվինի ազգաբնակության պարապմունքները գարնան եղանակում այսպես է նկարագրում.

«Եւ եղև իբրեւ ձմեռն փոքրացաւ և ժամանակ գարնանային եղանակին մերձեցաւ, և օդն մառախլաձև միգախառն յստակեցաւ և հարաւային ջերմահոյն օդն շնչեաց ի խորագոյն դաշտն Դվնայ, և ընդարմացեալ արմատքն ու բոյսքն զգենուլ սկսան զզօրութիւն, և թռչունք և գազանք ծանեան զժամանակս գալստեանն իւրեանց, և աշխատասէր մշակքն պատրաստեցան ի գործ երկրասէր վաստակոցն, որսորդքն զինքեանց գործիսն պատրաստէին, և վաճառականքն զհեռաւոր ճանապարհացն խոկային պատրաստութիւնն, և հովիւքն տաւաղելով զգառինսն քշէին ի դալարաբեր հովիտն և ամենայն ոք ազգս ազգս փութայր ի հնարս ինքեանց վաստակոցն մի զմիով ելանել»[1]:

Մեր կարծիքով՝ պատմիչի այս նկարագրականում բանաստեղծական կողմը ավելի շեշտված է: Մենք X դարու Դվինի մասին՝ որպես քաղաքի, այլ կարծիք ունենք: Այս վկայությունը բերինք որպես նշում այն քաղաքների հա-

---

Histoire de la Siunie, էջ 172, ծանոթ. 8:

[1] **Թովմա Արծրունի**, III, գլ. Թ, էջ 172:

մար, որոնք իրապես գտնվելիս են եղել զարգացման այս աստիճանի վրա: Այսինքն՝ երկրագործական պարապմունքը գերակշռող տեղ է գրավել նրանց մոտ:

Պրոֆ. Ն. Մառը Անիում իր կատարած պեղումների հիման վրա հայտնում է, որ Անիի գյուղացին մեզ թողել է այլազան արորներ[1]:

Այժմյան Խորհրդային Հայաստանի երկու աչքի ընկնող քաղաքները՝ Երևանն ու Լենինականը, առաջինի այգիները, երկրորդի «գեղացոց թաղը», անցյալի քաղաքներից ավանդ մնացած մնացորդներ չե՞ն:

Արաբ պատմիչների և աշխարհագիրների մոտ մենք հանդիպում ենք մի շարք քաղաքների նկարագրությունների, որոնք ապացուցում են, որ այդ քաղաքներում երկրագործական պարապմունքը որոշ տեղ է բռնել ազգաբնակության արտադրության մեջ:

770 թվին Բերկրին Ղևոնդ պատմիչի մոտ հիշում է որպես «գյուղ», իսկ Արճեշը՝ որպես «գյուղաքաղաք»: Բերկրիի և Արճեշի հետագա զարգացման համար այս հիշատակությունները ուշագրավ են: Խլաթը այս շրջանում արդեն «քաղաք» է: «Ավան» և «քաղաքագյուղ» գործ են ածվում միևնույն ժամանակի համար Արճեշի մասին[2]:

Նույնն է պատկերը նաև հարևան «քաղաքների» մասին: Այսպես՝ Իբն Հաուքալը Փայտակարանը նկարագրելիս ասում է.

«Անվանի քաղաք է ջուրով, ծառերով (անտառներով), այգիներով և միրգերով, ջրանցքներով, որոնց վրա ջրաղացները երգում են»[3]:

Շերեֆ Ուդդինը Լիվա Ամիդի մասին մեզ թողել է մի հետաքրքիր վկայություն այն քաղաքի, որը սուրիացի պատմիչ Դրնին մեզ ներկայացնում է առևտրականներով լեցուն քաղաք դեռևս 769/770 թվին[4]:

---

[1] Ճարտարապետ Թ. Թորամանյանը «Ազգագրական հանդեսում» (գիրք XXI, 1912 թ.) լույս է ընծայել մի հետաքրքիր հոդված՝ «Անի քաղա՞ք, թե՞ ամրոց»: Մեկնելով այն հանգամանքից, որ այժմյան Անիի ավերակների վայրը հազիվ 4 քառ. կմ տարածություն ունի, որ բոլորովին անբավարար էր մեծ թվով բնակչության բնակավայր ծառայելու, մյուս կողմից, նկատի ունենալով մեծ թվով ազատանիի գոյությունը և վերջապես այն հանգամանքը, որ պարիսպներից դուրս կան ավերակների մնացորդներ, ինչպես՝ եկեղեցի, գերեզմանատուն (մեկ քառ. կմ-ից ավելի), հուշարձաններ և դամբաններ, ճանապարհ, ավելացնում է. «Անպայման Հոռոմոսի վանքը, Բագնայր (Ղազլիճա), Արջո առիճո (Ալաճա գյուղ) և ասոնց նման 4-ին մինչև 10 կմ հեռավորության վրա այժմ ավերակ գյուղեր Անիի արվարձաններն էին և անմիջական կապ ունեին քաղաքի ներքին վարչական և տնտեսական գործերուն հետ»: Թորամանյանի այս կարծիքը չի՞ հաստատվում արդյոք Արիստակես Լաստիվերտցիի հետևյալ վկայությամբ. «...Անի և որ շուրջ զնովաւ դստերք իւր՝ առաւել յամբարտաւանութիւն կրթեալ ընդդէմ երկնից կայթս հարկանէին» (**Արիստակես Լաստիվերտցի**, գլ. ԻԴ, էջ 109):
Պրոֆ. **Ն. Մառ**, Անիի ավերակները, «Արարատ» ամսագիր, № 8, 1911, էջ 662:

[2] **Ղևոնդ**, գլ. ԼԴ, էջ 146:

[3] **Իբն Հաուքալ**, էջ 244:

[4] Chronique de Denys de Tel-Mahrè, iv-ème partie trad. I. B. Chabot, paris 1895, p. 93.

«Դղյակին վերևը գտնված գետին եզերքները,- ասում է պատմիչը,- ներկայացնում են ձմերուկի և սեխի այգիներ, ուր ամեն մի բնակիչ իր հողամասը ունի…: Ձմերուկի ժամանակ բնակիչները գնում են իրենց պարտեզը, շինում են եղեգե տնակ (kulibe) և մի քանի օր հաճույքի և ուրախության անձնատուր են լինում: Այս քաղաքը կարող է ամբողջ մի բանակի ձմռան օթևան ծառայել»[1]:

Այս վկայությունը որքան վերև մեր ասածը հաստատելու տեսակետից հատկանշական է, նույնքան և բնորոշ ֆեոդալական քաղաքների ներքին կենցաղի տեսակետից:

Այս բոլորից կարելի է եզրակացնել, որ ֆեոդալական Հայաստանի քաղաքների խոշոր մասը գտնվում էր դեռևս, եթե հնարավոր է այսպես կոչել, երկրագործական քաղաքի վիճակում: Այս միանգամայն հասկանալի է, եթե մենք առհասարակ ֆեոդալական շրջանի քաղաքների զարգացմանն ենք հետևում: Նրանք առաջացել են ոչ թե այն հանկարծական ձևով, որին մենք հանդիպում ենք այժմ, օրինակ՝ Հյուսիսային Ամերիկայում, այլ նրանց զարգացումը ընթացել է բոլորովին աստիճանական և արտադրական ուժերի զարգացման զուգընթաց. նրանց տիպը աստիճանական այդ զարգացմանը ընթացքում եղել է տարբեր:

Անտարակույս, զարգացման ավելի բարձր աստիճանի վրա գտնվող քաղաքներ ևս գոյություն ունեցել են ֆեոդալական Հայաստանում: Եթե երկրագործական քաղաքների տիպը անվանենք առաջին կատեգորիա, երկրորդ տեսակի քաղաքները կարելի է կոչել առևտրական-արհեստավորական քաղաքներ: Մեր ուսումնասիրության ընթացքում մենք աչքի առաջ ունենք այս վերջին տիպի քաղաքները:

Ինչպես ստորև կտեսնենք, մենք ունենք պատմական վկայություններ մի շարք քաղաքների մասին, որոնք արտացոլում են վերև մեր արած բնորոշումը:

Երբ Արիստակես Լաստիվերտցին X դարի Կարս քաղաքի մասին ասում է.

«… Հարստացեալք բազում ընչեղութեամբ ի ծովէ և ի ցամաքէ ամբարեալ»[2]:

Եվ կամ խոսելով 1049 թվի Արծն քաղաքի մասին՝ ասում է.

«… Եւ ծով և ցամաք երկնէր և առատանայր կրել ի սմա զզօրութիւն իւր»[3]:

Մեր կարծիքով՝ այս երկրորդ քաղաքների հատկանշական որակումն է անում պատմիչը:

---

[1] **Cheref Oudine**, Cheref-Nameh trad. fr. Par Bern, Charmoy, t. I, p. 141.

[2] **Արիստակես Լաստիվերտցի**, գլ. ԺԵ, էջ 61:

[3] Նույն տեղում, գլ. ԺԲ, էջ 53:

Ուրեմն ֆեոդալական շրջանի քաղաքները կարելի չէ մի ընդհանուր հայտարարի տակ բերել: Ֆեոդալական Հայաստանի ապագա մոնոգրաֆիկ ուսումնասիրությունները, մեր կարծիքով, պետք է լինեն այս հիմնական բաժանման հիման վրա: Առանց այս տեսակի մերձեցման մենք պիտի հանդիպեինք պատմական վկայություններում որոշ հակասությունների:

2. Ինչ վերաբերում է ֆեոդալական Հայաստանի քաղաքների շինության արտաքին տեսքին, եղած նկարագրությունները կասկած չեն թողնում, որ նրանք եղել են նույն ձևի, որին մենք հանդիպում ենք ֆեոդալական Եվրոպայի քաղաքների մոտ: Ֆեոդալական Հայաստանի գրեթե բոլոր քաղաքները առաջացել են բերդերից:

Կարինը, Դվինը, Վանը, Անին շրջապատված են եղել պարիսպներով[1]: Այս պարիսպները պաշտպանելով գլխավորաբար իշխանական դղյակը՝ քաղաքի զարգացման զուգընթաց ժամանակի ընթացքում ավելի ընդարձակվել և ամրացել են:

Արևելյան քաղաքների միջնադարյան Եվրոպայի քաղաքների նման լինելը տեսնում ենք Իբն-Բատուտահի նկարագրությունից[2]:

1717 թ. Պիտոն դը Դուրնըֆորը, Հայաստան այցելելով, մեզ թողել է Էրզրումի, Կարսի, Հասան-Քալեյի մասին նկարագրություններ և նկարներ, որոնք հիշեցնում են ֆեոդալական Եվրոպայի քաղաքները[3]:

3. Ֆեոդալական Հայաստանի քաղաքների թիվի մասին խոսելիս մենք պիտի առաջնորդվենք, անկասկած, այն բաժանումով, որ մենք վերև արեցինք, այսինքն՝ առաջին և երկրորդ կատեգորիայի քաղաքներ: Մեկնելով այս բաժանումից՝ մենք երկու տեսակի սահմանավորում պետք է տանք ֆեոդալական Հայաստանի քաղաքներին: Եթե առաջինները տնտեսական իմաստով գյուղաքաղաք են, մենք այդ չենք կարող ասել երկրորդ տիպի քաղաքների մասին, որոնք իրապես հասել են զարգացման այն աստիճանին, որի շնորհիվ ստեղծվել է քաղաքի և գյուղի հակադրությունը:

Եթե այս բաժանումով մոտենանք ֆեոդալական Հայաստանի քաղաքներին, այն ժամանակ պարզ է, որ մենք չենք կարող մեծ թիվով երկրորդ տիպի քաղաքներ գտնել այնտեղ: Այս առթիվ պատմագիրների տված վկայությունները պետք է մեծ զգուշությամբ և վերապահությամբ օգտագործել: Մեր ուսումնասիրության համար խոշոր նշանակություն ունեցող այս հարցի մասին մենք չենք կարող առայժմ սպառիչ պատասխան տալ: Մասնակի ուսումնասիրություններ են հարկավոր այս հարցի պարզաբանման համար: Եթե հնարավոր չէ վերջնական թիվ տալ այս մասին, ապա կարելի է ասել այն,

---

[1] **Խստախրի**, էջ 188: Պրոֆ. **Ն. Մառ**, Անիի ավերակները, «Արարատ», № 5, 1911, էջ 399/400:

[2] Voyagesd'Ibn Batoutah, t. I, էջ 146 նն, Paris 1853:

[3] **Pitton de Tourne**: fort, Voyage du Levant, t. II, էջ 260, 290 և 380: Ամիդ, Խարբերդ, Վան, Բիթլիս քաղաքների մասին, հմմտ. **Cheref-Ouddine**, Cheref-Nameh, t. I, էջ 141, 148, 164:

որ երկրորդ տիպի քաղաքների թիվը քիչ էր: Այս մասին կարող է որոշ ուղեցույց լինել Մատթեոս Ուռհայեցիի մի վկայությունը, երբ Վասպուրականի Սենեքերիմ թագավորը, հունաց կայսեր կողմից Սեբաստիան ստանալով, իր կալվածները նրան է տալիս, նրանց մեջ հաշվում է «թեմաբերդս 72 և գյուղս 4400»[1]: Սամուել Անեցին սրանց վրա ավելացնում է նաև «8 քաղաք»[2]:

Եթե որոշ վերապահությամբ մոտենանք Հայաստանի հարավում մատնանշված այդ 8 քաղաքներին և մի մասը առաջին կատեգորիայի հաշվենք, այն ժամանակ տարանցիկ առևտուրի հանգույց հանդիսացող գավառում մենք ավելի քիչ թվով երկրորդ տիպի քաղաքներ կգտնենք: Եթե հարավում այդ էր դրությունը, Հայաստանի միջնաշխարհում և հյուսիս-արևմուտքում, մեր կարծիքով, այլ չէր պատկերը: Ուստի ֆեոդալական Հայաստանի հազարավոր քաղաքների մասին խոսելը և կամ պատմիչների այս մասին տված վկայությունները անքննադատորեն յուրացնելը նշանակում է անտեղյակ լինել ֆեոդալական Հայաստանի արտադրական ուժերի զարգացման չափին[3]:

4. Ինչ վերաբերում է քաղաքների ազգաբնակության ընդհանուր թիվին, այլազան աղետների միջոցին պատմիչների տված տեղեկությունները՝ խնդրո առարկա քաղաքի ազգաբնակության մասին չեն կարող որևէ հիմք

---

[1] **Մատթեոս Ուռհայեցի**, Վաղարշապատ, 1898, էջ 41:

[2] **Սամուել Անեցի**, Վաղարշապատ, 1893, էջ 104: Համաձայն Յահյա իբն Սայիդի վկայության՝ բերդերի քանակը ցույց է տրվում միայն ավելի քան 40: Հմմտ. **A. Akulian**, Einverleibung armenischer Territ., էջ 41:

[3] **Թոփչյանը** (Die Innere Zustände u. s. w., էջ 41), հիմնվելով Յաքուտի և Իբն-ալ-Ֆաքիհի տեղեկությունների վրա, ընդունում է, որ ֆեոդալական Հայաստանում եղել են «18.000 փոքր ու խոշոր քաղաքներ», և որ միայն «Արաքսի եզերքում՝ 1000 քաղաք»:
Մարկվարտը (անձնական) հետևյալ նկատողությունն է անում այս մասին. «Յաքուտը, որ Իբն-ալ-Ֆաքիհից արտագրել է, վերջնույն աղբյուրը կազմում է նշանավոր Ահմեդ իբն Վաղիհ ալ-Յաքուբին: Իբն ալ-Ֆաքիհի մոտ ամբողջ վկայությունը հետևյալն է (۲۹۱ 4): «Ան (Իբն Վաղիհը) տեղեկացնում է, որ իշխանությունների թիվը (Հայաստան մամալիքահայի) 113 է (Յաքուտ, 118), որոնց մեջ է գահակալող իշխանությունը (աս Սարիր, Ավարների երկիր, ոչ Հայաստան), Աղվանից աշխարհի և Բաբ-ալ-Աբվաբի (Դարբանդի) միջև: Նա պարունակում է 18.000 գյուղեր (qarja): Աղվանը Հայաստանում առաջին իշխանությունն է. այնտեղ կա 4.000 գյուղ: Նրանցից ամենից շատը գահակալող տիրոջ գյուղերն են: (Ֆաքիհը ավելացնում է) Մնացյալ իշխանների մոտ 4000-ը անցնում են և մնում են գահակալող իշխանությունից (գյուղերի թվից) ցած»:
«Իբն ալ-Ֆաքիհը՝ Յաքուտի մոտ (II۷۷۹ և II ۱۸٦1- 5) պատմում է մի լեգենդա, որի համաձայն՝ նախապես Արաքսի մոտ Հայաստանում եղել են 1000 քաղաք, որոնք կործանվել են, որովհետև Մովսես Մարգարեի հանդեպ վատ են վերաբերվել: Նման անքննադատական տեղեկություն ոչ մի արժեք չունի»:
Հովհաննես Կաթողիկոսի մոտ այն վկայությունը (էջ 176), թե Աշոտ I-ը «յարդարէր յաշխարհի տէրութեան իւրոյ, յօրինուածս տանց իւրոց, քաղաքաց, շինից-դաստակերտաց» պետք է ընդունել, մեր կարծիքով, այն իմաստով, որ եղածների վրա շինություններ էին կատարվում: Քաղաքները արդյունք են արտադրական ուժերի որոշ աստիճանի զարգացման և ոչ թե մի իշխանի կամ թագավորի ցանկության:

ծառայել[1]:

Ուստի քաղաքների ազգաբնակության քանակի մասին ևս մենք հնարավորություն չունենք թվական տվյալներ տալու:

Մասնավորաբար օտար ժողովուրդների արշավանքների ժամանակ քաղաքների գրավման առթիվ ջարդված և գերի տարված ազգաբնակությունը ընդունել որպես խնդրո առարկա քաղաքի ազգաբնակությունը, մեր կարծիքով, պիտի լինի բոլորովին սխալ: Հայտնի է, որ նման վտանգների պահուն դաշտային անպատսպար ազգաբնակությունը խուժում էր այն վայրերը, որոնք կա՛մ արվեստական և կա՛մ բնական ամրություններ էին կազմում: Ֆեոդալական Հայաստանի քաղաքների մասին մեր հանած երկրորդ եզրակացությունը ցույց տվեց, որ նրանք գրեթե բոլորը, պարիսպներով շրջապատված, ներկայացնում էին իրանցից ապահով վայրեր: Որ դաշտային ազգաբնակությունը վտանգի պարագաներում նման ապահով վայրեր էր ապաստանում, պարզ երևում է պատմիչների վկայություններից:

Արիստակես Լաստիվերտցին երբ պատմում է սելջուկ-թուրքերի Խորձյանում և Հանձիթում կատարած արշավանքների մասին, մեզ հաղորդում է.

«Բազում և անհամար հոգիք ի վերագոյն գաւառացն, վասն տեղեացն

---

[1] Մի շարք ուսումնասիրություններ, ընդունելով այդ աղետների ժամանակ պատմիչների տված տեղեկությունները որպես վավերական, մեզ հայտնում են, որ XI դարում Անիի ազգաբնակությունը եղել է 100.000 հոգի, Դվինի ազգաբնակությունը՝ 70.000-150.000 հոգի, Արծն քաղաքը՝ նույնիսկ 300.000 !!, որից 150.000-ը՝ 1049 թվին ջարդված…: Համաձայն սուրիացի պատմիչ Դընիի՝ արաբացիները Դվինը գրավելու ժամանակ 12.000 մարդ սպանել են և 35.000 հոգի գերի տարել: Ստեփանոս Օրբելյանի հրատարակիչ Շահնազարյանը (II, ծանոթ. 3, էջ 297/298) Սյունյաց Սմբատ իշխանի թագավոր լինելու առթիվ հայ նախարարների միջև տիրող անմիաբանությունը ողբալուց հետո (իհարկե, չէր կարելի սպասել նրանից, որ հասկանար, թե այդ երևույթը ֆեոդալական շրջանի յուրահատուկ մի դրություն էր), հիմնվելով Սմբատ Գունդստաբլի և Ստեփանոս Օրբելյանի տված տեղեկությունների վրա, պայմանական հաշիվներ կատարելով, գալիս է այն եզրակացության, որ Բագրատունյաց հարստությունից դուրս գտնվող գավառների հայերը եղել են 6 միլիոն…: Այսպիսի եզրակացություն կարող է միայն ազգայնական սպեկուլացիայից առաջանալ:
Պրոֆ. Հակոբ Մանանդյանը («Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում», էջ 30) թեև Արծն քաղաքի ազգաբնակության համար իր տված թիվի՝ 300.000 հոգիի մասին կասկած է հայտնում, այնուամենայնիվ, թեքված է սրա մոտ մի թիվ ընդունել, քանի որ նույն թիվը հավանական է գտնում նաև Անիի համար (էջ 90), ավելացնում է. «Ավելի քան հավանական է, որ այս քաղաքներն իրանց բնակչության քանակով շատ ավելի մեծ են եղել, քան միջնադարյան եվրոպական քաղաքները» (էջ 90): Մեր կարծիքով՝ ֆեոդալական Հայաստանի քաղաքների մասին հայտնված այս կարծիքը առաջանում է նրանց բարգավաճման գերագնահատումից:
Բերված թվերի մասին հմմտ. **Թովմա Արծրունի**, III, գլ. ԻԲ, էջ 231, **Տաբարի**, III, 4 ٢١٢٩, **Յաքուտ** VII, ١٦٤, **Ն. Մառ**, «Արարատ» ամսագիր, № 6, 1911, էջ 482, **Կեսրիենոս** II, 518, 9., **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 103, **H. Topdschian**, Polit. u. Kirchng. u. s. w., էջ 170, **Հակոբ Մանանդյան**, Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում, Երևան, 1922, էջ 30, 90:

ամրութեան՝ անդը ժողովեալ էին…»[1]:

Նույն պատմիչը ավելի որոշակի ասում է դաշտային, անպատսպար ազգաբնակության դեպի քաղաքների խուժումը, երբ նա պատմում է 1055 թվին սելջուկ-թուրքերի Անիի վրա հարձակումը:

«Յորոց հինէ՝ մարդաբնակ տեղիքն փախուցեալ՝ ի քաղաքն Անի ժողովեցան, և ոչ ժամանեալ ամենեցուն մտանել, քանզի երեկոյացաւ ժամն և ածին զդրունս քաղաքին»[2]:

Կարին քաղաքի՝ 1241 թվին թաթարների կողմից գրավելու առթիվ Կիրակոս Գանձակեցի պատմիչը հաղորդում է.

«… Եւ զի յոյժ բազմամբոխ էր քաղաքն ի ժամանակի յայնմիկ՝ լցեալ քրիստոնէիւք և տաճկօք, և այլ ամենայն գաւառն անդր հաւաքեալ էր…»[3]:

Նույն պատմիչը թաթարների Կայան բերդի գրավման առթիվ հայտնում է.

«… Եկին և ամենայն բնակիչքն գաւառին ամրացան և նոքա շուրջ զբերդովն»[4]:

Մեր կարծիքով՝ նույն իմաստով պետք է հասկանալ Մատթեոս Ուռհայեցու այն վկայությունը, որ վերաբերում է Արծն քաղաքի՝ 1049 թվին գրավման, և ըստ այնմ գնահատել այս մասին պատմիչին հաղորդած թվական վկայությունը «իբրև բիւր հնգետասան…»[5]:

Պատմական այս վկայություններից պարզ կերպով երևում է, որ նման աղետների ժամանակ քաղաքների ազգաբնակություն ցույց տրված այդ թիվերը միայն այդ քաղաքների բնակչության չեն վերաբերում: Ուստի անքննադատորեն օգտագործել այդ թիվերը և հարյուր հազարների հասնող ազգաբնակություն ցույց տալ այդ քաղաքների համար, ոչ թե չի համապատասխանում պատմական ճշտության, այլև զուրկ է տնտեսական հիմունքներից:

Ավելորդ չէր լինի այստեղ մի քանի թիվեր բերել ֆեոդալական Եվրոպայի մի քանի քաղաքների ազգաբնակության թիվի մասին: 1500 թվին Գերմանիայի Դրեզդեն քաղաքը ունեցել է 4000 բնակիչ: Միջնադարի վերջում Ֆրանկֆուրտ քաղաքը ունեցել է 10.000 բնակիչ[6]: Ամենաշատ բնակչությունը եղել է 25.000 հոգի:

Եթե տնտեսական նման պատճառներ առաջ են բերում նմանօրինակ երևույթներ, և այդ այդպես է, ապա ֆեոդալական Հայաստանի քաղաքին

---

[1] **Արիստակես Լաստիվերտցի**, գլ. ԺԶ, էջ 64:

[2] Նույն տեղում, գլ. ԺԷ, էջ 73:

[3] **Կիրակոս Գանձակեցի**, գլ. ԼԲ, էջ 152:

[4] Նույն տեղում, գլ. ԻԴ, էջ 136:

[5] **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 103:

[6] **Horst Jecht**, Studien u. s. w. Virteljahrschrift f. Sozial. U. Wirtschaftsgeschichte XIX Bd. 1-3 Hft 1926, p. 60/61.

հարյուր հազարների բնակչություն վերագրումը թե՛ մեր առաջ բերած պատմական վկայություններով և թե՛ ֆեոդալական Եվրոպայի քաղաքների ցույց տված պատկերով, պարզվում է, որ այդ հարյուր հազարներից շատ հազարներ պետք է կրճատել իրականության համապատասխան մի թիվի հասնելու համար:

Քաղաքների բնակչության քանակը անմիջականորեն կապված է այդ քաղաքի տարածության հետ:

Արաբ պատմիչ Իստախրին հաղորդում է, որ Ադրբեջանի էմիրի նըստած քաղաքը՝ Արդաբիլը, 2/3 քառակուսի փարսախ[1] տարածություն է ունեցել: «Դաբիլը=Դվին Արդաբիլից ավելի խոշոր էր»[2]: Ղևոնդի մոտ մոտավորապես 770 թվին Դվինը կոչվում է «լայնանիստ քաղաք»[3]: Իստախրին Բարդավի մասին հաղորդում է. «Անսովոր խոշոր քաղաք է. ավելի քան մի փարսախ երկարություն և նույնքան լայնություն ունի»[4]:

Ֆեոդալական շրջանի քաղաքների տարածության մասին խոսելիս պետք է նկատի ունենալ և այն հանգամանքը, որ քաղաքներում խոշոր տեղ էին գրավում պարտեզներն ու այգիները:

Համաձայն պրոֆ. Ն. Մառի հետազոտությունների՝ Անիի ավերակները գրավում են 150 դեսյատին[4]:

Դվինի և Անիի մասին այս վկայությունները գալիս են ապացուցելու, որ ֆեոդալական Հայաստանի քաղաքների բնակչությունը չէր կարող հարյուր հազարների հասնել:

Առաջավոր Ասիայի քաղաքների մասին խոսելիս մենք չպետք է մոռանանք մի էական հանգամանք: Այդ քաղաքները այլազան ժամանակներում, նույնիսկ մի դարաշրջանում, ունեցել են տնտեսական բոլորովին այլ պատկեր: Ուստի մի որևէ քաղաքի մասին խոսելիս առաջին հերթին պետք է ճշտել ժամանակը:

Այժմ մնում է մեզ պատասխանել այն հարցին, թե քաղաքների բարգավաճումը ի՞նչ ազդեցություն ունեցավ ֆեոդալական Հայաստանի հասարակական փոխհարաբերությունների վրա:

ա. Նախորդ գլխում, եթե մենք խոսեցինք հողատիրական կենտրոնաց-

---

[1] Փարսախ, որի հին հայկական ձևը «հրասախ» է (հմմտ. **Hübschman**, Altarmenische Gram., 183, № 357), պարսկական բառ է և ցույց է տալիս 3740 քայլ (Sehritten) կամ 30 Stadien: Համաձայն Տոմաշեկի (Zur hist. Topographie von Persien I 7, SBWA BD. 102, էջ 149)՝ փարսախը 6, 123 մետր է: Սրան մոտենում է Slouschz-ի արած հաշիվը՝ 1 փարսախը=6 կմ (Revue du monde musulman Bd. 11, 1911, էջ 160): Համաձայն La grande Eneyelopèdie-ի՝ Աբբասյանների շրջանում 1փարսախը=4 կմ:

[2] **Իստախրի**, Յո. Մարկվարտի թրգմ. (անտիպ), էջ ١٨١-١٨٢, ١٨٨:

[3] **Ղևոնդ**, գլ. ԼԴ, էջ 141:

[4] «Արարատ» ամսագիր, № 7, 1911, էջ 568:

ման և այս երկույթի արտադրող դասի վրա արած ազդեցության մասին, այնտեղ ցույց տվինք քաղաքների ֆեոդալների կողմից վերցված ծանր հարկերը, որոնք ծանր կացության էին մատնում արտադրող գյուղացիությունը: Նման տնտեսական պայմաններում ամենայն հավանականությամբ գյուղացության մի մասը ստիպված էր լինում գաղթել քաղաք, որտեղ անաշխատ սպառողների բազմությունը կարիք ուներ աշխատող ձեռքերի:

Վերև քաղաքների բնակչության մասին խոսելիս մենք մեջ բերինք մի շարք պատմական վկայություններ, որոնք որոշակի ցույց էին տալիս, որ աղետների ժամանակ անպաշտպան, դաշտային բնակչությունը խուժում էր դեպի պարիսպներով պաշտպանված քաղաքները: Անհավանական չէ, որ աղետը անցնելուց հետո գյուղացիության մի մասը հաստատվեր տևական կերպով այդ քաղաքներում: Մանավանդ, երբ նկատի ունենանք, որ ֆեոդալական Հայաստանի աշխարհագրական դիրքի պատճառով նման հարձակումներ հաճախակի տեղ էին ունենում: Ազատ դարձնող քաղաքը հրապուրիչ մի վայր էր մասնավորաբար գյուղացիության այն շերտի համար, որ հնարավորություն ուներ այլազան միջոցներով տերերի համար կատարելիք պարտադիր ծառայություններից ազատվելու:

Անտարակույս, քաղաք գաղթող թե՛ չքավոր և թե՛ ունևոր գյուղացիության խոշոր տոկոսը սկզբնական շրջանում դեռևս կապված էր մնում գյուղի հետ:

բ. Եթե առաջին անդրադարձումը լինում էր ազգաբնակության տեղափոխության բնագավառում, ապա երկրորդ անդրադարձումը կարելի է նշել շահագործման սաստկացում:

Ֆեոդալական տնտեսության հիմքը կազմում էր ծախսելը: Փողը գոյություն ուներ ծախսվելու համար: Արտադրական ավելի բարդ փոխհարաբերություններում, ինչպիսին իրանց ներկայացնում է քաղաքների բարգավաճումը, ավելանում էին այդ քաղաքի ֆեոդալների պահանջները: Հարկավոր էր այդ պահանջները բավարարել: Ապրանքափոխանակության այս շրջանում զգալի էր դառնում փողի սուր կարիքը: Այդ ֆեոդալները, բոլորովին կտրված գյուղացիական տնտեսություններից, և հեռի մնալով, ինչպես միշտ, արտադրական աշխատանքից, գյուղում արտադրական ուժերի զարգացման մասին խոսք չէր կարող լինել: Ուստի այդ ֆեոդալները հարկավոր փողը ճարելու համար պետք է դիմեին հարկերի քանակը բարձրացնելու միջոցին:

Թե՛ դեպի քաղաք գաղթը և թե՛ հարկերի ծանրացումը իրենց սուր կողմով ուղղված էին շինական դասի դեմ:

Մի կողմից դեպի քաղաք գաղթը և կամ գյուղացիության մի մասի պարտադիր ծառայություններից ազատվելը ֆեոդալի հողերի վրա աշխատող բազուկների թիվը նվազեցնում էին, մյուս կողմից ֆեոդալի փողի սուր կարիքը շահագործումը հասցնում էր ավելի մեծ համեմատությունների: Տնտե-

սապես ստրկացած շինականը և կամ հողազուրկ գյուղացին սոցիալական տեսակետից դառնում էր ստրուկ[1]: Ֆեոդալական Հայաստանի տնտեսական կյանքում տեղի ունեցող այս պրոցեսը կատարվել է աստիճանաբար, և մենք գտնում ենք նրա մասին վկայություններ հետագա դարերում:

1224 թվին Դաղիվանքի արձանագրության մեջ կարդում ենք.

«…Ես՝ Գրիգոր որդի Հասանայ, որ մեծաւ յուսով տուի Դաղի գերեզմանս **չորս տուն շինական** հոգւոր իմոյ…»[2]:

1262 թվին Բագնայրի արձանագրության մեջ կարդում ենք.

«…Ես՝ Խաւռազ… ի Բգներս տվի յԱստուածածինս, զվերի էգին իւր ընձանովն, **բ. շինական**, զՄեհեւան և զԽաչատուր, Դուլուսին փեսայն, իւրենց հողովն ու ջրովն…»[3]:

Հետագա երկու արձանագրությունները ուշագրավ են այն տեսակետից, որ շինականներ նվիրվում են առանց հողի. այս միանգամայն ապացուցում է նրանց ստրկական վիճակի ծանրությունը:

1243 թվին Հաղպատի արձանագրությունից.

«… Ես՝ Դաւիթ…, հաստատեցի սուրբ Սարգսի մուտքն զԿաթանցն այգին իւր մազրովն և **գ. շինական**…»[4]:

1244 թվի Աստվածընկալի (Արարատում) արձանագրությունից.

«… Ես՝ Քուրդ իշխանաց իշխան…, տուաք ընծայ զմեր այգին ի Փարբի, ա. Խունցան յԱւշական, ա. Այգի ի Կարբի, **ա. շինական**, գ. ողջատուն…»[5]:

XIII դարի վերջերին Սյունյաց եպիսկոպոս Ստեփանոս Օրբելյանը մեզ թողել է մի արձանագրություն, որից պարզ երևում է, որ շինականներն իրենց մշակած հողի հետ վաճառքի նյութ են դառնում.

«… Եւ ընծայեցի ի սոսա (Նորավանքի եկեղեցիներին) զիմ հալալ հայրենիքն և զգանձագին գիւղն Չուայ իւր ամեն սահմանօքն, հողով և ջրով և այգեստանեօք և բոլոր բնակչօք, զոր գնեալ է իմ յիմ եղբօրէն…»[6]:

Այս վկայությունները կասկած չեն թողնում, որ XIII դարում շինական դասը սոցիալական տեսակետից գտնվել է ստրկական վիճակում: Իսկ այս արդյունք էր աստիճանական այն պրոցեսին, որ տեղի էր ունեցել նախորդ դարերում:

գ. Քաղաքային կյանքի առաջ գալը անհետևանք չէր մնում հոգևորական դասի վրա: Ապրանքափոխանակության զարգացման շրջանում հայ եկեղե-

---

[1] XIV և XV դարերին Գերմանիայում տեղի ունեցած այս պրոցեսի մասին հմմտ. **F. Engels**, Die Entw cklung des Sozialismus von d. Utopie z. Wissennschaft, 1923, Berlin, էջ 64 ևն:

[2] Վիմական տարեգիր, էջ 68:

[3] Նույն տեղում, էջ 104:

[4] Նույն տեղում, էջ 85:

[5] Նույն տեղում, էջ 87:

[6] **Ստեփանոս Օրբելյան**, II, գլ. ՀԱ, էջ 241:

ցին ևս ենթարկվում էր փոփոխությունների: Երբ մի ժամանակ ասկետական կյանքը գրավում էր հոգևորականներին և քաշվում էին հեռավոր վանքեր, հեռի աշխարհիկ ժխորից, այժմ երբ ստեղծվել էին քաղաքներ և քաղաքային պերճանքի և ճոխության կյանք, մենաստանները քաշվածները սկսում են քաղաք հավաքել և մասնակից լինել աշխարհիկ կյանքին: Այս կերպ նախկին ասկետիզմին հաջորդում էր հոգևորական դասի աշխարհականացումը:

Այս առթիվ 1022 թվից Հովհաննես Կոզեռնի անեծքում կարդում ենք հետևյալ հատկանշական տողերը.

«…Կրօնաւորք թողուն զանապատս և զմենաստանս և յաշխարհի զբաղումս դեգերին և շրջին ընդ փողոցս և ի մէջ կանանց…»[1]:

Մի դար հետո Ներսես Շնորհալին ստիպված է լինում իր «Ընդհանրական թղթում» ավելի դառնությամբ խոսել այս մասին.

«Են ոմանք դարձեալ յաշխարհասէր և ի մեղկ կրօնաւորաց… անձամբ իսկ ընդ աշխարհականս բնակեն ի գիւղս և ի քաղաքս, և ի բանից բերանոյ գարշութիւնս և ի գործ վատթարութեան, և յորովայնամոլութիւնս անպատկառս, և յարբեցութիւնս անառակս, և յամենայն անկարգութեանց բերմունս առաւելուն, քան զնոսա»[2]:

Եկեղեցիի աշխարհականացման այս երևույթը, որ անմիջականորեն կապ ուներ ապրանքափոխանակության հետ, փողի սուր կարիք էր առաջացնում: Հոգևոր իշխանների աշխարհիկ պահանջները բազմանում էին: Հոգևորական դասը որոնում և գտնում էր բազմաթիվ կերպեր քրիստոնեական հավատքը ապրանքավորելու և ստեղծելու դրամական միջոցներ: Հետաքրքիր է այս տեսակետից Աշոտ Հովհաննիսյանի մյուռոնը ապրանք դառնալու շուրջ կատարած ուսումնասիրությունը[3]:

Այս կերպ առաջանում է մի ուրիշ երևույթ, որ գալիս է, ավելի սաստկացնելու արդեն գոյություն ունեցող շահագործումների չափը:

դ. Ֆեոդալական Եվրոպայի քաղաքներում սոցիալական տեսակետից գոյություն ունեցող հակադրությունների մասին հետաքրքիր մի ուսումնասիրություն է մեր վերև հիշած Հորստ Յեխտի հետազոտությունը: Թվական տվյալներով նա կարողանում է ապացուցանել, որ միջնադարյան Եվրոպայի քաղաքներում չէ տիրել սոցիալական ներդաշնակություն[4]:

Մեր կարծիքով՝ այլ չէր կարող լինել պատկերը ֆեոդալական Հայաստանի քաղաքներում, երբ նկատի ունենանք այս ազգաբնակության պա-

---

[1] **Մատթեոս Ուռհայեցի,** էջ 53:

[2] **Ներսես Շնորհալի**, Ընդհանրական թուղթք, Երուսաղեմ, 1871, էջ 19:

3 **Աշոտ Հովհաննիսյան,** Էջմիածնի նվիրապետության շուրջը, «Խորհրդային Հայաստան», օրաթերթ, 1926, սեպտեմբերի 22/23, № 1568/1569:

[4] **Horstjecht**, Studien u. s. w. Viertel. f. Soz. u. Wirt-gessch. Bd. XIX, 1-3 Heft, 1926, էջ 48 և այլն:

բապմունքները և սրանցից առաջացող նյութական հարստության տարբեր աստիճանները:

Որոշ մարդկանց մոտ առևտրական և վաշխառուական կապիտալի աշխուժացումով կուտակվող այդ հարստությունն իր հերթին մի այլ հակադրություն էր առաջացնում քաղաքի և գյուղի միջև: Մի հակադրություն, որն իր արտահայտությամբ, կարելի է ասել, ամենից ավելի քայքայիչն էր մանր գյուղացիական տնտեսությունների համար:

Սակայն, նախքան այս հարցի քննության անցնելը, հարկավոր է ծանոթանալ քաղաքի արհեստավորության հետ, որպեսզի կարողանանք որոշ չափով լրիվ պատկեր ստանալ քաղաքների զարգացման մասին:

III. ԱՐՀԵՍՏԱՎՈՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Ֆեոդալական Հայաստանի արհեստավորական արտադրությունը պատմական տարբեր ժամանակաշրջաններում ունեցել է այլ ձևակերպում և բովանդակություն:

Եթե սկզբնական շրջաններում նախանյութի վերամշակումով ինչպես արտադրական, նաև այլ բնագավառներում աշխատողները եղել են հոգևոր և աշխարհիկ իշխանների վանքերում և դղյակներում ծառայողներ, նույնը չէ կարելի ասել ֆեոդալական այն շրջանի մասին, երբ ստեղծվել էր քաղաքային կյանքը:

Որ հոգևոր և աշխարհիկ իշխանների անմիջական կարիքներին բավարարող արհեստավորական մի դաս գոյություն ունեցել էր վանքերում, մենք բավականանում ենք այստեղ մի վկայություն բերել XI դարից.

«Այս բազմերջանիկ եպիսկոպոս (Տեր Հովհաննես)… զարդարեաց զՏաթև զանազան զարդունք… նաև յոգնապատիկ արհեստաւորք»:

«…Այլ զամենայն շինուած վանացն այրեցին և քակեալ յատակեցին զգործատներն…»[1]:

Ստեփանոս Օրբելյանի այս վկայությունը, որը վերաբերում է վանքերում գոյություն ունեցող արհեստավորներին և գործատուներին, շարունակությունն է անշուշտ այն դրության, որ գոյություն է ունեցել ավելի մեծ չափերով նախորդ դարերում: Եթե սկզբնական շրջանում տիրապետող էր հանդիսանում այս դրությունը, ապա հետագա դարերում արտադրական աշխատանքի մեջ առաջացած բաժանումը, սպառողների՝ մեծ չափով քաղաքներում կենտրոնացումը, ապրանքափոխանակության շրջանի հատուկ տնտեսական կարիքների բազմազանությունը առաջ էին բերում արտադրու-

[1] **Ստեփանոս Օրբելյան**, II, գլ. ԾԸ, էջ 55-56, 57:

թյան այս ասպարեզում աշխատանքի մի նոր կազմակերպություն, որ իր հերթին անդրադառնում էր ազգաբնակության սոցիալական շերտավորման վրա:

Մասնավարաբար քաղաքներում առաջացած այս փոփոխության կողքին դեռևս շարունակվում էր գյուղական տնտեսություններում արտադրության ասպարեզում տնայնագործական այն ձևը, որին հանդիպում ենք մինչև մեր օրերը: Մյուս կողմից քաղաքների այն տեսակները, որոնք նախորդ գլխում անվանեցինք երկրագործական քաղաքներ, ըստ ինքյան հասկանալի է, որ նման քաղաքներում առաջացած այս փոփոխությունը խոշոր անդրադարձում չէր կարող ունենալ նրանց ազգաբնակության սոցիալական շերտավորման վրա: Հիմնական փոփոխությունը առաջանում էր այն քաղաքներում, որ մենք անվանեցինք արհեստավորական-առևտրական:

Արտադրական աշխատանքի մեջ առաջացած այս փոփոխությունը ինչո՞ւմ էր կայանում:

Ֆեոդալական Հայաստանի ապրանքափոխանակության շրջանում առաջանում էր ազգաբնակության մեջ մի շերտ, որ բացառաբար պարապում էր նյութի վերամշակումով (և այլ կարգի շինություններով), և, որ գլխավորն է, արտադրական աշխատանքը նոր կազմակերպություն էր ստանում և արտադրական միջոցների սեփականատիրական նոր փոխհարաբերություններ էին ստեղծվում:

Առաջ էր գալիս արհեստավորական դասը:

Այստեղ մեզ հետաքրքրում են հետևյալ հիմնական հարցերը.

ա) ի՞նչ տեսակի արհեստներ գոյություն ունեին,

բ) ի՞նչ աստիճանի վրա էր գտնվում արտադրողականությունը,

գ) ո՞ւմ համար էր արտադրում արհեստավորը և ի՞նչ չափով կապված էր շուկայի հետ,

դ) ի՞նչ էր ներկայացնում իրենից արհեստավորական դասը սոցիալական տեսակետից:

Այս հարցերի պատասխանները մեծ չափով կապված են այն պեղումների հետ, որոնք կատարվելու են ֆեոդալական Հայաստանի քաղաքներում: Ճիշտ է, այն պեղումները, որ մինչև այժմ կատարված են, շատ քիչ են այս հարցերին լիակատար պատասխան տալու համար: Սակայն, մենք կարծում ենք, որ թե՛ մատենագրական վկայություններում և թե՛ կատարված մասնակի այդ պեղումներից մենք ունենք այնպիսի փաստեր, որոնք մեզ հնարավորություն կտան իրենց ընդհանուր գծերով բնութագրելու արհեստավորական արտադրությունը:

ա) Երբ 1064 թվին Անին սելջուկ-թուրքերի կողմից գրավվում է, քաղաքի «արվեստագետները» գերի են տարվում[1]: Նույն պատմիչի մոտ 1254 թվի մասին մենք ունենք հետևյալ ուշագրավ վկայությունը: Խոսքը վերաբերում է թաթարների կողմից դրված հարկերին.

[1] **Կիրակոս Գանձակեցի**, գլ. ԻԵ, էջ 139:

«…Այլ և զամենայն արուեստագէտս եթէ ի քաղաքս և եթէ ի գիւղս՝ զամենայն ի հարկի կացուցին. այլ և ծովակս և զլիճս ձկնորսաց, և զերկաթահանս և զդարբինս և զշպարարս և զի՞ պետոյ է մասնաբար ասել… և զամենայն աղահանսն առին որ ի Կողբ, և որ այլ կողմանս: Նաև ի վաճառականացն բազում ինչ ուսեալ և շահեալ, կուտեցին բազում գանձս ոսկոյ և արծաթոյ և ականց պատուականաց»[1]:

Կիրակոս Գանձակեցու այս վկայությունը ոչ միայն նախանյութի վերամշակման տեսակետից ուշագրավ է, այլև բնական հարստությունների շահագործման և առևտրական կապիտալի մասին մի հետաքրքիր փաստ է:

Դարբինները և ներկարարները հիշատակելուց հետո պատմիչը պետք չի տեսնում մանրամասն տալ գոյություն ունեցող արհեստավորների ցուցակը. «Զի՞ պիտոյ է մասնաբար ասել»:

Եթե արտադրության սուբյեկտների՝ արհեստավորների մասին չունենք մանրամասն տեղեկություններ, ապա ունենք նրանց արտադրույթների, օբյեկտների մասին մի շարք վկայություններ, որոնք անմիջական փաստեր են նրանց արտադրողների մասին:

Իստախրի և Իբն Հաուքալ արաբ պատմիչներից իմանում ենք, որ Դվին քաղաքը իր հյուսվածեղեններով նշանավոր էր[2]: Նրա, այսպես կոչված, մարիցի հագուստները և կերպասները (այծի մազից կամ ազնիվ բրդից պատրաստված), ինչպես նաև գորգերը, բազմոցները, քողերը, վարագույրները մեծ համբավ էին վայելում: Մայաֆարիքինին հայտնի էր իր անձեռոցներով:

Անիում գտնվել են մետաքսե, ասեղնագործված հագուստներ, քողեր և գոտիներ, որոնք իրենց թանկարժեք և նուրբ աշխատանքով զարմանք են առաջ բերում[3]:

Մարկո Պոլոն, իր հայտնի գրքի 20-րդ գլխում խոսելով Թուրքմենիայի մասին (այժմյան Թուրքիան), մեզ տալիս է այնտեղ բնակող հայերի մասին շահեկան վկայություններ: Նրանք պարապում են «առևտուրով և արվեստներով»,- ասում է,- շինում են ամենանուրբ և աշխարհի ամենագեղեցիկ գորգերը: Գործում են ճոխ և բազմագույն մետաքսյա կերպասներ: Պատմիչը ավելացնում է. «Եվ բավականին ուրիշ բաներ ևս»[4]: Կիրակոս Գանձակեցիի նման կարճ է կապում:

---

[1] **Կիրակոս Գանձակեցի**, գլ. ԾԵ, էջ 210:

[2] **Իբն Հաուքալ**, էջ ՀԴ։. **Իստախրի**, էջ ՀՀՀ. **Cheref-Ouddine** I, էջ 172:

[3] **Ն. Մառ**, Անիի ավերակները, «Արարատ», № 8, 1911, էջ 659:

[4] "… Et les autres gens sont Hermins et Grecs (Armèniens et Grecs) qui mellêement (du'une manière mêlèe) demeurent avec eux (Turquemans) en villes et en chateaux, et vivent de merchandise et d'ars (arts), car il iabourent (travaillent) les plus fins tapis et plus beaux de monde. Encore il labourent draps de soie de diverses couleurs moult beaux et moult riches, en moult grand quantitè, et d'autres choses assez". Le livre de Marco Polo par M. G. Pauthier, Paris, 1865. I, Ch. XX-ի, 35-37. Մարկո Պոլոյի՝ Թուրքիայի հայերի մասին տված տեղեկությունը XIII դարի 50-ական թվականներին հաստատվում է նաև ուրիշ մի ճանապարհորդի կողմից: De la Turqie, vous saurez que la dizième partie des habitants n'est pas sarrazine, presque tous sont Armèniens et Grecs". Guillaume de Rubrouck, Rècit de son voyage, Paris, 1877, p. 294-295.

Մարկո Պոլոյի այս վկայությունները, մեր կարծիքով, շարունակությունն են այն դրության, որ երկու դար առաջ ֆեոդալական Հայաստանում գոյություն ուներ, և քաղաքական այլազան դեպքերի բերումով մասնավորաբար քաղաքի ազգաբնակությունը գաղթում էր Հայաստանից դուրս՝ իր հետ տանելով իր արհեստները:

XIV դարի առաջին կիսում Առաջավոր Ասիայում ճանապարհորդություն կատարած Իբն-Բատուտահից իմանում ենք, որ Երզնկա քաղաքը այդ ժամանակաշրջանում անվանի է եղել իր կերպասներով, որոնք իր անունով կոչվելիս են եղել[1]:

Բերված այս վկայությունները ցույց են տալիս որոշակի, թե Հայաստանը հյուսվածեղենի ասպարեզում խոշոր դեր կատարել է:

Հյուսվածեղենի հետ սերտ առնչություն ունեցող ներկարարությունը նույն համեմատությամբ գտնվել է ծաղկած վիճակում: Դվին պատրաստված «քիրմիզ» ներկը արաբ պատմիչների կողմից քանիցս գովասանքի առարկա է դարձել:

Դվինից մի քանի կմ հեռավորության վրա գտնվող Արտաշատը իր ներկարաններով այնքան էր նշանավոր, որ Բալատուրին կոչել է «կարմիր գույնի գյուղ» (qarja elqirmiz)[2]: Համաձայն Իբն Ֆաքիհի՝ Հայաստանում կար նաև Rubia tinctorium[3]: Կիրակոս Գանձակեցիի մոտ հիշատակված «շպարարները» այն արհեստավորներն էին, որոնց զբաղմունքն էր կերպասները ներկել:

Կիրակոս Գանձակեցին մեզ խոսում է որոշակի դարբինների և երկաթահանքերի գոյության մասին: Մետաղագործության ասպարեզում ունենք նույնպես բավականին վկայություններ, որոնք ցույց են տալիս արհեստավորական այս ճյուղի բավականին առաջացած վիճակը:

Երբ VIII դարու երկրորդ կիսում Արտավազդ Մամիկոնյանը արաբների դեմ ապստամբություն էր սարքում, գնում է Դվին մայրաքաղաքը.

«… Եվ ստանայր անդ զէնս և անօթս (զանօթս) պատերազմի, և վառէր զինքն զրահիւք և սաղավարտիւք և ամենայն սպառազինութեամբք…»[4]:

Նկատի ունենալով մետաղագործության առաջացած վիճակը՝ մենք հիմք ունենք ընդունելու, որ Արտավազդ Մամիկոնյանի գնած այս զենքերը Դվինում պատրաստվել են:

Ն. Մառի՝ Անիում կատարած հետախուզությունները ցույց են տվել, որ

---

[1] "…Arzendjan possède des marchès bien disposès, on y fabrique des belles ètoffes, qui sont appelèes de son nom". Voyage d'lbn Batoutah (1325-1349 թթ.). T II, p. 294, , Paris, 1854, հմմտ. նաև **Marco Polo**, ch. XXI, p. 37-38:

[2] **Բալադուրի**, I էջ ۲۸, հմմտ. **H. Topdschian**, Die Iunere Zustände, էջ 46:

[3] **Իբն Ֆաքիհ**, էջ ۲۹۸, գորգաշինության և քիրմիզ ներկի մասին հմմտ. նաև **Fr. Stüwe**, Die Haudels züge der Araber unter den Abbassiden Berlin, 1836, էջ 184:

[4] **Ղևոնդ**, գլ. ԼԴ, էջ 138:

պղինձի ձուլարաններ գոյություն ունեցել են[1]:

Պղնձահանքերի շահագործության մասին 1247 թվի Զուխտակ վանքի արձանագրության մեջ ունենք հետևյալ վկայությունը.

«Կամաւն Այ (ես) տէր Յորդանան շինեցի զեկեղեցիս ի թվին Ողզ (1247 թ.) իշխանութամբ Աւագին ողորմութեամբ և տաւք Պղնձահանացն Աստուածածնի...»[2]:

Վերև հիշած Իբն Բատուտահ ճանապարհորդից տեղեկանում ենք, որ Երզնկայում եղել են պղնձի հանքեր, որից պատրաստելիս են եղել անոթներ և ժամանակի լամբարները[3]:

Մետաղագործության մի ճյուղն էր կազմում նաև ոսկերչությունը, որ Հայաստանում հասել էր զարգացման բարձր աստիճանին[4]:

Ն. Մառը պղնձի ձուլարանների մասին խոսելիս հայտնում է նաև, որ Անիում գոյություն ունեցել են աղյուս և անոթներ պատրաստելու գործարաններ[5]: Պետական թանգարանի Անիի բաժնում ցուցադրված անոթները մի մի հուշարձաններ են այս մասին:

Աղյուսի պատրաստությունը սերտորեն կապված է շենքերի շինության հետ: Մինչև մեր օրերը կանգուն և քայքայված եկեղեցիները, վանքերը, բերդերն ու պարիսպները մի մի կենդանի կոթողներ են այս բնագավառում ձեռք բերված հաջողությունների մասին[6]: Յո. Ստրիժիգովսկին, որ հայկական ճարտարապետության երկու հատոր մի ընդարձակ ուսումնասիրություն է

---

[1] **Ն. Մառ**, Անիի ավերակները, «Արարատ», № 8, 1911, էջ 660-62, քաղաքի արդյունաբերության զարգացման մասին հմմտ. նաև **И. Орбели**, Развалины Ани, “Нева” ամսագրում, № 5, 1911, էջ 440-41:

[2] **Կ. Կոստանյանց**, Վիմական տարեգիր, էջ 92:

[3] Voyages d’Ibn Batoutah, frad. fr. Par C. Defremèry p. 294 “… I l y a des mines de cuivre avec lequel on fabrique des vases, ainsi que baïcons”, 263-64 էջի վրա “baïcon” բառի մասին հետևյալ բացատրությունն է տալիս. “On appellee ainsi une espèce de colonne ou candèlabre de cuivre portè sur trois pieds, à son extrèmitè supèrieure il a une sorte de lampe, aussi de cuivre, au milien de laqnelle il y a un tuyau pour Ia mèche. Cette lampe est remplie de graisse fondue, et on place à côtè des vases de cuivre, pleins de graisse, et dans lesqu els se trouvent des ciseaux pour arranger les mèches”:

[4] **H. Topdschian**, Die Innere Zustände, էջ 45-46. **I. Mourier**, L’art religieux au Caucasse, 1887, «Հանդէս ամսօրեայ», II, 1888, էջ 46-50:

[5] **Ն. Մառ**, Անիի ավերակները, «Արարատ», № 8, 1911, էջ 660-62:

[6] Երկրաչափական գիտելիքների ասպարեզում ձեռք բերված փորձության մասին արժե հիշատակել Տաթևի եկեղեցիի մոտ գտնվող սյունը. «…Ահա զայս իսկ աւարտեալ զամս մետասան՝ կանգնէ և մերձ եկեղեցւոյն հանդէպ դրանն հարաւոյ սիւն մի զարմանալի յանուն սրբոյ Երրորդության ի մանր քարանց պատուաձեալ ի չափ 30 կանգնոյ»: **Ստեփանոս Օրբելյան**, I, գլ. ԽԱ, էջ 270: “Cette colonne qui s’èbranle quand s’appuie dessus, subsiste cncore: elle a ètè vue par Chahnazariantz et par M. Abich qui n’a pu m’en sxpliquer le mècaniusme”, Broset, I, p. 134, note 7. Histoire de la Siunie, հմմտ. այդ սյունի մասին նաև **Վ. Բաստամյանց,** Մխիթար Գոշի «Դատաստանագիրք», էջ 92, ծանոթ. 162:

նվիրել, նույնիսկ գալիս է այն ենթադրության, որ Արևմտյան Եվրոպայի վերածնունդի ճարտարապետական ոճը նախ Հայաստանում է զարգացել[1]:

Ասողիկ պատմիչը մեզ հայտնում է, որ 989 թվին Կոստանդնուպոլսում պատահած երկրաշարժի պատճառով կործանած Սոֆիա տաճարի վերակառուցման օրինակը տալիս է մի հայ ճարտարապետ՝ Տրդատ անունով.

«Այլ անդ դիպեալ ճարտարապետին հայոց Տրդատայ քարագործի՝ տայ զօրինակ շինուածոյն, իմաստուն հանճարով պատրաստեալ զկաղապարս կազմածոյն և սկզբնաւորեալ զշինելն. որ և գեղեցկապէս շինեցաւ պայծառ քան զառաջինն»[2]:

Վասպարականում Գագիկ I-ին օրով կատարված շինարարությունների նկարագրությունները որոշակի ցույց են տալիս այս ասպարեզում ձեռք բերված հաջողությունները[3]:

Շինարարական ասպարեզում հիշատակության արժանի են ջրասակավ Հայաստանում ոռոգման ասպարեզում կանալների ցանցը: Շատ վաղ ժամանակներից հանդիպում ենք այս բնագավառում արտադրված և մինչև մեր օրերը պահված մնացորդներին[4]: X դարուն վերաբերող վկայություններ ունենք այս մասին Ստեփանոս Օրբելյանի մոտ[5]: Հետագա դարերի մասին կան նաև այլ վկայություններ[6]:

Շինարարության ասպարեզում կատարված այս աշխատանքները սերտորեն կապված էին փայտի վերամշակման ասպարեզում գոյություն ունեցող արհեստների զարգացման հետ: Հովհաննես Կաթողիկոսի մոտ հիշատակված «հյուսանաց մամուլը» և Թովմա Արծրունիի մոտ գործածված «հյուսնական գործյաց» բառերը ցույց են տալիս հյուսնության գոյությունը[7]:

Սուրիացի պատմիչ Դրնիի մոտ ունենք որոշ տեղեկություններ, որոնք ավելի նախորդ դարերին են վերաբերում և ցույց են տալիս միաժամանակ հյուսնության արհեստի զարգացման որոշ աստիճանը: Կամախի պաշար-

---

[1] **Strzygowski**, Die Baukunst d. Armenier in Europa, 2 Bde., Vien, 1918.

[2] **Ասողիկ**, III, գլ. ԻԷ, էջ 251:

[3] **Թովմա Արծրունի**, III, գլ. ԻԹ, էջ 252 շար.:

[4] Հայաստանի կանալիզացիայի մասին հմմտ. **W. Belck**, Z.f. Ethnologie 31 Bd., 1899, S. 237: Հեղինակը հետաքրքիր տեղեկություններ է տալիս խալդական ժամանակի վերաբերյալ Վան, Բերկրի, Բայազետ քաղաքների ոռոգման ցանցի մասին: Կանալիզացիայի տեխնիկայի մասին հմմտ. նույն հեղինակի հոդվածը Jahrb. Fraukf. Vergl. f. geographie u. Statistik s. 64-65, S. 127-37:
Վերջին ժամանակներս պեղումների ընթացքում Արագած լեռան շրջանում հայտնաբերված ոռոգման ցանցի մասին տե՛ս Ա. Քալանթարի հոդվածը «Նորք» ամսագրում, № 5-6, էջ 207-232:

[5] **Ստեփանոս Օրբելյան**, գլ. 48, գլ. 49:

[6] **Մխիթար Այրիվանեցի**, էջ 58, Մոսկվա, 1860, Վիմական տարեգիր, էջ 39 և 164:

[7] **Հովհաննես Կաթողիկոս**, գլ. ԽԹ, էջ 300, **Թովմա Արծրունի**, III, գլ. ԻԹ, էջ 256:

ման ժամանակ պատմիչը հաղորդում է, որ Աբբասը հրամայում է հայ սայլապաններին մայրի փայտ բերել և հրամայում է հյուսներին մեքենաներ շինել. այդ մեքենաները գործ է ածում ամրությունը քանդելու[1]:

Բացի շինարարական և պատերազմական ասպարեզներից՝ հյուսները զբաղվում էին փոխադրական միջոցներ կառուցելու թե՛ ցամաքի, թե՛ լիճերի վրա: Ցամաքի վրա սայլերն էին, իսկ լիճերի վրա՝ նավեր: Լիճերի վրա կատարված նավագնացության մասին ուշագրավ վկայություններ ունենք թե՛ Թովմայի պատմությունը շարունակողի, թե՛ Հովհաննես Կաթողիկոսի մոտ, այդ վկայությունները Վանի և Սևանի լիճերի մասին են.

«…Բազում նաւաց յօրինեալ (Գագիկ I Արծրունի) խաղաղ և անքոյթ նաւահանգիստ»[2]:

«Եւ ապա նաւակառույց լեալք սրավար թիակօք իբր ի տապանի ինչ երթեալ զօղեալ ամրանային ի Սևան կղզւոջ...»[3]:

Գետերի վրա կատարված նավարկության մասին «Վիմական տարեգրի» արձանագրություններում կան ուշագրավ վկայություններ[4]:

Այս բոլորը ապացուցանում են, որ հյուսնությունը պետք է լիներ բավականին զարգացած աստիճանի վրա: Եվ այս հասկանալի է միանգամայն այն հիմնական պատճառով, որ փայտը տնտեսության այս ֆազում կազմում էր հիմնական նախանյութը:

Այս կերպ տեսնում ենք, որ մասնավորաբար քաղաքների ազգաբնակության որոշ մասը՝ որպես արհեստավորներ, միայն պարապել են նախանյութի վերամշակությամբ և կամ շինարարական ասպարեզներում: Վերև ասածներից պարզ կերպով հետևում է, որ ֆեոդալական Հայաստանում բացառաբար զարգացել են հյուսվածեղենի, մետաղագործական և ճարտարապետական ճյուղերը: Վերին աստիճանի հետաքրքրական էր իմանալ, թե այդ արհեստավորական ճյուղերը ինչպիսի ստորաբաժանումներ և մասնագիտականացումներ ունեցել են: Արհեստների զարգացման չափը իմանալու տեսակետից այս հանգամանքի պարզաբանումն ունի խոշոր նշանակություն: Մինչ այժմյան փաստերը հնարավորություն չեն տալիս այդ երևան հանել:

Ինչ վերաբերում է բնական հարստությունների շահագործմանը, կասկածից դուրս է արծաթահանքերի, պղնձահանքերի և երկաթահանքերի գոյությունը: Սրանց կողքին հատկապես պետք է հիշատակել աղահանքերի շահագործումը, որոնցով այնքան հարուստ է եղել Հայաստանը[5]:

---

[1] IV-me partie de Chronique de Denys de Tel Mahrè, p. 74.

[2] **Թովմա Արծրունի**, IV, գլ. Է, էջ 294. հմմտ. նաև III, գլ. ԻԹ, էջ 257:

[3] **Հովհաննես Կաթողիկոս**, գլ. ԽԷ, էջ 287, գլ. ԿԷ, էջ 444:

[4] «...Ինն հարիւր ի Կարբին գետերէն և նաւերէն...» և կամ «...Եկի ի սուրբ ուխտս, ետու Շամեա ջաղացները, Երասխի նաւ…», Վիմական տարեգիր, էջ 6, 8:

[5] **H. Topdschian**, Die Innere Zustände, p. 45.

Արտադրության այս ճյուղը ի՞նչ չափով էր զարգացել, և կամ ազգաբնակության ո՞ր մասն էր ընդգրկում, առայժմ հնարավորություն չունենք այս մասին ո՛չ ուղղակի, ո՛չ անուղղակի ճանապարհներով որոշ եզրակացությունների հանգելու: Սակայն, տրված լինելով տեխնիկայի համեմատաբար ցածր աստիճանը, կասկած չի կարող լինել այն մասին, որ հանքային այս շահագործումները գտնվում էին նախնական աստիճանի վրա: Իսկ այդ հանքերի շահագործումը տեխնիկայի զարգացման այդ աստիճանի վրա հնարավոր էր միայն արտադրական աշխատանքի ստրկացումով[1]:

Դընինի մոտ ունենք ուշագրավ վկայություն օրավարձով աշխատող դաշտային բանվորների մասին, որից պարզ երևում է այն սոսկալի կեղեքումը, որ տեղի է ունեցել Միջագետքում VIII դարի երկրորդ կեսին:

«Նրանք (կալվածատերերը),- ասում է պատմիչը,- օրավարձ տալիս էին 5 որոլ[2] կամ ամենաշատը տասը: Այսպես հնձել տվին իրենց առատ հունձքը՝ առանց խոճալու այդ դժբախտների ուժերին, նույնիսկ հագենալու չափ չոր հաց չէին տալիս՝ ոչ թե նվազ ունենալու համար, այլ նրա համար, որ չար կամեցողություն ունեին»[3]:

Ուստի արտադրության ասպարեզում ամենից կեղեքվածները հանդիսանում են նրանք, ովքեր, զուրկ լինելով արտադրական միջոցներից, ստիպված էին լոկ իրենց աշխատանքի ուժով ապրելու:

Վերև մենք ասացինք, որ հնարավորություն չունենք առանձին արհեստների մեջ առաջացած մասնագիտացումը, արտադրական ուժերի զարգացման չափը երևան հանելու: Եթե ուղղակի վկայություններ մեզ հնարավորություն չեն տալիս այդ անելու՝ արդյո՞ք մի ուրիշ անուղղակի ճանապարհով հնարավոր չէր այդ մասին մի ընդհանուր գաղափար կազմել:

բ) Աշխատանքի արտադրողականությունը անմիջականորեն կախյալ է արտադրական ուժերի զարգացման չափից: Ուստի, եթե կարողանանք աշխատանքի արտադրողականության մասին մի բան ասել, այն ժամանակ հնարավոր կլինի երկրորդ անծանոթը որոշ չափով հայտնաբերել:

Ապրանքափոխանակության շրջանում աշխատանքի քանակական և

---

[1] Այդ ստրկացումը և գործի դրված կեղեքումները անասելի չափերի էին հասնում, երբ հանքատերերը արտադրույթի մեջ տեսնում էին անմիջական փոխանակական արժեքը դրամի ձևով: Հմմտ. այս մասին **K. Marx**, Das Kapital, III, գլ. 8, էջ 185:

[2] Որոլի՝ VIII դարում ունեցած արժեքի մասին ձեռքի տակ տվյալներ չունենք: Հայտնի է, սակայն, որ Հին Հունաստանում եղել է փոքր երկաթյա կամ պղնձյա դրամ և արժել է 6 որոլ=1 դրախմ՝ 13-18 ֆենիգ արժողությամբ: Ծանրությունը տատանվել է 0.7-1 դրամի միջև:
Սակայն, հետագայում Սուրիայի և Եգիպտոսի թագավորների կողմից, երբ դրախմեն կեղծվել է, անտարակույս, որոլը ևս կորցրած պիտի լիներ իր հին արժեքը:
1833 թվի Հունաստանում կիրառված դրամական չափերի հիման վրա 1 որոլը արժեր 0.036 մարկ: Հմմտ. Brockenhaus-ը:

[3] VI ieme partie Chronique de Denys de Tel-Mahrè, p.182-183.

որակական արտադրողականությունը ուղղակի արտահայտվում է արտադրության պրոցեսի տևողությամբ և անուղղակի՝ արտադրույթ-ապրանքի շուկայում ունեցած գինով:

Ուստի մեզ հարկավոր է՝

1) պատմական փաստերով ցույց տալ, թե արտադրական պրոցեսը որքա՞ն է տևել,

2) արտադրույթ-ապրանքը ի՞նչ գինով է գնահատվել:

Մեր կարծիքով՝ այս է այն ուղին, որով պետք է ընթանանք ուղղակի վկայությունների բացակայության դեպքում:

1) Արտադրողական պրոցեսի տևողության մասին ունենք բավականին առատ տեղեկություններ ճարտարապետական կառուցումների ասպարեզում: Երբ նկատի ունենանք այն հանգամանքը, որ նման կառուցումներ տարբեր ճյուղերի արհեստավորների համադրական արտադրությունն է, այն ժամանակ մի եկեղեցիի կամ վանքի շինության արտադրական պրոցեսի տևողության մասին մի վկայություն մեզ որոշ չափով գաղափար կտա մի շարք արհեստների մասին:

Հայտնի Տաթևի եկեղեցիի շինությունն սկսվում է 895 թվին և ավարտվում է 906 թվին[1]: Ուրեմն գործ է դրվում 11 տարվան մի ժամանակամիջոց:

1029 թվի Մարմարաշենի արձանագրությունից տեղեկանում ենք, որ այդ վայրում եկեղեցին կառուցվում է 43 տարվա ընթացքում[2]:

Ջալալ Դովլա Հասանի՝ 1240 թվին թողած մի արձանագրությունից իմանում ենք, որ Գանձասարի եկեղեցիի շինության վրա դրվում է 22 տարի[3]:

Անշուշտ, արտադրության պրոցեսի այս երկար տևողության վրա կարող էին ազդել և քաղաքական արտաքին պատճառներ:

Արտադրական պրոցեսի տևողության մասին ունենք հետաքրքիր վկայություններ գրքի արտադրության մասին:

Մի Աստվածաշնչի 1330 թվի հիշատակարանում կարդում ենք.

«…Ջսա սկսեալ ի դեկտեմբերի աւարտեցաւ ի հոկտեմբերի, ի ձեռն երկու քաջ քարտուղարի»[4]:

Ուրեմն երկու «քաջ քարտուղարներ» կարողանում են 10 ամսվա ընթացքում մի Աստվածաշունչ արտագրել: Իսկ այդ Աստվածաշնչի կազմության համար 40 օր է հարկավոր լինում:

1314 թ. մի գիրք արտագրողի հիշատակարանը հետաքրքիր է այն տեսակետից, որ այնտեղ պարզվում են այն պայմանները, որոնց մեջ տեղի է

---

[1] **Ստեփանոս Օրբելյան**, I, գլ. ԽԱ, էջ 270, 269 և գլ. ԽԳ, էջ 1280:

[2] **Կ. Կոստանյանց**, Վիմական տարեգիր, էջ 16/17:

[3] Նույն տեղում, էջ 81/82. այս եկեղեցիի շինության մասին Կիրակոս Գանձակեցիի մոտ կարդում ենք. «…Եւ յոլով ամս աշխատեն ի նմա», գլ. ԻԹ, էջ 146:

[4] **Ղ. Ալիշան**, Հայապատում, էջ 547:

ունեցել այդ արտադրությունը: Մեր կարծիքով՝ այս վկայությունը մասնակի մի պարագա չէ այդ ժամանակների արտադրական պայմանների համար: Այդ հիշատակարանում կարդում ենք.

«…Տես, թէ քանի աշխատեցայ
Ես Մխիթար գրիչ սորա,
Թուղթս անկոկ ու գրիչ չկայ,
Աւուրքըս ցուրտ ու պարզկա,
Չարդախս բարձր ու կրակ չկայ,
Դոնիրս չոր ու սպաս չկա,
Եւ այն Գլաձորն ո՞վ գիտենայ,
Ես յոյժ նեղած ու ճար չկայ»[1]:

Արհեստավորական ձևը արտադրության մեջ առաջացրել է տնտեսական այն ոգին, որ վարպետը ապրում էր իր արտադրույթի հետ: Այդ արտադրույթը ամբողջ իր ստեղծագործությունն էր, և երբ արտադրության որակական արժեքն էր գերակշռում, այն ժամանակ մի ամբողջ մարդկային սերունդ արտադրական ամենանպաստ պայմաններում գործ էր դրվում նման արտադրույթների վրա: Ահա թե ինչով պետք է բացատրել ֆեոդալական Հայաստանից մեզ հասած վանքերի կամ եկեղեցիների հիացմունք պատճառող զարդարուն քարե խոյակների և ձեռակերտ փայտե քանդակների այդ արտադրության պատճառը: Իսկ այս բոլորին եթե ավելացնենք վարպետի պատվո նախանձախնդրությունը (արդյունք արտադրության-արհեստավորական ձևին), այն ժամանակ մեզ համար պարզ կլինի արտադրության պրոցեսի այդ անհավատալի լինելու չափ տնողությունը:

Թեև արհեստավորական այլ ճյուղերի արտադրական պրոցեսի տնողության մասին պատմական վկայություններ չունենք, սակայն, մեր կարծիքով, նկատի ունենալով ներքին ապրանքափոխանակության զարգացման այն աստիճանը, որի մեջ գտնվում էր ֆեոդալական Հայաստանը, դժվար թե արտադրական այլ ճյուղերում տարբեր պատկեր լիներ:

2. Ֆեոդալական Հայաստանի ապրանքների գների հայտնաբերումը դեռևս կարոտ է հատուկ ուսումնասիրությունների: Այսպիսի մի աշխատություն կլուսաբաներ ոչ միայն մեր առաջադրած հարցը, այլև կպարզեր աշխատավարձի խնդիրը, որ մեզ հնարավորություն կտար աշխատավոր դասի սոցիալական դրությունը պարզելու:

Առայժմ մենք բավականանում ենք տալ մի քանի օրինակներ այս մասին:

Համաձայն Իբն-Հաուքալի վկայության՝ հայկական գոտիները արժել են 1-10 դինար[2]: Ուրեմն մի գոտիի գինը տատանվում էր 11.66-116.60 մարկի սահմաններում:

---

[1] **Ղ. Ալիշան**, Հայապատում, էջ 526:

[2] Նույն տեղում, էջ 526:

1253 թվի Հաղբատի արձանագրության մեջ կարդում ենք.

«… Ես՝ Շնորհաւոր Տփխիսեցի…, միաբանեցաք Հաղբադայ Ս. Նշանիս և տուաք հարիւր դահեկան ի շինության ժամատան…»[1]:

Մի հայ վանականի գնահատման վրա թաթարների Մանգու խանը 1254 թվին քանդված մի եկեղեցիի վերաշինության համար նվիրում է 200 յասքո:

«… Մանդուն հարցրեց հետո նրան (հայ վանականին), թե ինչ գնով պիտի կարողանար այդ (եկեղեցին) վերաշինել. ան պատասխանեցի, թե 200 յասքոյի, այսինքն՝ 2000 մարքի»[2]:

Գրքի արտադրության ասպարեզում գտնում ենք հետևյալ վկայությունը, որ 1330 թվին է վերաբերում:

«Բայց խարճն, որ եղև այս Աստվածաշունչ[3] գրոցս՝ ընդ ամենայն միահամուռ 2200 դրամ է»:

Ապրանքների գները որոշելու ժամանակ, ինչպես տեսնում ենք, մեծ կարևորություն է ներկայացնում խնդրո առարկա ժամանակաշրջանում դրամի արժեքի ճշտումը: Մի հարց, որ դեռևս հատուկ ուսումնասիրության կկարոտի, մի կողմից ուղղակի վկայությունների բավարար չափով գոյություն չունենալը, մյուս կողմից դրամական արժեքների ճշտված չլինելու պարագան մեզ հնարավորություն չեն տալիս ապրանքների գների մասին իրական գաղափար կազմել[4]:

Սակայն, կարելի է ասել, որ արհեստավորական արտադրության աս պարեզում, տրված լինելով նյութի թանկությունը և արտադրական պրոցեսի երկար տևողությունը, արհեստավորական ապրանքների գիները անցյալում շատ ավելի բարձր էին գնահատվում, քան երկրագործական և անասնապահական արտադրույթները, և որ վերջիններս, համեմատած ներկայի գիների հետ, շատ ցածր էին[5]:

---

[1] **Կ. Կոստանյանց**, Վիմական տարեգիր, էջ 98:

[2] **Guill. De Rubrouck**, Rècit de son voyage, Paris, 1877, p. 180:

[3] **Ղ. Ալիշան**, նշվ. աշխ., էջ 547: Ալիշանը 2200 դրամի արժեքի մասին հետևյալն է նկատում. «Այս գումարն կընայ ըլլալ ըստ նյութական արժեքից 1350 ֆր., բայց ըստ արժեքից արծաթոյ ժամանակին՝ ավելի քան զ 4000»: Այս վկայության մեջ «խարճ» ընդհանուր բառի տակ պետք է հասկանալ նաև թղթի և այլ նյութերի համար ծախսվածը: 1427 թվի մի ուրիշ վկայությունից տեղեկանում ենք, որ մի Աստվածաշնչի համար ծախսվում է 2000 դահեկան (դեկան՝ տրված լինելով թուղթ ու անհրաժեշտ նյութերը, **Ղ. Փիրղալեմյան,** Նոտարք, էջ 84, 160/161, 199):

[4] Թադևոս Ավդալբեգյանը, հիմնվելով «Վիմական տարեգրի» արձանագրությունների մի շարք տվյալների վրա, կատարել է մի հետաքրքիր ուսումնասիրություն, որ մատնանիշ է անում այն միջոցը, թե ինչպես հնարավոր է ֆեոդալական Հայաստանի ապրանքների գները ճշտել XI դարուց մինչև XIII դարու ժամանակաշրջանում, տե՛ս «ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի տեղեկագիր», № 2, Երևան, 1927:

[5] Պրոֆ. Հակ. Մանանդյանը («ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի տեղեկագիր», № 1, 1926, Երևան, էջ 11), հիմնվելով Կրեմերի տված տեղեկության վրա, ընդունում է, որ 632-634 թվին Արաբիայում մի ոչխարը գնահատվել է 10 ֆր.: Սրանից եզրակացնում է.

Ապրանքների արտադրությունը պայմանավորված է շուկայի պահանջով, վերջինն էլ՝ իր հերթին ազգաբնակության քանակով: Մեր կարծիքով՝ ֆեոդալական Հայաստանի ազգաբնակությունը չէր կարող մեծ լինել: Ազգաբնակության քանակը պայմանավորվում է տվյալ ժամանակաշրջանի արտադրական ուժերի զարգացման չափով: Ֆեոդալական տնտեսության ժամանակաշրջանում արտադրական ուժերի զարգացումը, ինչպես տեսնում ենք, գտնվում էր ցած աստիճանի վրա: Մյուս կողմից մեզ ծանոթ են պարբերական այն խուժումները, որոնց ենթակա է եղել ֆեոդալական Հայաստանը: Սրանք առաջին հերթին անդրադառնում էին ազգաբնակության քանակի վրա: Եթե սրանց վրա ավելացնենք նաև հաճախակի համաճարակներն ու սովերը և առողջապահության բացակայումը, այն ժամանակ մեզ համար պարզ կլինի ազգաբնակության աճման դանդաղությունը: Համաձայն Կրեմերի ուսումնասիրության՝ պարզվում է, որ 622-1495 թվականները Սուրիայում, Իրաքում և Եգիպտոսում 94 անգամ խոշոր համաճարակներ են տեղի ունեցել[1]: Այս միայն արաբ պատմիչների և աշխարհագիրների գրի առածներն են. քանինե՞ր մեզ չեն հասել: Ուստի զարմանալի չէ, երբ մի շարք հայ պատմիչներ մեզ հաղորդում են այն սոսկալի սովերի և համաճարակների մասին, որոնց հազարավորներ զոհ էին գնում[2]:

Մի ուրիշ կարևոր հանգամանք խոշոր արգելք էր հանդիսանում ներքին շուկայի աճման: Ազգաբնակության ճնշող մեծամասնության, գյուղացիական դասի, գնողան կարողությունից զուրկ լինելու հանգամանքն էր այդ: Թե՛ ներքին և թե՛ արտաքին հարկերի ամբողջ ծանրությունը ընկնում էր արտադրող այս դասի վրա:

Մի կողմից արտադրական ուժերի զարգացման ցած աստիճանը, մյուս կողմից ոչ խիտ ազգաբնակությունը և գյուղացիական դասի գնողական կարողությունից զուրկ լինելու հանգամանքը խոշոր արգելքներ էին հանդիսանում արհեստավորական արտադրույթների համար ներքին շուկայի ընդլայնման:

Ո՞ւմ համար էին արտադրում այդ արհեստավորները և ի՞նչ չափով կապված էին շուկայի հետ:

«Որ դրամի իրական արժեքը կարող էր հին ժամանակներում ևս լինել բավական ցածր և համապատասխան մոտավորապես նորագույն ժամանակվա գներին որոշ տեղերում»: Արաբական հարկային քաղաքականության մասին մեր կատարած ուսումնասիրության մեջ (տե՛ս «Պետական համալսարանի գիտական տեղեկագիր», № 2, Երևան, 1927) երկրագործական և անասնապահական արտադրույթների մասին մեր վկայությունները (սուրիական աղբյուրից) այլ բան են ասնում: Կրեմերի բերած միակ վկայության վրա հիմնվելով՝ չի կարելի դրամի իրական արժեքի մասին նման մի ընդհանրացում անել: Մեր կարծիքով՝ այդ ընդհանրացումը տվյալ շրջանի տնտեսական կյանքի անհամապատասխան, սխալ մի ընդհանրացում է:

[1] **Alf. v. Kremer**, Die. Grosse Seuchen des Orients nach arabischer Quellen, S. 44, 49, 56, 59, 72, 76.

[2] **Ղ. Ինճիճեան**, Հնախօսութիւն, հատ. I, էջ 51, հատ. III, էջ 360/364:

գ) Մի կողմից արտադրված ապրանքների տեսակները, մյուս կողմից գյուղացիական դասի մասին մեր ասածները նկատի ունենալով՝ պարզվում է այն շուկան, որի համար սահմանված էին այդ ապրանքները, առաջին հերթին արտադրվում էր աշխարհիկ և հոգևոր իշխանների համար:

Երկար տարիների ծանր աշխատանքով արտադրված գորգերը սահմանված էին արքայական պալատների և իշխանական դղյակների շքեղացման[1], ոսկեթել և արծաթաթել մետաքսյա գործվածքները, ինչպես և դիպակները՝ իշխանական դասի «փափկասուն կանանց» զարդարելու:

Ոսկերիչները պատրաստում էին թագավորների և իշխանների համար թագեր, սուրեր, դաշույններ և իշխանական կանանց այլազան զարդեր: Այս վերջինին է ակնարկում Լաստիվերտցին, երբ նա պերճանքի հավելումը ամբարտավանություն է անվանում և ավելացնում՝ «կարի առաւել կանանց ազգի», որոնց համար անհրաժեշտ էին գինդեր, մատանիներ, ապարանջաններ և այլն: Այդ պերճանքի առարկաներից անմասն չէր մնում հոգևոր իշխանական դասը: Եկեղեցիների և նրա պաշտոնյաների համար պատրաստվում էին խնկամաններ, սկիհներ, խաչեր, Ավետարանի զարդեր և այլազան իրեր[2]: Սրանց վրա ավելացնենք նաև օտար իշխողների տրված թանկարժեք նվերները:

Դարբինի առաջին զբաղմունքն էր, մասնավորաբար քաղաքներում, ազնվականների և նրանց վասալ իշխանների համար զենքեր պատրաստել:

Շինարարության ասպարեզում հիմնական տեղ էր բռնում իշխանական դասի ապրանքների, եկեղեցիների և ամրությունների շինությունը:

Առևտրական կապիտալի ուժեղացման շրջանում հանդես էր գալիս մի նոր դասակարգ, որ իր կարգին հանդիսանում էր այդ արտադրողների սպառող:

Ինչ-որ Զոմբարտ եվրոպական միջին դարի համար ասում է, թե «… բոլոր մետաղագործների ճնշիչ մեծամասնությունը, հյուսվածեղենի ասպարեզում աշխատողների մեծ մասը, գրեթե ամբողջ ճարտարապետությունը, չխոսելով պերճանքի առարկաների մասին, իրենց արտադրույթները հարուստներին էին վաճառում»[3], նույնը կարելի է ասել նաև արևելյան ֆեոդալական երկիրների համար:

Այս կերպ որոշվում է այն շուկան, որի համար արտադրվում էին այդ ապրանքները:

Արհեստավորական դասի սոցիալական դրության պարզաբանման տեսակետից մեզ շահագրգռում է նաև այն հիմնական հարցը, թե արհեստավո-

---

[1] **Արիք**, էջ ۴۸, հմմտ. **H. Topdschian**, Die Jnnere Zustiaude, էջ 47:

[2] **H. Topdschian**, Die Jnnere Zustände, էջ 45: Երբ եկեղեցին տեղական շուկայում չէ կարողանում գտնել իրեն հարկավոր զարդը, այդ ճարվում էր այլ շուկաներից: Այս մասին պերճախոս օրինակ է Անիի Մայր եկեղեցիի համար Հնդկաստանից բերված «Պղլոր կանթեղը», տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 149:

[3] **W. Sombart**, Der Moderne Kapitalismus, Bd. I, p. 218.

րական արտադրության ձևը շուկայի հանդեպ զարգացման ի՞նչ աստիճանի վրա էր գտնվում:

Արհեստների շուկայի հարաբերությամբ պատմական զարգացումը ցույց է տալիս, որ նրանք անցել են հետևյալ չորս հիմնական ձևերից.

1. արտադրողներ, որոնք սպառողների տանն են աշխատում,

2. արտադրողներ, որոնք իրենց սեփական տան մեջ վերջին սպառողների համար օրավարձով են աշխատում, և այնպիսիներ, որոնք ուրիշ արտադրողների համար են աշխատում, ինչպես ներկարարները, ձուլիչները և այլն,

3. արտադրողներ, որոնք տեղական շուկայի համար են արտադրում. լինի այդ ապրանքի վրա, լինի որպես պահեստ,

4. վերջապես արտադրողներ, որոնք ավելի խոշոր շուկայի (միջերկրային) համար են արտադրում (արտահանման համար):

Այս չորս աստիճաններից ո՞րի վրա էին գտնվում ֆեոդալական Հայաստանի արհեստները:

Մխթար Գոշն իր «Դատաստանագիրքի» § 124-ը նվիրել է արհեստավորներին, այդտեղ ասված է.

«Արհեստաւորք անենայն ըստ որուն և իցեն արուեստի, եթե հատուածով գործիցեն և եթե վարձով, յորժամ ոչ ըստ հաճոյից տեառն գործեցին…»[1]:

«Դատաստանագիրքի» այս կանոնում ուշադրության արժանի են «եթե հատուածով գործիցեն և եթէ վարձով» դարձվածքը և «տեառն» բառը: Կարստը առաջինը թարգմանել է «sei es dass sie im Gesamtakkord oder in Stücklohn arbeiten», երկրորդը՝ «Arbeitsherr»: Պետք է ասել, որ Գոշի խմբագրությունը բավականին մութ է և կարող է արհեստավորական զարգացման այլազան ձևերին միանգամայն հարմարվել:

Նկատի ունենալով արհեստավորական մի քանի ճյուղերի զարգացումը՝ կարելի է նրանք դասել վերջին աստիճանին: Մասնավորապես հյուսվածեղենի ճյուղը, որի արտադրությունները՝ որպես «հայկական» կամ «Երզնկայի» կերպասներ, անվանի են եղել: Այս անվանումները առաջադրում են սույն ապրանքների օտար շուկաներ արտահանումը:

Եթե արհեստների որոշ ճյուղերում զարգացման այդ չափը ընդունենք, սա դեռ չի նշանակում բոլոր արհեստների համար: Հավանաբար արհեստի այլազան ճյուղերում այդ հիշված չորս աստիճաններն էլ հավասարապես գոյություն ունեին:

Ուրեմն ֆեոդալական Հայաստանի որոշ քաղաքներում արհեստավորական որոշ ճյուղեր հասել են իրենց զարգացման աստիճանին: Այժմ հարց է առաջանում՝ արդյոք արհեստների զարգացման այդ աստիճանի վրա

[1] **Վահան վարդապետ Բաստամյանց**, Մխիթար Գոշի «Դաստաստանագիրքը», § 124, էջ 436: Կարստը այս հոդվածը թարգմանում է այսպես՝ «In Betreff der Haudwerker im allgemeinen, welcherlei Handwerk sie ausubeu mögen, sei es dass sie im Gesammtakkord oder in Stücklohn arbeiten, falls sie das werk nicht nach dem Willen des Arbeitsherrn herstellen…»:

առաջացե՞լ են համքարական կազմակերպություններ, որոնք զուգընթաց են ընթացել տնտեսական այդ զարգացման:

դ) Եղիազարովը XVII դարում Հայաստանում համքարությունների գոյությունը ընդունում է[1]: Ս. Թարայանցը, Եղիազարովին հետևելով, գրում է.

«Հայտնի է արդեն, որ XVII դարում Հայաստանում գոյություն ունեին համքարությունները, որոնք բավական զարգացած էին: Բայց հավանական է, որ նրանք շատ ավելի առաջ էլ գոյություն են ունեցել հայ արհեստավորների մեջ, որովհետև համքարությունները, ինչպես հին ժամանակների ճանապարհորդներն են վկայում, վաղուց արդեն ծաղկում էին պարսիկների մեջ, և Հայաստանը հին ժամանակներում քանիցս գտնվել է Պարսկաստանի ձեռքին կամ գոնե նրա ազդեցության տակ»[2]:

Ինչպես տեսնում ենք, այստեղ պարսկական ազդեցության հարցն է դրվում: Մեր կարծիքով՝ ոչ թե ազդեցությունների հարց պիտի հարուցվեր, այլ հարկավոր էր արհեստավորական արտադրության զարգացումը պարզել: Եթե այդ կազմակերպությունների տնտեսական հիմքերը գոյություն չունենային, նրանք չէին կարող առաջ գալ: Եղիազարովի՝ XVII դարի համար համքարությունների Հայաստանում գոյություն ունենալու մասին ասածը մեզ կարող է ուղեցույց լինել նրանց հետքերը նախորդ դարերում փնտրելու տեսակետից:

Եթե ճիշտ է մեր ենթադրությունը, թե ֆեոդալական Հայաստանի քաղաքներում որոշ արհեստներ մեր մատնանշած զարգացման աստիճանին վրա էին գտնվում, ապա ուրեմն արհեստավորության ուրույն համքարություններում կազմակերպված լինելը մեզ անհավանական չի թվում:

Այս հարցի վերջնական լուսաբանման համար պեղումներին վերապահված է խոշոր դեր:

Մեր կարծիքով՝ այս տեսակետից ուշադրության արժանի է «քաղաքացի գլխաւորքը», որ, որքան մեզ ծանոթ է, մինչև այժմ ուշադրության չի առնվել:

Այս տերմինը գործ է ածում առաջին անգամ 1045 թվին Արիստակես Լաստիվերտցին, երբ մեզ նկարագրում է Անիի գրավումը բյուզանդացիների կողմից:

«… Իսկ քաղաքացի գլխաւորքն որ նստէին յԱնի…»[3]:

Նման մի վճռական րոպեի առթիվ (Անիի գրավումը սելջուկ թուրքերի կողմից 1064 թ.) գտնում ենք նույն տերմինը Կիրակոս Գանձակեցու մոտ.

«… Եւ որք գլխաւորքն էին ի քաղաքին»[4]:

---

[1] **Taraiantz**, das Gewerbe in Armenien, S. 54/55, հմմտ. նաև հարևան Վրաստանի համար **Gogitchayschwili**, Das Gewerbe in Georgien, S. 100:

[2] «Ազգագրական հանդես», գիրք III, Թիֆլիս, էջ 61-62:

[3] **Արիստակես Լաստիվերտցի**, գլ. Ժ, էջ 42:

[4] **Կիրակոս Գանձակեցի**, Գլ. ԻԵ, էջ 139:

Ովքե՞ր էին այս «քաղաքացի գլխաւորք»: Մեր կարծիքով՝ սա հատուկ մի տերմին է, որ առաջացել է արտադրական նոր փոխհարաբերություններից, քանի որ պատմիչը նախորդ երեսի վրա տալիս է երկու կուսակցությունների գլուխ կանգնող իշխանները և անմիջապես, առանց դեպքերի լուսաբանման, գործ է ածում «քաղաքացի գլխավորքը»:

Արժե հիշատակել այստեղ, որ հունարեն Նոր Կտակարանի «prespyteros» բառը V դարում հայերեն թարգմանվել է «գլխավոր»: Իսկ «prespyteros» մի շարք նշանակությունների կողքին նշանակել է նաև «երեց», «ամենից տարիքավորը»:

Մենք սրանից դեռևս չենք կարող եզրակացնել խնդրո առարկա քաղաքացի գլխավորները՝ որպես արհեստավորական դասի ներկայացուցիչներ: Անշուշտ, առևտրական կապիտալի ներկայացուցիչները պետք է ավելի գերակշռող դիրք գրավեին:

Ուշադրության արժանի է նաև մի այլ տերմին, որ գործ է ածվել Անիի՝ XIII դարին վերաբերող արձանագրություններում: Հայտնի են, որ միջնադարյան Եվրոպայի համքարական կազմակերպություններից կազմվել է քաղաքի խորհուրդ: Մեր ակնարկածը վերաբերում է նման մի խորհուրդի:

Պրոֆ. Հ. Օրբելիի հրատարակության տված՝ Անիի 1269, 1289 և 1290 թթ. վերաբերող արձանագրություններում կա «Երիցանի» տերմինը, որ գործ է ածվում որպես քաղաքի խորհուրդ[1]: Այս թվականներում քահանաները երեց չեն անվանվում:

1126 թ. Ապլավարի որդին, երբ գալիս է Անին գրավելու, այսպիսի մի ուշագրավ վկայություն ունենք.

«… Գայ ի խնդիր (Ապլավարի որդին՝ Փատլունը) հայրենի քաղաքն Անւոյ, և աղերսանօք խնդրէ յԱպոլեթէ և յաւագաց քաղաքին…»[2]:

1258 թ. Մուֆարգինի պաշարման առթիվ նույն պատմիչը գործ է ածում «… աւագ և գլուխ երիցանցն որ անդ…»[3] դարձվածքը:

Սրանց միանում է Ն. Մառի հետևյալ կարծիքը. «Անիի լիակատար ինքնավարությունը բնորոշվում է նույնպես ավագների այն խորհրդով, որը վարում էր քաղաքի բոլոր գործերը, և նրանց կարծիքը շատ անգամ ավելի նշանակություն էր ունենում, քան կառավարչի ցանկությունն ու հայացքը: Ավագների այս խորհուրդը, որի ծագման մասին առայժմ դեռ տեղեկություն չկա, համենայն դեպս գոյություն ուներ Շեղատյանների, վրացիների և Երկայնաբազուկների՝ Անիում տիրապետության ընթացքում»[4]:

---

[1] 1926 թ. ամռանը հնարավորություն եմ ունեցել Լենինգրադում հրատարակչի մոտ այդ արձանագրությունները կարդալու:

[2] **Վարդան,** Հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862, էջ 120:

[3] **Վարդան,** էջ 151:

[4] «Արարատ» ամսագիր, № 6, 1911, էջ 481, հմմտ. նաև **И. Орбели**, Развалины Ани, «Нева»

Համաձայն Ն. Մառի՝ այդ ավագների խորհուրդը հասնում է մինչև 1072 թ.: Ն. Մառը Անիի ինքնավարության մասին առաջին անգամ խոսել է թաթարական շրջանից մեզ հասած մի արձանագրության մեջ՝ «Որ եղև մայրաքաղաք Անի խասինջու»[1] նախադասության մեջ «խասինջու» բառը ստուգաբանելիս: Ն. Մառը այդ նախադասությունը թարգմանել է "Так как столица Ани сделалась удельным владением"[2]: Արդյոք Արիստակես Լաստիվերտցիի «քաղաքացի գլխավորք» դարձվածքի և կամ Կիրակոս Գանձակեցու «… Որք գլխաւորք էին ի քաղաքին…» պարբերության և այս ավագների խորհուրդի միջև գոյություն չունի՞ մի կապ:

Վերին աստիճանի կարևոր մի հարց, որի պարզաբանումը կարոտ է դեռևս նոր վկայությունների: Ինչպես վերև ասացինք, այս հարցի լուսաբանման տեսակետից խոշոր դեր ունեն անցյալի քաղաքների ավերակներում կատարվելիք պեղումները:

Ֆեոդալական Հայաստանի արհեստավորական-առևտրական քաղաքներում կար մի ուրիշ դասակարգ, որ, անկասկած, ավելի խոշոր դեր է կատարում, քան արհեստավորները:

Այդ դասակարգը բաղկանում էր առևտրական և վաշխառուական կապիտալի ներկայացուցիչներից:

ամսագրի № 5-ում, 1911, էջ 421, 425:

[1] **Կ. Կոստանյանց**, Վիմական տարեգիր, էջ 221:

[2] **Н. Марр**, Новые материалы по Армянской эпиграфике. Записки Вос. Отд. И. Р. Арх. Общ., т. VIII, стр. 77-80, СПб., 1893.

IV. ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՇԽԱՌՈՒԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

Ա

Առևտրական և վաշխառուական կապիտալները, որոնք անբաժան են միմյանցից, գոյություն են ունեցել դեռ շատ վաղ ժամանակներում: Այս երևույթը բացատրվում է այդ երկու կապիտալների բնույթով:

Երբ ուսումնասիրում ենք ֆեոդալական Հայաստանի քաղաքների բարգավաճումը, գյուղական և քաղաքային ազգաբնակության մեջ առաջացած փոփոխություններն ու հակադրությունները՝ ստիպված ենք ավելի հանգամանորեն կանգ առնել տնտեսական այս գործոնի վրա և ցույց տալ մի կողմից նրա պատմական պրոցեսում ստացած փոփոխությունը և մյուս կողմից վեր հանել այն դերը, որ նա կատարել է ֆեոդալական Հայաստանի հասարակական կյանքում:

«Որքան անզարգացած է արտադրությունը, նույն չափով էլ դրամական կարողությունը վաճառականների ձեռքում է կենտրոնանում, կամ վաճառականական կարողության մասնահատուկ ձև է հայտ գալիս»[1]:

Կարլ Մարքսի այս նկատողությունը, որը վերաբերում է առևտրական կապիտալ պատմական զարգացման պրոցեսին, որոշակի երևան է հանում այն դերը, որ այն կատարելու էր արտադրության դեռևս ոչ զարգացած աստիճանի վրա:

Իսկ այդ դերը ավելի մեծանում է, երբ հետևում ենք առևտրական կապիտալին արտադրական այն պայմաններում, երբ գոյություն ունեն էքստրեմներ: Մարքսը բացորոշ գրում է այս մասին.

«Այն օրենքը, որ վաճառականական կապիտալի ինքնուրույն զարգացումը կապիտալիստական արտադրության զարգացման աստիճանի հետ խոտոր է համեմատում, հայտ է գալիս ամենից ավելի միջնորդ վաճառականության (Zwischenhaudel) պատմության մեջ, ինչպես վենետիկցիների, ճենովացիների, հոլանդացիների և այլնի մոտ, որտեղ գլխավոր շահը տրվում է ոչ թե սեփական երկրի արտադրյթների արտածումով, այլ վաճառականական և տնտեսական տեսակետից չզարգացած հասարակությունների արտադրությթների միջնորդ հանդիսանալով: Այստեղ զտարյուն վաճառականական կապիտալն է՝ բաժանված էքստրեմներից՝ արտադրության երկրամասերից, որոնց միջև միջնորդի դեր է կատարում: Այս է հանդիսանում նրա կազմավորման գլխավոր աղբյուրը[2]:

Մարքսը այս և հետագա տողերում տալիս է առևտրական կապիտալի կազմավորման և զարգացման գլխավոր աղբյուրը: Տնտեսական զար-

---

[1] **K. Marx**. Das capital III_1, kap. 19 5. 310.

[2] Ibid, Das Kapital III, kap. 19. 5. 312/13, 314/15.

գացման այդ աստիճանի վրա առևտրական կապիտալը գտնվում էր մենաշնորհյալ լինելու դրության մեջ, և այս իսկ հանգամանքից ստեղծվում էր նրա համար վերին աստիճանի նպաստավոր հող:

Ֆեոդալական Հայաստանի արաբական շրջանում առևտրական կապիտալի կազմավորման և աճման մասին գաղափար կազմելու տեսակետից մեզ անհրաժեշտ է մի կողմից աչքի առաջ ունենալ երկրների այն կոմպլեքսը, որտեղ գտնվում էր ապրանքափոխանակության ծանրության կենտրոնը, և մյուս կողմից վեր հանել այն դերը, որը վիճակվել էր ֆեոդալական Հայաստանին երկրների այդ կոմպլեքսի մեջ: Միայն այդ ընդհանուր ֆոնի վրա հնարավոր կլինի ֆեոդալական Հայաստանի առևտրական կապիտալի մասին որոշ գաղափար կազմել:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում Առաջավոր Ասիայում երկու գլխավոր քաղաքական ուժեր գոյություն ունեին՝ արաբական և բյուզանդական: X և XI դարերում Արևմտյան Եվրոպայի հարավում՝ Վենետիկն ու Ճենովան: Ահա այն երկրամասը, որտեղ կատարվում էր այս ժամանակաշրջանում ապրանքափոխանակությունը:

Իսկ այդ ապրանքափոխանակության ծանրության կենտրոնը հանդիսանում էր Աբբասյանների արաբական պետությունը: Արաբական հողամասերից էին անցնում անմիջականորեն Արևելքի ապրանքները:

Ջրային հաղորդակցության ասպարեզում այս պետությունների սահմաններում բացառաբար նկատի են գալիս Միջերկրականը, Սև ծովը, Կասպիական ծովը և Պարսից ծոցը, իսկ ցամաքային հաղորդակցության համար՝ կարավանների ճանապարհները:

Այստեղ մեզ շահագրգռում են այս վերջին ճանապարհները:

Համաձայն Fr. Stüwe-ի, որը բարեխիղճ կերպով ուսումնասիրել է արաբական աղբյուրները, Բաղդատից մեկնել են հինգ գլխավոր կարավանների ճանապարհներ[1]: Սրանցից երկուսը արևելյան և արևմտյան ճյուղավորումներով անցնում են ֆեոդալական Հայաստանից: Արևմտյանը ճյուղավորվելով հասնում է նաև Հալեպ և նրա վրայով շարունակվում Միջերկրական ծովի ափը: Երրորդ կարավանի ճանապարհը երկարում է մինչև Պարսից ծոց, և այս կերպ հարաբերություն է հաստատվում Հնդկաստանի, Հնդկաչինի և Ափրիկեի արևելյան եզերքի հետ: Արաբների՝ Հնդկաստանի և Չինաստանի հետ ծովային ուղիով IX դարի կիսուն ունեցած առևտրական հարաբերությունների մասին մեզ լիակատար տեղեկություններ են տալիս արաբ առևտրականների պատմվածքները[2]: Բաղդադը մի ուրիշ գլխավոր կարա-

---

[1] **Friedrich Stüwe**, Die Handelszüge der Araber unter den Abbassiden, Berlin, 1836, հմմտ. գրքի հետևում գտնվող քարտեզը:

2 Relations des voyages faits par les Arabes et les Persans dans l'Inde el a la Chine, par. M. Reinaud, Paris, 1845. Նույնպես **M. Ed. Dulaurier**, Helation des voyages, Paris, 1844:

վանի ճանապարհով կապվում է ուղղակի Հալեպի հետ և սրա վրայով Միջերկրական ծովի հետ: Իսկ վերջին ճանապարհով Բաղդադը Համադանի-Նիշապուրի վրայով կապվում է Կենտրոնական Ասիայի հետ:

Անշուշտ, առևտրական այս հարաբերությունները գնահատելիս աչքի առաջ պետք է ունենալ այն ժամանակաշրջանի հաղորդակցության ասպարեզում գոյություն ունեցող հաղորդակցության միջոցների տեխնիկայի զարգացման աստիճանը:

Ճանապարհների այս ցանցի մեջ մեզ շահագրգռում են մասնավորաբար Բաղդադից մեկնող և արևելյան ու արևմտյան ճյուղավորումներով ֆեոդալական Հայաստանից անցնող կարավանի ճանապարհները:

Նախքան Fr. Stüwe-ի ուսումնասիրությանը ծանոթանալը Բաղդադից մեկնող այդ երկու ճանապարհներին էինք հանգել աղբյուրների և գոյություն ունեցող քարտեզների ուսումնասիրությամբ:

Արևմտյան ճանապարհը, անցնելով Միջագետքից հասնում էր Ամիդ-Մայաֆարիքին-Արզան-Բիթլիսի: Բիթլիսից երկու մասի էր բաժանվում. մին Ոստան Վանի վրայով դեպի արևելք՝ Բերկրի է անցնում և շարունակվում դեպի Պարսկաստան՝ Խոյ քաղաքը[1]: Երկրորդը, որ Բիթլիսից Դատվան է գնում, բացառապես հետաքրքրում է մեզ, որովհետև անցնելով Խլաթ և Մանազկերտ քաղաքներից՝ հասնում է Քալի-քալա (Էրզրում):

Արևելյան ճյուղավորումը, որ կրկին Բաղդադից է դուրս գալիս, անցնում է Պարսկաստանի վրայով Մարաղա-Ուրմիա-Դիլման-Խոյ քաղաքներից և հասնում Նախիջևան-Դվին: Դվինից ճյուղավորվում են մի շարք ճանապարհներ, որոնցից մին գնում է Թիֆլիս, մյուսը Պարտավի վրայով (Պարտավը Առանի կենտրոնական քաղաք էր՝ նշանավոր իր ալ-Կուրկի կոչված շուկայով) անցնում է դեպի հյուսիս՝ Դեբենդ (Բաբ-ալ-Աբվաբ) և հարավ-արևելք՝ դեպի Արդաբիլ: Դվինից մեկնող երրորդ մի ճանապարհ, որ մեզ այժմ ավելի է շահագրգռում, հյուսիսային և հարավային ճյուղավորումներով հասնում է կրկին Արծն-Կարին (Էրզրում)[2]: Հետագայում Պարսկաստանից

---

[1] **Նասիրի Խորասան**, Խորասանի սելջուկ Աբու Սուլեյման Ճաղրի սուլթանի գանձնապահը 1045 թ. Մերվից ճանապարհ ընկնելով գնում է Մեքքե: Նրա անցած ճանապարհը մեզ որոշակի ցույց է տալիս Հայաստանի հարավից դեպի Մերվ գնացող ճանապարհը: Մերվ Նիշաբուր-Կազվին-Շեմիրան-Թավրիզ-Խոյ-Բերկրի-Վան-Ոստան-Խլաթ-Բիթլիս-Ամիդ-Մայաֆարիքին-Ամեդ և Հալեպի վրայով դեպի Պեյրութ և Մեքքե: Այս ճանապարհագիծը մի կողմից հաստատում է մեր բերած արևմտյան ճյուղավորումը և մյուս կողմից ցույց է տալիս Բիթլիսի կապը Խորասանի հետ: Relation du voyage de Nassiri Khosran, Uad. tr. par. Ch. Schefer, Paris, 1881, էջ 10-25:

[2] Հմմտ. այս ճանապարհների ցանցի մասին. **Իբն Հաուքալ**, էջ ٢٥١. **Իստախրի**, էջ ١٩٣ - ١٩٦: **H. Topdschian**, Die Innere Zustände, էջ 41/42. **Ghazarian**, Armenien unter der Araberherrschaff, էջ 68: **K. Reichel**, Städt. Höhere Lehransfalt zu Charlotenburg, 1900. Պարտավի մասին՝ որպես առևտրական կենտրոն-քաղաքի, հմմտ. **В. Бартольд**, Место прикаспийских областей и т. д., 1924, էջ 34:

Տրապիզոն գնացող ճանապարհը, փոխանակ Դվինի, անցնում էր Անիից[1]: Որպես ապացույց անցյալի այդ առևտրական հարաբերության մեզ է հասել Անիի հոյակապ կամուրջը և մի շարք ուրիշներ Արպա-Չայի վրա[2]:

Առևտրական ճանապարհների այս ցանցը մի քանի տեսակետներից շահեկանություն է ներկայացնում:

1. Բաղդադից մեկնող և արևելյան ու արևմտյան ճյուղավորումներով ֆեոդալական Հայաստանից անցնող ճանապարհները հանգում են մի այնպիսի վայրում՝ Արխն-Կարին, որը թե՛ բյուզանդական, թե՛ արաբական պատմիչներից մեզ ներկայացվում է մի առևտրական կենտրոն, որ անմիջական կապ ունի Տրապիզոնի հետ[3]: Կարինը առևտրական հարաբերության մեջ էր նաև Վրաստանի և Պարսկաստանի հետ[4]: Վերև մեր հիշած Ամեդից դեպի Հալեպ մեկնող ճանապարհը Հայաստանը կապում էր Միջերկրական ծովին:

Ինչ վերաբերում է Դվինից դեպի Դերբենդ մեկնող ճանապարհին, Ֆս. Շտյուվեն ցույց է տալիս, որ այդ ճանապարհը Կասպիականի եզերքը գտնվող այժմյան Աստրախանի և Վոլգայի միջոցով կապված էր Հարավային Ռուսաստանի Քյուաբայի (Կիև) հետ, և ենթադրվում է, որ Դոն և Վոլգա գետերի միջև՝ նրանց իրար ամենամոտ եղած մասում, գոյություն ունեցել է ջրանցք[5]: Որ Դերբենտում հայ առևտրականներ եղել են, այդ մասին ունենք հետևյալ ուշագրավ վկայությունները:

Տաբարի արաբ պատմիչը Դերբենդի նվաճման մասին խոսելիս ասում է.

«Հայք այստեղ չեն բնակում, այլ միայն անցուդարձ կանեն»[6]:

Ըստ երևույթին, այդ առևտրական հարաբերությունները հետագա դարերում ստացել են ավելի ուժեղ բնույթ, որ 1085 թ. Մատթեոս Ուռհայեցին այնտեղ հայ թագավորների մասին է խոսում.

---

[1] **W. Barthold**, “Ani” in Encyklopedie des Islam.

[2] Հմմտ. **Н. Я. Марр**, Раскопки в Эриванской губернии տե՛ս “Отчет имп. Арх. Коммисии” за 1892 г., СПб., 1894, էջ 75-86:

[3] **Կոստանդին Ծիրանածին** (գլ. 46, 207 էջ, 23-208,4) և **Կեդրինոս** (II, 577, 7 շար.) Թեոդոսուպոլսի (Կարին) մոտ Արծն քաղաքի վաճառականական նշանակությունը XI դարում նկարագրում են: Ստորև հայ պատմիչների վկայություններից ավելի հանգամանորեն կխոսենք այս քաղաքի մասին: Արաբական աղբյուրների վրա հիմնվելով՝ Fr. Stüwe (Die Handelszüge etc., 184) խոսում է Էրզրումի առևտրական դերի մասին:

[4] **Կոստանդին Ծիրանածին**, Գլ. 45, 200, էջ 13-17, 205 էջ, 16-21:

[5] **Fr. Stüwe**, Die Handelszüge etc, տե՛ս գրքում հետևը գտնված քարտեզը: Պրոֆ. Հակոբ Մանանդյանը նույն եզրակացության է գալիս Դվինից Դերբենդ մեկնող ճանապարհի մասին, **Հակոբ Մանանդյան**, Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում, Երևան, 1922, էջ 86: Տե՛ս Արևելքի և Արևմուտքի ճանապարհների մասին “Новый Восток”-ի № 8-9 (1925 թ.) համարում **В. Гурко-Кряжин**, «Великие пути в мировой истории» հոդվածը:

[6] **Բագրատ Խալաթյանց**, Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, Վիեննա, 1919, էջ 84:

«… Էին և այլ թագավոր հայոց ի Դարբանդ աշխարհին, որ ասի Կապանք, սահմանակից Օզաց և Աղվանից…»[1]:

2. Երկրորդ եզրակացությունը, որ բխում է անմիջականորեն առևտրական ճանապարհների այս ցանցից, ֆեոդալական Հայաստանի տարանցիկ մի երկիր լինելու հանգամանքն է: Մի պարագա, որ առևտրական կապիտալի կուտակման և աճման համար վերին աստիճանի նպաստավոր էր հանդիսանում: Ֆեոդալական Հայաստանը գտնվում էր այն պայմանների մեջ, որոնց մասին խոսել է Մարքսը առևտրական կապիտալի պատմական զարգացման մասին կատարած իր վերլուծումների մեջ:

Թեև մեր ուսումնասիրության ժամանակաշրջանի մասին մասնավոր առևտրականների կուտակած հարստության վերաբերող վկայություններ չունենք, սակայն, մի քանի կարևոր առևտրական կենտրոնների, ինչպես օրինակ՝ Կարսի, Արծնի, Դվինի, Խլաթի մասին ունենք հատկանշական բնութագրումներ, որոնք կարելի է ուղղակի փաստեր համարել մեր մատնանշած առևտրական կապիտալի կուտակման համար:

Այսպես, օրինակ, Լաստիվերտցին 1053 թ. «յղփացեալ» Կարս քաղաքի մասին ասում է.

«…Հարստացեալք բազում ընչեղութեամբ ’ի ծովէ և ’ի ցամաքէ…»[2]:

Կամ՝ 1049 թ. Արծն քաղաքի մասին հետևյալ վկայությունը.

«Այլ քաղաքին, և քաղաքի այսպիսում, որ հոյակապ և ականավոր էր ամենայն աշխարհաց, ...և ծով և ցամաք երկնէր և առատանայր կրել ’ի սմա զզօրութիւն իւր...»[3]:

Իսկ Թովմա Արծրունիի մոտ կարդում ենք 893 թ. Դվինի մասին.

«…Յորում շահաստան Դուին, մարդախիտ պարսպաւոր պատնիշօք պատուարեալ և տուրևառիկ վաճառականութեամբ և ազգի ազգի պղծութեամբ յափրացեալ յղփացեալ…»[4]:

Նասիրի Խոսրաուի վկայությամբ 1045 թ. Խլաթ քաղաքը միջազգային առևտրական կենտրոն է հանդիսանում.

«Խոսում են այդ քաղաքում,- ասում է ճանապարհորդը,- երեք լեզուներով՝ արաբերեն, պարսկերեն և հայերեն…, վաճառականական գործառնությունները կատարում են պղնձե դրամով»[5]:

1064 թ. Անեցի «այր փառավորին» մորուքն են կտրում Անտիոքի հույները և ինչքերը գրավում: «Գորգ Շիրակացին», ասում է պատմիչը, «առեալ

---

[1] **Մատթեոս Ուռհայեցի**, Վաղարշապատ, 1898, էջ 231:

[2] **Արիստակես Լաստիվերտցի**, գլ. ԺԵ, էջ 61:

[3] Նույն տեղում, գլ. ԺԲ, էջ 53:

[4] **Թովմա Արծրունի**, III, գլ. ԻԲ, էջ 230:

[5] Relation du voyage de Nassiri Khosran, trad. fr. par Ch. Scheter, Paris, 1891, 21/22.

զզօրս թուրքաց հինգ հարիւր այր», ավերում է 12 գիւղեր[1]: 500 թուրքերին վարձելու համար պարզ է, որ նա պետք է ունենար բավական հարստություն:

XIII դարուն վերաբերող վկայություններ խոսում են հարուստ վաճառականների մասին. այսպես, օրինակ, Կարնեցի Ումեկի մասին, որ Թիֆլիս էր հաստատվել Կարինի թաթարների կողմից գրավումի հետ, և որին վրաց Դավիթ թագավորը հայր էր անվանում[2]: Սրա որդին՝ Ճարը, Գոշավանքի արձանագրության մեջ ասում է.

«... Իմ հայրն Ումեկ, գնեալ էր զԳետիկ ի քառասուն հազար կարմիր տուգատի: Ես Ճարս գնեցի զՅովս իւր ամէն սահմանաւքն ի դառն ժամանակի, որ հայրենիքն արժան էր ու ոսկին թանկ, ի ԴՌ կարմիր տուկատ»[3]:

Առևտրական կապիտալի կուտակման մասին ուշագրավ մի ակնարկ է նաև այն նամակը, որ Բագրատունի Սմբատ I-ը (890-914) ուղարկել է Ատրպատականի էմիր Մուհամմեդ ալ Աֆշինին, երբ վերջինս անհանգստացել էր Սմբատի և Լևոն կայսեր միջև ստեղծված մերձեցումից: Սմբատն իր դեսպանների միջոցով Աֆշինին բացատրում է, որ իր և հունաց կայսեր միջև լոկ առևտրական մի դաշինք է կնքված: Ժամանակակից պատմիչը հետևյալ կերպով հաղորդում է.

«…Զի թէ սէր ընդ կայսեր եղի, և այն ևս, վասն ձեր օգտի, զի թերևս որ պիտոյ է ամիրապետին մեծին. և զքոյ ևս դիւրաւ զպէտս ի յունականաց անտի գտանել մարթացից, և նպաստ օժտության ձեզ ընծայել զերևելի հանդերձից և զարդուց և զսպասուց վայելս. այլ և վաճառականց՝ որք ընդ դենիդ քո բացեալ ճանապարհ, զի արասցեն մուտ աշխարհս նոցա, և ’ի նոցա լիութենէն փարթամացուսցեն զձեր գանձարանս»[4]:

«Եւ ի նոցա լիութենէն փարթամացուսցեն զձեր գանձարանսդ...» պարբերությունը ցույց է տալիս առևտրական կապիտալի այն արագ կուտակումը, որ հատուկ էր այդ ժամանակներին:

Պատմական այս վկայությունը միաժամանակ ցույց է տալիս այն ուժեղ առևտրական հարաբերությունը, որ ստեղծվել էր Բյուզանդիոնի և Հայաստանի միջև: Այդ առևտրական սերտ հարաբերությունը ապացուցվում է նաև հայ և հույն առևտրական կապիտալի միջև ստեղծված պայքարով, որը հատուկ ուսումնասիրության նյութ կդառնա:

Հաստատապես կարելի է ասել, որ այս ժամանակաշրջանում ֆեոդալական Հայաստանում գործող առևտրական կապիտալի համար կողոպտելու բոլոր նախադրյալները գոյություն ունեին.

ա) ծայր երկիրների միջև կատարված ապրանքափոխանակություն,

---

[1] **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 225/226:

[2] **Կիրակոս Գանձակեցի**, գլ. ԾԵ, էջ 210, **Վարդան**, ՃԸ, էջ 147 (1283 թ.):

[3] **Կ. Կոստանյանց**, Վիմական տարեգիր, էջ 124:

[4] **Հովհաննես Կաթողիկոս**, գլ. ԼԱ, էջ 201:

բ) այդ երկիրներում գոյություն ունեցող, ոչ զարգացած արտադրական եղանակ,

գ) հավելյալ արդյունքի գերակշռող մասի յուրացում առևտրական կապիտալի կողմից[1]:

Այս պայմաններում առևտրական կապիտալի այս կերպ ուժեղացումը, անկասկած, իր անդրադարձումը պիտի ունենար ազգաբնակության այլ շերտավորումների վրա: Սակայն, նախքան այդ հարցին անցնելը մեզ հարկավոր է մի գաղափար կազմել այն ժամանակվա վաճառականության կազմակերպության մասին: Այս հարցի պարզաբանումից հետո որոշ չափով մեզ հնարավոր կլինի այդ առևտրականների ֆեոդալական Հայաստանի սոցիալական կյանքի վրա արած ազդեցությունը իմանալ և առաջացած հակադրությունը բնորոշել:

Վերև ապրանքափոխանակության ընդհանուր ցանցը երևան հանելուց հետո ընդգծեցինք ժամանակաշրջանի հաղորդակցության միջոցների տեխնիկայի զարգացման աստիճանը նկատի առնելու անհրաժեշտությունը:

Առհասարակ արտադրական ուժերի զարգացման չափը պայմանավորում է պատմական մի որոշ ժամանակաշրջանում տնտեսական տվյալ բնագավառում գոյություն ունեցող կազմակերպությունը: Նկատի ունենալով այն հիմնական պարագան, որ արևելքում հաղորդակցության միջոցների տեխնիկան դարեր շարունակ իր նախնական վիճակում է գտնվել, ուստի հետագա դարերի վաճառականության կազմակերպման ձևը առավել կամ նվազ չափով պիտի լիներ նույնը:

Այս ժամանակաշրջանի վաճառականության կազմակերպության մասին կաշխատենք պարզել միայն երկու հարց՝

ա) հաղորդակցության միջոցների տեխնիկան և ճանապարհորդությունների հետ կապված դժվարությունները,

բ) տիրող անապահովությունը կարավանի ճանապարհների վրա:

ա) Երբ կարդում ենք Արևելքի կարավանի ճանապարհների միջոցով կատարված ճանապարհորդական նկարագրությունները, ճանապարհորդություններ, որոնք հնարավոր են եղել մի շարք դժվարություններ հաղթահարելով, երբ մեզ ծանոթ են այդ ճանապարհների վրա տիրող անապահովությունն ու բազմաթիվ մաքսային դժվարությունները, այն ժամանակ բոլորովին այլ պատկեր ենք ստանում Արևելքի առևտրականի մասին, ինչ որ ունենք այժմյան կապիտալիստական երկիրների առևտրականների մասին: Երբ անցյալում վաճառականները կարավանների հետ շրջում էին քաղաքից քաղաք, այժմ առևտրականը մտավոր միջոցներով աշխատում է տիրապետել համաշխարհային շուկային՝ իր տրամադրության տակ ունենալով տեխնիկական բազմազան հարմարություններ:

1 **K. Marx**, Das Kapital, III1, kap. 19, 5, 314315.

Բավական է մի օրինակ բերել անցյալի վաճառականների ապրանքների տեղափոխության ընթացքում հանդիպած դժվարություններից, այն ժամանակ մեզ համար պարզ կլինի այն հսկայական տարբերությունը, որ առաջանում է հաղորդակցության տեխնիկայի զարգացած չլինելու հանգամանքից.

«Տեսանք նրանցից (հայ վաճառականներից),- ասում է Պիտոն դը Տուրնըֆոր, - շատեր և ամենահարուստներից ոտով մեծ գետերն անցնելիս, ջուրը մինչև վիզը, բարձրացնելու ընկած ձիերը՝ փրկելու համար իրենց մետաքսի հարկերը…»[1]:

Վաճառականը ստիպված էր օրեր, ամիսներ, նույնիսկ տարիներ ճանապարհորդության մեջ լինել: Վերհիշենք Թովմա Արծրունիի խոսքերը Դվինի վաճառականների մասին.

«…Եւ վաճառականքն զհեռաւոր ճանապարհացն խոլային պատրաստութիւն…»[2]:

Իստախրիի և Իբն-Հաուքալի հաղորդած քաղաքների հեռավորությունները մեզ գաղափար են տալիս այդ ժամանակաշրջանի հաղորդակցության միջոցների տեխնիկայի զարգացման աստիճանի մասին: Համաձայն այդ վկայությունների՝ Պարտավը Արդաբիլից 50 փարսախ, Թիֆլիսից 52 և Դվինից 80 փարսախ հեռու էր, Մարագայից Դվին՝ 50 փարսախ = 7 օրվա ճանապարհ[3]: Արդաբիլից Ամիդ՝ ուղիղ մի ճանապարհ 225 փարսախ: Այդ ճանապարհը անցնում էր՝ Արդաբիլ-Մարագա (40 փար.) – Ուրմիա (20 փ., համաձայն Իստախրիի՝ 4 օր) – Սալմաս (2 օր) – Խոյ (9 փար.) – Բերկրի (30 փար.) – Արճեշ (2 օր)[4] – Խլաթ (3 օր) – Բիթլիս (3 օր)[5] – Արծն (4 օր)[6] – Մայաֆարիքին (4 օր) – Ամիդ (2 օր): Ուրեմն Արդաբիլից Ամիդ հասնելու հնարավոր է լինում 32 օրվա ընթացքում:

Հետագա դարերից մեզ հասած վկայությունները գալիս են միանգամայն հաստատելու այս իրողությունը[7]:

---

[1] **Pitton de Tournefort**, Voyage du Levant t. II, p. 393:

[2] **Թովա Արծրունի**, III, գլ. Թ, էջ 172:

[3] **Իստախրի**, ١٩٢- ١٩٣ **Իբն-Հաուքալ**, ٢ω١, համաձայն այս պատմիչների վկայության՝ կարավանը կարողանում էր մի օրվա ընթացքում 7 փարսախ ճանապարհ կտրել: Փարսախը 4-6 կմ ընդունելով՝ կարավանը կարողանում էր, ուրեմն մի օրվա ընթացքում 28-42 կմ ճամփա անել:

[4] Իստախրին դնում է մի օր, Աբուլֆիդան՝ 2 օր, էջ ٣٩:

[5] Իստախրին դնում է մի օր, Աբուլֆիդան, Մուքատասին և Իդրիսին՝ 3 օր:

[6] Մուքատասին Բիթլիսից-Արզն ունի 2 օր և Արզնից – Մայաֆարիքին՝ 2 օր, Աբուլֆիդան՝ Բիթլիսից-Մայաֆարքին՝ 4 օր, էջ ٣٩:
Հմմտ. սրանց մասին **H. Topdschian**, Die innere Zustuände, s. 42 ծանոթ. 6, 7, 8:

[7] **Աբրահամ Կրետացի**, գլ. Ա, էջ 2, գլ. ԺԷ, էջ 24, գլ. ԻԲ, էջ 29: **Guil. De Rubrouk**, Rècit de son Voyage, p. 296:

Հաղորդակցության միջոցների չզարգացած լինելը, ինչպես նաև այն փաստը, որ ապրանքները գլխավորաբար օտար երկրների արտադրություններ էին, առաջ էր բերում այն հետևանքը, որ հայ առևտրականներից շատերն իրենց կյանքի մեծ մասը անց էին կացնում Հայաստանից դուրս:

Սրանով է բացատրվում Մխիթար Գոշի «Դատաստանագիրքի» § 13-ը:

«ԺԳ. Յորժամ այր վասն պատճառի իրիք և կամ յաղագս վաճառի ճանապարհ երթալ յամիցէ անսալ արժան է կնոջն»[1]:

Ուրեմն «յաղագս վաճառի» ուշանալը մի տարածված երևույթ է եղել, որ «Դատաստանագիրքում» հատուկ մի կանոն սահմանվում է այդ վաճառականի կնոջ համար:

Այս պարագան արժե ընդգծել առևտրականների ֆեոդալական Հայաստանի սոցիալական կյանքում կատարած դերի բնորոշման տեսակետից:

բ) Առևտրական գործառնությունների տեխնիկան պայմանավորվում է առաջին հերթին փոխադրական և հաղորդակցության այն միջոցներով, որոնք գոյություն ունեցել են այս ժամանակաշրջանում: Մենք բոլոր կետերի վրա չենք ծանրանա: Այստեղ արժե ընդգծել ճանապարհների վրա տիրող անապահովությունը, որ դարեր շարունակ գոյություն է ունեցել:

Այսպես՝ Ալ-Մանսուրի խալիֆի (754-775) ժամանակաշրջանին վերաբերվող մի վկայություն՝ սուրիացի պատմիչ Դընիի կողմից, մեզ ասում է.

«…Գրավում էին ճանապարհները և կողոպտում անց ու դարձ անողները…»[2]:

843 թվի մասին Միքայել Սուրիացի պատմիչը մեզ տալիս է հետևյալ վկայությունը.

«Այս թվականին (843) Մանսուրը՝ Աֆիշինի քրոջ որդին, սկսավ կողոպտել վաճառականները և մտածում էր ապստամբել: Հայաստանցի մի վաճառական բռնեց և կողոպտեց նրա ունեցածը»[3]:

1067 թվին ավազակների կողմից ստեղծված անապահով դրության մասին նույն պատմիչի մոտ գտնվում են այլ վկայություններ[4]:

Կիրակոս Գանձակեցին 1260 թ. Մերտին քաղաքի Հուլավու խանի կողմից գրավման առթիվ հաղորդում է.

«… Առաքեաց (Հուլավու) զօրս իվերայ քաղաքին Մէրտինայ, որք հազիւ կարացին առնուլ զնա յետ բազում աւուրց. կոտորեցին և զբազում յելուզակս վնասիչս ազգաց և ճանապարհորդաց, զորս տաճարիս անուանէին՝ թուրք ազգու, ամրացեալք ի թաւ մայրիս և ի դժվարին վայրս ամրոցացն, անթիւ

[1] **Վ. վրդ. Բաստամյանց**, Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը», էջ 109:

[2] IV ème partie Chronique de Denys de Tell Mahrè, p. 104.

[3] **Miehel le Syrien**, Chronique, L XII, ch XXI, P III, p. 100 trad fr. par Chabot J. B., Paris, 1905.

[4] Ibid, p. 162/64.

բազմութիւնք…»[1]:

Նման վկայությունների շարքը կարելի է երկարել:

Այդ մասին ուշագրավ մի վկայություն է այն խոսակցությունը, որ ունեցել է 1711 թվին Thesaurus Linguae Armeniacae-ի հեղինակը Jon. Joachim Schröder-ը Պարսկաստանից Ամստերդամ եկած մի հայ վաճառականի հետ.

«Ֆ. – Զարմանալի ճանապարհ այն և առավել մեզ, որ չենք տեսել. մա էդ խօսքդ կարավան ինչ լեզու այ, կամ ինչ ասել»:

Հայ վաճառականը պատասխանում է.

«Ս. – Մեզ ալ մեծ զարմանք այ երբոր նաւի հաքաթ կու լսենք. կարվան որ թուրքեն քեարվան կասէ հայոց լեզու, ասել սաքի, **կարող վանելոյ** (ընդգրծումը մերն է – Հ. Զ.), որ աշխարհօրէն կասեն. զարշու կենալու կարող»:

…..

«Ֆ. – Մա պարոն Սաֆար ձեր վաճառականքն ինչպէս ճանապարհ կանեն».

«Ս. – Խիստ հեշտ և սաֆայով զարա երբոր շատվոր են, և շատ ապրանք կայ, կարավան կու դառնան, և ունեն իրեն քեարվան բաշին, չավուշն, թֆանքչին ամեն փուսաթովն ապրանքն, ուղտերն, ձի կամ ջորի կու բառնան, և իւրանք ձիաւորք ինչպէս մին մեծ օրտու կու գնան, ու ամէնքն քեարվան բաշու հրամանաւ աստ կամ անդ կիջնանին…»[2]:

Կարավանի սահմանավորումը որպես «կարող վանելոյ» կամ «զարշու կենալու կարող», ինչպես նաև քեարվան «բաշին», «չավուշը, թֆանքչին» խոսում են այն անապահով դրության մասին, որ գոյություն է ունեցել Արևելքի կարավանի ճանապարհների վրա:

Ճանապարհների այդ անապահովության պատճառով վաճառականը առաջին հերթին պիտի մտածեր փողի ապահով փոխադրության մասին:

Այս մասին ուշագրավ մի վկայություն է Վարդանի առակներում հետևյալ կտորը.

«Ասի յիմաստնոց, թէ իմաստուն վաճառականք յորժամ երկնչին յավազակաց ի ճանապարհին, ոչ տանին զգանձս իւրեանց ընդ ինքեանս, այլ տան փոխս զգանձս իւրեանց [յ] այնպիսի վաճառական, որ ունին յաշխարհն իւրեանց տուն և գանձ, և առնուն ի նմանէ ձեռագիր և երթայ խաղաղութեամբ և տանի զձեռագիր վաճառականին և առնու զգանձ իւր իտանէ նորա»[3]:

Այս վկայությունը Wechsel-ի սկզբնական շրջանն է հիշեցնում, որը XIII դարի կիսուն Ճենովայում սովորական դարձած էր[4]:

---

[1] **Կիրակոս Գանձակեցի**, գլ. Կ, էջ 227/28:

[2] **Jon. Joachim Schröder**, Thesaurus linguae Armeniace, Amsterdam, 1711, p. 343/344.

[3] **Ժողովածու առակաց Վարդանայ**, մաս II, Ս. Պետերբուրգ, 1895, էջ 184:

[4] Grasshofe իր "Wechselrecht u/er Araber" (Berlin, 1899) աշխատության մեջ ապացուցել է եվրոպական wechsel-ի Արևելքից (Արաբիայից) Սպանիա և Իտալիա ներմուծումը:

Առևտրական կապիտալի մասին մեր ասածները ամբողջացնելու համար մնում է մի քանի խոսք ասել նաև օտար առևտրական կապիտալի մասին:

Ամենայն հավանականությամբ արաբները, որոնք Իբն-Հաուքալի «արտաքին Ermeuia»-ում գաղութներ ունեին, մեծ զարկ էին տալիս ֆեոդալական Հայաստանի ապրանքափոխանակության: Այդ արաբները, Հայաստանից դուրս անմիջական կապեր ունենալով, տեղացի ազգաբնակության առաջ նոր հեռանկարներ էին բաց անում: Նրանց կատարած դերը այս ուղղությամբ մեզ համար ավելի պարզ կլինի, երբ նկատի ունենանք վաճառականության զարգացումը խալիֆաթի երկրամասերում: Ուշագրավ մի ակնարկ է 768 թվի Պարտավի ժողովի ԺԱ կանոնը ֆեոդալական Հայաստանում ոչ քրիստոնյա ազգաբնակությունը գոյություն ունենալու մասին: Այդտեղ ասված է.

«ԺԱ. Քահանայք պատուէր արասցեն արանց և կանանց և դստերաց նոցա, զի չարասցեն ընդ հեթանոսի զուգութիւն...»[1]:

Սուրիացի պատմիչի մոտ ունենք ուշագրավ վկայություն Ամիդ, Արզն և Մայաֆարիքին քաղաքները հաստատված Մուսուլի բնակիչների մասին, որից երևում է, որ նրանք վերին աստիճանի հարուստ են եղել և պարապել վաշխառությամբ[2]: Այս մասին ավելի մանրամասն քիչ հետո:

Վերև մենք տեսանք Խլաթ քաղաքում արաբացի առևտրականների մասին Նասիրի Խոսրաուի վկայությունից:

Բացի արաբ առևտրականներից՝ հանդիպում ենք այս ժամանակաշրջանում ևս հրեա առևտրականների: Նախկին դարերում սրանց Հայաստանում մեծ քանակությամբ լինելուն մասին մեր ամբողջական ուսումնասիրության առաջին մասում մանրամասն հայտնել ենք:

Իբն Խորդադբե արաբ աշխարհագիրը 879 թվին խոսում է հրեաների՝ Արևելքի և Արևմուտքի առևտրի ասպարեզում կատարած խոշոր դերի մասին:

«Ճամփորդում էին,- ասում է աշխարհագիրը,- Արևմուտքից Արևելք և Արևելքից Արևմուտք, մերթ ցամաքով և մերթ ծովի ուղիով...»:[3]

Ապա թվում է այն ապրանքները, որոնց շուրջ տեղի էր ունենում այդ առևտուրը: Արևմուտքից բերում էին ներքինիներ, էգ ստրուկներ և մանչեր, մետաքսե հյուսվածքներ, մորթիներ, սուրեր և այլն:

Սելջուկ Մելիքշահ սուլթանի ժամանակ «շէն էին գաւառք Կապանին», վկայում է Ստեփանոս Օրբելյանը, ապա նկարագրելով 1103 թ. Չորթմանի

Արաբական ամենահին Wechsel-ը մեզ հասել է 871 թվից առաջ, հմմտ. **G. Tasov**, Die ältesten spuren des Wechsels Mit. d. Seminars f. orient. Sprachen Jahrg., XXVIII, 1925 s. 280/81:

[1] **Կանոնագիրք Հայոց**, Թիֆլիս, 1914, էջ 168:

[2] VI ème Partie chronique de Denys de Tell-Mahrè, p. 92:

[3] Իբն-Խորդադբե Slouschz-ի մոտ, Le Caucase, l'Arménie, l'Azerbeidjan. Revue du Monde Musulman. 1911, t. 11, p. 273/74, նաև Goeje-Bibl. Geogr. Arab., VI, 114:

արշավանքը՝ հիշատակում է հետևյալ ուշագրավ վկայությունը:

«… Եւ իջին ընդ մեծ աւարի հեղեղատն ի քաղաքն, զի այն վայր ոչ էր պարսպափակ վասն անհնարին գոլոյ մտից մարդկան և սկսան կոտորել ի Ջիղաթաղոյն…»[1]:

Ուրեմն 1103 թ. Կապանում գոյություն է ունեցել Ջիղաթաղ, այս նշանակում է, որ կամ այդ թվականին և կամ նրանից առաջ Կապանում եղել է հրեական գաղութ:

Եզրակացնելով՝ կարելի է ասել, որ արաբական տիրապետության շրջանում ֆեոդալական Հայաստանում ինչպես հայ առևտրական կապիտալը, նույնպես և օտար առևտրական կապիտալը բավականին մեծ համեմատություններ էր ստացել, և խնդրո առարկա ժամանակաշրջանում նա կարող է խոշոր կուտակումներ կատարել:

Ինչպիսի՞ անդրադարձում է ունեցել հարստության այդ կուտակումը ազգաբնակության այլ շերտերի վրա: Այս կերպ հասնում ենք արդեն վաշխառուական կապիտալին:

Բ

Վաշխառուական կապիտալը պատմական իր զարգացման ընթացքում արտադրական եղանակի նախակապիտալիստական շրջանում ստացել է երկու հատկանշական ձև:

Առաջին՝ վաշխառուն դրամ տվել է տոկոսով խոշոր հողատերերի, երկրորդ՝ մանր արտադրողների, մասնավորաբար գյուղացիության, որովհետև նախակապիտալիստական շրջանում երկրագործությունը հանդիսանում էր արտադրության գերակշռող ճյուղը, և այդ ժամանակաշրջանում մանր արտադրողների ճնշիչ մեծամասնությունը կազմում էր գյուղացիությունը:

Այս հիմնական եզրակացությունը, որին հասել է Կ. Մարքսը վաշխառուական կապիտալը վերլուծելիս[2], ցույց է տալիս այս հարցի քննության մեթոդական ուղին:

Վաշխառուական կապիտալի առաջին ձևը արտադրական ուժերի զարգացման տեսակետից հասարակականորեն հեղափոխիչ դեր է կատարում, որովհետև նա քայքայում և տարրալուծում է նախկին սեփականատիրական ձևերը: Երկրորդ դեպքում, այսինքն՝ մանր արտադրողներին տրված վաշխառուական կապիտալը, զրկում է այդ մանր արտադրողներին իրենց տնտեսությունը զարգացնելու հնարավորությունից: Ուստի այս դեպքում արգելք լինելով արտադրական ուժերի զարգացման՝ վաշխառուական կապիտալը

[1] **Ստեփանոս Օրբելյան**, II, գլ. ԿԱ, էջ 78:

[2] **K. Marx**, Das Kapital, III, 2 kap., 16, 5, 133.

հասարակականորեն հանդիսանում է բացասական ազդակ[1]:

Այս տեսակետից էլ բացատրվում է այն երկրորդ հիմնական հակադրությունը, որ գոյություն է ունեցել խնդրո առարկա ժամանակաշրջանում ֆեոդալական Հայաստանի քաղաքի և գյուղի միջև:

Թե առաջին ձևը ֆեոդալական Հայաստանում իր արտահայտությունը ունեցել է, դժվարանում ենք այս մասին մի բան ասել մատենագրական և այլ վկայությունների բացակայության պատճառով:

Ինչ վերաբերում է վաշխառուական կապիտալի՝ ֆեոդալական Հայաստանի գյուղում գործած քայքայիչ դերին, մեր կարծիքով, մասնավորաբար Արիստակես Լաստիվերտցիի մոտ կան փաստացի հիշատակություններ այս մասին:

Սակայն, նախքան հայ պատմիչի վկայություններին անցնելը մենք անհրաժեշտ ենք համարում նախ վկայություններ բերել սուրիացի պատմիչ Դընի-դը Դել Մահրեից: Օտար այս աղբյուրի վկայությունը երկու տեսակետից շահեկան է մեզ համար: Առաջին՝ այն, որ այդ վկայությունը վերաբերում է կա՛մ Իբն-Հաուքալի անվանած «արտաքին Ermenia»-ի որոշ քաղաքներին, կա՛մ հարևան Միջագետքին: Երկրորդ, որ այդ վկայություններից երկրորդի ընդարձակ նկարագրականը վաշխառուական կապիտալի մասին մեզ հնարավորություն կտա ավելի որոշակի հասկանալու Լաստիվերտցիի սեղմ և ընդհանուր խոսքերի իմաստը:

Դընի-դը Դել Մահրեն 769/770 թ. Ամիդ, Արզն և Մայաֆարիքին քաղաքների մասին հաղորդում է.

«Միջագետքում ապրող մուսուլման ժողովուրդը չափազանց հարուստ էր այս թվականին (769/770), որովհետև երկրի բնակիչների աշխատանքը շահագործում էր, որը լափում էր անարդար rachat[2] գնելով (վերգնումներով) և վաշխերով…, վաշխով փող էին տալիս, իրենց դրամները rachat-ների համար էին տալիս և չափազանց բարձր տոկոսներով. ստրուկների և ստրկուհիների տեր դարձան, տեր էին շարժուն ինչքերի, այգիների և հողերի:

«Հասարակաց հրապարակներում դիկտատորների և երկրի տերերի նման նստում էին»[3]:

Ֆեոդալական Հայաստանի հարավում առևտրական այս կենտրոնների մասին Դընիի այս ուշագրավ վկայությունը կասկած չի թողնում այն հակադրության մասին, որ ստեղծվել էր վաշխառուական կապիտալի միջոցով: Անտարակույս, նման պայմաններում հողը դառնալու էր առուծախսի առարկա:

---

[1] **K. Marx**, Das Kapital, III, kap., 16, s. 135/136.

[2] Թարգմանիչը՝ **J. R. Chabot**, rachat բառին հետևյալ բացատրությունն է տալիս՝ “c. a. d. d’après lecontexte, moyennant un contrat aux termes duquel on devait les rembourser en nature, avec des denrès qu’on leur cèdait à un prix audessous du cours:

[3] VI ieme partie Chrouique de Denys de Tel-Mahrè, trad. fr. Par J. B. Chabot, Paris, 1895, p. 93.

Ստեփանոս Օրբելյանի փաստաթղթերում և «Վիմական տարեգրի» արձանագրություններում կան մի քանիսներ, որոնք կարող են նմուշ ծառայել այս մասին: Առաջ կբերենք այնպիսիներ, որոնք վերաբերում են արաբ հողատերերի կողմից վաճառված սեփականություններին:

873 թ. Սյունյաց Մարիամ իշխանուհիի նվիրատվությունների մեջ ասված է.

«…Եւ գնեալ ի հագարացի մարդկանք զգեօղն Շողուգայ ընդ 60.000 դրամի ազատ յամենայն աշխարհական հարկաց՝ ընծայէ ի սեպհական ժառանգութիւն սուրբ եկեղեցւոյն նմանապես և գեօղ մի ի Մազազ գաւառի ընդ 3.000 դահեկանի գնէ և տայ ի սուրբ եկեղեցին որոյ անուն գեղջն Գնէր»[1]:

907 թ. Արամոնսի արձանագրության մեջ կարդում ենք.

«…Ես՝ Գրիգոր, Սիւնեաց տէր, որդի Վասակա, շատածախս գանձիւք գնեցի ի հագարացեաց… ընդ նմին և նորոգեցի զսա…»[2]:

Եթե Սյունիքում, որ իր աշխարհագրական դիրքով ֆեոդալական Հայաստանի անմատչելի գավառներից մին էր, արաբ հողատերեր գոյություն ունեցել են, որոնք հողի առևտուրով են զբաղվել, ավելի մեծ չափերով պետք է ընդունել, մեր կարծիքով, այս դրության գոյությունը Հայաստանի դաշտային մասերում:

Դրնին վկայությունը ուշադրության արժանի է նաև այն տեսակետից, որ նա մեզ տալիս է վաշխառուական կապիտալի կեղեքման այն ձևը, որ գոյություն է ունեցել այդ ժամանակաշրջանում:

Այստեղ հետաքրքիր է ընգծել rachat-ի ձևը, որն ըստ երևույթին կրկնակի վաշխի մի դրություն է ներկայացնում: Այս կետը ավելի կպարզվի հաջորդ վկայությամբ:

Դրնին մեզ թողել է Միջագետքում գործող վաշխառուական կապիտալի մասին մի ընդարձակ նկարագրական, որը կենդանի գույներով մեր առաջն է դնում VIII դարի 70-ական թվերին քաղաքի և գյուղի փոխհարաբերությունները:

«Գյուղացիները (les homes de champagne), հարկապահանջությունից ճնշված, քաղաքներն էին գալիս և նվերներ բերում նրանց, որոնք վաշխով փող էին տալիս: Վերջինները, նրանց տեսնելով, ասում էին «բարի եկար» և սիրալիր բառերով ավելացնում էին. «Քեզ կտամ ամեն ինչ, երբ դու կարիք զգաս: Մի՛ մտահոգվիր, որքան ես ապրելու լինեմ, քեզ կտամ, ոչ ոքի կարիք չես ունենայ: Քեզանից վկա, երաշխավորություն, ավանդ չեմ պահանջեր, ո՛չ տոկոս և ո՛չ rachat: Կառնես և երբ հունձքը հավաքես, իմ ինչքս կբերես կամ ինձ ցորեն կամ գինի կտաս այդ ժամանակամիջոցում: Գնա՛ այժմ և վերա-

[1] **Ստեփանոս Օրբելյան**, I գլ. ԼԵ, էջ 218/219:

[2] **Կ. Կոստանյան**, Վիմական տարեգիր, էջ 6:

դարձի՛ր մի քանի օրից հետո»:

«…Գյուղացին հանգիստ մնում էր իր տանը մինչև հարկապահանջների գալը: Երբ վերջինները նրան հանկարծակի էին բերում, ասում էր նրանց. «Սպասեցեք մի քիչ, կբերեմ շուտով»: Եվ աճապարանքով գնում էր այն մարդու մոտ, որ հույս էր տվել իրան: «Տե՛ր,- ասում էր նրան,- բարեհաճիր տալ ինձ այն, ինչ որ քեզանից խնդրում եմ, որպեսզի ինձ խարազանով չծեծեն»:

Օրեր ձգձգումներից հետո, երբ գյուղացին մահվան տառապանք է ապրում, վերջապես համաձայնում է «տերը» տալ խնդրվածը և գյուղացուց պահանջում է մի գրություն: Երբ գրությունը պատրաստ է, կրկին ձգձգում է.

«…Եվ երբ գյուղացիները առտու կանուխ գալիս էին, ասում է. «Չեմ տար, եթե մի ավանդ չտաս»: Ավանդը ստանալուց հետո հարց էր տալիս. «Որքա՞ն տոկոս պիտի տաս այս դրամի համար և որքա՞ն ցորեն rachat-ի համար, որովհետև ցորենը իր ընթացիկ գինով չեմ ընդուներ:

«Նեղը ընկած լինելուն պատճառով համաձայնում էին, ինչ որ նրա բերանը պահանջում էր»[1]:

Երբ գյուղացին մի կերպ փոխ վերցրած գումարը ճարում է և բերում՝ պարտքը վճարելու, վաշխառուն ստանալը ձգձգում է և աշխատում է գյուղացին պարտական թողուլ:

Դընին այս ուշագրավ վկայության մեջ ուշադրության առնելիք կետը այն է, թե ինչ հանգամանքներում գյուղացին ստիպված է լինում վաշխառուի ոտը իյնալու:

Այստեղ պարզ ասված է այդ մասին. հարկապահանջների խարազանն է այդ:

Եթե սուրիացի պատմիչ Դընին փոխարինենք Ղևոնդ Երեցով, այն ժամանակ նույն սահմաններում գտնվող հայ գյուղացիության պատկերը ևս կպարզվի մեր առջև: Միայն խոսք կարող է լինել հարաբերական տարբերության մասին: Արաբների՝ ֆեոդալական Հայաստանում վարած հարկային քաղաքականության մասին մեր կատարած ուսումնասիրությունը[2] ցույց տվեց արտադրող դասի այն սոսկալի դժվարությունները, որոնց առջև կանգնած էր նա հարկերը դրամով վճարելու ստիպված լինելու պատճառով:

Արտաքին իշխողներին վճարելիք տրիպուտների համար մանր արտադրող դասը որոշ ժամանակներում անելանելի կացության էր մատնվում: Սրա վրա ավելանում էին նաև ներքին ֆեոդալների վճարվելիք հարկերը, որոնք, մեր կարծիքով, հողատիրության կենտրոնացման և ապրանքափոխանակության այս շրջանում ավելի ծանրանում էին:

Այն տնտեսական պայմանները, որոնք գոյություն ունեցել են Միջագետքում արաբական տիրապետության շրջանում, գոյություն ունեին նույն ժա-

[1] IV ieme partie chronique de Denys de Tell-Mahrè, p. 151/153.

[2] Տե՛ս «ՀՍԽՀ պետական համալսարանի գիտական տեղեկագիր», № 2, Երևան, 1927:

մանակաշրջանում ֆեոդալական Հայաստանում: Ուստի ամենայն հավանականությամբ երկու երկրներում առաջացած երևույթները առավել կամ նվազ չափով նույնը պիտի լինեին: Ինչպես ասացինք, խոսք կարող է լինել հարաբերական տարբերությունների մասին. հիմքում դրությունը միևնույն էր:

Այժմ քննենք Արիստակես Լաստիվերտցիի այն վկայությունները, որոնք վերաբերում են ֆեոդալական Հայաստանի երկու հայտնի քաղաքներին՝ Արծնին և Անիին:

XI դարի կիսուն նրա ներկայացրած այս երկու քաղաքները հասել էին զարգացման մի շրջանի, որտեղ քաղաքի և գյուղի միջև ստեղծված փոխհարաբերությունները ավելի բյուրեղացած ձևով արտահայտվել են: Քաղաքի կողմից գյուղը շահագործելու, կեղեքելու պատմական, օրինաչափական այդ արտահայտությունը պատմիչն իր դարի կրոնաբարոյախոսական աշխարհայացքով մեր առջևն է դնում:

Անցյալը հիշելով, երբ դեռևս առևտրական-վաշխառուական կապիտալը գտնվում էր իր զարգացման սկզբնական շրջանում, 1049 թ. Արծն քաղաքի մասին պատմիչն ասում է.

«[Վաճառականները] Եկեղեցւոյ շինողք և զարդարողք… ոչ գոյթ խաբէութիւն ի վաճառսն, և ոչ նենգութիւն ի տուրևառիկ փոփոխմունս: Ընդ բամբասանօք էր վաշխից և տոկոսեացն շահքն…»[1]:

Բամբասվում էր վաշխի և տոկոսի բերած շահը. հիշենք V դարի Հովհաննես Մանդակունիի ճառը.

«Եւ այնչափ տնօրէն են ախտ փոխոց տոկոսեաց, մինչև յամուլ արգանդէ խնդրէ որդի բռնութեամբ, և յապառաժ քարանց պտուղ որոնէ, և առանց սերման կամի արդիւնս ժողովել, և յարոաց ծնունդս պահանջել, և քարէ կաթն կթել, և ի վիմաց ասր ստանալ..»[2]:

Հակառակ նրան, որ վաշխի շահը բամբասվում էր, սակայն, սա դեռ չի նշանակում, որ նա իր ավերները չէր գործում: Այսպես՝ կարդում ենք նույն ճառի շարունակության մեջ.

«…Եւ պատուհասեալք պատժին չարապէս խնդրողք վաշխիցն և փոդոցն՝ որ ընդդէմ պատուիրանանց Աստուծոյ չարեացս իւրեանց ի վաշխու տան, և տոկոսեօք անդէն պահանջեն, և անակնածելի ուտեն զմարմինս տնանկաց, և ըմպեն զարիւնն նորա անողորմ»:

«Երբեմն սուղ ինչ պախրէն կամ ի վաճառել…, և երբեմն խորհի գաղտագնաց լինել ի տար աշխարհ…»

«Եւ եթէ աղքատ ևս իցէ փողապարտն, ի ծուփս և ի հոգս մաշի հանապազ. անքուն և դառնաքուն ի գիշերի ննջիւն նորա. տխուր և տրտում և մտայոյզ ի տուընջեան շրջի, և ոչ գիտէ յո երթայ»[3]:

---

[1] **Արիստակես Լաստիվերտցի,** գլ. ԺԲ, էջ 53:

[2] **Հովհան Մանդակունի**, Վենետիկ, 1860, էջ 63:

[3] **Հովհան Մանդակունի**, Ճառք, էջ 63-64, որքան նմանություն Սոլոնի հայտնի երգի հետ.

Նույնը չի՞ հիշեցնում արդյոք, երբ Կորյունի մոտ կարդում ենք.

«…Եւ բազում մուրիակս անիրաւութեան պատառեաց»[1]:

Այսպես, երբ վաշխի շահը բամբասվում էր:

Փոխվել էին ժամանակները. տնտեսական կյանքը ընթացել էր պատմական անհրաժեշտությամբ, արտադրական ուժերի զարգացումով պայմանավորված արտադրական փոխհարաբերությունները տնտեսական կատեգորիաների մասին նոր հայեցողություն և ըմբռնում էին առաջացրել.

«Վաշխից և տոկոսեաց օրէնք եղան»,- շարունակում է Լաստիվերտցին, «և ցորենոյ բազմապատկութիւն, որով երկիր պղծի և արգելու զարգանդ առ ի տալոյ զպտուղս ի ժամու իւրում առ ի կերակուր մարդկան»[2]:

Առևտրական վաշխառուական կապիտալը կարողանում է օրինականացնել «ընդ բամբասանօք» եղող ու տոկոսի շահը: Եվ սրան է վերագրում պատմիչը, կրոնական գունավորումով, երկրի արգանդի պղծումը և նրա անբերրիությունը: Այստեղ պատմիչը վեր է հանում այն քայքայիչ դերը, որ կատարում է վաշխառուական կապիտալը գյուղական ծանր տնտեսություններում:

«Բավական է միայն,- ասում է Մարքս,- որ մանր գյուղացու մի կովը սատկի, այն ժամանակ նա անկարող կլինի նախկին աստիճանով վերարտադրության սկսելու: Այդ կերպ նա կընկնի վաշխառուի ձեռքը, և մի անգամ, որ ընկավ, նա երբեք չազատվի»[3]: Եվ կամ մի երաշտ տարի կամ բնության այլ աղետ, որոնք այնքան հաճախադեպ են եղել ջրասակավ այս երկրամասում, մանր արտադրողը կարիքի մեջ գցի, և նա ստիպված լինի դիմել վաշխառուին, այլևս շատ դժվար կլինի նրա ճիրաններից ազատվել, և ահա «երկիր պղծի և արգելու զարգանդ առ ի տալու զպտուղս ի ժամու իւրում»:

«Բայց յորմէ հետէ մտնի յեկեղեցիս մեր Սեքարայիք և Պիհռոնացիք, և արդարութեան օրէնքն յանիրաւութիւն դարձաւ, և յարգի եղև արծաթասիրութիւն, քան զաստուծասիրութիւն, և մամոնայն, քան զՔրիստոս…, իշխանք սորա գողակիցք եղեն գողոց, վրիժագործք և արծաթոյ ծառայք…»[4]:

Ուշագրավ երևույթ է, որ պատմիչը կապում է առևտրական-վաշխառուական կապիտալի ուժեղացումը աղանդավորական շարժման հետ:

"…Während so der Unheil stetig wütet in der Bürger kreis.
Wandern die verarmten Leute ins Eleud Scharenweis. Als verkaufte SchuIdenknechte bindet sie der Ketten schmach. Und so tragen der Fronde bittern Zwang u. Ungemach":
Stowasser, "Griechenlyrik", Heidelberg O. J. s. 6, bei,
K. Wittvogel, Geschichte d. Bürgerlichen Gesellschaf, 5. 208.

[1] **Կորյուն**, Վենետիկ, 1894, էջ 36:

[2] **Արիստակես Լաստիվերտցի,** գլ. ԺԲ, էջ 138:

[3] **K. Marx**, Das kapital III_2, kap. 16, S. 138.

[4] **Արիստակես Լաստիվերտցի,** գլ. ԺԲ, էջ 54:

Ո՞ւմ էին շագագործում և կողոպտում. պատմիչը տալիս է այս հարցին պատասխան:

«Զտունս տնակից՝ (տնանկից) աղքատացն, և զսահմանս անդաստանաց նոցա յափշտակէին մեծատունքն…»[1]:

Ինչո՞ւ իշխանները դառնում են «գողակիցք գողոց» և մեծատունները՝ հափշտակիչներ:

«Ամբարտավանություն» անվանում է պերճանքի հավելումը, որն անմիջական հետևանքն է առևտրական կապիտալի զարգացման, ֆեոդալական Հայաստանի՝ Արևելքի-Արևմուտքի ապրանքափոխանակության ցանցին մեջ ընկնելուն:

«Այդ՝ ամենեցուն չար է ախտս այս (պերճանքի հավելման մասին է խոսքը), բայց կարի առաւել կանանց ազգի», ապա թվում է նրանց զարդերը. «… զգինդսն և զմատանիսն, զապարանջանսն, զքօղէսն և զմեհեանդսն և զայլ ամենայն»[2]:

Ահա թե ինչու ստեղծված այս նորանոր և բազմազան պերճանքի պահանջների պատճառով անաշխատ հասույթով ապրողները դառնում են «գողակից գողոց» և մեծատունները՝ հափշտակիչներ. օրինակացնում են վաշխն ու տոկոսը, լինում է «ցորենոյ բազմապատկութիւն»: Եվ այս դրությունը ուղղակի քայքայում է գյուղացիական տնտեսությունները՝ արգելք լինելով արտադրական ուժերի զարգացման, միաժամանակ հավերժացնելով այս թշվառ պայմանները, որտեղ աշխատանքի հասարակական արտադրողականությունը աշխատանքի իսկ հաշվույն չի զարգանում, ինչպես առհասարակ տեսնում ենք կապիտալիստական արտադրության մեջ[3]:

Թե ի՞նչ չափերի հասել էր մանր գյուղացիության շահագործումը և քաղաքներում հարստության կուտակումը, այս մասին կարդում ենք Մատթեոս Ուռհայեցու մոտ հետևյալ տողերում Դավթուկ անուն մի քորեպիսկոպոսի մասին: Նախ ընդհանուր առմամբ քաղաքի հարստության մասին ասելուց հետո՝ «այլ զոսկւոյ և արծաթո՛յ և զդիպակաց ավելորդ է ասել», շարունակում է.

«… Բայց զայս բազում անգամ լուեալ է մեր ի բազմաց յաղագս քորեպիսկոպոսին, որ ասէին Դաւթուկ, եթէ զգանձատունն նորա, Աբրիհմն էառ և քառասուն ուղտ բարձան զգանձարանն նորա ութ հարիւր վեցկի եզանց ելանէին ի տանէ նորա»[4]:

---

[1] **Արիստակես Լաստիվերտցի,** գլ. ԺԲ, էջ 54:

[2] Նույն տեղում, գլ. ԺԲ, էջ 55:

[3] **K. Marx**, Das kapital III_2, kap. 36, 135.

[4] **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 103, հմմտ. **Սմբատ Գունդստաբլ**, Տարեգիրք, Փարիզ, 1856, էջ 66, **Ղ. Ալիշան**, Հայապատում, էջ 324, ծանոթ. 6:

Եթե մենք բառացի չընդունենք պատմիչի մեզ հաղորդած այս վկայությունը, այնուամենայնիվ, կարելի է հաստատ ասել, որ հարստության կուտակումը քաղաքում ստացել էր բավականին խոշոր համեմատություն:

Եվ զարմանալու չէ, երբ Լաստիվերտցին այնքան ծանր խոսքեր է գործածում իշխանական այն դղյակների և ապարանքների մասին, որոնք կառուցվել են «վաշխի» փողերով:

Խոսքը վերաբերում է 1064 թ. սելջուկ-թուրքերի կողմից Անիի գրավման.

«Այլ և ի ճարպոյ անիրաւութեան ի նման գործելոցն տոչորեցաւ բարձրաշէն և գեղեցկայարմար ապրանքն, եղև և ամենայն բնակութիւնն իբրև հողաբլուր, և վաշխն ու նենգութիւնն, որ ի նմա խափանեցա»[1]:

Քաղաքի և գյուղի միջև ստեղծված այս սուր հակադրության առջև, պատմիչը ապարանքի կործանման առթիվ կարծես ցավով խառն ուրախությունն է հայտնում: Այդ ուրախությունը բխում է նրանից, որ քաղաքի հին նահապետական կենցաղը ոտի տակ էր տալիս, և ստեղծվել էր ցոփ ու շվայտ կյանք: Հին բարքերի պաշտպան պատմիչը այսպես է բացատրում այդ շվայտության և պերճանքի առաջ գալը.

«Այս է բաժին անիրաւ քաղաքաց, որ շինեն զինքեանս արեամբ օտարաց, և ’ի քրտանց տնանկաց փարթամանան, և ’ի վաշխից և յանիրաւութեանց զտունս իւրանց ամրացուցանեն. և ինքեանք զմիտս իւրեանց անողորմ ունելով առ աղքատս և տնանկս՝ միայն հեշտութեան և փափկութեան սպասեն, և ’ի գործոց աղտեղութեան ո՛չ խորշին, այլ միայն արբեալ լինեն ի ցանկութեանցն, որ զնոսա ըմբռնեալ ունի»[2]:

Ի՞նչ եզրակացություններ կարող ենք հանել արաբական տիրապետության շրջանում ֆեոդալական Հայաստանի քաղաքի և գյուղի մասին կատարած մեր այս ուսումնասիրությունից:

1. Արաբների տիրապետությամբ ֆեոդալական Հայաստանի տնտեսական կյանքում երկու հիմնական մղիչ ուժեր են հանդես գալիս՝

ա) արաբների դրամական հարկերի գանձումը,

բ) տեղացի փոքրաթիվ ֆեոդալների ձեռքում հողամասերի կենտրոնացումը:

2. Այդ երկու ուժերի հիմնական անդրադարձումը ներքին տնտեսական կյանքում լինում էր այն, որ հասարակական աշխատանքում բաժանում էր առաջանում, և այս պրոցեսը ժամանակի ընթացքում խորանում է:

3. Բացի այս՝ երկրորդ հիմնական անդրադարձումը լինում էր այն, որ արտադրող դասի կեղեքումը ավելի սաստիկ համեմատություններ էր ստանում տեղացի ֆեոդալների կողմից: Առաջին հակադրություն:

---

[1] **Արիստակես Լաստիվերտցի**, գլ, ԻԴ, էջ 111:

[2] Նույն տեղում:

4. Մի կողմից հասարակական աշխատանքում առաջացած բաժանումը, ֆեոդալական Հայաստանի Արևելքի և Արևմուտքի ապրանքափոխանակության ցանցի մեջ ընկնելը, մյուս կողմից՝ անաշխատ սպառողների՝ ավելի մեծ թիվով քաղաքներում բնակություն հաստատելը, ինչպես նաև այլ ազդակներ, նպաստում էին ֆեոդալական Հայաստանի քաղաքների բարգավաճմանը և կամ ծնունդ տալիս նոր քաղաքների:

5. Մասնավորաբար արհեստավորական-առևտրական քաղաքներում՝ առևտրական կապիտալի աշխուժացումով առաջանում էր քաղաքի ազգաբնակության որոշ շերտում հարստության կուտակում:

6. Արաբացիների գանձած դրամական հարկերը և տեղացի իշխանների կեղեքումների սաստկացումը, մանր արտադրող դասը վաշխառուական կապիտալի ձեռքն էր գցում:

7. Ժամանակի ընթացքում քաղաքի ազգաբնակության վերին խավերում այնքան, որքան հարստությունը կուտակվում էր, նույն չափով գյուղը աղքատանում և քայքայվում: Երկրորդ հիմնական հակադրություն:

Ահա այն երկու հիմնական հակադրությունները, որոնք կարողանում ենք մատնանիշ անել ֆեոդալական Հայաստանի քաղաքի և գյուղի միջև արաբական շրջանում:

ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ X ԴԱՐՈՒՄ

I

Խոսել X դարու ֆեոդալական Հայաստանի գյուղացիական շարժումների մասին նշանակում է բացատրել այդ շարժումները ֆեոդալական Հայաստանի այդ ժամանակաշրջանի արտադրական եղանակի, վերջինով պայմանավորվող տնտեսական հակադրությունների հիմքի վրա: Այս հիմնականը:

Մի ուրիշ կարևոր հանգամանք: Մեր կարծիքով՝ Հայաստանի անցյալի պատմությունը ուսումնասիրողները մեթոդական տեսակետից թողել են մի հիմնական բաց: Այդ բացը կայանում է նրանում, որ այդ ուսումնասիրողները բոլորովին աչքաթող են արել երկիրների այն կոմպլեքսը, որի մեջ իր զարգացման պրոցեսն էր կատարում ֆեոդալական Հայաստանը և որի մի փոքրիկ մասն էր հանդիսանում:

Անշուշտ, մեթոդական տեսակետից կատարված այդ անտեսումը սերտ կապ է ունեցել և ունի անցյալի և ներկայի նման ուսումնասիրողների ներկայացրած դասակարգի շահերի և նրանց ընդհանուր աշխարհայացքի հետ:

Այս մասին առիթ կունենանք հանգամանորեն խոսելու վերջում:

Ակադ. Վ. Բարտոլդը 1915 թվին գրել է հետևյալը Անի քաղաքի զարգացման մասին.

«Համենայն դեպս արդյունաբերական և առևտրական մեծ քաղաքը արագ վերածնվեց նոր կյանքի, ինչ որ կապված էր այն կուլտուրական աշխարհիկ պատմական զարգացման ընդհանուր պայմանների հետ, որում (այդ կուլտուրական աշխարհում) Անին և ամբողջ Հայաստանը մի փոքր անկյուն էին կազմում: Ն. Մառի աշակերտներից մինը՝ Հ. Ա. Օրբելին, արդարացի կերպով կապում է Անիի ծաղկումը Առաջավոր Ասիայի մուսուլմանական երկիրների քաղաքային կյանքի ընդհանուր զարգացման հետ»[1]:

Այս տողերում Արևելքի պատմության մասնագետ գիտնականը ֆեոդալական Հայաստանի տնտեսական զարգացումը և նրա կրած հաջորդական փոփոխությունները իրավամբ վերցնում է ոչ թե որպես մի առանձին երևույթ, այլ շաղկապում է Առաջավոր Ասիայի տնտեսական զարգացման ամբողջականության հետ:

Արաբական տիրապետության շրջանում ֆեոդալական Հայաստանի տնտեսական կյանքում առաջացող շարժիչ ուժերը անբացատրելի պիտի

[1] **В. Бартолд**, Зап. Вост. отд. П. З. А. Общ. Т. XXII, вып. I-II, 1915, стр. 408, հմմտ. նաև **И. А. Орбели**, Развалины Ани, СПб., 1911, հայ. թրգմ. Հուսիկ եպիսկոպոսի կողմից «Արարատ» ամսագրում, 1911 № 4-8:

մնային, եթե մենք նկատի չառնենք այդ ժամանակաշրջանի երկու խոշոր առևտրական կենտրոնները՝ Բաղդադն ու Բյուզանդիոնը, որոնց միջև Հայաստանը իր աշխարհագրական դիրքով տարանցիկ առևտուրի հանգույց էր հանդիսանում:

Արաբական հզոր խալիֆաթի կենտրոնական իշխանությունը չնայած սկսած IX դարուց ֆեոդալական մանր իշխանությունների էր վերածվում, սակայն հյուսիսում և արևելքում բարգավաճման էին հասնում այնպիսի քաղաքներ, որոնք իրենց զարգացման աստիճանով գերազանցում էին նախնի քաղաքները:

Այսպես, երբ IX դարում Խորասանի Մերվ և Նիշաբուր քաղաքները «դառնում են կուլտուրական խոշորագույն կենտրոններ», բարգավաճում են Սեբզեվարը, Տուսը և Մեշխեդը, երբ X դարում կուլտուրական կյանքը աստիճանաբար Բաղդատից և Բասրայից անցնում է Պարսկաստանի խոշոր քաղաքները՝ Ռեյ, Սփահան և Շիրազ, երբ Շախրիստանի պատերի շուրջը տեղի ունեցող բազար քաղաքների զարգացման ընթացքում դառնում է իսկական քաղաք[1], չէին կարող այս բոլոր փոփոխություններն իրենց անդրադարձումը չունենալ ֆեոդալական Հայաստանի այն քաղաքների վրա, որոնք տնտեսական տեսակետից մտնում էին այդ ցանցի մեջ:

«Շահաստան Դվինը»[2], «հղփացած Կարսը»[3], «հոյակապ և ականավոր» Արծն և Անի քաղաքները,[4] որոնք «բազում առատությամբ հարստացել են ծովից և ցամաքից», Խլաթ «միջազգային» քաղաքը, ուր հավասարապես խոսվում էր արաբերեն, պարսկերեն և հայերեն[5], պարզ է, որ VIII դարից մինչև XI դարու ֆեոդալական Հայաստանի այդ քաղաքների բարգավաճումը կարելի է բացատրել և ըմբռնել հարևան երկիրներում տնտեսական ասպարեզում առաջացող փոփոխություններով:

Քաղաքների բարգավաճումը Առաջավոր Ասիայում և ֆեոդալական Հայաստանում իրենց անդրադարձումը ունեցել են թե՛ տվյալ երկրի արտադրական եղանակի, թե՛ վերջինով պայմանավորվող արտադրական հարաբերությունների վրա: Այդ ժամանակաշրջանի քաղաքները՝ որպես գյուղի շահագործման կենտրոններ, առաջացրել են ուժեղ հակադրություններ մի կողմից քաղաքի և գյուղի միջև, մյուս կողմից՝ քաղաքի ազգաբնակության այլ դասակարգերի միջև: Այդ հակադրությունները հանգել են իրենց պատմական վախճանին՝ առաջացնելով մի շարք ապստամբական շարժումներ:

Ակադ. Բարտոլդը 1923 թվին «Պարսկաստանի գյուղացիական շար-

---

[1] **В. Бартольд**, Культура мусульманства, Петроград, 1918, стр. 60, 63, 65, 73.

[2] **Թովմա Արծրունի**, III, գլ. ԻԲ, էջ 230:

[3] **Արիստակես Լաստիվերտցի**, գլ. ԺԵ, էջ 61:

[4] Նույն տեղում, գլ. ԺԲ, էջ 53:

[5] Belation de voyage de Nassiri Khosrau, trad. fr. par Ch Schefer, Pariz, 1891, p. 21-22.

ժումների պատմության մասին» վերնագրով լույս ընծայած իր մի հոդվածում շահեկան տեղեկություններ է հաղորդում, սկսած V դարուց, Պարսկաստանում կրոնական դրոշի ներքո տեղի ունեցած գյուղացիական շարժումների մասին[1]:

XI և XII դարերում Առաջավոր Ասիայում տեղի ունեցած իսմայելական շարժման մասին իր «Մուսուլմանականության կուլտուրան» հայտնի աշխատության մեջ նույն գիտնականը գրում է.

«Ըստ երևույթին, կրոնական դրոշի ներքո պայքար էր տեղի ունեցել գյուղի և քաղաքի միջև, քաղաքի ազգաբնակության արիստակրատական և դեմոկրատական տարրերի միջև[2]:

Հայտնի է, որ Պարսկաստանում առաջացող Մանիի և Մազտակի կրոնական աղանդները գտել են իրենց արձագանքները Հայաստանում մանիքեյականության, մծղնեության, պավղիկյան կամ պավղիկյան աղանդներ անվան տակ: Սրանց հաջորդ հանդիսանում է թոնդրակեցիների աղանդը[3]: Մեր այս ուսումնասիրության մեջ խոսելու ենք վերջին աղանդի մասին: Ինչ վերաբերում է V դարուց սկսած աղանդներին և նրանց կապը տնտեսական պատճառներից առաջացած շարժումների հետ, մեր կարծիքով, կարոտ է դեռևս հատուկ ուսումնասիրության: Այդ ուսումնասիրությունը կատարել հնարավոր կլինի միայն այն ժամանակ, երբ խնդրո առարկա ժամանակաշրջանի ֆեոդալական Հայաստանի տնտեսական դրությունը կպարզվի:

Այսպես՝ ֆեոդալական Հայաստանը, տնտեսապես Առաջավոր Ասիայի երկրների ամբողջականության մի փոքրիկ մասը լինելով, թե՛ տնտեսական և թե՛ հասարակական տեսակետից չէր կարող առանձնանալ այդ ամբողջականությունից:

Առհասարակ Առաջավոր Արևելքից տնտեսական դրությունը դեռևս կարոտ է լուսաբանության: Կարծում ենք, որ ֆեոդալական Հայաստանի (ամբողջականության մի մասի) տնտեսական և հասարակական կյանքի պատմության նվիրված ամեն մի ուսումնասիրություն որոշ լույս կսփռի նաև Առաջավոր Արևելքի հասարակական կյանքի վրա: Այս տեսակետից նման ուսումնասիրությունները կստանան կրկնակի նշանակություն.

Մեր այս ուսումնասիրության համար վերին աստիճանի ուշադրության արժանի է ակադ. Բարտոլդի այն տեսակետը, թե իսմայելական շարժումը

---

[1] Из далекого и близкого прошлого. Сборник этюдов на всеобщей истории и честь 50 летней научной жизни Н. И. Кареева, Москва, 1923, стр. 51-62.

[2] «Повидимому, под знаменем религии происходила борьба между деревней и городом и между аристократическими и демократическими элементами городского населения», **В. Бартольд**, Культура мусульманства, стр. 77.

[3] Պրոֆ. Լեոն իր մի հոդվածում, որ ընդհանուր բնույթ է կրում, Հայաստանում առաջացած այս աղանդավորական շարժումները ներկայացնում է որպես սոցիալական շարժումներ, տե՛ս «Նորք», № 1, 1922, էջ 130/51:

XI և XII դարերում իր հիմքում կրում էր տնտեսական հակադրությունները, քանի որ այդ շարժումներն իրենց ձևի տեսակետից հիշեցնում են նաև գյուղացիական այն շարժումները, որոնք կատարվել են X դարում ֆեոդալական Հայաստանում:

II

«Ֆեոդալական Հայաստանի քաղաքի և գյուղի միջև ստեղծված հակադրության» մասին գրված մի ուսումնասիրության մեջ աշխատել եմ երևան հանել արաբական տիրապետության և Բագրատունիներ շրջանում ֆեոդալական Հայաստանի արտադրական հարաբերություններում առաջացած փոփոխությունները և գյուղացիական դասի շահագործման սաստկացումը, ինչպես և նրանց տնտեսությունների քայքայումը[1]:

Ստեղծվել էր քաղաքի և գյուղի միջև ուժեղ հակադրություն:

Ֆեոդալական արտադրության շրջանում, երբ տնտեսական կյանքում առաջացած փոփոխությունները կատարվում էին վերին աստիճանի դանդաղ, պարզ է, որ զարգացման այդ պրոցեսը, որին մենք հետևում ենք մեր վերև հիշված ուսումնասիրության մեջ մինչև XI դարու կեսը, առավել կամ նվազ չափով պատկերացնում է նաև այն ժամանակաշրջանը, որ մեր այս ուսումնասիրության առարկան է հանդիսանում:

Արդյոք ֆեոդալական Հայաստանի հասարակական կյանքում առաջացած այդ հակադրությունները ունեցե՞լ են երբևիցե իրենց արտահայտությունը: Եվ եթե այո, ե՞րբ, որտե՞ղ և ի՞նչ ձևով է եղել այդ:

Ահա՛ այն հիմնական հարցերը, որոնց պիտի աշխատենք պատասխանել:

Խոսքը տալիս ենք այդ դեպքերի ժամանակակից պատմիչին՝ Հովհաննես Դրասխանակերտցիին.

«… Եվ ծառայքն… հնարէին՝ զի զտիարս տրեխաւորեալ ի գետնի գնացուսցեն, և ինքեանք ելցեն յերիվարս ահիպարանոցս և առաքուր հարողս, խրոխտացեալք մեծաւ ապստամբութեամբ»[2]:

Այսպիսի արհամարհական տոնով է նկարագրում հոգևոր ֆեոդալը՝ այդ ժամանակի կաթողիկոսը, ճնշված դասակարգի ապստամբությունը: Այլ կերպ էլ չէր կարելի նրանից սպասել: Սակայն, կարևորը այս չէ:

Ե՞րբ և ի՞նչ հանգամանքներում էր առաջանում այդ ապստամբությունը: Ահա այն հիմնական հարցերը, որոնց պարզաբանումը մեզ հնարավո-

[1] Տե՛ս «Գիտության և արվեստի ինստիտուտի տեղեկագիր», № 2, 3:

[2] **Հովհաննես Դրասխանակերտցի**, գլ. ԾԲ, էջ 324:

րություն կտա պատմիչի այս և հետագա նկարագրությունները հասկանալու:

Հովհաննես Դրասխանակերտցին, ինչպես իր ամբողջ պատմության ընթացքում, այստեղ ևս չի հիշատակում թվական: Սակայն, որոշ է, որ այդ դեպքերը պատահում են Սմբատ I Բագրատունիի մահից հետո, և այն ժամանակ, երբ պատմիչը գտնվում էր դեռևս Հայաստանից դուրս՝ Գուգարաց թագավոր Ատրներսեհի մոտ: Այս երկու հանգամանքները գալիս են ասելու, որ այդ ապստամբությունը տեղի էր ունենում 913/914-918 թվականների միջև[1]:

Ուշագրավ է, որ Սմբատ Բագրատունիի հողամասերի վրա ծայր առնող ապստամբական շարժման զուգադիպում են Սյունիքում եկեղեցական կալվածների շուրջ ծագած գյուղացիական ապստամբությունները:

Ստեփանոս Օրբելյանը, որ Տաթևի վանքում գոյություն ունեցող վավերագրերի հիման վրա նկարագրում է Սյունիքում տեղի ունեցած գյուղացիական ապստամբական շարժումները, որոնց մասին ստորև կխոսենք, առաջին ապստամբության մասին տալիս է 915 թվականը:

Անհավանական չէ, որ Սմբատ Բագրատունիի հողամասերի վրա ծագած ապստամբությունը, որ բավականին խոշոր համեմատություններ է ստացել, կապ չունենար Սյունիքում ծագած այդ ապստամբությունների հետ: Եթե մեր այս ենթադրությունը ճիշտ է, ապա ուրեմն այդ ապստամբությունը տեղի էր ունենում 915/916 թվականին: Նախքան ապստամբության բնույթի և նրա պատճառների վերլուծման անցնելը տեսնենք, թե ի՞նչ էին ներկայացնում իրանցից X դարու առաջին երկու տասնամյակները տնտեսական և հասարակական տեսակետից:

Արաբական տիրապետության շրջանից սկսած՝ IX դարու վերջին քառորդին, ֆեոդալական Հայաստանի հողային սեփականությունների շուրջը ստեղծվել էին բոլորովին նոր դասավորումներ: Մի շարք նախարարական տներ կորցրել էին իրենց հողամասերը և դադարել էին քաղաքական կյանքում որևէ դեր խաղալուց: Այդ շարքում էին գտնվում Մամիկոնյան, Կամսարական, Սահառունի, Ռշտունի և Գնունի նախարարական տները: Իսկ մյուս կողմից Բագրատունի, Արծրունի և Սյունիքի նախարարական տները կարողացել էին կլորացնել և ընդարձակել իրենց հողային սեփականությունները: Մի շարք այլ մանր իշխաններ դարձել էին վասալներ վերջին այս նախարարական տներին[2]:

Այդ ինքնիշխան ֆեոդալները, որոնք հովանավորվում էին կաթողիկոսի

---

[1] **Սամուել Անեցի**, էջ 98, **Հովհաննես Դրասխանակերտցի**, գլ. ԽԴ, էջ 273/74, գլ. ԾԳ, էջ 327, 332, հմմտ. նաև **Daghbaschian**, Gründung Eagratiden Relehes dureh Asot Bagratuni, Berlin, 1893, **Մաղաքիա Օրմանյան**, Ազգապատում, § 712, էջ 1038, § 720, էջ 1046:

[2] Տե՛ս հողային սեփականությունների շուրջը առաջացած այս փոփոխությունների մասին մեր հոդվածը «Գիտության և արվեստի ինստիտուտի տեղեկագիր», № 2, էջ 180/190:

և եպիսկոպոսների կողմից, ի հաշիվ գյուղացիական սեփականությունների, վարձատրում էին հոգևոր և աշխարհիկ իշխաններին իրենց մատուցած ծառայությունների համար, ինչպես այս ցույց են տալիս Ստեփանոս Օրբելյանի պատմության մեջ բերված վավերագրերը և «Վիմական տարեգրում» ամփոփված արձանագրությունները:

Երկրորդ կարևոր հանգամանքը, որ անհրաժեշտ է այստեղ ընդգծել, այդ այն է, որ մինչև այժմ Բագրատունիների կարծեցյալ «անկախ թագավորությունը», փաստորեն, կրկնակի հարկատու էր արաբ խալիֆներին և Ադրբեջանի էմիրին: Եվ երբ Սմբատ I-ը ստիպված է լինում Ադրբեջանի էմիր Յուսուֆին 60.000 դահեկան վճարելու համար ծանր հարկեր դնել, նախարարների դժգոհությունը փոխվում է ապստամբության[1]:

Որ առհասարակ արաբների գանձած դրամական հարկերը գյուղացիության շահագործումը շատ խոշոր չափերի էր հասցրել, այդ ցույց է տալիս «Արաբական հարկային քաղաքականության» մասին մեր կատարած ուսումնասիրությունը: Եթե այդ շահագործումները գյուղացիության կողմից անլուր տառապանքներով տարվել են, ապա մի այնպիսի վայրում, ուր բանվորական մեծ բազմություն է տեղի ունեցել, այդ շահագործումները պատասխանվել են ապստամբություններով:

Մենք թույլ ենք տալիս այստեղ մի շեղում կատարել՝ նկարագրելու այդ բանվորական ապստամբությունը, որ տեղի է ունեցել VIII դարու 70-ական թվականներին: Եվ այս երկու պատճառով. նախ, որ այդ ապստամբությունը կազմում է հեղափոխական շարժումների մի կարևոր էջը, երկրորդ՝ հանդիսանում է իլյուստրացիա ֆեոդալների (ներքին թե արտաքին) կատարած շահագործումների:

Այդ բանվորական ապստամբությունը, որի մանրամասն նկարագրությունը գտնում ենք սուրիացի պատմիչ Դ.ընի դը Դել-Մահրեի մոտ, պատահում է Չորրորդ Հայքում՝ Տուտիս կոչված վայրում: Այստեղ գտնվում է կապար, արծաթ և ուրիշ երկաթե հանքեր: Շրջակա հողազուրկ գյուղացիությունը այն աստիճանի թշվառության է ենթարկվում, որ գնում է դեպի կապարի հանքերը՝ իր ֆիզիկական գոյությունը պաշտպանելու: Տրված լինելով ֆեոդալական շրջանի տեխնիկայի ցածր աստիճանը՝ պարզ է, որ այդ հանքերի շահագործումը հնարավոր էր միայն աշխատանքի ստրկացումով[2]:

Կարճ ժամանակամիջոցում, շարունակում է պատմիչը, այնքան բնակչություն է կուտակվում, որ իշխանությունը նշանակում է հատուկ կառավարիչ: «Խոր և մեծ փոսեր էին փորում կապար փնտրելու համար»:

Ապստամբության որպես պատճառ ցույց է տրվում այն սոսկալի հարկե-

---

[1] Մեր հոդվածը տե՛ս «Պետական համալսարանի գիտական տեղեկագրում», № 2-3, էջ 338 շար.:

[2] Հմմտ. այս մասին **K. Marx**, Das Kapital I, III, Absch, k. 82, էջ 185:

ը, որոնք գանձվելիս են եղել այդ ժամանակ:

«Երբ խեղճերը տեսան, որ այս տիրող ավազակությունը վերջ չի գրտնում, … որ այս երկրամասում կատարված չարիքների համար հաշիվ չէր պահանջվում, ապստամբվում են: Մենք տվինք մեզ և մեր հարևանների համար,- ասում է,- վճարեցինք մեր հարկը և այն, որ պարտավոր չէինք: Ե՞րբ են հագենալու մեր մսով: Մենք ոչինչ չենք տալու այլևս, որովհետև չենք իմանում, թե որտեղի՞ց առնենք նրանց տալու»[1]:

Կառավարիչը ապստամբների վրա բանակ է ուղարկում: Սկսվում է սպանությունը: Կապարի հանքերում աշխատող բանվորները դիմում են փախուստի, և ձմռան ձյունին ու ցրտին նրանց ապստամբությունը արյան մեջ է խեղդվում:

Այս ապստամբությունը ընկնում է 770-775 թվերին:

Արաբական հարկային քաղաքականության մասին մեր կատարած ուսումնասիրության մեջ գրել ենք. «Աս-Սաֆֆա (770-754), նրա եղբոր և հաջորդի՝ Ալ-Մանսուրի (755-775), Աբբասյան առաջին խալիֆների օրով Հայաստանում կյանքը դառնում է անտանելի» («Պետական համալսարանի գիտական տեղեկագիր» № 2-3, էջ 329): Ժամանակակից Ղևոնդ պատմիչից բերել էինք մանրամասն վկայություններ այդ մասին: Չորրորդ Հայքում ծագած ապստամբությունը, ինչպես սուրիացի պատմիչն է հաղորդում, անմիջական կապ ունի այն ընդհանուր դրության հետ, որ ստեղծվել էր Աբբասյան առաջին խալիֆաների օրով, այն ժամանակ, երբ նոր էր կառուցվել Բաղդադը, և որի առասպելական դարձած փարթամությունը կատարվում էր ի հաշիվ գյուղացիության և բանվորության արյուն-քրտինքի:

Երրորդ՝ ֆեոդալական Հայաստանի X դարը հատկանշական է նաև այն տեսակետից, որ ստեղծվում է քաղաքների իշխանություն: Դվինը, Անին, Արծնը, Կարինը, Կարսը Հայաստանի հյուսիսում, Վանը, Խլաթը և ուրիշներ հարավում տարանցիկ առևտուրի շնորհիվ կարողանում են զարգանալ և բարգավաճել այնպես, ինչպես Առաջավոր Ասիայի մի շարք քաղաքները, որոնց մասին խոսել ենք վերևում:

Իսկ քաղաքների աճումը նշանակում էր այս շրջանում առևտրական և սրան անբաժան ընկեր վաշխառուական կապիտալի կուտակումը, մի կապիտալ, որի սուր կողմը ուղղված էր գյուղացիական մանր տնտեսությունների դեմ:

«Ժամանակի ընթացքում քաղաքի ազգաբնակության վերին խավերում այնքան, որքան հարստությունը կուտակվում էր, նույն չափով գյուղը աղքատանում և քայքայվում էր»[2]:

---

[1] VI ème partie Chronique de Denys de Tell-Mahrè trad. par I. B. Chabot, Paris, 1893, էջ 172-175.

[2] Ֆեոդալական Հայաստանի առևտրական և վաշխառուական կապիտալի մասին տե՛ս մեր ուսումնասիրությունը «Գիտության և արվեստի ինստիտուտի տեղեկագրում», № 3:

Ահա այն հիմնական եզրակացություններից մինը, որին հանգել ենք ֆեոդալական Հայաստանի քաղաքի և գյուղի միջև ստեղծված հակադրության մասին կատարած մեր ուսումնասիրության մեջ:

Այսպես՝ հողային սեփականությունների փոքրաթիվ, սակայն, ուժեղ ֆեոդալների ձեռքում կենտրոնացումը, արտաքին և ներքին ֆեոդալների կողմից մեծ չափերով դրամական հարկերի գանձումը, բարգավաճող քաղաքները և նրանց մեջ կուտակվող առևտրական և վաշխառուական կապիտալը և այս բոլորի հետևանք՝ մանր գյուղացիական տնտեսությունների քայքայումը և նրանց ստրկացումը. ահա այն տնտեսական դրությունը, որ գոյություն ուներ ուսումնասիրության նյութ այս ժամանակաշրջանում:

Գյուղացիության տնտեսական այս ծանր դրությունը, անտարակույս, հանդիսանում էր ապստամբություն կատարելու հիմնական շարժիչ ուժ: Սակայն, այս դեռ բավական չէր ճնշված գյուղացիության զենք բարձրացնելու իր շահագործողների դեմ: Հարկավոր էր երկրորդ՝ մի այլ էական պայմանի գոյությունը:

Չորրորդ՝ ֆեոդալական Հայաստանի խոշոր ֆեոդալները X դարու առաջին երկու տասնամյակում ապրում էին քաղաքական կրիզիսի շրջան: Այդ կրիզիսը իր ամենասուր արտահայտությունը ստանում է, երբ այս ժամանակաշրջանի Բագրատունի խոշոր ֆեոդալը Դվինում Ադրբեջանի Էմիրի կողմից սպանվում է 913/914 թվականին:

Տեղացի ֆեոդալների ապրած այդ քաղաքական կրիզիսը ուներ իր բազմաթիվ պատճառները:

Տկարացող արաբական պետությունը և տեղացի ֆեոդալների միջև իշխանության շուրջն ստեղծված պայքարները դեռևս IX դարու 90-ական թվականներից ֆեոդալական Հայաստանում առաջացրել էին արաբական և բյուզանդական օրիենտացիայի շուրջը հակոտնյա դրություններ: Արծրունի և Բագրատունի նախարարական տների միջև մղված պայքարը, Սմբատ I-ի Ադրբեջանի Էմիրի դեմ երկար տարիների ընթացքում վարած պատերազմները օրիենտացիայի շուրջն ստեղծված հակոտնյա դրությունների հետևանք էին: Որ այդ պայքարները մեծ չափով տկարացրել էին տեղացի ֆեոդալներին և Բագրատունի թագավորի վասալներին, այդ մասին ունենք հետաքրքիր վկայություն Հովհաննես Դրասխանակերտցիի մոտ.

«Այլ և համազունք ևս արքային մերոյ (ակնարկվում է Սմբատ Բագրատունիին) իշխանք և կուսակալք և պետք ոմանք, սպառեալք էին ի խարդաւանական մահու յոստիկանէ անտի ըստ նախապատում իմոյն բանի…»[1]:

Նվազ դեր չէին կատարում ֆեոդալների տկարացման ուղղությամբ տեղացի իշխանների պայքարները և մասնավորաբար մի շարք հարկատու իշ-

[1] **Հովհաննես Դրասխանակերտցի**, գլ. ԾԲ, էջ 293, հմմտ. նաև **Daghbaschian**, Gründund u. s. w., Berlin, 1893:

խանների ապստամբությունը Սմբատի I-ի դեմ, 908/909 թվին դրված ծանր հարկերի պատճառով, մի ապստամբություն, որ վերջանում էր ապստամբ իշխանների պարտությամբ:

Տարիների այս պայքարը վերջանում էր, ինչպես ասացինք, Սմբատ Բագրատունիի կատարյալ պարտությամբ: Սակայն, օրիենտացիայի շուրջը մղվող պայքարը ստանում էր ավելի սուր բնույթ[1], երբ Աղրբեջանի էմիրը Հայաստանի Արծրունի ֆեոդալների՝ իր համար կատարած ծառայությունները վարձատրում էր լիուլի, և այս կերպով Սմբատի հաջորդի՝ Աշոտ Բագրատունիի և Արծրունիների միջև սուր պայքար է տեղի ունենում իշխանության շուրջը:

Ստեղծված այդ դրության մասին Սամուել Անեցին իր հատուկ լակոնական ոճով այսպես է գրում.

«ՋԺԶ (916 թ.) հայոց անիշխանութիւն ամս է (7)»[2]:

«Հայոց անիշխանություն». ահա այն հիմնական երկրորդ պայմանը, տեղացի ֆեոդալների տկարացումը, որ հնարավորություն էր տալիս ճնշված գյուղացիության, որն ամենայն հավանականությամբ այդ պայքարների ընթացքում գտնվում էր զինված դրության մեջ, կարողանում է օգտագործել ստեղծված քաղաքական կրիզիսը:

Այժմ վերադառնանք ժամանակակից պատմիչին:

Ուրեմն «ծառաները հնարում էին, որ տերերը տրեխ հագած գնան, և իրենք, մեծ ապստամբությամբ խրոխտացած, վիզը տնկած ձիերի վրա բարձրանան»:

Այստեղ ուշագրավ է «ծառայ» տերմինը, որ ֆեոդալական Հայաստանում գործ է ածվել տնտեսապես և անձնապես իշխաններից կախյալ դրության մեջ եղող մարդկանց համար[3]:

Պատմիչի հետևյալ վկայությունը մի կողմից կոնկրետացնում է, թե ովքեր էին այդ «ծառաները», իսկ մյուս կողմից բացատրում է, թե ինչու առաջանում էր այդ ապստամբությունը.

«… Իսկ թագաւորք մեր և պետք և իշխանք զորս ի բնէ նախարարութիւնքն էին, ջանային վարատել և խլել իւրաքանչիւրոցն բնակութեանց, և ըստ ախորժից իմն ձեռական և նոր ստեղծանել պայազատս և սպասա-

---

[1] Բյուզանդական օրիենտացիայի մասին ուշագրավ փաստաթուղթ է հունաց պատրիարք Նիկոլաուս Միստիկոսի (2-րդ անգամ պատրիարք 912-925 թթ.) նամակն ուղղված Հովհաննես Կաթողիկոսին և վերջինի կատարած ջանքերն այս ուղղությամբ: **Հովհաննես Դրասխանակերտցի,** գլ. ԾԴ:

[2] **Սամուել Անեցի**, Վաղարշապատ, 1893, էջ 98:

[3] **Պրոֆ. Հակ. Մանանդյան**, Դիտողություններ հին Հայաստանի շինականների դրության մասին, «Պետական համալսարանի գիտական տեղեկագիր», № 1. I, Karsr Zeltsch, I vergl, Rechtsw. Bd. XX, s. 16:

լարս»[1]:

Երբ վերհիշենք վերև ներքին և արտաքին ֆեոդալների միջև մղված պատերազմների մասին մեր ասածները, այն ժամանակ պատմիչի այս մութ խոսքերը կլուսավորվեն: Պարզ է, որ «թագավոր» և «իշխան» ֆեոդալների համար կռվող հավատարիմներն իրենց ծառայության համար պետք է վարձատրվեին, և նրանք վարձատրվում էին ի հաշիվ գյուղացիական հողաբաժինների, որոնց վրա աշխատողները «ծառա» էին դառնում տերերին ստեղծված նոր գույքային հարաբերությունների պայմաններում:

Հոգևոր ֆեոդալը լռությամբ է անցնում հողային բոլոր այն նվիրատվությունների մասին, որոնք տրվում էին այս ժամանակաշրջանում եկեղեցիին աշխարհիկ ֆեոդալների կողմից «հոգվո փրկության» համար: Այս մասին ուշագրավ է Սյունիքում կատարված ապստամբությունը:

Ուրեմն իրենց «բնակություններից քշվողները», որոնք «ծառաների» սոցիալական դրության էին իջնում, պատեհ մոմենտին ապստամբություն էին բարձրացնում իրենց անցյալի սեփականություններին տիրանալու նպատակով:

Այդ շարժումը ավելի էր խորանում, եթե վերև հիշված տնտեսական երեք պատճառների ազդեցության ներքո առհասարակ արտադրող դասի, գյուղացիության, տնտեսական և սոցիալական դրությունը օրըստօրե վատթարանում էր:

Ուշագրավ են այն որակումները, որոնք տրվում էին «ծառաներին»՝ «անկատար», «յիւրոց», «ընդ հարկին անկելոց»: Արաբական այն ասացվածքը, թե «մեկի հետ կոշտ վարվել այնպես, ինչպես գյուղացու մարդու հետ», անշուշտ, հիմնավորվում է գյուղացու տնտեսական դրությամբ:

Ահա այդ ճնշված դասակարգ էր, մեր կարծիքով, որ ոտի էր կանգնում իր շահերի պաշտպանության համար: Այս հաստատվում է շարժման ստացած ծավալով. ահա թե ինչպես է նկարագրում պատմիչը.

«Այլ և եղբայր ընդ եղբօր, և ազգայինք ընդ ազգայինս ընդվզեալ՝ ի նախանձ և ի չարակնութիւն և ի գրգռութիւն, և ի կատարեալ ատելութիւն ընդ միմեանս բերէին: Եւ այսպէս համագունդ ընդ միմեանս հարեալք ի հակառակութիւն և ի կռիւ պայքարէին, և միշտ սուր յազդեր ունելով, բազում ևս քան զթշնամիսն հեղուին ի միմեանց զարեան ճապաղիս: Եւ առ հասարակ զքաղաքս և զգեղս և զաւանս և զագարակս, այլ և զտունս իւրեանց քանդէին ձեռօք իւրեանց»[2]:

Մեր առաջ պարզվում է իսկական քաղաքացիական կռվի մի պատկեր,

---

[1] **Հովհաննես Դրասխանակերտցի**, գլ. ԾԲ, էջ 324, նման մի ուշագրավ վկայություն գտնում ենք Արիստակես Լաստիվերտցիի մոտ, գլ. ԺԲ, էջ 54, «Զտունս տնակից՝ աղքատացն, և զսահմանս անդաստանաց նոցա յափշտակ էին մեծատունքն…»:

[2] **Հովհաննես Դրասխանակերտցի**, գլ. ԺԲ, էջ 324:

որի այլ պատճառը Ասողիկ պատմիչը բանաստեղծական կերպով հետևյալ տողերում արտահայտում է.

«Այլ յորժամ գիրացաք, ստուարացաք, լայնացաք և անկուշեցաք,… քահանայք և ժողովուրդք, մեծամեծք և փոքունք բամբասեցան ի լիութիւն հացի և ի յղփութիւն գինւոյ…»[1]:

Այստեղ ցոլանում է հակադրության այն պատկերը, որը ստեղծվել էր քաղաքի և գյուղի միջև:

Նույն այդ նկարագրությունից որոշակի երևում է, որ «ծառաների» այդ ապստամբությունն ընդգրկել է քաղաքներ, գյուղեր և ավաններ: Այսինքն՝ նա չի եղել տեղական, սահմանափակ երկրամասի վրա կատարված մի ապստամբություն, այլ այդ շարժումը ընդգրկել է առնվազն Սմբատ Բագրատունիի ժամանակաշրջանի Բագրատունիների հարստության երկրամասերը: Անտարակույս, նման մի խոշոր ապստամբություն չէր կարող առանց արձագանքի մնալ նաև այն վայրերում, որոնց իշխանները որոշ կախյալ դիրքում էին Բագրատունի թագավորների հանդեպ: Այդ մասին մենք ունենք վկայություններ միայն Սյունիքից:

Բագրատունիների հողամասերի վրա ծագած այս ապստամբության մասին Դաղբաշյանը հետևյալն է գրում.

«Մի ապստամբություն, որ մոտավորապես 916 թվին առաջացավ հայ գյուղացիության կողմից ազնվականների դեմ, Հովհաննես Կաթողիկոսի կողմից որպես թեթևամտություն և անաստվածություն խարանվում է»[2]:

Աշխարհիկ ֆեոդալների հետ համանման շահերով կապված հոգևոր ֆեոդալի կողմից պարզ է, որ նման մի ապստամբություն այլ որակում չէր կարող ստանալ: Իսկ մեր ժամանակների պատմաբանները տարիներ լռության մեջ են մատնել այս: Իհարկե, այս բոլորն ուներ իր պատճառները: Նույնպես զարմանալի չէ, որ մեր օրերի պատմիչ J. de Morgan-ը, որ հայ բուրժուազիայի ապսպրանքի վրա Եվրոպային պրոպականդա անելու նպատակով 1919 թվին գրել է «Histoire du people arménien» աշխատությունը, հետևյալ բառերով է որակում այս գյուղացիական ապստամբությունը.

«Այս ժամանակներում … Հայաստանը ամեն տարի ավերվում էր մուսուլմանների և հայ գյուղացի ավազակների կողմից, որոնք ապստակում էին երկիրը»[3]:

Այսպես է գրվել մինչև նորագույն ժամանակները ֆեոդալական Հայաստանի պատմությունը:

---

[1] **Ասողիկ**, III, գլ. Գ, էջ 162, Պետերբուրգ, 1885:

[2] **Daghbaschian**, Grundund u. s. w. 102.

[3] **J. de Morgan**, Histoire du pruple arménien. Paris 1919, p. 138. «Pendant ectte peroode l'Armènie ètait chaque annèe dèvastèe par jes musufmans et pas les bandes de paysans armènies qui infestaient le pays».

Ապստամբության մասին այն մեջբերումները, որ մենք արեցինք, կրում են Հովհաննես Կաթողիկոսի Պատմության մեջ հետևյալ վերնագիրը. «Յաղագս յառնելոյ օտար ազգաց ի վերայ երկրի մերում, և անմիաբանութեան նախարարաց մերոց ընդ իրեարու»: Այս վերնագիրը կարող է շփոթություն առաջացնել: Սակայն, պետք է ասել, որ այդ վերնագիրը ոչ թե պատմիչի կողմից գրված է, այլ, մեր կարծիքով, հետագա գրիչների գործ է, որովհետև Երուսաղեմի՝ 1867 թվի երկրորդ հրատարակության սկզբում հրատարակիչը մեզ հայտնում է, որ գոյություն ունեցող վեց գրչագրերից միայն երկուսը բաժանված են եղել գլուխների և ունեցել վերնագրեր: Երուսաղեմի առաջին հրատարակությունը տպագրվել է առանց գլուխների և վերնագրերի:

Հովհաննես Կաթողիկոսն իր Պատմության ընթացքում երբ նկարագրում է հայ նախարարների՝ օտար իշխողների, թագավորական տան դեմ մղած պայքարները և կամ հայ նախարարների միմյանց միջև տեղի ունեցած կռիվները, նման դեպքերում պատմիչի կողմից ճշգրիտ հիշատակվում են նախարարների անունները և կռվի վայրերը: Ներկա դեպքում պատմվածքի ընդհանուր ձևը մեզ հնարավորություն է տալիս ենթադրելու, որ այս ընդհանուր խնդրի բնույթ է կրում:

Որ այդ իսկապես, ընդհանուր գյուղացիական մի ապստամբություն է եղել, այդ ապացուցվում է նաև այն համատարած սովի նկարագրությամբ, որ հաջորդում է անմիջապես այս դեպքերի նկարագրությունից հետո: Բավական է մեջբերել այս մասին այն, ինչ որ «սոսկումով» և «սարսափումով» ասում է պատմիչը.

«…Զի մարդք հաւատարիմք ստուգեցին մեզ զբանս ճշմարիտ, եթէ մարդք ոմանք զսովամահ որդւոց իւրեանց զմարմինս ի կերակուր իւրեանց պատրաստեցին» (**Հովհաննես Դրասխանակերտցի**, գլ. ԾԳ, էջ 329):

Ըստ երևույթին, նման սոսկալի պայմաններում բռնված կռիվը իր թափումն էր.

«Բայց առաւել քան զայսոսիկ խռովչացն վտանգ խոշտանգանաց զնոսա կորուսանէր, զի ընմբռնեալքն ի ձեռաց նոցա ի հարուածս անհնարին չարչարանաց տանջեալ լինէին, թէ գուցէ գտցի ինչ առ նոսա կերակուր: …Եւ զայս (նկարագրված խոշտանգումները) ոչ միայն ի թշնամիսն՝ այլև ի մարդս մերձաւորս և յընկերակիցս և ի ծանոթս էր տեսանել: Եւ այսպիսի խոր խռովութիւն պատէր զքաղաքօք, և գիշեր լի մահուամբ զգիւղիւք և զգերդաստանօք. և մարմինք մերկք ընկեցեալ կային ի փողոցս և ի հրապարակս, և տեսիլ սարսափելի անարգութեան տային տեսողացն, որպէս զի ոչ ևս ոք կարէր տալ զնոսա գերեզմանոց» (**Հովհաննես Դրասխանակերտցի**, գլ. ԾԳ, էջ 331):

Արևմտյան Եվրոպայում գյուղացիական շարժումներին գրեթե միշտ ընկերացել են համաճարակ և սով:

Պատմիչի նկարագրությունները չեն կարող ոչ մի կասկած թողնել, որ իրապես սա մի ընդհանուր գյուղացիական ապստամբություն էր:

III

Այժմ հարց է առաջանում՝ արդյոք այդ ապստամբական շարժումները կրոնական դրոշի տակ կատարվե՞լ են, ինչպես այդ տեսնում ենք հարևան Պարսկաստանում և Առաջավոր Արևելքում, որի մասին ինչպես վերև հիշատակեցինք, խոսում է ակադ. Բարտոլդը:

Հովհաննես պատմիչի մոտ ունենք այսպիսի մի մութ պարբերություն այն գլխի սկզբում, որտեղ նկարագրվում է այդ ապստամբությունը.

«Եւ ապա խառն ընդ նոսին ևս աւազակք (մի այլ օրինակում՝ ռամիկք) և սրիկայք ելին ի մարտս ընդ երկրի մերում, և բազում ինչ այն էր՝ որ ի նմանէ անցք ընդ աստուածաշէն եկեղեցիս անցանէին յեղծումն և ի խոպանումն և յապակունումն վարակել»[1]:

Պատմիչը մեզ չի հայտում, թե ովքե՞ր էին այդ «ավազակները» և «սրիկաները»: Միայն որոշ է, որ նրանց հարվածները ուղղվել են առաջին հերթին եկեղեցիին դեմ:

Ասողիկ պատմիչի մոտ այս մասին կարդում ենք հետևյալ շահեկան վկայությունը.

«Եւ յետ նորա (Մաշտոց կաթողիկոսից - Հ. Զ.) նստի յաթոռ հայրապետութեան յՅԽԶ (897 թ.) թուականին Տէր Յովհաննէս ի Դուինայ, ճարտասան և պատմագիր՝ ամս ԻԲ (22): Յաւուրս սորա երևեցաւ Սմբատ Թոնդրակաց առաջինն ի Զարեհաւան գեղջէ ի Ծաղկոտն գաւառէ, հակառակ ամենայն քրիստոնէական կարգաց»[2]:

Եթե Հովհաննես պատմիչի մոտ հիշատակված «ավազակները» և «սրիկաները» Ասողիկի հայտնած թոնդրակեցիներն են, այն ժամանակ վերև դրած հարցի պատասխանը տրվում է դրական իմաստով, և այդ կերպով թոնդրակեցիների աղանդի հասարակական նշանակությունը կստանա բոլորովին նոր բովանդակություն:

Ֆեոդալական Հայաստանում առաջացած կրոնական այդ շարժումները և նրանց կապը հասարակական շարժումների հետ դեռևս կարոտ են հատուկ ուսումնասիրությունների:

Թոնդրակեցերի շարժման մասին գրված մեզ ծանոթ նորագույն ուսումնասիրությունը հանդիսանում է պրոֆ. Լեոյի հոդվածը՝ տպագրված «Նորքի» № 1-ում: Լեոն, մեր կարծիքով, կրկնում է այն սխալը, որ կատարել է Միքայել Չամչյանը՝ Սմբատ Թոնդրակեցին ժամանակակից դնելով Հովհաննես Ովայեցի կաթողիկոսին (833-855):

Մենք հեռու ենք մտածելուց, թե մանիքյան, պավղիկյան և թոնդրակեցիների կրոնական շարժումները միմյանց հետ իդեական կապ չեն ունեցած:

---

[1] **Հովհաննես Դրասխանակերտցի**, գլ. ԾԲ, էջ 321/22:

[2] **Ասողիկ**, III, գլ. Գ, էջ 160:

Այնքան, որքան այդ շարժումները ուղղված էին շահագործող դասակարգի պաշտոնական կրոն հանդիսացող իդեոլոգիայի դեմ, նույն չափով և սույն շարժումները կրոնական ձևի տակ ունեցել են ներքին սերտ կապ, քանի գոյություն ունեին շահագործման այդ պայմանները: Երևի այս տեսակետից ելնելով՝ Լեոն միացնում է ժամանակագրական կարգով թոնդրակիցներին պավղիկյան աղանդավորներին:

Սակայն, չպետք է մոռանալ մի կարևոր հանգամանք, որ ամեն մի հեղափոխական շարժում ունի իր ստատիկ վիճակը, քանի քաղաքական և տընտեսական պայմանները ձեռնտու չեն այդ շարժման ակտիվ արտահայտության: Մեր կարծիքով՝ նման մի աննպաստ շրջան էր հեղափոխական շարժումների համար ֆեոդալական Հայաստանի IX դարը, մասնավորաբար այդ դարու 30-50-ական թվականները: Այս եզրակացության են հասցնում մեզ հարկերի գանձման և հողային սեփականությունների շուրջը կատարած մեր ուսումնասիրությունները:

Սմբատ Թոնդրակեցին հանդիսանում է ոչ թե միայն նոր գաղափարների քարոզիչ, այլև այդ գաղափարները կյանքում իրագործելու համար ձըգտող ուժեղ մի մարտնչող: Այլ կերպ սկսած՝ Անանիա Նարեկացիից, Գրիգոր Նարեկացիից մինչև Գրիգոր Մագիստրոսը նրա դեմ մղված արշավանքները իմաստից զուրկ պիտի լինեին:

Եթե IX դարու 30-50 թվականները աննպաստ էին շահագործողների դեմ ակտիվ պայքարի դուրս գալու, ապա X դարու առաջին երկու տասնամյակները, վերև մեր ասածներից ելնելով, ներկայացնում էին մեր մատնանշած երկու իսկական պայմանները՝ ուժեղ շահագործում և իշխողների կրիտիկական դրություն:

Նույնպիսի կրիզիս էր ապրում Հայաստանի ֆեոդալական դասակարգը XI դարու կեսին, և այդ շրջանում էլ նույն թոնդրակեցիների աղանդավորական շարժումը ստանում է լայն ծավալ, որի դեմ արշավանք է կազմակերպվում բյուզանդական պաշտոնակատար Գրիգոր Մագիստրոսի կողմից 1051-1054 թվականներին: Այդ շարժման մանրամասնությունները կարդում ենք Արիստակես Լաստիվերտցիի մոտ (գլ. ԻԳ, էջ 95-108): Այս շարժումը պատկանում է պատմական մի այլ էպոխայի և կազմում է առանձին ուսումնասիրությունների նյութ:

Այժմ անցնենք հարցի փաստական կողմի քննության: Վերև ասացինք, թե Ասողիկ պատմիչը Սմբատ Թոնդրակեցին ժամանակակից է դնում Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսին, իսկ Գրիգոր Մագիստրոս գրում է.

«…Պիղծն Սմբատ անիծեալն այն երևեցաւ յաւուրս տեառն Հովհաննիսի և Սմբատի Բագրատունւոյ, ուսեալ զչար մոլութիւն յումմենէ պարսկական բժիշկէ և յաստեղաբաշխէ մոգէ, զոր Մուջիսիկըդ կոչէք»[1]:

[1] **Գրիգոր Մագիստրոս**, Թուղթ ԿԵ, էջ 153:

Գրիգոր Մագիստրոսի այս վկայության մեջ հիշատակված Հովհաննես Կաթողիկոսը կարող էր վերաբերել և՛ Դրասխանակերտցիին, և՛ թե Ովայեցիին, ինչպես Սմբատը՝ թե՛ Սմբատ Խոստովանողին, թե՛ Սմբատ I Բագրատունիին: Այնինչ Ասողիկ պատմիչի վկայության մեջ որոշակի ասված է Հովհաննես Դրասխանակերտցիի ժամանակի մասին, ապա ուրեմն՝ Սմբատ I-ի մահից հետո կատարված ապստամբության ժամանակակից:

Գրիգոր Մագիստրոսի այս վկայությունը շահեկան է այլ տեսակետից. այդտեղ ցույց է տրվում Հայաստանում սկսած այս շարժման ելակետը, Պարսկաստանը:

Գրիգոր Մագիստրոսը նույն թղթում գրում է նաև հետևյալը, որ հիմք է ծառայել հետագա ուսումնասիրողներին այդ շարժման թվականը ճշտելու.

«…Զոր նորին աղանդով կացին ավելի քան զՃ. և Հ. (170) ամ մինչև զայս»[1]:

Հայտնի է, որ Մագիստրոսի արշավանքը թոնդրակեցիների դեմ սկսել է 1051-1054 թվականներին[2], ուրեմն, ըստ նրա վկայության, այդ շարժումը ընկնում է 881-884 թվականներին:

Կարապետ Տեր-Մկրտչյանը պավղիկյանների մասին գրած իր մանրամասն ուսումնասիրության մեջ այս կետում, առանց հիմնավորման, ընդունում է Մ. Չամչյանի տեսակետը, ըստ որի՝ Սմբատ Թոնդրակեցին ժամանակակից է ցույց տրվում Հովհաննես Ովայեցի կաթողիկոսին[3]: Մի էական հանգամանք մոռացության է տրվում վկայություններ հաղորդողների ժամանակագրական մերձավորությունը այդ իրադարձություններին: Այս տեսակետից առաջնությունը ընկնում է Ասողիկ պատմիչին:

Մաղաքիա Օրմանյանը նկատում է իրավամբ.

«…Մինչ Ովայեցիին ժամանակը 855-ին կվերջանա, և Դրասխանակերտցին 897-ին կսկսի, և ավելի բնական է հետագային հետ կապել ծագման սկիզբը, քան թե իբր 30 տարի առաջ վախճանված կաթողիկոսին և իշխանավորին հետ, ինչպես սովորաբար կկրկնվի…

Ամեն առիթի մեջ անհավանական չէ ժամանակագրական նկատել Ասողիկի տված տեղեկությունը»[4]:

---

[1] **Գրիգոր Մագիստրոս**, Թուղթ ԿԷ, էջ 154, Թուղթ ԿԸ, էջ 167, Գ. Տեր-Մկրտչյանը սխալվում է (էջ 88), երբ ցույց տրված թվերից մին գրում է, թե 200 է:

[2] **Կ. Կոստանյանց**, Մագիստրոսի թղթերը, էջ ԽԵ:

[3] **Kar. Ter-Mkrttschian**, Die Paulikianer u. s. w. Leipzig, 1893, S. 83, Մխիթար Այրիվանեցիի այն վկայությունը, ըստ որի՝ այդ շարժումը փոխադրվում է 821 թ., նշանակություն կարող է ունենալ միայն կրոնական աղանդների կապը երևան հանելու տեսակետից:

[4] **Մաղաքիա Օրմանյան**, Ազգապատում, մաս Ա, § 736, էջ 1068, Բարսեղ վ. Սարգիսյանը (Ուսումնասիրություն և այլն, էջ 62) այն կասկածն է հայտնում, որ կարող էր Սմբատ Թոնդրակեցին Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսին ժամանակակից լիներ, Սարգիսյանը սխալվում է, երբ Ասողիկի փոխարեն գրում է Սամուել Անեցի:

Մենք շարժման ծագման հարց չենք հարուցում. այդ կարող է առաջ լինել: Այստեղ մեզ հետաքրքրողը այդ շարժման ակտիվ արտահայտություն ստանալու շրջանն է: Բոլորը համաձայն են այն կետում, որ այդ շարժումը մեծ ծավալ է ստացել X դարում[1]:

Ի՞նչ եզրակացության կարելի է հանգել այս բոլորից հետո: Ունենք երկու հիմնական, պատմական վկայություն, որոնցից ժամանակագրական կարգով դեպքերին ավելի մոտ կանգնողը՝ Ասողիկ պատմիչը, թոնդրակեցիների պայքարի շրջանը դնում է ժամանակակից մեր նկարագրած ապստամբության: Երկրորդը՝ Գրիգոր Մագիստրոսը, տարբերվում է այս կետում: Հետագա ուսումնասիրողներից չորսը՝ Մ. Չամչյան, Գ. Տեր-Մկրտչյան, Բարսեղ վ. Սարգիսյան և Մաղաքիա Օրմանյան, բաժանվում են երկու մասի: Ըստ այս վկայությունների՝ առաջին երկուսը, Մագիստրոսի վկայության վրա հիմնվելով, գործում են սխալ, երբ Սմբատ Թոնդրակեցին Հովհաննես Ովայեցի կաթողիկոսին ժամանակակից են դարձնում: Իսկ երկու վերջինները ընդունում են Ասողիկի վկայության ճշտությունը:

Մեր կարծիքով՝ իրավունք ունեն վերջինները, և Սմբատի շարժումը ժամանակակից էր Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսին:

Սմբատ Զարեհավանցին որպես տեսաբա՞ն, թե՞ առաջնորդ էր հանդիսանում 915/16 թվի ապստամբական շարժման, երկրորդական խնդիր է մեր ուսումնասիրության տեսակետից: Էականն այն է, որ ապստամբական շարժման զուգընթաց է գնում թնդրակեցիների աղանդի աճումը և ծավալումը:

Այժմ երկրորդ էական խնդիրը կայանում է նրանում, թե ի՞նչ էր ներկայացնում իրանից թոնդրակեցիների աղանդը: Անվերջ հալածանքները աղանդավորական այդ շարժման առաջնորդներից ոչ մի գրավոր հիշատակություն չի հասցրել մեզ: Գոյություն ունեն հակառակորդների՝ Գրիգոր Նարեկացիի, Գրիգոր Մագիստրոսի և Արիստակես Լաստիվերտցիի՝ նրանց մասին գրածները:

Այդ վկայությունների ընթերցումից գալիս ենք հետևյալ եզրակացությունների՝

ա) անխնա պայքար՝ տիրող եկեղեցիի և կղերական, միստիկ աշխարհայացքի դեմ,

բ) պայքար գոյություն ունեցող գույքային հարաբերությունների դեմ,

գ) պայքար գոյություն ունեցող հասարակական ինստիտուտների դեմ:

Երբեք զարմանալի չէ, որ ինչպես ֆեոդալական Հայաստանի կղերականները, նույնպես և վենետիկյան Մխիթարյանը հայհոյանք և լուտանք են թափում այդ աղանդավորների գլխին: Հետաքրքրական է այս տեսակետից Բարսեղ վ. Սարգիսյանի հետևյալ զուգահեռը, որ նա 1893 թվին թոնդրակեցիների աղանդի և սոցիալիզմի միջև քաշում է.

---

[1] **Kar. Ter-Mkrttschian**, S. 83.

«Միով բանիւ, նորահնար բառիս ճիշտ նշանակութեամբ, հին աշխարհի ոչնչականներ էին և ընկերվարականներ և ամեն բան կուզէին ոչնչացնել[1]:

Իհարկե, միամտություն կլիներ մեր կողմից սպասել, որ Մխիթարյան մի վանահայր տարբեր տնտեսական ֆազերի կոնկրետ անալիզի վրա հիմնված դասակարգային պայքարի արտահայտության այլ եղանակներ ըմբռներ, ինչպես և պաշտպան կանգներ սոցիալիզմին: «Դասակարգային գոյությունը կապված է միայն պայքարի պատմական որոշ ձևերի հետ, որոնք հատուկ են արտադրության զարգացմանը»:

Որ իրապես թոնդրակեցիները տիրող գույքային հարաբերությունների դեմ պայքարի էին մտել տիրող ֆեոդալական դասակարգի հետ, բավական է հիշատակել միայն Գրիգոր Նարեկացիի այն ճոխ ածականները, որոնք ուղղվում են այդ աղանդավորների հասցեին.

«Որք են շարք շանց և գումարք գողոց, և գունդք գայլոց և դասք դիւաց, և ազինք աւազակաց և կոյտք կերչաց, և բոյլք բարբարոսաց և խումբ խաչահանուաց, և ժողովք չարեաց և արք արեանց…»[2]:

Բանաստեղծ Նարեկացիի ուժեղ երևակայության արդյունք այս ածականները, անշուշտ, իրական հիմք ունեին: Վերհիշենք, որ ապստամբությունը նկարագրող Հովհաննես պատմիչը ևս նույն ածականներն է շռայլել. տարբերությունը միայն նրանում է կայանում, որ վերջինի մոտ երևակայության ավյունը այնքան զորավոր չէր և չէր կարող երբեք իր բանաստեղծական ձիրքով հավասարվել մեծագույն միստիկ բանաստեղծ Գրիգոր Նարեկացիին:

«Ավազակներ», «գողեր» անվանվում են. ինչո՞ւ, որովհետև այդ աղանդավորները քարոզում էին և պահանջած դեպքում կռվում, որ աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների հողերը վերադարձվեն հողազուրկ դարձած գյուղացիությանը:

Այս տեսակետից Լեոն իրավամբ գրում է.

«…Սմբատը քարոզում էր նյութապաշտական սկզբունքներ՝ հավատացնելով, որ մարդկային բարօրությունն աշխարհի մեջ է և ոչ թե երկնքում, իսկ աշխարհի վրա բարօրություն կարելի է ստեղծել մարդկային ստացվածքներով»[3]:

Վերջին խնդիրը, որը հարկավոր է պարզել, կայանում է նրանում, թե արդյոք գյուղացիական այդ ապստամբության սեփականազուրկ դարձած կամ աղքատացած ազնվականներից մասնակցողներ եղե՞լ են:

Հովհաննես Կաթողիկոսի նկարագրության ընդհանուր բնույթը մեզ հնարավորություն չի տալիս այս հարցին որոշակի պատասխան տալու, և ոչ էլ

---

[1] **Բարսեղ վ. Սարգիսյան**, Ուսումնասիրություն և այլն, էջ 66:

[2] Նույն տեղում, էջ 112:

[3] «Նորք», № 2, 1923, էջ 147:

Սմբատի մասին մեզ հասած վկայություններում այդ մասին տվյալներ ունենք: Սմբատը գյուղացիական ծագում ունի: Սակայն, երկու հանգամանք մեզ թերևս հնարավորություն կտա դրական պատասխան տալու այդ հարցին:

1. 915/916 թվի ծագած ապստամբությունը թեև պարտվում է մի քանի տարի հետո, նախկին իրերի դրությունը վերականգնում է, սակայն այդ շարժումը ոչ թէ միայն շարունակվում է ամբողջ X դարու ընթացքում գոյություն ունենալ, այլ XI դարու 50-ական թվականներին ուժեղ թափով կրկին երևան է գալիս: Եվ շարժման հետագա ընթացքում մենք հանդիպում ենք իշխանական դասի պատկանող մարդկանց, որոնք գլխավորում են այդ շարժումը: Անշուշտ, որոշ տնտեսական ազդակներից էր առաջանում այս երևույթը:

2. Եթե շարժման հետագա պրոցեսում իշխանական դասի պատկանողները հիմք ունեին այդ շարժմանը մասնակցելու և գլխավորելու, մեր կարծիքով, հողերի կենտրոնացման այն պրոցեսը, որ կատարվածի փաստ էր արդեն X դարու սկզբին[1], չէր կարող չանդրադառնալ մի շարք փոքր, մանր ֆեոդալ իշխանների տնտեսական դրության վրա բացասական կերպով: Ուստի մենք հավանական ենք նկատում 915/916 թվի ապստամբության մեջ մանր սեփականազուրկ դարձած կամ աղքատացած իշխանների մասնակցությունը:

Եթե Հովհաննես Կաթողիկոսի պատմած այս դեպքերը կղերական պատմիչի հատուկ աշխարհայացքի թանձր քողով ծածկված են, ապա մենք ունենք ֆեոդալական Հայաստանի մի այլ գավառում՝ Սյունիքում, 915 թվին գյուղացիական ապստամբությունների մասին այլ վկայություններ, որոնք քաղված են այդ շրջանի փաստաթղթերից և բացորոշ ցույց են տալիս այդ ապստամբական շարժումների դրդապատճառները:

VI

Գյուղացիական այդ շարժումները տեղի են ունենում Տաթև վանքի շուրջը: Այստեղ մենք գործ ունենք հոգևոր ֆեոդալների կալվածների շուրջը կատարված դեպքերի հետ[2]:

Ինչպես աշխարհիկ ֆեոդալների մոտ հողերի կենտրոնացում էր կատարվում, նույնը և տեղի էր ունենում հոգևոր ֆեոդալների մոտ: Այս ուղ-

[1] Հմմտ. մեր հոդվածը այդ մասին «ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի տեղեկագրի» 1927 թվի № 2-ում, էջ 180-190:

[2] Որքան մեզ հայտնի է, գյուղացիական այս շարժումների մասին մինչև այժմ գրել է միայն Ի. Ջավախաշվիլին վրացերեն լեզվով "Bulleten de l'universitè de Tiflis"-ի № 2-ում, 1922-1923: Այս աշխատության ծանոթացել ենք մեր 1925 թվին՝ ավարտական շարադրության մեջ գյուղացիական այս շարժումների մասին գրելուց հետո: Ջավախաշվիլիի հոդվածը կրում է «Մի էջ գյուղացիական շարժումների պատմությունից հին Հայաստանում» վերնագիրը:

ղությամբ վերին աստիճանի առատ նյութ է պարունակում Ստեփանոս Օրբելյանի պատմությունը Սյունյաց գավառում գոյություն ունեցող վանքերի և եկեղեցիների կալվածների մասին: Մեծ մասամբ այդ կալվածները «պարգևականներ» էին աշխարհիկ ֆեոդալների կողմից: Պատահում էին նաև մասնակի դեպքեր, երբ աշխարհիկ ֆեոդալների կողմից հողեր ծախու էին առնվում և նվիրվում վանքերին և եկեղեցիներն:

Դեռևս Եղիշե պատմիչի օրով երեք տեսակի հողային սեփականություններ որոշակի զանազանվում են միմյանցից.

«Երկիրք եթէ հայրենիք, եթէ պարգևականք և եթէ քսակագինք»[1]:

Ինչպես ստորև կտեսնենք, ապստամբական այդ շարժումները առաջ են գալիս այն պատճառով, որ Սյունյաց իշխանները, ըստ երևույթին, հայրենատեր գյուղացիների հողերը կամայականորեն դարձնում են «պարգևականներ» և նվիրում են Տաթևի վանքին:

Հետևենք Ստեփանոս Օրբելյանի կողմից մեզ հաղորդված վավերագրերի բովանդակության.

«Ես Յովհաննէս՝ շնորհիւն Աստուծոյ եպիսկոպոս Սիւնեաց, գրեցի զայս վճիռ իմով ձեռամբս հրամանաւ աստուծազօր իշխանին Սիւնեաց Սմբատայ. զի եհաս մեզ վտանգ տագնապի ի չար և անաստուած ելուզակացն որ բնակեալ էին ի Ցուրայ բերդ անուն քարին, որք յանկարծակի յարուցեալ ի վերայ յոգնաժողով եղբարցն ի գիշերի՝ կողոպտեցին զյարկս ամենայն, և զոմանս սպանին ի ծերոցն»[2]:

Հետո պատմվում է, որ կրոնավորները փախել են և, շնորհիվ Սյունյաց Սմբատ իշխանի «անաստուած ելուզակների» դեմ ձեռք առած ազդու միջոցների, հնարավոր է եղել կարգը վերահաստատել:

915 թվին Հովհաննես եպիսկոպոսի կողմից կնքված այս վավերագիրը արգելում է.

«… Զի յետ ժամանակաց մի ոք հանդգնեսցի զնոյն ոճիրս գործել:

Արդ՝ եթէ ոք հրամանիս մերոյ հակառակի և առնու զՑուր ի սուրբ եկեղեցւոյս. և կամ կամի զսուտ քար բերդ անուանել և շինութիւն խորհել, և կրկին հալածումն յարուցանել սուրբ եկեղեցւոյս, այսպիսին նզովեա՛լ եղեցի յԱստուծոյ ամենակալ է...»[3]:

Վավերագիրը վերջանում է մի շարք նզովքներով:

Ի՞նչ էր պատճառը, որ մի գիշեր գյուղացիները խուժում են Տաթևի վանքը և փախցնում եպիսկոպոսին ու կրոնավորներին: Մի՞թե «ելուզակներ» են, ինչպես հաղորդվում է մեզ: Գաղտնիքը պարզվում է, երբ մենք կարդում

---

[1] **Եղիշե**, էջ 159:

[2] **Ստեփանոս Օրբելյան**, I, գլ. ԽԸ, էջ 294, Փարիզ, 1859:

[3] Նույն տեղում, I, գլ. ԽԸ, էջ 295:

ենք Ցուրագետցի մի երեցի թողած վավերաթուղթը, որ վերաբերում է Տաթևի շինության ավարտումից հետո վանքին եղած նվիրատվություններին: Այս փաստաթղթում ասված է.

«...Շնորհէ (Սյունյաց գահերեց Աշոտ իշխանը - Հ. Զ.) և զՑուր՝ բերդովն և ագարակօքն, և Ցուրայ, և զվանքն..., բայց թէպէտև զայս ամենայն դուրս արարին, զբնակիչս բերդին Ցուրայ ոչ կարացին հանել ի տեղւոյն. զի **հին հայրենատէրք** էին և բարբարոսք և պիղծ մարդիկ. այսպէս և ոչ զՏամաղէկս, որ մերձվանիցն էր, և նոքա նոյնպիսիք էին: Էր և աւազականոց մի բերդ անուն հանդէպ վանիցն, յանկոյս մեծ գետոյն, յափն քարոյն, որ Առաւելադաշտ կոչեն, ի ներքին ուսակին. և զայն ևս հալածեցին. յորոց՝ վտանգ ոչ սակաւ հասանէր եղբայրութեանն»[1]:

Ստեփանոս Օրբելյանի Պատմության 42-րդ գլուխը, որը նվիրված է Տաթևի վանքի նվիրատվություններին, նույնությամբ մեջ է բերած Ցուրագետացի երեցի թողած այս վավերաթուղթը և ավելացնում է սրան.

«Յետոյ թէպէտ յայլ և յայլ ժամանակս և զայնս ևս սեպհականեցին հայրապետքն»[2]:

Ստեփանոս Օրբելյանի այս վերջին տողերի իմաստը ստորև կպարզվի:

Ուրեմն պարզվում է, որ «ելուզակները» ուրիշ բան չեն, եթե ոչ նախկին հայրենատեր գյուղացիներ, որոնք ուզում են տեր դառնալ իրենց հողերին:

Հայտնի է, որ Տաթևի վանքը սկսվել է շինվել 895 թվին և ավարտել 906 թվին[3]: Եթե վանքին եղած հողային նվիրատվությունները նրա ավարտման թվականին են եղած, և «հայրենատեր» գյուղացիներ սեփականազուրկ են դարձած, ապա հարց է առաջանում՝ ինչո՞ւ այդ գյուղացիները ապստամբում են միայն 915 թվին:

Մեր կարծիքով՝ սրա էական պատճառը կայանում է, հավանաբար, այն ընդհանուր կրիզիսում, որի մեջ ապրում էին Հայաստանի ֆեոդալները 915 թվին: Ուժերի անհավասարակշռությունից գյուղացիները ստիպված են եղել ենթարկվել իշխանի կողմից եղած կարգադրություններին, և հարմար րոպեին նրանք կամեցել են վերականգնել իրենց անցյալի իրավունքները: Եթե մեր այս ենթադրությունը ճշմարիտ է, ապա Սյունիքի դեպքերը անմիջականորեն կապվում են Բագրատունյաց հողամասերում տեղի ունեցող ապստամբական շարժումների հետ:

«Այրարատն՝ ըլլալով իբրև սիրտ Հայոց Մեծաց,- գրում է Բարսեղ վ. Սարգիսյանը,- Թոնդրակեցվոց աղանդն ալ այդ սրտին մեջ բունեալ վարակիչ հիւանդություն մի, ընդարձակ և անխուսափելի վտանգներ կսպառնայր

---

[1] **Ղ. Ալիշան**, Սիսական, էջ 246:

[2] **Ստեփանոս Օրբելյան**, I, գլ. ԽԲ, էջ 276:

[3] Նույն տեղում, I, գլ. ԽԱ, էջ 269-70 և գլ. ԽԳ, էջ 280:

շուտով ապականելու ամբողջ մարմինն ևս»[1]:

Մեզ հայտնի չէ, թե արդյոք թոնդրակեցիների աղանդը Սյունիքում ևս տարածվա՞ծ էր, թե՞ ոչ: Որոշ կասկածի տեղիք է տալիս մեզ Ստեփանոս Օրբելյանի հետևյալ պարբերությունը, որ վերաբերում է գյուղացիների՝ Տաթևի վանքում կատարածներին.

«...Տարան և արծաթե սափորով զմեռոնն և վայթեցին ընդ քարն»[2]:

Ցուրագետցի երեցի փաստաթղթում ոչ միայն Ցուրա բերդի բնակիչների դեմ գործ էր ածվել անիրավություններ, այլև Տամաղեկի և Առավելադաշտի բնակիչների հանդեպ: Արդյոք այդ վայրերի գյուղացիությունը լռությամբ տարե՞լ է իրենց դեմ գործածված անիրավությունը:

Այդ մասին ունենք ուրիշ հետաքրքրական վավերագրեր Ստեփանոս Օրբելյանի մոտ.

«Էր և հանդէպ վանիցն տեղի մի ապստամբաց, որ Տամալէկս կոչէին. և բազում և մեծամեծ վիշտս և նեղութիւնս հասուցեալ էին վանիցն, զոր Տէր Յովհաննէս, թեև բազում անգամ ջանաց, ոչ կարաց հալածել զբնակիչսն և սեպհականել զտեղին»[3]:

Ուրեմն Հովհաննես եպիսկոպոսի ժամանակ Տամալեկի բնակիչներն էլ ոտքի են կանգնել և հաղթանակել: Սակայն, Հովհաննես եպիսկոպոսի հաջորդ Հակոբ եպիսկոպոսի (918-959) օրով Տամալեկի հողերը անցնում են Տաթևի վանքին:

Նրա կողմից թողված մի վավերագրում կարդում ենք.

«Այս իմ ձեռին գիր է Տէր Յակոբայ՝ Սիւնեաց եպիսկոպոսի. բազում ջանիւ և աշխատութեամբ թափեցի զՏամալէկս, որ բազում նեղութիւն էին հասուցեալ տանս. և Տեառն Յովհաննէսի ջանացեալ էր և չէր կարացեալ թափել: Արդ՝ հնազանդեալ մեր հրամանացս տէր Սմբատ և Սոփիա տիկին՝ առին ընդ գնոյ 1000 դահեկանի, և ետուն ի սուրբ նշանս»[4]:

Ինչի՞ է հանգում Առավելադաշտի բնակիչների ապստամբությունը: Ստեփանոս Օրբելյանի մոտ 930 թ. մի վավերագրից իմանում ենք, որ Առավելադաշտի գյուղացիները ևս ապստամբել են և մի շարք չարիքներ հասցրել վանքին.

«…Յայնժամ խնդրէ եպիսկոպոսն յիշխանացն զարսն. և քանդեալ աւերեաց զապստամբանոց նոցին և հիմնախիլ արար և զՏեևին սահմանովն սեպհականեաց եկեղեցւոյն…» (**Ստեփանոս Օրբելյան**, I, գլ. ԽԹ, էջ 303):

---

[1] **Բարսեղ վ. Սարգիսյան**, Ուսումնասիրություն և այլն, էջ 72:

[2] **Ստեփանոս Օրբելյան**, I, գլ. ԽԸ, էջ 293:

[3] Նույն տեղում, II, գլ. ԾԱ, էջ 13:

[4] Նույն տեղում, II, գլ. ԾԱ, էջ 14: Բրոսեն Օրբելյանի ֆրանսերեն թարգմանության մեջ (I, էջ 156, ծանոթ. 6) այն կարծիքն է հայտնում, թե Տամալեկի բնակչությունը մուսուլման մի ցեղ էր: Բրոսեի այս կարծիքը հաստատվում է թերևս նրանով, որ Սյունյաց իշխանը Ցուրա բերդի և Տամալեկի բնակիչների հանդեպ երկու չափ է գործածում:

Հետագա տարիներին վերաբերող վկայությունները ցույց են տալիս, որ բռնի ուժով խեղդված այդ ապստամբական շարժումները պարբերաբար կրկնվում են. այսպես՝ Ցուրա բերդի բնակիչները հարձակվում են Հակոբ եպիսկոպոսի վրա և սպանում նրան (**Ստեփանոս Օրբելյան**, գլ. ԽԸ, էջ 296):

916 թվականից 83 տարի անց կրկին մենք հանդիպում ենք Ցուրա բերդի մասին մի վավերաթղթի, որտեղից երևում է, որ երկար տարիների ընթացքում Ցուրա բերդի բնակչության և Տաթևի վանքի միջև պայքարը շարունակվելիս է եղել: Վերջին կռվում արյան մեջ է խեղդվում ապստամբությունը. «… Եվ ոչ ինչ շահեալ որդալից սատակեցան, պակասեցան, կորեան վասն տնօրէնութեան: Իսկ ի ժամանակս մեր հրամայեցին աւերեալ յատակել»[1]:

Այսպես է վերջանում այն ապստամբությունների երկար շարանը, որոնք սկսվել էին 915 թվականից: Եկեղեցիի հայրապետները կարողանում են սեփականացնել գյուղացիության հողերը և այս կերպ «փառաբանության» են արժանանում հոգևոր ֆեոդալների կողմից: Իսկ ապստամբությունները ճընշող ֆեոդալ իշխաններն ու թագավորիկները դառնում են «աստուծասեր» և «բարեպաշտ»:

Սյունիքում կատարված այս ապստամբությունները հետաքրքրական են նաև X դարու Սյունիքի գյուղացիության շերտավորումների տեսակետից: Հայաստանի լեռնային այդ մասին որոշ վայրերում կար դեռևս գյուղացիական մի այնպիսի խավ, որ կարողացել էր պահպանել մինչև X դարու սկիզբը իր հողային սեփականությունը: Երկրագործների մի շերտ, որ չէր դարձել սեփականազուրկ նման այն գյուղացիության, որ աստիճանաբար կուլ էր գացել աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների:

X դարու այս ապստամբական շարժումները մինչև այժմ, լռության են մատնվել, կամ նրանք անվանվել են «հայ գյուղացի ավազակների ասպատակություններ»: Այսպես է գրվել մինչև այժմ Հայաստանի պատմությունը:

Հարց է առաջանում՝ ինչո՞ւ:

V

«Ժամանակակից մատերիալիստական գիտության տեսակետից,- գրում է պրոֆ. Լեոն իր նորագույն հողվածներից միում,- հայոց պատմություն դեռ գրված չէ: Պետք է նրան գրել նորից, այլապես մենք մնանք առանց պատմության, քանի որ եղածը, ավանդականն այլևս ոչ ոքի չի հետաքրքրի»[2]:

---

[1] **Ստեփանոս Օրբելյան**, I, գլ. ԽԸ, էջ 297: Այս վավերագրի ժամանակը որոշելիս մենք նկատի ենք ունեցել Սյունյաց Վասակ թագավորի ժամանակից թողված մի այլ վավերագիր, որ կրում է 998 թվականը, հմմտ. **Ստեփանոս Օրբելյան**, II, գլ. ԾԴ, էջ 36:

[2] **Լեո**, Հայոց պատմության հարցերից, «Պետական համալսարանի գիտական տեղեկագիր»,

Հեշտ բան չէ նման մի խոստովանություն այնպիսի մի մարդու կողմից, որ իր կյանքն է դրել նույն այդ «Հայոց պատմությունը» հետազոտելու համար:

Ավելի զգուշավոր, սակայն, ըստ էության նման դատավճիռ է տալիս պրոֆ. Հակոբ Մանանդյանը մինչև այժմ Հայաստանի պատմության շուրջը գրված աշխատությունների մասին՝ բացի մոնոգրաֆիկ ուսումնասիրությունների բնույթ կրող երկու աշխատություններից[1]:

Միանգամայն միանում ենք այս դատավճռին: Անշուշտ, այս գնահատականն իր ամբողջությամբ չի վերաբերում այն աշխատություններին, որոնք զուտ բանասիրական բնույթ են կրել, և որոնցից օգտվում ենք ներկայիս որպես մատերիալ:

Ինչո՞ւ ժխտվում է հայ պատմագրության անցյալը՝ որպես իսկական Հայաստանի պատմություն: Մեր կարծիքով՝ ոչ թե միայն նրա համար, որ այդ աշխատությունները լոկ «ժամանակագրության բնույթ» են կրում, որ նրանք «թագավորների, իշխանների և հոգևորականների պատմություն են». այս կլիներ ֆորմալ մերձեցում, այլև նրա համար, և սա ամենաէականն է, որ այդ աշխատությունները տոգորված են շովինիզմի հասնող նացիոնալիզմով: Իսկ այս խտացումն է այն աշխարհայացքի, որ հատուկ է հայ բուրժուազիային: Ահա թե ինչու այս աշխատությունները լույս են տեսել և հովանավորվել այնպիսի վայրերում, ուր մեծ թվով գաղութային հայ բուրժուազիա է գոյություն ունեցել: Թիֆլիս, Բաքու թե Մոսկվա, Վենետիկ թե Վիեննա իրագործում էին միևնույն նպատակը:

Գաղութային հայ կապիտալը (սկզբնական շրջանում առևտրական կապիտալը) մրցության մտնելով և հալածվելով օտարերկրյա կապիտալների կողմից, սեփական հայրենիք ստեղծելը իր հիմնական նպատակն էր դարձնում: Պատահական չէ, որ այս իդեայի իրականացման ազդանշանը տալիս էին վերջին դարերում առաջին հերթին Հնդկաստանի հայ առևտրականները, որոնց գործի շարունակողը հետագա թվականներում հանդիսանում է այլ գաղութային կենտրոնների հայ բուրժուազիան:

Իսկ հայ բուրժուազիան առանձին անկարող էր կատարել իր առաջադրած նպատակը. հարկավոր էր ամբողջ հայ «ազգը», առանց դասակարգի և կրոնի խտրության, համախմբել այդ նպատակի իրագործման շուրջ:

Մեզ շատ հեռու կտաներ այս երևույթի սոցիոլոգիական վերլուծումը: Բավականանում ենք շեշտել այն մի քանի հիմնական գծեր, որոնք հատուկ են եղել անցյալի պատմագրության, և որոնք անհրաժեշտ էին հայ բուրժուազիայի առաջադրած նպատակը իրագործելու:

ա) Օտարատյացություն ռասայական թեորիայի կիրառման ուղիով, բ)

№ 2-3, էջ 398:

[1] **Հակոբ Մանանդյան**, Դիտողություններ և այլն, «Պետական համալսարանի գիտական տեղեկագիր», № 1, էջ 3:

ողը հայերի անմիաբանության մասին, գ) պատմական դեպքերում անհատների հերոսացում՝ աստվածացման հասցնելու աստիճան, դ) առաջադրում՝ հայ ժողովրդին Առաջավոր Արևելքում մի պատմական միսսիա կատարելու և վերջապես՝ ե) Հայաստանի պատմության ընթացքում հայ ժողովրդի ներսում դասակարգային հակամարտությունների ժխտում:

Արժեր այս վերջին կետի վրա կանգ առնել, քանի որ անմիջական կապ ունի մեր այս ուսումնասիրության հետ և պատասխանելու է մեր դրած հարցը:

Մենք ասացինք արդեն, թե ինչու հայ բուրժուազիայի հարկավոր էր «ազգը» ամբողջությամբ հավաքել իր առաջադրած նպատակի շուրջը: Իսկ այս բանին կնպաստեր մեծ չափով և այն, երբ պատմականորեն ժխտվեր դասակարգային ներհակությունները հայ ժողովրդի ներսում:

«Մենք էլ ունեինք մեր հայրենիքը, որ մեր հորերից մնացել էր մեզ որպես ժառանգություն. այդ հողի վրա որպես մեր սեփական տան մեջ մենք ազատ վարում էինք, ցանում էինք, հնձում էինք ու հանգիստ ապրում էինք: Այստեղ մենք ունեինք մեր օրենքները և մեր կառավարությունը: **Մեր թագավորը՝ որպես ազգային մեծ ընտանիքի հայր, իշխում էր մեզ վրա**» (ընդգծումը մերն է - Հ. Զ.):

Ռաֆֆիի կողմից «Դավիթ Բեկի» հերոսներից մեկի բերանում դրված այս խոսքերը վիպական խոսակցություն չեն, այլ պատմաբանների կողմից պաշտպանված թեզիս: Այս էր թելադրում XIX դարու 80-ական թվականների հայ առևտրական կապիտալի շահը: Նրա էկլետիկ իդեոլոգները և պատմաբանները մի քանի անգամ անշուշտ կարդացել էին հայ պատմիչները, սակայն, այդ պատմական փաստաթղթերից վերցրել են միայն այն, ինչ որ նպաստավոր էր հայ բուրժուազիայի շահերը «պատմական փաստերով» հիմնավորելու:

Թե որքան «հանգիստ և ազատ էր ապրում հայ գյուղացին իր սեփական հողի վրա, և թե ինչպես հայ թագավորը՝ որպես մեծ ընտանիքի հայր, իշխում էր», այդ տեսնում ենք այս և մեր այլ ուսումնասիրությունների մեջ:

Հայաստանի պատմության մեջ ռեակցիոն ռոմանտիզմը, որի վերջին տասնամյակների թութակ ներկայացուցիչները հանդիսանում են դաշնակցականները՝ կրկնելով Մխիթարյան վարդապետներից մինչև Ժ. Մորգանի կողմից գրված «պատմությունները», մի հարց է առաջադրել և լուծել՝ Հայաստանի պատմությունը ջնջելու անհեթեթ հարցը:

Եվ իրապես, ինչպես Կ. Մարքսն է նկատում, «ջնջել բոլոր այն տարրերը (ճորտություն, առանձնաշնորհումներ, անարխիա) ֆեոդալական շրջանում, որոնք պայքար են առաջացնում, բուրժուազիայի զարգացումը իր սաղմում խեղդած պիտի լինեին: Պիտի առաջադրեին պատմությունը ջնջելու անհեթեթ հարցը»[1]:

[1] **K. Marx**, Das Elend d. Pjilosophie, Berlin, 1923, S. 105.

СОСТОЯНИЕ АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ

Изменения путей сообщения между Востоком и Западом, завоевание Константинополя турками в середине XV века и политические события XVI и XVII вв. направили по новому пути историю не только Армении, но и всего Закавказья.

Вследствие политических и экономических событий города Армении и вместе с ними торговый капитал Армении, который в силу географического положения страны имел значение исключительно для транзитной торговли, вынуждены были в эпоху раннего средневековья искать новые рынки.

В середине средних веков Киликия, Малая Азия, Крым, Польша, средневековые города Италии, Амстердам стали рынками для эмигрировавших из Армении купцов. С начала XVIII в. армянские купцы из Новой Джульфы, а также эмигрировавшие оттуда, вели конкуренцию с английским торговым капиталом, который к тому же времени стал внедряться в Индию. Города Мадрас и Бомбей стали к тому времени центрами накопления армянского торгового капитала.

Развитие русского торгового капитала и завоевательная политика самодержавия в свою очередь способствовали развитию армянского торгового капитала. В течение XVIII и особенно XIX в. Москва и Тифлис стали главными центрами накопления армянского торгового капитала, который в XX в. перекочевывает в область производства.

Нефтяная промышленность втягивает армянскую крупную буржуазию в орбиту русского империализма. Баку становится центром армянского финансового капитала.

Большое развитие армянский торговый капитал получил и на Ближнем Востоке.

Со времени завоевания Турцией Константинополя покровительствуемые турецкой правительственной политикой армянские купцы проникают не только в Константинополь, Смирну и Трапезунд, но и во все крупные города Малой Азии.

К XIX в. накопление армянского торгового капитала в Турции вступает в противоречие с турецкой феодальной системой, и в то же время завязывается конкурентная борьба с европейским торговым капиталом, который стал проникать в Константинополь и Смирну. Константинополь и Смирна стали тогда центрами накопления армянского капитала.

Новая Джульфа в Персии, Мадрас и Бомбей в Индии, Москва, Тифлис и Баку в России, Константинополь и Смирна в Турции и некоторые города на Западе были главными центрами концентрации армянского торгового капитала.

Эта небольшая экскурсия в область прошлого понадобилась потому, что идеология армянских историков первого периода может быть объяснена только в свете указанных нами экономических событий.

Охарактеризованный мною выше армянский торговый капитал, который конкурировал с торговым капиталом других стран и преследовался последним, искал собственного отечества с собственным государством. Не случайно, что сигнал к осуществлению этого идеала был дан в середине XVIII в. армянскими купцами в Индии (я здесь не говорю об освободительном движении в конце XVII в., о котором весьма удачно писал т. Иоаннисиан, работа которого является единственной марксистской работой по этому первому периоду). Это идеал, к которому стремится поныне находящаяся за границей армянская буржуазия.

Армянской буржуазии было ясно, что она сама не в состоянии будет осуществить свой идеал, для этого необходимо привести в движение всю армянскую нацию, вне зависимости от религиозных и классовых различий.

Я не ставлю перед собой задачу дать социологический анализ всей буржуазной историографии; интересно, однако, отметить ее характерные черты: 1) ненависть к соседним народам на основе расовой теории; 2) жалобы на отсутствие единства среди армян; 3) характеристика исторических деятелей как героев, до обожествления их; 4) признание культурной миссии армян в Передней Азии; 5) отрицание классовых противоречий и классовой борьбы в армянской истории (наши цари управляли нами, как отцы большой национальной семьи, - таков лейтмотив армянской историографии).

Армянские религиозные организации в Венеции и Вене, монастыри в Эчмиадзине и Иерусалиме, клерикальная интеллигенция с XVIII до середины XIX в., Лазаревский институт в Москве и единичные историки в Тифлисе и Константинополе и т. д. пропагандировали буржуазное мировоззрение.

Начиная с клерикального историка М. Чамчяна до француза Жака де Моргана, который опубликовал в 1919 г. свою работу по истории Армении,- все эти историки и исторические учреждения финансируются за счет армянской буржуазии.

Реакционный романтизм в армянской историографии, представителями которого в последние десятилетия были дашнаки, по существу поставил перед собой задачу — замолчать классовую борьбу в истории Армении.

Весьма характерны для подобных историков следующие слова Маркса:

«Далеко ли ушел бы вперед прогресс, если бы во времена господства феодализма экономисты, восторгаясь добродетельными рыцарями... задумали упразднить все то, что омрачало эту светлую картину, упразднить крепостничество, привилегию, анархию? — С уничтожением всех элемен-

тов, создавших борьбу, развитие буржуазии было бы остановлено в самом зародыше, и историкам пришлось бы решать прямо нелепую задачу: упразднить историю».

Все это заставляет отрицать научную ценность армянской буржуазной историографии. Правда, иного отношения заслуживают работы, публикующие сырой материал, который может быть использован нами для разработки армянской истории в духе диалектического материализма.

Здесь на первое место приходится ставить филологические работы, содержащие армянские рукописи, весьма необходимые как источники, а также филологические монографии, весьма полезные для решения конкретных вопросов. На втором месте стоят археологические раскопки.

И, наконец, укажем на собирание и издание надписей армянских памятников.

Таков краткий обзор состояния армянской историографии до советизации Армении, которая сыграла крупную роль в развитии исторической науки в Армении, начав, по существу, ее второй период.

В этом втором периоде в исторической науке Армении необходимо резко отличить три направления. Первое - старая буржуазная историография, которая находится вне советской республики и которая выражает националистические тенденции еще больше, чем до революции. Главными представителями этого направления являются те дашнаки, которые бежали за границу по окончании гражданской войны в Армении. Вожди этой партии ведут политическую и идеологическую борьбу против советской власти. Они пишут свои мемуары, как немецкие генералы после поражения. Хатисов, Врациан и Ко занимаются главным образом историей Армении последних десятилетий, преследуя цель воспитать армянскую молодежь за границей в националистическом и шовинистическом духе.

Второе течение - меньшевистского толка, хотя оперирует марксистской терминологией, но в сущности остается тем же проповедником национа-лизма. Армянская буржуазия за границей продолжает, как раньше, финан-сировать деятелей этого направления. Главными представителями этого течения являются проф. Лео и проф. Манандян. Старый историк Лео в 1926 г. в одной из своих работ декларировал, что армянская история написана не в духе исторического материализма и поэтому необходимо написать ее еще раз, иначе мы останемся без истории, ибо имеющиеся работы никого не занимают. Однако, как видно, одними декларациями нельзя заменить историю в духе исторического материализма. Последняя работа Лео имеет для нас значение, поскольку в ней имеется сырой материал по новейшей истории Армении.

Иначе обстоит дело с проф. Манандяном, который в 1925 г. декларировал свое отрицательное отношение к старым историческим работам, но гораздо

осторожнее, чем Лео. Манандян в последние три года занимался изучением экономических терминов, которые встречаются в исторических документах Армении, уделяя главное внимание изучению особенностей феодализма в Армении. По его последним исследованиям армянское слово «кхостак» имело такое же значение в средневековой Армении, как слово «феод» в эпоху европейского феодализма. Однако приходится отметить, что проф. Манандян забывает весьма важное обстоятельство: такие экономические термины объяснимы только в связи с тогдашним способом производства и производственными отношениями и не могут быть абстрагированы от социально-экономической среды. Этот метафизический подход, увязанный со всем его мировоззрением, конечно, мешает проф. Манандяну дать марксистское исследование вопроса. Проф. Манандян не свободен также и от буржуазной расовой теории.

Третье направление - это нововозникающее марксистское направление. Оно пока только дало первые монографические исследования, преимущественно относящиеся к изучению феодализма в Армении. Так, по этому историческому периоду мы имеем такие работы, как «Финансовая политика арабов в феодальной Армении», «Противоречия между городом и деревней в феодальном периоде развития Армении», «Крестьянские движения в феодальной Армении X в.» и т. д.

Основная задача историков-марксистов Армении в настоящее время заключается в том, чтобы необходимо направить основной огонь против антисоветской, антимарксистской историографии, которая ныне развивается за границей. В первую очередь мы должны исследовать историю армянского народа за период XIX и начала XX вв. Основательное марксистское изучение этого периода времени должно быть правильным ответом всем мемуарам дашнакских экономистов и националистически настроенной армянской мелкобуржуазной интеллигенции внутри советских границ.

История предыдущих веков также, конечно, не должна выходить из поля внимания нашей историографии, поскольку феодализм представляет собой период, в котором исторически коренится армянский национализм, а также арсенал националистических тенденций современности. Нужно при этом заметить, что изучение истории Армении является не только частью общей истории Закавказья, но также и истории Ближнего Востока.

Закавказье как полоса, необходимая для торговой связи между Востоком и Западом, в течение долгих столетий было ареной борьбы для сражавшихся между собой крупных сил, как-то: Персии и Рима, Персии и Византии, Византии и Аравии, арабов и татаро-монгольских племен, Персии и Турции, Персии и царской России, последней и Турции.

Но если отвлечься от этих политических событий, то и социально-экономическая структура Армении, Грузии и Старой Албании (нынешнего Азербайджана) показывает такие близкие черты, что всякое отдельное изучение истории одной части Закавказья дополняет изучение других его частей. Кроме того, исследователь очень часто вынужден бывает обращаться к чужим источникам. Без использования грузинских источников XII и XIII вв. армянская история того же периода имела бы большой пробел.

Так, исследования феодализма в Армении показывают, что господствовавшие классы в Армении и Грузии стояли так близко друг к другу, что очень часто одни и те же феодальные фамилии встречаются как здесь, так и там.

Что касается нового времени, особенно последнего столетия, то история Закавказья, по-моему, представляет нечто единое и должна быть изучена только как таковое. При этом исследователю нужно считаться также и с экономическими и политическими отношениями в господствующих странах в соответственные периоды.

Но последнее обстоятельство, конечно, не должно помешать изучению истории Закавказья, представляющего собой хозяйственно и политически единое целое. Основной задачей марксистов-историков Закавказья должна быть борьба против национализма, культивируемого в течение долгих десятилетий буржуазными и мелкобуржуазными национальными партиями. Коллективная работа вновь организованного в Тифлисе общества историков-марксистов должна привести к созданию научно обоснованной истории Закавказья.

ПРЕНИЯ

А. Иоаннисиан. С основными положениями доклада т. Зорьяна я согласен. Я думаю сделать некоторые замечания только в той части, где т. Зорьян говорит о псевдомарксистах. Я полагаю, что в этой части доклада обвинение в псевдомарксизме он адресует не вполне правильно, выдвигая таких «псевдомарксистов», как Лео и Манандян. Это представители старого буржуазного течения армянской историографии, которые в последнее время, в отличие от первых периодов своих изысканий, обращают больше внимания на экономические явления. Лео, напр., трактовал политическую историю Армении вне связи с экономикой, между тем как в последнее время он более или менее принимает во внимание социально-экономические стороны прошлого Армении. Однако нынешней трактовкой истории Ар-

мении Лео мало чем отличается от вульгарного учета «экономических факторов» обычных буржуазных историков. Изучая экономику Армении, он не становится марксистом, да и вряд ли претендует на эту честь. То же самое, и еще в большей степени, можно заметить о Манандяне, который никогда и нигде не называл себя марксистом. Он занимался историографией, написал историю средневековой Армении, а в последнее время занимается по преимуществу терминологическими изысканиями. Это не историографические изыскания, а скорее историко-филологические, подчас историко-юридические, характерные для историков формально-филологической или формально-юридической школы.

Манандяну не хватает марксизма, но некоторые из результатов его исследований могут быть признаны полезными даже нами - марксистами.

Подлинными представителями псевдомарксистского направления я считаю историков другого направления. Таковыми являются бывшие и теперешние меньшевики, напр. Давид Ананун, Т. Авдалбекян и др. Именно они являются типичными представителями псевдомарксизма в армянской историографии. Я считаю важным это констатировать, поскольку в нашей борьбе против псевдомарксистской концепции армянской истории мы должны сосредоточить огонь как раз против историков и литераторов этого типа, а не против Лео и Манандяна, которые непосредственно никакой особой опасности для нас не представляют. Против последних бороться, конечно, также следует, но огонь нужно сосредоточить против вульгарно-марксистской концепции истории, представителями которой являются Давид Ананун и Т. Авдалбекян.

Я считаю, что в докладе т. Зорьяна правильно была выдвинута практическая задача, вытекающая из научно-марксистской концепции истории Армении. Мне, вообще говоря, думается, что за последние 10-12 лет в области исторических изысканий в Закавказье мы не только не достигли большого сдвига, но, пожалуй, имеем даже дело с некоторым регрессом. Я считаю, что Н. Марр и его школа правильно формулировали задачи изучения культур кавказских народов, когда свою кавказоведческую концепцию исторических проблем противопоставляли концепциям национально-историческим. Марр вскрывал общекавказские источники, общекавказские корни языков, памятников материальной и духовной культуры, общественно-политического быта народов Кавказа. В частности, и историю Армении, Грузии и пр. Марр рассматривал и толковал лишь на фоне общей истории «кавказского культурного мира». В самом деле, невозможно ориентироваться в вопросах «национальной истории» народов Кавказа, если игнорировать тесную их связь между собой, взаимодей-

ствия и пр. Тут, однако, не только имеется тесная связь исторических судеб отдельных народов, но общие корни истории этих народов, общие явления, для понимания коих необходим единый подход, единая цельная трактовка. Общие условия развития исторических судеб народов Кавказа, неразрывная связь и единство основных исторических процессов на Кавказе говорят нам о том, что мы не сможем продвинуться в этой области, в области марксистского изучения истории отдельных национальностей дальше, если не изучим историю отдельных национальностей на фоне истории общекавказской.

Тов. Зорьян правильно указал на то, что Орбельяны - это не только армянский феодальный род, но в такой же мере и грузинский. И Багратуни - это династия не только армянская, но и грузинская. Тут мы имеем дело с единым феодальным миром, с единой феодальной культурой. Город Ани не является лишь столицей армянского государства: это, фактически, столица и грузинская, и тюрко-татарская. Там имеются целые наслоения культур. Раскопки Марра денационализовали Ани, восстановили его значение для общей истории Кавказа и Передней Азии. Такие центры, как Двин, Барда, Тифлис, Шемаха и пр., - это центры интернационального торгового общения, центры скрещения исторических путей отдельных народностей. Если мы изучаем историю армянской торговли, то тут мы наталкиваемся на необходимость изучать торговые пути, торговые связи народностей Закавказья между собой и с народностями Передней Азии. Тут мы должны будем выходить из узких национальных рамок и изучать историю в рамках общего торгового оборота, в рамках Закавказья, Передней Азии и т. д. В прошлом мы имели единый кавказский феодальный мир. В последующем мы имеем единый буржуазный мир Ближнего Востока, общие торговые связи для всего Закавказья и Передней Азии. О единстве текущей истории Закавказья и говорить не приходится, ибо не подлежит никакому сомнению, что и общественно-экономическая, и политическая жизнь национальностей пореволюционного, советского Закавказья все больше и больше концентрируется и идет по линии все более тесного их объединения.

С этой точки зрения невозможно, например, изучить историю общественно-революционных движений в Армении, если игнорировать тесную их связь с историей аналогичных движений в Грузии. Тов. Махарадзе в своей брошюре по истории тифлисской организации нашей партии говорит о грузинах-народниках 70-х гг. Тов. Махарадзе рассматривает этих народников как эпизодическое, характерное лишь для Грузии 70-х гг. явление. Мои изыскания в этой области показали, что т. Махарадзе недооценивает значения народнического течения в Закавказье. Архивные материалы свидетель-

ствуют, что в грузинской действительности народничество сыграло более крупную роль и не только в 70-е, но и в 80-е и 60-е гг. Участие грузинских революционеров в общерусском движении 60-х, 70-х и 80-х гг. было очень крупным.

Должен сказать, что в связи с этим указанием т. Махарадзе я интересовался вопросом о том, имелось ли аналогичное народническое движение в армянской действительности. На основании литературных и архивных исследований я пришел к тому выводу, что параллельное аналогичное движение мы имеем и в армянской действительности. Возникновение, подъем и постепенное исчезновение и переход этого народнического движения на другие рельсы, на рельсы национального движения, с одной стороны, и на рельсы марксизма, с другой, - все эти явления идут в грузинской и армянской истории параллельно. Более того, они тесно связаны между собой не только идейно, но подчас и организационно. Так что и в этой области в отношении периода, предшествовавшего возникновению марксизма в Закавказье, мы наблюдаем наличие одних и тех же отправных пунктов как для истории Грузии, так и для Армении.

Все это говорит о том, что организационные выводы, которые делает т. Зорьян, весьма правильны. Мы должны сказать, что если в 90-х и 900-х гг. Марр и его ученики ставили проблему изучения закавказской истории - грузинской, азербайджанской, армянской и т. д. - в общие рамки, выдвигая перед нами кавказоведческие задачи, то нам, марксистам, вооруженным более точным и более цельным научным методом понимания исторических процессов, методом диалектического материализма, необходимо не отступать от этого уже прощупанного Марром и его последователями пути, а наоборот, становиться твердой ногой на этот путь и продвигаться по нему еще дальше. Здесь мы должны объявить непримиримую борьбу против историков-националистов (Ананун, Джавахов, Лео, Такайшивили и пр.), у коих изучение прошлого народов Закавказья не сходит с узконациональных рельс.

Мы должны будем работать в этих целях по двум линиям: во-первых, попытаться создать широкую научную организацию для краеведческого изучения Закавказья, организацию с общим закавказским центром, нечто вроде филиального отделения ассоциации востоковедения. Это, конечно, не наша прямая задача, но мы должны оказать содействие этому делу, делу создания филиальных организаций Всесоюзной научной ассоциации востоковедения. Во-вторых, и самое главное, надо развернуть работу историков-марксистов в Закавказье, выдвинув перед ними в первую очередь задачу исторического изучения наиболее актуальных вопросов,

представляющих общекавказский интерес.

И. Кусикьян. Я хочу сделать замечание относительно того положения т. Зорьяна, что сырой материал, оставшийся от старой буржуазной исторической школы, может, в виде филологических исследований и изданий рукописей, явиться весьма необходимым материалом для нас, историков-марксистов. Здесь есть, однако, одно обстоятельство, на которое следует обратить внимание. Если взять область русской истории, то необходимо признать, что все то наследство, которое мы получили от старой буржуазной науки, подлежит еще довольно серьезному пересмотру даже в такой, казалось бы, безобидной области, как филология. М. Н. Покровский не раз указывал, что марксисты русской историей занимаются в пределах XX и XIX вв. Обычно говорится, что Октябрь и XIX в. привлекают всеобщее внимание марксистов, а старая русская история, поскольку она с нашими ближайшими задачами непосредственно не связана, не представляет такого интереса. Правда, за последнее время уже становится общепризнанным положение о том, что для того, чтобы заниматься русской историей, нужно заняться серьезным пересмотром и изучением древней и средней истории. С изучением же древней и средней истории для историков-марксистов Армении дело обстоит значительно сложнее.

Поэтому положение т. Зорьяна о ценности буржуазных исследований в области филологии я считаю несколько рискованным, так как на основе яфетидологии нам предстоит довольно серьезная, большая работа в области филологии, именно нам - марксистам.

Тут говорилось относительно Лео и, в особенности, Манандяна. Как ни вертись, но понять даже экономические термины можно, только будучи марксистом. Я не думаю, чтобы проф. Манандян и вообще многие историки (я разумею старых историков) для своих работ пользовались филологическими изысканиями и языками соседних народностей. В частности, ими не используются древние и новые грузинские языки. Возьмем такой язык, как чанский. Я приведу один пример, связанный с этим языком. Многие старые армянские филологи и историки занимались вопросом о китайском происхождении армянских князей Мамиконян, относительно которых в источниках говорится, что они «чены». Теперь выяснилось, что здесь ничего подобного быть не могло. Чены - это те же самые чаны, т. е. лазы; и вполне понятно, когда акад. Марр объясняет происхождение князей Мамиконян от лазов. Лазы - военные люди, которые были известны как замечательные стратеги, отсюда и вышли армянские феодалы, военные специалисты, которые были чанами, т. е. ближайшими соседями армян. Вот вам хороший пример, относящийся к филологии. Старые ученые обязательно хотели в заморских краях найти разрешение этому так же, как раньше искали варягов

и знатных иностранцев обязательно в заморских краях. Я боюсь, что как раз эту сторону мы можем упустить.

Тов. Иоаннисиан взял яркий пример относительно наследственности. Действительно, здесь и тюркские, и курдские, и грузинские, и армянские народности, все это создает сложные наслоения, т. е., грубо выражаясь, это исторический слоеный пирог, который надо исследовать тщательнее, чем это было сделано прежде. А если взять арабов или других пришельцев, то мы получаем еще более сложную историческую обстановку, и в связи с этим я думаю, что историкам Закавказья (нам - марксистам - удобно говорить именно так), что историкам Закавказья важно изучить закавказские исторические проблемы не только в связи с историей Закавказья, но и вообще для решения общих вопросов исторической науки. Мы знаем, что в Закавказье происходили явления, которые представляют особый научный интерес, с другой стороны, мы знаем, что феодалами нашим марксистам приходилось мало заниматься по весьма понятным причинам: им приходилось уделять внимание другим, более близким и актуальным вопросам; впрочем, и тут правильнее заниматься Арменией, Грузией и Азербайджаном, связывая вопросы близкой к нам эпохи с далеким средневековьем.

Что касается позднейших периодов, то надо сказать, что нам не особенно приходится доверять тому сырому материалу, который нам достался в виде наследства от буржуазной науки. Здесь предстоит серьезный пересмотр, тем более что буржуазными исследователями на веру принимались ученые исследования венецианских и венских мхитаристов и др. Так как они интересовались вопросами, связанными только с Арменией, и в область Грузии и Азербайджана не заглядывали, то, конечно, и получается искажение исторической действительности.

Касаясь истории новейших периодов, я думаю, что здесь дело обстоит еще сложнее. Имена тех историков, которые были приведены: Давид Ананун, Авдалбекян и др., заставляют нас осторожно относиться к нашим задачам. Дело в том, что на армянском языке учебников по истории Армении не имеется, и, может быть, отчасти это хорошо. Возможно, учащиеся Армении, Грузии и Азербайджана будут иметь учебники по истории Закавказья. Но как раз именно ввиду того, что рано или поздно этот вопрос станет ребром и нужно будет эту задачу осуществить, надо помнить и о том, что грозит опасность проскальзывания на почве как будто очень осторожных научных исследований кое-каких чуждых революционному марксизму взглядов. Это может случиться, тем более что в той же Армении труды этих ученых печатаются, мысли их часто расхватываются и попадают на страницы прессы. Это приходится иметь в виду, так как перед нами стоит не только чисто

научная задача, но и вытекающая из этой задачи та практическая задача, от которой мы, историки-марксисты, занимающиеся наукой, не можем отмежеваться, потому что мы наши чисто теоретические задачи всегда связываем с жизненными практическими задачами.

Г. Натадзе. Я истории Армении не знаю и не думал сегодня выступать, но ввиду того, что здесь затронуты интересные вопросы, я хочу сказать несколько слов о том плане, который, на мой взгляд, должен быть положен в основу работы всех историков и Армении, и Грузии, и Азербайджана. Я особо обращаю внимание на то, что в докладе говорилось о необходимости связи между этими тремя республиками в смысле историческом. Вместе с тем нужно отметить, что изыскания акад. Марра внесли единство в изучение Закавказья. Однако это единство не дало тех плодов, которые нам нужны, потому что филологические исследования дают только общий контур, и в конце концов мы не получили того, что нужно, хотя бы, напр., в области исследования экономических отношений. Я думаю, что необходимость связи очевидна для нас, но вместе с тем надо начать снизу, а не сверху. Началом сверху я называю общие филологические изыскания, как у акад. Марра. Они в конце концов конкретно ничего дать не могут. Здесь преимущество принадлежит археологическим изысканиям.

Некоторые мои изыскания (я не специалист в этой области, но меня с общеисторической точки зрения интересовал такой вопрос) я начал с Грузии, как более интересной, и мои изыскания привели к тому, что каждая долина в Грузии и, вероятно, также и в Армении, имела свои особенности. Будучи связана со всем Закавказьем, она свои экономические особенности сохранила и имеет что-то свое. И вот откуда нам нужно начать исследование, с исследования каждой ячейки, которая играла ту или иную роль в пределах как Армении, так и Грузии, и Азербайджана. Напр., в вопросе о связи между отдельными частями Закавказья очень большое значение имели водные пути. Бассейн Куры, бассейн Риона, бассейн Аракса - все эти отдельные бассейны связываются где-то в одной точке и имеют большое значение. Надо начать с местных историй, и краеведческие исследования в этом нам должны помочь.

Затем такие торговые пункты, как, напр., Ани, имели связь с Арменией и Мал. Азией. Как под влиянием этого рынка отдельные ячейки Закавказья общались друг с другом, является весьма важным вопросом, и отдельно история армянская или грузинская не может ответить на этот вопрос. Нужно связать историю снизу доверху. Исходя из деталей и обобщая их, мы только в этом случае сможем достигнуть многих результатов.

П. Ованисьян. История является политической наукой, и, в частности,

постановка марксистской истории закавказских народов имеет большое политическое значение. Если взять историю Армении, то по этому предмету имеется очень много работ, начиная с древних времен до настоящего времени, но они дают мало ценного для марксистской истории, ибо, поскольку я их знаю, мы не находим там никакого социально-экономического анализа. Перед нами сейчас стоит большая задача марксистского изучения экономики и классов и их борьбы как в Армении, так и в Грузии и Азербайджане. Но к какой эпохе, к изучению какого периода подойти в первую очередь марксистам-историкам? Я согласен с докладчиком в том, что самой важной задачей является изучение новейшей истории, истории XIX и XX вв., потому что она актуальна и ее изучение имеет научно-политические задачи. Нужно помнить, что такие буржуазные партии, как дашнакцутюн и другие, извращая историю, используют ее в своих националистических буржуазных целях. Мы должны заняться историей классовой борьбы и дать свою концепцию.

Я считаю, что в вопросе о связи истории Армении с историей всего Закавказья нужно рассматривать историю Армении не только в связи с историей Закавказья, но и в связи с эпохой империализма и революционным движением пролетариата СССР и Закавказья. Без этих условий трудно разрешить все те проблемы, которые встречаются в истории Закавказья в XIX и в начале XX века.

Ф. Махарадзе. Я думаю, что в тезисах т. Зорьяна довольно ярко выставлены задачи, которые стоят перед историками-марксистами, в данном случае историками Закавказья, т. е. Армении, Грузии, Азербайджана. Нужно сознаться, что до сих пор мало или, может быть, даже совсем ничего не сделано в смысле освещения жизни народов Закавказья с марксистской точки зрения, а те точки зрения, которые до сих пор господствовали и господствуют до сих пор, не освещают, а только затемняют вопрос. В этой области только сейчас начинаются кое-какие изменения. Сегодняшний доклад будет иметь значение для историографии Армении и всего Закавказья.

Что касается филологии, то, разумеется, филология для нас имеет то значение, что мы можем использовать некоторые ее открытия. Далее, я хочу отметить, что эту задачу создания марксистской схемы истории Закавказья должно в первую очередь взять на себя созданное нами Общество историков-марксистов Закавказья.

ЗАКЛЮЧИТЕЛЬНОЕ СЛОВО

Выступавшие товарищи выдвинули ряд основных положений по истории Армении, разрешение которых в значительной мере возможно при условии совместной коллективной работы всех историков-марксистов Закавказья. Поэтому я предлагаю после этой конференции устроить совещание, где можно было бы организационно ближе подойти к вопросу о том, как преодолеть некоторые трудности. Далее приходится отметить, ввиду отсутствия учебника, необходимость издания хрестоматий по истории Закавказья с использованием материалов на разных языках с тем, чтобы сделать эти основные источники доступными для всех интересующихся историей Закавказья.

Переходя же к существу замечаний, сделанных по моему докладу, нельзя не согласиться с замечаниями т. Иоаннисиана о необходимости в первую очередь борьбы против меньшевистских фальсификаторов истории. Если мне пришлось остановиться на Лео и Манандяне, то для этого были некоторые основания. Лео сделал декларацию, в которой он объявляет, что до сих пор история Армении не была написана с марксистской точки зрения и он как будто, намеревается этой декларацией заявить, что он думает изложить историю Армении с марксистской точки зрения.

Что касается Манандяна, то его филологические работы и работы подобных историков могут быть использованы лишь о учетом экономического содержания соответствующих терминов, с учетом экономического развития того периода. Иначе филологические изыскания, как таковые, вне связи с реальным экономическим содержанием, теряют смысл и не могут быть плодотворно использованы для изучения истории Закавказья с точки зрения марксизма. При создании марксистской истории Армении и Закавказья мы не можем, конечно, целиком игнорировать работы немарксистов, которые должны быть критически использованы, так же, как и труды буржуазных филологов, как, напр., труды К. Костаньяна, книга «Vimakcan Taregir», затем издание В. Бастамяна о средневековом армянском судебнике «Мхитар Гош», а также археологические, лингвистические и по истории литературы. Все эти работы могут быть рассмотрены как труды, создающие определенный материал для изучения истории, требующие, конечно, при этом соответствующего критического отношения.

ՀԱՅ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՆՑԵՊՑԻԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ

1.

Համկոմկուսի Կենտկոմը Կոմակադեմիայի գործունեության մասին հանած որոշման մեջ նշում է. «Գիտական աշխատավորների ուշադրությունն ու ուժերը կենտրոնացած պիտի լինեն պրոլետարիատի դասակարգային պայքարի և սոցիալիստական շինարարության պրոբլեմների տեսական վերամշակման վրա»:

Եթե թերթելու լինենք այն գրականությունը, որ Հայաստանի խորհրդայնացումից հետո արտադրվել է Հայաստանի պատմության բնագավառում, ապա կտեսնենք, որ այդ գրականությունը ճնշող մեծամասնությամբ, և՛ իր թեմատիկայով, և՛ իր բովանդակությամբ ոչ թե միայն «պրոլետարիատի դասակարգային պայքարի և սոցիալիստական շինարարության պրոբլեմների տեսական վերամշակման» ուղղությամբ գրեթե բան չի կատարել, այլև փայլուն ապացույց է այն իրողության, որ մեր պատմագրության ֆրոնտում տեսականի և պրակտիկայի ճեղքվածքը աղաղակող հակադրություն է կազմում մեր առաջ դրված խնդիրների լուծման տեսակետից:

Նշել Հայաստանի պատմության ուսումնասիրության հիմնական պրոբլեմները նշանակում է ստեղծել պլանային աշխատանքի էական նախապայմաններից մին: Մինչև այժմ մեզ մոտ պատմագրության բնագավառում բացակայել է կատարելապես պլանային աշխատանքը: Պատմաբանը՝ ամփոփված ինքն իր մեջ, ոչ միայն կտրված է եղել մեր սոցիալիստական շինարարության և պրոլետարիատի մղած դասակարգային պայքարի խնդիրներից, այլև նա իր դրական արտադրություններում քաղաքականության և գիտության միջև պատնեշ է քաշել: Նա ժխտել է և շարունակում է իր տեսական և պրակտիկ գործունեությամբ ժխտել լենինյան այն ճշմարտությունը, որ գիտությունը դասակարգային է, և պատմությունը գերազանցորեն քաղաքականություն է:

Նշել Հայաստանի պատմության ուսումնասիրության հիմնական պրոբլեմները նշանակում է մյուս կողմից վերագնահատման ենթարկել հայ բուրժուական կոնցեպցիան և նշել այն հիմնական ուղին, որով պետք է ընթանա մեզ մոտ պատմագրությունը՝ զինված մարքս-լենինյան աշխարհայացքով: Իսկ այս վերջինը հնարավոր է միայն այն ժամանակ, երբ մեզ համար պարզ կլինի, թե ի՞նչ հիմնական խնդիրներ են դրված մեր առաջ այժմ:

Մեր իդեոլոգիական պայքարը պետք է ուղղված լինի հատկապես մեծա-

պետական, վելիկոռուսական շովինիզմի և տեղական նացիոնալիզմի դեմ:

Դասակարգային պայքարի սրման ներկա էտապում տեսականի և պրակտիկայի զուգորդումը պատմության բնագավառում պայմանավորվում է ազգային հարցի շուրջ երեկի և ներկայի պատմական խնդիրների միասնական ուսումնասիրությամբ:

Անդրկովկասը՝ անցյալում ցարական Ռուսաստանի մի գաղութը, մեծապետական, վելիկոռուսական շովինիզմի և տեղական նացիոնալիզմի բազմաթիվ փաստեր է արձանագրել մեր անցյալում և նրա ցայտուն արտահայտություններին հանդիպում ենք նույնպես ներկայիս՝ սոցիալիստական վերակառուցման ներկա շրջանում: Անցյալի այդ խնդիրների անալիզը և նրանց սոցիալ-տնտեսական արմատների վերհանումը պետք է վերցնել այժմ մեզ մոտ մեռնող դասակարգի վերջին հոգեվարքային գալարումների կապակցությամբ:

Հայ բուրժուազիայի մարտական կուսակցությունը՝ դաշնակցությունը, հանդիսանում է իդեոլոգիական ղեկավարը մեզ մոտ ոչնչացող դասակարգի: Դաշնակցությունը թե՛ ներքին և թե՛ արտաքին ֆրոնտում պայքարում է խորհրդային իշխանության դեմ: Իր այս նպատակն իրագործելու համար շատ դեպքերում այդ կուսակցությունը «ազգային» բուրժուական պատմագրության զինանոցից է վերցնում իր զենքերը:

Հայ բուրժուական պատմագրությունը հայ եկեղեցուն և «Ամենայն հայոց կաթողիկոսին» ներկայացրել է որպես հայ «ազգի» պահպանման հիմնական մի ազդակ՝ սքողելով պատմական անցյալում հայ եկեղեցու՝ որպես շահագործող ինստիտուտի դեմքը: Անհրաժեշտ է քննության առնել այս խնդիրը՝ ցույց տալու համար, թե ինչպես ֆեոդալական Հայաստանում, մասնավորապես սկսած XV դարուց հետո, աշխարհիկ հայ ֆեոդալներին փոխարինում են Հայաստանի վանքերն ու եկեղեցին՝ իր կաթողիկոսներով և եպիսկոպոսներով, ֆեոդալական կարգերի հատուկ շահագործման բոլոր ֆունկցիաներով:

Այս խնդրի պարզաբանումից է կախված նաև Հայաստանի պատմության ընթացքում դասակարգային պայքարի խնդիրների լուսաբանումը: Իսկ այս ներկայիս գյուղատնտեսության ռեկոնստրուկցիայի շրջանում գյուղում տարվող դասակարգային պայքարի խնդիրների կապակցությամբ և աշխատավոր գյուղացիության դարավոր նախապաշարումները փարատելու տեսակետից խոշոր քաղաքական նշանակություն ունեցող խնդիր է:

Եվ, վերջապես, անհրաժեշտ է պարզաբանել երեկի, մոտիկ անցյալի այն բոլոր իրադարձությունները, որոնք վերաբերում են անմիջականորեն պրոլետարական հեղափոխության էտապներին մեզ մոտ, որոնց մասին արտասահմանում դաշնակցական էքսմինիստրները եռանդ չեն խնայում իրենց մեմուարներով «արդարանալու պատմության դատաստանի» առաջ

և իդեոլագիապես պատրաստելու Խորհրդային Միության դեմ կազմակերպվող ինտերվենցիան: Իսկ մենք այդ ուղղությամբ դեռևս շոշափելի ոչինչ չենք արել: Արխիվներում կուտակված մատերիալները սպասում են իրենց մշակողներին:

Ահա ինչու Հայաստանի Կոմունիստական կուսակցության վերջին համագումարը Կենտկոմի հաշվետվության մասին ընդունած իր բանաձևում հատուկ կետ էր մտցնում Հայաստանի պատմության մարքսիստական վերամշակման խնդրի շուրջը, մի կետ, որ իրավամբ հանդիսանում է մեր իդեոլոգիական պայքարի հիմնական օղակներից մեկը: Ահա թե ինչում է կայանում այն խոշոր գիտական-քաղաքական նշանակությունը, որ դրված է մեր առաջ՝ վերոդրյալ հարցերի խորը վերամշակման ուղղությամբ:

Հայաստանի խորհրդայնացման 11-րդ տարում՝ սոցիալիստական հիմքի կառուցման ներկա էտապում և դասակարգային պայքարի սրման այս մոմենտում, պատմաբանը պետք է կողմնորոշվի իր գրական աշխատություններով: «Անդասակարգային» գիտության պիտակի տակ նա չի կարող խորհրդային հասարակայնությունը հուզող այս հարցերի հանդեպ «լոյալ» դիրքում լինել. կա՛մ պրոլետարիատի հետ, կա՛մ նրա դեմ: Գիտության բոլոր բնագավառներում աշխատողների համար խնդրի այս կերպ դրվածքը առավելապես վերաբերում է մի գիտության բնագավառում, որը գերազանցորեն քաղաքականություն է:

Հայաստանի պատմական անցյալում գոյություն է ունեցել այդ դասակարգային պայքարը, սակայն խնդիրը կայանում է նրանում, որ բուրժուազիայի կողմից տարված այդ պայքարի երևութական ձևը քողարկել է իրերի էությունը: Եթե դասակարգային պայքարի բյուրեղացման շրջանում այդ հաջողվել է անցյալում բուրժուազիային, ապա ֆեոդալական շրջանի արտադրական հարաբերություններում, որտեղ դարերի նախապաշարմունքը, անչափ տգիտությունն ու կրոնական ֆանատիկոսությունը ինչպիսի՜ խոշոր նախադրյալներ էին շահագործող դասակարգերի և նրանց իդեոլոգների համար՝ մթագնելու իրերի էությունը և պատմական պրոցեսը ներկայացնելու իրենց դասակարգային շահերի համաձայն:

Իսկապես «ամեն գիտություն ավելորդ պիտի լիներ, եթե իրերի էությունն ու երևույթական ձևը անմիջականորեն համատեղվեին միմյանց հետ» (Կ. Մարքս):

Իրերի էության և երևութական ձևի այդ ոչ համատեղումը հայ բուրժուազիայի իդեոլոգներին լայն հնարավորություն է ստեղծել Հայաստանի պատմությունը շարադրելու, Հեգելի լեզվով ասած, ռեֆլեքտիրենտ ուղղությամբ, մի ուղղություն, որը, հայ բուրժուազիայի մորալի պրիոմներից ելնելով, ներկայացրել է պատմական պրոցեսի իրադարձությունները նույն բուրժուազիայի դասակարգային շահերի տեսակետից:

Սերունդներ դաստիարակվել են մի Պալասանյանի և կամ Լեոյի գաղափարախոսությամբ: Դ. Անանունը որքան էլ պատման մատերիալիզմի անունով խոսած լինի, իրենից ներկայացնում է, վերջին հաշվով, հայ բուրժուազիայի պատմաբան իդեոլոգը: Եթե գիտակից բանվորության համար բուրժուազիայի ակնհայտնի ներկայացուցիչներն իրենց գաղափարախոսությամբ ավելի նվազ վտանգավոր են դարձնում իրենց, ապա մենշևիկ Դ. Անանունի նուրբ, քողարկված ձևով անցկացրած բուրժուական իդեոլոգիան այնքան ավելի վտանգավոր է, և մեր քննադատության սլաքը կենտրոնացնելով վերջինի վրա՝ չպետք է հաշվի չնստել նաև առաջին կարգի իդեոլոգների հետ, որոնք, ինչպես ասացի, սերունդներ են դաստիարակել:

Ուրեմն մարքսիստ-պատմաբանների հիմնական խնդիրներից մինը լինելու է բուրժուական պատմագրության կոնցեպցիայի վերագնահատումը՝ ցույց տալու համար, թե ինչպես այդ իդեոլոգները գիտակցաբար թե անգիտակցաբար, այդ միևնույնն է, հանդիսացել են հայ բուրժուազիայի դասակարգային շահերի պաշտպանը:

Այնքան, որքան մեր այս ուսումնասիրության մեջ մենք նպատակ ունենք Հայաստանի պատմության ուսումնասիրության հիմնական պրոբլեմները առաջադրել և այս կապակցությամբ հայ բուրժուական պատմագրության կոնցեպցիայի ընդհանուր դրույթները երևան հանել, ուստի մեր այս քննության ընթացքում մենք կանգ չենք առնի յուրաքանչյուր պատմաբանի վրա առանձին-առանձին: Նրանք հայտ կգան այս կամ այն խնդիրները քննելիս որպես իլլյուստրացիաներ: Նրանց տեղը մեր պատմագրության մեջ որոշելու խնդիրը կարող ենք լուծել այն ժամանակ, երբ նրանցից յուրաքանչյուրը կոնկրետ մեր ուսումնասիրության նյութ կդառնա: Մի խնդիր, որ առաջադրել է իր աշխատանքի ծրագրում Հայաստանի մարքսիստ-պատմաբանների ընկերությունը:

2.

Խոսել հայ բուրժուական պատմագրության կոնցեպցիայի մասին և դնել նրա վերագնահատման խնդիրը նշանակում է երևան հանել նրա սոցիալ-տնտեսական արմատները, ցույց տալ, թե ի՞նչ եղանակով է սպասարկել հայ բուրժուազիայի դասակարգային շահերին և, վերջապես, մատնանշել այն իդեոլոգիան, որ նա կիրառել է Հայաստանի պատմությունը շարադրելիս:

Մեր ուսումնասիրության ընթացքում առաջադրված այս աշխատանքը կատարելիս երևան կհանվեն Հայաստանի պատմության ուսումնասիրության այն հիմնական պրոբլեմները, որոնց մշակումն ու մասսայականացումը երկրորդ հիմնական խնդիրն է Հայաստանի մարքսիստ-պատմաբանների ընկերության:

Հայտնի է, որ XIX դարում 60-ական թվականների հայտնի հրապարակախոս Ստ. Նազարյանը մի քանի անգամ փորձ է արել գրելու հայոց պատմություն, և ամեն անգամ այդ կիսատ է մնացել: 1860 թ. հայոց պատմության մասին գրած հառաջաբանում կարդում ենք. «Հայոց նոր պատմագրությունը մինչև այժմ գտնվում է խրված տղայական կոշիկների մեջ, որովհետև դորա հեղինակքը մինչև այսօր եղած են աբեղա մարդիկ և այն, պապական եկեղեցու աբեղայք. և այդ է պատճառը, մեր կարծիքով, որ հայոց մարդը մինչև այժմ ոչինչ ուսած չէ մեր պատմությունից»[1]:

Խոսելով Մ. Չամչյանի եռահատոր պատմության մասին՝ Նազարյանը հետևյալ կարծիքն է հայտնում. «Կարող էր համարվել հավաքածու զանազան պիտանի տեղեկությունների հայոց պատմության մասին, քան թե պատմական **հոգով և ոգով գրած գործ**»[2] (ընդգծումը մերն է - Հ. Զ.):

Ուրեմն դրվում է հրապարակի վրա հայոց պատմության «նոր հոգով» և «ոճով» գրելու հարցը: Ո՞րն էր այդ նոր հոգին և ոճը, և կամ ինչո՞ւ XIX դարում հայ բուրժուազիայի իդեոլոգը դժգոհ էր կղերա-ֆեոդալական պատմագիր Մ. Չամչյանից, այդ մենք կտեսնենք ստորև:

1877 թ. Ստ. Պալասանյանը, որի կազմած Հայոց պատմության դասագիրքը գրեթե միակն է եղել հայկական դպրոցներում, հայոց պատմության վերաբերյալ կազմված մի գրքի գրախոսականում գտնում է, որ ճիշտ չէ այն մերձեցումը, որ մինչ այդ գոյություն է ունեցել հայոց պատմությունը շարադրելիս. այն է՝ Հայաստանի պատմությունը հասցնել մինչև հայ թագավորների անկումը[3]: Պալասանյանը գտնում է, որ անհրաժեշտ է հետագա շրջանի պատմությունը ևս գրել, և ահա թե ինչպես է հիմնավորում նա իր այդ տեսակետը.

«…Եթե հեռավոր ժամանակների հիշատակը նպաստում է ազգայնության թմրած զգացմունքները արծարծելու, որին այնքան պետք ունենք, դժբախտ օրերի պատմությունը՝ ցույց տալով մեր մեջ հայերի հաստատամտությունը դառն փորձությունների ժամերում, անշուշտ, նոր ոգի կտա այժմյան սերունդին և կխրախուսե նրան ավելի վստահությամբ նայելու ապագայի վրա»[4]:

Արդեն որոշակի հրապարակի վրա է դրվում «ազգը» և «ազգայնությունը», և նշվում է ազգային պատմության նշանակություն՝ «խրախուսելու նոր

---

[1] **Լեո**, Ստեփանոս Նազարյանց, հատ. 2, Թիֆլիս, 1902, էջ 98:

[2] Նույն տեղում:

[3] Պրոֆ. Լեոյի կոնցեպցիան այս կետում հիշվածից ոչնչով չի տարբերվում: Նրա БСЕ-ում ապագրած «Армения»-ի մասին դրած հոդվածում նույն միտքն է արտահայտվում, նրա կարծիքով՝ XV դարուց հետո Հայաստանի պատմությունը փոխադրվում է գաղութները. «…Отныне (XV в.) история ее переносится в далекие колонии…»:

[4] «Փորձ» ամսագիր, № 3, 1877/78, էջ 307:

սերունդին ավելի վստահությամբ նայելու ապագայի վրա»:

Այս նպատակի իրագործման համար ֆեոդալական պատմագրությունը անպետք է հայ բուրժուազիայի համար: Անհրաժեշտ էր հեռավոր անցյալի մասին խոսելիս ներկան խոսեցնել. ահա թե ինչ է ասում պրոֆ. Լեոն Ստ. Նազարյանի պատմական մի աշխատության մասին. «Եվ այդ հայացքների մեջ գլխավորապես երևան է գալիս մի հրապարակախոս, որ թեև խոսում է հեռավոր անցյալի մասին, բայց աչքի առաջ ունի ներկան: Հենց այդ ներկայի համար էլ նա խոսեցնում է անցյալը, որպեսզի խոշոր փաստերով ցույց տա պապերի ուսումնական գեղեցիկ վաստակները և թոռների տգիտությունը, լուսավախությունը, ծուլությունը…»[1]:

Սակայն, պատմագրության կողմից հայ բուրժուազիայի մատուցվելիք այս ծառայությունը այն ժամանակ կարող էր բեղմնավոր լինել, երբ «ազգը» և «ազգությունը» մի ամբողջություն ներկայացնող կատեգորիա հիմնավորվեր: Այս գետնի վրա XIX դարու երկրորդ կեսի հայ բուրժուազիայի գաղափարախոսների և կղերականության միջև բացվում է պայքար, երբ առաջինները հայտարարում են, որ կրոնը չի կարող «ազգի» բնորոշման հատկանիշը լինել: Եկեղեցու և կրոնի դեմ բացված այդ պայքարը երբեք արմատական բնույթ չի ունեցել. հայ բուրժուազիայի գաղափարախոսները երբեք այս խնդրում կրոնի, եկեղեցու բացարձակ ժխտման հարցը չեն դրել: Խոսել են ոչ թե ըստ էության, այլ եկեղեցական անհատների բարքերի անկման և եկեղեցու բարենորոգումների շուրջը:

Հայ բուրժուազիայի գաղափարախոսները նախ հավերժացնում են «ազգ» կատեգորիան և այն տանում են մինչև հայերի ծագումը՝ Հայկ Նահապետի օրերը, սակայն «ներկան աչքի առաջ ունեցող» բուրժուազիայի գաղափարախոսին դեռևս այս բավական չէ: «Ազգային» պայքարի հաջողության տեսակետից անհրաժեշտ էր կրոնական հողի վրա գոյություն ունեցող խտրությունները վերացնել: Ահա այստեղ է, որ կղերականության և հայ բուրժուազիայի գաղափարախոսների միջև բացվում է պայքարը, երբ վերջիններս բողոքական և կաթոլիկ հայերին հայ «ազգի» անդամներ են հռչակում:

Հայ բուրժուազիայի գաղափարախոսները «ազգը» որպես հավերժական, բնական կատեգորիա հիմնավորելու, ինչպես և «ազգի» բաղկացուցիչ էլեմենտների մեջ «ոգեկան ներդաշնակ աշխարհը» տեսականորեն հիմնավորելու համար բավականին ջանք են գործադրել[2]:

---

[1] **Լեո**, Ստեփանոս Նազարյանց, հատ 2, էջ 99:

[2] Պրոֆ. Հակոբ Մանանդյանն իր «Ազգության գաղափարը» վերնագիրը կրող հոդվածում հայ ազգը հասցնում է «այն նախնական շրջանում, երբ ստեղծագործվել է Հայկի առասպելը, և դյուցազն Հայկը փառավորվել է իբրև ազգային հերոս ու հայ ազգի հայր»: Եվ կամ՝ «ազգությունը խիստ կենսունակ է, ինչպես և ինքը բնությունը», և կամ «բնազդը բնական

«Ազգ» տերմինի շուրջը բուրժուազիայի տեսաբանների կողմից բացված պայքարը չէր կրում երբեք զուտ լեզվաբանական կամ տեսական-փիլիսոփայական բնույթ: Նրանց կողմից տրված բնորոշումը հիմնականում հետապնդել է պրակտիկ նպատակ, երբ «ամեն ազգի լեզուն, բարքերն ու սովորությունները, գրականությունն ու գեղարվեստը, կրոնական ու բարոյական հասկացողությունները և գիտական տեսությունները **ներդաշնակ մի աշխարհ**» են հայտարարվում, և կամ նպատակ է դրվում «ազգային պատմության» առաջ «ոգի տալ այժմյան սերունդին և խրախուսել նորան ավելի վստահությամբ նայելու ապագային»[1] (ընդգծումը մերն է - Հ. Զ.):

Ինչո՞ւմն է այդ ներդաշնակության տեսությունը: Այդ անհրաժեշտ էր, որպեսզի նրան հետևեր հայ հասարակական հարաբերություններում գոյություն ունեցող ներհակությունները ժխտելու և պատմականորեն նրան հիմնավորելու տեսությունը: Հայ բուրժուազիայի գաղափարախոսները լավ էին գիտակցել այն ճշմարտությունը, ըստ որի՝ «ազգային շարժման ուժը որոշվում է ազգության լայն խավերի, պրոլետարիատի և գյուղացիության, նրա մեջ ունեցած մասնակցության չափով»:

Եթե մի կողմից անհրաժեշտ էր կրոնական գետնի վրա առաջացած տարբերությունները վերացնել, ապա մյուս կողմից պատմության շարադրողին էր վերապահված դասակարգային հակամարտությունները քողարկել և նրանց փոխարինել ազգային հակամարտություններով և ներհակություններով:

Այս վերջինը վերապահված էր բուրժուական պատմաբաններին, որոնք իրենց վրա դրված միսիան կատարեցին:

Ի՞նչ ձևով իրագործեցին այդ միսիան:

Սակայն, նախքան այդ հարցին անցնելը արժե կանգ առնել այն խնդրի վրա, թե ինչպե՞ս է գնահատվել բուրժուական պատմագրությունը Հայաստանի խորհրդայնացումից հետո լույս տեսած պատմական ուսումնասիրություններում:

Պրոֆ. Հ. Մանանդյանը 1925 թվին հրատարակած իր մի ուսումնասիրության նախաբանում, խոսելով այս հարցի մասին, գտնում է, որ հայոց պատմության մասին անցյալում գրված աշխատությունները կրում են զուտ ժամանակագրական բնույթ, որտեղ «փոքրիշատե ստուգված են քաղաքական և կրոնական անցքերը»: Հայաստանի տնտեսական կյանքի մասին պատմական ուսումնասիրությունների բացակայության գլխավոր պատճառը համարում է այն, որ Հայաստանի տնտեսական կյանքի վերաբերյալ աղբյուրները շատ քիչ տեղեկություններ են տալիս, թեև հաջորդ երեսում հակասում է

մի ուժ է, որ մեծ դեր է կատարում նաև ազգային համերաշխության և միության գործում»: Կոմենտարիաների կարիք չկա, տե՛ս «Գործ» ամսագիր, № 1, Բ մաս, Բաքու, 1917, էջ 1-18:

[1] Տե՛ս պրոֆ. Հակ. Մանանդյանի նույն հոդվածը, «Գործ», № 1, Բ մաս, էջ 7:

իրեն՝ գտնելով, որ աղբյուրներում եղած նյութերը հավաքելով և ուսումնասիրելով՝ հնարավոր է «հայոց անցյալի պատմագիտական հետազոտությունները նոր հունի մեջ դնել»: Երկրորդ պատճառը համարում է այն, «որ հայոց պատմական անցյալը… ուսումնասիրել են մեծ մասամբ ոչ թե պատմաբան մասնագետները, այլ հայագետ բանասերները»[1]: Ուրեմն, եթե ուսումնասիրողները լինեին պատմաբան մասնագետներ, ամեն ինչ կարգին կլիներ: Ի՞նչ է դուրս գալիս. հավասարության նշան է դրվում բոլոր «մասնագետ պատմաբանների» մեջ, նշանակում է պրոֆ. Մանանդյանի համար ոչ մի նշանակություն չունի «մասնագետ պատմաբանի» աշխարհայացքը կամ նրա գործ դրած մեթոդոլոգիան:

Բուրժուական պատմագրության այս ձևի գնահատումը ոչ թե միայն քողարկում է իրերի դրությունը, այլ բացահայտ սքողումն է անցյալի պատմագրության դասակարգային, բուրժուական էության:

Մեր կարծիքով՝ պրոֆ. Լեոն ճիշտ է նկատում, որ բուրժուական պատմագիրը «թեև խոսում է հեռավոր անցյալի մասին, բայց աչքի առաջ ունի ներկան: Հենց այդ ներկայի համար էլ նա խոսեցնում է անցյալը»:

Ի՞նչ խնդիրներ էր դրել այդ ներկան հայ բուրժուազիայի գաղափարախոսների առաջ: Ի՞նչ սոցիալական պատվերներ է ստացել հայ բուրժուական պատմագրությունն իր դասակարգից:

3.

XIX դարում հայ բուրժուազիայի հիմնական խնդիրն է եղել ստեղծել իր համար «հարազատ» շուկա: Ռուսաստանի հայ բուրժուազիան, ամուր թելերով կապված լինելով ռուսական կապիտալի հետ, իր այս նպատակը իրագործելու համար հույսը դրել է ցարական Ռուսաստանի իմպերիալիստական քաղաքականության վրա: Հայ բուրժուազիայից ստացել է ահա հիմնականում սոցիալական այն պատվերները, որոնք նպատակ են ունեցել պատմականորեն «հիմնավորելու» հայ բուրժուազիայի ներկայի պահանջները:

Ապացուցանել պատմականորեն, որ, սկսած Սասանյան Պարսկաստանից մինչև օսմանցիները, արաբների, սելջուկների, մոնղոլների, պարսիկների և ռոմանացիների տիրապետությունը աղետաբեր է եղել հայոց համար, մյուս կողմից քողարկել բոլոր այն փաստերը, որոնք վերաբերում են Արևմտյան պետությունների կողմից Հայաստանին հասցված աղետներին, և այս՝ սկսած հռոմեական, բյուզանդական պետություններից և վերջացրած ներկայի իմպերիալիստական պետություններով:

ԲՀԵ-ում տպագրված «Армения» հոդվածը խտացրած ձևով Լեոն մեզ

[1] «Պետական համալսարանի գիտական տեղեկագիր», № 1, Երևան, 1925, էջ 4:

ներկայացնում է հայ բուրժուական պատմագրության կոնցեպցիայի այդ հիմնական խնդիրները[1]:

Պրոֆ. Լեոն, որ հեղինակն է այս հոդվածի, 1927 թվին Երևան քաղաքի՝ ռուսների կողմից գրավման, հարյուրամյակի առթիվ մոնղոլների տիրապետության ժամանակաշրջանին հետևյալ գնահատականն է տալիս.

«Այս մի սև ժամանակաշրջան է, որ անկում և աղքատացում է բերում ամբողջ Արևմտյան Ասիային: Տիրապետում էր ամեն տեղ Միջին Ասիայի վաչկատուն-հովվական տնտեսությունը, որ ոչ միայն ոչինչ չուներ տալու իր նվաճած ազգերին, այլև խլում էր նրանցից դարավոր մշակութային ստացվածքները՝ քշելով ամենքին դեպի վայրենացում»[2]:

Այս տեսակետը մինչև այժմ տիրապետող է եղել ամբողջ հայ բուրժուական պատմագրության մեջ: Այդ պատմագիրները նույնիսկ փոքր նեղություն չեն հանձն առել Բարտոլդի ուսումնասիրություններին ուշադրություն դարձնելու և կամ ակադ. Ն. Մառի՝ Անի քաղաքում կատարած պեղումներից, նյութական կուլտուրային մնացորդներից անհրաժեշտ եզրակացություններ հանելու և կամ պատմիչների հաղորդած վկայություններին անհրաժեշտ քննադատական մերձեցումը ցույց տալու:

Այս կոնցեպցիայի էական մի մասն է կազմում և այն, որ Հայաստանի անկումը պայմանավորվել է մոնղոլների արշավանքով: Նորագույն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանի տնտեսական կյանքի անկումը ունեցել է շատ ավելի խոր պատճառներ: Եթե Հայաստանի հյուսիսային մասում առևտրական կապիտալի կենտրոն Անի քաղաքը XIII դարու երկրորդ կեսից աստիճանական անկման է դիմում, այդ դեռ չի նշանակում, որ ամբողջ Հայաստանին է վերաբերում այդ: Բաղդադի գրավումը և նրա՝ որպես առևտրական կենտրոնի ունեցած նշանակության կորուստը և նրա փոխարեն Պարսկաստանում Թավրիզի, իլխանների մայրաքաղաքի, ինչպես և Սուլթանիե քաղաքի առաջացումը փոփոխություններ են մտցնում կարավանային ճանապարհների մեջ: Հայաստանի հյուսիսային մասի փոխարեն հարավը սկսում է ուժեղանալ: Այս հանգամանքի վրա մեծ չափով անդրադառնում է նաև Միջերկրականի ծովեզերքում աշխուժացող առևտուրը: Այս կերպ ոչ թե տնտեսական կյանքի անկում են տեսնում, այլ առևտրական կենտրոնների միջև տեղաշարժեր են կատարվում:

Ինչո՞ւ հայ բուրժուական պատմագիրները Հայաստանի անցյալի պատմությունը ներկայացրել են այնպես, որ արևելյան ժողովուրդների տիրապետության շրջանը եղել է կործանարար, և դրա փոխարեն փառաբանվել է արևմտյան «քրիստոնյա» պետությունների տիրապետության շրջանը:

---

[1] Հմմտ. նաև **Լեո**, Հայոց պատմություն. նորագույն շրջան, Երևան, 1926, էջ 1-11:

[2] «Խորհրդային Հայաստան» օրաթերթ, 1927, № 1895:

Այս բացատրվում է նրանով, որ հայ բուրժուազիան իր նպատակներին հասնելու համար մեկ Արևմտյան Եվրոպայի իմպերիալիստական պետությունների, մեկ ցարական Ռուսաստանի օժանդակության վրա է հույսը դրել: Հայ բուրժուազիային անհրաժեշտ էր մասսաների սեփականությունը դարձել այն, որ հայ «ազգի» փրկությունը կարող էր գալ Արևմտյան Եվրոպայից կամ ցարական Ռուսաստանից: Իսկ այդ գիտակցությունը այնքան ավելի հիմնավոր կլիներ, երբ պատմականորեն ապացուցվեր, որ հայ «ազգը» իր ամբողջ պատմության ընթացքում միակ բարիքը տեսել է այն երկրամասից, որի վրա ուղղված են եղել հայ բուրժուազիայի աչքերը: Դրա փոխարեն արևելքի ժողովուրդները հարկավոր էր ներկայացնել այնպես, որ նրանց տիրապետության շրջանում Հայաստանը «քայքայվել» է և կամ «դեպի վայրենացում» է քշվել:

Այս դեռ բավական չէ: Հարկավոր էր պատմականորեն ապացուցել այն, որ «կուլտուրայի թշնամի» Արևելքի ժողովուրդների մեջ պատմական մեծ միսիա ունի կատարելու հայ ժողովուրդը: Եվ հայը ներկայացվել է Մերձավոր Արևելքի քաղաքակրթության ջահակիրը, ուստի «քրիստոնյա» պետությունները պետք է շահագրգռված լինեն մահմեդական ժողովուրդների լուծի տակ տառապող հայերին ազատագրել, որպեսզի նա կարողանա կատարել պատմականորեն իր վրա դրված միսիան»[1]:

Երկրորդ սոցիալական պատվերը, որ ստացել են հայ բուրժուազիայի գաղափարախոսները, եղել է այն, որ ապացուցեն, թե Հայաստանի անցյալի պատմության ընթացքում դասակարգեր և դասակարգային պայքար գոյություն չեն ունեցել: Եվ ինչպե՞ս կարող էր գոյություն ունենալ, երբ ազգի էության հիմնական բնորոշումն էր կազմում այն, որ «ամեն ազգի լեզուն, բարքերն ու սովորությունները, գրականությունն ու գեղարվեստը, կրոնական ու բարոյական հասկացողությունները և դրական տեսությունները հոգեկան ներդաշնակ մի աշխարհ են՝ պայմանավորված ազգային անհատականության առանձնահատկություններով»:

Ինչի՞ց էր առաջանում հայ բուրժուազիայի տված այս պատվերը:

Հայ բուրժուազիան շատ լավ էր իմանում, որ իր սկսած պայքարը կարող է միայն այն ժամանակ հաջողություն ունենալ, երբ հայ «ազգի» բոլոր անհատները միահամուռ կլծվեն իր «համազգային» դատին: Ուստի հարկավոր էր ցույց տալ, որ ինչպես Հայաստանի ամբողջ պատմության ընթացքում գոյություն չեն ունեցել դասակարգեր և դասակարգային պայքար, այնպես և «համազգային» դատի պաշտպանության գործում աղետաբեր է այդ դասակարգային պայքարը. հայ բուրժուազիայի գաղափարախոսները դասակարգային պայքարը փոխարինել են ազգությունների ներհակություններով:

[1] Հայ բուրժուական պատմագրության մեջ այս կոնցեպցիան ցայտուն կերպով արտահայտել են XIX դարի երկրորդ կեսի հայ հրապարակախոսության հայտնի ներկայացուցիչներ Ստ. Նազարյանը և Գր. Արծրունին:

Դասակարգային հակամարտությունները, որոնք տարբեր ժամանակներում ունեցել են իրենց առանձին կոնկրետ պայմանները, հայ բուրժուական պատմագրության կողմից առհասարակ անտես են առնվել և կամ բնութագրվել են բուրժուազիայի ներկա ռեակցիոն հասկացողությամբ:

Դ. Անանունի «Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում» աշխատությունը պատմության ուղն ու ծուծը հանդիսացող այս խնդրի վերաբերյալ կանգնած է բուրժուական տեսակետի վրա, միայն այն տարբերությամբ, որ մարքսիստական տերմինոլոգիայով գործող պատմաբանը ազգության միասնականության լոզունգը փոխարինել է «հայության հավաքման» տերմինով:

Ահա թե ինչ է գրում ֆեոդալ մելիքների մասին.

«Ամենահետաքրքրականը և մելիքների իսկական նկարագրի բացատրությունը մենք գտնում ենք առտնին հարաբերությունների մեջ, որ կային մելիքի և գյուղացիների մեջ: Մելիքի խոհանոցից ճաշ է ստանում ամեն մի գանգատի եկած գյուղացի և պատահական հյուր»:

«… Մելիքին ամեն տեղ ընդունում էին ոտքի կանգնելով, նա բոլորին էլ «երեխայք» էր անվանում, անգամ ծերերին: Նա՝ որպես մելիք, ամենի հայրն էր համարվում: Մելիքը մասնակից էր ժողովրդի ուրախությանն ու տխրությանը»[1]:

Վերին աստիճանի բնորոշ է այն գնահատականը, որ տրվում է Դ. Անանունի կողմից դասակարգային պայքարին:

«Որքան ժողովրդի կյանքը միալար ընթացք ունի, և մի ուժգին դասակարգային հակամարտ չի ծվատում նրա մարմինը, այնքան էլ ժամանակի առաջավոր գլուխները հաշտեցնող և խոշոր գաղափարներ են արծարծում»[2]:

Ամեն մի հայ բուրժուայի մնում է շնորհակալություն հայտնել «Ռուսահայերի հասարակական զարգացման» գրքի հեղինակին, և այդ գիրքը վայելել է այդ շնորհքը:

Գոյություն ունեցե՞լ է արդյոք դասակարգային պայքար Հայաստանում թե՛ ֆեոդալիզմի շրջանում և թե՛ ֆեոդալիզմի քայքայման պրոցեսում, ինչպես և հետագայում: Մեր կարծիքով՝ այս հարցի դրական պատասխանը տալու համար պետք է ուսումնասիրել Հայաստանի անցյալում գոյություն ունեցած աղանդավորական շարժումները: Սկսած IV դարուց՝ տարբեր անուններով (մծղնեական, մանիքյան, պավղիկյան, թոնդրակեցի) այդ աղանդավորական շարժումներին հանդիպում ենք մինչև XIII դար[3]: XV դարում կաթոլի-

---

[1] **Դ. Անանուն**, Ռուսահայերի հասարակական զարգացումը 19-րդ դարում, Բաքու, 1912, էջ 43:

[2] Նույն տեղում, էջ 315:

[3] Ֆեոդալական Հայաստանի՝ X դարում կրոնավորական գունավորումով առաջ եկած գյուղացիական շարժման մասին տե՛ս մեր ուսումնասիրությունը՝ «Պետական համալսարանի գիտական տեղեկագիր», № 4, Երևան, 1928:

կական շարժումն էր և հետագայում բողոքականությունը, XVIII դարում հայ առևտրական կապիտալի կենտրոններում (Էրզրում, Շամախի, Կարս, Ախալցխա, Կ. Պոլիս, Տիգրանակերտ) մեծ համեմատություններ է ստանում, և որ դարու կաթողիկոսը ուժեղ պայքարի է դուրս գալիս «աղթամարների» դեմ:

XVI դարի վերջին և XVII դարի սկզբում Մեխլուլյի շարժումը նույնպես կրոնաաղանդավորական գունավորումով հանդիսանում է կալվածատեր դարձած հայ հոգևորականության դեմ ուղղված մի շարժում, որի մասին Թ. Ավդալբեգյանի գրված աշխատությունը կրում է զուտ նկարագրական բնույթ, և այստեղ չեն բացատրվում այն սոցիալ-տնտեսական արմատները, որ առաջացրել է այդ շարժումը, և այս հակառակ այն իրողության, որ նրա կողմից օգտագործված աղբյուրներում այս տեսակետից բավական պերճախոս վկայություններ գոյություն ունեն[1]: Ինչպես Դ. Անանունը, նույնպես և Թ. Ավդալբեգյանը, հակառակ իրենց գործածած մարքսիստական տերմինոլոգիայի, պատմության այս հիմնական հարցում չեն տարբերվում բուրժուական պատմագիրներից:

Հայ բուրժուազիայի գաղափարախոսները, ֆեոդալական Հայաստանի հասարակարգում գոյություն ունեցող հակասությունները ժխտելով, առաջադրել են Հայաստանի պատմությունը ջնջելու անհեթեթ հարցը:

Եվ իրապես, ինչպես Կ. Մարքսն է նկատում, «...ջնջել բոլոր այն տարրերը (ճորտություն, առանձնաշնորհումներ, անարխիա) ֆեոդալական շրջանում, որոնք պայքարն են առաջացնում, բուրժուազիայի զարգացումն իր սաղմում խեղդած պիտի լինեին: Պիտի առաջադրեին պատմությունը ջնջելու անհեթեթ հարցը»[2]:

Ըստ երևույթին, պրոֆ. Լեոն գիտակցել է այս իրողության, երբ նա 1927 թ. տվել է հետևյալ գնահատականը հայ բուրժուական պատմագրության, որտեղ իր աշխատությունները նշանակալից տեղ են գրավում:

«Ժամանակակից մատենալիստական գիտության տեսակետից հայոց պատմություն դեռ գրված չի: Պետք է նրան գրել նորից, այլապես մենք կմընանք առանց պատմության, քանի որ եղածը, ավանդականը այլևս ոչ ոքի չի հետաքրքրի»[3]:

---

[1] Օրինակ՝ Գրիգոր Դարանաղեցի պատմիչը, որ ժամանակակից է եղել այդ շարժման, և որի «ժամանակագրության» մեջ (էջ 296/97) հիշատակվում է Մեխլուլյի շարժումը, կալվածատեր դարձած հոգևորականությունը այս կերպ է նկարագրվում. «Եվ վանքերի աբեղաները, որ ամենքը առհասարակ սուտ եպիսկոպոսներ էին եղել..., թողնելով լուսազարդ վանքերը, ցրված էին գյուղերում և ստացել էին արտեր, բուրաստաններ և անասունների հոտեր և դարձել էին որպես աշխարհական մեծատուններից մեկը..., որ 1600 թվին ես տրուպս՝ անվամբ Գրիգոր Դարանաղեցի, գնացի այն աշխարհը և Սաղմոսավանքում երեք տարի բնակվելով..., և այս ամեն անկարգություններին, որ գրեցի վերևը, ես ինքս ականատես եղա»:

[2] **K. Marx**, Das Elend d. Elend d. Philosophie, Berlin, 1923, s. 105.

[3] «Պետական համալսարանի գիտական տեղեկագիր», № 2-3, 1927, էջ 398:

Երրորդ սոցիալական պատվերը, որը տրվել է հայ բուրժուազիայի կողմից, եղել է այն, որ հայ բուրժուազիայի «համազգային» պայքարի համար պատմական անցյալից ոգեկոչվեն հերոսները և «ազգային» դատաստանին հանձնվեն դավաճանները: Այս սոցիալական պատվերի մի այլ կողմը հանդիսանում էր այն, որ վառ գույներով հրահրվի թուրքի, պարսիկի և բոլոր այլ արևելյան ժողովուրդների հանդեպ անասնական ատելությունը և պատրաստվի վրեժխնդիր սերունդ:

Հայ բուրժուական պատմագրությունը, որի այժմյան ամենահետադեմ ներկայացուցիչները հանդիսանում են արտասահմանի այժմյան հայ բուրժուազիայի իդեոլոգները, պատվով է կատարել իր վրա դրված այդ պարտականությունը:

Այնքան մերկապարանոց է կատարված հայ բուրժուական պատմագրության կողմից այս սոցիալական պատվերը, որ մենք կարիք չենք տեսնում մեջբերումներով ծանրաբեռնելու մեր այս աշխատությունը:

Հայ բուրժուական պատմագրության չորրորդ սոցիալական պատվերը եղել է այն, որ պատմականորեն ապացուցվի, թե հայ ժողովուրդը ամբողջությամբ «Հայկական հարցի» սկզբնավորությունից եղել է ռուսական օրիենտացիայի կողմնակից. մի թեզիս, որ գալիս է լրացնելու մեր կողմից վերև նշված առաջին սոցիալական պատվերը:

Ինչո՞ւ համար է առաջադրվում հայ բուրժուազիայի կողմից ռուսական օրիենտացիան պատմականորեն հավերժացնելու խնդիրը: Մենք դրա պատասխանը գտնում ենք Լեոյի մոտ. ահա թե ինչպես է բնորոշվում ցարական Ռուսաստանի քաղաքականությունը դեպի հայերը:

«…Յոթանասնական թվականներին… Ռուսաստանը ցույց է տալիս համաշխարհային նոր պատմության մեջ շատ հազվադեպ մի մեծագործություն. նա ահագին շարժում է սկսում մի բարբարոս պետության լուծի տակ ճնշված ազգերը ազատելու համար: Նա մենակ… սկսում է մի ագիտացիա հանուն արդարության, մարդկային իրավունքների, քրիստոնեական գաղափարի…, բարբարոսական Արևելքում նրա ջանքերով տեղի են ունենում ահավոր դեպքեր, որոնք կերպարանափոխում են շատ փոքր ազգերի պատմությունը»[1]:

Հարցը շատ պարզ է, եթե ցարական Ռուսաստանը այդքան «վեհոգի», «արդարամիտ» և «մարդկային իրավունքների պաշտպանի» դերում է ներկայանում հայ բուրժուազիայի իղձերն իրագործելու տեսակետից, ապա կար և աշխատավոր մասսա, որ ամեն օր այդ «մեծահոգի» Ռուսաստանի կառավարչական ձևի անլուր շահագործումների տակ իր կաշու վրա զգում էր նրա շնորհած «բարիքները»: Հարկավոր էր այդ աշխատավորական մասսաների մեջ հասարակական նպաստավոր կարծիք ստեղծել դեպի «վեհանձն» ցա-

[1] **Լեո**, Գրիգոր Արծրունի, հատ II, Թիֆլիս, 1903, էջ 390/91:

ական Ռուսաստանը: Ներկան, առօրյա կյանքը շատ աննպաստ էր այդ տեսակետից. անհրաժեշտ էր դիմել անցյալի պատմությանը և պատմականորեն ապացուցել այդ աշխատավոր մասսաներին, թե տեսեք ինչպես, սկսած XVII դարու վերջին քառորդից, հայ ժողովուրդը առանց դասակարգի խտրության, անվերապահորեն հարել է ցարական Ռուսաստանին և մինչև օրս իր նախնիների ավանդը շարունակում է պահել՝ մնալով հլու և հավատարիմ հպատակ նրան և միայն ցարական Ռուսաստանից է սպասում իր հույսերի և իղձերի իրագործումը:

Հայ-ռուս օրիենտացիայի պատմական այդ հիմնավորումը իր վրա է վերցնում Կ. Եզյանը[1]: Նրան են հետևում բոլոր պատմաբանները և արդեն հավերժացնում են այն կոնցեպցիան, թե իբր հայ-ռուս օրիենտացիան սկըսվել է XVII դարու վերջին քառորդից և շարունակվել է մինչև վերջ:

Ընկ. Աշոտ Հովհաննիսյանն իր «Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը» վերնագրով աշխատության մեջ ապացուցում է Կ. Եզյանի կատարած սխալը և ջրում է հայ-ռուս օրիենտացիայի ծագման մասին մինչև այդ գոյություն ունեցող թյուր հայացքները:

Ընկ. Աշոտ Հովհաննիսյանն իր աշխատությունով ապացուցանում է այն, որ միայն 1720 թ. հայ կղերի և մելիքության մի խոշոր հատվածը «հարկադրված եղավ փարել ռուսների օգնությանը և նրանցից փրկություն հուսալ»[2]: Պատմական այլ փաստեր գալիս են ապացուցելու, որ նույնիսկ XVIII դարու 60-ական թվականներին հայ կղերականության պետը՝ Էջմիածնի կաթողիկոսը, հայ բուրժուազիայի որոշ շերտերի վրա հենված, բացարձակ հակառակորդի դիրքավորում է ունեցել դեպի ռուսական օրիենտացիան:

Մեր ներկա ուսումնասիրության մեջ մենք հնարավորություն չունենք այս հետաքրքիր խնդիրը քննության առնելու. այս մասին մեր ձեռքի տակ եղած բազմաթիվ փաստերը հայ-ռուս օրիենտացիայի խնդրի մասին, մեզ բոլորովին այլ եզրակացությունների են բերել, քան այն, որ այժմ տիրապետող է հանդիսանում, և որը մշակել է հայ բուրժուական պատմագրության կողմից[3]:

Հայ բուրժուազիայի գաղափարախոսների՝ հայ-ռուս օրիենտացիայի

---

[1] **Г. А. Эзов**, Сношения Петра Великого с Армянским народом, СПб., 1898, էջ XX, XXIII, XIV, XXX.

[2] **Աշոտ Հովհաննիսյան**, Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը, էջ 63:

[3] Հայ-ռուս օրիենտացիայի խնդիրը հրապարակ եկավ կրկին 1768-74 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում: Ժամանակի կաթողիկոսը՝ Սիմեոն Երևանցին, մեզ թողել է բավականին փաստեր այն մասին, որ հայ կղերի մի խոշոր հատվածը, հանձին նույն Սիմեոն Երևանցու, հենված թուրքահայ առևտրա-վաշխառուական կապիտալի վրա, ամենախիստ պայքարն է մղել բոլոր այն ձեռնարկումների դեմ, որոնք նպատակ են ունեցել ռուսական իմպերիալիզմին օժանդակելու: Այս հարցը մենք քննության ենք առնելու առանձին ուսումնասիրությամբ:

շուրջը ստեղծած կոնցեպցիան չի դիմանում քննադատության:

Այնքան, որքան օրիենտացիայի խնդիրը «հայկական հարցի» կապակցությամբ հայ բուրժուազիայի համար հանդիսանում էր ամենաէական խնդիրը, և մանավանդ այն հանգամանքը, որ ներկայիս այդ խնդիրը տարբեր վարիանտներով հայ բուրժուազիայի և նրա կուսակցության՝ դաշնակցության կողմից հրապարակ է քաշվում, ապա նրա դեմ ուղղված պայքարն ստանում է ամենաակտուալ կարևորություն:

Հայ բուրժուական պատմագրության կոնցեպցիան որպես սիստեմ ինչպե՞ս է ներկայում:

Նախ՝ հայ բուրժուազիայի գաղափարախոսների կողմից «ազգ» և «ազգություն» գաղափարը, ըստ բուրժուազիայի դասակարգային շահերի, ստանում է իր ձևավորումը: «Հայության հավաքում», առաջ քաշված մենշևիկ Դ. Անանունի կողմից, հանդիսանում է իրականում այդ գաղափարի ձևակերպումը այլ վարիանտով:

Ապա, համաձայն հայ բուրժուազիայի քաղաքական նպատակների իրագործման, գրում է այդ պատմությունը՝ ելակետ ունենալով պատմականորեն հիմնավորելու հետևյալ դրությունները. ա) Արևմուտքի իմպերիալիստական պետությունների հանդեպ հայ բուրժուազիայի դիրքավորման պատմական հիմնավորումը, բ) «Համազգային դատին» լայն մասսաների ընդգրկման համար պատմականորեն Հայաստանում դասակարգերի և պայքարի ժխտումը, գ) պատմական անցյալից իր մղած պայքարի անհրաժեշտ «հերոսների» ստեղծումն ու նրանց անմահացումը:

Եթե հայ բուրժուազիայի քաղաքական ծրագրերի իրագործման տեսակետից օրիենտացիայի խնդիրը առաջնակարգ տեղն է գրավում, ապա հայ բուրժուական պատմագրության կողմից մշակված կոնցեպցիայի ամենաբնորոշ կողմը հանդիսանում է դասակարգային պայքարի ժխտումը: Օրիենտացիայի խնդրում քաղաքական խմբավորումները կատարվում են ըստ դասակարգերի: Հայ բուրժուազիայի համար անհրաժեշտ էր «համազգային դատի» շուրջը խմբավորել հայ ժողովուրդը՝ առանց դասակարգերի խտրության, իր այս նպատակի իրագործման համար անհրաժեշտ էր առհասարակ հայկական հասարակության մեջ դասակարգերի և դասակարգային պայքարի բացասումը:

4.

Ինչպիսի՞ շերտավորումներ են եղել հայ բուրժուական պատմագրության մեջ մեթոդոլոգիական տեսակետից:

Հայ բուրժուական պատմագրությունը, ինչպես տեսանք, ելակետ է ունեցել հայ բուրժուազիայի քաղաքական նպատակներից և նրա մորալից բխող սկզբունքները:

Նրա պատմական հետազոտություններին տոն ու ուղղություն են տվել սահմանված իդեաները և կիրառվել հայ ժողովրդի պատմության վրա: Հայաստանի պատմությունը հարմարեցվել է ըստ այդ սկզբունքների: «...Ոչ թե բնությունն ու մարդկային հասարակարգը հարմարվում են ըստ սկզբունքների, այլ սկզբունքները ճիշտ են այն չափով, ինչ չափով նրանք բնության և պատմության հետ համատեղվում են: Սա է միայն իրի մարքսիստական ըմբռնումը, և սրա ընդդիմադիր կողմը՝ իդեալիստական»:

Սակայն, իդեալիստական ընդհանուր բնորոշումը մեզ դեռևս չի կարող բավարարել այնքան, որքան իդեալիզմը ինքը պարունակում է մի շարք ուղղություններ: Իդեալիստ-դիալեկտիկ Հեգելից մինչև Գրոտիուս և Լոք կան խոշոր տարբերություններ:

Հայ բուրժուական, իդեալիստական պատմագրությունը յուրահատուկ մի **վարիանտն** է հանդիսանում իր մեթոդոլոգիայով հին, ֆեոդոլական պատմագրության:

Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ, Եղիշե, Ղազար Փարպեցի, Մովսես Խորենացի՝ V-IX դարերի ֆեոդալական Հայաստանի այս կլասիկ պատմագիրները, շարադրել են իրենց նախորդող դարերի պատմությունները իրենց ժամանակի և այն նախարարական տների պահանջների համաձայն, որոնց համար գրվել է այդ պատմությունը:

Հայաստանի բուրժուական պատմագրության տիրապետող իդեալիստական ուղղությունը կարելի է բնորոշել հետևյալ ուղղություններով:

1. Պրագմատիկ-իդեալիստական: Այս ուղղության հետևող պատմաբանները, որոնց մեջ գլխավոր տեղը բռնում է պրոֆ. Լեոն, ամենացայտուն արտահայտիչն են հանդիսացել հայ բուրժուազիայի ցանկությունների: Աշխատել են հայ բուրժուազիայի սկզբունքների ոգու հիման վրա վերակենդանացնել անցյալի պատմական իրադարձությունները և պատկերալից ոճով ներկայացնել:

Այս աշխարհայացքի կրողները, հանդիսանալով ժամանակի բուրժուական մորալի արտահայտիչները, ապա ուրեմն նրա աշխարհայացքը պայմանավորված է եղել նրանով, թե ինչ չափ այդ բուրժուազիան արմատական գաղափարների հասել է: Ամեն պարագայի, հայ բուրժուազիան նույնիսկ իր հարձակողական շրջանում կղերականության հետ դեռևս իր կապերը չի կտրել, ապա ուրեմն նրա աշխարհայացքը այս տեսակետից խոշոր դրոշմ է

դրել հայ բուրժուական պատմագրության վրա: Գիզեներ և Թիեռներ չէր կարող արտադրել հայ բուրժուազիան:

Հայ բուրժուական պատմագրության պրագմատիկ իդեալիստական ուղղությունը կղերա-ֆեոդալական աշխարհայեցողության խորը կնիքն է կրում: Եվ այս միանգամայն հասկանալի է: Հայ կղերը Էջմիածնի «Ամենայն Հայոց կաթողիկոսի» գլխավորությամբ XIX դարու վերջերից անցել էր ամբողջությամբ հայ բուրժուազիայի բանակը և հանդես էր գալիս նրա քաղաքական ձգտումների իրագործողի դերում: Հայ բուրժուազիայի գաղափարախոս պատմաբանները չէին կարող այս հանգամանքը նկատի չունենալ, երբ գրում էին Հայաստանի անցյալի պատմություն՝ «ներկայի ոգու» համաձայն:

Այս ուղղության մեջ գլխավոր հոսանք է հանդիսացել, Հեգելի լեզվով խոսելով, ռեքլեքտիրենտ-քննադատականը, որը բավականին մեծ չափով հարստացրել է բուրժուական պատմագրությունը:

Այս հոսանքի գլխավոր ներկայացուցիչներից է պրոֆ. Յո. Մարկվարտը, որը բանասերի հմտությամբ Հայաստանի պատմության վերաբերող առանձին հարցերի շուրջը կատարած իր սրամիտ դիտողություններով հանդիսանում է այս հոսանքի տիպիկ արտահայտիչը: Սակայն, երբ խնդիրը գալիս է սոցիալ-քաղաքական խնդիրների քննարկման, արդեն պարզվում է, թե ինչպես այդ հմուտ բանասերն իր աշխարհայեցողությամբ պատկանում է պրագմատիկ իդեալիստների շարքին[1]:

Այդ հոսանքին պատկանող հեղինակների աշխատությունները, այնքան, որքան մատերիալ են հայթայթում պատմագրության, կարող են օգտագործելի լինել նաև մարքսիստ պատմաբանների համար: Սակայն անհրաժեշտ է միշտ ցուցաբերել քննադատական վերաբերմունք, մանավանդ, որ նրանց բանասիրական աշխատությունների ելակետը եղել է հնդեվրոպական լեզվաբանությունը և ոչինչ չեն ցանկացել լսել Անդրկովկասի ժողովուրդների մասին ակադ. Մառի այն հայտնաբերումների մասին, որոնք տրամագծորեն հակադրվում են հնդեվրոպական լեզվաբանության դրույթներին:

Ճիշտ է, այս հոսանքի ներկայացուցիչներն իրենց ուսումնասիրություններում սահմանափակվել են առանձին նեղ խնդիրների ուսումնասիրություններով և կարծիք չեն առաջադրել պատմա-քաղաքական նշանակություն ունեցող խնդիրների վերաբերյալ: Սակայն այնքան, որքան այս բանասերների առանձին, մոնոգրաֆիկ աշխատությունները եկել են հիմնավորելու բուրժուական պատմագրության առանձին դրությունները, չէր կարող մեր ուշադրության առարկան չդառնալ: Այս ուղղությամբ Հայաստանի պատմագրության բնագավառում խոշոր անելիքներ ունեն ակադ. Մառի այն աշակերտները, որոնք կարողանում են հետևել իրենց ուսուցչի կատարած

[1] Այս տեսակետից բնորոշ են պրոֆ. Յո. Մարկվարտի երկու աշխատությունները՝ «Südarmenien und die Tigrisguellen, Wien, 1930», «Die Fntsthe d'arm. Volkes, Berlin, 1919», առաջինի նախաբանը և երկրորդի էպիլոգը:

նորանոր նվաճումներին:

Երկրորդ հիմնական ուղղությունը հանդիսանում է **էմպերիկ** ուղղությունը, որը Հայաստանի անցյալն ու ներկան աշխատում է բացատրել ֆակտորների **տեսությամբ**:

Այս ուղղության ներկայացուցիչները կիրառում են կրոնական, աշխարհագրական միջավայրի, հոգեբանական և տնտեսական **ֆակտորները**:

Բուրժուական պատմագրության մեջ այս ֆակտորներից մեծագույն տեղը տրվել է աշխարհագրական միջավայրի ֆակտորին: Ընկ. Բ. Բորյանն իր վերջին աշխատությամբ[1] մեծ չափով տուրք է տալիս նույնպես բուրժուական այս աշխարհայեցողության, մարքսիստական տերմինոլոգիայով ռեստավրացիայի է ենթարկում հայ բուրժուական պատմագրության մի շարք դրությունները: Աշխարհագրական միջավայրի տեսությամբ է բացատրում նաև պրոֆ. Լեոն Հայաստանի տնտեսական ֆորմացիաների խնդիրը[2]:

Այս ուղղության տիպիկ ռեակցիոն ներկայացուցիչը հանդիսանում է դաշնակցության կուսակցության գաղափարախոս Միք. Վարանդյանը: Նրա «Հայկական շարժման նախապատմությունը» (հրատ. Ժնև, 1912-1913) վերնագիրը կրող երկհատոր աշխատությունը կրոնական և ռասայական ֆակտորների կիրառման կլասիկ արտահայտությունն է:

Էմպիրիկ ուղղության հետևողական ներկայացուցիչ հանդիսանում է պրոֆ. Հակոբ Մանանդյանը, որի՝ հետխորհրդայնացման շրջանի վերջին պատմական ուսումնասիրությունների մեթոդոլոգիան կայանում է նրանում, որ նա տնտեսական ֆակտորի հիման վրա բացատրում է պատմական այս կամ այն երևույթները: Նրա այդ մեթոդոլոգիան ոչնչով չի տարբերվում մի շարք բուրժուական պատմաբանների մեթոդոլոգիայից, որոնք, ի շարս այլ ֆակտորների, ներկա կապիտալիստական հասարակարգում տնտեսականը ընդունում են որպես վճռական դեր կատարող ֆակտոր:

Երրորդ հիմնական ուղղությունը հանդիսանում է պսևդո-մարքսիստականը, որի ներկայացուցիչներն են Դ. Անանունը և Թ. Ավդալբեգյանը: Մարքսիստական տերմինոլոգիայով գործող այս հեղինակներից մասնավորաբար առաջինը, որը տվել է ռուսահայերի հասարակական շարժման պատմությունը՝ «հայության հավաքման» իր կոնցեպցիայով, վերջին հաշվով հայ բուրժուական պատմագրության հիմնական կոնցեպցիան այլ վարիանտով ներկայացնում է:

Ֆեոդալ-կալվածատիրական հարաբերություններում գոյություն ունեցող ներհակությունների սքողումը, դասակարգային պայքարի բուրժուական տեսակետով բացատրումը բխում են նրա «հայության հավաքման» հիմնական կոնցեպցիայից:

---

[1] **Б. Борьян**, Армения, международная дипломатия и СССР, ч. I и II, Москва-Ленинград, 1929.

[2] Պրոֆ. **Լեո**, Հայոց պատմության հարցերից, «Պետական համալսարանի գիտական տեղեկագիր», № 2-3, Երևան, 1927, էջ 398-438:

Եթե հայ բուրժուական պատմագրության առաջին երկու ուղղություններն իրենց աշխատություններով բացահայտորեն հայ բուրժուազիայի դասակարգային շահերի պաշտպանն են հանդիսանում, ապա վերջին այս ուղղությունը, գործածելով մարքսիստական տերմինոլոգիա և սքողված ձևով անցկացնելով բուրժուական պատմագրության հայացքները, հանդիսանում է ամենից ավելի վտանգավորը: Այս տեսակետից մարքսիստ-պատմաբանների հիմնական խնդիրն է քննադատության կրակը կենտրոնացնել պսևդո-մարքսիստական ուղղության ներկայացուցիչների վրա՝ առանց սակայն մոռանալու բուրժուական պատմագրության մյուս ներկայացուցիչներին, որոնց աշխատությունները դպրոցական դասագրքերի բովանդակությունն են կազմել, և բուրժուազիայի գաղափարախոս դաշնակցականները, խորացնելով այս ռեակցիոն տեսակետները, մթագնում են արտասահմանի հայ աշխատավորության դասակարգային գիտակցությունը՝ նախապատրաստելու նրան իմպերիալիստական պետությունների կողմից Խորհրդային Անդրկովկասի, ինչպես և Խորհրդային Հայաստանի դեմ նյութվող դավերին:

Բուրժուական պատմագրության ստեղծած արժեքներից որո՞նք կարող ենք օգտագործել, և ինչպիսի՞ նախապատրաստական աշխատանքներ պետք է տարվեն Հայաստանի պատմության անցյալի հիմնական պրոբլեմներն ուսումնասիրելու համար:

Բուրժուական պատմագրության բնագավառում կատարված այն աշխատանքները, որոնք վերաբերում են անցյալի պատմական աղբյուրների ստուգման, դասավորման, ինչպես և պատմական ուսումնասիրությունների համար մատերիալների հայթայթման, անտարակույս, պետք է օգտագործվեն Հայաստանի պատմության հիմնական պրոբլեմները մարքսիստական ուսումնասիրության ենթարկելու ժամանակ:

Նույնպես բանասիրական բնույթի մի շարք մոնոգրաֆիկ ուսումնասիրություններ, որոնք գերազանցորեն փաստերի ստուգման բնույթ են կրում, վերևում մեր հիշատակած ձևով պետք է զգուշությամբ և քննադատական մոտեցումով օգտագործվեն, ինչպես և մի շարք այլ մոնոգրաֆիկ ուսումնասիրությունների վերաբերյալ, որոնք նվիրված են առանձին խնդիրների լուսաբանության և պարզաբանման:

Նյութական կուլտուրայի մնացորդների շարքում Հայաստանի ֆեոդալական շրջանի արտադրական հարաբերություններն ուսումնասիրելու տեսակետից առաջնակարգ տեղ են գրավում վիմական այն բոլոր արձանագրությունները, որոնց մի բառը կամ մի խոսքը հաճախ Հայաստանի տնտեսական կյանքի պատմության մասին շատ ավելի մեծ տվյալներ են մատուցում, քան նույն ֆեոդալական շրջանի պատմիչների երկերը:

Նվազ կարևոր չեն նույնպես Հայաստանի ֆեոդալական շրջանի ուսումնասիրության համար ձեռագրերում ցրված հիշատակարանների ամփոփումն ու հրատարակությունը, հիշատակարաններ, որոնք ժամանակի

օրաթերթի բնույթն են կրում:

Ինչ վերաբերում է Հայաստանի և Անդրկովկասի պատմության այն ժամանակաշրջանին, երբ քայքայվող ֆեոդալիզմին հաջորդում և զարգանում է կապիտալիզմը, կարելի է ասել ոչ նվազ խոշոր նախապատրաստական աշխատանքներ կան կատարելու այս բնագավառում: Երևանի պետական արխիվը, ինչպես և Էջմիածնի կենտրոնական ձեռագրատան արխիվները դասավորելու, ցուցակագրելու ուղղությամբ ունենք բազմաթիվ աշխատանքներ: Այդ արխիվները շատ նորություններ կհայտնաբերեն XIX և XX դարերի պատմական հիմնական պրոբլեմները լուսաբանելու տեսակետից:

Անդրկովկասի կապիտալիզմի զարգացման պատմությունն ուսումնասիրելու տեսակետից վերին աստիճանի կարևոր աշխատանք է նույնպես անցյալում գոյություն ունեցող կապիտալիստական ձեռնարկությունների արխիվների հայտաբերումը և նրանց մանրամասն ուսումնասիրությունը:

Վերջապես Անդրկովկասի պրոլետարիատի պայքարի ուսումնասիրության տեսակետից ունենք խոշոր աշխատանք ոչ միայն վավերաթղթերի հավաքման, այլև պարբերական մամուլում ցրված մի շարք նյութերի հավաքման և ցուցակարգման աշխատանքները կատարելու տեսակետից:

Թվեցի միայն հիմնական աշխատանքները, որոնք անհրաժեշտ են նախապատրաստելու և նյութեր հայթայթելու ուսումնասիրողների համար:

Հայաստանի պատմության ուսումնասիրությունը, առանց Մերձավոր Արևելքի սոցիալ-քաղաքական դեպքերի հարակցության, դիտարկել հնարավոր չէ: Այս տեսակետից Հայաստանի և Անդրկովկասի պատմությունը ուսումնասիրողների համար կան բազմաթիվ դժվարություններ: Իսկ այդ դրժվարությունները կարելի է հաղթահարել, երբ կոլեկտիվ ուժերով, պլանային աշխատանքով կկատարվեն Խորհրդային Անդրկովկասի մաս կազմող առանձին հանրապետությունների պատմության հիմնական պրոբլեմների ուսումնասիրությունները, և դրա հիման վրա կպարզաբանվեն Անդրկովկասի պատմության հիմնական հարցերը:

Որո՞նք են Հայաստանի պատմության այն հիմնական խնդիրները, որոնք պետք է նյութ դառնան մեր հետագա ուսումնասիրություններին:

Մեր կարծիքով՝ այդ խնդիրները հետևյալներն են՝

1. Հայաստանի ֆեոդալիզմի և դասակարգային պայքարի ուսումնասիրությունը,

2. ֆեոդալիզմի քայքայման պրոցեսի և կապիտալիզմի առաջացման խնդիրը,

3. «ազգային պրոբլեմի» լուծման խնդիրը բուրժուազիայի և պրոլետարիատի կողմից,

4. դասակարգային պայքարը կապիտալիզմի շրջանում և պրոլետարիատի հաղթանակը:

ՎԵՐՋԻՆ ՏԱՄՆԱՄՅԱԿԻ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1.

Հետխորհրդայնացման շրջանում Հայաստանի պատմության շուրջը գրված աշխատությունները քննության առնել մարքս-լենինյան աշխարհայացքի, կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականության կիրառման տեսական և գործնական տեսակետից նշանակում է նախ քննել այն հարցը, թե ինչ չափով են նպաստել այդ աշխատություններն իդեոլոգիական ֆրոնտում մեր խնդիրներն ու դժվարությունները լուծելու և հաղթահարելու գործում:

Սույն հարցադրումն ինքնին պայմանավորում է ներկա մենագրության մեջ քննելի խնդիրները:

ա) Իդեոլոգիական տեսակետից ինչպիսի՞ ուղղություններ և թեքումներ գոյություն ունեն վերջին տասնամյակի հայ պատմագրության բնագավառում:

բ) Ունե՞նք նվաճումներ:

գ) Ինչպե՞ս է տարվել պայքարը հակամարքսիստական, բուրժուական-իդեալիստական և մենշևիկյան գաղափարախոսությունների դեմ:

դ) Որո՞նք են մեր աշխատանքի հիմնական բացերը:

Քննության առնել այս հարցերը մեր գործնական խնդիրների կապակցությամբ նշանակում է ո՛չ միայն մեր վերջին տասնամյակի կոնկրետ խնդիրների միասնությամբ վերցնել նրանց, այլև պատմականորեն քննության առնել այն խնդիրը, թե ինչ ժառանգություն ենք ստացել Հայաստանի պատմագրության բնագավառում:

«Հայ բուրժուական պատմության կոնցեպցիան և Հայաստանի պատմության հիմնական պրոբլեմները»[1] վերնագրով մեր մի ուսումնասիրության մեջ մանրամասն կանգ ենք առել մեր վերջին առաջադրած խնդրի վրա: Այդ մենագրության մեջ ցույց ենք տվել հայ բուրժուական պատմագրության կոնցեպցիայի առաջացումը հայ բուրժուազիայի սոցիալական պատվերների կատարման ուղղությամբ: Նշել ենք այն հիմնական ուղղությունները, որոնք գոյություն են ունեցել բուրժուական պատմագրության մեջ: Վերջում նշել ենք այն հիմնական պրոբլեմները, որոնք պետք է ուսումնասիրության առարկա դառնան՝ հակադրելու Հայաստանի պատմության բուրժուական կոնցեպցիայի մարքս-լենինյան կոնցեպցիան: Այստեղ կբավականանանք՝ համառոտակի նշելով այն հիմնական դրույթները, որ զարգացրել ենք հիշյալ ուսումնասիրության մեջ:

Անհրաժեշտ է ընդգծել, որ ստացված այդ ժառանգությունը գերազան-

[1] Տե՛ս «Նոր ուղի», գիրք 3-րդ, 1931:

ցորեն եղել է հայ բուրժուազիայի դասակարգային շահերի արտահայտիչը: Այդ պատմությունը, սկսած XVIII դարու երկրորդ կեսից Հնդկաստանի հայ առևտրական բուրժուազիայի կենտրոն Մադրասից, վերջացրած Ռուսաստանի հայ առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի կենտրոնավայրեր հանդիսացող Բաքու և Թիֆլիս քաղաքներով, մշակվել է գաղութահայ բուրժուազիայի նյութական հովանու տակ:

Բուրժուական այդ պատմագրության մշակման խոշորագույն ծառայությունը մատուցել են հայ կղերականության բոլոր հատվածները: Նշանակալից է, որ այդ կղերականության դավանական տարբերությունները տվյալ խնդրում ոչ մի արգելառիթ հանգամանք չեն հանդիսացել: Այս տեսակետից առաջնության պսակն ստացել են Վենետիկի և Վիեննայի զույգ Մխիթարյան միաբանությունները:

Եթե հայ բուրժուազիայի գաղափարախոսները, համաձայն այդ բուրժուազիայից ստացած սոցիալական պատվերների, շարադրել են Հայաստանի պատմության անցյալն ու ներկան, ապա Վենետիկի, Վիեննայի, Էջմիածնի, մասամբ Երուսաղեմի հայ կղերականությունն անընդհատ ծառայություն է մատուցել բուրժուական պատմագրության սիստեմատիկ մշակության՝ վանքերի փոշիների տակ հանգչող Հայաստանի ֆեոդալական շրջանի պատմիչների ձեռագիր աշխատությունները լույս աշխարհ ընծայելով:

Հայ բուրժուազիայի գաղափարախոսների և նույն բուրժուազիայից վարձատրվող հայ կղերականության միջև կատարվել է աշխատանքի բաժանում: Եվ աշխատանքի այս բաժանման ընթացքում ծանր, երկարատև ժամանակ պահանջող մասը վիճակվել է վանքերի անդորրության մեջ ապրող մենակյացներին: Բուրժուական պատմագրության ընդհանուր կոնցեպցիան ելակետ ունենալով՝ կատարվել են նյութերի հավաքում և գրվել առանձին մենագրություններ: Սրանով է բացատրվում այն վերին աստիճանի նշանակալից երևույթը, որ հայկական թագավորության անկումից հետո Հայաստանի պատմությունը գրեթե մոռացության է տրվել, չէ՞ որ այդ ժամանակաշրջանից հետո «հեռավոր ժամանակների հիշատակն ազգայնության թմրած զգացմունքներն արծարծելու նպատակով հող չէին ներկայացնում, և կամ հայոց պատմությունը XV դարուց հետո փոխադրվում էր գաղութները, քանի որ հայ առևտրական կապիտալի գաղութայնացումն է տեղի ունենում (ԲՀՏ-ում «Արմենիա» հոդվածը պրոֆ. Լեոյի խմբագրությամբ): Այս կոնցեպցիայի հարազատ արտահայտիչ են հանդիսացել բուրժուական պատմագրությանը նյութեր մատակարարող վանականները:

Հայաստանի հնագույն պատմության «փառավոր» շրջանների անցուդարձերը լուսաբանելու տեսակետից համեմատաբար հսկայական նյութ է կուտակվել: Հսկայական աշխատանք է կատարվել Հայաստանի ֆեոդալական շրջանի կլասիկ աղբյուրների հրատարակության, ձեռագիրների համե-

մատությամբ քննական ուսումնասիրությունների վրա: Այնինչ նոր և նորագույն շրջանների պատմության ուղղությամբ կատարված աշխատությունները, համեմատած պատմության հին շրջանի նյութերի կուտակման հետ, բացառություններ են կազմում:

Այս երևույթը բացատրվում է ոչ թե նրանով, որ հիշված ժամանակաշրջաններում չեն եղել համապատասխան նյութեր (հիշենք միայն ձեռագրերի հիշատակարանները, արձանագրությունները, եվրոպացի ճանապարհորդների ուղեգրությունները, արխիվային հարուստ նյութերը), այլ նրանով, որ վերջին դարաշրջանների պատմությունը բուրժուական պատմագրության համար շահեկանություն չի ներկայացրել:

Ստացված ժառանգությունն այս երկու հիմնական մասերին բաժանելուց հետո մեր վերաբերմունքը տարբեր է լինելու առանձին այս բաժանմունքներում մեզ հասած կուլտուրական արժեքների վերաբերյալ:

Նախքան այդ ժառանգությունից օգտվելու հարցը դնելը քննության առնենք բուրժուական գաղափարախոսների կողմից մշակված պատմությունը:

«Ազգը» և «ազգությունը» որպես մի բացարձակ հավերժական ներդաշնակ կատեգորիա «հիմնավորելուց», կրոնը՝ որպես ազգության բնորոշող հատկանիշ բացասելուց, ինչպես և «համազգային դատի» համար դասակարգային պայքարն ամենավնասակար տեսակետը համարելուց, բուրժուական պատմագրության համար անհրաժեշտ այս պատվանդաններն ստեղծվելուց հետո նրա գաղափարախոսները «խղճի մտոք» սկսել են «Հայոց պատմությունը» մշակել գաղութահայ բուրժուազիայի կողմից տրված սոցիալական հետևյալ պատվերների համաձայն՝ 1) պատմականորեն հիմնավորել հայ բուրժուազիայի՝ Արևմուտքի իմպերիալիստական պետությունների հանդեպ ունեցած դիրքավորումը, 2) պատմականորեն ժխտել Հայաստանում դասակարգերի և դասակարգային պայքարի գոյությունը՝ «համազգային դատի» մեջ լայն մասսաներ ընդգրկելու համար, 3) պատմական անցյալից «ազգային ազատագրական» պայքարի անհրաժեշտ հերոսների ստեղծումն ու նրանց անմահացումը, 4) պատմականորեն հավերժացնել հայ բուրժուազիայի ռուսական օրիենտացիան:

Ժառանգություն ստացված այդ պատմագրությունը, գերազանցորեն հայ բուրժուազիայի դասակարգային շահերից ելնելով, ըստ այնմ խոսեցրել է անցյալը, ելակետ է ունեցել հայ բուրժուազիայի քաղաքական նպատակներից բխող սկզբունքները: Այդ պատմագրությունը հայ բուրժուազիայի կուսակցության՝ դաշնակցության քաղաքական նպատակների իրագործման համար գաղափարական ամուր զենքերից մինն է հանդիսացել: Այս տեսակետից հայ բուրժուական, իդեալիստական պատմագրությունն իր մեթոդոլոգիայով, վերջին հաշվով, ֆեոդալական պատմագրության յուրահատուկ մի վարիանտն է հանդիսանում:

Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդացի, Եղիշե, Ղազար Փարպեցի, Մովսես Խորենացի՝ V-IX դարերի ֆեոդալական Հայաստանի այս կլասիկ պատմագիրները, ինչպես և հետագայի ֆեոդալական պատմիչները շարադրել են ժամանակակից, ինչպես և իրենց նախորդող դարերի պատմություններն իրենց ժամանակի և այն աշխարհիկ ու հոգևոր իշխանների պահանջների համաձայն, որոնց համար գրվել է այդ պատմությունը:

Ուստի մեզ հասած այս ժառանգությանը չենք կարող միատեսակ մի մոտեցում ունենալ: Ինչ վերաբերում է բուրժուական պատմագրության կողմից հավաքված նյութերին, անհրաժեշտ է նրանցից լավագույնները, քննադատական վերամշակման ենթարկելով դիալեկտիկական մատերիալիզմի հիմքի վրա, օգտագործել մարքսիստական պատմագրության համար:

Ֆեոդալական շրջանից մեզ հասած աղբյուրներին քննադատական մոտեցում ունեցել են նաև բուրժուական պատմաբանները, մասնավորաբար քննադատ-ֆիլոլոգները, սակայն, նրանց այդ քննադատական մոտեցումը ֆիլոլոգիայի սահմաններից դուրս չի եկել: Որքան այս, առավել ևս կարևոր է մեզ համար այդ պատմիչների աշխարհայացքը պայմանավորող (և այդ աշխարհայացքը Հայաստանի ֆեոդալիզմի այլ էտապներում տարբերվում է) սոցիալ-տնտեսական և քաղաքական ազդակների նկատառման խնդիրը: Ինչ վերաբերում է մենագրություններին, ապա նրանց օգտագործումը հասկանալի պատճառներով պահանջում է ավելի զգուշություն:

Եթե մեզ հասած ժառանգության այս մասը քննադատական մոտեցումով որպես մատերիալ ընդունում ենք օգտագործելի, ապա ժառանգության այն մասը, որը, Հայաստանի պատմությունը սիստեմատիզացիայի ենթարկած, հանդիսանում է հայ բուրժուազիայի բացորոշ սոցիալական պատվերը կատարողը, միանգամայն հասկանալի պատճառներով անպետք է մեզ համար: Մեզ հասնող այդ ժառանգության մեջ հիմնականում գոյություն ունի երկու կոնցեպցիա՝ դաշնակցական-բուրժուական և սպեցիֆիկ-մենշևիկյան:

Մեր պայքարը թե՛ մեկի և թե՛ մյուսի դեմ այժմ գլխավորապես պետք է տարվի գիտահետազոտական ուսումնասիրություններ կատարելու ուղիով: Անհրաժեշտ է գրել Հայաստանի պատմությունը մարքս-լենինյան աշխարհայացքով: Մանավանդ, երբ նկատի ունենանք, որ Հայաստանի խորհրդայնացումից հետո արտասահմանում բուրժուական այդ պատմագրությունը անցյալի իր զինանոցը նոր պատմական «ուսումնասիրություններով ճոխացնում է»:

2.

Ինչպե՞ս և ի՞նչ չափով է հակադրվել բուրժուական իդեալիստական և սպեցիֆիկ-մենշևիկյան պատմական կոնցեպցիաներին Հայաստանի պատ-

մության մարքս-լենինյան կոնցեպցիան:

Ինչպե՞ս և ի՞նչ չափով ենք կարողացել իրագործել մեր պայքարի մարտական պահանջներն ու խնդիրները:

Այս հարցերի առաջադրումը խնդիր է դնում մեր առաջ նախ ծանոթանալ վերջին տասնամյակի պատմական արտադրությունքներին և նշել այն հիմնական ուղղությունները, որոնք գոյություն ունեն հայ պատմագրության մեջ այս վերջին տասնամյակում:

Այս տեսակետից վերջին տասնամյակի հայ պատմագրության բնագավառում դասակարգային թշնամու կողմից լույս են տեսնում «պատմական» աշխատություններ, որոնք իրենց ռեակցիոն գաղափարախոսությամբ գերազանցում են իրենց նախորդները: Հայ բուրժուազիայի կուսակցության զարգացման արտահայտություն եղող այս երևույթը միանգամայն հասկանալի է:

Ինչպես ստորև կտեսնենք, դաշնակցական պատմագրությունն իր թեմատիկայով և պատմական անցքերի շարադրության իր պրյոմներով գերազանցորեն հետապնդում է քաղաքական նպատակ: Հայ բուրժուազիայի կուսակցության պատմագրության էությունը և նրա ռեակցիոն մեթոդոլոգիան պարզելու տեսակետից անհրաժեշտ է իմանալ դաշնակցության քաղաքական կուրսը վերջին տասնամյակում: Դաշնակցական պատմագրության տեսական պատվանդանի կազմավորման տեսակետից գրչի զուր մարզանքներ չեն Հովի. Քաջազնունու, Ռուբեն Դարբինյանի և Լևոն Շանթի գրչին պատկանող տեսական բնույթի այն հոդվածների շարքը, որոնց հիմնական նպատակն է ապացուցել, որ հասարակական երևույթների շարժիչ ուժը հանդիսանում են «ազգը» և «ազգային պայքարը»՝ այն ընդհանուր եզրակացությունն անելու համար, թե «համաշխարհային հեղափոխության մղիչ ուժն այսօր ազգն է և ոչ դասակարգը»:

Հայ բուրժուազիայի կուսակցության հիմնական բնորոշ դրույթի այս հիմնավորումը գերազանցորեն հետապնդել է քաղաքական նպատակ:

Այդ քաղաքական նպատակն է թե՛ ներքին և թե՛ արտաքին ֆրոնտում պայքարել Խորհրդային Հայաստանի դեմ: Եթե հայ բուրժուազիան եթե իր այդ պայքարի համար հենվում է մի կողմից իմպերիալիստական պետությունների վրա, ապա մյուս կողմից իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով աշխատում է դեպի իր այդ պայքարը գրավել «ազգի» բոլոր զավակներին: Այստեղից ահա նրա հիմնական քաղաքական կուրսը հանդիսանում է «ազգային միասնական ֆրոնտ» ստեղծելու լոզունգը: Ահա ինչո՛ւ ժխտվում է պատմության շարժիչ ուժ հանդիսացող դասակարգային պայքարը, և նա փոխարինվում է «ազգային պայքարով»: Ահա սրանից է բխում նրանց կատաղի պայքարը սոցիալիզմի և սոցիալիստական հեղափոխության դեմ, սրանով են բացատրվում տեսական այն մարզանքները,

որոնք կատարվում են հայ բուրժուազիայի գաղափարախոսների կողմից մասնավոր սեփականության՝ որպես հավերժական կատեգորիայի «հիմնավորման» ջանքերը, ինչպես և այն քրտնաջան աշխատանքը, որ թափում են ապացուցելու համար, թե պատմականորեն Հայաստանի իրականության մեջ գոյություն չեն ունեցել դասակարգեր և դասակարգային պայքար:

Եթե մի քիչ մոտիկից ենք ծանոթանում դաշնակցական «պատմաբանների» աշխատություններին՝ մասնավորաբար նվիրված Հայաստանի վերջին պատմական անցուդարձերին, ապա տեսնում ենք, թե ինչպես են մոտիկ անցյալի այդ իրադարձությունները խոսեցնում՝ համաձայն իրենց հետապնդած այդ հիմնական քաղաքական կուրսի: Հայ բուրժուական պատմագրության բացահայտ անկումն ապացուցող այդ «պատմական» աշխատությունները ոչ միայն ռեակցիոն են իրենց սուբյեկտիվ իդեալիստական գաղափարախոսությամբ, պրիմիտիվ՝ նկարագրական ձևով, այլև չունեն տարրական քննադատական մոտեցում դեպի օգտագործվող պատմական նյութերը:

Եթե մոտիկ անցյալի՝ ըստ իրենց «հիշողության» պատմողներին թողնում ենք և մոտենում երկրորդ խմբին, որը տալիս է դաշնակցության պատմության մենագրական մեմուարներ, ապա այստեղ խոսում է անցյալը ընթացիկ քաղաքականության կուրսի համար: Այդ վերագնահատումները հետապնդում են մի հիմնական խնդիր. մարտական կուսակցության պատմական «փառավոր անցյալի» ֆոնի վրա դաստիարակել ռեակցիոն ռոմանտիզմով վրեժխնդիր մի սերունդ, որ պատրաստ լինի իմպերիալիստական պետությունների թնդանոթի միս դառնալու:

Մենք գիտենք, որ արտասահմանում «համազգային ֆրոնտով» այնքան մտահոգված դաշնակցականներն ունեն իրենց քույր կուսակցությունները՝ հանձինս ռամկավարների և հնչակյանների: Հայտնի է և այն, որ այդ տարբեր երանգի կուսակցությունները միևնույն սոցիալական արմատն ունեն, որ նրանք հայ բուրժուազիայի կուսակցություններն են այլ վարիացիաներով:

Բայց ինչո՞ւմ է նրանց տարբերությունը. չէ՞ որ նրանք մամուլում, թե ժողովներում միմյանց դեմ «պայքար» են մղում՝ մնալով միշտ համերաշխ հիմնական հարցում՝ Խորհրդային Հայաստանի դեմ պայքարելու խնդրում: Գաղտնի՞ք է, որ այդ կուսակցությունները հետապնդում են միևնույն նպատակը՝ ունենալով միևնույն սոցիալական արմատը և հետապնդելով միևնույն դասակարգի շահերի իրագործումը: Ուրեմն որտե՞ղ է նրանց տարբերությունը:

Տարբերությունը հայ բուրժուազիայի այլերանգ կուսակցությունների միջև այն է, որ տարբեր են նրանք պլատֆորմաները, տարբեր են տակտիկական միջոցառումներն ու պրյոմները:

Ինչպես գործելակերպում, նույնպես և տնտեսական աշխատություն-

ների բնագավառում, ռամկավարներին պակասում է մարտական շեշտը: Տակտիկական տեսակետից նրանց ունեցած տարաձայնությունները դաշնակցությունից նրանց «պատմական» աշխատություններում արտահայտվում են միայն նրանք, որ դատապարտում են եղբայրակցին իր «հախուռն ու անմիտ գործողությունների», «անհեռատեսության» և, որ կարևորն է, «ազգի մեջ երկպառակություններ սերմանալու» խնդիրներում:

Եթե դաշնակցական «պատմաբանները» մոտիկ անցյալի հերոսների գովերգուն են հանդիսանում, ապա ռամկավարներն աշխատանքի բաժանման հիմունքներով, պատմության անցյալի պրպտումներով դուրս են բերում «ազգային» հերոսները՝ հետապնդելով միևնույն հիմնական նպատակը:

Ինչպես վերև նկատեցինք, հայ բուրժուական պատմագրությունը վերջին տասնամյակի իր արտադրույթներով ոչ թե վերարտադրություն է հանդիսանում անցյալի կոնցեպցիայի, այլև իր դասակարգի ռասիզացման պրոցեսով ավելի ռեակցիոն է դարձել: Եթե հայ բուրժուազիայի գաղափարախոսները, սկսած XIX դարու երկրորդ կեսից, ձևական պայքար են մղել հայ կղերականության դեմ՝ «ազգային» գործերում հեգեմոն դեր ստանձնելու համար, ապա վերջին տասնամյակում «սուրբ եղբայրակցություն» է կնքվել հայ եկեղեցու հետ: Հայ բուրժուազիայի ռասիզացումն ապացուցանող այս երևույթը ևս չէր կարող չանդրադառնալ դաշնակցական ռեակցիոն պատմագրության վրա և չդնել նրա վրա միստիցիզմի դրոշմը:

Երբ քննության ենք առնում դասակարգային թշնամու «պատմական» արտադրույթներն իրենց ամբողջությամբ, ապա բացահայտ թշնամի գաղափարախոսությունից ավելի վտանգավոր է այն խումբը, որը, հայտարարելով, թե պատմության շարժիչ ուժ ընդունում է դասակարգային պայքարը, իր ամբողջ աշխատություններով հետապնդում է ապացուցելու ճիշտ հակառակը. խոսքը վերաբերում է մենշևիկ-սպեցիֆիկյան և էսէռական խմբին:

Հայտարարում են, որ հասարակական երևույթները բացատրելիս իրենք առաջնորդվում են մարքսիստական պատմահայեցողությամբ: Սակայն, հայտարարություններից չէ որ դատում են անհատներին: Մենշևիկ-սպեցիֆիկների մեխանիստական հայացքները թե՛ իրենց պրակտիկայում, թե՛ տեսական աշխատություններում վաղուց նրանց դարձրել են ըստ էության հայ բուրժուազիայի գաղափարախոսները:

«Ռուսահայերի հասարակական զարգացումը» գործի հեղինակ Դ. Անանունը, որ իր աշխատության երկու հատորները հրատարակել է այս վերջին տասնամյակում, հանդիսանում է այս ուղղության տիպիկ ներկայացուցիչը: Երբ իր տեղում կանգ կառնենք նրա այդ աշխատության վրա, ցույց կտանք այն ներքին սերտ գաղափարական եղբայրակցությունը, որ գոյություն ունի նրա և դաշնակցական գաղափարախոսության միջև:

Սակայն, կրկին հարց է առաջանում, թե ո՞րն է այն տարբերությունը,

որ գոյություն ունի մենշևիկ-սպեցիֆիկների և հայ բուրժուազիայի գաղափարախոսների միջև. ունե՞ն սկզբունքային հիմնական տարբերություններ, թե՞ երկու ուղղությունն էլ իրենց առանձնապես ունեցած տարբերություններով ըստ էության հանդիսանում են միևնույն դատի ջատագովները:

Տարբերությունն այն է, որ «հայության հավաքականության» տեսարանը մարտական կուսակցության տակտիկային է միայն իր հարվածներն ուղղում. «ազգային դատի» լուծման տեսակետից ոչ մի տարաձայնություն, և հայ «ազգի» «սրտացավ» պատգամախոսը, ընթանալով ըստ էության հայ բուրժուազիայի գաղափարախոսների հարթած ճանապարհով (Հայաստանում պատմական անցյալում դասակարգերի բացասումը և նորագույն շրջանում դասակարգային պայքարին տալով սպեցիֆիկյան եռանդ), դժգոհում է դաշնակցական արկածախնդրություններից, որոնք «հայության հավաքականությանն» էին հարվածում:

Հայ բանվորության շահերից խոսող պատգամախոսը դավանում է մի հիմնական սկզբունք՝ Հայաստանի բանվորական շարժմանը տալ մի ուղղություն, որ «նա լինի իր սեփական գլխարկի տակ», այլ խոսքով՝ «միջազգայնություն՝ ազգաշինության ճանապարհով»:

Ինչպես դաշնակ-բուրժուական, նույնպես և մենշևիկ-սպեցիֆիկյան պատմագրությունը, տվել է Հայաստանի պատմության լրիվ ձևավորված տարբեր վարիացիայի ըստ էության միևնույն լուծումը: Հարց է առաջանում՝ ստացե՞լ են այս հակամարքսիստական-հակալենինյան կոնցեպցիաներն իրենց համապատասխան հակահարվածը Հայաստանի մարքսիստ պատմաբանների կողմից:

Սակայն, նախքան այս հարցին պատասխանելը, պետք է հիշատակել այս երկու հիմնական ուղղությունների արանքում ընկնող այն պատմաբանների խումբը, որոնք, լինելով անցյալում բուրժուական պատմագրության գաղափարախոսներ, աշխատում են շրջադարձ կատարել. ի՞նչ աստիճանի վրա է նրանց կատարած շրջադարձը. նպաստո՞ւմ են նրանք իրենց պատմական աշխատություններով իդեոլոգիական այս ֆրոնտում մղած մեր պայքարին կարողանո՞ւմ են պատմական իրենց այդ աշխատությունները կապակցել մեր ընթացիկ պայքարի հետ:

Հանրագումարի բերելով նրանց այդ աշխատությունները՝ գալիս ենք այն եզրակացության, որ այս խմբի առանձին անհատներին չի կարելի միատեսակ գնահատական տալ:

Ընդհանուր առմամբ մնալով հիմնականում իդեալիստական պատմահայեցողության վրա՝ բուրժուական հայացքների վերագնահատման իրենց փորձերում հանգում են էկլեկտիզմի: Չկարողանալով թոթափել հիմնականում անցյալի իրենց այդ բագաժը՝ նրանց փորձերը հաճախ տանում են դեպի էկլեկտիզմ:

Ինչ վերաբերում է մեր ընթացիկ պայքարին օժանդակելու հարցին այն չափով, ինչ չափով բուրժուական արժեքների բացասում են հանդիսանում որոշ աշխատություններ, այդքանով կարելի է միայն այդպիսիներն արժեքավորել: Հիմնականում մնում են հեռու քաղաքական այն ընթացիկ այրող հարցերից, որոնք ծառանում են մեր առաջ, մասնավորաբար դասակարգային պայքարի սրման ներկա էտապում: Այս հանգամանքը պայմանավորվում է ոչ թե նրանով, որ այդ պատմաբաններն իրենց թեմատիկայով շատ հեռու են կանգնած մեր ներկա ժամանակաշրջանից, այլ այն հիմնական դիրքավորումով, թե ինչ կապ կա ներկայի դասակարգային պայքարի և անցյալի պատմական իրադարձությունների միջև և, որ կարևորն է, ըստ նրանց կարծիքի՝ «գիտական» են այն ուսումնասիրությունները, որոնք վեր են կանգնած ընթացիկ դասակարգային պայքարի խնդիրներից: Վերջինը, ըստ նրանց կարծիքի, քաղաքականությանն է պատկանում:

Այս տեսակետից մնում էր մարքսիստ պատմաբաններին տանելու քաղաքական պայքարը վերև նշված բուրժուական մենշևիկյան աշխարհայեցողությունների դեմ: Սակայն, ինչպես ստորև կտեսնենք, այս բնագավառում ևս գոյություն ունեն մարքս-լենինյան դիրքերից մի շարք թեքումներ, որոնց հաղթահարումը նույնպես հրամայական խնդիր է ինչպես և հակառակորդ դասակարգի գաղափարախոսությունների ջախջախման հարցը:

Ինչո՞վ պետք է բացատրել այն թեքումները, որոնք գոյություն են ունեցել վերջին տասնամյակում մարքսիստական պատմագրության բնագավառում: Առաջին հերթին նրանով, որ մարքսիստ-պամաբանները չեն կարողացել վերջնականապես հաղթահարել դասակարգային թշնամու ազդեցությունը՝ ինչպես և իրենց մարքս-լենինյան տեսական պատրաստությամբ հետ մնալով մեր կյանքի զարգացումից: Ահա այն հիմնականը, որի վրա պետք է լուրջ ուշադրությունը դարձնել՝ մարտական պայքար տանելու երկու ֆրոնտի վրա, ջախջախելու Հայաստանի պատմության մասին գոյություն ունեցող բուրժուական մենշևիկյան կոնցեպցիաները և պայքարելու այն թեքումների դեմ, որոնք գոյություն ունեն մարքսիստական պատմագրության ֆրոնտում:

Այսպիսով՝ վերջին տասնամյակի հայ պատմագրության մեջ կարելի է նշել հետևյալ հիմնական ուղղությունները՝

ա) բուրժուական,

բ) մենշևիկյան,

գ) բուրժուական գաղափարախոսության հին արժեքները վերագնահատման ենթարկելու փորձ անողներ,

դ) մարքսիստական:

Անցնենք նշված ուղղությունների առանձին քննության:

3

Դաշնակցությունը Հայաստանի խորհրդայնացումից հետո իր քաղաքական նպատակների իրագործման համար գաղափարախոսական հիմքը պատրաստելու և փրկելու իր ամբողջ անցյալի գործունեությունը պատմություն դարձնելուց, ինչպես և պատմության դատաստանի առաջ արդարանալու տեսակետից լծվել է աշխատանքի: Պատմագրությունը «ազգի» անգործ գործիչների սիրելի զբաղմունքն է դարձել:

Նրանց այդ զբաղմունքը գերազանցորեն հետապնդում է «համազգային ճակատը» հարդարելու քաղաքական նպատակը:

Սակայն, իր այս քաղաքական նպատակն իրագործելու համար դաշնակցությունը գտնվում էր բավական աննպաստ պայմաններում, երբ դաշնակցության շարքերում կուսակցության անցյալի գործելակերպերը վերագնահատման ենթարկված, երբ դասակարգային պայքարից ջարդված դաշնակցական լիդերները և էքսմինիստրներն արտասահման ապաստանած՝ սեփական շարքերից դժգոհություններ էին լսում, երբ բուրժուական երկրներում դասակարգային հակամարտությունները սուր բնույթ էին ստացել, ինչպե՞ս «թերահավատներին գիտակցության» բերել՝ «ազգային միասնական ֆրոնտ» ստեղծելու համար: Եվ դաշնակցական տեսաբանների առաջին տեսական մարզանքներն սկսում են «ազգ ու հայրենիքի» տեսական հիմնավորումից»:

«Խնդիրը տեսական չէ կամ միայն տեսական չէ,- գրում է «Ի՞նչ է ազգությունը» հոդվածաշարքում Հովի. Քաջազնունին,- նա գերազանցորեն կենսական է (մանավանդ վտանգի ենթարկված ազգությունների համար) և ոչ մի օր չի կարող թողնվել հարցական նշանի տակ»[1]:

Ինչո՞ւ «գերազանցորեն կենսական է» և «ոչ մի օր չի կարող թողնվել հարցական նշանի տակ». դրան պատասխանում է «հայ քաղաքական մտքի դեգերումները» «վերլուծող» Ռ. Դարբինյանը:

«Ան (դասակարգային կռվի քարոզը) պղտորեց ազգային առողջ զգացումը, ան մթնացրեց, մոլորեցրեց ազգային պայծառ գիտակցությունը. ան տկարացրեց ազգային միության բնական կապը, ան ջլատեց, քայքայեց ազգային ուժերը հիմնական պայքարներով ու պառակտումներով, ան շեղեց ազգային ընդհանրության ուշադրությունը դեպի անհարազատ, անիրական ու ցնորական նպատակներ և անկարելի դարձուց մեր ազգի բոլոր տարրերու **համագործակցությունը** հայության ամենեն կենսական, ամենեն ստիպողական ու անհետաձգելի պահանջներուն համար»[2]:

---

[1] «Հայրենիք», № 7, 1923, էջ 83:

[2] Նույն տեղում, № 3, 1923, էջ 60:

«Ազգային միասնական ֆրոնտ» ստեղծելու տեսակետից դաշնակցական տեսաբաններին անհրաժեշտ էր նախ մաքրել մտքերն այն ամենից, որ «պղտորեց ազգային առողջ զգացումը», և այդ «գերազանցորեն կենսական էր», առանց որի դաշնակցությունը կկորցներ իր հեգեմոնի դերը նացիոնալիստական կուսակցություններում:

Սակայն դաշնակցության ռեակցիոն իդեալիզմը սրանով չի սահմանափակվում: Երեք տեսաբանները՝ Հովի. Քաջազնունի, Ռ. Դարբինյան և Լ. Շանթ, որոնք գրեթե միաժամանակ «ազգային ուժերը» մոլորումներից», «ջլատումներից», «քայքայումներից» փրկելու դերն են ստանձնում, պետք է նաև ստեղծեին այն կապերը, որոնք միացնեին «մոլորված ոչխարներին»:

Ազգի կապերն ըստ Հովի. Քաջազնունու՝

ա) մասամբ ցեղային են, բ) մասամբ պետական, գ) մասամբ տերիտորիալ, դ) մասամբ կրոնական, ե) մասամբ ու գլխավորապես լեզվային, զ) մասամբ քաղաքական և ամբողջովին ազգային պատմությունով, է) մասամբ կենցաղային»[1] :

Ինչո՞ւ այս «մասամբները», այլ կերպ՝ աշխարհի չորս ծայրերը ցրված հայությունն ինչպե՞ս կապել միմյանց:

Ռ. Դարբինյանը չի բավարարվում վերև հիշվածներով և ավելացնում է նաև այլ հատկանիշներ: Նրան կրկնում է Լ. Շանթը, սակայն, մի ինքնատիպ հավելումով.

«Իսկ կենդանական աշխարհի բոլոր տեսակներուն մեջ դժվար չէ հանդիպել ընտանիքի, որն ազգի նախնական ձևն է, ինչպես և շատ ավելի բարդ ազգային ձևերու խմբական կյանք վարող կենդանիներու մեջ»: Սրանով չեն վերջանում ազգի բիոլոգիական արմատները, շարունակենք.

«Անտառն ալ իր տեսակի ազգ մըն է իրեն հատուկ քաղաքակրթությամբ[2]: Հիացած ազգության սկզբնավորությունը մինչև բուսական աշխարհ փոխադրող Լ. Շանթի վրա՝ «դեգերումների» հեղինակը գրում է.

«Այն, ինչ որ այնքան զմայլելի պարզությամբ կարտահայտե Շանթ, եղած է և, իրոք, ՀՀ Դաշնակցության իսկական, թեև թղթի վրա չգրված, բայց գրեթե բոլոր դաշնակցականներու սրտին մեջ դրոշմված ծրագիրը»[3]:

Ինչո՞ւ է զմայլում հայ ռասիստների առաջին դիրքերում ընթացող Ռ. Դարբինյանը Շանթի այդ գոհարների վրա, շարունակենք.

«Ոչ միայն ժամանակակից կոմունիստական, այլ սոցիալիստական աշխարհայեցողության հիմնական թերությունն այն է, որ ան կբաժնե մարդկությունը դասակարգային գծով՝ բացարձակապես ժխտելով կամ անտես

[1] «Հայրենիք», № 11, 1923, էջ 79:

[2] Նույն տեղում, № 3, 1923, էջ 25:

[3] Նույն տեղում, № 7, 1923, էջ 205:

առնելով պատմության գլխավոր ստեղծագործ ազդակը, իսկապես օրգանական միավորը՝ ազգությունը»[1]:

«Համաշխարհային հեղափոխության մղիչ ուժն այսօր ազգն է և ոչ դասակարգը»[2]:

Ահա թե ինչու ազգության բիոլոգիական «արմատները հայտնաբերողին» միայն զմայլանքի խոսքեր ունի պատմության հասարակական զարգացման «գիտական տեսությունը» դարբնող Դարբինյանը. չէ՞ որ դաշնակցական տեսաբաններից Ճանթին է պարտական «իսկական օրգանական միավորի՝ ազգության, և «համաշխարհային հեղափոխության միակ շարժիչ ուժի» գիտական հիմնավորումը»:

Հայ բուժուազիայի դասակարգային շահերն անշեղ կիրառող դաշնակցական տեսաբանների ռասայականացումն ակնհայտ է՝ համեմատած նույն բուրժուազիայի XIX դարու տեսաբանների հետ, որոնք «համեստաբար» կրոնը՝ որպես ազգը բնորոշող հատկանիշ, բացասում էին, և հայ ազգի ծագումն ամենից շատ հասցնում էին Հայկ Նահապետը:

Եթե Ստ. Նազարյանցներն ու Գր. Արծրունիներ, XIX դարու 60-ական թվականներից սկսած, պայքար էին հայտարարել կղերականության և հայ եկեղեցուն, ոչ թե ըստ էության, այլ՝ եկեղեցին ծառայեցնելու հայ բուրժուազիայի դասակարգային շահերին, ապա մեր օրերի հայ բուրժուազիայի դաշնակցական տեսաբանները սուրբ եղբայրություն են կնքել հայ կղերականության և եկեղեցու հետ՝ պայքարելու պրոլետարիատի դեմ: Պրոլետարիատի դեմ իրենց պայքարն անշեղ տանելու, ինչպես և «ազգային միասնական ֆրոնտ» ստեղծելու տեսակետից անհրաժեշտ էր ոչ միայն կրոնը որպես ազգության հատկանիշ «տեսականորեն հիմնավորել», ոչ միայն գործնականում հայ գաղութներում կղերականության թև ու թիկունք լինելով կառուցել եկեղեցիներ՝ մասսաների գիտակցությունը իսկապես մթագնելու, ջլատելու նրանց դասակարգային պայքարը, այլև անհրաժեշտ էր տեսականորեն և պատմականորեն ապացուցել և հիմնավորել, որ հայ ժողովրդի «ազգագրական պայքարի համար ավելի մեծ «չարիք» չկա, «քան այն, որ բերավ իր հետ չմարսված ընկերավարությունն իր դասակարգային անտեղի կռվի քարոզով»[3]:

«Ազգը» մինչև բուսական աշխարհ անմահացում և եկեղեցու հետ սուրբ դաշնադրություն. ահա ռասիզացման հիմնական բնորոշ մոմենտները:

Եթե «դասակարգային անտեղի կռիվն է», որ «ազգային միասնական ֆրոնտ» ստեղծելու ճանապարհին ամենախոշոր խոչընդոտ է հանդիսա-

---

[1] «Հայրենիք», № 2, 1923, էջ 60:

[2] Նույն տեղում, էջ 62:

[3] Նույն տեղում, № 3, 1923, էջ 60:

նում, ապա միանգամայն հասկանալի է, որ հայ բուրժուազիայի իդեալիստները պատմության ներկա էտապում ոչ միայն տեսականորեն և պատմականորեն ժխտեն ամեն մի հասարակական կյանքում դասակարգային պայքարի գոյությունը, այլև գործնականում, ամեն կերպ եկեղեցիներ բանալով, հայ կղերականության հետ ձեռք ձեռքի տված, աշխատեն հայ գաղութների բանվորությունը լծելու «ազգային միասնական ֆրոնտի» կառքին:

Միանգամայն հասկանալի է այս:

Դասակարգային պայքարի տեսականորեն և պատմականորեն բացասումը դաշնակցական տեսաբանների և պատմաբանների աշխատությունների հիմնական խնդիրն է հանդիսանում: Մենք վերև ծանոթացանք այդ իդեալիստներից առաջինի հետ. արժեր ծանրանալ մի քիչ հարցի վրա, քանի որ դաշնակցական պատմագրության սոցիալ-տնտեսական կոնցեպցիայի հիմքը կազմում է այս էական խնդիրը:

Քանի որ դասակարգային պայքարը մարդկության հասարակական զարգացման պրոցեսում պայմանավորվում է արտադրության միջոցների մասնավոր սեփականությամբ, ուստի անհրաժեշտ էր դաշնակցական տեսաբաններին հավերժացնել պատմական այդ կատեգորիան և դրանով «ապացուցել» մարքսիզմի «սնանկությունը»:

«Մասնավոր սեփականությունը,- հայտարարում է նույն Դարբինյանը,- **գյուղացու բնազդն է** (ընդգծումը մերն է-Հ. Զ.), և չկա ուժ, որ կարենա խեղդել անոր մեջ այդ բնազդն ու իդեալը»[1]:

Եվ կամ Լ. Շանթը բացատրում է հեղափոխությունները. «…Բառերը հաճախ արյունոտ հեղափոխություններ կբերեն, և հեղափոխություններ կան, որ պարզ բառափոխություններ են…»[2]:

Դասակարգային պայքարը համաշխարհային պատմության մասշտաբով բացասելու դերը վիճակվում է Բենհուրին, որն առանձին հոդվածներով հանդես է գալիս՝ «վերլուծելու» հայ հասարակության մեջ գոյություն ունեցող «կուսակցությունները և անոնց ուղին»: Հոդվածի հիմնական նպատակը կազմում է նույն «համազգային ճակատը» հարդարելու խնդիրը:

«Այսօր փոքրիկ Պելճիքան կամ Հոլանդիան…, ազգովին մեկ «ես» ունենալով, կտիրապետեն 80 միլիոննոց ափրիկյան, ասիական գաղութներու»:

Եվ կամ՝

«Մրջյունը կամ մեղուն, հին Սպարտան ու Աթենքը, հին Հռոմն ու երբեմն մենք՝ հայերս, ըստ Եղիշե պատմագրի, նշանաբան ունեցած ենք՝ «ամենքը մեկին և մեկն ամենքի համար», և այսպիսով՝ հաղթած ու ապրած ենք կյանքի պայքարի մեջ»[3]:

---

[1] «Հայրենիք», № 7, 1923, էջ 208:

[2] Նույն տեղում, № 3, 1923, էջ 17:

[3] Նույն տեղում, № 3, 1928, էջ 92-95:

Ինչպես տեսնում ենք, «գոյության պայքարի» այդ ջատագովը չի բավարարվում մարդկային հասարակության օրինակի վրա բացասել դասակարգային պայքարը, այլ օգնության է կանչում նաև մրջյուններին ու մեղուներին:

Սակայն, հոդվածի շարունակության ընթացքում խելքի է ընկում, որ խոսում է քաղաքական մի շարք տարբեր կուսակցությունների մասին: Ինչպե՞ս վերացնել աղաղակող հակասությունը. լսենք դասակարգերից սոսկացող դաշնակցական տեսաբանի չքնաղ հիմնավորումը.

«Հասարակությունը, ազգը մեկ ամբողջություն, մեկ նպատակակետ է, բայց մեկ երես չունի, բազմակողմանի երեսներ ունի… Եվ որովհետև բազմաթիվ են ժողովրդի մը ամբողջականության կողմերը, բազմաթիվ ալ պիտի ըլլա անոր վիճակով մտահոգվող կուսակցություններու թիվը»:

Թեև Ռ. Դարբինյանը բացասում է հայ ժողովրդի շերտավորումը, որ «մեր ժողովուրդը կապրեր և մինչև այսօր ալ կապրի նահապետական պայմաններու մեջ…» («Հայրենիք», № 3, 1923, էջ 59), սակայն Ս. Վրացյանը նրա հետ համաձայն չէ, և նրա՝ դաշնակցական «Անկախ Հայաստանի» պատմության նվիրած աշխատության մեջ մենք հանդիպում ենք դասակարգերի:

Սույն աշխատության մեջ հեղինակը, անշուշտ, կարիք չուներ «Անկախ Հայաստանում» կատարված պատմական իրադարձությունները նկարագրելիս տալու շարժիչ ուժերը և երևան հանելու դասակարգային փոխհարաբերությունները, չէ՞ որ «պատմության գլխավոր ստեղծագործող ազդակը» ազգությունն է հանդիսանում: Այնուամենայնիվ, Հայաստանի նորագույն շրջանի անցուդարձերը նկարագրող այդ «պատմաբանը» դեմ է առնում խնդիրների, որտեղ չէր կարելի իր տեսակետը չհայտնել Հայաստանում գտնվող դասակարգերի մասին: Ի՞նչ է դուրս գալիս հեքիաթի ձևով պատմված այդ աշխատությունից. ըստ Ս. Վրացյանի՝ Հայաստանում գոյություն ունեն հետևյալ դասակարգերը՝

ա) հայ ժողովուրդ և մտավորականություն,

բ) հայ բուրժուազիա,

գ) ռուսահայեր և թուրքահայեր[1]:

Գոմինդան կուսակցության տեսաբաններից Գան-Հայ-Գուանը մոտավորապես նման մի սահմանում է տվել Չինաստանի այժմյան դասակարգային շերտավորման մասին[2]: Այստեղ զարմանալու ոչինչ չկա. ազգայնականներն աշխարհի բոլոր երկրամասերում նույն ակունքից են ջուր խմում:

Դասակարգային շերտավորման պրոցեսի բացասումը հարկավոր էր

---

[1] **Սիմ. Վրացյան**, Հայաստանի Հանրապետությունը. նախ տպագրված «Հայրենիք» ամսագրում և ապա առանձին լույս տեսած:

[2] Дискуссия об азиатском способе производства, Ленинград, 1931, стр. 14.

պատմականորեն ուժեղացնել: Կատարվում է աշխատանքի բաժանում: Այս ծանր գործը վիճակվում է ցարական Ռուսաստանի պրոֆեսոր Նիկ. Ադոնցին, որը, Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Փարիզում ապաստանած, հյուրընկալվում է դաշնակցական «Հայրենիք» ամսագրում որպես հեղինակավոր «գիտնական», պատմաբան:

Նա չէր կարող ժխտել Հայաստանի պատմական զարգացման ընթացքում ֆեոդալիզմի գոյությունը (չէ՞ որ իր մագիստրոսական շարադրությունն այդ հարցին է նվիրված), սակայն «մեղմացուցիչ դեպք հանցանաց» միշտ կարելի է ճարել և շարադրել պատմությունն այնպես, որ թեև դասակարգեր եղել են, բայց նրանք վառված են եղել «ազգի և հայրենիքի» փրկության հրով:

«…Այրուձին պատմական իմաստով համազոր է արևմուտքի միջնադարյան chevalier-ի և կազմում է հայ **ասպետությունը**: Այրուձին միակ մշտական զինվորական ուժն էր ընդդեմ արտաքին թշնամիների և հայ աշխատավոր շինականության նեցուկը:

«Այս կոչումով հայ նախարարները կարող են քավել իրենց մեղքերը, եթե ժամանակակից պահանջկոտ մտքերը հակամետ են նրանց կեղեքող դաս անվանել»[1]:

Նույն այդ ֆեոդալների մասին գրում է. «Հների աչքում նախարարները բարերար պահապաններ էին», և կամ «Հայրենիքի և ազգի սերը մի բնական զգացմունք է, որ բխում է մարդու բնությունից»:

Հայ բուրժուազիայի պահանջների համաձայն այսպես է շարադրվում նոր էտապի պատմագրությունը:

Նիկ. Ադոնցի մոտ դասակարգային շերտավորումը պայմանավորվում է ոչ թե արտադրական գույքային հարաբերություններով, այլ ժողովրդի մի խավ իր ընդունակություններով վերցնում է որոշ պարտավորություններ ֆեոդալիզմի շրջանում, օրինակ՝ երկրի և ժողովրդի պաշտպանությունը, և դրա փոխարեն վայելում են առանձնաշնորհումներ իբրև փոխարինություն իրենց ստանձնած պարտավորությունների: Ըստ էության, սուբյեկտիվ իդեալիստներն ու մենշևիկները, ինչպես կտեսնենք, չեն տարբերվում միմյանցից՝ ընդունելով կամ բացասելով դասակարգերի գոյությունը պատմական Հայաստանում:

Դաշնակցության սոցիալ-տնտեսական պատմական կոնցեպցիայի տեսական պատվանդանը լրացնում է Լ. Շանթն իր «Ժողովուրդ և մտավորականություն» հոդվածով, որտեղ քննության է առնվում «քաղաքակրթության զարգացման պրոցեսը»: Ըստ Շանթի՝ հասարակական ֆորմացիաների պարբերացման հիմքը կազմում է տիրող իշխանության ձևը. ըստ որում՝ նշում է՝ 1) ցեղական, 2) իշխանական, 3) ավատական, 4) բացարձակ միապետական, 5) հանրապետական հասարակարգերը[2]:

---

[1] «Հայրենիք», № 4, 1927, էջ 69, 71:

[2] Նույն տեղում, № 3, 1924:

Ըստ Լ. Շանթի՝ անհատն ու նրա մտածողության զարգացման աստիճանն են, որ հիմք են հանդիսանում հասարակական ֆորմացիաների պարբերացման:

«Վնասակար ընկերավարության» պատմական աշխարհայեցողությունն այս կերպ «տեսականորեն լիկվիդացիայի ենթարկելուց հետո» մնում էր էքսմինիստրներին և դաշնակցական գործիչներին ձեռնարկելու իրենց «ստեղծագործական» աշխատանքներին:

Եթե դասակարգային պայքարի բացասումը հետապնդում էր անմիջականորեն «ազգային միասնական ֆրոնտ» ստեղծելու հիմնական նպատակը, ապա նվազ դեր չէր վերապահված նրան Հայաստանի մոտ անցյալի պատմական իրադարձությունները դաշնակցական իդեոլոգիայի տեսանկյունով պարզաբանելու ուղղությամբ: Դաժան իրականությունը դաշնակցական պատմաբանի առաջ դրել էր «ազգային պրոբլեմի» պրոլետարիատի կողմից մի անգամ ընդմիշտ լուծված փաստը: Խորհրդային իշխանության դեմ պայքարելու համար անհրաժեշտ էր գաղափարական նախապատրաստում:

Այս կրկնակի տեսակետներից սկսվում է դաշնակցական էքսմինիստրների և գործիչների տենդագին աշխատանքը՝ Հայաստանի պատմագրությունը «նոր աշխատություններով ճոխացնելու»:

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումը և Զանգեզուրի լեռներից դաշնակցական խմբապետների վերջին մնացորդների արտաքսումը, ինչպես և Թուրքիայում դաշնակցության վարած մի քառորդ դարի քաղաքականությունն իր ահավոր հետևանքներով առաջացրեց դաշնակցական կուսակցության շարքերում «հին արժեքների վերագնահատման շրջանը»: Հարկավոր էր և՛ սեփական շարքերում, և՛ առհասարակ ուժերի դասալքման այդ մոմենտում «գոտեպնդվել» ու «արդարանալ» պատմության դատաստանի առաջ, վառ պահել վրեժի զգացումը, կատարել ուժերի մոբիլիզացիա, շարքերի նոր դասավորում՝ պայքարելու թե՛ արտաքին և թե՛ ներքին ֆրոնտում Խորհրդային Հայաստանի դեմ:

Դաշնակցությունը քաղաքական իր այդ նպատակն իրագործելու համար իր շարքերում աշխատանքի բաժանման հիման վրա սկսում է աշխատանքը:

Դաշնակցական կառավարության անդամները, մոռանալով, որ իրենց փախուստից առաջ չէին կարողացել ամբողջովին ոչնչացնել դաշնակցական կառավարության արխիվը, ուժ են տալիս իրենց մշուշապատ հիշողություններին և սկսում են նորագույն անցյալը պատմել: Ս. Վրացյանը, թե՛ Ալ. Խատիսյանը և թե՛ Կարո Սասունին լինեն այդ «պատմաբանները», նրանք շարադրում են մոտավոր անցյալի պատմական իրադարձությունները «միացյալ և անկախ Հայաստանի Հանրապետության» ստեղծման և գործունեության կապակցությամբ: Որքան սերտ ունեն Ղազար Փարպեցիների,

Եղիշեների՝ ֆեոդալական շրջանի այդ պատմիչների հետ, միայն այն հիմնական տարբերությամբ, որ եթե Փարպեցիներն ու Եղիշեները ֆեոդալների իշխանության գովքն ու նրանց վերահաստատումն էին փառաբանում, Վրացյաններն ու Խատիսյանները հայ բուրժուազիայի մարտական կուսակցության սոցիալական պատվերների իրագործողն են հանդիսանում: Չէ՞ որ, ըստ նույն Ս. Վրացյանի վկայության, դաշնակցության 10-րդ ընդհանուր ժողովի խնդիրներից ամենահիմնականը հանդիսացել է «Միացյալ և անկախ Հայաստանի» հարցը («Դրոշակ», էջ 3-7): Չէ՞ որ ձայնակցում է Ս. Վրացյանին Ռ. Դարբինյանը. «Հայությունն իր զենքը վար չպիտի դնե մինչև այն երջանիկ օրը, երբ վերջապես մենք ալ ուրիշ բախտավոր ազգերու նման կստանանք մեր հայրենիքը՝ ազատ և անկախ» («Հայրենիք», № 3, 1923, էջ 4):

Իսկ այս նպատակն իրագործելու համար հարկավոր է տատանվող շարքերը գոտեպնդել, աշխատել «համազգային միասնական ֆրոնտը» ամրացնել, «անցյալի արժեքների վերագնահատման» քաղաքական կրիտիկ մոմենտում դուրս բերել դաշնակցությունը պատմության առաջ ակտիվ բալանսով:

Եթե Վրացյաններն ու Խատիսյաններն առանց պատմական փաստաթղթերի աշխատել են իրենց հասկացած եղանակով ամրացնել «համազգային միասնական ֆրոնտը» և մեղմացուցիչ հանգամանքներով «սովի և մահվան երկրի» դրությունը ըստ հնարավորին վառ գույներով ներկայացնել, ապա ի՞նչ անել պետական արխիվի դաշնակցական կառավարության փաստաթղթերը և լրագրական մի շարք նյութերը, որոնք ապացուցում են դաշնակցական Հայաստանի աշխատավոր գյուղացիության և բանվորության անտանելի դրությունը: Ի՞նչ անել այն դոկումենտները, որոնք նույն այդ Վրացյանների, Խատիսյանների և ընկ. ստորագրություններն են կրում, և հարվածում են այդ «պատմական» աշխատություններին մահացու կերպով:

Այլ ուղիով նույն նպատակին ձգտող աշխատություններ են դաշնակցական հայտնի և անհայտ գործիչների «հիշողությունների» շարանը: Այս բնագավառում առաջնությունը պատկանում է Ռուբեն փաշային: Այդ հիշողությունները, նյութեր հանդիսանալով դաշնակցության պատմության մասին, անմիջական քաղաքական նպատակ ունեն դաշնակցության անցյալի գործունեության օրինակի վրա իմպերիալիստական պետությունների կողմից Խորհրդային Միության դեմ պատրաստվող ինտերվենցիոն քաղաքականության «մարտիկներ» նախապատրաստել, լինի այդ այսօր «քրդական հարցի» կապակցությամբ, թե վաղը միջազգային քաղաքական պայմանների այլ դասավորությամբ՝ անգլո-ֆրանսական իմպերիալիզմի թնդանոթի միս հայթայթելու համար:

Իսկ այդ «մարտիկների» միակ նշանաբանի՝ «մահ կամ ազատություն» լոզունգի յուրատեսակ իդեալիստական տեսական հիմնավորումը տալիս է Լ. Շանթը:

«…Ամեն զրկանք ու հալածանք, ջարդ ու տարագրություն, ամեն, ամեն վայրագություն իմաստ ունի ժողովրդի մը համար և՛ կրելու, և՛ տոկալու, քանի որ այդ բոլոր տանջանքներն ան կկրե ձգտելուն համար, կռվելուն համար, ունենալու համար իր լրիվ անհատականությունը, հասնելու համար իր անկախությանը»[1]:

Դաշնակցության այժմյան քաղաքականությամբ գաղութահայ աշխատավորության համար պատրաստվող նորանոր զրկանքների, հալածանքների, ջարդերի, տարագրության և ամեն տեսակի վայրագության, Շանթի տեսական հիմնավորմամբ, իմպերիալիստներին մատուցված այս ծառայությունը կարո՞ղ է անվարձահատույց մնալ:

Եթե մոտ անցյալի «հերոսամարտի» հեղինակները, «պատմաբաններ» դարձած, թարմ հիշողություններով «զրկանքների» ու «հալածանքների» ենթարկված «հերոսների» ոգեկոչումով մեր օրերի կյանքի պայքարի շեփորն են հնչեցնում, ապա վերև հիշված պրոֆ. Նիկ. Ադոնցի վիճակվել է պատմության մոռացված արխիվներից նոր «աստվածությանց որոնումներ» կատարել:

«Արդարև ի՞նչ է աստվածությունը,- հարց է տալիս պրոֆեսորը և պատասխանում,- եթե ոչ մարդության վեհաշունչ երազների հայտնություն, և ի՞նչ է պատմությունը (sic!), եթե ոչ նորանոր աստվածությանց որոնումներ, նորանոր բարձունքի տենչանք»[2]:

Հավատարիմ պատմության տված իր ռեակցիոն հիմնավորման՝ պրոֆ. Նիկ. Ադոնցը պատմության մութ խորշերից լույս աշխարհ է հանում «նորանոր աստվածներ ու աստվածուհիներ»՝ «լուսավորելու» մեր օրերի հայ բուրժուազիայի քաղաքական ճանապարհը և մատնացույց անելու «նորանոր բարձունքներ»:

Եվ ահա «Հայրենիք» ամսագրի ընթերցողի առաջ պարզվում է «Բագրատունյաց փառքը», որի պատմական օրինակի վրա պրոֆ. Ադոնցը հայ բուրժուազիայի ախորժակներն է գրգռում:

«Բագրատունյաց փորձը՝ ընդգրկել համայն Կովկասը, ինչպես մի մեծ ընտանիք, մի քաղաքական կենակցության շաղկապի մեջ, ներկայացնում է մեզ որպես մի խիզախում՝ գաղափարական լայնությամբ անօրինակ միջնադարյան նեղսիրտ մթնոլորտում, և կազմում է այս նշանավոր տոհմի պատմական փառքը»[3]:

Պատմական «հերոսների» և «աստվածությունների» երկրպագուն դաշնակցական իդեոլոգիայի արդի կուրսի՝ սուբյեկտիվ իդեալիզմի միստիցիզմի կարկառուն ներկայացուցիչն է.

---

[1] «Հայրենիք», № 3, 1923, էջ 22:

[2] Նույն տեղում, № 12, 1926, էջ 38:

[3] Նույն տեղում, № 6, 1929, էջ 37:

«…Միտքը պատմության գործոն ուժերից մեծագույնն է,- շարունակում է,- որ ձևակերպում է, մարդկայնացնում անիմաստ մտքերը[1]:

«Քաղաքական հոսանքները հին Հայաստանում» հոդվածաշարքում «աստվածության» փառքին են բարձրանում Մամիկոնյան և Բագրատունի նախարարությունները:

Տեսեք այդ «հերոսներից» մեկի՝ Սմբատ Բագրատունու «աստվածային», գերբնական ուժը.

«…Հուսահատ իշխանը բռունցքով ուշաթափ է անում արջին, եղջյուրներից կախված՝ տապալում է կատաղի ցուլին և ճարպիկ ոստյունով վերելակում է առյուծը և կոկորդը սեղմելով՝ խեղդում…»:

Չե՞ք հավատում. պրոֆեսորը ձեզ ցույց կարող է տալ բյուզանդական բնագիրը, և իրավամբ այդ աղբյուրներում թխված բոլոր առասպելներին պետք է հավատալ՝ շովինիստական սնապարծությամբ հայտարարելու.

«Ահա այս վիթխարի սերունդն է, որ պիտի մի օր ժառանգեր հայոց թագը»[2]:

«Հին Հայաստանի քաղաքական հոսանքների» ուսումնասիրությունը գերազանցորեն հանդիսանում է խրախույս և նոր պայքարների հավատք է ներշնչում հայ բուրժուազիայի մարտական կուսակցության.

«Մամիկոնյան կտրիճներն իրոք մի-մի հերոսներ էին, աննման ծաղիկներ՝ սփռված մեր անցյալի ապառաժոտում և պատվաբեր ամեն մի պատմության: Այդ շքնաղ ծաղիկներն արևակեզ եղան»:

«Այլ էին Բագրատունիների նկարագիրը, նրանց խառնվածքը և ընտրած ուղին: Ոչ պակաս քաջ և հայրենասեր Բագրատունի իշխանը միևնույն ժամանակ շրջանկատ է և գործնական»: «Պատմաբանը» շարունակում է խորհրդածել և անցյալը խոսեցնել ներկայի համար:

«…Պատասխանատու գործիչը ստիպված է հաճախ հրաժարիլ շահատականություններից և կյանքի դառնությունները պահել իր ներսը, համբերության երկայնաքարի տակ մանրել, ոչնչացնել ծանր ապրումներն առանց որևէ արտաքին պայթոցի»[3]:

«Աստվածությանց» ձգտող պատմաբանի երեխայական միամտություն է հայ բուրժուազիայի մարտական կուսակցության «պատասխանատու գործիչներին» այս ձևի բարոյախոսական քարոզներ կարդալ…»:

«Պատմության գործոն ուժերից մեծագույնի՝ մտքի» ուժով հայտնաբերում է Արտավան Արշակունիին և Վարդան Մամիկոնյանին (VI դար)՝ քաղաքական ավանտյուրիստներին, և հայտարարում.

---

[1] «Հայրենիք», № 5, 1927, էջ 87:

[2] Նույն տեղում, № 5, 1927, էջ 87:

[3] Նույն տեղում, էջ 8791:

«Հայ անունն արդեն դուրս էր եկել իր նեղ ձորերից և կիրճերից և թնդում էր մեծ պետության (խոսքը Բյուզանդական կայսրության մասին է - Հ. Զ.) ծավալուն տարածության մեջ»:

«Ավարայրի հերոս Կարմիր Վարդանի», Մամիկոնյան Կուրդիկ իշխանի, Բագրատոնի Սմբատի իշխանի և բյուզանդական գահի վրա բազմող Մամիկոնյան իշխանուհու նկարագիրներով «աստվածությանց» հետամուտ պրոֆեսորը, իսկապես, ավելի քան լրիվ կատարում է «անիմաստ մթերքի ձևակերպողի և մարդկայնացնողի» միսիան՝ միստիցիզմի և իդեալիզմի կրկնակի աշխարհայացքով:

Պատմագրության բնագավառում դեպի ֆեոդալական միստիցիզմի այս դիմադարձը դաշնակցության կողմից իսկևիսկ համապատասխանում է իր հարազատ դասակարգի ռասիզացման պրոցեսին:

Եթե անցյալի «հերոսների» ստեղծումն ապագա «գոյամարտերի» նախադրյալ է, ապա անհրաժեշտ է հայ «ազգի» այդ զավակներին ներշնչել և պատմականորեն համոզել, որ այն «ազգը», որին նրանք պատկանում են, արժանի է ազատագրվելու որպես «Արևելքում քաղաքակրթության ջահակիր», և կամ, ինչպես պատկերավոր կերպով ասում է պրոֆ. Նիկ. Անդոնցը.

«Հայությունը մի գետ է, որի ջրերը ոռոգում են ոչ միայն իր հարազատ հողն ու անդաստանը, այլև թավալում են հուժկու ալիքները դեպի ընդհանուր քաղաքակրթության օվկիանը» («Հայրենիք», № 11, 1929, էջ 109):

Հայ բուրժուազիայի պատմաբանների տրորված ճանապարհներով ընթացող պրոֆ. Նիկ. Ադոնցին ընկերակցում են Գեորգ Մեսրոպ և Մ. Մինասյան: Առաջինը, Գլատսթոնի «Հայուն ծառայելը, քաղաքակրթության ծառայել է» խոսքը նշանաբան վերցնելով, իր «Հայերն Արևելքի մեջ» հոդվածում «ապացուցում է», որ հայերը պատմականորեն կոչում ունեն իրագործելու այդ նշանաբանը[1]:

Շատ ավելի «բեղուն է» Մ. Մինասյանը. բավական է հիշատակել միայն նրան զբաղեցնող խնդիրների թեմատիկան՝ «Բնիկ նախնիք հայոց Եգիպտոսի մեջ», «Հայերու նախնիք Եվրոպայի մեջ», «Հայ ազգը համաշխարհային կուլտուրայի տարածիչ», «Հայաստան և հին աշխարհի քաղաքակրթությունը»[2]: Պատմականորեն հայ «ազգին» վերապահված դերը հիմնավորելուց հետո մնում էր հայ բուրժուազիայի մարտական կուսակցության, նայած միջազգային քաղաքական դեպքերի դասավորման, պատմական էքսկուրսիաներ կատարել այլ բնագավառներում:

Նրանից կարևորն օրիենտացիայի բնագավառն էր:

Դաշնակցության հիմնական կորիզի (Անդրկովկասյան հայ բուրժուազիան), ինչպես և նրա մի այլ շերտի՝ անգլիական, ֆրանսական և ամերիկա-

[1] «Հայրենիք», № 7, 1923:

[2] Նույն տեղում, № № 4, 5, 6, 7, 8, 1925:

կան իմպերիալիզմի հետ սերտորեն կապված արտասահմանյան հայ բուրժուազիայի համար օրիենտացիայի խնդիրը պարզ էր՝ ընդդեմ Խորհրդային Միության: Սակայն իրենց այս պայքարի ընթացքում զինակիցների հարցի շուրջ տարաձայնություններ էին լինում: Մի շարք պատմական ուսումնասիրություններ նվիրվում են այս խնդիրներին: Եվ կամ, երբ քրդական շարժումն է սկսվում Թուրքիայում անգլո-ֆրանսական իմպերալիզմի անմիջական ղեկավարությամբ, Կ. Սասունին՝ որպես «պատմաբան», հրապարակ է իջնում՝ պատմականորեն ապացուցելու «հայ ազգի» (իմա՛ դաշնակցականների) և քուրդ ժողովրդի շահերի նույնությունը:

Եվ կամ վերջին ժամին «խելքի եկած» Արտաշես Աբեղյաններն ու Սիմոն Վրացյանները պատմական էքսկուրսիաներ են կատարում՝ ապացուցելու Անդրկովկասի ժողովուրդների (իմա՛ մենշևիկների, դաշնակցականների ու մուսավաթների) շահերի նույնությունը:

Պատմության բնագավառում կատարված տեսական մարզանքները եթե հետապնդում են մթագնել արտասահմանի հայ բանվորության դասակարգային գիտակցությունը, ապա այդ տեսության հիման վրա գրված պատմությունը դաշնակցության այսօրվա քաղաքականության Խորհրդային Հայաստանի դեմ մղած պայքարի պրակտիկ նպատակն է հետապնդում՝ մոբիլիզացիայի ենթարկելով բոլոր ուժերը «համազգայնորեն» պայքարելու և նախապատրաստելու մտքերը, այդ պայքարի շուրջը համախմբելու «ազգի» բոլոր զավակներին:

Եթե հայ բուրժուազիայի մարտական կուսակցությունը առավելապես քաղաքական այրող և այժմեական հարցերի շուրջը հյուսում է իր «պատմագրական» աշխատությունները, ապա մյուս թևը՝ ռամկավար կուսակցությունը, իր պատմագրության համար թեմատիկան վերցնում է մեծ մասամբ Հայաստանի պատմության անցյալ դարաշրջաններից և Աղաթոն բեյի վերին ֆինանսական հովանավորությամբ նպատակ է դրել խորացնելու և պատմականորեն հիմնավորելու բուրժուական պատմագրության կոնցեպցիան: Սրան զուգընթաց անտես չեն առնվում մոտիկ անցյալի իրադարձությունները, և զբաղվում են վերջին տասնամյակների հայ իրականության մեջ գործող կուսակցությունների վարքագծի պատմական վերագնահատման փորձերով: Այս ուղղությամբ մի փորձ է Մանուկ Ճիզմեճյանի աշխատությունը («Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցությանց (1890-1925)», Ֆրեզնո, 1930): Հեղինակի նպատակն է երևան հանել դաշնակցության և հնչակյան կուսակցությունների «անհեթեթ սխալները, անոնց միահեծան կամայականությունը, պատեհապաշտությունը, խուժանավարությունը և արկածախնդրությունը»՝ հակադրելու այդ բոլորին ռամկավար կուսակցության «խոհեմ» և «աչալուրջ» քաղաքականությունը: Ինչպես տեսնում ենք, ռամկավարներն սկզբունքային ոչ մի տարաձայնություն չունեն իրենց քույր

կուսակցությունների հետապնդած քաղաքական նպատակների շուրջը. հարցը վերաբերում է տակտիկային և այն պրյոմներին, որոնք գործադրվում են՝ իրագործելու առաջադրված միասնական նպատակը:

Բուրժուական պատմագրության բացահայտ անկումն ապացուցող այս և նման աշխատությունները, որոնք իրենց ռեակցիոն գաղափարախոսությամբ առաջին տողերից իսկ իրենց մատնում են, մեր իդեոլոգիական պայքարի ֆրոնտում ավելի վտանգավոր է հանդիսանում դասակարգային թշնամու գաղափարախոսության մի այլ վարիանտը, որի վրա արժեր ավելի մանրամասն կանգ առնել:

Խոսքը վերաբերում է մենշևիկ-սպեցիֆիկյան պատմագրության, որի հայտնի ներկայացուցիչները գտնվում են Խորհրդային Հայաստանում:

4.

Վերոհիշյալ ուղղության հիմնական ներկայացուցիչները մեզ մոտ հանդիսանում են Դավիթ Անանունը և Թ. Ավդալբեգյանը: Դ. Անանունը իր «Ռուսահայերի հասարակական զարգացումը» եռահատոր աշխատությամբ տվել է XIX և XX դարերի՝ ռուսահայերի հասարակական զարգացման պատմության մենշևիկյան լրիվ կոնցեպցիան[1]:

Թ. Ավդալբեգյանի պատմական աշխատությունները կրում են մենագրությունների բնույթ և շոշափում են Հայաստանի ֆեոդալիզմի ու գաղութահայ առևտրական կապիտալի շրջանի խնդիրները:

Թ. Ավդալբեգյանի մենագրությունների թեմատիկայում առաջացած փոփոխությունը նշանակալից է այն տեսակետից, որ եթե նա Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո համեմատաբար Հայաստանի պատմության վերջին շրջանների պրոբլեմներն է քննության նյութ դարձնում, ապա իդեոլոգիական ֆրոնտում պայքարի խորացման և սրման զուգընթաց, նրա թեմատիկայն գնում է դեպի Հայաստանի պատմության հեռավոր անցյալները[2]: Դեպի հետ կատարված այս էմիգրացիան իր էությամբ

---

[1] **Դ. Անանուն**, Ռուսահայերի հասարակական զարգացումը, հատ. 1, Բաքու, 1912, հատ. 2, Էջմիածին, 1922, հատ. 3, Վենետիկ, 1926:
Բացի իր այս աշխատությունից՝ Դ. Անանունն իր բացահայտ մենշևիկյան տեսակետներն անց է կացրել իր մի քանի մանր աշխատություններում, որոնք հյուրընկալվել են Խորհրդային Հայաստանում հրատարակված պարբերականներում: «Բարձր դասը Հայաստանում և Աղրբեջանում», տե՛ս «Բանբեր Հայաստանի գիտ. ինստիտուտի», գիրք Ա և Բ, 1921-22 թվերին, Էջմիածին, նույն տեղում՝ «Գրախոսություն Աշոտ Հովհաննիսյանի՝ «Հայ-ռուս օրիենտացիայի ծագումը գրքի շուրջ», «Վարդան Գոլոշյան և իր շրջանը», «Նորք», № 4, 1924:

[2] «Ստորև տալիս ենք Թ. Ավդալբերգյանի պատմական աշխատությունները՝ «Հայ-

վերին աստիճանի բնորոշ է և հասկանալի:

Մեր մի այլ աշխատության մեջ ցույց ենք տվել, որ Դ. Անանունն իր աշխատությունների մեջ զարգացրել է այն հիմնական տեսակետը, թե Հայաստանում դասակարգային հակամարտություններ գոյություն չեն ունեցել, որ «…մելիքին ամեն տեղ ընդունում էին՝ ոտքի կանգնելով, նա բոլորին էլ «երեխայք» էր անվանում, անգամ ծերերին: Նա՝ որպես մելիք, ամենի հայրն էր համարվում: Մելիքը մասնակից էր ժողովրդի ուրախությանն ու տխրությանը» («Ռուսահայերի հասարարական զարգացումը 19-րդ դարում», հատ. 1, էջ 43): XVIII դարի մելիքների և հայ գյուղացիության դասակարգային հարաբերությունների մասին այս կոնցեպցիան Դ. Անանունի սույն աշխատության մեջ հետևողական կերպով զարգանում է հետագա շրջանների հայ հասարակության մեջ գոյություն ունեցող դասակարգերի վերաբերմամբ:

Նրա աշխատության այդ հիմնական, կենտրոնական հարցը հանդիսանում է «հայության հավաքման» խնդիրը, և իր հիմնական նպատակի իրագործումը հնարավոր կլիներ, անշուշտ, միայն այն ժամանակ, եթե այդ հայության ներսում գոյություն ունեցող դասակարգային հակամարտությունները վերանային: Առաջին հատորում այդ կատարվում է մելիքների և գյուղացիության վերաբերմամբ: Դ. Անանունի դասակարգային հակամարտությունների բացասումը բխում է իր այն կոնցեպցիայից, ըստ որում՝ «մի կողմից բարձր դասը գոյանում է հասարակական աշխատանքի բաժանման ճանապարհով, երբ երկրագործ ժողովուրդն իր ապահովության համար գլուխ և առաջնորդ էր որոնում համայնքների մեջ, ինքն էր ստեղծում իր համար իշխանավոր, մյուս կողմից պետությունն էր, որ ծառայողներին առանձնաշնորհումներ պարգևելով՝ ստվարացնում էր բարձր դասի թիվը»[1]: Իր ապատնտեսական այս հիմնավորումը դասակարգերի առաջացման մասին հիմնականում պայմանավորվում է Հայաստանի տնտեսական կյանքի

ազատագրական շարժման երկու հոսանք 18-րդ դարի վերջում», «Նորք», 1928, № 1:
«Բահրան և մյուլքը 17-րդ և 18-րդ դարերում», «Նորք», 1923, № 2, «Երկրագործական հավելյալ արդյունքի նորման 17-րդ և 18-րդ դարերում և 19-րդ դարի սկիզբներում, «Նորք», № 3, 1923, «Հայ-անդրանիկ պարբերականը», «Վերելք», № 3, 2:
«Ֆրանսական մեծ հեղափոխությունը և ժամանակակից հայեր», «Նորք», № 4, 1924, «Անհայտ աղանդավորներ հայոց մեջ 16-րդ-17-րդ դարերում», Վիեննա, 1926, «Հաս, սակ ու բաժ», «Տեղեկագիր գիտ. և արվ. ինստիտուտի», № 1, 1926, «Մի գաղտնիք հայ վիմական արձանագրությունների մեջ», «Տեղեկ. գիտ. և արվ. ինստիտուտի», № 2, 1927.
«Հայ շինականի և գեղջուհու աշխատավարձը 5-րդ դարում», նույն տեղում, № 3, 1928,
«Շահամիր Շահամիրյանը և հնդկահայոց ինքնավարությունը 18-րդ դարում», նույն տեղում, № 4, 1929, «Արսեն Թոխմախյան», Երևան, 1929:

[1] **Դ. Անանուն**, Բարձր դասը Հայաստանում և Ադրբեջանում, «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», № 1-2, էջ 3: Դ. Անանունն իր այս հոդվածում պաշտպանում է այն հիմնական միտքը, թե Անդրկովկասում ագրարային հարցը լուծվեց 1918 թ. Անդրկովկասյան կոմիսարիատի կողմից:

զարգացման մասին հեղինակի ունեցած ուրույն հայեցակետով, որը բխում է մի ընդհանուր կոնցեպցիայից, այն է՝ Հայաստանի պատմության զարգացման սպեցիֆիկ դրությունից:

Դ. Անանունի այդ սպեցիֆիկյան հայացքները ոչ թե հատուկ են միայն Անդրկովկասի բանվորական շարժումներին, այլ, ինչպես տեսնում ենք, հեղինակն իր այս տեսությամբ հիմնավորում է պատմականորեն և արտադրում մի ընդհանուր կոնցեպցիա:

Այս խնդրին մենք առիթ կունենանք անդրադառնալ, երբ քննության առնենք Թ. Ավդալբեգյանի հայացքը Հայաստանի տնտեսական ֆորմացիայի մասին:

Դ. Անանունը հայ կղերականության՝ որպես շահագործող դասի գոյությունը ոչ միայն ժխտում է, այլև հայտարարում է. «Չպետք է առանձին թանձրացյալ կղերականություն որոնել հայ հասարակական այս կամ այն գործչի կամ նույնիսկ ճանաչված հոսանքի արտահայտությունների մեջ» (հատ. 2, էջ 143):

Ինչ վերաբերում է հայ բուրժուազիային, «մարքսիստ» պատմաբանը նրանից դժգոհ է նրա համար միայն, որ այդ բուրժուազիան իր առատաձեռնությամբ ազգի ապագա բարօրության մասին հոգածու չի եղել, և, ինչպես քննադատներից մեկը դիտել է, «մարքսիստ» պատմաբանի մոտ «շարունակ իշխում է Գամառ Քաթիպայի հայացքը՝ «թե փողեդ շահ չունի Հայաստան, թքել եմ քու ալ, փողիդ ալ վրան» (տե՛ս «Նորք», № 1, 1922, էջ 262):

Դասակարգային հակասությունների սքողումը, պայմանավորված հեղինակին «պաշարող հիմնական խնդրով՝ ճանաչել հայության հավաքական դեմքը», կարմիր թելի նման անցնում է նրա աշխատության 3-րդ հատորում: Քննության է առնվում վերջին երկու տասնամյակի սոցիալական հեղափոխությունների այդ տենդագին ժամանակաշրջանը, և դուք մոտ 700 էջից բաղկացած գրքի ընթերցումից հետո հասկանում եք գաղափարական այն սերտ միասնությունը, որ գոյություն ունի դաշնակցական և սպեցիֆիկյան կոնցեպցիաների միջև:

XX դարի առաջին քսանամյակում՝ Ռուսաստանի բանվոր դասակարգի պայքարների և վերջնական հաղթանակի այդ շրջանում, երբ Անդրկովկասը նմանապես բռնկվել էր նույն հրով, «Հայության հավաքականության» տեսաբանի առաջ լուրջ սոցիալական խնդիրներ էին ծառանում, խնդիրներ, որոնք պահանջում էին իրենց լուծումը, «հայության հավաքականության» փարոսում վառվում է երկրորդ լապտերը՝ «դեպի միջազգայնություն ազգաշինության կամուրջով», որը լուսավորում է հեղինակի պրակտիկ ուղին և որպես պատմաբանի՝ հանդիսանում է նրա միակ չափանիշը վերագնահատման ենթարկելու դաշնակցության գործունեությունը, հայ-թուրքական կռիվները, իմպերիալիստական պատերազմը, Ռուսաստանի 1905 և 1917 թթ.

հեղափոխությունները: «Որովհետև հարցի ծանրությունը ոչ թե նրա մեջ էր, որ պետք է հրաժարվել ազգությունից, այլ որ ճնշվածներին ու զրկվածներին բարձրացնել մինչև ազգությունը և նրանց տեր կանգնեցնել տիրող ու առաջնակարգ դասակարգերի ժառանգության» (էջ 407):

Դաշնակցության «ազգաշինության ծրագրին հիմնովին համաձայն լինելով՝ դժգոհում է, որ «ռազմամոլությունն ու ինքնագոհությունը կուրացրել էին նրա միտքը… Այստեղ էր թաքնված դաշնակցության հանցանքը, հայ ժողովրդի ինքնագործունեության ճնշման մեջ» (էջ 227): Դաշնակցության գործելակերպից այս հանցանքին ավելանում է և երկրորդը, որ նա «չէր նպաստում»…, որ շահագործվողները դուրս գան ցեղային խխունջից և դասակարգին հակադրեն դասակարգ» (էջ 228), նա ճգնում է ապացուցել, որ դաշնակցությունը չի եղել սոցիալիստական կուսակցություն (էջ 286-306), և պատմաբանը խորհրդատուի դեր է ստանձնում դասակարգայնորեն դաստիարակելու «մանր բուրժուական» դաշնակցության կուսակցությունը (տե՛ս Դաշնակցության սոցիալիստական էության մասին, էջ 101-106), որպեսզի իր ցույց տված ճանապարհով դիմի «միջնազգայնություն ազգաշինության ուղիով»:

Իմպերիալիստական պատերազմի ընթացքում տեղի ունեցած խոշոր դժբախտությունների դերակատարն իրավամբ նշելով դաշնակցությունը՝ 1923 թվին գրված այս աշխատության մեջ «հայկական ազգաշինության» խնդրին նվիրված գլուխը վերջացնում է հետևյալ տողերով.

«Հայությունը 1914 թ. այս կողմը մի ուրախ օր չտեսավ, որ դատ ու դատաստանի նստե նրա կործանարար առաջնորդների հետ» (էջ 596):

Սրանով չի վերջանում այս սիրաբանությունը.

«…Դաշնակցականների ու մեծամասնականների խառնվածքը (!) միևնույն նյութերից էր (՞), և նրանք կարող էին համաձայնության եզրեր շոշափել և իրար գործակցել…» (էջ 661):

«Հայության հավաքականության» փարոսում վառած ազգաշինության» լապտերն ինչպես է դավաճանում «մարքսիստ» պատմաբանին…

«Սակայն «ազգաշինության սեղանին «ողջակիզվում են» և հայ մարքսիստները, «ազգային հարց գործնականը, շարժումն ու պահանջները, կանխեց նրա գաղափարական մշակումը… Մեր առաջին մարքսիստները դեմ հանդիման եկան մի լայն շարժման: …Եվ որովհետև իրանք անցյալի ժլխտում էին, ժառանգ չկանգնեցին և անցյալից բխող շարժմանը՝ համարելով այն կղերա-բուրժուական մտքի արգասիք. կռվի տաք վայրկյանին սա հասկանալի վերաբերմունք էր, բայց ոչ օրինակելի: Երբ առաջին օրերի հապճեպ որոշումը դառնում է հարատև գործունեության ուղեցույց, այն արդեն սայթաքում էր» (408): Մարքսիստները «անկարող եղան ազատել ժողովուրդը վերջիններիս (դաշնակցականներից) հպատակությունից…: Դաշնակցու-

թյունը նստած էր ժողովրդի ազգային զգացումների ու անձև սպասումների խանձարուրի մոտ, և նա ուժեղ էր: Մարքսիստները նախ և առաջ նրան պիտի հրեին այդ դիրքից և ազգային մանկաբարձության հոգսն իրանց ուսերին առնեին: Այդ չարի և վերջին ողնաշարը ջարդած մի ժողովուրդ դարձան: Նրանց ազգաշինությունը կերպարանք չուներ, իսկ դաշնակցության գործելակերպի հաջող ու սուր քննադատությունը շրջանակ չէր դառնում, որ հայկական մեղուն իր մեղրահացը հյուսեր» (էջ 411-412):

«Մարքսիստ» Դ. Անանունը պատմության այս «դատավճռի» առաջ անպարտ է. այս բացատրվում է մի ընդարձակ ծանոթությամբ, որտեղ իր և ընկ. Ստ. Շահումյանի միջև «ազգային հարցի» շուրջը բացված բանակռիվն է նկարագրում և հայտնում, որ ընդհանուր լեզու չգտան ազգային հարցի լուծման մեջ ու շարունակում.

«Մնաց, որ հեղափոխությունը, այսինքն՝ գործնականը լուծի այն, և մարքսիստները գնան շարվելու պատրաստի սեղանի շուրջը: Իսկ թե գործնականը, առանց լուսաստղի, առանց գաղափարական ուղեցույցի, հպատակվելով կույր տարերքին միայն, ինչ տանջանքներով է լուծում խնդիրը, այդ մասին մենք լռում ենք» (էջ 442):

Լռությունը խզվում է 694 էջի վրա, սակայն դրան մենք կանդրադառնանք: Նույն տեսանկյունով քննության են առնվում և վերագնահատման ենթարկվում հայ-թուրքական կռիվները՝ 1905-1907 և 1917 թթ. հեղափոխությունները: Հայ-թուրքական կռիվների բալանսը, ըստ հեղինակի, այսպես է փակվում:

«Ֆիզիկական ազատագրության ավելացավ ոգու ազատության բարեմասնությունը: Հայն ու թուրքը հավասարաժեք դարձան: …Մեր ժողովրդի ազատագրության պատվանդանն ու վերնաշենքը ներդաշնակ վիճակ ստացան» (էջ 263):

Ուրեմն հաշվեկշիռը, ըստ «մարքսիստ» պատմաբանի, փակվում է ակտիվով. մնում է շնորհակալություն հայտնել ազգային կրքերի հրահրման հիման վրա բանվորական շարժումների ջլատիչ հանդիսացող ռեակցիոն ուժերին: Եվ կամ 1905-1907 թթ. հեղափոխության մասին.

«Այն (1905-1907 թթ. շարժումը) առաջին հերթին ազգաշինության պայքար էր, և յուրաքանչյուր դասակարգ ամբողջության հանդեպ պիտի հրապարակ գար իր նույն ծրագրով» (էջ 408):

Այսպես է «ջանացել ընդգրկել մեր պատմության իմաստը», շարադրել է այնպես, ինչպես գործել է, իր պատկերի նման:

Սակայն, նախքան փակելն անհրաժեշտ է կանգ առնել «պատգամախոս» Դ. Անանունի վրա, որը «հին կտակն» է հանձնում հայ բանվորության, և որտեղ շոշափվում են Հոկտեմբերյան հեղափոխության խնդիրները:

«Հայությունը՝ նոր Պենելոպա, իր ազատարար Ոդիսևսը գտավ ռուսա-

կան հեղափոխության մեջ»: Նրան է վստահեցվում «հայության փլեկը» (առաջաբան): Սակայն, ռուսական հեղափոխությունը, ցարական Ռուսաստանի տիրապետության տակ ճնշված ժողովուրդներին վերադարձնելով «հափշտակված ազատությունը», «գործում էր միաժամանակ և մի խոշոր սխալ». նոր ազատագրված Հայաստանը կարիք ուներ «եղբայրական և հարազատ խնամակալության»: «Ռուսական հեղափոխությունը հռչակելով ազատության սկզբունքը՝ ներքին թուլությունից անկարող եղավ խոսքը գործ դարձնել» (էջ 690-691):

Եզոպոսյան այս լեզուն ոչնչով չի տարբերվում դաշնակցականների արած «մեղադրանքներից»: Նա հիմնավորում է նույն եղանակով դաշնակցականների «արդարացումը»: «Հրաժարվելով հեղափոխության պարգևից՝ մենք, միևնույնն է, չպիտի կաշկանդեինք Թուրքիայի բռնարար բազուկը: Ուստի և սխալ է ոմանց այն կարծիքը, թե կարելի է Ռուսաստանից քաղաքականորեն չանջատվել և ռուսական պետականությունն այսպիսով պատվար շինել Թուրքիայի դեմ» (էջ 691):

«Հին պատգամը» իրագործվում է բանվոր դասակարգի կողմից, սակայն կարող է ինքնուրացում տեղի ունենալ, ուստի նոր դարու պատգամախոսն ազդարարում է.

«Հայկական ինքնուրացման դեմ պիտի ծառանա բանվորական Ռուսաստանը, քանի նա ընթանում է սոցիալիզմի դրոշի տակ և կամենում է ազատագրել իրան թե՛ բռնարար շրջանի ժառանգությունից և թե՛ մեր օրերի գայթակղությունից» (էջ 693):

Ահա լռության գաղտնիքը, որ հայտնվում էր 412 էջի վրա:

«Դարերի խորհրդի» իրականացման ճանապարհին ոգորում են, ըստ պատմաբանի, հայության բոլոր դասակարգերը՝ սկսած կղերից, վերջացած... հայ բանվորը. այս հավասարության նշանը, պայմանավորված հեղինակի «հայության հավաքականության» հիմնական կոնցեպցիայով, նույնացնում է դասակարգային ներհակ ուժերին և եղբայրացումն է առաջադրում նրանց հետապնդած տարբեր նպատակների:

«Հայությունը» և «հայ ժողովուրդը» հասավ իր նպատակին, մնում է, որ հայ բանվորությունը «հին պատգամի ճանապարհին ընկած բոլոր նահատակներին անդորրություն մաղթե…»:

«Ազգաշինություն» է կատարվում. ահա՛ որտեղ է հասնում մենշևիկ-սեպեցիֆիկ Դ. Անանունն իր կոնցեպցիայով:

Եթե դաշնակցական պատմագրությունը՝ որպես ակնհայտնի թշնամի դասակարգի աշխարհայեցողություն, իր առաջին նախադասությամբ իսկ իր էությունն է հայտնում, ապա մենշևիկյան պատմագրությունը, գործածելով մարքսիստական ֆրազոլոգիա, «խոսելով հայ բանվորի դասակարգային շահերի մասին» և «պաշտպան կանգնելով նրան», դառնում է շատ ավելի

վտանգավոր իր քողարկված ձևով: Զուր չէր, որ դաշնակցական քննադատներից մեծ մասը «ողջունում» է Դ. Անանունի երրորդ հատորը՝ որպես «ազգաշինական նպատակների սկզբունքային ջատագովություն»:

«Ի բերանէ քումմէ դատեսցես»:

Եթե Դ. անանունի շեշտված նացիոնալիզմը մարքսիստական շղարշը շատ թափանցիկ է դարձնում, և նրա մենշևիկյան դեմքը ծածկել անզոր է լինում, ապա Թ. Ավդալբեգյանը թե՛ իր ընտրած թեմատիկայով և թե՛ իր գործադրած պրյոմներով ավելի վարպետ է, քան իր ընկերը: XIX դարի հարցերի վերաբերյալ նրա հայացքներն արտացոլվել են նրա գրական-քննադատական աշխատություններում: Այս հարցը թողնելով մարքսիստ գրականագետներին՝ մենք այստեղ կզբաղվենք նրա պատմական աշխատություններով: Թ. Ավդալբեկյանի ուսումնասիրությունները մենագրություններ են և այս տեսակետից առատ նյութ են պարունակում: Մյուս կողմից ուսումնասիրությունների մեծագույն մասը դնում է պրոբլեմներ և պատմական փաստերի հնարավորության սահմաններում աշխատում է այդ պրոբլեմները լուծել: Խնդիրը կայանում է գլխավորաբար նրա կողմից լուծում ստացած և ձևակերպված եզրակացություններին:

Հայաստանի տնտեսական ֆորմացիաների մասին ուրույն տեսակետ ունի Թ. Ավդալբեգյանը, որը, մեր կարծիքով, մի կողմից պայմանավորում է Հայաստանի պատմության զարգացման ընթացքում դասակարգային պայքարի նկատմամբ իր ուրույն հայեցակետը, մյուս կողմից տեսականորեն հիմնավորում է անանունյան հայեցակետը Հայաստանի դասակարգերի առաջացման մասին:

«Հայ շինականի և գեղջուկուհու աշխատավարձը հինգերորդ դարում» վերնագիրը կրող իր մի ուսումնասիրությունն սկսում է այսպես.

«Այս մենագրությունը… վերաբերում է Հայաստանի տնտեսական զարգացման պատմության գլխավոր բաժիններից մեկին՝ աշխատավարձի պատմությանը, և շոշափում է մեր երկրի տնտեսական զարգացման պատմության այն շրջանի աշխատավարձի հարցը, **որը կոչում ենք «ասիական տնտեսության» շրջան** (ընդգծ. մերն է- Հ. Զ.):

Ուրեմն, ըստ հեղինակի, Հայաստանում V դարում գոյություն է ունեցել «ասիական տնտեսության» շրջան: Նա, առանց հիմնավորելու իր այս տեսակետը, սույն պարբերության ավելացրած ծանոթությամբ ընթերցողին մատնանիշ է անում իր 1926 թ. հրատարակած երկու աշխատությունները՝ «Հաս, սակ ու բաժ» և «Կարլ Մարքսի տնտեսական զարգացման թեորիան» (Բ. տպագրություն):

Մատնանշված այդ հրատարակություններում մենք ավելի հիմնավորում չենք գտնում, և դեռևս 1926 թ. հեղինակն այդ խնդիրն առաջադրում է հարցադրման կարգով Հայաստանի տնտեսական ֆորմացիաների վերա-

բերյալ (հմմտ. «Կարլ Մարքսի տնտեսական զարգացման թեորիան», էջ 43-45): Ըստ երևույթին, հեղինակի երկու տարվա պրպտումները հիմքեր են տվել հայտարարելու, որ Հայաստանում V դարում գոյություն ուներ «ասիական տնտեսության» առանձին մի շրջան: Մենք ասացինք, որ Դ. Անանունի՝ Հայաստանում դասակարգերի առաջացման տեսակետը պայմանավորվում է Հայաստանի պատմական պրոցեսի զարգացման մասին ունեցած ընդհանուր կոնցեպցիայով: Թ. Ավդալբեգյանի՝ Հայաստանի V դարում «ասիական տնտեսության» շրջանի չհիմնավորված դրույթը գալիս է տեսականորեն հիմնավորելու անանունյան այն տեսակետը, ըստ որի՝ «երկրագործ ժողովուրդն իր ապահովության համար գլուխ և առաջնորդ էր որոնում, համայնքների մեջ ինքն էր ստեղծում իր համար իշխանավոր, մյուս կողմից պետությունն էր, որ ծառայողներին առանձնաշնորհումներ պարգևելով՝ ստվարացնում էր բարձր դասի թիվը»:

Ինչպես հայտնի է, «ասիական տնտեսության» շուրջը վերջերս խորհրդային մամուլում տեղի ունեցած վիճաբանությունը ցույց տվեց, որ ասիական յուրահատուկ տնտեսական ֆորմացիա պաշտպանողները հանգել են դասակարգերից վեր կանգնող պետության տեսության[1]:

Եթե նրանց մոտ «արտադրության կազմակերպիչները»՝ մոգերը, դասակարգի լիտերատներն են հանդիսանում, ապա «համայնքների գյուղացիությունը», ըստ Անանունի, ինքն է ստեղծում իր իշխանավորը: Մեկն արտադրի, և մյուսը պաշտպանի: Հիմնականում դասակարգի առաջացման այս կոնցեպցիան պայմանավորում է Հայաստանում դասակարգային ներհակությունների բացասման մենշևիկյան տեսությունը: Պատահական չէ, որ Թ. Ավդալբեգյանն իր աշխատություններից մեկի մեջ («Անհայտ աղանդավորներ հայոց մեջ 16-րդ և 17-րդ դարերում»), որտեղ դասակարգային ներհակությունն արտահայտվում է կրոնա-աղանդավորական ձևով, սույն շարժման հիմնական առանցքը կազմող դասակարգային ներհակությունների կողքով է անցնում:

Մի այլ աշխատության մեջ, որտեղ քննության է առնվում XVII և XVIII դարերի Հայաստանի գյուղացիության շերտավորումը, գյուղացիության մեծամասնությունը համարում է կալվածատերերից ազատ մասսա[2]:

Յուրահատուկ տեսակետ ունի Թ. Ավդալբեգյանն հայ բուրժուազիայի XIX դարի վերջին քառորդի շարժումների մասին: Իր մի այլ աշխատության մեջ, որտեղ քննության է առնում XIX դարի ութսունական թվականներին մի համեստ հասարակական գործչի հայացքները, իր մենագրությունն սկսում է հետևյալ կերպ.

---

[1] «Под знамением марксизма», № 3, 1931, стр. 136-137, «Дикусия об азиатском способе производства», Ленинград, 1931, стр. 13-20.

[2] «Նորք», № 5, 1923, «Երկրագործական հավելյալ արդյունքի նորման», էջ 145:

«Տաճկահայ ազատագրական շարժման փառապսակ պարագլուխներից չէր Արսեն Թոխմախյանը» (էջ 9):

Ուրեմն դուրս է գալիս, որ, ըստ հեղինակի, հայ բուրժուազիայի այդ շարժումները եղել են «ազատագրական», և այդ շարժումները գլխավորող քաղաքական կուսակցություններն էլ՝ հեղափոխական: Այլ եզրակացություն չի կարելի անել նման կոնցեպցիայից:

Հեղինակն իր կոնցեպցիայի էությունը ավելի նպատակահարմար է գտնում զետեղել տեքստից դուրս ծանոթության մեջ, այսպես՝ էջ 31-ի վրա ծանոթության մեջ կարդում ենք.

«Ցավելով պետք է նկատել, որ ռուսահայ բանաստեղծության մեջ Ռափայել Պատկանյանի մահվանից հետո կամաց-կամաց չքացան առնական, ռազմական երգերը»:

Հեղինակի՝ դեպի թունոտ շովինիզմով տոգորուն երգերի կարոտը և նրանց չքացման մասին հայտնած ցավը լոկ թեթև խոսքեր չեն, այլ՝ հեղինակի հայ հասարակական կյանքի զարգացման մի ամբողջ շրջանի մասին ունեցած նացիոնալիստական բացահայտ տեսակետ: Ո՞ր դաշնակցական պատմաբանը երկու ձեռքով չէր ստորագրի այս տողերի տակ:

Ինչո՞վ են տարբերվում վերջնական նպատակի իրագործման տեսակետից մենշևիկ, դաշնակցական գաղափարախոսները միմյանցից:

Եթե Թ. Ավդալբեգյանն իր այս և նման հայացքները թաքցնելու տեսակետից էմիգրացիա է կատարում դեպի Հայաստանի պատմության հնագույն շրջանները և զբաղվում է նաև այնպիսի խնդրով, ինչպիսին է ապացուցել, որ Զվարթնոցը կառուցված է Գրիգոր Լուսավորչի երազի համաձայն, ապա չի կարելի մոռացության տալ Գր. Չուբարյանին, որի պատմական աշխատություններն ուղղված են դաշնակցական պատմաբանների կատարած աղավաղումների դեմ: Գր. Չուբարյանն իր այդ աշխատություններում մաքսանենգ ճանապարհով անց է կացնում իր էսէռական տեսակետները:

Գր. Չուբարյանը դաշնակցությունը քննադատողների այն շարքին է պատկանում, որոնք ելնում են այն դրույթից, թե դաշնակցությունը «չի հասկանում» կամ «չի հասկացել» հայ ժողովրդի շահերը, կամ անվանելով «արկածախնդիրների» և «ինքնահավանների» ոհմակ՝ կարծում են խելքի բերել հայ բուրժուազիայի դասակարգային շահերը հետևողականորեն հետապընդող մարտական կուսակցությունը[1]:

«Ազգի «երևելիները» և «հայրենիքի փրկիչները» նվազագույն խելահասությունը և շրջահայեցողությունը չունեցան հաշվի առնելու երկրի և ժողովրդի ուժն ու կարելիությունները» (տե՛ս «Դաշնակցության տաճկական

[1] **Գ. Չուբարյան**, Դաշնակցության տաճկական օրիենտացիան և «Հայրենիքի փրկության կոմիտեն», Երևան, 1939: **Գ. Չուբարյան**, Հեղափոխական բռնագրավման քաղաքականությունը և փետրվարյան ապստամբության պատճառների խնդիրը, «Նոր ուղի», № 7, 8, 1929:

օրիենտացիան», էջ 11): Կամ պահանջել «պատասխանատվության զգացմունք» դաշնակցությունից և կամ մեղադրել նրանում, որ «անընդունակ է հասկանալ» խորհրդային իշխանության, կոմունիստական կուսակցության քաղաքականությունը, նշանակում է քողարկել հակահեղափոխական կուսակցություն էությունը.

«Անձնապաստան բյուրո-կառավարությունը չունեցավ քաղաքական տարրական իմաստություն ու ազնվություն՝ արձագանգելու սոցիալիստական Ռուսաստանի եղբայրական օգնության և բարեկամական միջնորդության առաջարկության: Եվ դա հասկանալի էր» (էջ 20):

Նման մեջբերումների թիվը կարելի է բազմացնել, սակայն այսքանն էլ բավական է ցույց տալու համար, թե ինչպիսի թեք մակարդակից են արձակվում նետերը դաշնակցության: Գր. Չուբարյանի՝ այս ձևի «քննադատությունը» դաշնակցության մասին բխում է նրա դաշնակցության սոցիալական էության մասին ունեցած սխալ կոնցեպցիայից:

Նրա աշխատությունների մեջ ոչ մի տեղ չեք հանդիպի դաշնակցության դասակարգային բնորոշման. հասկանալի պատճառով Գր. Չուբարյանը խուսափել է այդ բնորոշումից, որովհետև նրա մոտ դաշնակցությունը և հայ բուրժուազիան տարբեր են միմյանցից. նույն աշխատության մեջ մենք կարդում ենք.

«Խորհրդային ֆեդերացիայի անշահախնդիր միջնորդությունը փրկելու էր Հայաստանն ու հայ աշխատավորությունը, բայց վտանգ էր սպառնում դաշնակցության և (ընդգծ. մերն է- Հ. Զ.) հայկական բուրժուազիայի թափթփուկների թագավորության» (էջ 2):

Եվ կամ՝

«Գաղութահայ բուրժուազիայի դավադիր սպասավորներն իրենց հին արհեստն են շարունակում (էջ 6):

Գիտենք, որ հայ բուրժուազիայի կուսակցությունն իմպերիալիստներին սպասավորում է ամենայն հավատարմությամբ, բայց ո՞ր օրվանից է նույն դասակարգի կուսակցության «սպասավորի» դեր վերագրվում:

Գր. Չուբարյանը նեղություն հանձն չի առնում իր ոչ մի աշխատության մեջ արտահայտելու և հիմնավորելու իր սեփական տեսակետը, սակայն մաքսանենգությամբ իր աշխատությունները շարադրում է այնպես, որ գործ ունի հայ բուրժուազիայի տարբեր դասակարգային էություն ունեցող կուսակցության հետ: Նրա էսէռական հայացքները պարզվեցին մի ելույթում, երբ նա հանդես եկավ որպես օպոնենտ «Մայիսյան ապստամբությունների մասին» կարդացած մի զեկուցման առթիվ. մի այլ ելույթում նա խորացրեց իր այդ տեսակետները: Ըստ Գր. Չուբարյանի՝ դաշնակցության «պետականության հենարանը» դառնում է յուրահատուկ մի բուրժուազիա, որ 1918-1920 թթ. միայն առաջացել էր դաշնակցական Հայաստանում, այսպես կոչ-

ված, «ագրարային կապիտալիզմի» պայմաններում: Ուրեմն դուրս է գալիս, որ դաշնակցությունը մինչ այդ և դաշնակցական Հայաստանի տապալումից հետո ունեցել է և ունի հայ բուրժուազիայից տարբեր սոցիալական արմատ:

Այսպես է կատարվել էսէռական տեսակետների մաքսանենգությունը մեր պատմագրության մեջ դաշնակցությունը «քննադատելու» դիմակի տակ սքողված:

Փետրվարյան ավանտյուրայի խնդրի առթիվ ճիշտ կերպով քննադատելով ընկ. Բորյանին և ցույց տալով, որ նա անտեղյակ է պատմական փաստերին, ինչպես և գերի է դարձել դասակարգային թշնամուն՝ Գր. Չուբարյանն իր այդ գրախոսական ընդարձակ հոդվածում թույլ է տվել այնպիսի սխալ, որից հակահեղափոխական հոտ է փչում:

Հակառակ այն պատմական իրողության, որ Հայաստանի գյուղը դաշնակցական կառավարությունը տապալելու համար բազմիցս իր ապստամբական շարժումներում և քաղաքացիական կռիվներում հեղափոխական գործողությունների փառավոր դասեր էր բռնել, ահա թե ինչպես է բնորոշվում Հայաստանի գյուղը, ընդհանրապես Գր. Չուբարյանի կողմից (խոսքը վերաբերում է 1921 թ. Հայաստանի գյուղին):

Խոսելով այն մասին, որ Նոյեմբերյան հեղափոխությունից հետո կոմունիստական պրոպագանդան լայն հող է գտնում գյուղերում, նա առանձնակի պաթոսով հայտարարում է.

«Ահա թե ինչ **նոր** (ընդգծումն հեղինակինն է - Հ. Զ.) ձայներ են հնչում երբեմնի ամորֆ, անմռունչ ու ստրկացած հայ գյուղից» («Նոր ուղի», № 7-8, էջ 219):

Հարց է առաջանում՝ ինչպե՞ս են կատարվել Հայաստանի բանվորության և աշխատավոր գյուղացիության կողմից հեղափոխական շարժումները նախքան խորհրդայնացումը, երբ «հայ գյուղը ամորֆ անմռունչ և «ստրկացած» դրություն ուներ նախքան 1921 թվականը: Ուրեմն այդ գյուղում գոյություն չի՞ ունեցել դասակարգային շերտավորում: Այս հարցերն են ինքնաբերաբար առաջ գալիս հեղինակի այդ գնահատականից:

Այսպես է դրությունը պատմագրության ֆրոնտում թշնամի դասակարգի տարբեր երանգի գաղափարախոսների մոտ: Հարց է առաջանում՝ ի՞նչ չափով է պայքար տարվել բուրժուական այդ գաղափարախոսությունների դեմ, ի՞նչ դրության մեջ են մարքսիստ-պատմաբանների ստեղծագործական աշխատությունները. կարողացե՞լ են թշնամի այդ գաղափարախոսություններին պատշաճ հակահարվածը տալ:

Սակայն, նախքան այս հարցերի քննության անցնելը արժեր կանգ առնել պատմաբանների այն խմբի վրա, որոնք մեզ մոտ աշխատում են թոթափել իրենց իդեալիստական պատմահայեցողությունը, և փորձեր են անում Հայաստանի պատմության ուսումնասիրությունն իր գիտական բարձրության վրա դնելու:

5.

Վերոհիշյալ պատմաբանների խմբին են պատկանում բոլոր նրանք, ովքեր Հայաստանի պատմության մասին անցյալի բուրժուական կոնցեպցիայի պաշարով գալիս և փորձ են անում հին արժեքները վերագնահատման ենթարկելու:

Անկասկած, այս խմբի առանձին անհատների միջև և իրենց աշխարհայեցողության մեջ կատարած բեկման աստիճանով և թե պատմական խնդիրներին իրենց ցուցաբերած մոտեցումով խոշոր տարբերություններ կան: Իդեոլոգիական տեսակետից միևնույն ուղղության մեջ դասելը դեռևս չի նշանակում բացասել այդ տարբերությունները:

Անկասկած, անցյալի ժառանգության բեռով դեպի մեզ եկող այս պատմաբանները գիտակցել են, որ իդեալիստական, հակագիտական աշխարհայեցողությամբ է շարադրվել անցյալում Հայաստանի պատմությունը, որ բուրժուական պատմաբանների սխեման Հայաստանի պատմության զարգացման պրոցեսի մասին չի համապատասխանում իրականության, և որ անհրաժեշտ է «մատերիալիստական աշխարհայեցողությամբ գրել այդ, և կամ Հայաստանի պատմությունը «նոր հունի մեջ դնել» (տե՛ս պրոֆ. **Լեո**, Հայոց պատմության հարցերից, «Պետական համալսարանի գիտական տեղագիր», № 1, էջ 3-4):

Այս խմբից Հայաստանի պատմության նորագույն շրջանի խնդիրներով զբաղվել է պրոֆ. Լեոն[1], իսկ պրոֆ. Հակ. Մանանդյանն զբաղվել է մասնավորաբար Հայաստանի ֆեոդալիզմի շրջանի հարցերով[2]:

Ի՞նչ չափով է հաջողվել այդ պատմաբաններին թոթափել իդեալիստական պատմահայեցողությունը:

---

[1] Պրոֆ. **Լեո**, Հայոց նորագույն պատմություն, մաս 1-2, ՀՍԽՀ Պետհամալսարանում 1924-1925 ուսման տարեշրջանում կարդացած դասախոսությունները (Երևան, 1926), «Անցյալից» (հուշեր, թղթեր, դատումներ) (Թիֆլիս, 1925), «Կոմունիզմը հայոց մեջ», «Նորք», № 1, 1922, «Հայոց պատմության հարցերից» («Պետհամալսարանի գիտական տեղեկագիր», № 2-3, 1927), ԲՍԷ-ում «Армения» հոդվածը:

[2] Պրոֆ. **Հակ. Մանանդյան**, Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում (դասախոսություններ՝ կարդացված Երևանի ժող. համալսարանում, 1921), Երևան, 1922, «Դիտողություններ հին Հայաստանի շինականների դրության մասին մարզպանության շրջանում», «Պետհամալսարանի գիտական տեղեկագիր», № 1, 1925, «Նյութեր Հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության», «Պետհամալսարանի գիտական տեղեկագիր», № 4, 1928, «Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում», «Գիտության և արվեստի ինստիտուտի տեղեկագիր», № 1, 1928, «Նյութեր Հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության», «Գիտության և արվեստի ինստիտուտի տեղեկագիր», № 2, 1927, «Հայաստանի հին ճանապարհները», «Գիտության և արվեստի ինստիտուտի տեղեկագիր», № 5, 1931, «Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում», Երևան, 1930, «О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен», Эриван, 1930:

Պրոֆ. Լեոն, որը տվել է ամբողջական աշխատություն Հայաստանի նորագույն շրջանի պատմության մասին, իր կոնցեպցիայով մնում է հինը: Ավելին՝ նրա մոտ ոչ միայն պակասում է դեպի պատմական նյութերը ցույց տրրվելիք քննադատական մոտեցում, այլ նրա գործերը շատ դեպքերում այլազան տեղերից հավաքված կոմպելատիվ աշխատություն են հանդիսանում: Տնտեսական մատերալիզմին մոտենալու ուղղությամբ կատարած նրա փորձերը լոկ ձևական բնույթի են կրում, և նա, մնալով իդեալիստական պատմահայեցողության դիրքերում, իր կատարած փորձերով դառնում է տիպիկ էկլեկտիզմի ներկայացուցիչ: Նրա աշխատություններում ընթերցողն ամեն քայլափոխում հանդիպում է հեղինակի հակասություններին:

ԲՍԷ-ում զետեղված «Армения» խորագրով հոդվածը, որ պատկանում է պրոֆ. Լեոյի գրչին, խտացրած ձևով ամփոփում է նրա կոնցեպցիան Հայաստանի պատմության ֆեոդալիզմի շրջանի պատմական զարգացման մասին: Այդտեղ ցայտուն արտահայտություն է գտել բուրժուական պատմագրության այն տեսակետը, ըստ որի՝ այն ժամակաշրջանները, որոնք եղել են Արևելքի ժողովուրդների տիրապետության շրջան, Հայաստանը հանդիսացել է տնտեսապես և կուլտուրապես քայքայված մի երկիր: Իսկ XV դարից հետո «հայոց պատմությունը փոխադրվել է գաղութները», քանի որ հայ առևտրական կապիտալը դուրս է եկել Հայաստանի սահմաններից: Հարազատ իր այս կոնցեպցիային՝ նա իր «Հայոց նորագույն շրջանի պատմությունը» աշխատությամբ նպատակ է դրել աշխարհի այլազան մասերում ցրված հայ առևտրական բուրժուազիայի պատմությունը տալ:

Պրոֆ. Լեոն ունի շարադրելու և ժողովրդական լեզվով պատմելու վարպետություն, նրա պատմական աշխատություններն ամենից ավելի են տարածված: Այս տեսակետից նրանց դեմ պայքարելն ստանում է առանձին նշանակություն:

Այլ է խնդիրը պրոֆ. Հակ. Մանանդյանի մոտ:

Եթե ուշադրությամբ քննության առնենք նրա վերջին տասը տարվա պատմական ուսումնասիրությունները, ապա պետք է նշենք, որ պրոֆ. Հակ. Մանանդյանը լուրջ փորձեր է անում թոթափելու իդեալիստական պատմահայեցողությունը:

Եթե 1922 թ. նրա «Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում» աշխատությունը պատմական երևույթների բացատրման հիմքում դնում էր ռասայական և կրոնական ազդակները (տե՛ս վերոհիշյալ աշխատության ներածությունը և էջ 41-42), ապա հետագա շրջանի նրա մենագրությունները թեև չեն լուծում պրոբլեմներ, բայց պարունակում են առատ նյութ: Նրանց նպատակն է ֆեոդալական շրջանի առանձին տնտեսական տերմինների ուսումնասիրությունը, և այս կատարվում է՝ կտրված այն տնտեսական հասարակարգից, որտեղ այդ տերմիններն են

առաջացել՝ կիրառելով բացառաբար ինդուկտիվ մեթոդը, որը հեղինակին հնարավորություն չի տալիս պատմական պրոցեսի զարգացման զուգընթաց բառերի ստացած նոր բովանդակության հետևելու. երևույթները քննության են առնվում իրենց ստատիկ վիճակում[1]:

Անտարակույս, այդ աշխատությունների մատակարարած նյութերն ավելի արժեքավոր կլինեին և ուղղակի կնպաստեին Հայաստանում ֆեոդալիզմի զարգացման պրոցեսի լուսաբանության, եթե վերև նշված թերությունները գոյություն չունենային[2]:

Մի քայլ է դեպի առաջ նրա վերջին աշխատությունը՝ "О торговле и городах Армении в связи с мировой торговлей древных времен"՝ համեմատած իր անցյալի աշխատությունների հետ և՛ մեթոդոլոգիական, և՛ պրոբլեմներ դնելու և նրանց լուծումը փորձելու տեսակետից:

Սակայն, այն մեթոդոլոգիան, որ նա կիրառում է, և որին հասել է իր այս աշխատությամբ, ֆակտորների տեսության մեթոդոլոգիան է տվյալ դեպքում, տնտեսական ֆակտորների տեսությունն է, թեև այս աշխատության մեջ անհատի դերի գերագնահատումով, պատմական անցուդարձերն անհատներով բացատրելու իր եղանակը մեծ չափով տուրք է տալիս սուբյեկտիվ իդեալիզմին:

Հայաստանի քաղաքների առաջացումն ու զարգացումը ներքին տնտեսական ազդակներից՝ կտրված քննության առնելը, ինչպես և Հայաստանի քաղաքների ծագումն ու առաջացումն անհատների վերագրելը և կամ իբրև պայմանավորող հիմնական ազդակ արտաքին տրանզիտային ճանապարհները նկատի ունենալը, ինչպես և ամբողջ աշխատության մեջ Հայաստանի պատմության ընթացքի մասին կատաստրոֆների տեսությունը, արդյունք են իր անցյալի ժառանգության, որը դեռևս պրոֆ. Հակ. Մանանդյանը չի կարողացել հաղթահարել:

Այս տեսակետից չի կարելի համաձայնել այն գնահատականի հետ, ըստ որի՝ պրոֆ. Մանանդյանն իր այս վերջին աշխատությամբ դեգերում է տնտեսական մատերիալիզմի և պատմական մատերիալիզմի արանքում:

Մեթոդոլոգիայի բնագավառում նրա կողմից կատարված բեկման ներկա ստադիայում պահանջել նրանից, որ դիալեկտիկական մատերիալիզմի մեթոդոլոգիայով քննության ենթարկի պատմական երևույթները, ըմբռնի նրանց ներքին կապը և այդ երևույթների՝ միմյանց վրա ունեցած փոխազդեցության վերլուծման ճանապարհով պատմական պրոցեսի զարգացման

---

[1] Հմմտ. «Труды первой Всесоюзной конференции историков-марксистов», т. I, стр. 472, «Նորք», № 1, 1926, էջ 236-242:

[2] Մեր այս ասածի օրինակ կարող է ծառայել Թ. Ավդալբեգյանի հոդվածը՝ ուղղված պրոֆ. Հակ. Մանանդյանի «Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում» ուսումնասիրության դեմ, տե՛ս «Գիտության և արվեստի ինստիտուտի տեղեկագիր», № 1:

ճշգրիտ գնահատականը տա, կնշանակի նրանից ավելին պահանջել:

Դեռևս նրա՝ այս կարգի ուսումնասիրությունները կարող են գնահատվել որպես փաստական նյութ պարունակող աշխատություններ և այս տեսակետից՝ արժեքավոր:

Անցյալի ժառանգությամբ եկող հեղինակներից արժե հիշատակել նաև Երվ. Շահազիզին: Նրա «Հին Երևանը» աշխատությունն իր տեսակի մեջ առաջին փորձն է Հայաստանի քաղաքի մենագրական ուսումնասիրությունը տալու տեսակետից: Երվ. Շահազիզն իր այդ աշխատությամբ հանդիսանում է փաստերի հավաքող, սակայն, այդ մենագրությունը մի անգամ ևս գալիս է ապացուցելու, որ պատմական փաստերը հավաքվում են ըստ հեղինակների պատմահայեցողության: «Հին Երևանը» աշխատության մեջ բուրժուա-նացիոնալիստական պատմական կոնցեպցիան մեծ չափով հյուրընկալվում է[1]:

Այլ բնագավառ է շոշափել Խաչիկ Սամվելյանը[2]: Նրա աշխատությունը նպատակ է առաջադրել ուսումնասիրել Հայաստանի նախապատմական շրջանի ժողովուրդների կուլտուրան: Սույն աշխատության բավականին ընդարձակ ներածականը նվիրված է հեղինակի մեթոդոլոգիային. այստեղ բացորոշ դրսևորվում է էմպիրիկ շկոլան՝ իր բազմապիսի փոփոխակներով: Հեղինակը, առանձնակի կանգ առնելով իրեն ծանոթ բոլոր մեթոդների վրա, ի շարս որոնց՝ նաև պատմական մատերիալիզմի վրա՝ տալով նրան իր ունեցած մեխանիստական ըմբռնումը, շարունակում է.

«Ինչպես տեսնում ենք, վերոհիշյալ մեթոդները թե՛ հնագիտության և թե՛ ազգաբանության միջոցով, առանձին-առանձին վերցրած, թերի ու անկատար են մնում նախնական կուլտուրայի զարգացման ընթացքը դիտելու համար: Մարդկային կուլտուրայի ամբողջ զարգացումն ըմբռնելու, նրա ամբողջ ընթացքը պատկերացնելու համար անհրաժեշտ է դիմել ավելի բարդ միջոցի՝ **կոմպլեքսային** (ընդգծումը հեղինակինն է - Հ. Զ.) մեթոդին» (էջ 20):

Այս աբզացին նախորդող տողերում խոսում է պատմական մատերիալիզմի՝ որպես «սոցիոլոգիական մեթոդի» մասին և հայտարարում, թե «նրա սկզբունքներով առաջնորդվում ենք մեր սույն աշխատության մեջ» (էջ 20): Դուրս է գալիս, որ բոլոր էմպիրիկ մեթոդների հավաքածու է հանդիսանում «իրան առաջնորդող» պատմական մատերիալիզմը…

Բնորոշ է նույնպես և այն, որ հեղինակը նյութական կուլտուրայի մնացորդների ուսումնասիրությունն անջատում է պատմությունից, երբ վերջինիս՝ որպես գիտության վերապահում է միայն «գրավոր ապացույցներն ու փաստերը՝ սկսած վիմագիր և կավագիր հուշարձաններից մինչև ձեռագիր աղբյուրները» (էջ 19):

Հայաստանի բուրժուական պատմագրությունն այդ կերպ էլ շարժել

[1] Տե՛ս գրքի մասին գրախոսականը՝ «Նոր ուղի» ամսագիր, գիրք 3-րդ, 1931:

[2] **Խաչիկ Սամվելյան**, Հայաստանի հին կուլտուրան, Երևան, 1930:

է, և երբ Անիում ակադ. Մառի կատարած պեղումներից հայտաբերված նյութական կուլտուրայի մնացորդները հիմնիվայր շրջեցին բուրժուական պատմագրության որոշ էպոխայի կոնցեպցիան, այս կարգի պատմաբանները, մնալով հարազատ իրենց իդեալիստական պատմահայեցողության, շարունակեցին մնալ պատմության մասին այն սահմանավորման վրա, ինչ որ այժմ վուլգար մատերիալիզմով հրամցնում է «Հայաստանի հին կուլտուրայի» հեղինակը:

6.

Եթե փորձենք Հայաստանի պատմության վերաբերյալ մարքսիստական գրականության հանրագումարը տալ, ապա կտեսնենք, որ մինչև այժմ եղած աշխատությունները հիմնականում ուսումնասիրության նյութ են դարձրել հետևյալ հիմնական խնդիրները.

ա) Հայաստանի հեղափոխական շարժումների պատմությունը,

բ) դաշնակցության սոցիալական էության խնդիրը,

գ) դաշնակցական պատմաբանների կողմից կատարված պատմական աղավաղումների մերկացումը,

դ) դաշնակցության վերջին տասնամյակի քաղաքական կուրսը,

ե) փորձ Հայկոմկուսի պատմության սկզբնավորման շրջանի մասին,

զ) «Ազգային հարցի» լուծումը պրոլետարիատի կողմից,

է) առանձին պրոբլեմներ Հայաստանի ֆեոդալիզմի շրջանից:

Անկասկած, մեր իդեոլոգիական ֆրոնտի պայքարի տեսակետից հիմնական խնդիրներն են շոշափվել: Սակայն, հաջողվե՞լ է արդյոք մեր պատմաբաններին այս հարցերի ուղղությամբ ամբողջական և ջախջախիչ հակահարված հասցնել հայ բուրժուական պատմագրության ամեն երանգի գաղափարախոսներին, հաջողե՞լ են ապացուցել դաշնակցությունը՝ որպես հայ բուրժուազիայի ռասիստական կուսակցություն լինելը, կիրառվե՞լ է այդ աշխատություններում հետևողականորեն մարքս-լենինյան մեթոդոլոգիան, ինչպիսի՞ թեքումներ են գոյություն ունեցել, ինչպիսի՞ փտած լիբերալիզմի արտահայտություններ են եղել, և ի՞նչ չափով են ստացել նրանք իրենց հակահարվածը:

Հարցե՛ր, որոնց պատասխանն այժմեական և հրատապ է, մասնավորաբար ընկ. Ստալինի «Пролетарская Революция» ժուռնալի խմբագրության ուղղած պատմական նամակի կապակցությամբ, երբ խնդիր է դրվում ներկա դասակարգային պայքարի սրման պայմաններում հակակուսակցական մաքսանենգ գաղափարախոսությունների մերկացումը, գիտության բոլոր բնագավառների կուսակցականացումը և կուսակցության զգոնության էլ

ավելի բարձրացումը, երբ դասակարգային թշնամին պայքարի նոր ձևեր է կիրառում ինչպես մեր պրակտիկ սոցիալիստական շինարարության, նույնպես և իդեոլոգիական ֆրոնտում:

ա) Հայաստանի հեղափոխական շարժումների պատմությունից մինչև այժմ ուսումնասիրության առարկա են դարձել մայիսյան ապստամբությունները[1]:

Հիմնական խնդիրները, որոնց պետք է մեկին, և որոշ պատասխաններ տա մայիսյան ապստամբություններն ուսումնասիրողը, հետևյալներն են՝

ա) դասակարգային փոխհարաբերությունները և շարժիչ ուժերի խնդիրը,

բ) դաշնակցության սոցիալական բնույթի գնահատականը,

գ) մայիսմեկյան դեմոնստրացիայի հարցը և վերջապես՝

դ) ապստամբության պարտության պատճառների գնահատականը:

Ուսումնասիրությունների մեծագույն մասը առաջադրված այս խնդիրների նկատմամբ ունեցել է բավականին լուրջ սխալներ. այդ ուսումնասիրությունների շուրջը գրվել են բավականաչափ գրախոսականներ[2], ի վերջո, կուսակցությունը պարզորոշ տվել է սպառիչ պատասխանը դիսկուսիոն հարցերի վերաբերյալ:

Մինչև դիսկուսիայի ավարտումը և կուսակցության կողմից տրված գնա-

---

[1] **Ս. Կասյան**, Ձախության հիվանդությունը մեզանում, «Նոր աշխարհ», № 2, 1922, **Ա. Հովհաննիսյան**, «Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը», «Նորք», № 2, 1923, **Շ. Ամիրխանյան**, Մայիսյան ապստամբությունը, «Նոր ուղի», № 4-5, 1929, **Արտ. Կարինյան**, Քաղաքացիական պատերազմները և նրանց դրդապատճառները, (տե՛ս «Հայ ազգայնականների ուղին» աշխատությունը, էջ 89-102): Բացի այս ուսումնասիրություններից՝ լույս են տեսել նաև նյութեր մայիսյան ապստամբությունների մասին:
«Մայիսյան ապստամբությունը Հայաստանում», հրատ. ՀԿԿ (բ) ԿԿ Կուսպատի, Երևան, 1930, **Մ. Բակուրա**, Պրոլետ-հեղափոխության արխիվից:
Նշել եմ և հետագայում էլ նշելու եմ հիմնական աշխատությունները և կամ առանձին ուսումնասիրությունները:

[2] **Մ. Գարագաշ**, Մայիսյան ապստամբության ու դաշնակցական սոցիալական գնահատման մի փորձ, «Կոմունիստ», № 1, 1928,
Գ. Վանանդեցի, Մայիսյան ապստամբության գնահատման փորձերի առթիվ, «Կոմունիստ», № 6, 1927, **Հով. Դուրգարյան**, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում («Կոմունիստ», № 9-10, 1927), ընկ. Դուրգարյանի այս հոդվածը, որ ուղղված է ընկ. Շ. Ամիրխանյանի աշխատության դեմ, ամենացայտուն և բացարձակ աջ օպորտունիստական հայացքների մի հավաքածու է. բավական է հիշատակել միայն այն, որ, ըստ ընկ. Դուրգարյանի, ապստամբության համար անհրաժեշտ օբյեկտիվ պայմաններ դեռ ամբողջովին չէին հասունացել, և եթե նույնիսկ ապստամբությունը հաջող ելք ունենար, «միևնույնն է, պահել մեր ձեռքում իշխանությունը չէինք կարող՝ շնորհիվ գլխավորապես երկրի տնտեսական ծանր պայմաններին»: Սրան պատասխանում է ընկ. Շ. Ամիրխանյանը՝ «Մեշչանական դատողություններ Մայիսյան ապստամբության մասին» («Կոմունիստ», № 2, 1928), հետո դիսկուսիա է առաջանում ընկ. Շ. Ամիրխանյանի և ընկ. Թ. Մանդալյանի միջև (տե՛ս «Նոր ուղի», № 9, 10, 1929), ընկ. Թ. Մանդալյանը իր պատասխանում մի առ մի մատնանիշ է անում ընկ. Շ. Ամիրխանյանի աջ օպորտունիստական սխալները:

հատականը, մայիսյան ապստամբություններն ուսումնասիրող ընկերները վերև դրված խնդիրների նկատմամբ ունեցել են հակադիր տեսակետներ:

Եղել է տեսակետ, որ դաշնակցական Հայաստանում բուրժուա-կուլակային դիկտատուրան տապալելու խնդրում կոմունիստների տակտիկան պետք է լինի… ոչ թե կապիտալիստական, այլ «գաղութային երկրի կոմունիստների քաղաքականություն» (**Ս. Կասյան**, «Նոր աշխարհ», № 2, էջ 18): Ուրեմն, ըստ ընկ. Ս. Կասյանի, Հայաստանի ներքին դասակարգային հարաբերություններում գոյություն չունեին սոցիալիստական հեղափոխություն կատարելու հենարաններ:

Այլ է հարցը մյուս ընկերների մոտ, ոչ ճիշտ պարզորոշ դիրքավորում է դաշնակցության սոցիալական էության նկատմամբ, երբ դաշնակցությունը որակվում է «ազգային քաղքենիության» կուսակցություն (Ա. Հովհաննիսյան) և կամ «ազգայնական ինտելիգենցիայի կուսակցություն» (Շ. Ամիրխանյան), և կամ երբ բանվորության թվական նվազությունն ապստամբության պարտության պատճառների մեջ է դասվում: Իսկ ընկ. Շ. Ամիրխանյանը կանգնում է ապստամբության շարժիչ ուժերի վերաբերյալ աջ օպորտունիստական տեսակետի վրա, երբ նա հեղափոխությունը պատկերացնում է ամբողջ գյուղացիության հեղափոխություն՝ թերագնահատելով բանվորության դերը մեր հեղափոխության մեջ: Հեղափոխության մարշրուտի հարցում արծարծելով սխալ տեսակետ և այդ զարգացնելով՝ կանգնել է Մայիսյան ապստամբության պարտության անխուսափելիության տեսակետի վրա:

Ընկ. Արտ. Կարինյանը կատարում է այլ կարգի սխալ և ըստ էության հեղափոխության պարտության անխուսափելիությունն է առաջադրում՝ բացասելով բանվորության հեգեմոն դերը և կոմունիստական կուսակցության ղեկավարությունը (կարելի է ընդունել այդ ղեկավարության անվճռականությունը), երբ բնորոշում է Մայիսյան ապստամբությունը «տարերային հոսանք, բնազդական մի ճիգ՝ ուղղված դաշնակցական կառավարության դեմ» («Հայ ազգայնականների ուղին», էջ 91):

Ըստ էության՝ այս օպորտունիստական տեսակետներին վերջ տվեց կուսակցության կողմից տրված սպառիչ պատասխանն այն իմաստով, որ Մայիսյան ապստամբությունը Հայաստանում կատարվել է բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դաշնակցած ուժերով, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ:

Եթե ընկ. Թ. Մանդալյանի ուսումնասիրությունն այս տեսակետից ճիշտ դիրքավորում է տալիս, ապա պետք է ավելացնել, որ ինչպես մյուս աշխատությունները, այնպես և ընկ. Մանդալյանի աշխատությունը փաստական մատերիալի տեսակետից աղքատ է: Դեռևս լիովին չեն օգտագործվել գոյություն ունեցող այն բոլոր մատերիալները, որոնք գալու են միանգամայն ապացուցելու Հայկոմկուսի կողմից տրված ճիշտ դրույթները: Մնում է, որ

մարքսիստ-պատմաբանները, կուսպատի և պետական արխիվի հարուստ մատերիալների հիման վրա տան ավելի հիմնավորված ու գիտական ուսումնասիրություն և երևան հանեն փաստական այն դրությունը, որ գոյություն է ունեցել դաշնակցական կառավարության ժամանակ, երբ «վարիները» չէին կամենում, և երբ «վերիները» չէին կարողանում ըստ հնույն շարունակել: Այսպես պետք է արվի մի կողմից՝ ջախջախելու դաշնակցական, հակահեղափոխական տեսակետները, մյուս կողմից՝ հակադրելու բոլոր երանգի օպորտունիստական տեսակետներին միակ ճիշտ և գիտական հիմնավորումը մայիսյան ապստամբությունների մասին: Այս աշխատանքին ձեռնարկված է արդեն:

բ) Ինչպես տեսանք վերևում, դաշնակցության դասակարգային էության մասին ճիշտ տեսակետ ունենալու հարցը կարևորագույն խնդիրներից մեկն է հանդիսանում ոչ միայն այդ կուսակցության դեմ մեր մղած առօրյա ընթացիկ պայքարի համար, այլև ճիշտ լուսաբանելու վերջին տասնամյակների պատմական իրադարձությունները:

Դաշնակցության դասակարգային էությունը. ահա այն երկրորդ հիմնական խնդիրը, որով զբաղվել է վերջին տասնամյակի մարքսիստական գրականությունը[1] և լայն դիսկուսիայի առարկա դարձրել այդ հարցը:

Եթե հանրագումարի բերենք այդ դիսկուսիայի առթիվ արտահայտված տեսակետները, ապա կտեսնենք, որ դիսկուսիայի սկզբնական շրջանից դաշնակցության սոցիալական էության մասին գոյություն է ունեցել երկու հակադիր տեսակետ, ըստ առաջին տեսակետի, որի թեորետիկական վերամշակողը հանդիսացել է ընկ. Աշոտ Հովհաննիսյանը, դաշնակցությունը մանր բուրժուազիայի կուսակցությունն է եղել մինչև 1920 թվականը: Թեև իր վերջին աշխատությամբ, ընկ. Ա. Հովհաննիսյանն այդ ժամանակաշրջանը կրճատում և մի 15 տարով, այնուամենայնիվ «Նորք» ամսագրի առաջին համարներում նրա տված բնորոշումները դաշնակցության սոցիալական էության մասին, թեև մի քիչ մանվածապատ, սակայն կասկած չեն թողնում այն մասին, որ դաշնակցությունը դեռևս դաշնակցական Հայաստանի շրջանում մանր բուրժուական կուսակցություն էր:

Մի հանգամանք, որ ճիշտ կերպով նկատել է ընկ. Ե. Հրանտը ընկ. Ա. Հովհաննիսյանի «Դաշնակցության առիթով» աշխատությունը գրախո-

---

[1] Բացի մի շարք ուսումնասիրություններից, որտեղ անուղղակի կերպով շոշափվել է այդ հարցը, լույս են տեսել հետևյալ հիմնական ուսումնասիրություններն այդ մասին՝
Ա. Հովհաննիսյան, Դաշնակցության սոցիալական ծագումը, «Նորք», № 1, 1928,
Հ. Ազատյան, Դաշնակցության սոցիալական ծագումը, «Նոր ուղի», № № 1, 2, 3, 9, 10, 11, 121,1929,
Ա. Հովհաննիսյան, Դաշնակցության առիթով, Մոսկվա, 1929, այս հարցի մասին մամուլում լույս են տեսել բազմաթիվ այլ հոդվածներ. մեր նշած ուսումնասիրությունները հիմնականում շոշափում են այն դիսկուսիոն հարցերը, որոնք արծածվել են այս առթիվ, նաև **Ալ. Մարտունի**, Կուսակցությունները գաղութահայության մեջ, Թիֆլիս, 1924:

սելիս («Նոր ուղի», № 6, 1929, էջ 206-207):

Երկրորդ տեսակետը, որ այս հարցի առթիվ ծագած դիսկուսիայից հետո Հայկոմկուսի սպառիչ եզրափակումն է հանդիսանում և ոչ մի անորոշություն չի թողնում, հետևյալն է.

«Դաշնակցությունը եղել է և է հայ բուրժուազիայի իդեաների և ձգտումների արտահայտիչն ու մարտական կուսակցությունը, նա կատարել է և կատարում է համաշխարհային իմպերիալիզմին սպասավորելու ամենաստոր պաշտոնը»:

Խնդիրը սրանով փակված պետք էր համարել, եթե ընկ. Ա. Հովհաննիսյանը 1929 թ. հրատարակած իր մի աշխատությամբ՝ «Դաշնակցության առիթով», կրկին չարծարծեր այդ հարցը:

Պետք է ասել, որ իրապես ընկ. Ա. Հովհաննիսյանը այս վերջին աշխատությունը, որ, ըստ երևույթին, իր վերջին խոսքն է հանդիսանում տվյալ հարցի առթիվ, մի փորձ է՝ իր անցյալի սխալները սքողելու: Ճիշտ է, որ 1928 թ. նա գալիս է այն համոզման, որ վերագնահատման պետք է ենթարկել դաշնակցության մասին նախկին տարիների իր տեսակետը մինչև 1920 թ.՝ առանց սակայն մի բան ասելու իր կատարած սխալների շուրջը: Իր վերջին աշխատությամբ նա կանգնած է դաշնակցության սոցիալական ծագման հարցի վերաբերյալ նրա մանր բուրժուական կուսակցություն լինելու իր հին տեսակետի վրա (հմմտ., էջ 41-47), սակայն նահանջ կատարում է այն չափով, ինչ չափով այդ քաղաքական հոսանքի զարգացման պրոցեսում տեսնում է նրա բուրժուական վերասերումը և ընդհանուր կոնտուրներով գծում է այդ վերասերման էտապները (էջ 52-55):

Ըստ ընկ. Ա. Հովհաննիսյանի կոնպեցպիայի՝ այդ վերասերումը կատարվում է ռուսական առաջին հեղափոխության շրջանում 1905-1906 թթ. այսինքն՝ այն շրջանում, երբ դաշնակցությունը քաղաքական քննություն է բռնում հեղափոխության ընթացքում: Հարց է առաջանում՝ այդ սոցիալական մետամորֆորզն արդյունք էր դասակարգային նոր փոխհարաբերությունների՞, թե՞ «հեղափոխական կուսակցությունը համախմբում է ռեակցիայի կուսակցությունը», որը մինչ այդ իր սոցիալական էությամբ, որպես հայ բուրժուազիայի կուսակցությունը, արդեն իսկ հետապնդում էր իր կազմակերպման սկզբնավորությունից իր դասակարգի շահերը և պատմական փորձաղաշտում իր գոյության տասնհինգամյակում գործով ապացուցում է իր սոցիալական էությունը:

Մի հիմնական խնդիր, որի կողքով չի կարելի անցնել դաշնակցության սոցիալական էությունը և նրա ծագման հարցը քննության առնելու ժամանակ[1]:

---

[1] «Նոր ուղի»-ի խմբագրությունը, զետեղելով ընկ. Ա. Մելիքյանի ընդարձակ և ուշագրավ գրախոսական հոդվածը ընկ. Բ. Բորյանի աշխատության դեմ, նշում է. «…Հստակորեն չի

Ինչպես մեր գրականության մեջ բազմիցս շեշտվել է, դաշնակցության սոցիալական էության մասին ընկ. Ա. Հովհաննիսյանի ունեցած թյուր կոնցեպցիան ոչ թե գրական-ակադեմիական բնույթի մի սխալ է, այլ կուսակցության կողմից նրա դեմ մղված պայքարն ունի խոշոր քաղաքական նշանակություն այն իմաստով, որ նրա կողմից թերագնահատվել է և չի գիտակցվել դաշնակցության վտանգը և նրա դեմ անողոք պայքար մղելու անհրաժեշտությունը: Մեր գրականության մեջ մերկացվել են ընկ. Ա. Հովհաննիսյանի տեսակետի սպեցիֆիկյան արմատները:

Չի կարելի չհիշատակել նաև դաշնակցության մասին ԲՀՏ-ում ինիցիալների տակ թաքնված, գիտական արժեքից զուրկ այն հակակուսակցական հոդվածը, որ շիլ ու շփոթ է տարածում այդ կուսակցության մասին:

Նրա հեղափոխական կուսակցություն լինելու առասպելը, դաշնակցական Հայաստանում պառլամենտական ընտրություններում ժողովրդի 90 %-ի՝ այդ կուսակցության ձայն տալը՝ առանց նկատի առնելու դաշնակ մաուզերիստների տեռորն այդ ընտրությունների ընթացքում. այս բոլորը գալիս է ապացուցելու, թե ինչպես մեր գրականության մեջ մաքսանենգ ճանապարհով մուտք են գործում հակահեղափոխական գաղափարախոսությունների շոշափուկները:

Կարո՞ղ ենք ընկ. Հ. Ազատյանի «Դաշնակցության դասակարգային բնույթը» հոդվածաշարքը համարել որպես հարցի գիտական հիմնավորումը տվող աշխատություն:

Ընդհանրապես ճիշտ դիրքավորում ունենալով՝ այդ ուսումնասիրությունը ունի հիմնական թերություններ. հեղինակը, որ շատ ճիշտ կերպով նպատակ է դրել այդ կուսակցության դասակարգային էությունը բնորոշել ոչ թե նրա ծրագրից, այլ նրա գործից, ոչ թե նրա խոսքից, այլ գործողություններից, ահա այդ գործողությունների, պատմական փաստերի տեսակետից լինելով թերի՝ նա հաճախ ընկնում է երևույթի մեխանիստական աբստրակտ բացատրությունների մեջ. կարելի է հիշեցնել Չերնիշևսկու խոսքը. «Առանց առարկայի պատմության՝ չկա առարկայի տեսություն»:

Դեպի նյութն աբստրակտ մոտեցումով է պայմանավորվում հեղինակի աշխատության սկզբում XVII, XVIII և XIX դարերի ընթացքում այսպես կոչված ազատագրական շարժումների միջև հավասարության նշան դնելը և դաշնակցության արմատները մինչև Իսրայել Օրիի շարժման մեջ տեսնելու

ձևակերպում իր սեփական տեսակետները մի շարք էական նշանակություն ունեցող հարցերի վերաբերմամբ…» («Նոր ուղի», № 6-7, 1930, էջ 210): Մեր կարծիքով՝ այդ էական հարցերից մեկն է դաշնակցության սոցիալական բնույթի խնդիրը, որը ընկ. Ա. Մելիքյանն թողնում է անորոշ և չի հայտնում իր տեսակետը, մանավանդ երբ նկատի ունենանք, որ նա անցյալում դաշնակցության սոցիալական էության մասին կանգնած է եղել նրա մանր բուրժուական կուսակցություն լինելու տեսակետի վրա, ավելին՝ նրա սկզբնական շրջանը նա համարել է ազգային-ազատագրական հեղափոխական շարժում:

հանգամանքը: Մի հանգամանք, որ մեծ չափով թուլացնում է աշխատությունը, խտացնում իր այլ չափազանցությունների գույնը:

Ինչպես տեսնում ենք, այս էական խնդրի վերաբերյալ խոշոր աշխատանք ունենք կատարելու և այդ աշխատանքը, մեր կարծիքով, պետք է ընթանա առաջին հերթին ստեղծագործական ուղղությամբ, այն իմաստով, որ շարադրվի Հայաստանի վերջին տասնամյակների և հայ հասարակական մտքի զարգացման պատմությունը: Իսկապես պատմական փաստերը գալիս են արձանագրելու, թե «դաշնակցությունը եղել է և է հայ բուրժուազիայի իղձերի և ձգտումների արտահայտիչն ու մարտական կուսակցություն»:

գ) Մեր աշխատության սկզբի մասում մենք շեշտեցինք, թե ինչպես դաշնակցական պատմաբաններն ամեն ջանք թափում են կեղծելու մոտիկ անցյալի պատմական իրադարձությունները՝ պատմության անողոք դատաստանի առաջ արդարանալու և «համազգային ճակատ» ստեղծելու համար: Ի՞նչ պայքար է տարվել մեր կողմից այդ կեղծիքների դեմ. ահա՛ այն երրորդ հիմնական խնդիրը, որով զբաղվել է մարքսիստական պատմագրությունը[1]:

Դաշնակցության դեմ ուղղված այնքան անհրաժեշտ ընթացիկ պայքարին զուգընթաց, մենք շատ քիչ ուսումնասիրություններ կարող ենք նշել, որոնք նպատակ դրած լինեին պետարխիվում և կուսպատում գոյություն ունեցող հարուստ մատերիալի, ինչպես և իր ժամանակի դաշնակցական մամուլի հաղորդած տեղեկությունների հիման վրա Վրացյանների և Խատիսյանների պատմական կեղծիքները քողազերծ անելու: Այս տեսակետից կատարված աշխատություններն ավելի շուտ հրապարակախոսական պոլեմիկական բնույթ են կրում, և հարցերը շոշափված են այն չափով, ինչ չափով անհրաժեշտ է եղել դասակարգային թշնամու հորինած ստերը հերքելու:

Չթերագնահատելով նման աշխատությունների արժեքը՝ մենք ցանկանում ենք արձանագրել այստեղ այն փաստը, որ նրանք դեռևս շատ անբավարար են մեր իդեոլոգիական պայքարի համար ընդդեմ դաշնակցության:

Նոյեմբերյան հեղափոխությունը, դաշնակցության դիրքը դեպի Խորհրդային Ռուսաստանը, «Անկախ Հայաստանի» իրավունքն ու պետականությունը. ահա այն մի քանի խնդիրները, որոնց մասին գրվել է մինչև օրս: Արժեր կանգ առնել վերջինի՝ ընկ. Զ. Աշրաֆյանի աշխատության վրա: Ընկ Զ. Աշրաֆյանը փաստական տվյալներով պատկերացնում է դաշնակցական Հայաստանում ստեղծված անարխիկ դրությունը: Սակայն, չի կարելի համաձայնել նրա հետ այն խնդրում, երբ նա փորձում է տալ դաշնակցա-

[1] **Ա. Կարինյան**, Դաշնակցությունը փաստերի դեմ, Թիֆլիս, 1926: **Ա. Հովհաննիսյան**, Համազգային կրիզիսը, Երևան, 1926: **Զ. Աշրաֆյան**, Անկախ Հայաստանի իրավունքն ու պետականությունը, «Նորք», № 2, 1926, № 1, 1928: **Մ. Բակուրա**, Դաշնակցությունը և բրիտանական հրամանատարությունը, «Նոր ուղի», № 3-5, նույնի՝ «Դաշնակցությունը և ֆրանսիական հրամանատարությունը», «Նոր ուղի», № 4, 1931:

կան իշխանության անկազմակերպվածության պատճառները և հիմնականը համարում այն, որ «դաշնակցության և ժողովրդական կուսակցություններից կազմված կառավարությունը… չէր հենված աշխատավորության վրա, գործում էր նրա դեմ» («Նորք», № 1, 1928, էջ 183): Հարցի այսպիսի ձևակերպումը ոչ մի կապ չունի խնդրի դասակարգայնորեն լուսաբանման հետ և դաշնակցության սոցիալական դրության մասին շիլ ու շփոթ տեսակետների արգասիք է:

Դաշնակցության հենարանը լինելով բուրժուազիան, անշուշտ, նա չէր հենվելու աշխատավորության վրա և գործելու էր նրա դեմ:

Ինչպես տեսնում ենք, այս մասնակի ուսումնասիրությունները դեռևս պայքարն իր խորությամբ տանելու տեսակետից շատ անբավարար են. այս պակասը գալիս է մասամբ լրացնելու ընկ. Մ. Բակուրանի պատմական վավերաթղթերի հրատարակությունը, որոնք հաճախ ավելի ցայտուն կերպով բաց են անում դաշնակցության անգլո-ֆրանսական իմպերիալիզմին մատուցած լակեյական ծառայությունները:

Այս խնդրում էլ անհատական նախաձեռնության է թողնված հարցը և սիստեմատիկ աշխատանք չի ծավալվել այն հիմնարկների կողմից (պետական արխիվ, կուսպատ), որոնց անմիջական ֆունկցիաների մեջ են մտնում այս կարգի աշխատանքները:

դ) Դաշնակցության դեմ մղած պայքարի հիմնական խնդիրներից մեկն էլ նրա վերջին տասնամյակի ռասիստական էտապը ցույց տալն է հանդիսանում:

Այս խնդրի քննության են նվիրված մի շարք աշխատություններ[1]: Այս աշխատությունների մեծագույն մասը կրում է հրապարակախոսական բնույթ:

Հայկական ռասիզմն իր տասնամյա գրավոր արտադրություններով և կենդանի գործունեությամբ առատ նյութ է մատակարարել իր զարգացման այս վերջին էտապի ռասիստական գաղափարախոսության և գործելակերպի մասին: Նշված այդ աշխատություններին հաջողվել է այդ գաղափարախոսությունը մերկացնել և կապել մեր դասակարգային պայքարի հետ. եղե՞լ են այս ուղղությամբ դաշնակցության մասին թերագնահատումներ:

Դաշնակցության դեմ գրված որոշ աշխատություններում տեղ է գտել այն տեսակետը, ըստ որի՝ դաշնակցության հակահեղափոխական գործունեությունը ժխտվել է մեզ մոտ մղված դասակարգային պայքարի ընթացքում:

---

[1] **Ա. Հովհաննիսյանը**, Դաշնակցության ընթացիկ կուրսը, «Նորք», № 3, 1923: **Ա. Կարինյան**, Նացիոնալիզմի «նոր դիրքերը», 1929, Մոսկվա: Նույնի՝ «Հայ ազգայնականների ուղին», Մոսկվա, 1926: **Ե. Չուբար**, Դաշնակցությունը երրորդ շրջանում, Երևան, 1930: Նույնի՝ «Դաշնակցությունն ինտերվենցիայի դիրքերում», «Նոր ուղի», № 1, 1931:

«Ակտիվ պայքարի համար,- գրել է 1923 թ. ընկ. Ա. Հովհաննիսյանը,- դաշնակցությունը կորցրել է Հայաստանում կուսակցական կենդանի կաղրը և սոցիալական պատրաստի ռեզերվը: Դաշնակցության ընդհատակյա կազմակերպությունները հազիվ միայն հետախուզող կայաններ կարող են լինել արտասահմանյան մարմինների համար» («Դաշնակցության իդեոլոգիայի ընթացիկ կուրսը», «Նորք», № 3, էջ 169):

Այստեղ բացահայտ կերպով ժխտվում է դաշնակցության տարած պայքարը մեզ մոտ և դասակարգային պայքարի սրման պայմաններում նացիոնալիզմի ակտիվացումը:

Դաշնակցության մեզ մոտ տարած պայքարի թերագնահատում և խոշոր սայթաքումներ կատարվել են նաև ընկ. Ա. Կարինյանի կողմից, որի մասին իր ժամանակ ճիշտ է նկատել ընկ. Ե. Չուբարը. «Ընկ. Կարինյանի գրություններում կան խոշոր սկզբունքային սայթաքումներ, որոնք հարազատ էին Հայաստանի կոմունիստական կուսակցության նախկին ղեկավարության» («Դաշնակցությունը երրորդ շրջանում», էջ 18-21):

Դաշնակցության և առհասարակ թշնամի գաղափարախոսությունների դեմ մղված պայքարում ո՞րն է հիմնականը. այն, որ այդ պայքարն անհրաժեշտ է կապակցել մեր առօրյա կոնկրետ խնդիրների հետ, մեր իրականության մեջ դասակարգային պայքարի ստացած նոր և յուրահատուկ արտահայտությունների հետ:

Այս ուղղությամբ ընկ. Ե. Չուբարի «Դաշնակցությունը երրորդ շրջանում» աշխատությունը նպաստում է իդեոլոգիական ֆրոնտում դասակարգային թշնամու դեմ մեր մղած պայքարին:

Մենք նշեցիքն մինչև այժմ այն ուսումնասիրությունները, որոնք հիմնականում ուղղված են դասակարգային թշնամու դեմ. արձանագրեցինք իդեոլոգիական այն սայթաքումները, որոնք կատարվել են այս աշխատություններում, և շեշտեցինք կատարված այդ աշխատանքի անբավարար դրությունը: Ինչ վերաբերում Հայաստանի և հայ հասարակական մտքի XIX և XX դարերի պատմության, ապա պետք է ասել, որ այս բնագավառում կատարված աշխատանքները երբեք չի կարելի բավարար համարել:

Այս բոլորից հետո պետք է արձանագրել, որ միանգամայն ճիշտ է այն գնահատականը, որ տվեց ընկ. Խանջյանը պատմության ֆրոնտի մասին 1931 թ. հոկտեմբեր ամսին կուլտպրոպբաժինների վարիչների խորհրդակցության ժամանակ արտասանած ճառում:

«Անբնական է, բայց փաստ է, որ մինչև այժմ մենք չունենք որևէ լուրջ աշխատանք պատմության դաշնակցական կոնցեպցիայի դեմ, հասարակական զարգացման Անանունական կոնցեպցիային չի հակադրված պատմության զարգացման մեր կոնցեպցիան, ոչնչացնող քննադատության չի ենթարկված դաշնակցության սոցիալ-պատմական կոնցեպցիան»

(«Խորհրդային Հայաստան», № 243,1931):

Նախքան գոյություն ունեցող այս դրության պատճառների վերլուծման և հետագա աշխատանքների ուղին նշելը անհրաժեշտ է կանգ առնել վերև նշված խնդիրների վրա:

ե) Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության խնդիրը:

Պետք է արձանագրել, որ այս բնագավառը գրեթե մոռացության է տրվել: Հայաստանի բանվորական շարժումների պատմության մասին գոյություն ունի միայն մի աշխատություն, որ ընդգրկում է միմիայն չորս տարվա (1903-1907) ժամանակաշրջան (Ե. Մելիք-Յոլչյան): Այս աշխատությունն էլ անմիջական նպատակ չի դնում շարադրելու Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմությունը: Այն, ինչ այժմ առավել ևս անհրաժեշտ է այդ աշխատանքին ձեռնարկել: Գոյություն ունեցող գրականության մեջ, որտեղ անուղղակի շոշափվել են Հայկոմկուսի սկզբնավորման խնդիրը, գոյություն ունեն իրար խաչաձևող տեսակետներ:

Ընկ. Ա. Հովհաննիսյանն այսպես է ձևակերպում բոլշևիկյան կուսակցության առաջացման խնդիրը.

«Եվ եթե մոտենանք սպեցիֆիզմի պրոբլեմին հենց նրա «կենսունակ տարրերի» հասարակական քաղաքական էվոլուցիայի տեսակետից, այն կներկայանա մեզ որպես մի կամուրջ՝ բուրժուական դաշնակցական նացիոնալիզմից դեպի պրոլետարական-բոլշևիկական ինտերնացիոնալիզմը» («Ձախ պանիկյորության հայկական մի վարիանտի մասին» Երևան, 1927):

Կա ընկ. Խումարյանի կարծիքը. ըստ նրա՝ 1890-ական թվականներին կազմակերպված «Հայ բանվորական հեղափոխականների ասոցիացիան, ըստ ամենայն իրավունքի՝ հայ կոմունիստների, հայ մարքսիստների պատմական նախորդն է»[1]:

Կա և ընկ. Կասյանի տեսակետը. «Բոլշևիկական ակտիվ և խտացած գործունեությունը Հայաստանի տերրիտորիայում իրապես սկսվել է 1919 թ. ամառվանից» («Նոր աշխարհ», № 2, 1922, էջ 7):

Եվ վերջապես ընկ. Ե. Մելիք-Յոլչյանի աշխատությունը, որ, բացասելով այս տեսակետները, ինքն էլ կատարում է մի այլ հիմնական և ավելի խոշոր սխալ՝ Հայաստանի բանվորական շարժումների առաջացման խնդիրը կըտրելով համառուսական հեղափոխական շարժումներից:

Ինչպես տեսնում ենք, կա այնքան տեսակետ, որքան արտահայտվողներ այդ հարցի առթիվ:

Եթե այսքան անմխիթար դրության մեջ է կուսակցության անցյալի պատմությունը, ապա վերջին տասնամյակի պատմությունն ավելի լավ պայմաններում չէ. վերջերս Հայկոմկուսի 8-րդ համագումարը տեղի ունեցավ և

[1] Այս տեսակետը քննադատվել է ընկ. Ե. Մելիք-Յոլչյանի կողմից, տե՛ս այդ մասին «Նորք», № 4, 1924:

դեռևս գոյություն չունի այդ համագումարների պատմությունը, որը մի շարք տեսակետներից կարող էր ուսանելի լինել:

զ) «Ազգային հարցի» լուծումը պրոլետարիատի կողմից. այս է այն հիմնական նպատակը, որ առաջադրել է իրեն ընկ. Բ. Բորյանն իր այնքան աղմուկ հանած աշխատության մեջ (**Б. Борьян**, Армениья, международная дипломатия и СССР):

Մենք հնարավորություն չունենք այստեղ կանգ առնելու «թյուրիմացությունների անսպառ աղբյուրի» վրա, ինչպես իրավամբ որակել է այդ աշխատությունը ընկ. Ա. Մելիքյանն իր ուշագրավ և ընդարձակ գրախոսականում («Նոր ուղի», № 6-7, Երևան, 1930):

Ընկ. Բորյանի այդ աշխատությունը հակամարքսիստական մի աշխատություն է[1]: Ընկ. Բորյանն իր այդ աշխատությամբ հանդես է գալիս որպես էկլեկտիզմի տիպիկ ներկայացուցիչ: Աշխատությունը փաստական տեսակետից պարունակում է բազմաթիվ սխալներ, և, որ հիմնականն է, նա ոչ միայն չի նպաստում մեր իդեոլոգիական պայքարում որպես զենք, այլ ռեստավրացիայի է ենթարկում դասակարգային թշնամու պատմական կոնցեպցիաները մի շարք խնդիրներում:

Պետք է հիշատակել նաև «ազգային հարցի» կապակցությամբ ընկ. Ա. Հովհաննիսյանի երկու աշխատությունները («Էնգելսը և Հայկական հարցը», Մոսկվա, 1931 և «Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրները», Էջմիածին, 1921):

Առաջին աշխատության մեջ ընկ. Ա. Հովհաննիսյանը, կրկին դաշնակցության սոցիալական ծագման մասին իր սխալ կոնցեպցիան անցկացնելով, հարվածում է մյուս կողմից բոլոր նրանց, որոնք, դաշնակցության գործունեությունը վերցրած իր զարգացման պրոցեսում, որոշ ժամանակաշրջանի համար այդ կուսակցությունը համարում են հեղափոխական: Ընկ. Ա. Հովհաննիսյանին այս կոնկրետ դեպքում հաջողվել է ապացուցել այդ աշխատության մեջ դաշնակցության հակահեղափոխական կուսակցություն լինելը:

Երկրորդ աշխատությունը ուղղված է հայ բուրժուական պատմագրության ստեղծման այն կոնցեպցիայի դեմ, ըստ որի՝ հայ-ռուսական օրիենտացիան հայ ժողովրդի կողմից ընդունվեց դեռևս XVII դարու 70-ական թվականներից:

է) Հայաստանի ֆեոդալիզմի շրջանի, մասնավորաբար նրա մի էտապի շուրջը լույս են տեսել մի քանի մենագրություններ[2]: Այդ ուսումնասիրություն-

---

[1] **Ակոպով**, «Նոր ուղի», № 3, 1929, **Հ. Զորյան**, «Նոր ուղի», № 5, 1929, **Գ. Չուբարյան**, «Նոր ուղի», № 7-8, 1929:

[2] **Հ. Զորյան**, Արաբների հարկային քաղաքականությունը ֆեոդալական Հայաստանում, «Պետական համալսարանի գիտական տեղեկագիր», № 2-3, 1927: «Գյուղացիական

ները գալիս են ապացուցելու, որ Հայաստանի պատմության այդ ժամանակաշրջանում քաղաքի և գյուղի միջև ստեղծվել են այնպիսի հակասություններ, որոնք միանգամայն գալիս են ջրելու բուրժուական պատմագրության «մի հոտ մի հովվի» գրությունը, ավելին, դասակարգային այդ հակասություններն ստացել են դասակարգային պայքարի արտահայտություն, որին հանդիպում ենք X դարու առաջին քառորդում:

Վերև քննության առնված խնդիրները ցույց են տալիս, որ մարքսիստական պատմագրությունը լուրջ քայլեր է արել թշնամի գաղափարախոսությունները և բուրժուական պատմական կանցեպցիան հաղթահարելու տեսակետից, սակայն անհրաժեշտ է արձանագրել և այն, որ կատարվել են աջ օպորտունիստական սխալներ, որոնց հաղթահարումը հանդիսանում է նույնպես մեր հետագա աշխատանքների կարևոր կետերից մեկը:

Նշելով այս բոլորը՝ պետք է արձանագրել միաժամանակ, որ մեր այժմյան պահանջների տեսակետից մարքսիստական պատմագրությունը հետ է մնում:

Հարց է առաջանում՝ որո՞նք են այս դրության հիմնական պատճառները, և ի՞նչ կերպ հնարավոր է մեր աշխատանքների արմատական վերակառուցումով վերջ տալ իդեոլոգիական պայքարի այս ճակատամասում գոյություն ունեցող հիմնական բացերին:

7.

Մենք մեր այս մենագրության սկզբում նշեցինք, թե ինչպիսի չնչին քանակությամբ անցյալի ժառանգությունը կարող ենք դիալեկտիկական վերամշակման ենթարկելով՝ օգտագործել մարքսիստական պատմագրության համար: Ինչ վերաբերում էր մշակված, սիստեմատիկ աշխատություններին, ապա ոչ միայն չենք կարող դրանցից ոչ մեկը օգտագործել, այլև անհրաժեշտաբար հարկավոր է բոլորովին նոր մշակման ենթարկել Հայաստանի պատմությունը: Անկասկած, այս հանգամանքը խոշոր օբյեկտիվ պայմաններից մեկն է կարճ ժամանակի ընթացքում աշխատանքները ծավալելու տեսակետից:

Հայաստանի պատմության բնագավառում նոր պետք է սկսվեր այդ աշխատանքը և առաջին հերթին՝ մենագրությունների ուղիով, իսկ այս պահանջում է անհրաժեշտ չափով կադրեր:

Այս տեսակետից մեր պայմաններում դրությունը դեռևս ոչ թե անցնող տասը տարվա ընթացքում, այլև ներկայումս էլ դեռ շատ հեռու է մեր աճող

շարժումների ֆեոդալական Հայաստանում», «Պետական համալսարանի գիտական տեղեկագիր», № 4, 1928: «Ֆեոդալական Հայաստանի քաղաքի և գյուղի միջև ստեղծված հակադրությունը», «Գիտության և արվեստի ինստիտուտի տեղեկագիր», № 2 և 3, 1928:

պահանջներին բավարարելուց: Բավական է վերև հիշատակված մարքսիստ պատմաբաններին քննության առնել և կտեսնենք, որ նրանցից մեծագույն մասն ըստ մասնագիտության պատմաբաններ չեն: Նրանք իրենց հիմնական աշխատանքներին զուգընթաց գրել են այս աշխատությունները. այն փաստը, որ միայն 1931 թ. փետրվարին է հնարավոր եղել կազմակերպել մարքսիստ-պատմաբանների ընկերությունը, որի անդամների թիվը ասպիրանտների հետ հասնում է տասնչորս հոգու, և նրանցից, առանց ասպիրանտների, միայն չորս հոգին զբաղվում են Հայաստանի և Անդրկովկասի պատմությամբ, այս թիվը մեր կադրերի դրության պատկերը ինքնին տալիս է:

Մեր կարծիքով՝ նոր կադրեր պատրաստելու խնդիրը, ինչպես և գոյություն ունեցողի որակավորման հարցը հանդիսանում է այն հիմնական խնդիրներից մեկը, որի վրա պետք է կենտրոնացնել ուշադրությունը. մեզ մոտ նոր կադրեր պատրաստելու աշխատանքին շատ ուշ է ձեռնարկվել. անհրաժեշտ է կարճ ժամանակում վերացնել գոյություն ունեցող այս բացը: Բացի այս՝ պետք է նշել նաև այն հանգամանքը, որ նույնիսկ քանակով այդքան քիչ կադրերի ռացիոնալ օգտագործումը տեղի չի ունեցել:

Նոր ուժերի առաջքաշումը ոչ միայն չի խրախուսվել, և չեն տրվել նրանց անհրաժեշտ գիտահետազոտական աշխատանքների պայմաններ ու հնարավորություններ, այլև, կարելի է ասել, այդ նոր ուժերի առաջքաշման որոշ խոչընդոտներ են հարուցվել անցյալում: Միայն վերջին երկու տարվա ընթացքում այս ուղղությամբ որոշ բեկում է նկատվում, սակայն կատարվածը ոչ մի դեպքում չի կարող բավարար համարվել աճող պահանջների բավարարման ուղղությամբ:

Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի պատմության սեկցիայի գծով նոր ասպիրանտներ պատրաստելու խնդիրն անհրաժեշտություն է: Եթե մարքսիզմ-լենինիզմի և մանկավարժական ինստիտուտները հանդիսանում են առաջին կանալը կադրեր պատրաստելու տեսակետից, ապա քիչ աշխատանք չունի ծավալելու այս բնագավառում մարքսիստ-պատմաբանների ընկերությունն օժանդակ խմբեր կազմակերպելու բանֆակին և բանվորական ակումբին կից՝ այդ խմբերից ակտիվ նախապատրաստելու, հետագայում պատմության ֆրոնտում աշխատողներ ունենալու համար:

Կադրերի վերարտակավորման, նրանց մարքս-լենինյան ուսմունքով զինելու վրա մինչև այժմ շատ քիչ ուշադրություն է դարձվել մի հանգամանք, որ անպայման իր անդրադարձումն է ունեցել և հետագայում կունենա գիտահետազոտական աշխատանքների որակի վրա:

Երկրորդ խնդիրը, որ մինչև այժմ շարունակում է բավականին խոշոր արգելք հանդիսանալ պատմական ուսումնասիրությունների կատարմանը, գիտական օժանդակ հիմնարկների դեռևս կազմակերպչական շրջանում լինելու դրությունն է: Այստեղ մենք նկատի ունենք առաջին հերթին պետական արխիվը, կուսպատը, հեղափոխության թանգարանը, հանրային գրադարա-

նը, Էջմիածնի կենտրոնական ձեռագրատունը և հնությունների պահպանման կոմիտեն: Մենք հնարավորություն չունենք այստեղ մանրամասն կանգ առնելու այս հիմնարկների դրության վրա, հիմնարկներ, որտեղ կատարվող գիտական աշխատանքներն առաջին նախապայմանն են հանդիսանում պատմական ուսումնասիրությունների համար: Բավական է հիշել, որ դեռևս պետական արխիվը ոչ միայն չի ձեռնարկել արխիվային նյութերի հրատարակման աշխատանքներին, այլև տակավին բացակայում է նույնիսկ վերջին տասնամյակների արխիվային դոկումենտների ցուցակագրումը, Էջմիածնի կենտրոնական ձեռնագրատնում գոյություն ունեցող Էջմիածնի կաթողիկոսարանի հարուստ արխիվային նյութերի ցուցակագրումը դեռևս չի կատարվում: Այս պայմաններում պատմաբանն ստիպված է որևէ խնդրի ուսումնասիրության համար վատնելու հսկայական աշխատանք, երևան հանելու իրեն անհրաժեշտ նյութերը: Վերև հիշված մյուս հիմնարկներում նույնպես չեն կատարվել այդ նախապատրաստական աշխատանքները, այսպես՝ հանրային գրադարանում դեռևս բիբլիոգրաֆիական աշխատանքներ չեն ձեռնարկվել, նույնիսկ Հայաստանի և Անդրկովկասի պատմության մասին գոյություն ունեցող գրականության լրիվ քարտեր գոյություն չունեն: Հնությունների պահպանության կոմիտեն տարիների ընթացքում կատարված գիտական էքսպեդիցիաների միջոցով հավաքված արժեքավոր արձանագրությունները հրատարակելու և կամ ուսումնասիրողների համար մատչելի դրության մեջ դնելու աշխատանքներ չի ձեռնարկել:

Այս պայմաններում, անկասկած, գոյություն ունեցող կադրերը, առանց այն էլ վերին աստիճանի անբավարար, ստիպված են հսկայական ժամանակ կորցնել սև աշխատանքների վրա:

Անհրաժեշտ է մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի պատմության սեկցիային կից կազմակերպել վերև հիշված հիմնարկների ներկայացուցիչների մասնակցությամբ մի խորհուրդ, որտեղ մանրամասն քննության առնվեն այս խնդիրները և նշվեն այդ հիմնարկներում տարվելիք աշխատանքների ուղիները, որ կարճ ժամանակում նրանք կարողանան վերակառուցել իրենց աշխատանքներն այն ուղղությամբ, որպեսզի կարող լինեն իրապես օժանդակել Հայաստանի պատմության գծով կատարվելիք գիտահետազոտական աշխատանքներին:

Պետք է ասել, որ որոշ անհատների նախաձեռնությամբ երկար տարիների աշխատանքով կուտակված հում մատերիալներ գոյություն ունեն, անհրաժեշտ է նրանց անմիջական հրատարակման աշխատանքին ձեռնարկել:

Անհրաժեշտ է նույնպես Հայաստանի պատմության վերաբերյալ այլևայլ վայրերում ցրված արխիվային նյութերը հավաքել: Վերին աստիճանի ողջունելի է Լուսժողկոմատի այն ձեռնարկը, որ նա, կազմակերպելով հատուկ բրիգադ, խնդիր դրեց նրա վրա կարճ ժամանակում պատրաստելու

Հայաստանի պատմության ձեռնարկ՝ առաջին հերթին XIX և XX դարերի վերաբերյալ:

Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի պատմության սեկցիան, ինչպես և մարքսիստ-պատմաբանների ընկերությունը 1932 թ. իր արտադրական պլանում մտցրել է երկու հիմնական խնդիրների մշակումը բրիգադային ձևով՝ ա) Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմությունը և բ) դաշնակցական Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությունը:

Այս խնդիրների կապակցությամբ անհրաժեշտ է ծանրանալ երրորդ հիմնական մոմենտի վրա, այն է՝ գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման ձևերի և մեթոդների վերակառուցման խնդիրը:

Անցյալի հին մեթոդները, աշխատանքի ոչ ճիշտ կազմակերպումը, կոնտրոլի և ստուգման, ինչպես և պատասխանատվության զգացումի բացակայությունը մինչև վերին աստիճանի բացասական կերպով են անդրադարձել մեր գիտահետազոտական աշխատությունների քանակական և որակական արտադրույթի վրա:

Աշխատանքների պլանավորման խնդիրն առաջին հիմնական հարցն է ուժերի ռացիոնալ օգտագործման տեսակետից: Մի խնդիր, որի վրա հարկավոր է առաջին հերթին լուրջ ուշադրություն դարձնել: Բրիգադային այն խոշոր աշխատանքները, որ նշեցինք վերև, հետապնդում են այս հիմնական նպատակը. աշխատանքների պլանավորման ընթացքում պետք է նկատի ունենալ այն հիմնական խնդիրը, որ պատմական խնդիրների ուսումնասիրությունը սերտորեն կապված է այլ սեկցիաների գծով կատարվող գիտահետազոտական աշխատանքների հետ. անհրաժեշտ է կաբինետային մեկուսացած աշխատանքների ձևերում մեթոդները փոխարինել պրոբլեմների միասնական մշակման ձևերով. այստեղ մենք նկատի ունենք գլխավորաբար պատմության, գրականության և փիլիսոփայության սեկցիաների աշխատանքները կոմպլեքսային ձևով տանելու խնդիրը:

Առաջադրված խնդիրների և պլանի կատարման անկարողությունը հաճախ բացատրվում է «օբյեկտիվ» պատճառներով, գլխավորաբար աշխատող ուժերի քչությամբ: Պետք է վերջ տալ այս ձևի պատճառաբանություններին: Անտարակույս, ուժերի պակասությունը, ինչպես վերև նշեցինք, որոշ դժվարություններ հարուցում է, սակայն, մենք չենք օգտագործում գոյություն ունեցող մեր բոլոր հնարավորությունները: Ահա այս է, որ բացակայում է: Անհրաժեշտ է աշխատանքները ճիշտ պլանավորել՝ հաշվի առնելով բոլոր հնարավորությունները, աշխատանքի տեմպը բարձրացնելով կոլեկտիվ ձևով աշխատելու և պատասխանատվության գիտակցությունը բարձրացնելու եղանակով: Մեզ մոտ հիմնականում դեռևս բեկում չի կատարվել կոլեկտիվ աշխատելու ձևին անցնելու համար: Այս կերպ մենք հնարավորություն կունենանք երիտասարդ գիտական աշխատակիցների միջոցով, ղեկավա-

րության ապահովումով նյութի հավաքման, նրա նախնական մշակման տեսակետից խոշոր արդյունքներ ձեռք բերել:

Կոլեկտիվ աշխատանքներում դիմազրկության վերացումը էական պայմանն է. ամեն մեկը պետք է պատասխանատու լինի իր աշխատանքը ժամանակին և որակյալ կերպով կատարելու համար:

Եվ վերջապես կատարված աշխատանքի հաշվառում ու ստուգում պետք է կատարվի:

Ահա հիմնական այն ձևերն ու մեթոդները, որոնք հիմք պիտի հանդիսանան մեր հետագա աշխատանքներին:

Մարքս-լենինյան մեթոդոլոգիայով զինված նոր կադրեր պատրաստելու խնդիրը, գիտական օժանդակ հիմնարկների աշխատանքների վերակառուցումը և աշխատանքի կազմակերպման նոր ձևերի ու մեթոդների կիրառումը. ահա հիմնական լծակները, որոնց վրա պետք է հենվել՝ վերացնելու այն հիմնական բացը, որ գոյություն ունի պատմության ֆրոնտում ջախջախելու դաշնակցական բուրժուական հակահեղափոխական կոնցեպցիան, հակադրելու մենշևիկյան տեսակետներին միակ գիտական մարքսիստական կոնցեպցիան, պայքարելու ամեն տեսակ նացիոնալ-օպորտունիստական տենդենցների, փտած լիբերալիզմի և ամեն երանգի մաքսանենգությունների դեմ, մանավանդ դասակարգային պայքարի սրման ներկա էտապում, երբ կապիտալիզմի վերջին էլեմենտներն արմատահան են արվում և դրա հետ՝ երկրի ներսում դաշնակցության հենարան հանդիսացող վերջին մնացորդները:

Մեր աշխատանքների հիմնական բացը պիտի համարել նաև այն, որ մինչև այժմ գոյություն չունի Անդրկովկասի եղբայրական հանրապետությունների համապատասխան գիտահետազոտական հիմնարկների հետ այն անհրաժեշտ սերտ համագործակցությունը, որը Անդրկովկասի պատմությունը մարքս-լենինյան աշխարհայացքով շարադրելու հիմնական նախադրյալն է հանդիսանալու:

Եթե նկատի ունենանք, որ Անդրկովկասի երեք առանձին հանրապետությունները պատմականորեն այնքան սերտ կապակցության մեջ են եղել, և այն, որ Անդրկովկասյան ֆեդերացիայի ամրապնդման հիմնական ազդակ հանդիսացող ինտերնացիոնալ դաստիարակության համար Անդրկովկասի մարքսիստական պատմությունը հիմնական պատվանդաններից մեկն է, ապա գոյություն ունեցող այս դրության շուտափույթ վերացումը հրամայական անհրաժեշտություն է ներկայացնում:

Այս ուղղությամբ Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտների և մարքսիստ-պատմաբանների ընկերությունների, ինչպես ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Կովկասագիտական մասնաճյուղի առաջ խնդիր է դրվելու իրագործելու նշված սերտ գործակցությունը և աշխատանքների պլանավորումով սկսելու Անդրկովկասի պատմության ձեռնարկի պատրաստման աշխատանքը:

ԱՌԱՋԱԲԱՆ

Ինչպես հայտնի է, մինչև այժմ տիրապետող կարծիքը եղել է այն, որ խալդ-ուրարտական շրջանից սկսում է Արմենիա-Հայաստանի գրավոր պատմությունը:

Պրոֆ. Ա. Խաչատրյանի ներկա ընդարձակ ուսումնասիրությունը նպատակ է դրել ապացուցել, որ այդ ԳՐԱՎՈՐ ՇՐՋԱՆԸ ՍԿՍՈՒՄ Է ԴԱՐԵՐ ԱՌԱՋ, և փորձում է ձեռքի տակ եղած նյութերի սահմաններում ՏԱԼ ԱՅԴ ՆԱԽՆԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ[1]:

Հեղինակը նախուրարտյան դարերի պատմության լուսաբանման համար օգտագործում է Տել-Ամառնայի, Բողազքյոյի (Խատուշաշի՝ հեթիտյան մայրաքաղաքի) դիվաններից հայտնաբերված, ինչպես և ասորեստանյան հնագույն արձանագրությունները:

Ուսումնասիրությունը բաղկացած է երկու մասից: Առաջին մասում նախ քննության է առնում վերոհիշյալ արձանագրություններում հիշատակված մի շարք աշխարհագրական անուններ և աշխատում նշել նրանց տեղերը: Ըստ հեղինակի կարծիքի՝ այդ անունները հետագա շրջանի Հայաստան երկրամասի նահանգների ու գավառների անուններն են:

Ապա քննության է ենթարկում Հայաստանի հնագույն շրջանի (մինչև Արմենների դրության տեր դառնալը) էթնիկ ցեղերի խնդիրը:

Այս հարցի քննությամբ աշխատում է պարզել, որ այդ գրավոր վկայություններում երևան են գալիս նախուրարտյան շրջանում հետևյալ հիմնական ժողովուրդները,

1. Սուբարի կամ Սուբարու (ցեղով ո՛չ սեմիտ, և ո՛չ արի),
2. Խուրրի-Միտանի (արիներ),
3. Մոսք կամ Մուշք (հավանորեն նույնպես արի):

Հեղինակը հատկապես կանգ է առնում Խուրրի-Միտանիների վրա, որոնք շուրջ երկհազարյակին (ն. Ք. թվականը) հանդես են գալիս և տիրապետում Սուբարիներին և հիմնում ընդարձակ մի պետություն Արմենիայում և Հյուսիսային Միջագետքում: Այդ պետությունը տևում է շուրջ երեք և կես դար:

Արևելյան Փոքր Ասիայում հեթիտ կայսրության ուժեղացումով տկարանում է այս պետությունը: Նրա վասալները՝ Ալշե (=Աղձնիք) և Ասսուր, վերջին հարվածն են տալիս այս պետության: Վերստին երևան են գալիս Սու-

[1] Այս կերպ, եթե խալդ-ուրարտական սեպագիր արձանագրությունները Հայաստանի, այսպես կոչված, «նախապատմական» շրջանը վեր ածեցին գրավոր վկայությունների ժամանակաշրջանի, ներկա ուսումնասիրությունը առաջին փորձն է այն ուղղությամբ, որ փորձում է նախուրարտյան ժամանակաշրջանը, որը մինչև այժմ բնորոշվել է «նախապատմական» շրջան՝ վեր ածելու գրավոր պատմության ժամանակաշրջանի:

բարիները՝ Շուբրիա, Շուբրի (=Ծոփք) անունով, որը շարունակում է միշտ պայքարի մեջ մնալ իր հակառակորդ Ասսուրի դեմ:

Հեղինակն աշխատում է հաստատել, որ եթե Սուբարիները շարունակեցին իրենց գոյությունը Արմենիայի ժողովրդախավում, Խուրրի-Միտանիները վերապրեցին նախարարական տոհմերի մեջ:

Հեղինակը այն տեսակետին է, որ 12-րդ դարում (ն. Ք. թ.) Փռյուգ-Մոսք ցեղը, արևմուտքից գաղթելով, 50 տարի տիրել է հարավարևմտյան Արմենիայի և մինչև Մծբնի շրջանը: Ապա հետ մղվելով՝ բնակություն է հաստատել Մուշի ու Մոկսի շրջաններում, որոնք մինչ այսօր էլ պահել են նրանց անունը:

Փռյուգ-Մոսք-Արմենների գրոհը կործանում է Փոքր Ասիայի կենտրոնում Հեթիտական պետությունը: Ժողովրդի մի կարևոր մասը ապաստանում է հայկական լեռնաստանը:

10-9-րդ դարերում (ն. Ք. թ.) կազմավորվում է մի նոր քաղաքական միություն: Ասորեստանցիները այս պետությունը անվանում են Ուրարտու՝ իրենց հյուսիսարևմտյան սահմանամերձ Ուրուատրի-Ուրարտու երկրի անունով, իսկ իրենք՝ Խալդ աստծու անունով՝ Խալդիա:

Հեղինակը չի ընդունում Ուրարտու-Խալդերին իբրև դրսից մի նոր ցեղ, այլ նախապես գոյություն ունեցող այս երեք ժողովուրդներից՝ ժամանակի ընթացքին տեղում զարգացած և դրության տեր դարձած:

Ուսումնասիրության երկրորդ մասը նվիրված է Խուրրի-Միտանիների քաղաքական պատմությանը:

Սուբարիների և Մոսքերի պատմությունը տալ կարելի չի եղել աղբյուրների չգոյության պատճառով:

Հեղինակը խոստանում է աշխատության երրորդ մասում տալ Ուրարտուների պատմությունը:

Հայաստանի պատմության հնագույն շրջանը բոլորովին այլ լույսի տակ է ներկայանում մեզ, երբ պարզվում է, որ այդ երկրամասում նախքան Արմենիայի, Խալդ-Ուրարտուների պատմական թատերաբեմ հանդես գալը կազմավորվել են քաղաքական իշխանություններ, որոնք սոցիալ-տնտեսական զարգացման որոշ աստիճանի են հասել և ունեցել համապատասխան կուլտուրա: Մասնավորաբար Խուրրի-Միտանիների պետությունը, որ երկրորդ հազարամյակին Նախասիայում Բաբելոնին և Եգիպտոսին առընթեր երրորդ մեծ պետությունն է եղել:

Ուսումնասիրությունը նոր խոսք է ասում այն տեսակետից, որ եթե մինչև այժմ Հայաստանի գրավոր պատմությունը ընդունվում էր 10-9-րդ դարերից (ն. Ք. թ.), ապա ներկա ուսումնասիրությամբ այդ ժամանակաշրջանը դարեր հետ է տարվում, և պատմական հեռանկարի ընդարձակումով հնարավորություն է բացվում նոր ուսումնասիրությունների հիման վրա պարզելու մի շարք խնդիրներ, որոնք վերաբերում են Հայաստանի պատմության հնա-

գույն շրջանին, ինչպես օրինակ՝ տոհմային հասարակարգի քայքայման, գյուղական համայնքի առաջացման, հայ էթնոսի և հայոց լեզվի կազմավորման խնդիրները:

Բացի այս, եթե մինչև այժմ նախարմենյան շրջանում խոսում էր խալդ-ուրարտական կուլտուրայի մասին, ապա ներկա ուսումնասիրությունը պատմական հեռանկարի ընդարձակման հետ դնում է նախաուրարտական շրջանում գոյություն ունեցող կուլտուրաների պրոբլեմը: Այսպես նոր հորիզոններ է բաց անում խալդ-ուրարտական շրջանը ուսումնասիրողների համար:

Բավական է նշել այս մի քանի խնդիրները՝ ցույց տալու համար ուսումնասիրության արժեքն ու նրա տպագրության անհրաժեշտությունը:

Պրոֆ. Ա. Խաչատրյանի ներկա ուսումնասիրությունը, որը այս բնագավառում ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁՆ Է, զերծ չէ թերություններից:

Եթե մի շարք բացեր հասկանալի են դառնում համապատասխան նյութի պակասությամբ, ապա վիճելի հարցերին տրված լուծումն ու բացատրությունները պայմանավորվում են հեղինակի ոչ ճիշտ դիրքավորումով:

Անշուշտ, հետագայի քննադատությունն իր խոսքը կասի ուսումնասիրության մասին: Մենք անհրաժեշտ ենք համարում մատնանիշ անել մի քանի խնդիրներ:

Հեղինակի մեթոդոլոգիան էմպիրիզմն է: Սրանով է բացատրվում այն նկարագրական մեթոդը, որին նա հետևում է իր ուսումնասիրության այս մասում: Նրան հաջողվում է փաստեր տալ ընթերցողին, ինչպես և ընդլայնել պատմական հեռանկարը: Սակայն, խնդիրը նրանում չէ միայն, որ փաստերի նկարագրական հիշատակումը կատարվեր, այլ կարևորն այն էր, որ նրանց ներքին սերտ հարակցությունը հայտնաբերվեր, և նյութի թույլ տված սահմաններում բացատրությունը տրվեր: Եվ եթե այդ հնարավոր չէր, ապա ոչ թե առաջադրվեր այդ խնդիրները որպես լուծված, այլ դրվեին նրանք պրոբլեմատիկ: Այս կերպ միայն ուսումնասիրությունը կկարողանար մեծապես օժանդակել նոր լուսաբանություն տալու այն խնդիրներին, որոնց մասին խոսեցինք վերև:

Ուսումնասիրության մեջ հեղինակը մեզ ցույց է տալիս, թե ինչպես, սկսած երկրորդ հազարամյակից (ն. Ք. թ.), նախուրարտյան ժամանակաշրջանում պետություններ են կազմավորվել և ժամանակի ընթացում անկման են դիմել: Սակայն, ինչպե՞ս են այդ կազմավորվող պետությունները անկման դիմել, անլուծելի է, և կամ տրված պատասխանը չի բավարարում: Չժխտելով արտաքին արշավանքների արագացնող դերը տվյալ խնդրում, անշուշտ, չի կարելի համաձայնել հեղինակի այն դրույթին, ըստ որի՝ այդ անկումները տեղի են ունեցել բացառաբար արտաքին արշավանքների պատճառով: Եթե ձեռքի տակ եղած նյութերը հնարավորություն չեն տալիս այդ երևույթների ավելի խորը, ներքին շարժառիթները հայտնաբերելու, և այդ

այդպես է, ապա նման դեպքերում խնդրի պրոբլեմատիկ ձևով թողնելը, կարծում ենք, ավելի նպատակահարմար կլիներ:

Դժվար խնդիր է, անշուշտ, փոխանցվող կուլտուրաների հարցի լուծումը, մանավանդ այնպիսի պատմական մի ժամանակաշրջանում, որից սակավաթիվ արձանագրություններ են պահպանվել, և դեռևս գիտական մեթոդներով այդ պետությունների գրված երկրամասերում շատ չնչին չափով պեղումներ են կատարվել, և հայտնաբերված նյութերը խալդ-ուրարտական շրջանին համար ընդունվել են մինչև այժմ: Բազմաթիվ հարցեր են առաջանում այստեղ ուսումնասիրողների առաջ խալդ-ուրարտական կուլտուրայի թողած պատմական հուշարձանների լուսաբանման ուղղությամբ: Հեղինակը, ինչպես ասացինք վերև, խալդ-ուրարտական պատմությունը խոստանում է տալ իր ուսումնասիրության երրորդ մասում:

Այստեղ մենք հարցը դնում ենք հեղինակի ուսումասիրության նյութ դարձած ժամանակաշրջանի մասին: Էմպիրիզմը չի կարող փոխանցվող կուլտուրաների հարցը լուծել: Սխալ կլիներ մյուս կողմից կարծել, որ նախ անհրաժեշտ է նյութերի կուտակումը կատարել, ապա անցնել երևույթի բացատրության: Արդեն իսկ գոյություն ունեցող նյութի սահմաններում անհրաժեշտ է միաժամանակ աշխատել երևույթի պարզաբանման աշխատանքին ձեռնարկել, դնել պրոբլեմները, որպեսզի նշվեն հետագա ուսումնասիրությունների ուղիները:

Ահա՛ այս է, որ մենք չենք գտնում ներկա ուսումնասիրության մեջ:

Վիճելի հարց է նաև հեղինակի կողմից արդեն լուծված համարվող «Փռյուգ-արմենների» խնդիրը: Լուրջ առարկություններ են եղել վերջին ժամանակներում արմեններին որպես դրսից եկող մի ցեղ ընդունելու դեմ: Նորագույն այդ ուսումնասիրությունների կողքից չի կարելի անցնել այժմ:

Հակառակ այս թերություններին, ինչպես նշեցինք վերև, պրոֆ. Ա. Խաչատրյանի ուսումնասիրությունը ոչ թե արժեքավոր է միայն այն տեսակետից, որ հարուստ պատմական նյութ է պարունակում, այլ գլխավորաբար նրա համար, որ նա նախուրարտյան շրջանից այն կողմ նոր պատմական հեռանկար է բաց անում, և մի շարք բոլորովին նոր պրոբլեմներ են արծարծվում ներկա ուսումնասիրությամբ:

Բոլորովին խոպան հողում ակոսելը որքան դժվարին գործ է, նույնքան և շնորհակալ աշխատանք:

ԱՌԱՋԱԲԱՆ[1]

… Թե ուզում ես երգդ լսեն,
Ժամանակիդ շո՛ւնչը դարձիր:-
Կապվի՛ր նյարդով յուրաքանչյուր
Քո օրերին ու քո դարին…

Չի շղթայվի մարդու հոգին
ո՛չ մի կապով արտաքին,
Եթե դարի, ժամանակի
զրահ ունի իր հագին,
Կբարձրանա ու կկանգնի
նա հավատով անսասան
Եվ կմնա գալիք կյանքում՝
անխորտակ ու ահագին:

Եղիշե Չարենց

Պարսիկ ժողովուրդը, նրա հետ միասին նաև համայն աշխարհի կուլտուրական հասարակությունը եռանդագին պատրաստվում են մոտ ապագայում տոնելու Իրանի մեծագույն զավակի՝ հանճարեղ բանաստեղծ և խորհող Ֆիրդուսու ծննդյան հազարամյակը:

Այդ հոբելյանը, նվիրված լինելով Ֆիրդուսու կյանքին ու անմահ գործին, իրականում վեր է ածվելու մի հոյակապ հանդեսի, որը կյանքի է կոչված՝ վերագնահատելու պարսիկ ժողովրդի հանճարի ստեղծարար գործը, Իրանի անցյալի ու ներկայի կուլտուրական բոլոր արժեքները, որովհետև Ֆիրդուսին՝ որպես բանաստեղծ ու քաղաքացի, ապրել ու ստեղծագործել է իր դարին համընթաց, որովհետև նա եղել է իր «ժամանակի շունչը», կարողացել է դիտել, վերապրել ու պատկերացնել իր դարաշրջանը, ժամանակակից հասարակությունն իր կյանքի եռուզեռով, ապրումներով, մաքառումներով և իդեալներով:

Ֆիրդուսու «Շահ-Նամեի» նյութը հենց իր դարի համար արդիական չէր: Չնայած իր թեմայի ոչ արդիական լինելուն, չնայած այն հանգամանքին, որ նա իրենից հարյուրավոր և հազարավոր տարիներ առաջ եղած վիպական և պատմական իրադարձություններն է նկարագրում, այնուամենայնիվ այդ հինը, անցածը բանաստեղծի ստեղծագործության ասպեկտում վերափոխվում է, արդիականանում և ենթադրում Իրանի «բնությունը և հասարակական ձևերը, որոնք անգիտակցական եղանակով մշակված են արդեն ժո-

[1] Տե՛ս **Ֆիրդուսի**, Բանաստեղծի ծննդյան հազարամյակին նվիրված ժողովածու, Երևան, 1934, էջ V-VII):

ղովրդի երևակայության միջոցով»:

Ֆիրդուսու «Շահ-Նամեն» X դարի Իրանի հասարակական կյանքի, պարսիկ ժողովրդի քաղաքական, կուլտուրական վերածնության լիարյուն կենդանագիրն է, այդ դարաշրջանը վերարտադրող փայլուն կոթողը: Այդ իսկ պատճառով նա չի կորցնում իր գրավչությունը, և նրա արվեստն ու վիպերգությունը «շարունակում են պատճառել մեզ գեղարվեստական հաճույք և պահպանում որոշ իմաստով նորմայի և անհասանելի տիպարի նշանակություն»:

Դրանով չի սահմանափակվում Ֆիրդուսու գրական-հասարակական նշանակությունը: Հանճարեղ բանաստեղծի արվեստը համակել է իրեն ժամանակակից և հետագա պարսիկ բանաստեղծներին, ուղղություն է տվել նրանց թեմատիկայի ընտրության բնագավառում և վերջապես իր կնիքն է դրել նրանց գրական արվեստի վրա: Նրա գրական գործը շուտով ազգային շրջանակներից դուրս է գալիս և թևակոխում նորանոր աշխարհներ: Մերթ գրական ուղիներով նրա «Շահ-Նամեն» թափանցում է մերձավոր և հեռավոր երկրներ, տեղ գտնում նոր միջավայրում, հարմարվում, թարգմանվում և առաջացնում այստեղ հետևորդների շարքեր, մերթ բանավոր ասմունքի միջոցով մերվում-ձուլվում նոր միջավայրի ֆոլկլորի հետ ու ազգայնանում: Միջին դարերից սկսած՝ Ֆիրդուսին և իր «Շահ-Նամեն» ճանապարհորդում են երկրից երկիր, և ներկայումս չկա կուլտուրական մի ազգ, որ թարգմանած չլինի «Շահ-Նամեն» ամբողջապես կամ հատվածաբար: Ֆիրդուսին այսօր արդեն սոսկ պարսկական հանճար չէ. այսօր նա պատկանում է համայն մարդկության:

Ֆիրդուսին պատկանում է նաև մեզ՝ հայերիս: Ինքը հանճարեղ բանաստեղծը, նրա «Շահ-Նամեն» ու «Երգիծանքը», նրա կերտած հերոսներն ու տիպերը հանրածանոթ են հայ ընթերցողին, սիրված են և հարազատացած հայ աշխատավոր գյուղացու միջավայրում: «Շահ-Նամեի» առասպելական-վիպական մոտիվները Ֆիրդուսուց շատ առաջ և հետո բանավոր տարածված են եղել Հայաստանում և արձանագրվել են հայ մատենագիրների կողմից. «Շահ-Նամեի» հետևողությամբ, նրա տաղաչափությամբ կերտվել են բանաստեղծական քերթվածներ, նրա ոճերն ու ասույթները, դրական և բացասական տիպերը չափանիշ են եղել մեր գրականության մեջ բարոյագիտական հասկացողությունների և պատկերավոր մտածողության, և վերջապես նրա կարևորագույն պոեմների մեծ մասը XIX դարի սկզբներից մինչև օրս մի քանի անգամ չափածո և արձակ թարգմանվել են հայերեն և ընթերցող հասարակության սեփականություն դարձել[1]:

Կուլտուրայի պատմության ինստիտուտը, հրապարակելով Ֆիրդուսուն նվիրած այս ժողովածուն, բնավ հավակնություն չունի պնդելու, որ սրանով

[1] **Գ. Լևոնյան**, Ֆիրդուսին հայ գրականության մեջ, տե՛ս այս ժողովածուն, երես, 129:

սպառել է այն ամենը, ինչ կապ ունի հայ-իրանական կուլտուր-պատմական և կուլտուր-կենցաղային փոխադարձ հարաբերությունների հետ, որ հիմնովին լուսաբանել է անգամ բանաստեղծի կյանքի և ստեղծագործության հետ առնչություն ունեցող խնդիրները՝ նրա առաջխաղացումը մեր անցյալ և ներկա կուլտուրայի բնագավառում, նրա մուտքն ու արձագանքը մեր գրականության և ֆոլկլորի մեջ: Այդ խնդիրները քիչ թե շատ լրիվ լուսաբանելու համար հարկ կլինի լույս ընծայելու մի քանի հատոր գիտահետազոտական ուսումնասիրություններ: Ինստիտուտի նպատակն ավելի սահմանափակ է եղել: Նա ցանկացել է միայն որպես նմուշ հետագայում կատարելիք ուսումնասիրությունների վերլուծության ենթարկել մի երկու մասնակի խնդիրներ՝ կապված Ֆիրդուսու «Շահ-Նամեի» և վերջինիս աղբյուրների հետ, այն է՝ «Իրանի առասպելական-վիպական մոտիվները «Շահ-Նամե» պոեմում և հայ մատենագրության ու ֆոլկլորի մեջ», ապա «Շահ-Նամեի» ոտանավորի չափը հայ բանաստեղծության մեջ»: Ժողովածուի մեջ տեղ չեն գտել մի շարք կարևորագույն խնդիրների վերլուծություններ, օրինակ՝ չեն արժեքավորվել «Շահ-Նամեի» մի քանի պոեմների հայերեն թարգմանությունները, որոնք հայտնի են մեր ընթերցողներին, չեն լուսաբանվել նաև Ֆիրդուսու կյանքի և ստեղծագործության արձագանքները հայոց նոր գրականության մեջ, մանրազնին չեն հետազոտված «Շահ-Նամեի» մոտիվների առկայությունն ու ազդեցությունը մեր ֆոլկլորի, հատկապես «Սասնա ծռեր» ժողովրդական վեպի վրա և այլն: Նշածս բացերով հանդերձ, այնուամենայնիվ, այս ժողովածուն ֆիրդուսագիտության առաջին ընդարձակ փորձն է մեր գիտական գրականության մեջ, մի փորձ, որն ամփոփ գաղափար է տալիս հանճարեղ բանաստեղծի կյանքի ու գործի, դարաշրջանի քաղաքական, հասարակական-տնտեսական և կուլտուրական հարաբերությունների մասին, արծարծում է մի շարք կարևորագույն հարցեր՝ կապված Ֆիրդուսու այն ֆոլկլորային աղբյուրների հետ, որոնք զուգահեռներ ունեն հայ մատենագրության և ֆոլկլորի մեջ, բնութագրում են բանաստեղծի ստեղծագործական եղանակները, և որպես նմուշ՝ գիտական հասարակության ուշադրությանն է հանձնվում հայ-իրանական վեպի մինչև օրս անհայտ մի պատում:

Տոգորված այն վառ գիտակցությամբ, որ ներկա ժողովածուն էլ մի դուզնաքյա (=համեստ) նպաստ է հարուստ ֆիրդուսագիտության, ինստիտուտը վստահ հրապարակում է այն:

Թո՛ղ այս ժողովածուն լինի պարսիկ և հայ ժողովուրդների անցյալի և ներկայի բարեկամական հարաբերությունները, կուլտուրական կապն ու մերձեցումն ամրապնդող օղակներից մեկը, թո՛ղ նա լինի մի համեստ պսակ այն հազարավոր պսակների մեջ, որոնք դրվելու են իր «ժամանակի շնչով» ապրող, իր «դարը» գեղարվեստորեն երգող, պարսիկ ժողովրդի և համայն մարդկության մեծագույն զավակներից մեկի՝ հանճարեղ բանաստեղծ Ֆիրդուսու հոյակերտ արձանի վրա:

ԱՐՏԱՇԱՏԻ, ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ԵՎ ԴՎԻՆԻ ՊՐՈԲԼԵՄԸ

(Մի խնդիր պատմական Հայաստանի ֆեոդալիզմի վաղ շրջանից)

Համաձայն գոյություն ունեցող տեսակետների՝ պատմական Հայաստանում ֆեոդալական հարաբերությունների որպես վերջնական ձևավորման ժամանակաշրջան ցույց են տրվում Տիգրան II-ի և կամ Հայ Արշակունիների դինաստիայի առաջացման թվականները, այսինքն՝ մեր թվականության առաջին դարի երկրորդ կեսում կամ մի դար նրանից առաջ[1]:

Պատմական Հայաստանում ֆեոդալական հասարակարգի վերջնական ձևավորման խնդիրը սերտորեն կապված է ֆեոդալական հարաբերությունների աստիճանական զարգացման խնդրի լուսաբանման հետ, մի խնդիր, որ կարոտ է հատուկ ուսումնասիրության:

Անհրաժեշտ է ընդգծել, որ տոհմային հասարակարգի քայքայման և ֆեոդալական հարաբերությունների վերջնական ձևավորման միջև ընկնում է փոխանցման երկար մի ժամանակաշրջան, որի անտեսումը պատմական հեռանկարի մեջ շփոթություն կառաջացներ: Բացի այս՝ հարկավոր է նշել նաև այն, որ ֆեոդալիզացիայի պրոցեսը Հայաստանի տարբեր տերիտորիալ շրջաններում զարգացման տարբեր աստիճաններով է ընթանում: Իրավացի է Մարկվարտը, երբ խոսում է ֆեոդալական հասարակարգի՝ պատմական Հայաստանում հաստատման մասին, շեշտը դնում է «մասնավորաբար Հայաստանի հարավի» վրա. անհրաժեշտ է ավելացնել, որ Հայաստանի միջնաշխարհը ժամանակագրական տեսակետից հաջորդում է հարավին և հետագա զարգացման ընթացքում կենտրոնական դիրք է գրավում:

Եթե ֆեոդալական հասարակարգի հաստատման ժամանակաշրջանի մասին թռուցիկ ակնարկներ եղել են, ապա պատմական Հայաստանում վաղ ֆեոդալիզմի տևողության հարցը չի դրվել մինչև այժմ: Ֆեոդալիզմի զարգացման խնդրի պարզաբանման մեջ վճռական դեր է կատարում քաղաքի զարգացման, քաղաքի և գյուղի միջև առաջացող հակասությունների հարցի լուսաբանումը: Քաղաքի զարգացումը, ֆեոդալական արտատնտեսական շահագործման դիալեկտիկական միասնության մեջ վերցրած, պայմանավորում է իր հերթին այդ շահագործման չափն ու եղանակը: Իսկ շահագործման եղանակն իր արտահայտությունն է գտնում հողային ռենտայի երեք աստիճաններում՝ աշխատավճար, արդյունավճար և փողային ռենտաներում:

---

[1] **Н. Адонц**, Армения в эпоху Юстинина, СПб., էջ 406. **Jos. Markwart**. Súdarmenien u. die Tigrisquel'en, Wien, 1930, էջ 56: Համաձայն չենք Ի. Ջավախովի այն տեսակետին, որ Ստրաբոնի ժամանակաշրջանում (առաջին դար) տեսնում ենք տոհմային հասարակարգի քայքայման պրոցեսը, և իրավացի է ակադ. Ն. Յա. Մառը, երբ առարկում է Ջավախովի ուսումնասիրության մասին իր գրած քննադատական հոդվածում, որ տոհմային հասարակարգի քայքայման պրոցեսը սկսվել էր շատ վաղ ժամանակներում (հմմտ. ЖМНПр., май, էջ 200-223):

Ընդունելով վաղ ֆեոդալիզմի, Հայաստանի պայմաններում նախարարական կարգերի լրիվ ձևավորումն առաջին Հայ Արշակունիների շրջանում՝ հարց է առաջանում՝ ինչպե՞ս է ընթացել այդ ժամանակաշրջանում քաղաքի աստիճանական զարգացումը: Այս հարցի պարզաբանումը հնարավոր կդարձնի մոտավոր կերպով որոշելու վաղ ֆեոդալիզմի վերջնավորության դարաշրջանը և ֆեոդալիզմի առաջին էտապով պայմանավորվող հետագա զարգացման էտապի սկզբնավորումը:

Մինչև այժմ տիրապետող կարծիքն այն է, որ Հայ Արշակունիների դինաստիայի ժամանակաշրջանում (65-387 կամ 428 թթ.), այսինքն՝ այն ժամանակաշրջանը, որն ընկնում է ֆեոդալական կարգերի հաստատման ժամանակաշրջանից անմիջապես հետո, պատմական Հայաստանն ապրել է քաղաքային կյանքի բուռն զարգացման շրջան[1]:

Ըստ այդ տեսակետի՝ Հայ Արշակունիների դինաստիայի շրջանում պատմական Հայաստանում գոյություն են ունեցել 9-10 զարգացած քաղաքներ: Ավելին՝ «50-70 տարվա ընթացքում կառուցվել են երեք խոշոր քաղաքներ՝ Արտաշատ կամ Ներոնեա, Մծուրն և Վաղարշապատ»[2]:

Ստորև մանրամասն քննության կառնենք այն տեսակետը, թե այդ ո՞ր աստիճանի է համապատասխանում պատմական իրականության: Առայժմ նշենք այն, որ այս տեսակետով է պայմանավորվում Հայաստանի պատմության զարգացման ընթացքի մասին գոյություն ունեցող ավանդական կոնցեպցիան: Ըստ այդ կոնցեպցիայի՝ Հայաստանի պատմության զարգացման պրոցեսն ընթացել է անկումային և վերելքային կորագծով, այսպես՝ սկսած առաջին դարից մինչև IV դարի 60-ական թվականները՝ վերելք, IV դարի 60-ական թվականներին՝ խոշոր անկում, V և VI դարերի թեթև աշխուժացումից հետո՝ VII, VIII դարերում՝ անկում, IX-XI դարի առաջին կեսը՝ զարգացման ուժեղ թափ, սրանից հետո՝ մի այնպիսի անկում, որ XIII դարին, Լեոյի խոսքով ասած, Հայաստանի ազգաբնակությունը «վայրենացման էր քշում»:

Հայտնի է, սակայն ոչ դեռևս հանրածանոթ այն փաստը, որ ակադ. Ն. Յա. Մառը, հատկապես Բագրատունիների մայրաքաղաք Անիում իր գործակիցների հետ երկար տարիների ընթացքում կատարած պեղումների շնորհիվ հեղաշրջում առաջացրեց Հայաստանի պատմության XI-XIV դարերի միջև ընկնող ժամանակաշրջանի մասին:

Հայտնի է այդ փաստը, սակայն ոչ դեռևս հանրածանոթ, քանի որ ֆեոդալական շրջանից ստացված ժառանգությունը ծանր է նստած, մանավանդ որ այդ ժառանգության բուրժուական վերամշակումը չէր կարող իրեն

[1] Ավանդական պատմագրության այդ տեսակետը խտացած ձևով հանդես է եկել մեր օրերին Լեոյի՝ «БСЭ»-ում տպագրված «Армения» հոդվածում և պրոֆ. Հ. Մանանդյանի՝ "О торговле и городах Армении" (Երևան, 1931) ուսումնասիրության մեջ:

[2] Проф. **Я. А. Манандян**, О торговле и городах Армении, стр. 94.

զգացնել չտալ: Հակառակ այն բանին, որ ակադ. Ն. Յա. Մառը մոտ երեսուն տարի առաջ խնդիր էր դնում այդ ժամանակաշրջանի Հայաստանի պատմության մասին տիրող կոնցեպցիայի հիմնական վերանայման, մեր օրերի պատմաբաններն ընթանում են մաշված ուղիներով…:

Ակադ. Ն. Յա. Մառի և նրա գործակիցների Անիում կատարած աշխատանքները ոչ միայն արժեքավոր են հայ ճարտարապետության և կուլտուրայի կարևորագույն մի շրջանը լուսաբանելու և հայ ճարտարապետության զարգացման օրենքները հայտաբերելու (հիշենք միայն ճարտարապետ Թ. Թորոմանյանի՝ Զվարթնոցի տաղանդավոր վերակառուցումն ու Գագիկ I թագավորի տաճարը Անիում), այլև այդ աշխատանքներն արժեքավոր են նրա համար, որ նրանք նոր լույս սփռեցին Անիի պատմության վրա, խնդիր դրին XI-XIV դարերի պատմության գիտական ուսումնասիրության և հիմքից խարխլեցին ավանդական կոնցեպցիան:

Անիում կատարված պեղումները տիրող կոնցեպցիայի շղթայի վերջին օղակին էին վերաբերում: Խնդիր է դրվում ո՞ր աստիճանի պատմական հիմք ունի կոնցեպցիայի սկզբնավորող օղակը:

Ճի՞շտ է արդյոք այն պնդումը, թե ֆեոդալական Հայաստանում առաջին և երկրորդ դարերում ուժեղ տեմպով տեղի է ունենում քաղաքների զարգացումը, և չորրորդ դարում՝ մինչև պարսից թագավոր Շապուհ II-ի արշավանքը (363 թ.), արդեն Հայաստանում գոյություն ունեն բազմաթիվ քաղաքներ: Պատմական իրականության համապատասխանո՞ւմ է այն պնդումը, թե IV դարի 60-ական թվականներից սկսում է ուժեղ անկումային շրջան Հայաստանի տնտեսական զարգացման մեջ: Ահա այն հիմնական խնդիրը, որ առաջադրում ենք քննել ներկա ուսումնասիրության մեջ:

* * *

Նախ նկատենք, որ պատմական տվյալ ժամանակաշրջանում խոսված քաղաքներից ոչ մեկի մասին չունենք նյութական կուլտուրայի տվյալներ. այդ քաղաքներից դեռ ոչ մեկը պեղման չի ենթարկվել[1]: Քաղաքների զարգացման մասին հանված եզրակացությունները բացառաբար հիմնված են մատենագրական վկայությունների և հնագույն շրջանից մեզ հասած քարտեզների նշած ճանապարհների ուսումնասիրության վրա: Իսկ մատենագրական մի երկու հատուկտոր վկայությունները խոսում են միայն այդ քաղաքներում կատարված առևտրի մասին:

Արևելքի և Արևմուտքի միջև կատարված տրանզիտային առևտրի կարավանային ճանապարհների ուղղությունները Մերձավոր Արևելքի տարբեր երկրամասերում և տարբեր դարաշրջաններում դեռևս լրիվ ուսումնասիրված

[1] 1930 թ. Հնությունների պահպանության կոմիտեի կողմից հին Վաղարշապատում կատարված պեղումները վայրի ճշտման նպատակ են ունեցել: Արդյունքները դեռ չեն հրատարակված:

չեն: Այս հարցի պարզաբանման համար Իսիդորի, Պտղոմեոսի և Պնտինգերյան անունով ծանոթ աշխարհագրական հնագույն քարտեզները տարբեր դարաշրջանների մատենագրական վկայությունների օժանդակությամբ արժեքավոր աղբյուրներ են:

Հայաստանի դերն այդ տրանզիտային առևտրում պարզելու տեսակետից էական և դեռ լուսաբանության կարոտ հարցն այն է, թե Պարսկաստանի հայտնի առևտրական կենտրոն Էկբատանից դեպի Սելևկիա-Մծբին և Էկբատան-Արտաշատ ճյուղավորվող երկու ճանապարհներից ո՞րն է պատմական տարբեր դարաշրջաններում գերակշռող դեր կատարել:

Ե. Տ. Վարմինգտոնն ու Ալֆ. Սարասենն իրենց նորագույն ուսումնասիրություններով[1] ցույց են տալիս, թե ինչպիսի խոշոր ազդեցություն ունեցավ Մոնսուն Քամիի գյուտը Արևելքի և Հռոմեական կայսրության միջև գոյություն ունեցող առևտրական հարաբերությունների աշխուժացման համար: Քամիի այդ գյուտը հնարավոր դարձրեց Հնդկաստանի հետ ծովային ճանապարհով աշխույժ հարաբերության մեջ մտնել: Վարմինգտոնի ուսումնասիրության գրախոսը գրում է.

«Հազիվ թե չափազանցություն լինի, երբ Մոնսուն Քամիի գյուտը և նրանով Հնդկաստանի հետ նպաստավոր ծովային հաղորդակցությունն իր տնտեսական ազդեցությամբ համեմատենք Եվրոպայի և Ամերիկայի միջև բացված առևտրական հաղորդակցության հետ»[2]:

Արևելքի և Արևմուտքի միջև կատարված տրանզիտային առևտրի հիմնական կարավանային ճանապարհների որոշման համար այս հանգամանքը պետք է անպայման նկատի ունենալ. գլխավորաբար Պարսից ծոցի միջոցով Հնդկաստանի հետ հաստատված այդ ծովագնացությունը մեծագույն ազդակն էր դառնում Մերձավոր Արևելքի հարավում կարավանային ճանապարհների զարգացման: Եթե Հնդկաստանի հետ կատարվող փոխանակությունը Հռոմեական կայսրության ժամանակաշրջանից ծովային ճանապարհների ուղղությունն էր ստանում, ապա Չինաստանի հետ առևտուրը, որն աշխուժանում էր նույնպես առաջին դարում, կատարվում էր Միջին Ասիայի կարավանային ճանապարհներով: Այստեղ էական հարցը կայանում էր նրանում, թե այդ Միջին Ասիայի կարավանային ճանապարհը, անցնելով Իրանի բարձրավանդակից, հարավայի՞ն գիծն է գերիշխող դիրք գրավում, թե՞ հյուսիսայինը: Նկատի ունենալով Հյուսիսային Միջագետքի կատարած պատմական դերը՝ սխալված չէինք լինի, եթե ընդունեինք հարավային գծի առաջնությունը: Կա և մի այլ հանգամանք. կարավանային առևտրական այդ ճանապարհներն օգտագործվել են միաժամանակ որպես

[1] **E. H. Warmington**, The Commerce befwcen the Roman Empire and Jndia Cambrifdge, 1928. **Alf. Sarasiu**, Der Haudel zwischeu Jndien u. Rom z. Z. d. rnönischen Kaisr, Basel, 1930.

[2] Orient. Lit. Zeifung., Jahrg. 35, № 1, 1932.

ռազմական ճանապարհներ: Այս տեսակետից ուշագրավ է Մարկվարտի այն դիտողությունը, որ նա անում է հնագույն այդ առևտրական ճանապարհների վրա գտնվող կայանների մասին:

“Ragonia”-ն (Ռագոնիան) կենտրոնական դիրք ունեցող մի վայր պետք է ընդունել հայկական թագավորության բաժանումից առաջ (387 թ.), և այդ վայրը Բագավանն էր (այժմյան Ուչ-Քիլսեն, երեք եկեղեցիները, ոչ հեռու Դիադինից), որն ինչպես և Արտաշատը երկու աշտարակներով նշանակված է (քարտեզի վրա), և այս կերպ ցույց է տալիս կայազորներով ամրացած մի վայր լինելը…»:

«Որ Բագավանը շատ կարևոր մի կայան էր հունական սահմանից դեպի Վաղարշապատ, ինչպես և Արտաշատ գնացող ճանապարհի վրա, որոշակի երևում է Ագաթանգեղոսից (§§ 817-819), և որ այն մի շատ կարևոր ստրատեգիական պունկտ էր…, երևում է Փավստոս Բուզանդի (V, Դ և V, ԽԳ), ինչպես և Ամմիանոսի վկայություններից (29, 1.3)»[1]:

Առայժմ նշենք միայն այն, որ Պևտինգերյան անունով հայտնի քարտեզի վրա ցույց տրված կարևոր բոլոր կայանները կրում են Արտաշատի և Բագավանի նման այդ երկու աշտարակների նշանը: Իհարկե, այս չի նշանակում, որ այդ բանակատեղիի նշան կրող բոլոր կայանները միշտ մնացել են որպես բանակատեղեր, և ոչ էլ այն, որ այս ճանապարհներն օգտագործվել են միայն որպես ռազմական ճանապարհներ: Այստեղ մենք մատնանիշ ենք անում միայն այն հանգամանքը, որ անհրաժեշտ է զգույշ լինել այդ ճանապարհների և մեր նշած այդ ձևի կայաններից ընդհանրապես՝ հանելու այնպիսի եզրակացություններ, որոնք տվյալ երկրամասի տնտեսական կյանքի զարգացման հետ սերտ առնչություն ունեն, և երբեք աչքաթող չանել պատմական Հայաստանի տնտեսության զարգացման վերին աստիճանի դանդաղ պրոցեսը:

Առաջին դարից մինչև հինգերորդ դարը, որքան առայժմ հայտնի է, պատմական միակ ուղղակի վկայությունը ֆեոդալական Հայաստանի առևտրական հարաբերության մասին առաջին դարի սկզբից Ստրաբոնի վկայությունն է. նկարագրելով Պոնտոսի Կոմանա քաղաքի կրոնական տոների առթիվ տեղի ունեցած առևտրի և նրա հետ պրոստիտուցիայի մեծ համեմատություններ ստացած լինելը՝ հայտնում է.

«Կոմանայում ազգաբնակությունը շատ է (լավ բնակեցված է), և մի կարևոր առևտրական վայր է Հայաստանից եկող առևտրականների համար»[2]:

Ուղղակի վկայություններ ունենք, ինչպես կտեսնենք, Արտաշատ-Դվի-

---

[1] **Jos. Markwart**, Die Entstehung d. arm. Bistümer, Rom, 1932, p. 176.

[2] **Ստրաբոն**, XII, 3, 36:

նի, ինչպես և Արշամաշատի մասին արդեն հինգերորդ և վեցերորդ դարերի մասին:

Անշուշտ, ուղղակի վկայությունների բացակայությունը դեռ չի նշանակում, որ Հայաստանը՝ որպես տրանզիտային երկիր, Արևմուտքի և Արևելքի առևտրական հարաբերություններում իր դերը չի ունեցել: Խնդիրը կայանում է նրանում, թե ի՞նչ աստիճանի էր այդ առևտուրը խնդրո առարկա ժամանակաշրջանում, և որ, ամենակարևորն է, ի՞նչ եզրակացություններ պետք է հանել այդ տրանզիտային առևտրից:

Ֆեոդալական Հայաստանի քաղաքների զարգացման մասին, անշուշտ, անուղղակի կարևոր վկայություններից մեկը Հայաստանից արտածված ապրանքների մասին եղած տեղեկությունները կարող էին լինել: Հայաստանի ֆեոդալիզմի վաղ շրջանի մասին մինչև այժմ մեր ունեցած տեղեկություններն այս առթիվ չեն խոսում հօգուտ արդյունագործական ապրանքների:

Որքան հայտնի է, այդ մասին եղած վկայությունները վերաբերում են առաջին դարի երկրորդ կեսին: Պլինիոսն է, որ հանրագիտարանի նշանակություն ունեցող իր «Naturalis Historia» աշխատության մեջ խոսում է Հռոմում Հայաստանից ստացված նյութերի մասին:

Laserpetium (Լազերպետիում) կոչված բույսը, որի (լազեր) հյութը բժշկության համար էր գործածվում, ստացվում էր Հռոմում Սյուրենյան գավառից, սակայն իր ժամանակ այլևս այնտեղից չէր ստացվում, «որովհետև կապալառուները, որոնք արոտավայրերը վարձում էին, անասունների կերն ավելի բարձր էին գնահատում, ուստի և այդ բույսը ոչնչացնում էին»:

«Երկար ժամանակից ի վեր մեզ մոտ Պարսկաստանում, Մարաստանում և Հայաստանում, առատ բուսնող լազերից բացի, ուրիշը չի մուծվում…»[1]: «Մի ուրիշը նույնպես բժշկության մեջ գործածված, և որը Կապադովկիայում և Հայաստանում է լինում, անդամանտիս բույսն է»[2]: Ապա գալիս են ներկի համար Հայաստանից ներմուծված քարերի մասին եղած վկայությունները: «Լավագույն Chrysocolla-ն գտնվում է Հայաստանում, մի երկրորդ տեսակը՝ Մակեդոնիայում, և ամենից շատը մատակարարում է Սպանիան»: Ըստ որակի՝ ֆունտի արժեքն է 5, 7, և 13 դինար[3]: Արմենիումը, որ բժշկության մեջ է գործածվում, ստացվում է Հայաստանից, իսկ արժեքի մասին կարդում ենք. «… Ֆունտն արժեր միջին հաշվով 30 սեստերն, սակայն Սպանիայում գտնըված ավազը, որ նույն դերն էր կատարում, արժեքը 6 դինարի է իջեցնում»[4]: Բուրդը ներկելու համար գործածվող alumen (ալումեն) քարը ձեռք է բերվում

[1] **Plin.**, XIX, 15.

[2] Նույն տեղում, XXIV, 102:

[3] Նույն տեղում, XXXIII, 27:

[4] Նույն տեղում, XXXV, 28:

Սպանիա, Եգիպտոս, Հայաստան, Մակեդոնիա, Պոնտոս, Աֆրիկա, Սարդինյան կղզիների վրա, Մելոսում և այլն, սակայն լավագույնը հիշատակվում է եգիպտականը, ապա Մելոսից ստացվածը[1]: Երկաթը սրացնող քարերից ջրով գործածվողներից լավագույնները Նաքոյանից ստացվածներն են, մինչ հայկականները երկրորդ տեղն են գրավում»[2]:

Հայաստանից ստացված ամոմի մասին նույնպես առաջին դարի հեղինակ բժիշկ Պեդանի Դիոսկորետից ունենք վկայություն, որը հայտնում է, թե լավագույնը Հայաստանի ստացվածն է[3]:

Ահա այն պատմական տեղեկությունները, որոնք ունենք ֆեոդալիզմի վաղ շրջանում Հայաստանից արտածված նյութերի մասին:

Անտարակույս, Հայաստանից կատարվող տրանզիտային առևտրի գլխավոր օբյեկտներն այս դեղաբույսերով և քարերով չէին սահմանափակվում. սրանք կարող են վկայություններ լինել միայն այն մասին՝ ցույց տալու համար, թե Հայաստանի ֆեոդալիզմի վաղ շրջանում դեռևս որքան նախնական վիճակում էին գտնվում հումույթի վերամշակման գործը, արդյունագործությունը: Հայաստանի տրանզիտային առևտրի հիմնական օբյեկտները հեռավոր Ասիայից ստացված այն նյութերն էին, որոնք առհասարակ Մերձավոր Արևելքում որպես տրանզիտային առևտրի նյութ էին հանդես գալիս, և այս դրությունը դարեր շարունակվել է: Այս չի նշանակում, որ Հայաստանում պատմական տարբեր դարաշրջաններում մենք չունենք արդյունագործության զարգացման երևույթը, ինչ որ IX դարից սկսած արաբական պատմիչներն են վկայում Հայաստանից արտածված արտադրույթների, մասնավորաբար տեքստիլ արդյունագործության վերաբերյալ գործվածքների մասին, սա արդեն պատմական այլ դարաշրջանում երևան եկող մի երևույթ է: Անհավանական չէ, որ խնդրո առարկա ժամանակաշրջանում գոյություն ուներ արդյունագործական այդ ճյուղի տեղական պահանջներին բավարարող նախնական ձևը:

Եթե տրանզիտային առևտուրը ազդակներից մեկն է տվյալ երկրամասի ներքին շուկայական հարաբերությունների զարգացման, ապա չի կարելի ընդունել, որ նա քաղաքների զարգացման խնդրում որպես վճռական դեր կատարող է հանդես գալիս: Եվ սխալ կլիներ հնագույն հայ մատենագիրների մոտ գործածված «քաղաքը» պատկերացնել հետագայի իմաստով, երբ առևտրական ճանապարհն անցել է այդ վայրից:

Անհրաժեշտ է նկատի ունենալ ասիական երկրներում տնտեսության դանդաղ զարգացումն ու դարերի ընթացքում ֆեոդալական հարաբերու-

---

[1] **Plin.**, XXXV, 52:

[2] Նույն տեղում, XXXVI, 47:

[3] **В. В. Латышев**, Изв., древн. писат., հատ. I, էջ 507:

թյունների երկարատև պահպանումը: Այս տեսանկյունով պետք է մոտենալ Մերձավոր Արևելքի մաս կազմող պատմական Հայաստանին և ըստ այնմ զգուշավոր կերպով անել մեր եզրակացությունները նրա տնտեսության զարգացման մասին: Նշելով միայն այն, որ այս տվյալներով հնարավոր չէ Հայաստանի վաղ ֆեոդալիզմի շրջանի սկզբնավորությունից քաղաքի զարգացման հիմնավորումը տալ, անհրաժեշտ է քննության առնել այն հարցը, թե ի՞նչ նշանակություն է ունեցել «քաղաքը» հնագույն հայ մատենագիրների մոտ:

Մեր կարծիքով՝ հայ հնագույն մատենագրության մեջ «քաղաք» բառին տրվել է այլ բովանդակություն: Հայաստանի վաղ ֆեոդալիզմի շրջանում քաղաքների զարգացման մասին թյուրընմռնումն առաջացել է նրանից, որ այդ բառին տրվել է հետագա շրջանի բովանդակությունը: «Քաղաք» բառի իմաստաբանական այդ տարբեր նշանակության անտեսումն առաջացրել է Հայաստանի ֆեոդալիզմի վաղ շրջանի տնտեսական կյանքի մասին պատմական իրականության ոչ համապատասխան ըմբռնումը: Անկասկած, այդ «քաղաքը» ունեցել է իր զարգացման ստադիաները. բնակավայրն իր տընտեսական զարգացմամբ փոխել է իր բովանդակությունը, սակայն «քաղաք» բառը պահպանվել է նույնը: Ուստի պատմական տարբեր ժամանակաշրջաններում միևնույն բառի տակ ունենք բոլորովին այլ բովանդակություն:

Հնագույն հայ պատմագիրների մոտ ուշագրավ վկայություններ ունենք, որոնք ցույց են տալիս այդ շրջանի «քաղաքների» շինության եղանակը: Համարյա այս բոլոր «քաղաքներն» ունեն միջնաբերդ, շրջապատված են պարիսպով, որի շուրջը խրամ է փորված, և կան կամուրջներ «քաղաքի» պարիսպների շուրջը: Արտաշատի և Վաղարշապատի մասին կարդում ենք Ագաթանգեղոսի մոտ.

«…Հասանել ի խելս կամրջացն առ դրունս Արտաշատ քաղաքի» :

Կամ՝ «…Կէսքն անցեալ ընդ կամուրջն Վաղարշապատ քաղաքի» (**Ագաթանգեղոս**, § 33, էջ 22, Տփղիս, 1909):

«… Եւ ետ հանել զնոսա շղթայիւք ի քաղաքէն ընդ դռան հարաւոյ, ընդ կողմն պողոտային որ հանէր ի Մեծամօրի կամուրջն, … մօտ ի պարկէն փոսին որ շուրջ զքաղաքաւն» (**Ագաթանգեղոս**, § 206, էջ 111):

Վերջին վկայությունից պարզվում է, որ պարսպով ամրացած և դռներ ունեցող Վաղարշապատ քաղաքի պարիսպների շուրջը փորված է եղել լայն խրամ, որը լցնում էին ջրով՝ պաշարման ժամանակ թշնամու մուտքն արգելելու համար:

«Քաղաքի» շինության մասին պատկերավոր խոսում է Եղիշեն (Թիֆլիս, 1913, էջ 137):

«…Եւ անդէն զտեղի առեալ նորա ի գավառին՝ բանակ բոլորէր, փոս հատանէր, պատնէշ կանգնէր, շերտավոր փակէր, ամրացուցանէր իբրեւ զքաղաք ամենայն պատրաստությամբ»:

Ղևոնդի մոտ (Ս. Պետերբուրգ, 1887, գլ. Ժ, էջ 36) կարդում ենք Աբդլ-Ազիզի (717-720) կողմից Դվինի վերաշինության մասին.

«Շինէր վերստին զքաղաքն Դուին հզորագույն և ընդարձականիստ մեծութեամբ, քան զառաջինն, և ամրացուցանէր դրամբք և դռնափակօք, անցուցանէր շուրջ զպարսպովն պարկէնս փոսից լցեալ ջուր յապաստան ամրոցին»:

Որ այդ «քաղաքները» իսկապես ամրացած վայրեր էին, ցույց են տալիս հայ մատենագրության մեջ պահպանված վկայությունները, որոնցից ամենացայտունը Մովսես Խորենացու վկայությունն է: Հնագույն պատմիչներից ամենաուշագրավ այս դեմքը, որ օգտագործել է ոչ թե միայն գրավոր վկայությունները և ժողովրդական բանահյուսությունը, այլև ըմբռնել է, այժմյան տերմինով ասած, նյութական կուլտուրայի մնացորդների արժեքը: Բուզանդի կողմից «մեծ քաղաք» անվանված (IV, ԾԵ) Երվանդաշատի մասին կարդում ենք Մովսես Խորենացու մոտ.

«Ընդ որ նեղեալ Երուանդայ, նա և ամրագունի ևս տեղւոյ եղեալ ի խընդիր՝ փոխէ զարքունիսն յարևմուտս կոյս, ի քարակտուր մի բլուր, զորով պատ առեալ Երասխայ՝ ընդդեմ Ախուրեանն հոսի գետ: Պարսպէ զբլուրն, և ի ներքսագոյն քան զպարիսպն ընդ բազում տեղիս կտրեալ զքարինսն մինչև ի յատակս բլրոյն հաւասար գետոյն, մինչև դիմել ջուրց գետոյն ի փորուածն, յրմպելեաց պատրաստութիւն: Զմիջնաբերդն ամրացուցանէր բարձր պարսպօք, և դրունս պղնձիս կանգնէր ի միջոցի պարսպին, և ելանելիս երկաթիս ի ներքուստ ի վեր մինչև զդուռնն. և ի նմա որոգայթս իմն ծածուկս ընդ մէջ աստիճանացն, որպեսզի ըմբռնեսցի եթէ ոք գաղտ ելանելով դաւել կամեցի զարքայն« (**Մովսես Խորենացի**, Բ, գլ. ԼԹ):

Մովսես Խորենացու մոտ, ըստ ավանդության, միայն Երվանդին վերագրվող այս շինությունները կատարվել էին, անշուշտ, երկար ժամանակի ընթացքում: Արշարունիքում Ախուրյանի (այժմյան Արփաչայի) և Արաքսի խառնարանից ոչ հեռու և Կամսարական նախարարական կալվածներում «մեծ քաղաք» Երվանդաշատը, ըստ Բուզանդի վկայության (Դ, գլ. ԾԵ), քանդվում և ավերվում էր Շապուհի արշավանքի ժամանակ:

«Քաղաքի»՝ որպես ամրացած վայր լինելու հասկացողությունը պարզվում է նաև նրանով, որ «քաղաքի» պարիսպները փոխաբերական իմաստով գործ են ածվում այնպիսի վայրերի համար, որոնք ոչ մի առնչություն չունեն «քաղաքի» հետ:

Այսպես՝ Բուզանդի մոտ Աշտիշատ եկեղեցու պարիսպների և Խոսրով II թագավորի տնկած և պարսպով շրջապատած անտառի մասին կարդում ենք.

«…Եւ հասել պատէին զմեծ քաղաքորմն եկեղեցւոյն Աշտիշատու» (**Փավստոս Բուզանդ**, Ս. Պետերբուրգ, 1883, Գ, գլ. Գ, էջ 7):

«… Եւ ապա զամենայն էրէս և զգազանս հրամայեաց ժողովել թագաւորն, և լնուլ զքաղաքորմսն, զի լիցին նոցա տեղիք որսոց զբօսանաց ուրախութեան թագաւորութեան նորա» (**Բուզանդ**, Գ, գլ. Ը, էջ 16):

Ավելին՝ արջառի փարախի պարիսպների մասին կարդում ենք Ագաթանգեղոսի մոտ (**Ագաթանգեղոս**, § 42, էջ 27):

«…Հայեցեալ տեսանէին ի զուարափակ քաղաքորմի միջոց, զի խոտահամբար մթերեալ էր»:

Ամուր, պաշտպանված վայրի մի այլ փաստ է այն, որ Բուզանդը զորքի բանակը նմանեցնում է «քաղաքին».

«…Վահանօք փակեալք զինքեամբք՝ իբրև զամուր քաղաք ինչ ի թիկանց լինիցի» (**Փավստոս Բուզանդ**, Ե, գլ. Ե, էջ 169):

Ավելի բնորոշն այն է, որ Բուզանդը «քաղաք» է կոչում ուղղակի որսորդական մի վայր, որ հավանաբար պարսպով շրջպատված է եղել.

«Այլ յերկրին Ապահունեաց, յոտինն մեծ լերինն Մասեաց, տեղին զայն որսասցուք. տեղւոյն՝ որում անուն կոչի քաղաք Աղիորսք» (**Փավստոս Բուզանդ**, գլ. Ի, էջ 44):

Հայտնի է, որ այդ «քաղաքների» մեծագույն մասի կառուցումը, համաձայն սկզբնաղբյուրների վկայությունների, կապվում է թագավորների անվան հետ: Այս համապատասխանում է պատմական իրականության ոչ «քաղաքի» հետագա իմաստով, այլ նրա՝ որպես ամրության, թագավորի ռեզիդենցի իմաստով, որ ժամանակի ընթացքում կարող էր քաղաքայնանալ կամ ոչ:

Այդպիսի ռեզիդենցներ էին Հայաստանի հարավում, որը տնտեսապես հարաբերաբար ավելի շուտ էր զարգացել, Արշամաշատ, Կարգատիոգերտա, հետագայում՝ միջնաշխարհում Արտաշատ, ապա՝ նույն հարավում Տիգրանակերտ, ավելի հետո՝ Մծուրն, Վաղարշապատ, Դվին: Չենք խոսում Վանի, Նախիջևանի, Արմավիրի, Երվանդաշատի մասին, որոնց վերաբերյալ վկայությունները շատ ավելի հնագույն շրջաններին են վերաբերում[1]:

Սուվերեն ֆեոդալների օրինակի վրա ամենայն հավանականությամբ ավագ նախարարներն ու թագավորական տան տոհմի անդամներն ունեցել են նաև իրենց ռեզիդենցները: Մովսես Խորենացին իր ժամանակի դրության պատկերն է տալիս, երբ նա խոսում է Արշակ II-ի կողմից Կամսարական նախարարական տան կոտորածի մասին և հաղորդում հետևյալ ուշագրավ վկայությունը.

«...Չարակնելով ագահեալ (Արշակ) յամուրն Արտագերս և ի քաղաք ոստանի նոցա Երուանդաշատ» (**Մովսես Խորենացի**, Գ, գլ. ԼԱ, էջ 295):

Ըստ Խորենացու վկայության՝ «զքաղաքն Երուանդայ և զնորին գա-

[1] Անկասկած խոշոր սխալ կլիներ, երբ այդ ձևի «քաղաքի» հիշատակությունն ընդունվեր քաղաք հետագա իմաստով:

ւառն մինչև ցկատար ձերույն մեծի» Տրդատի կողմից «պարգև» էր տրված Արշավիր Կամսարականին (**Մովսես Խորենացի,** Բ, գլ. Ղ, էջ 241):

Աղիովիտ գավառը, որ Արշակունի հայ թագավորական տոհմի բնակավայր էր դարձել, այդ գավառի Զարիշատի մասին կարդում ենք.

«Իսկ Արշակայ հանդերձ նախարարօքն իջուցեալ ի դաշտն Աղիովտի զդին Գնելոյ Թաղեաց յարքունական քաղաքին Զարիշատի» (**Մովսես Խորենացի,** Գ, գլ. ԻԳ, էջ 284):

Նման ռեզիդենցներում ազգաբնակության մուտքն արգելված լինելու և նրանց պաշտպանությունն ապահով վիճակում պահելու մասին ուշագրավ ակնարկ է Խորենացու այն վկայությունը, որ վերաբերում է «Բագարան քաղաք կռոցին»: Երվանդաշատ ռեզիդենցից քառասուն ասպարեզ հեռու հատուկ «քաղաք» է կառուցվում հեթանոսական կուռքերի համար.

«...Զի մի՛ ի գալ և ի զոհել անդ աշխարհի՝ ոչ զգուշութեամբ պահեսցի քաղաքն» (**Մովսես Խորենացի,** Բ, գլ. Խ, էջ 166):

Թագավորական ռեզիդենց այդ «քաղաքները» առաջին հերթին պաշտպանության վայրեր էին, որտեղ մեծ թվով բանակի առկայությունն անհավանական չէր: Անվերջ պատերազմական թատերաբեմ եղող Հայաստանում նման ամրությունների և համապատասխան բանակով ապահովումն անհրաժեշտություն էր: Եթե թագավորական այդ ռեզիդենցները երկրի ֆեոդալների անմիջական պաշտպանությունն էին ծառայում, ապա Հայաստանն իրենց ձեռքում պահելու ձգտողների համար անհրաժեշտ էր կառուցել նույնպես զորակայաններ:

Այս մասին ուշագրավ վկայություններ են պահպանվել Փավստոս Բուզանդի մոտ: Խոսքը վերաբերում է այն ժամանակաշրջանին, երբ Սասանյան Պարսկաստանի թագավոր Շապուհ II-ը IV դարի 60-ական թվականներին հիմնահատակ ավերել և քանդել էր Հայաստանի բոլոր ամրությունները: Այդ դեպքերից հետո Մուշեղ Մամիկոնյանը դիմում է Բյուզանդիոն հետևյալ առաջարկով.

«Խորհէր ևս ընդ իշխանսն Յունաց, և նոքօք կայսերն, թե պարտ է նոցա քաղաք մի շինել յերկիրն հայոց. ի մի մի գաւառսն, որ մին մի քաղաքս, որ երկուս երկուս ամուր պարսպաւորս զօրանիստս հաստատել ընդ ամենայն երկիրն հայոց…» (**Փավստոս Բուզանդ,** Ե, գլ. ԼԴ, էջ 198):

Հաջորդ գլխում խոսելով Բատ Սահառունիի մասին՝ վերջինս Վարազդատ թագավորին (374-377/8) հայտնում է Մուշեղ Մամիկոնյանի դիտավորության մասին: Այդ առթիվ կարդում ենք.

«… Այլ թէ ոչ աճապարեսցես, արքայ, այժմ զհայ երկիրս խորհի լնուլ քաղաքօք, և զօրանիստ առնէ աստ բնակութեան զօրացն Յունաց» (**Փավստոս Բուզանդ,** Ե, գլ. ԼԵ, էջ 199):

Վերև բերված վկայություններում ամեն ինչ պարզ ասված է. այստեղ «քաղաքի» հասկացողությունը համազոր է զորակայանի:

Մովսես Խորենացին, խոսելով Սահակ կաթողիկոսի Թեոդոսիոս կայսեր հետ ունեցած բանակցության մասին, վերջինը հայտնում է կաթողիկոսին. «Եւ հրամայեցաք քաղաք շինել յաշխարհիդ հայոց՝ յապաւինութիւն ձեզ և մերոց զօրացդ»:

Եվ իրապես կառուցվում է Թեոդոսիոսի կողմից այն բերդը, որը ժամանակի ընթացքում դառնում է Թեոդուպոլիս=Կարնո քաղաք=Քալիգալաէրզրում: Հույն Պրոկոպիոս պատմիչը մանրամասն նկարագրել է, թե ինչպես է կառուցվել Թեոդուպոլիսը: Պրոկոպիոսի վկայությունից իմանում ենք[1], որ Թեոդոսիոս կայսրը (408-450) մի բերդ է կառուցում բլուրի վրա, որը, պաշտպանված չլինելով, պարսից թագավոր Կավատը գրավում է[2]: Ապա Անաստաս կայսրը, վկայում է պատմիչը, «այնտեղ քաղաք շինեց՝ բլուրը պարըսպով պատելով, որտեղ Թեոդոսի բերդն էր, և թեպետ քաղաքը յուր անունով կոչեց, սակայն առաջին շինողի Թեոդոսիոս անունը չկարողացավ խափանել»: Ապա նկարագրում է Թեոդուպոլսո պարիսպների բարձրությունը, և հայտնում դեռևս ոչ այնքան ուժեղ ամրացած լինելը: Ապա Հուստինիանոս I կայսրն է (527-565), որ Տարա քաղաքի նման ամրացնել է տալիս Թեոդուպոլիսը, խոր խրամ է բաց անել տալիս պարսպի շուրջը, բարձրավանդակը հարթում և այդ վայրը «դարձնում է անառիկ»: Ուշագրավ է ներքին և արտաքին պարիսպների կառուցման մասին եղած վկայությունը: Բերդից մինչև առաջին պարիսպը զենք ձգելու հեռավորության վրա տարածություն է թողնվում և արտաքին պարսպի վրա եղած «աշտարակներից յուրաքանչյուրը Տարայի պարսպի նմանությամբ բերդ է դարձնում»: Իսկ հետաքրքրականը վերջավորությունն է. «Եվ այսպես տեղը դարձրեց Հայաստանում եղած բոլոր զորքի և զորավարների զորակայան և հայերին պարսից արշավանքներից ապահով դարձրեց»:

Մովսես Խորենացուն ծանոթ է Կարնո քաղաք – Թեոդուպոլիսն այն վիճակում, որ նա եղել է Հուստինիանոսի կառուցումներից հետո: Ակնբախ է Պրոկոպիոսի և Խորենացու վկայությունների նույնությունը.

«…Անդ ետեղագրեաց զքաղաքն, զորով շրջափակեալ խոր փոսիւ՝ անդնդալիր հաստատեաց, զհիմունս պատուարին. և ի վերայ բարձրաբերձ աշտարակս ահագինս շինեաց, յորոց զառաջինն Թեոդոս անուանեաց… եւ ի նմանէ և անդը շինեաց աշտարակս ժայռաւորս իբրեւ զնաւացառուկս. և առանցս գոգաւոր խորշիւք, որք ընդդէմ հային լերինն: Էապէս և ընդդէմ դաշ-

[1] **Procop.**, III, 5 (թրգմ. ռուս. С. Дестунис):

[2] Թեոդուպոլսո Կավատի կողմից գրավման մասին խոսում է Joshua the Stylite (XLVIII) իր ժամանակագրության մեջ և թվական նշում է 500/01, հմմտ. The chronicle of Joshua the Stylite, թարգմ. անգլ. W. Wright, Cambridge, 1882:

տին հիւսիսոյ, իսկ ընդդէմ արեւելից և արեւմտից կանգնեաց աշտարակս բոլորաձեւս: Եւ ի մէջ քաղաքին ի բարձրավանդակ վայրի մթերանոցս բազմապատիկս շինեաց…: Եւ այլ ջուրս ընդ յոլով տեղիս ածեալ մտոյց անյայտ գնացիւք: Եւ ելից զինու և պահապան գնդիւք զքաղաքն և անուանեաց Թեոդուպոլիս, զի յիշատակաւ քաղաքին անմահ լիցի անունն: Եւ ի վերայ ջերմն բղխեալ աղբերացն՝ յարկս ի վիմատաշ քարանց շինեաց» (**Մովսես Խորենացի,** Գ, գլ. ԾԹ, էջ 339):

Այսպես մանրամասն նկարագրվում է այն բնակավայրը, որ արաբական տիրապետության ժամանակ քաղաքայնանում էր և դառնում կարավանային առևտրական ճանապարհների համար հանգուցային կենտրոն: Պրոկոպիոսի այս վկայությունն ուշագրավ է նաև այն տեսակետից, որ նա մեզ տալիս է Էրզրումի հետագա զարգացման աստիճանական պրոցեսը. շուրջ մի դար է տևում նրա անառիկ ամրություն դառնալը, որի ընթացքում նա գերազանցորեն զորակայան էր, սակայն կոչվում էր «քաղաք» Անաստաս կայսեր ժամանակից, երբ այդ կայսրը բլուրի վրա կառուցված բերդի շուրջը պարիսպ է կառուցում:

Կարծում եմ՝ Պրոկոպիոսի այս տեղեկությունները կարող են ուշագրավ վկայություններ նկատվել նաև այնպիսի բնակավայրերի համար, որոնց մասին հայ պատմիչների մոտ բավական ուշագրավ վկայություններ են պահպանվել. խոսքը վերաբերում է մարզպանական Հայաստանի շրջանում քաղաքայնացող պատմական Դվին քաղաքի առաջացման, սակայն այստեղ մենք գործ ունենք մի այլ երևույթի հետ: Բուզանդը, պատմելով Խոսրովակերտի (Խոսրովի տնկել տված անտառը) կառուցման մասին, հայտնում է, որ Գառնի արքունի բերդից մինչև Մեծամորի դաշտը Դվին կոչվող բլուրը ձգվող անառիկ վայրում կառուցվում են արքունական ապարանքները.

«Եւ անդ շինեցին զապարանսն արքունականս, և զերկոսեան տեղիսն պարսպեալ փակեցին և ոչ կցեցին ի միմիանս վասն պողոտայի ճանապարհին» (**Փավստոս Բուզանդ,** Գ, գլ. Ը, էջ 16):

Խորենացուն ծանոթ է Արտաշատի բնակիչների Դվին փոխադրվելը.

«… Օդք ջերմայինք պղտորեալք ժանդահոտությամբ փչէին, յորմէ ոչ կարացեալ ժուժել որք յԱրտաշատն բնակեալ էին՝ կամաւ յանձն առին զփոփոխումն» (**Մովսես Խորենացի,** Գ, գլ. Ը, էջ 265):

«Քաղաքի» ստաղիալ զարգացման մասին ուշագրավ վկայություն է պահպանվել Խորենացու մոտ.

«Սա (Վաղարշակ) պատեաց պարսպաւ և զիզօր աւանն Վարդգէսի, յորում և Տիգրան Միջին յԱրշակունեաց նստոյց զհասարակ առաջնոյ գերութեան հրէից, որ եղև քաղաքագիւղ վաճառօք: Այժմ այս Վաղարշ պատեաց պարսպաւ և հզօր պատուարաւ, և անուանեաց Վաղարշապատ, որ և Նոր քաղաք»[1] (**Մովսես Խորենացի**, Բ, գլ. ԿԵ, էջ 200):

[1] Ուշագրավ է, որ Կորյունը ոչ մի անգամ *Վաղարշապատ* անունը գործ չի ածում.

Մովսես Խորենացու այս վկայության մեջ «քաղաքի» ստաղիալ զարգացման ժամանակագրական ճշտության խնդիրը կարող է խիստ կասկածելի լինել, սակայն, հարցը սրանում չէ, կարևորն է, որ մենք ունենք այստեղ քաղաքայնացող «քաղաքի» մի տիպ, որ տարբերվում է նախորդներից նախ որպես հնագույն բնակավայր, երկրորդ, որ նա Խորենացուն ծանոթ է որպես «քաղաքագիւղ վաճառօք», և երրորդ՝ որպես պարսպով ամրացած մի բնակավայր:

Ինչպես Դվինը փոխարինում էր Արտաշատին, ավելին հնագույն շրջանում նույն դերն է կատարում Վաղարշապատը: Մերձավոր Արևելքի պատմությունը բազմաթիվ նման դեպքեր ունի արձանագրած:

Ինչպես հայտնի է, առաջին դարի 50-ական թվականների ընթացքում պարթևական Պարսկաստանի և Հռոմեական կայսրության միջև մղված պատերազմների ընթացքում 59 թ. Արտաշատը հրկիզվում էր Կորբուլոնի կողմից, քիչ անց Տրդատը՝ Հայ Արշակունիների դինաստիայի առաջին թագավորը, 66 թ.՝ Հռոմից վերադարձին, Ներոնի հրահանգով և նրանից ստացած նյութական օժանդակությամբ և քարագործ վարպետներով վերաշինում էր «Հայաստանի Կարթագենը»:

Երբ 163 թ. Ստատիուս Պրոկոսի և Մարտիուս Վերոսի կողմից Հայաստանը գրավվում էր, Պրոկոսին է վերագրվում Արտաշատի երկրորդ անգամ քանդումը և նրա փոխարեն Նոր քաղաքի (Վաղարշապատ)՝ հռոմեական բանակի զորակայանի վերածումը՝ անշուշտ պարիսպներով ամրացնելով:

«Մարտիուս Վերոսը հանձնարարում էր Թուսիտիտես զորավարին Սոհմեոս թագավորը (հռոմեացիների թեկնածուն – Հ. Զ.) կրկին Հայաստանի գահի վրա բարձրացնել (164 թ.): Թուսիտիտեսը, ազգաբնակության հետ մեղմ և զգուշավոր վարվելով, հակառակ ցեղապետների ընդդիմության, Սոհեմոսին առաջնորդում էր հռոմեացիների կողմից գրաված Նոր քաղաքը»[1]:

Ուրույն տեղ է գրավում Արշակավանը, որի մասին երկար խոսում է Բուզանդը (Դ, գլ. ԺԲ, 90-95), և ուշագրավ վկայություններ հաղորդում Մովսես Խորենացին: IV դարի ընթացքում հայ Արշակունի թագավորության և աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների միջև ստեղծված սուր պայքարի հետևանքով Արշակ II-ի ձեռնարկումը կարելի է դիտել որպես անհաջող փորձ կենտրոնական իշխանության հենարան ստեղծելու մասին:

Իրավացի է Մարկվարտը, երբ նա գրում է.

հիշատակած չորս դեպքերումն էլ գործ է ածում «Նոր քաղաք» անունը. «Առ սահմանօք Նոր քաղաքին», «…Հասեալ է Նոր քաղաքս», «…Բանակն հայոց յԱյրարատեան ի Նոր քաղաք»: «Յայրարատ գաւառի է Նոր քաղաքն» (**Կորյուն**, Թիֆլիս, 1913, էջ 16, 27, 39, 62): Փարպեցին յոթ անգամ գործ է ածում Վաղարշապատ և չորս անգամ Նոր քաղաք (**Ղազար Փարպեցի,** Տփղիս, 1904, էջ 3, 11, 28, 29, 38, 58, 157, 176, 186):

[1] **P. Asdourian**, Die Politischen Beziehungen zwischen Armenien und, Rom, p. 116.

«Արշակի կողմից Կոգ գավառում հիմնված Արշակավան ազատ քաղաքում, անշուշտ, ոչ միայն ոճրագործներ, ավազակներ, գողեր և սրիկաներ էին, այլև բազմաթիվ շինականներ (börige Bauern), որոնք չէին կարողանում տանել կալվածատերերի ճնշումը…: Թագավորը հույս ուներ, որ այդ ազատ քաղաքի քաղաքացիներից վստահելի հենարան կստեղծեր իր համար ընդդեմ անհնազանդ ազնվականության»[1]:

Այդ պայքարից պարտված դուրս եկավ Արշակունի թագավորը, որ և դարձավ հայ Արշակունի թագավորության քայքայման սկզբնավորությունը:

Հայ հնագույն մատենագրության մեջ «քաղաքի» մասին եղած վկայություններով զբաղվել է, ինչպես հայտնի է Ի. Ջավախովը, հարցադրման կարգով արծարծած մի շարք խնդիրների շարքում գրում է.

«Արդյոք ինչի՞ վրա է հիմնված կամ ի՞նչ առիթից էր ծագում այս ձգտումը գյուղից դեպի քաղաք: Արդյո՞ք դա առաջ էր գալիս տնտեսական պատճառներից, որ քաշում էր նրանց դեպի շուկա, թե՞ վարչական (բաժանման) պատճառով, որևիցէ մի որոշ կարծիք հայտնել դժվար է: Ավելին, հավանական է երկրորդ պատճառն ընդունել: Շրջապատի գյուղերը ձգտում էին դեպի բերդը, որը գտնվում էր միշտ քաղաքներում, և ուր շրջակա գյուղերի բնակիչները պատսպարվում էին կռվի ժամանակ»[2]:

Ակադ. Ն. Յա. Մառը Ի. Ջավախովի վերոհիշյալ աշխատության մասին գրած իր գրախոսականում[3] ավելի որոշակի կերպով հայտնում է, որ հայկական «քաղաք» բառը նախապես նշանակում է «բերդ» (крепость), «քաղաքացի» խոսքը՝ «բերդի ազգաբնակություն»: Սակայն, անշուշտ, հարցը սրանով չի վերջանում, քանի որ միջնաբերդ ունեցող «քաղաքի» կողքին մենք որոշակի ունենք բերդի գործածությունը:

«Քաղաքում» բերդ կամ միջնաբերդ լինում էր, սակայն ամեն բերդ դեռևս քաղաք չէր:

«…Փախեան ելին ի քաղաքէ անտի (Վաղարշապատ) յառապարն ի կողմն Յօշական բերդին» (**Փավստոս Բուզանդ,** Գ, գլ. Է, 15):

Բուզանդի այս վկայության մեջ, ինչպես տեսնում ենք, Վաղարշապատ «քաղաքի» կողքին ուրույն իմաստով գործ է ածվում «Օշական բերդը», թեև կարելի է գտնել այնպիսին, որտեղ բերդն ու «քաղաքը» համիմաստ են գործածվում.

«… Իսկ զտիկինն Ռշտունեաց ի միջնաբերդն Վան բերդի, որ էր քա-

---

[1] **Jos. Markwart**, Südarmenien und die Tigrisquellen, p. 62.

[2] **И. Джавахов**, Государственный строй древней Грузии и древней Армении, СПб., 1905, էջ 92:

[3] **Н. Я. Марр**, Рецензия по книге И. Джавахова, էջ 218: Ակադ. Ն. Յ. Մառն իր այս տեսակետն ավելի հիմնավոր կերպով արտահայտել է իր “Батум, Ардаган, Карс” (Петроград, 1922) ուսումնասիրության մեջ, հմմտ. էջ 18-20:

ղաքն ի Տոսբ գաւառին» (**Փաւստոս Բուզանդ**, Դ, գլ. ԾԹ, էջ 151):

«Քաղաքի», ավանի և բերդի մասին խտացած ձևով հանդիպում ենք Եղիշեի մոտ, որ ուշագրավ է մի շարք տեսակետներից և ցույց է տալիս պատմիչի ժամանակաշրջանում բնակավայրերի դրությունը.

«Յայնմ ժամանակի դարձեալ յարձակեցան (հայք) ի վերայ բերդիցն և աւանաց զոր ունէին պարսիկքն ի տեղիս, տեղիս, յամրոցս աշխարհին, տապալէին, քանդէին, զբնակութիւնս նոցա: Առաջին զմեծն Արտաշատ հանդերձ աւանօք իւրովք. և առնուին զանմատոյց ամուրսն, զԳառնի քաղաքն, զԱնին, զԱրտագերս և զաւանս իւրեանց. զԵրկայնորդսն և զԱրինին, և զաւանս իւրեանց. զԲարձրաբուղն, զԽորանիստն, զՑխանիստն, զանկասկածելի Ողականն, և ընդ նոսա և զաւանս իւրեանց. զԱրփանեալն, զՎան աւան, ընդ նմին և զաւանսն իւր, զԳռեալն և զԿապոյտն, զՈրոտն և զՎասակաշատն»[1] (**Եղիշե**, էջ 87):

Այստեղ հարցը պատմական դեպքի վավերական լինելուն չի վերաբերում, այլ այն բազմաթիվ վայրերին, որոնք պատմիչի ժամանակ գոյություն են ունեցել:

Հայաստանի ֆեոդալիզմի վաղ շրջանի մասին Եղիշեի վկայությունն ուշագրավ է այն տեսակետից, որ կային բազմաթիվ բերդեր, որոնց մեծությունն ու ամրությունը պայմանավորվում էր տիրողի տնտեսական զորությամբ. այդ բերդերի շուրջը գոյություն ունեին «ավաններ», որոնք ենթարկվում էին այդ բերդերին. սա հնագույն շրջանից եկող դրությունն էր. ֆեոդալիզմի վաղ շրջանում այդ արդեն օրինականացվել էր: Բերդերի սեփականատերերն ապրում էին այդ «ավանների» հաշվին. այլ խոսքով՝ շահագործման այդ սկզբնական բջիջները, որտեղ աշխատավոր մասսաների հավելյալ արդյունքն էր կուտակվում, պատմական որոշ ժամանակաշրջանում այդ կուտակումները նրանց հնարավորություն են տալիս ավելին ընդարձակ տարածությունների վրա իրենց բնակությունը հաստատելու: Եվ պատահական երևույթ չէ, որ Արտաշեսյան դինաստիայի ժամանակ սկզբում հանդիպում ենք հարթավայրում Արտաշատի կառուցման և հետագայում՝ Տիգրանակերտի՝ որպես ամրացած վայրերի և ավելի վաղ ժամանակներում Հայաստանի հարավում՝ Արշամաշատին և Կարկատոկերտային՝ նույնպես ամրացած վայրերի: Այս նոր բնակավայրեն այլևս բերդեր չէին հին առումով. նրանք շրջապատվում

[1] Նշված այս բնակավայրերից առայժմ հայտնի են Արտաշատը, որի վայրը թեև վերջնականապես չի ճշտված, Գառնին, այժմյան Կոտայքի շրջանում Գառնի գյուղը, Անին՝ Դարանաղյաց գավառում: Եղիշեի այս վկայությունը վերաբերում է Դարանաղյաց գավառի Անիի՞ն, թե՞ Շիրակին, հարցական է (տե՛ս **Ղ. Ալիշան,** Շիրակ): Երկայնորդքը՝ Պարսկահայքում. Ծխանիստի մասին առայժմ հայտնի է այն, որ գտնվել է Խորանիստի և Ողականի միջև, վերջինը Տարոնումն է հիշվում, Կապույտը ենթադրվում է Սյունիքում, որտեղ է և Որոտնը: Արինիի, Բարձրաբուղի, Արփանեալի, Գռեալի, Վասակաշատի վայրերն անհայտ են դեռ, հմմտ. **H. Hübschmann**, Die altarmenische, Ortsnamen, Strassburg, 1904:

են ժամանակի ընթացքում մեկ կամ ավելի պարիսպներով, նայած «քաղաքի» ընդարձակության և այդ պարիսպների՝ աշտարակները վեր էին ածվում բերդերի: Հնագույն քարտեզների վրա նշանակված այդ աշտարակները ներկայացնում են իրական դրությունը: Այս բնակավայրերը տարբերվում էին բերդերից նաև նրանով, և այս խիստ կարևոր է, որ այդտեղ, համեմատած բերդերի հետ, բնության հետ (արտադրության իմաստով) իրենց կապերը կտրած մարդկանց շատ ավելի բազմության կենտրոնացումն անհրաժեշտ և հնարավոր էր դառնում:

Այս հանգամանքը կարող էր բազմապիսի պատճառներով պայմանավորվել. խոշոր ֆեոդալների շքախմբի և վայրի պաշտպանության համար կուտակված բազմության կարիքների ապահովման համար շրջակայքում ազգաբնակության կուտակումն անհրաժեշտություն էր դառնում: Կարևորն ահա այդ մի վայրում համեմատաբար շահագործող դասից ավելի մեծ թվով ազգաբնակության կենտրոնացումն էր, որ շրջանի ազգաբնակության հասարակական աշխատանքի բաժանման ավելի խորացման էական դրդապատճառն էր դառնում:

Սակայն, Հայաստանի պատմության առանձնահատկություններից մեկն այն էր, որ նա Արևելքի և Արևմուտքի միջև մղվող կռիվների ճակատամարտի վայր էր դառնում. եթե հնագույն շրջանից որպես վկայություն պահպանվել է Գառնիի մասին, որն առաջին դարի կեսերին Տակիտոսի մոտ (Ann., 12, 45) հիշատակվում է որպես հռոմեական բանակի զորակայան, ապա երկրորդ դարի 60-ական թվականներից հետո նույն հռոմեական բանակի զորակայանն էր Նոր քաղաքը: Իսկ ավելի ուշ շրջանում՝ սկսած V դարից, այդ զորակայանը դառնում է Թեոդուպոլիս-Կարնո «քաղաքը», որի մասին վերևում խոսեցինք: Այստեղ, խնդիրը տնտեսական առումով վերցրած, ունենք միևնույն երևույթի հետ գործ. մի բնակավայրում անաշխատ բազմության կուտակում:

Այդ «քաղաք» - բնակավայրերը վտանգի ժամանակ շրջապատի ազգաբնակության համար պաշտպանության վայրեր էին ծառայում: Ioshua սուրիացի պատմիչը Թեոդուպոլսո Կավատի I-ի կողմից գրավման ժամանակ հետևյալ վկայությունն է տալիս.

«Կավատը հետևողականորեն կողոպտեց քաղաքը, ավերեց ու այրեց, քանդեց հյուսիսային մասի բոլոր գյուղերը և գերի տարավ փախստականներին»[1]:

---

[1] The Chroniele of Joshua the Stylite, XLVIII, թրգմ. անգլ. W. Wright, Cambridge, 1882:
Այլ կերպ է պատմում նույն Թեոդուպոլսո գրավման ժամանակ պատահած դեպքերը VI դարի մի այլ սուրիացի պատմիչ Զաքարիան (VII, 3). «Կավատը մի բանակ էր հավաքում, շարժվում Թեոդուպոլիս՝ Հռոմեական Հայաստան, և գրավում էր քաղաքը. նրա բնակիչների հետ մեղմ վարվեց, որովհետև նրանց կողմից չէր անարգվել, այնուամենայնիվ, քշում էր նրանց քաղաքի կառավարիչին՝ Կոստանդինին»: Die sogenannte Kirchengeschichte des Zacharias Rethor, էջ

Պատմիչի մոտ որոշակի չի ասված, թե որտեղ էր ապաստանել հյուսիսային մասի գյուղերի ազգաբնակությունը: Այդ չի՞ վերաբերում արդյոք ամրացած Թեոդուպոլսո: Եվ կամ նույն երևույթը տեղի չէ՞ր ունենում 363 թ. Շապուհ II-ի Հայաստան կատարած արշավանքների ընթացքում: Ինչպես հայտնի է, Բուզանդը[1] այդ մասին վկայում է և տալիս է Հայաստանի «քաղաքներից» փոխադրված ազգաբնակության մասին հսկայական թվեր: «Քաղաքների» ազգաբնակություն ընդունված այդ բազմության մեջ չէի՞ն մտնում շրջակա գյուղերի ազգաբնակությունը, որը վտանգի պահին ապաստանել էր ամրացած վայրերում:

Հայ պատմիչների մոտ ավելի ուշ ժամանակաշրջանից վկայություններ ունենք, որոնք ուղղակի խոսում են նման ամրացած վայրերի շրջապատի ազգաբնակության՝ վտանգի պահուն այդ վայրերում ապաստանելու մասին[2]:

Անհրաժեշտ է ընդգծել այս հանգամանքը, քանի որ նման հսկայական թվերի վկայությունը կարող է իրականության բոլորովին հակառակ պատկերացում ստեղծել: Նման թվերից հանված եզրակացությունները ոչ մի պատմական արժեք չեն կարող ունենալ:

Սակայն, հարց է առաջանում. այդ «քաղաք» կոչված բնակավայրերը մնացե՞լ են որպես միայն ամրացած և պարսպված վայրեր, թե՞ նրանցից ոմանք, պատմական զարգացման ընթացքում տնտեսապես զարգանալով, արդեն քաղաքայնանում են, և ստադիալ զարգացման տարբեր աստիճանների վրա գտնվող այդ բնակավայրերի համար նույնպես գործ է ածվում ավանդաբար մնացած «քաղաք» որակումը: IV դարի 60-ական թվականներին Շապուհ II-ի Հայաստանում կատարած ավերումներին ի՞նչ գնահատական պետք է տալ, և զարգացման ի՞նչ աստիճանի են հասել այն «քաղաքները», որոնք հիշատակվում են այդ վկայության մեջ: Ունե՞նք տնտեսական կյանքի զարգացման կորագծի այնպիսի անկում, ինչ որ ավանդական պատմագրությունը շարունակում է պնդել:

Ֆեոդալիզմի վաղ շրջանի պատմական վկայությունները վերաբերում

---

104. թրգմ. գերմ K. Ahrens et g. Krüger, Leipzig, 1899:

[1] **Փավստոս Բուզանդ,** Դ, գլ. ԾԵ, էջ 144: Գերեվարությունը փաստ է, որ Շապուհ II-ի ժամանակ կատարվել էր: Ըստ Հ. Գելցերի (Ber. d. K. Sachs. ges. d. Wissenschaft, էջ 132)՝ հրեա ազգաբնակությունը խոշոր ազդեցություն է ունեցել հայ եկեղեցու վրա, սակայն հրեաների գոյությունը Հայաստանում բացասում է՝ առանց որևէ ապացույց բերելու:
Այս տեղափոխվողները պետք է որ տարվեին Ասորեստան և Խուզիստան, ինչպես նույն Շապուհ I-ի կողմից Հռոմեական կայսրությունից տեղափոխված մյուս գերիները: Սուրիական և արաբ-պարսկական աղբյուրներում այս վերջինների տեղափոխված վայրերի մասին ունենք ստույգ տեղեկություններ: Սակայն, Հայաստանից տեղափոխվողների մասին այդ աղբյուրներում ոչ մի վկայություն չկա: Հմմտ. **A. Sorian**, Die soziale Gliedering, d. arm. Volkes im Mittelalter, էջ 51, Armeniace, fasc. II, 1927, Leipzig:

[2] Հմմտ. **Հ. Զորյան**, Քաղաքի և գյուղի միջև ստեղծված հակադրությունը, արտատպված «Գիտության և արվեստի ինստիտուտի տեղեկագիր», № 2-3-ից, Երևան, 1928, էջ 19:

են գերազանցորեն Հայաստանի միջնաշխարհում եղած բնակավայրերին, որտեղ գտնվում էր հայ Արշակունիների ոստանը. նախապես մատնանշեցինք, որ պատմական Հայաստանի այս շրջանը Հայաստանի հարավային մասից հետո, սկսած հնագույն ժամանակաշրջանից, համեմատաբար տրնտեսապես ավելի զարգացած շրջանն էր ներկայացնում:

Հայտնի է, որ պատմական Հայաստանի այս շրջանում եղել են Արևելքի և Արևմուտքի միջև կատարված առևտրական հարաբերությունների հանգուցային կետեր: Այդ միմյանց փոխարինող հանգուցային կետերի՝ Արտաշատի, Վաղարշապատի և Դվինի մասին եղած պատմական վկայություններից կարելի է եզրակացնել, որ գործ ունենք այնպիսի բնակավայրերի հետ, որոնք հնագույն իմաստով հասկացված «քաղաքներից» տարբերվում էին:

Անկասկած է, որ այդ «քաղաք» - բնակավայրերի քաղաքայնանալու պրոցեսի մեջ հիմնական դեր էր կատարում վերևում մեր նշած հանգամանքը. այդ վայրերում բնության հետ (արտադրության իմաստով) իրենց կապերը կտրած ազատների կուտակումը պահանջ էր առաջադրում նույն վայրերում և շրջապատում հասարակական աշխատանքի բաժանման և արտադրող մարդկանց կուտակման: Այստեղ արտադրության առանձին ճյուղերում աշխատողներն ավելանում էին, և աստիճանաբար աշխատանքի բաժանման պրոցեսը խորանում էր: Նման «քաղաք» - բնակավայրերի և շրջապատի ազգաբնակության մեջ ստեղծված էր փոխանակություն ինչպես գյուղատնտեսական արտադրույթների, նույնպես և արհեստագործական արտադրույթների շուրջը: Հատկապես փոխանակությամբ և առևտրով զբաղվողների դասն էր առաջանում, որի հետագա զարգացման մեծ չափով նպաստում էր տրանզիտային առևտրի աշխուժացումը, մասնավորապես այն «քաղաք» - բնակավայրերում, որտեղից անցնում էին առևտրական կարավանային ճանապարհները:

Ուշագրավ ակնարկ ունենք Ագաթանգեղոսի ժամանակից առևտրական դասի առաջացման և փոխանակության օբյեկտների մասին.

«Զի բազումք այն են, որ առ այսպիսի աղէտս, տարակուսանաց ի վաճառականութեան արուեստս տուայտանօք անկանել յօժարին: Իսկ են բազումք որ զիւրեանց առատութիւն եղեալ՝ աշխարհի օգուտ գործեն, զարդարեալ զթագաւորս ի գիւտ ծանրագին մարգարտին, և զանազան ակամբք պատուականօք և կերպասու յերանգ յերանգս գունոցն:... Նոքա և զտունս բժշկաց լցուցանեն ազգի ազգի անուշահոտ խնկովք, դեղովք օգտակարութեան… նոքա և զարդ քաղաքաց… նոքա և համարակարք երկայն ճանախարհաց» (**Ագաթանգեղոս**, § 4, էջ 4):

Այն փաստը, որ 387 թ. Բյուզանդիոնի և Պարսկաստանի միջև Հայաստանի բաժանման շուրջը կնքված դաշնագրության մեջ Արտաշատը նշվում

էր, ինչպես ցույց է տալիս Հուստինիանոսի կոդեքսի № 408/409, էդիկտը[1]՝ որպես Արևելքի և Արևմուտքի միջև տեղի ունեցող առևտրական հարաբերությունների երեք կենտրոնավայրերից մեկը (Մծբինի և Կալինկումի կողքին), այս փաստը խոսում է այն մասին, որ Արտաշեսյան դինաստիայի շրջանում կառուցված «քաղաքը» այլևս լոկ որպես Հայաստանի Կարթագենը հանդես չէր գալիս, ինչպես Լուկուլլոսի ժամանակ էր որակվում (մ. թ. առաջին դարը): Եվ կամ Մերձավոր Արևելքի մրցակիցների համար առավելապես կարևոր ստրատեգիական պունկտ չէր, ինչպես այդ տեսնում ենք Ներոն կայսեր ժամանակ: Հավանաբար Ներոնից Հայաստանի թագը ստացող Տրդատ I-ինը 65 թ. Կորբուլոնի կողմից հրկիզված Արտաշատը վերաշինելու համար տրված դրամական մեծ գումարը խոսում է այն մասին, որ Արտաշատը Հռոմի համար այդ ժամանակաշրջանում և՛ ստրատեգիական և՛ առևտրական տեսակետից նշանակություն էր ներկայացնում: Սկսած առաջին դարի երկրորդ կեսից՝ տեղի էին ունեցել մի շարք փոփոխություններ, որոնք ընդհանրապես Հայաստանի տնտեսական կյանքի զարգացմանը նպաստավոր հանգամանքներ էին:

Հռոմի և Պարթևական պետության միջև կայացած կոմպրոմիսի շնորհիվ Հայաստանում հիմք էր դրվում հայ Արշակունիների թագավորության, որը ժամանակի ընթացքում կարգավորում և պետական շրջանակի մեջ էր առնում գոյություն ունեցող ֆեոդալական հարաբերությունները. մինչ այդ ներքին և արտաքին ուժեղ կռիվները թուլացրել էին երկիրը: Այդ են ցույց տալիս առաջին դարի մինչև 60-ական թվականները տեղի ունեցող պատմական-քաղաքական իրադարձությունները: Արտաշատը հայ Արշակունիների թագավորության մայրաքաղաքն էր դառնում:

Կարևոր դեր էր կատարում նաև այն, որ պարթևական պետության և Հռոմի միջև 60-ական թվականներին կնքված հաշտությունը, եթե չհաշվենք Տրայանոսի՝ երեք տարված ընթացքում Արևելքում կատարած արշավանքը, շուրջ հարյուր տարի պահպանում էր իր ուժը: Մերձավոր Արևելքի մրցակիցների միջև տևող այդ խաղաղության բավական երկար ժամանակաշրջանը բացառիկ մի երևույթ էր և Հայաստանի տնտեսական կյանքի զարգացման համար կարևոր ազդակներից մեկը: Այդ խաղաղության տարիները նշանակալից են նաև նրանով, որ այս ժամանակաշրջանում է ընկնում հատկապես Արևելքի և Արևմուտքի միջև կատարվող տրանզիտային առևտրի աշխուժացումը, որի օբյեկտներից մեկը չինական մետաքսն էր: Հնագույն ժամանակներից գոյություն ունեցող ռազմա-վարչական ճանապարհների վրայով կարավանների երթևեկությունը ավելի հաճախակի էր դառնում և ծայրերկրների միջև կատարվող առևտրի միջնորդ հանդիսացողներին բավական բարձր շահ ապահովում:

---

[1] Cod. Justln., IV, 63. Հմմտ. **W.Heyd,** Histoire du Commere du Levant, Leipziq, 1923, հատ . I, էջ 5, ծան. 2:

Էկբատանից անցնող մագիստրալի մի թևը, թեքվելով հարավ, անցնում է Մծբին, իսկ մյուս թևը, անցնելով Արտաշատ, կապվում էր մի կողմից Սև ծովի հետ, իսկ մյուս կողմից՝ Հյուսիսային Միջագետքի հետ: Մի այլ ճանապարհ հյուսիսում գնում էր դեպի Վրաստան[1]:

Հեռավոր Արևելքի ցամաքի կարավանային ճանապարհները մնում էին նախկինը: Այդ տրանզիտային առևտրում Իրանը կատարել է Արևմուտքի համար կամուրջի դեր:

Քաղաքական դրությունը փոխվում էր երկրորդ դարի 60-ական թվականներից, երբ Հռոմի և Պարթևական Պարսկաստանի միջև սկսվում է, այսպես կոչված, վաթսունամյա պատերազմների շրջանը՝ մինչև Պարսկաստանում նոր դինաստիայի՝ Սասանյանների հաստատումը: Այդ պատերազմների ընթացքում Արտաշատը կրկին հռոմեական զորավարների կողմից ավերվում էր, և հռոմեական բանակի զորակայան դառնում Նոր քաղաքը (Վաղարշապատը), որի նկարագրությունը շատ հակիրճ տալիս է Փարպեցին.

«…Զբարձրաբերձ շինուածս անթիվ ապարանացն, զանյագ զամենալի դաշտացն զբերկրումն» (**Ղազար Փարպեցի,** Ա, գլ. Ը, էջ 11): Առայժմ նշենք պատմիչի ժամանակ Վաղարշապատի շուրջը եղած «անյագ ամենալի դաշտերը»: Այս ամենալի դաշտերը ամենայն հավանականությամբ այգեստաններն էին, որոնց մասին վկայություն ունենք Ագաթանգեղոսի մոտ (**Ագաթանգեղոս,** գլ. ԺԳ, § 150, էջ 85):

Սասանյան դինաստիայի կազմակերպումը Պարսկաստանում և Հռոմեական կայսրության ծանր տնտեսական դրությունը հատկապես երրորդ դարի երկրորդ կեսից Մերձավոր Արևելքի իրերի դրության մեջ խոշոր փոփոխություններ են առաջացնում: Հայաստանի պատմությունը այդ ժամանակաշրջանի մասին վերին աստիճանի մութ է: V դարի մատենագրական վկայություններից կրկին իմանում ենք Արտաշատի մասին, որը, ինչպես տեսանք, IV դարի վերջերին դառնում էր առևտրական կենտրոն և մաքսատուն:

Փարպեցու կողմից որպես «գյուղաքաղաք» հիշատակվող Արտաշատին փոխարինում է նրանից ոչ հեռու հյուսիսում գտնվող ոստան Դվինը, որին մասին վկայություն է տալիս VI դարի հույն պատմիչ Պրոկոպիոսը:

«Դվինը շատ պտղաբեր վայր է, ունի առողջարար օդ և լավ ջուր: Թեոդուպոլսից ութ օրվա ճանապարհ հեռու է գտնվում: Այդտեղ հարթավայրեր են և հարմար՝ ձիով ճանապարհորդելու համար բազմամարդ գյուղերը, որոնք

[1] Հմմտ. պրոֆ. **Հ. Մանանդյան**, Հայաստանի հին ճանապարհները, «Գիտության և արվեստի ինստիտուտի տեղեկագիր», № 5, Երևան, 1931, էջ 65-87: Արտաշատից Բագավան գծի մասին հեղինակի ուղղումը տե՛ս «Մանր հետազոտություններ», Երևան, 1932, էջ 3-12: Արտաշատից Մցխեթ գնացող ճանապարհի մասին տե՛ս **Jos. Markwart**, Skizzen zur historischen Topographie u Goschichte von Kaukasus, Wien, 1918:

գտնվում են միմյանց մոտ, զբաղվում են առևտրով, որովհետև Հնդկաստանից, հարևան Վրաստանից և համարյա պարսից և մինչև անգամ հռոմեացոց հպատակ բոլոր ժողովուրդները այդտեղ էին բերում ապրանքներ, որոնցով նրանք առևտուր էին անում»[1]:

Ուշագրավ է Պրոկոպիոսի վկայության այն մասը, որը վերաբերում է Դվինի շրջակա գյուղերում առևտրի կատարվելուն: Այս մասին արաբ պատմիչներից Բաղդադի մասին հետևյալն ենք իմանում.

«Մինչև 774 թ. (Բաղդադի) բազարները գտնվում էին քաղաքի պարիսպներից ներս՝ սյուներով կառուցված սրահներում (طاق), որոնք չորս դռների դեմ հանդիման էին գտնվում: Այս թվականին (774-ին) Ալ-Մանսուրը բազարները դուրս էր հանում քաղաքից՝ հավանաբար լրտեսությունից վախենալու համար»[2]:

Ավելի ուշագրավ է Պրոկոպիոսի վկայության այն մասը, որը վերաբերում է Դվինի «պտղաբեր» լինելուն և շրջապատի «բազմամարդ» գյուղերին: Նշենք այստեղ նաև Մովսես Խորենացու այն նկարագրությունը, որ վերաբերում է Կարնո քաղաքին, և որը պատմիչի ժամանակաշրջանի դրությունն է արձանագրում:

«Անատոլեայ զօրավարի ընկալեալ զհրամանն արքունի, և եկեալ յաշխարհս մեր և շրջեալ ընդ բազում կողմանս մեր՝ հաճի ի՛ գաւառին Կարնո շինել զքաղաքն արգաւանդահող, շատաջուր և բերրի, և դաշտին ունին զթանձրութիւն խոտոց և զբաջաբերութիւն սերմանաւոր պտղոց» (Մովսես Խորենացի, Գ, գլ. ԾԹ, էջ 338):

«Անյագ, ամենալի դաշտերով» Վաղարշապատը, «պտղաբեր» Դվինը՝ «բազմամարդ գյուղերով», «արգաւանդահող, շատաջուր և բերրի» Կարնո քաղաքը. ահա այն որակումները, որոնք մեծապես տարբերվում են այն որակումներից, որոնք XI դարի պատմիչ Լաստիվերտցին իր ժամանակաշրջանի քաղաքներին է տալիս.

«Յղփացեալ Կարսը… հարստացեալք բազում ընչեղութեամբ ի ծովէ և ի ցամաքէ ամբարեալ» (Արիստակես Լաստիվերտցի, գլ. ԺԵ, էջ 91, Թիֆլիս, 1912):

Կամ Կարնո քաղաքի մոտ Արծնի մասին եղած վկայությունը.

«Այլ քաղաքին, և քաղաքի այսպիսում, որ հոյակապ և ականաւոր էր ամենայն աշխարհաց. իբրև զքաղաք, որ ի վերայ լերինն կայցք. և ծով և ցամաք երկնէր և առատանայր կրել ի սմա զզօրութիւնս իւր», որտեղ «…վաշխից և տոկոսեաց օրէնք եդան, և ցորենոյ բազմապատկութիւն, որով երկիր պղծի…» (նույն տեղում, գլ. ԺԲ, էջ 78, 79):

---

[1] **Procop.**, II. 25, ռուս. թրգմ. С. Дестунис, էջ 181-82:

[2] **Else Reitemeyer**, Die Städtegründhgen der Araber im Islam nach d. arabischen Historikern u. geographen. Diss. München, 1912.

Եվ կամ, Անիի ավերումը ողբալով, երբ նույն պատմիչը գրում է.

«Այս է բաժին անիրաւ քաղաքաց, որ շինեն զինքեանս արեամբ օտարաց, և ի քրտանց տնանկաց փարթամանան, և ի վաշխից յանիրաւութեանց զտունս իւրեանց ամրացուցանեն» (նույն տեղում, գլ. ԻԴ, էջ 167):

Կարդանք Թովմա Արծրունու՝ Դվինի մասին IX դարի 2-րդ կեսի նկարագրությունը.

«Եւ եղև իբրև ձմեռն փոքրացաւ և ժամանակ գարնանային եղանակին մերձեցաւ և օդն մառախլաձև միգախառն յստակեցաւ և հարավային ջերամագոյն օդն շնչեաց ի խորագոյն դաշտն քաղաքին Դվնայ, և ընդարմացեալ արմատքն և բոյսքն զգենուլ սկսան զզօրութիւն, և թռչունք և գազանք ծանեան զժամանակս գալստեանն իւրեանց, և աշխատասէր մշակքն պատրաստեցան ի գործ երկրասէր վաստակոցն, և որսորդքն զինքեանց գործիսն պատրաստէին, և վաճառականքն զհեռաւոր ճանապարհացն խոկային պատրաստութիւնն, և հովիւքն տաւաղելով զգառինսն քշէին ի դալարաբեր հովիտն, և ամենայն ոք, ըստ ազգս ազգս, փութայր ի հնարս ինքեանց վաստակոցն մի զմիով ելանէր…» (**Թովմա Արծրունի**, Ս. Պետերբուրգ, 1887, Գ, գլ. Թ, էջ 172):

Քաղաքի զարգացման այլ աստիճան է այս, երբ հույն պատմիչի կողմից նկարագրված նույն Դվինը 893 թ. երկրաշարժին «շահաստան» է կոչվում, որ՝

«…Մարդախիտ պարսպաւոր պատնէշօք պատուարեալ և տուրևառիկ վաճառականութեամբ և ազգի ազգի պղծութեամբ յափրացեալ և յղփացեալ…» (**Թովմա Արծրունի**, Գ, գլ. ԻԲ, էջ 230):

IX դարի վերջերին այս ձևով նկարագրված քաղաքում ազգաբնակության զգալի տոկոսը պարապելիս է եղել երկրագործությամբ և անասնապահությամբ:

Ուշադրության արժանի է Թովմա Արծրունու կողմից Դվինի «շահաստան» անվանումը: Ուշագրավ է նաև այն, որ հայ հնագույն մատենագիրներից Փարպեցուն, Եղիշեին և Սեբեոսին ծանոթ է քաղաքի այս անվանումը, սակայն նշածս բոլոր պատմագիրները գործ են ածում միայն Պարսկաստանում եղած հայտնի քաղաքների համար՝ «… Եւ եկեալ ի շահաստանն, որ անուանեալ կոչի Նիւ-Շապուհ», «…Ի դղեակ շահաստանին Նիւշապուհ» և կամ՝ «…Յապար աշխարհին, և մտեալ ի դղեկ շահաստանի Նիւշապհոյ»[1] (**Ղազար Փարպեցի**, Բ, գլ. ԽԸ, Ծ, ԾԳ): Եղիշեն գործ է ածում մի անգամ. «…Որք փախստական անկանէին ի մեծ շահաստան» (**Եղիշե**, էջ 980): Սե-

[1] Նյուշապուհի մասին հմմտ. **J. Marquart**, EranŠahr, էջ 74-75: Փարպեցին այս տերմինը գործ է ածում նաև մի ուրիշ անգամ մի այլ բնակավայրի մասին. «… Երթեալ աւերէր զշահաստանն Բռնավիժի» (**Փարպ.,** Գ, գլ. ԿԵ). Հյուբշմանը, առանց հիմնավորման, վայրը դնում է Արարատում: Վիճելի է: Հայկազյան բառարանը Բռնավեժում տեսնում է Դավրեժը, հմմտ. «շահաստան» բառը:

բեռսը գործ է ածում Ահմատան և Բահլ քաղաքների համար (**Սեբեոս**, Ա, էջ 11, 12, գլ. Թ, էջ 84, գլ. ԻԳ, էջ 123):

Ակադ. Բարտոլդի ուսումնասիրությունների համաձայն՝ Միջին Ասիայի և Մերձավոր Արևելքի քաղաքների աստիճանական զարգացմանը համապատասխանել են *Կուխենդիզ*, *շահրիստան* ու *ռապատ* անվանումները: Նույն երևույթը չունե՞նք նաև պատմական Հայաստանում:

Ինչպես ցույց տվինք, հայ հնագույն պատմիչների մոտ եղած «քաղաք» անվանումը՝ այս կամ այն վայրի և կամ բնակավայրերի, դեռևս մեզ թույլ չի տալիս այդ որակման մեջ տեսնելու հետագայի քաղաքը: Մյուս կողմից իրականության բոլորովին անհամապատասխան պատկեր կստացվի, եթե ընդունենք այդ «քաղաքների» արագ տեմպով քաղաքայնանալու պրոցեսը: Կրկնում ենք, որ այդ պրոցեսը ընդհանրապես ֆեոդալական հասարակարգում կատարվում էր շատ դանդաղ եղանակով: Եվ այս մեր դիտողությունը վերաբերում է ոչ միայն պատմական Հայաստանին, այլև ընդհանրապես Մերձավոր Արևելքի քաղաքների աստիճանական զարգացման տեմպին: Այս մասին ուշագրավ վկայություններ ունենք Միջագետքում արաբական խալիֆաթի ժամանակաշրջանում առաջացող քաղաքների մասին: Կարծում եմ՝ պատմական Հայաստանի ֆեոդալական վաղ շրջանի քաղաքների առաջացման երևույթի համեմատության եզրը կարող է լինել Մերձավոր Արևելքի քաղաքների զարգացման օրինակը: Արաբ պատմիչներն ու աշխարհագիրները բավականին առատ տեղեկություններ են պահպանել արաբական խալիֆաթի սկզբնական շրջանում առաջացած քաղաքների մասին:

Այդ վկայությունները առավելապես ուշագրավ են այն տեսակետից, թե ինչպես էին զարգանում առաջին բանակատեղերը՝ որպես քաղաք: Ըստ Բալատուրիի՝ Յակուբի և Իստախրիի վկայությունների, Բասրայի ազգաբնակության սկզբնական պարապմունքը եղել է անասնապահությունն ու երկրագործությունը[1], և առաջին աշխատանքները կատարվում են հողերի ոռոգման շուրջը[2]:

«Բազարները հետագայում գործածված ձևով միայն ութերորդ դարի սկիզբը սարքվեցին (Բասրայի հիմնադրումը ընկնում է 637 թ.) …, երբ նույն ժամանակ Կուֆայի բազարները սարքեցին»[3]:

Բասրայի շուրջը, ինչպես և Կուֆայի, միայն Ալ-Մանսուր խալիֆի ժամանակ (770 թ.) կառուցվում է քաղաքային պարիսպը, և նրա շուրջը փորվում է խրամը[4]: Միայն հետագայում՝ ավելի ուշ ժամանակ, Բասրան դառնում է

---

[1] **Balad.,** 351. **Iak.** I, 641, 1. **Istahri,** 80, հմմտ. **Else Reitemeyer,** Die städtegr. ete, p. 23:

[2] **Balad.,** 375/7, **Istahri,** 80, հմմտ. **Else Reitemeyer,** p. 26:

[3] **Balad.,** 286, 364, հմմտ. **Else Reitemeyer,** p. 25, 35:

[4] **Tabari,** ser/ III, vol. I, 373/17, հմմտ. **Else Reitemeyer,** էջ 36:

առևտրական կենտրոն ջրից և ցամաքից[1]:

Ուրեմն Բասրան բնակավայր դառնալուց ավելի քան երեք քառորդ դար հետո ունենում էր «հետագայի իմաստով» բազար և շուրջ 140 տարի հետո՝ քաղաքի պարիսպ:

Եվ այս արաբական այն խալիֆաթում, որը VII դարի ընթացքում համարյա նվաճում էր Մերձավոր Արևելքը, և 711 թ. Քսերեսի ճակատամարտից և Կուտայիբա բին-Մուսլիմի հաղթանակներից հետո կիսալուսնի դրոշը ծածանվում էր Կենտրոնական Ասիայի Կաշգար լեռներից մինչև Ատլանտյան օվկիանոսը: Այսպիսի պետության սահմաններում Բասրայի և Կուֆայի քաղաքայնանալու պրոցեսը ընթանում էր այդպիսի դանդաղ տեմպով, այն պետության, որ հաղթական պատերազմներից հետո այնքան ավար և գերիներ էր վերցնում, և այդ բնակավայրերը՝ Արևելքի և Արևմուտքի միջև կատարված առևտրական հարաբերությունների ամենաբանուկ պունկտերում: Եվ այս այն քաղաքների մասին, որոնց ազգաբնակությունը աճում էր ոչ բնական ոճով: Բալատուրին հետաքրքիր վկայություն ունի Բասրայի ազգաբնակության մասին. ըստ այդ վկայությունների՝ Պարսկաստանից տեղափոխվում և գալիս Բասրա են հաստատվում մի շարք ցեղեր (**Balad.,** 373-375): Հետագայում գալիս էր նույն վայրը՝ Իսպահանի և ավելի ուշ՝ Բուխարայի ազգաբնակության որոշ մասը (**Balad.,** 366, 376): Նույն ձևի ազգաբնակության բազմացումը վկայում է Իստախրին և Յակուբին Կուֆայի մասին (**Istahri,** 82. **Jak.,** IV, 447, 3)[2]:

Կարծում եմ՝ այս վկայությունները գալիս են ապացուցելու, թե ինչպիսի դանդաղ տեմպով պետք էր ընթանար բնակավայրերի քաղաքայնանալու պրոցեսը այն Հայաստանում, որը նույնիսկ չենք մտածում համեմատության դնել վերև նշված խալիֆայական պետության հետ, և որ ամբողջ հինգ-վեց դարի ընթացքում լրիվ խաղաղության շրջան միայն մի-երկու դար էր ունենում: Եվ որքան սխալ պատկերացում կլինի հնագույն հայ պատմագիրների մոտ հիշատակված «քաղաք» բնորոշումից եզրակացնել, որ 50-70 տարվա ընթացքում, այն է՝ առաջին դարի վաթսունական թվականներից մինչև երկրորդ դարի երեսնական թվականները, Հայաստանում ծաղկում են երեք մեծ քաղաքներ, և կամ հայ Արշակունիների դինաստիայի շրջանում նշվում են 9-10 քաղաքներ:

Եթե մենք հարց ենք տալիս, թե ինչո՞ւ Հայաստանում ֆեոդալական հարաբերությունները դարեր շարունակ կարողացել են պահպանել իրենց գոյությունը, ինչո՞ւ տնտեսական կյանքի զարգացումը ընթացել է ասիական սպանիչ դանդաղկոտությամբ, ապա պետք է հիշել նախ գյուղատնտեսու-

---

[1] **Balad.,** 341, հմմտ. **Else Reitemeyer,** էջ 27:

[2] Հմմտ. **Else Reitemeyer,** էջ 25/26, 39:

թյան զարգացման կենսական աղբյուր ջրասակավության խնդիրը. ջուրը, որ հնագույն ժամանակներից դարձել էր այս երկրի տարբեր դարաշրջանների ազգաբնակության կուլտի առարկան: Չենք խոսում բնական այլ աղետների մասին, ինչպիսիք են՝ կարկուտ, մորեխ, մուկ, որոնց մասին սարսափով է հիշում իր ամբողջ ունեցվածքն ու աշխատանքը հողին հանձնած գյուղացին: Իսկ ի՞նչ էր կատարվում շինականի հավելյալ արդյունքի հետ, որի մի կարևոր մասը գանձի ձևով կուտակվում էր ֆեոդալական ամրոցներում և դղյակներում:

Տարիների աշխատանքի արդյունք եղող այդ կուտակումները, որպես գանձ դուրս հանվելով շրջանառությունից, խոշոր արգելառիթ հանգամանքներից մեկն էին դառնում բնարդյունքի ապրանքայնացման և ապրանքային փոխանակության հետագա զարգացման: Հավելյալ արդյունքի այդ կուտակումներն անշարժ մնում էին Անգեղ, Արտագերս, Անի, Օշական, Բնաբերդ, Դարույնք, Գառնի, Բաղաբերդ, Երնջակ և Ջագեռոր բերդերում: Լավագույն դեպքում դուրս էր գալիս նրա մի մասը Արևելքին հատուկ պերճանքի և շքեղության ապրանքները գնելու: Իսկ գանձը պետք է պահպանվեր հիմնականում իշխանի «նեղ օրերի» համար: Չէ՞ որ Մերձավոր Արևելքի մրցակիցների համար պատերազմական թատերաբեմ դարձող Հայաստանի ֆեոդալների գոյության հաճախ անմիջական վտանգ էր սպառնում, և նրանք փորձում էին դղյակներում և ամրոցներում կուտակված այդ գանձերը նվիրաբերելով փրկել իրենց: Այն, ինչ որ 705 թ. մասին Ղևոնդն է հաղորդում արաբական ժամանակաշրջանի մասին, եզակի և միայն այդ ժամանակաշրջանի երևույթ չէր.

«Եւ նոքա (նախարարքն) առ վտանգի նեղութեանն, զբազում մթերս գանձուցն իւրեանց, զորս ի պահեստի եղեալ էին յերեսաց նեղչացն ի ծովու և եթէ ի ցամաքի՝ տային ի ձեռս թշնամեացն, զի թերևս ապրեցուսցեն գանձինս իւրեանց» (**Ղևոնդ,** Պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1887, գլ. Ժ, էջ 31, 34):

Այս միայն անհրաժեշտություն դարձած կամովին նվիրատվություններն էին. ինչպիսի ավարառություններ չէին կատարվում լինի, հռոմայեցի նվաճողների, լինի հյուսիսականների արշավանքների ընթացքում, լինի պարսկական բանակների կողմից:

Ոչ թե միայն տարիների աշխատանքի արդյունք եղող այդ կուտակումներն էին ավարի ենթարկվում, այլև հրկիզվում և քանդվում էին «քաղաքներ»:

Հաճախակի պատերազմների թատերաբեմ դարձող Հայաստանի աշխատավոր մասսաների աշխատանքի անմիջական արդյունքով էին կերակրվում այդ երկրամասի վրա կռվող մրցակից պետությունների բանակները, և կամ նվաճումից հետո թողված կայազորները կերակրվում էին նույն այդ աշխատավորական մասսաների կողմից: Հռոմեական շրջանից նման զորակայաններ արձանագրել են պատմական աղբյուրները Գառնիի և Նոր քաղաքի (Վաղարշապատ) մասին, հետագայում՝ Թեոդուպոլիս-Կարնո քա-

ղաքը Բյուզանդիոնի և արաբական խալիֆաթի համար: IV դարի մասին հետևյալ ուշագրավ վկայությունն ենք կարդում Բուզանդի մոտ, երբ նա խոսում է պարսկական տիրապետության մի շրջանի մասին:

«Տային զաշխարհն Հայոց ի ձեռն Սուրէնայ, և հնազանդ էին հրամանաց թագաւորին պարսից յաշխարհէն Հայոց հարկս՝ տալ ընծայս և պատարագս: Սոյնպէս և մարզպանին Սուրէնա, հասս և կօշիկս և զպիտոյս զռոճկացն. սոյնպէս և տասն հազարացն դարման և կերակուր ըստ պիտոյիցն» (**Փավստոս Բուզանդ,** Ե, գլ. ԼԸ, էջ 208):

Ուրեմն տասը հազարանոցի կերակրման ծանրությունն ընկնում էր Հայաստանի աշխատավոր ազգաբնակության վրա:

Նշված այս երևույթները, պատմական երկար դաշրջաններում ժամանակավոր դեպքեր էին: Ամենահիմնականը մի այլ դրություն էր, որ յուրահատուկ է Հայաստանի պատմության: Պատմական թատերաբեմ հանդես գալու օրից Հայաստանի ազգաբնակությունը «լծի տակ» է եղել՝ բացառությամբ կարճ ժամանակաշրջաններից. առանձին ընդմիջումներով այդ դրությունն առավել կամ նվազ չափով, սիստեմատիկորեն դարեր շարունակվել է: «Լծի տակ» եղողները «լծադիրներին» հարկ են վճարել: Պատմական տարբեր դարաշրջաններում տարբեր եղանակով և աստիճանով հարկի այդ գանձումները դուրս է կորզել աշխատավորական մասսաների հավելյալ արդյունքը:

Հայաստանի ֆեոդալական հասարակարգի յուրահատուկ կողմերից է այն, որ աշխատավորական մասսաների ծանր աշխատանքի գնով ձեռք բերված հավելյալ արդյունքը չէր մնում երկրում: Որ դղյակներում և ամրոցներում կուտակված գանձերը հատուկ են եղել բոլոր երկրների ֆեոդալական հասարակարգի համար, այդ հայտնի է, սակայն, յուրահատուկը Հայաստանի համար այն է, որ վերջ ի վերջո այդ գանձերի որոշ մասը լինի անհրաժեշտությունից պարտադրված «կամավոր» ձևով, լինի նվաճողների կողմից ուղղակի ավարառումների եղանակով, երկրից դուրս է հանվել:

Եթե բնիկ աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների շահագործումից գոյացած այդ կուտակումներն այդ եղանակով էին դուրս հոսում, ապա հաճախակի պատերազմների ընթացքում կռվող բանակները և կամ նվաճողների կայազորները կլանում էին անմիջականորեն հավելյալ արդյունքը, այն, որ կարող էր վերարտադրության հետագա ընդլայնման հիմք ծառայել:

Եթե ֆեոդալական շահագործումը, ջրի պակասությունը և բնական ու քաղաքական այլ բազմապիսի աղետները խոշորագույն արգելառիթ հանգամանքներ էին արտադրողական ուժերի զարացման, արտադրության համեմատաբար ավելի լայն հիմքերի վրա կազմակերպելուն, ապա ֆեոդալների մոտ հավելյալ արդյունքի գանձի ձևով կուտակումները, որոնք պոտենցիալ հնարավորություններ ունեին տնտեսության զարգացման զուգընթաց փող-կապիտալ դառնալու և շրջանառության մեջ մտնելու, նշված պայման-

ներն այդ հնարավորության ոչ զանցառելի չափով արգելք էին դառնում: Այդ գանձի ոչ զանցառելի մասը կամ դուրս էր գնում, և կամ հաճախակի կրկնվող հարձակումները բնիկ ֆեոդալներին այն համոզման էին բերել, որ հարկավոր է այդ գանձը պահել «նեղ օրերի» համար, ու նա մնում էր երկար ժամանակ ամրոցներում: Հիշենք Բուզանդի խոսքերը Արտագերսում կուտակված գանձի մասին.

«Բազում գանձք մթերեալ կային ի նախնեացն ի հնոց ժամանակաց հետէ» (**Փավստոս Բուզանդ,** Դ, գլ. ԻԴ, էջ 121):

Անշուշտ, բոլոր երկրների պատմությունն արձանագրել է վերևում մեր նշած երևույթները, սակայն Հայաստանի պատմության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այդ հավելյալ արդյունքի երկրից դուրս հոսումը և նրա երկրում օգտագործելու հնարավոր չլինելու երևույթը Հայաստանի պատմության ընթացքում սիստեմ է դարձել, և այս մասնավորաբար «լծադիրների» վճարված հարկերի պատճառով: Ահա այս մասին է խոսքը:

Եթե ջրասակավությունը Մերձավոր Արևելքի երկրների հետ նույնացման երևույթն էր առաջացնում, ապա հավելյալ արդյունքի երկրում լիովին շրջանառության մեջ չկարենալ դրվելու հանգամանքը յուրահատուկ գիծ է մտցնում Հայաստանի ֆեոդալական հասարակարգում:

Նշված պայմաններում աշխատանքի հասարակական բաժանումը անօրինակ դանդաղությամբ էր ընթանում: Հայաստանի շինականը դարեր շարունակ մնացել է և՛ հողագործ, և՛ անասնապահ, և՛ միաժամանակ բնարդյունքի վերամշակողը:

Աշխատանքի բաժանումը, սահմանափակված նահապետական ընտանիքի ներսում, այդ ընտանիքը մի տնտեսական ամբողջական միավոր էր ներկայացնում իրենից[1]:

Գյուղում՝ գյուղատնտեսական գործիքների պատրաստման և վերանորոգման բնագավառում առաջացող աշխատանքի հասարակական բաժանման նոր ձևերի, որոնք հետագայում զարգացող արհեստների բջիջներն էին, զարգացումը շատ դանդաղ էր ընթանում: Տեխնիկայի զարգացումը, կապված կենցաղային մի շարք այլ խնդիրների հետ, ընթանում էր այնպիսի դանդաղությամբ, որ Քսենոֆոնի նկարագրած գետնափոր տներում ապրողները դարեր շարունակ չէին դուրս գալիս հողի տակից:

Ահա այս պայմաններումն էր ընթանում «քաղաքների» քաղաքայնանալու պրոցեսը:

Կարծում եմ՝ պատմական իրականությունն արձանագրած կլինենք, երբ ընդունենք, որ հայ Արշակունիների դինաստիայի և նրա հաջորդող մարզպանական Հայաստանի առաջին շրջանում ունենք իրար փոխարինող Ար-

[1] Հայաստանում ֆեոդալական տնտեսության կազմակերպության մասին տե՛ս մեր աշխատությունը, **A. Sorian,** Die Soziale gliederung d. arm. Volkes im Mittelalter, հատ. I, գլ. 1-5:

տաշատ, Վաղարշապատ և Դվին քաղաքները, որոնք, գերազանցորեն լինելով երկրագործական աստիճանի քաղաքներ, հատկապես Արտաշատն ու Դվինը դարձել էին Արևելքի և Արևմուտքի միջև կատարվող տրանզիտային առևտրի կարևոր պունկտ: Եվ այս հատկապես այն ժամանակաշրջանում, երբ ավանդական պատմագրությունը կործանման ժամանակաշրջան է ընդունում:

IV դարի քաղաքային կյանքի անկման հիմնական վկայությունը կազմում է, ըստ պրոֆ. Մ. Աբեղյանի որակման, «Պարսից պատերազմ» վեպի հեղինակ Բուզանդի վկայությունը, որ վերաբերում է 363 թ. Շապուհ II-ի արշավանքներին.

«…Եկին ի քաղաքն մեծ յԱրտաշատ, և առին զնա, և կործանեցին զպարիսպ նորա… և զամենայն շինուած քաղաքին հրձիգ արարին զփայտակերտն և զքարակերտն քանդեցին,- զպարիսպն ըստ նմին օրինակի և զամենայն շինուած քաղաքին ի հիմունսն ապականեցին, և, ոչ թողին մի, և ոչ թողին բնաւ քար ի քարի վերայ…»: Առնուին և զՎաղարշապատ քաղաք քանդէին բրէին զքաղաքն ի հիմանց տապալէին… Առնուին և զմեծ քաղաքն Երուանդաշատ… և զքաղաքն ի հիմանց տապալեալ բրեալ յատակէին» (**Փավստոս Բուզանդ**, Դ, գլ. ԾԵ, էջ 145-147): Այս վիճակին էին հասնում, ըստ պատմիչի, Զարեհավանը, Զարիշատը, Վանը, Նախճավանը:

Այս վկայությունն օգտագործողները, գրեթե առանց բացառության, Բուզանդի վիպական չափազանցությունները մատնանշել են, սակայն գործածված «քաղաքի» վրա ուշադրություն չեն դարձրել: Բուզանդից և այլ հնագույն հայ պատմագիրներից բերած վկայությունները՝ «քաղաքի» այս ժամանակաշրջանի նշանակության մասին, հիմք են տալիս մեզ եզրակացնելու, որ այս վկայության մեջ նշված Արտաշատը, անշուշտ, տարբերվում էր Երվանդաշատից, Զարեհավանից, Զարիշատից, Վանից, որի մասին, ինչպես տեսանք, բերդ և քաղաք որակումը նույնանում են նույն հեղինակի մոտ: Անկասկած, խոշոր ավերումներ և գերեվարություններ լինում էին Շապուհ II-ի այդ արշավանքների ընթացքում, սակայն այդ ավերումները, ինչպես վկայության մեջ տեսնում ենք, գերազանցորեն վերաբերում էին պարսպված այն ամրություններին, որոնց կանգուն մնալը կարող էր հետագա ապստամբությունների դուռ բանալ, ինչպես Արտագերս ամրոցը Արշակ II-ի Անհուշ բերդում բանտարկությունից հետո բավական երկար զբաղեցնում էր պարսիկներին:

Ուշագրավ է, որ Շապուհ II-ի այս գրավումների մասին ժամանակակից և դեպքերին մասնակից հույն պատմիչ Ամմիանոս Մարցելլինուսը շատ կարճ հայտնում է, որ Արշակ II-ի ձերբակալումից հետո պարսիկները գրավում են Արտաշատն ու Մարաստանի սահմանակից Հայաստանի մեծագույն մասը:

Ուշագրավ է նաև այն, որ Խորենացին ոչ միայն Բուզանդի՝ Հայաստա-

նից տարված ազգաբնակության երևակայական թվի մասին տված վկայության հիշատակումը զանց է առնում, այլև Բուզանդի հիշատակած յոթը «քաղաքների» փոխարեն հիշատակում է միայն Վանը, Արտաշատն ու Վաղարշապատը, իսկ ամենից ուշագրավը Շապուհի տված հրամանի մասին եղած վկայությունն է.

«Ի նմին ժամու եհաս հրաման Շապհոյ արքայէ, զի քանդեալ աւերեսցեն **զամրութիւն ամենայն քաղաքաց** (ընդգծ. – Հ. Զ.) (**Մովսես Խորենացի**, Գ, գլ. ԼԵ, էջ 300):

Բուզանդի վկայության վիպական չափազանցությունն ակնհայտնի է նաև նրանից, որ, ինչպես ասացինք, Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդիոնի միջև կնքված դաշնադրության հիման վրա սահմանամերձ երեք առևտրական, մաքսային պունկտերից մեկը դառնում էր Արտաշատը, և այս՝ ընդամենը մի երկու տասնամյակ հետո: IV դարի վերջին երկու տասնամյակում Արտաշատում, իսկ հետագայում (V դարում) Դվինում նման առևտրական հարաբերությունների զարգացումը մեծապես նպաստում էր Այրարատյան շրջանի ներքին փոխանակային հարաբերությունների զարգացման: Նշված այս ժամանակաշրջանում անհրաժեշտ է նկատի ունենալ երեք հանգամանք, որ Հայաստանի տնտեսական զարգացման խթան էին դառնում: Պարսկաստանը IV դարի երկրորդ կեսին Անդրկովկասի Հռոմեական կայսրության վասալ թագավորությունների հողամասերը գրավում և ստեղծում է մինչև Հյուսիսային Միջագետքի Մծբին հայտնի առևտրական կենտրոնի հետ տերիտորիալ մի ամբողջականություն Մերձավոր Արևելքի այս երկրամասում: Մի հանգամանք, որ խիստ հեշտացնում էր առևտրական, փոխանակային հարաբերությունները: Արտաշատը (հետագայում Դվինը) և Մծբինը այն առևտրական կենտրոններն էին դառնում, որտեղ Արևելքի և Արևմուտքի միջև կատարվող առևտուրն էր կենտրոնանում. այդ վայրերը, որոնք առաջ ծառայում էին գերազանցորեն որպես միջնորդ առևտրականների ճանապարհորդության կայաններ, դառնում են այնպիսի վայրեր, որտեղ այդ առևտրականներն իրենց գործարքներն են կատարում: Երկար մնում են այդ վայրերում և հավանաբար իրենց բնակությունն են հաստատում: Այս արդեն նախկինի համեմատությամբ բոլորովին այլ երևույթ էր: Ներքին շուկայական հարաբերությունների զարգացման տեսակետից, որքան մեզ հայտնի է, այս կարևոր երևույթի վրա հարկ եղած ուշադրությունը չի դարձվել. հավանաբար Հյուսիսային Միջագետքի հետ ստեղծված այդ սերտ հարաբերությունների ընթացքում հրեաների և ասորի առևտրականների երթևեկությունը, և նրանց՝ Հայաստանում հաստատվելն ավելի մեծ համեմատություններ էր ստանում: Վերջապես այն, որ 387 թ. Հայաստանի բաժանումից հետո Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդիոնի միջև մինչև VIII դարի սկիզբը խաղաղության երկար մի ժամանակաշրջան էր տիրում, այս հանգամանքը

ստեղծում էր լայն հնարավորություններ Մերձավոր Արևելքում առևտրական հարաբերությունների աշխուժացման:

Հայաստանի հարավում աշխուժանում են փոխանակային հարաբերությունները: Այս երևում է **Ioshua** սուրիացի պատմիչի մի վկայությունից. խոսելով Արշամաշատում գոյություն ունեցող գեղեցիկ եկեղեցու՝ 498/499 թ. երկրաշարժից քանդվելու մասին՝ հայտնում է, որ նույն քաղաքում տարվա որոշ օր շրջակայքից հավաքվում էին առևտրի համար, որը տոնական օրերի տոնավաճառի բնույթ ուներ, ինչպես այդ տեղի էր ունենում Փոքր Ասիայի այլ քաղաքներում[1]:

Անկասկած, Արտաշեսյան դինաստիայի սկզբնավորության հիմնվող Արտաշատը քաղաքայնանալու ստադիայումն էր գտնվում մեր թվականության առաջին դարում, հավանաբար և նրանից առաջ: Սակայն նրա աստիճանական զարգացմանը խոշոր չափով վնասում էին հռոմեական բանակների՝ 59 և 163 թթ. հրկիզումներն ու քանդումները, ինչպես IV դարի 60-ական թվականներին Շապուհ II-ի ավերածություններն ու գերեվարությունը: Արտաշատին փոխարինող Նոր քաղաքը՝ Վաղարշապատը, որը հնագույն բնակավայրերից էր, II դարի վերջերին կոչվում էր նույն դերը կատարելու, ինչպես դեռևս IV դարի 30-ական թվականներին թագավորական ռեզիդենց դարձող Դվինը փոխարինում էր V դարում Արտաշատին: Աշխարհագրական տեսակետից այնքան իրար մոտ գտնվող քաղաքների այս կոմպլեքսը պետք է նկատի ունենալ նույն տնտեսական շրջանի տարբեր պատմական դարաշրջաններում իրար փոխարինող քաղաքայնացող բնավայրեր: Քաղաքների այս կոմպլեքսը խնդրո առարկա ժամանակաշրջանում գերազանցապես երկրագործական աստիճանի վրա գտնվող քաղաքներ են: Այս տեսակետից վերին աստիճանի ուշագրավ և հիմնական նշանակություն ունեցող խնդիր է ֆեոդալական արտադրական հարաբերություններում շահագործման եղանակը, որ, լինելով գերազանցորեն արդյունավճար ռենտայի ձևով, պահպանել էր և աշխատավճար ռենտայի ձևը: Արձանագրելով այս կարևոր հանգամանքը՝ մենք կանդրադառնանք այդ խնդրին մի այլ հատուկ մենագրական ուսումնասիրությամբ:

Հայ Արշակունիների դինաստիայի շրջանում աստիճանաբար զարգացող և իրար փոխարինող Արտաշատն ու Վաղարշապատը, ինչպես և պատմական Հայաստանի այլ ամրացած ամրությունները, մեծ չափով վնասվում են IV դարի 60-ական թվականներին Շապուհ II-ի արշավանքների ընթացքում: Սակայն 387 թվին՝ Հայաստանի բաժանումից հետո, Սասանյան Պարսկաստանի՝ Մերձավոր Արևելքում Անդրկովկասից մինչև Հյուսիսային Միջագետք իր տիրապետության ենթարկած ամբողջական տերիտորիան

[1] The chr. of **Ioshua** the styliste, XXXV, անգլ. թրգմ. W. Wright, Cambridge, 1882, էջ 25-26:

Բյուզանդիոնի և Պարսկաստանի միջև կնքված դաշնագրության հիման վրա Արտաշատի, ապա Դվինի՝ Արևելքի և Արևմուտքի՝ առևտրականների հանդիպման վայր լինելու հանգամանքը, ինչպես և Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդիոնի միջև 387 թ. Հայաստանի բաժանումից հետո V դարում տիրող խաղաղությունն այն էական պայմաններն էին, որոնք հնարավորություն էին ընձեռում Հայաստանի տնտեսական զարգացման: Սրանով է բացատրվում V դարի առաջին տասնամյակից սկսած այն կուլտուրական վերելքը, որ տեսնում ենք հայոց լեզվի և գրականության բնագավառում:

Ավանդական պատմագրության այն պնդումը, թե IV դարի 60-ական թվականներից սկսած՝ Հայաստանում տնտեսական կյանքի լիակատար քայքայում է տեղի ունենում, ուժեղ հակասություն է կազմում V դարի կուլտուրական վերելքի հետ: Անհրաժեշտ է նշել նաև այն, որ ավանդական պատմագրության բուրժուական վերամշակումը Հայաստանի պատմական պրոցեսի վերելքային դարաշրջանները կապում է հայկական թարգավորությունների հետ (Հայ Արշակունիների և Բագրատունիների շրջանները). այնինչ, ըստ այդ կոնցեպցիայի, հատկապես Մերձավոր Արևելքի պետությունների տիրապետության դարաշրջանները Հայաստանում նշվում են անկումային դարաշրջաններ, որի վերջին օղակը, ինչպես ասացինք, կազմում է XI դարի կեսից մինչև XIV դարը: Ուրույն մոտեցում է ունեցել այդ պատմագրությունը XIV դարին հաջորդող դարաշրջաններին:

Նշելով հայ Արշակունիների ժամանակաշրջանի պարզաբանման համար Արտաշատ, Նոր քաղաք Վաղարշապատի, ինչպես և մարզպանական Հայաստանի և նրա հաջորդող արաբական տիրապետության շրջանի համար Դվինի ունեցած կարևորությունը՝ կարծում եմ, որ պարզ է միաժամանակ այդ կոմպլեքսի պեղումների խիստ անհրաժեշտ լինելու հանգամանքը:

Եթե ակադ. Ն. Յա. Մառի և նրա գործակիցների՝ Անիում կատարած պեղումները Հայաստանի պատմության կարևորագույն մի շրջանի գիտական լուսաբանության հիմքը դրին, ապա Արտաշատ, Նոր քաղաք Վաղարշապատ, Դվին կոմպլեքսի պեղումները մատենագրական վկայություններից հանած մեր այս եզրակացությունների վրա կոչված են մեծ լույս սփռելու:

ԳԵՂԱՐԴԱՁՈՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՊԵՂՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1932 թ. օգոստոսին 16-ին՝ ՀՍԽՀ կուլտուրայի պատմության ինստիտուտի գծով շրջաններում (Գառնի-Գեղարդ) կատարած շրջագայությանս ժամանակ, ուշադրությունս գրավեց այժմյան Այրեվանքի կամ Գեղարդավանքի (XIII դարու մի պատմական կարևոր հուշարձան) դարպասին կից հողաբլուրը, որը զառիվեր բարձրանում է դեպի բարձրաբերձ ժայռերը:

Բարձրանալով այդ զառիվերից մոտ 100 քայլ՝ հողաբլուրի արևմտյան-հյուսիսային կողմում նկատվեց մի ճեղքվածք. ներս սողոսկելով՝ պարզվեց ժայռի մեջ փորագրված սրբատաշ մի շինության վերևի մասերը:

Երևան վերադարձիս, ուսումնասիրելով մինչ այժմ մեզ հայտնի մատենագրական վկայությունները Գեղարդաձորում եղած պատմական շինությունների մասին, պարզվեց հետևյալը:

Հին Այրեվանքի մասին տեղեկություններ է հաղորդում X դարու պատմագիր Հովհաննես Դրասխանակերտցին: Երկու տարբեր ժամանակաշրջանների վերաբերյալ գտնում ենք նաև մի վկայություն XIII դարու պատմագիր Ստեփանոս Օրբելյանի մոտ, որը հետևում է Հովհաննես Դրասխանակերտցիին:

Հովհաննես Դրասխանակերտցին իր հաղորդած վկայություններից երկրորդին ժամանակակից է, և պատմական դեպքերը կատարվում են իր շուրջը: Առաջին վկայությունը վերաբերում է 841 թ.[1], երբ Բագարատ Բագրատունին և ժամանակի կաթողիկոս Հովհաննես Ովայեցու միջև ստեղծված հակառակության պատճառով վերջինը քաշվում է «ի վանս այրից».

«… Իսկ մեծի առնն Յովհաննու իմացեալ զլլկանս սատանայական իշխանին…, ինքն յարուցեալ գնաց ի բանակետեղ սրբոյն ի վանս այրից»[2] (**Հովհաննես Դրասխանակերտցի,** Թիֆլիս, 1912, էջ 116):

Ինչպես տեսնում ենք, Հովհաննես Դրասխանակերտցին 841 թ. հաղորդած վկայության մեջ խոսում է «ի վանս Այրիցի» մասին, սակայն պատ-

---

[1] Ղ. Ալիշանը ընդունում է 839 թ. («Այրարատ», էջ 345): Սակայն Մ. Օրմանյանն իրավամբ նկատում է, որ պետք է 841 թ., քանի որ Հովհաննես Դրասխանակերտցի պատմագիրը որոշակի հայտնում է Ովայեցու Այրեվանք քաշվելու մասին. «…Յետ սկզբան ձեռնադրութեան նորա իբրև անցին ամք ութ»: Ովայեցու կաթողիկոս լինելու թվականն ընդունված է 833 թվականը:

[2] Հովհաննես Դրասխանակերտցի պատմագիրն իր երկրորդ վկայության մեջ ևս, ինչպես կտեսնենք, Այրեվանքի մասին ասում է՝ «ի կացրդից Սրբոյն Իսահակայ»: Ալիշանը («Այրարատ», էջ 345) նկատում է. «Երբ եղև տեղիս կացուրդք բանակետեղ Ս. Սահակայ, ոչ յիշատակին նախնիք…»: Այս մասին ուշագրավ է այն վկայությունը, որ գտնում ենք 1706 թ. Կ. Պոլսում տպագրված «Հայսմավուրքում» մեհեկի 24-ին (մարտի 2-ին).

«Եւ իբրև նստաւ Սուրբն Ներսէս (4-րդ դարում) հայրապետն յաթոռ Սուրբ Լուսաւորչին, ելեալ շրջէր յամենայն գաւառաւ հայոց… Եւ գնացեալ յԱյրի վանս ի գաւառի Կոտէից, ի սահմանս գեղաքաղաքին Գառնոյ…»:

մագիրը չի ճշտում նրա վայրը: Այլ է երկրորդ վկայությունը, որտեղ գործող անձնավորությունն ինքն է՝ որպես ժամանակի կաթողիկոս:

Յուսուֆի կողմից Այրարատ ուղարկված Ներսը Ըսբուքը կամ Ներսը Սըբըքին Սյունյաց Բաբկեն և Սահակ իշխաններին Դվինում բանտարկելուց հետո վտանգ էր սպառնում նաև Հովհաննես Կաթողիկոսին, որ այդ ժամանակ գտնվում էր «ի վանս Այրից»:

Ուշագրավ մի ցուցմունք է այս տեսակետից, որ մեզ արել է Գարեգին եպսկ. Հովսեփյանը Գեղարդի «Կապ» կոչված մուտքի աջ կողմի սարահարթում եղած ավերակի մասին, ինչպես և «Կապի» ձախակողմում փոքր բարձրության վրա եղած սրբատաշ քարերով մի շինության ավերակի մասին: Հետագայում կատարվելիք պեղումները կարող են պարզել այդ շենքերի ինչ լինելը և հնությունը:

Հովհաննես Կաթողիկոսը այդտեղ, անապահով զգալով իրեն, փախուստ է տալիս դեպի Սևանի կղզին:

«…Այսպէս ապա ելեալ ի վանաց անտի այրից ի կացրդից սրբոյն Իսահակայ, որ ի ծործորս լերինն Գեղայ ի ձորակի միջոց (ընդգծ. մերն է - Հ. Զ.)՝ դէպ ուղիղ գնացած.. կուսակրօնից միայնարանս, որ ի Սևան կղզւոջ…» (**Հովհաննես Դրասխանակերտցի,** Թիֆլիս, 1912, էջ 335):

Ապա շարունակելով պատմությունը՝ խոսում է Ներսըրի Այրեվանքի վրա կատարած հարձակման մասին.

«… Վաղվաղակի առաքէ զօր բազում հեծելովք և լէգէոն վառելովք ի վանս կուսակրօնիցն, որ յայրի անդ յարևելից հիւսիսոյ գեղաքաղաքին Գառնոյ» (նույն տեղը, էջ 339):

Ըստ Մ. Օրմանյանի (Ազգապատում, հատ. I, էջ 1061)՝ այս դեպքերը տեղի են ունենում 926 թվականին:

Ուշագրավ է Հովհաննես Դրասխանակերտցու երկրորդ վկայությունը Այրեվանքի տեղը ճշտելու տեսակետից. «ի ծործորս լերինն Գեղայ ի ձորակի միջոց» և ավելին հեռուն «յարևելից հիւսիսոյ գեղաքաղաքն Գառնոյ»:

Այս վկայությունները կասկած չեն թողնում, որ պատմագրի կողմից ցույց տրված վայրն այժմյան Այրեվանքի կամ Գեղարդավանքի վայրն է:

Հողի երեսին գտնված շինություններից և խաչքարերից մինչև այժմ մեզ ծանոթ հնագույն արձանագրություններն են այժմյան Այրեվանքի դարպասի հյուսիսային կողմում գտնված Աստվածածին կիսավիմափոր եկեղեցու արևմտյան պատի ժայռափոր խաչի տակին. «Ի: ոժե: թվ. հայոց» (1168 թ.) արձանագրությունը և նույն պատի վրա եղած հետևյալ արձանագրությունը.

«Ի թվ: ՈԻԶ: (1177 թ.) Ես Ստեփաննոս Կուտկեանց ետու զիմ հայրենի հողն զքարափաւղոց ետու ի սրբոյ ուխտս յառաջնորդութեան հաւր Գրիգորոս: Դ: Աւր ժամ ի տարոջն»[1]:

[1] Այս երկու արձանագրությունները տալիս ենք 1932 թ. աշնան գիտական արշավախմբին

ՀՍԽՀ կենտրոնական ձեռագրատան № 482/3795 ձեռագրի (Տոնական) հիշատակարանում գրիչ քահանա Փիլիպոսի կողմից Այրեվանքի մասին հետևյալ վկայությունն ենք գտնում.

«…Զի յուժ տառապանաւք և պանդխտությամբ գրեցի զսա ի սուրբ ժողովարանիս Այրեվանիս, ընդ հովանեաւ սրբոյ Աստվածածնի և սուրբ վկայից…»: Հիշատակարանը ունի 1190/1191 թվականը:

Վերև բերված վկայությունները ցույց են տալիս, որ այժմյան Այրեվանքից առաջ Գեղարդաձորում նույնանուն վանք է գոյություն ունեցել:

Այս կերպ մեր առաջ հարց ծագեց. այժմվա Գեղարդավանքի կողքում եղած հողաբլուրը և նրա մի ծայրից երևացող շինության մասերը արդյոք լուրջ հիմքեր չե՞ն տալիս կասկածներ հարուցելու այդ հողաբլուրի մասին:

Կուլտուրայի պատմության ինստիտուտի պատմության սեկտորի՝ 1932 թ. սեպտեմբերի 25-ի նիստում այս հարցը քննության առնվեց և որոշվեց սեպտեմբերի վերջին սկսել մի նախնական ստուգողական պեղում նշված վայրում:

Սեպտեմբեր 29-ին արշավախմբին մասնակցող ընկերները՝ Հակոբ Զորյան, պրոֆեսոր Ա. Խաչատրյան և Տարագրոս, մեկնեցին Գեղարդ: Պեղման աշխատանքներն սկսեցինք հոկտեմբերի 1-ին: Նախքան պեղումը լուսանկարվեց շինության երևացող մասը, շրջապատը և ամբողջ հողաբլուրը: Պեղումն սկսեցինք շինության երևացող մասից 2 մետր ներքևից: Առաջին օրը հաջողվեց այնքան բաց անել, որ կարելի էր մտնել շինության այդ մասը և չափագրումներ կատարել. չափագրումները կատարում էր ընկ. Տարագրոսը: Պրոֆ. Ա. Խաչատրյանը կազմում էր պեղման աշխատանքների օրագիրը:

Պարզվեց, որ շինությունը շարունակվում է. հարկավոր էր պեղման աշխատանքները շարունակել դեպի հյուսիս, հողաթմբից զառիվերի ուղղությամբ երկու ժայռերի արանքում, որոնցից մեկը վերևից էր ընկել և բավական մեծ դժվարություններ էր պատճառում աշխատանքներին: Անհրաժեշտ եղավ երեք օր նշված ժայռերի արանքում կատարել պեղումը, որպեսզի հնարավոր լինի շինության շարունակությունը հայտնաբերել, չորրորդ օրը միայն հաջողվեց մեզ շուրջ 12 մետր երկարության վրա շինության առաստաղի շրջագծի մասը հայտնաբերել: Այդ մասերը նույնպես չափագրեցին և նկարվեցին:

Այս աշխատանքներից հետո ստուգողական պեղումը համարեցինք վերջացած: Արդյունքի մասին զեկուցեցի Կուլտուրայի պատմության ինստիտուտի նախագահության նիստում և ընդհանուր ժողովում հոկտեմբերի 11-ին:

Այն ժամանակ մեր եզրակացությունն ու ենթադրությունները հետևյալ կերպ ձևակերպեցինք:

մասնակցող ընկ. Սեդրակ Բարխուդարյանի ընթերցման համաձայն, որը հավաքել է այժմյան Այրեվանքի և շրջակայքի բոլոր այն արձանագրությունները, որոնք կարողացել է գտնել: Իր այդ հավաքածուի մեջ կան այնպիսիները, որոնք արդ չեն հրապարակված:

Շինության մինչև այժմ հայտնաբերված մասը կասկած չի թողնում, որ այդ միակտուր ժայռի մեջ շատ մաքուր և սրբատաշ փորված մի շինություն է, որի առաստաղի արևմտյան-հյուսիսային պատն է հայտնաբերված, և որի գմբեթն ու այլ մասերը գտնվում են հողաթմբում: Ուշագրավն այն էր, որ դեպի հյուսիս դարձող պատի վերևի մասում մի գեղեցիկ խոյակ հայտնաբերվեց:

Շենքի ճարտարապետական կառուցվածքի և արժեքի գնահատումը թողնում ենք մասնագետներին:

Առաջին հարցը, որ դրվում է մեր առաջ, այդ այն է, թե արդյոք հայտնաբերվող այս շինությունը Հովհաննես Դրասխանակերտցիի նկարագրած «զգեղեցիկ շինուածս սքանչատեսս» այրից վանքը չէ՞, արդյոք հայտնաբերված միակ խոյակն ու մաքուր սրբատաշ պատերը չե՞ն վկայում այդ «չքնաղատես» ճարտարապետական հուշարձանի մասին:

Այդ դեպքում հայ ճարտարապետության պատմությունը կունենա մի վիմափոր տաճարի կոթող մինչև IX դար հասնող: Հայտնի է, որ նման վիմափոր տաճարի գլուխգործոց համարվում է XIII դարում նույն տեղի մոտ կառուցված այժմյան Գեղարդավանքը:

Երկրորդ հարցը. փլուզումը տեղի է ունեցել այդ շինության ավերակ վիճակո՞ւմ, թե՞ նրա փառավոր շրջանում հանկարծակի՞, թե՞ աստիճանաբար:

Վերև մեջ բերված մեր վկայություններից բացի՝ մատենագրական ուրիշ կամ այլ վկայություններ չունենք այդ մասին:

Ո՞ր ժամանակ է փլել այդ շինությունը: Անկասկած է, որ Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդած երկրորդ վկայությունից հետո: Արդեն առնվազն կիսավեր դրության մեջ չէ՞ր, երբ նրա կողքին XIII դարում նման մի վիմափոր տաճար էր կառուցվում:

Ի՞նչ վկայություններ ունենք X-XII դարերում եղած երկրաշարժերի մասին:

1007-1011 թթ. Երզնկայում (**Սամուել Անեցի,** էջ 104, **Մխիթար Այրիվանեցի,** էջ 57), 1141 թ.՝ Գանձակում (**Մխիթար Այրիվանեցի,** էջ 63), 1161 թ. կրկին Երզնկայում (**Մխիթար Այրիվանեցի,** էջ 63):

1679 թ. Երևանի մասին հիշատակված երկրաշարժը, որ, ըստ Զաքարիա Սարկավագի (մաս II, գլ. ԾԱ, էջ 104), «...եկեալ շարժս այս ի կողմանց Գառնւոյ», կործանում է բազմաթիվ եկեղեցիներ և վանքեր, մեծ վնաս է հասցնում Այրեվանքին: Բայց այս վկայությունը վերաբերում է արդեն այժմյան Այրեվանքին, քանի որ երկրաշարժից հինգ տարի անց՝ 1684 թ., քարերով լցված Այրեվանքը մաքրվում է, տաշված քարով պարիսպ է կառուցվում վանքի շուրջը, ինչպես և քոշքեր, ապարանք, սենյակներ և խոհանոցներ են կառուցվում (տե՛ս **Ղ. Ալիշան,** Այրարատ, էջ 348):

Եթե փլուզումը հանկարծակի և վանքի գործուն շրջանում է կատարվել, ապա հետագա հիմնական պեղումը խոշոր անակնկալներ է վերապահում և

ժամանակաշրջանի տեխնիկայի իրեր հայտնաբերելու, ինչպես և այլ բազմաթիվ նորություններ:

Այս հարցերի պատասխանը կստացվի այն ժամանակ, երբ կկատարվի հիմնական պեղումը և այն որքան շուտ, այնքան լավ:

Ընդհանուր ժողովը միաձայն որոշեց կազմակերպել հիմնական պեղումներ ճարտարապետ Թորոս Թորոմանյանի ղեկավարությամբ և անդամակցությամբ ընկ. ընկ. Տարագրոսի և Սեդրակ Բարխուդարյանի:

Արշավախմբին մասնակցեցին 4-5 օրով ճարտապետ Բունիաթյանն ու Հակոբ Զորյանը, վերջինը պարբերաբար գնում էր ստուգելու պեղման արդյունքները:

Պեղումներն սկսեցին 1932 թ. հոկտեմբերի 22-ին և շարունակվեցին մինչև նոյեմբերի 15-ը:

Հիմնական պեղման արդյունքների մասին ինստիտուտի նախագահության նիստում լսվեց ճարտարապետ Թ. Թորամանյանի այստեղ զետեղված տեղեկագիրը:

ՆԵՐԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅ ԱՐՇԱԿՈՒՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ (330-387 ԹԹ.)

(Պարսկական Հայաստանի բաժանումը Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդիոնի միջև)

Չորրորդ դարի պատմական անցքերի շարքում խոշոր քաղաքական մի իրադարձություն էր պատմական Հայաստանի բաժանումը (387 թ.) երկու մրցակից պետությունների՝ Սասանյան Պարսկաստանի և Բուզանդիոնի միջև: Այս թվականից մինչև 428 թ. նոր փուլի մեջ է մտնում հայ Արշակունիների թագավորությունը, և Հայաստանի երկու բաժան մասերը քաղաքականապես ենթարկվում են Պարսկաստանին և Բուզանդիոնին: Այսպիսով՝ վերջ էր տրվում 66 թվից Հայաստանում իշխող Արշակունիների դինաստիային: Այս լուծումն էր ստանում այն երկարատև պայքարը, որ, սկսած առաջին դարից, Հայաստանի համար մղվում էր Հռոմեական կայսրության և Պարսկաստանի միջև: Երկու պետությունների միջև շուրջ չորս դար գոյություն ունեցող վիճելի մի շարք հարցերից մեկն էլ կազմում էր Հայաստանի վրա անբաժան գերիշխանություն ունենալու խնդիրը: Տարբեր դարաշրջաններում հարցին տարբեր լուծումներ էին տրվում, որոնք, սակայն, կրում էին կոմպրոմիսային բնույթ: Հարցն արմատական լուծում է ստանում միայն չորրորդ դարում:

Պատմական այս կարևոր իրողությանը մինչև այժմ տրված բացատրությունները, կարծում ենք, միակողմանի բնույթ են կրում: Արշակունիների թագավորության թուլացման ու անկման պատճառը, ըստ ոմանց, այն էր, որ նա իր արտաքին քաղաքականությամբ հարել էր Պարսկաստանին այն ժամանակ, երբ վերջինս թույլ էր՝ Հռոմեական կայսրության հետ համեմատած (խոսքը վերաբերում է պարթևական դինաստիային մինչև 226 թ.), իսկ Սասանյան դինաստիայի ժամանակ Հայաստանը հարել էր Հռոմին և ապա՝ Բուզանդիոնին, երբ վերջիններս ավելի թույլ էին, քան Սասանյան Պարսկաստանը: Պատմական փաստերը հնարավորություն չեն տալիս այսպիսի ընդհանուր եզրակացություն անելու: Հայաստանի Արշակունի թագավորության կողմնորոշումը դեպի Հռոմ կամ Պարսկաստան, ամեն մի դարաշրջանում տարբեր փոփոխություններ է կրել, և այդ քաղաքականությունը ոչ միայն կռվող հարևան կայսրությունների ունեցած հաջողություններով է պայմանավորվել, այլև ներքին հոսանքների ուժերի փոխհարաբերությամբ:

Երևույթի միայն ձևական հաստատումն ու ներքին ազդակների անտեսումն է այն պնդումը, թե Հայաստանի ճակատագիրը տնօրինվել է հարևան երկու պետությունների միջև կնքված գաղտնի կամ բացահայտ համաձայնություններով: Անկասկած, Պարսկաստանի և Բուզանդիոնի միջև IV դարում մղված կռիվները նշանակալից դեր են կատարել: Սակայն դեռևս անլուծելի է մնում այն հարցը, թե ինչու պատմական Հայաստանի հարևան

կայսրությունների համար դարեր շարունակ վիճելի առարկա դարձած մի խնդիր կոմպրոմիսային լուծման փորձերից հետո միայն չորրորդ դարում էր իր արմատական լուծումն ստանում: Նախորդ դարերում նույնպես կռիվներ են տեղի ունեցել այդ հարցի շուրջը, որի արմատական լուծումը, սակայն, չեն կարողացել տալ հարևան պետությունները:

Այս հարցի բացատրությունը հնարավոր կլինի տալ միայն այն ժամանակ, երբ հարևան կայսրությունների վարած քաղաքականության կողքին միաժամանակ նկատի կառնենք ֆեոդալական Հայաստանի ներքին կացությունը և այն դրությունը, որ ստեղծվել էր Արշակունի թագավորության և աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների միջև: Նախքան ընդհանրացումների անցնելը անհրաժեշտ է ծանոթանալ պատմական այն դեպքերին, որոնք տեղի են ունենում Սասանյան Պարսկաստանի և Հռոմի միջև տիրող քառասնամյա խաղաղությունից հետո՝ պատմական այն ժամանակաշրջանը, որ հայտնի է որպես Բուզանդիոնի և Պարսկաստանի միջև մղված երեսնամյա պատերազմների շրջան:

Բոլորովին տարբեր պատմական արժեք ներկայացնող պատմիչներ ունենք այս ժամանակաշրջանի համար. մեկը «Պարսից պատերազմների վեպից» հատվածներ պահպանողն է, որ Մամիկոնյան նախարարության փառաբանությունն է անում. Փավստոս Բուզանդացին է դա: Իսկ մյուսը Սահակ Բագրատունու հրահանգով շարադրել է «Հայոց պատմությունը». դա էլ Մովսես Խորենացին է: Մամիկոնյան և Բագրատունի նախարարական տոհմերի թշնամություններն իրենց ցայտուն արտահայտությունն են գտել այս երկու պատմական կարևոր սկզբնաղբյուրներում[1]: Հույն պատմիչներից ամենակարևորն այս շրջանի համար Ամմիանոսն է, որ ժամանակակից է և դեպքերին մասնակից, ուստի և արժեքավոր մի սկզբնաղբյուր է. վերջնիս վկայությունները հնարավոր են դարձնում ճշտելու մի շարք պատմական դեմքեր

[1] Բուզանդացու Պատմությունից մեզ հասել են «Պարսից պատերազմ» վեպի մնացորդները (**Մ. Աբեղյան,** Հայ ժողովրդական վեպը, «Ազգագրական հանդես», 1907, գիրք 16, էջ 80): Բուզանդացին իր Պատմությունը շարադրել է V դարում՝ այն ժամանակ, երբ Հայաստանի քաղաքական կյանքում խոշոր դեր էր կատարում Մամիկոնյան նախարարական տոհմը, որը ղեկավարում էր Պարսկաստանի դեմ ուղղված կղերա-նախարարական ապստամբությունը, այսպես կոչված, «կրոնական պատերազմները»: Ուստի միանգամայն հասկանալի է դառնում վիպական այն փառաբանությունը, որը գտնում ենք այդ աշխատության մեջ Մամիկոնյանների հասցեին: Այս տեսակետից Բուզանդացու Պատմությունը, որ այնքան արժեքավոր է IV դարի ներդասակարգային պայքարներն ըմբռնելու տեսակետից, չի կարելի առանց ստուգման օգտագործել: Թե ինչպես Մովսես Խորենացին ամեն կերպ աշխատել է նսեմացնել Մամիկոնյաններին և բարձրացնել Բագրատունիներին, այդ մասին ուշագրավ է երկու պատմիչների տված վկայությունների համեմատությունը, որ կատարել է Մարկվարտը. (հմմտ. **Ios. Marquart,** Untersuchung z. Geschichte von Eran Heft 1, Götingen, 1896, էջ 215-217): Մովսես Խորենացու ժամանակաշրջանը ճշտելու համար կարևորագույն մոմենտներից մեկն է այս:

ու դեպքեր, որոնք Բուզանդացու մոտ պահպանվել են բոլորովին այլ կերպ:

Ինչպես տեսնում ենք, գործ ունենք հայկական երկու սկզբնաղբյուրների հետ, որոնց հեղինակներն առաջնորդվել են հակադիր տենդենցներով, իսկ Ամմիանոսի միջոցով կարող ենք ստուգել միայն 358-378 թթ. միջև ընկնող ժամանակաշրջանը, քանի որ պատմիչի 31 գրքից բաղկացած աշխատության առաջին 13 գրքերը մեզ չեն հասել:

***

Թե ինչպիսի փոթորկահույզ շրջանի հետ գործ ունենք, ցույց են տալիս թեկուզ հետևյալ փաստերը:

Հայաստանի բաժանումից առաջ վերջին Արշակունի հետևյալ յոթ թագավորներից, ըստ պատմիչների վկայության, միայն մեկն է իր բնական մահով մեռնում:

Մարկվարտ[1]	**Աստուրյան**[2]	**Ադոնց**[3]
1. Խոսրով Կոտակ 330-338 2. Տիրան 339-349 3. Արշակ II 350-367/8[4] 4. Պապ 369-374 5. Վարազդատ -	=1.337-342= =2.342-350= =3.350-367= =4.368-374= =5.374-377= 6. Պարսկաստանի տիրապետությունը 377-378 7. Արշակ III 378-386	1. Չիք 2. Գահընկեց արված 344 3. 346-369[5] 4. 369-374 5. 374-378 6. Դնում է Մանվել Մամիկոնյան 378-385

Տրդատ III-ի մասին միակ տեղեկություն տվողը՝ Մովսես Խորենացին, հայտնում է, որ նրան թունավորում են նախարարներն իրենց կամքի համաձայն շարժված չլինելու պատճառով (**Մովսես Խորենացի,** Բ, գլ. ՂԲ):

Խոսրով Կոտակի հաջորդ Տիրան թագավորը պարսիկների կողմից կու-

[1] **Ios. Marquart**, Unters. z. Geschichte von Eran, էջ 217-224: Մարկվարտը ժամանակագրական այս ճշտումները կատարում է մինչև Պապի մահը: Նույն հարցին անդրադառնում է, իմիջիայլոց, հետևյալ իր վերջին երկու աշխատություններում՝ **Ios. Markwart**, Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930, էջ 60 և 163: Նույնը «Die Entstehung d. armenischen Bistümer», Rom, 1932, էջ 230 և 232/33:

[2] **P. Asdourian**, Die politische Beziehungen zwischen Rom und Armenien, 1911.

[3] **Н. Адонц**, Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, стр. 428.

[4] Մարկվարտն իր վերջին աշխատություններում Արշակ Բ-ի թագավորության սկզբի համար տարբեր թվականներ է նշում. մեկ՝ 356 (**Ios. Markwart,** Südarmenien und die Tigrisquellen, Wien 1930, էջ 60*, մեկ՝ 355 կամ 356) (**Ios. Markwart,** Entstehung d. armenischen Bistümer, Rom, 1932, էջ 230):

[5] Տպագրված է 349, որը, անկասկած, տպագրական սխալ է:

բացվում է (**Բուզանդ,** III, 20, **Խորենացի,** III, 17), նրա հաջորդ Արշակ II-ը Պարսկաստանում բանտարկվում և մահանում է Անհուշ բերդում (**Բուզանդ,** IV, 53, **Խորենացի,** III, 34), նրա հաջորդը՝ Պապը, սպանվում է Հայաստանում (**Բուզանդ,** V, 32, **Խորենացի,** III, 39, **Ammian**, 30, 1 1-22), նրա հաջորդը՝ Վարազդատը, արտաքսվում է Հայաստանից (**Բուզանդ,** V, 36), իսկ ըստ Մովսես Խորենացու (III, 41)՝ բանտարկվում է Բուզանդիոնի կայսեր կողմից:

Եթե թագավորների այս վախճանը ցույց է տալիս արտաքին ու ներքին քաղաքական անցուդարձերի մեջ հայ Արշակունիների թագավորության անկայուն և ալեկոծ վիճակը, ապա ուշագրավ է քրիստոնյա եկեղեցու պետերի վախճանը IV դարի ընթացքում, իսկ նախարարական տների և կաթողիկոսների պայքարն Արշակունի թագավորների դեմ ամբողջացնում է ներքին խռովահույզ շրջանի պատկերը:

Արիստակեսի կաթողիկոսությունը, ըստ Բուզանդի (II, 2) «խոստովանության», մահով է վերջանում. Խորենացին բաց է անում այդ «խոստովանության» մահը. Ծոփաց աշխարհի վերակացու կարգված Արքեղայոսն սպանում է նրան (**Խորենացի,** II, 91): Նրա հաջորդ Վրթանես կաթողիկոսն սպանվում է Տիրան թագավորի կողմից (**Բուզանդ,** III, 12, **Խորենացի,** III, 14), նույն թագավորի կողմից սպանվում է նաև Տարոնի շրջանի գլխավոր վերակացուն և միսսիոնի պետ Դանիել եպիսկոպոսը[1] (**Բուզանդ,** III, 4, **Խորենացի,** III, 14): IV դարի հայտնի Ներսես կաթողիկոսն սպանվում է (**Բուզանդ,** V, 24, **Խորենացի,** III, 38): Այսպիսով՝ ըստ պատմիչների վկայության, բացի Վրթանեսից, հունական հոսանքի ներկայացուցիչ կղերականության պետերից ոչ մեկն իր բնական մահով չի մեռնում:

Հայ Արշակունիների թագավորության ներքին անկայուն դրությունը երևան հանելու տեսակետից խոշոր նշանակություն ունի աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալական պետերի այս վախճանը, միաժամանակ սա հատկանշական ցուցանիշ է այն ուժեղ պայքարի համար, որ տեղի էր ունենում Արշակունի թագավորության և ֆեոդալների միջև: Այդ պայքարը, որ ապստամբ նախարարների կալվածների գրավումով էր վերջանում, սերտորեն կապված է այն քաղաքական իրադարձությունների հետ, որոնք տեղի էին ունենում IV դարի 30-ական թվականներից սկսած մինչև 80-ական թվականները: Այս ժամանակամիջոցին են համընկնում Սասանյան Պարսկաստանի և Բուզանդիոնի միջև քառասնամյա հաշտությունից հետո IV դարի 30-ական թվականներից սկսվող 30-ամյա պատերազմները: Եվ պատահական չէ, որ Արշակունի թագավորության և նախարարների միջև պայքարը սուր բնույթ է ստանում Խոսրով Կոտակի ժամանակից: Առաջին ապստամբողները լինում են Մանավազյաններն ու Որդունիները: Առաջինների կալվածքը գտնվում էր

[1] Հմմտ. Դանիել եպիսկոպոսի մասին **Ios. Markwart,** Die Entstehung d. armenischen Bistümer, էջ 187-197:

Վանա լճի հյուսիսում՝ Արածանիի ձախ ափին: Հաշտություն կնքելու համար ուղարկված Աղբիանոս եպիսկոպոսին անպատվում և թշնամությամբ հեռացնում են, ապա սկսում են ավերել արքունի կալվածքը (**Բուզանդ,** III, 4):

Ապստամբությունը ճնշվում է, և ապստամբ նախարարների արական սերունդը սրի է քաշվում. նրանց կալվածների հաշվին ստեղծվում են երկու եպիսկոպոսական թեմեր. Մանավազյանների կալվածքը Մանավազակերտի հետ միասին տրվում է Աղբիանոս եպիսկոպոսին և Որդունիների կալվածքը՝ Բասենի Եվտախի եպիսկոպոսին:

Խոսրով Կոտակն իր իշխանության առաջին տարիներին իր որսորդական հաճույքները բավարարելու նպատակով Գառնիից մինչև Դվին անտառ տնկել տալուց հետո շատ ծանր օրեր է ապրում:

Երբ Շապուհ II-ը Միջագետքում Բուզանդիոնի դեմ վերսկսում է պատերազմները, որոնք հետագայում փոխադրվում են Հայաստան, սա առիթ է դառնում, որ Պարսկաստանի կուսակիցները Հայաստանում ապստամբություն բարձրացնեն Խոսրով Կոտակի դեմ: Համաձայն հույն և հռոմեացի պատմիչների վկայության[1]՝ Խոսրով Կոտակն ստիպված է լինում փախչել հռոմեական հողամասը և միայն Կոստանդիանոսի կողմից Արևելքում ձեռնարկված արշավանքների ընթացքում նրան հաջողվում է վերադառնալ Հայաստան: Կոստանդիանոսը Պարսկաստանի կուսակիցների պարագլուխներին հռոմեական հողամասն է տեղափոխում:

Այս ժամանակաշրջանում Բզնունյաց նախարար Դատաբենը և Աղձնիքի բդեշխ Բակուրը Խոսրովի դեմ ապստամբում և անցնում են Պարսկաստանի կողմը: Ըստ Բուզանդի (III, 8, 9)՝ ապստամբների սերունդը սրի է քաշվում: Խոսրովի Բզնունյաց կալվածները (Վանա լճի հյուսիսարևելյան կողմը) գրավում է, իսկ Բակուր բդեշխի կալվածները (Տիգրիսի հյուսիսային կողմում) նվիրում է Սյունյաց Վաղինակ իշխանին. «… և Արար զնա բդեշխ և պայազատ տան նորուն»:

Ըստ պատմիչի՝ այս գործողությունները կատարողի դերում հանդես է գալիս այն Վաչե Մամիկոնյանը, որը Բակուր բդեշխի տոհմից մի պատանի թաքցնում է իր մոտ, «որ առ յապա ժառանգ տան նորա լինէր»:

Թե ինչ աստիճանի ներքին խռովալից մի շրջան էր, և շարժումն ինչպիսի վտանգ էր սպառնում Արշակունիների թագավորության, այդ ցույց է տալիս Բուզանդի հետևյալ ուշագրավ վկայությունը.

«Բայց յետ այսորիկ ոչ դադարէին Պարսք ի տալ պատերազմ ընդ Խոս-

[1] Ըստ Յո. Մարկվարտի՝ այս դեպքերը տեղի են ունենում 335-338 թթ. ընթացքում: Նառառայում պարսիկների կրած պարտության մասին, հմմտ. **Ios. Markwart,** Südarmenien, էջ 265 և ծան. 2, հմմտ. նաև նույն հեղինակի Die Entst d. arm. Bistümer, էջ 232: Հ. Աստուրյանը Պարսկաստանի և Բուզանդիոնի միջև պատերազմի վերսկսման տարին ընդունում է 338 թվականը. սրա պատճառն այն է, որ նա Խոսրովի թագավորության սկիզբն ընդունում է 337 թվականը:

ռովու արքային. և նա դնէր օրէնս, զի մեծամեծ աւագանին, նախարարքն աշխարհակալքն՝ որ էին բիւրաւորքն և հազարաւորքն, կայցեն առ արքային, և ընդ նման շրջեսցին, և մի ոք երթիցք է ի նոցանէ ընդ զօրս արքունի: Զի երկնչէր նա, յերկմտութենէ նոցա, զի գուցէ զնոյն գործ Դատաբենայն գործիցեն և ապստամբ լինիցին ի նմանէ» (**Բուզանդ,** III, 8):

Նախախոսրովյան շրջանում Արշակունիների ապրած ճգնաժամային դրության հաստատումը գտնում ենք այն իրադարձությունների մեջ, որոնք տեղի էին ունենում Խոսրովի օրով և նրանից հետո, և, իսկապես, մթության քողով պատած նախախոսրովյան շրջանի համար այդ դեպքերը լուսարձակի պես մոտավոր անցյալն են լուսավորում և ցույց տալիս, թե որքան էր ընկել Արշակունի թագավորների հեղինակությունը:

Բուզանդի վկայության համաձայն, բացի Մամիկոնյան և Ամատունի նախարարություններից, որոնց Խոսրովը վստահում էր բանակը, մյուս նախարարներն անբարեհույս էին: Սա ցույց է տալիս, թե իսկապես ինչպես և ինչպիսի ուժեղ ներքին հակամարտություն գոյություն ուներ թագավորական տան շուրջը, և թե այդ հակամարտությունն ինչպես էր պարսկական հոսանքի մեջ:

Մրցակից պետությունների մղած պատերազմների ընթացքում ներքին պայքարներից հայ Արշակունիներն ավելի ու ավելի էին թուլանում, երբ հյուսիսային ցեղերի[1] արշավանքն էր կազմակերպվում Մազքթաց Սանեսան թագավորի գլխավորությամբ: Այդ ցեղերը գրավում են Վաղարշապատը: Վաչե Մամիկոնյանը հավանաբար հռոմայեցիներից ստացած զորքով կարողանում է այդ հարձակումը հետ մղել և վերստին գրավել Վաղարշապատը[2]: Անհավանական չէր, որ Մազքթաց թագավոր Սանեսանի ձեռնարկած

[1] Փավստոս Բուզանդը (III, 7) հյուսիսականներից 13 ցեղ է հիշատակում, նույն թիվը գտնում ենք նաև սուրիացի պատմիչ Զաքարիա Հռետորի «Եկեղեցական պատմության» մեջ (էջ 252-53): Ըստ Մարկվարտի՝ մեր թվականության առաջին դարում *Մազքութներն* ստացել էին արդեն *Ալլան* նոր քաղաքական անունը, սակայն, նախկին *Մազքութ* անունը դեռ չէր մոռացվել: Հմմտ. **Ios. Markwart,** Die Entstehung d. arm. Bistümer, էջ 215-219:

[2] Յո. Մարկվատ (Die Entst. d. arm. Bistümer, էջ 213-14), այս դեպքերը կապակցելով Հռոմի կողմից Հաննիբալիանուսին արքայից արքա նշանակելու հանգամանքի հետ, որին (Հաննիբալիանուսին) հանձնարարվում էր հսկել վասալ Հայաստանին, Վրաստանին և Հարավային Հայաստանի հինգ սատրապություններին, շարունակում է. «Այս միջոցառումները կատարելապես հասկանալի են դառնում հյուսիսային ժողովուրդների այն ներխուժման ազդեցությամբ, որ նկարագրել է Փավստոսը: Ոչ թե երկու վասալ թագավորությունների՝ Հայաստանի և Վրաստանի ապահովությունը կախված էր Կասպիական երկու դռների (Դարիալ և Դերբենդ) գրավումից և խնամքով պահպանելուց, այլ պատմությունը բազմիցս ուսուցել էր, որ Հյուսիսային Կովկասի ստեպների վաչկատունները… Հայաստանի և Վրաստանի վրայով դյուրությամբ ճանապարհ էին գտնում դեպի հռոմեական հողամասերը: Հաննիբալիանուսին արքայից արքա նշանակելը տեղի է ունենում 335 թ., ուստի այդ թվականին են տեղի ունենում Մազքթաց արշավանքը դեպի Հայաստան և Վաղարշապատի գրավումը: Վաչե Մամիկոնյանը Մազքթաց դեմ հաղթանակ է տանում 336 թվականին:

այդ արշավանքը տեղի էր ունենում «ի գաղտնի հրամանե Շապհո պարսից» (**Խորենացի,** III, 9):

Գերազանցորեն հռոմեական քաղաքականություն վարող Խոսրով Կոտակը մեծ օժանդակություն էր ստանում Հայաստանի հոգևորականության հունասեր թևից և վերջինի հետ սերտ կապված Մամիկոնյան նախարարական տնից: Այս վերջինները հայ Արշակունի թագավորության դեմ դեռ պայքար չէին սկսել, սակայն, ուշագրավ է, որ Մամիկոնյան տունը բնիկ «հայրենատեր» նախարարների վերջնական կործանման կողմնակցի դերում հանդես չի գալիս: Այս մասին է խոսում Բուզանդի այն վկայությունը, որ վերաբերում է Աղձնիքի բդեշխ Բակուրի ժառանգին՝ Մամիկոնյանների խնամակալ դառնալը:

Սակայն, ներքին դեպքերը հետխոսրովյան շրջանում արդեն այլ կերպ են զարգանում: Տիրան թագավորը Խոսրովից ստանում է խռովահույզ մի թագավորություն, երբ թագավորի համար նախարարները դարձել էին անբարեհույս, և թագավորը կարգադրել էր. «Կայցեն առ արքային, և ընդ նմա շրջեսցեն, և մի ոք երթիցէ ընդ զորս արքունի»: Այսպիսի ներքին դրություն էր տիրում, երբ գահ էր բարձրանում Տիրանը, որի շրջանը, ըստ Բուզանդի, «...յանմիտ թագաւորութեան ժամանակ» էր (**Բուզանդ,** III, 18), իսկ ըստ Խորենացու՝ թագավորը մեկն էր, որ «ոչինչ արութիւն քաջութեան և սորա ցուցեալ էր» (**Խորենացի,** III, 11):

Տիրանի օրով ներքին խռովություններն այն աստիճան խոշոր չափեր են ընդունում, որ ընդհանուր անիշխանական դրություն ստեղծվելու վտանգ էր սպառնում: Հայաստանի այս ներքին կացությունը հասկանալի է դառնում, երբ նկատի ենք առնում այս ժամանակաշրջանում պարսիկների և հռոմայեցիների միջև Սուրիայում ու Միջագետքում ծայր տված երկարատև պատերազմները կողմերի փոփոխակի հաջողություններով, երբ կտրուկ խնդիր էր դրվում վասալական երկրների կողմնորոշման:

Աղբյուրների քննությունը ցույց է տալիս, որ ներքին պայքարը վճռական ազդեցություն է ունենում Արշակունի Տիրանի քաղաքականության վրա: Սկզբում բարեկամ Պարսկաստանի հետ միասին, «բայց դեռ բարեկամութիւն էր ի մեջ թագաւորացն երկոցունց, ի մէջ թագաւորին Հայոց և Պարսից»

Դեռևս Տիրան II-ի ժամանակ Հայաստանի հյուսիսում ստեղծվել էր Գուգարաց բդեշխությունը՝ հյուսիսային ժողովուրդների դեմ պաշտպանվելու համար: Հայ Արշակունիների շրջանում Հռոմը Հայաստանին նյութական օժանդակություն էր հասցնում՝ կովկասյան Դարիալ կիրճը (Ալանաց դուռը) պաշտպանելու համար: Շապուհ II-ը Անդրկովկասը նվաճելուց հետո ստանձնում է հյուսիսային ժողովուրդների պաշտպանությունը և Հայաստանի բաժանումից հետո Ներոնի ստանձնած նյութական օժանդակությունը Սասանյան Պարսկաստանը պահանջում է Հռոմից, որը մերթ վճարում, մերթ մերժում էր, այսպես՝ անվերջ կռվի մի խնդիր է դառնում: Սասանյան Պարսկաստանը հաջորդ դարերում միշտ գործ է ունենում հյուսիսային ժողովուրդների հետ: Հմմտ. այս մասին **Ios. Marquart,** EranŠahr, էջ 95-107:

(**Բուզանդ,** III, 20 հմմտ. **Խորենացի,** III, 11, 12), ուժեղ պայքար է մղվում հունասեր հոգևորականության դեմ, սպանել է տալիս Հուսիկ կաթողիկոսին և բարձր հեղինակություն վայելող Դանիել եպիսկոպոսին:

«Չորրորդ դարում Մամիկոնյանները կաթողիկոսի հետ ուս ուսի պայքարում էին թագավորի և Հայր Մարդպետի դեմ՝ ֆեոդալիզմի, ազնվական «բնիկ տերերի» ստացվածքների ու առանձնաշնորհումների պահպանման համար, մինչդեռ թագավորն ու Հայր Մարդպետը Պարսկաստանի և Հռոմի՝ այդ երկու մրցակից խոշոր պետությունների միջև ճզմված դժբախտ Հայաստանի բուֆեր դրության համար ստիպողական անհրաժեշտություն էին գտնում մի ուժեղ կենտրոնական իշխանության հաստատել, ուժեղացնել թագավորի իշխանությունը և ինքնուրույն ազնվականներին նրան ենթարկել»[1]:

Այս պայքարը, որ հատուկ է ամեն մի ֆեոդալական պետության, IV դարում Հայաստանում ստանում է իր կլասիկ արտահայտությունը: Պատմական ի՞նչ իրադարձություններ են հիմք ծառայում Մարկվարտին՝ բնորոշելու ոչ միայն պայքարի բնույթը, այլև նշելու գոյություն ունեցող հոսանքների պարագլուխներին: Մի կողմից՝ Արշակունի թագավորությունն ու նրա գլխավոր սենեկապետի պաշտոն վարող, արքայական կալվածների վերակացու Մարդպետական տունը, իսկ մյուս կողմից՝ սպարապետությունը՝ հանձին Մամիկոնյան տան և հանձին հոգևորականության մի թևի՝ կաթողիկոսի:

Սասանյանների հետ Տիրանի ունեցած բարեկամական հարաբերությունները խզվում են, նա թեքվում է հռոմեական կողմը, որը ծանր է նստում նրան. Շապուհի կողմից Տիրանը հրավիրվում է Պարսկաստան, որտեղ և կուրացնում են նրան:

Ամբողջովին Մամիկոնյանների ոգով գրող պատմիչ Բուզանդն իրերն այնպես է ներկայացնում, որ իբր թե այդ բոլոր չարիքների պատճառը Հայր Մարդպետն է եղել.

«…Այր ներքինի՝ չարախորհուրդ չարագործ, որում Հայր կոչէին: Զբազումս ի նախարարացն ետ քսութեամբ առանց վնասու կոտորել, և խանգարեաց զմեծ տէրութիւն թագաւորութեան: Մանաւանդ աւելի զերկու տոհմսն զաւագս տայր իւրով չարախօսութեամբ հանել ընդ սուր, և անունդ առնել միահաղոյն զտոհմսն Ռշտունեաց և զտոհմն Արծրունեաց. բառնային ի միջոյ առանց ամենայն վնասու և յանցման…» (**Բուզանդ,** III, 18):

Իսկ Մամիկոնյանները, որոնք Արշակ արքայորդու դայակներն էին, «թողին զսանն իւրեացն զԱրշակ, և գնացին ի բաց ի բանակէն արքունի»՝ իրենց հետ տանելով Ռշտունի և Արծրունի նախարարությունների սրածությունից ազատած երկու երեխաներին: Նրանք ամրանում են Տայոց աշխարհում «և թողին զայն տուն իւրեանց… և ոչ խառնէին նոքա ի խորհուրդս Հայոց մինչև

[1] **Ios. Markwart,** Südarmenien, p. 63.

ի բազում ամս» (**Բուզանդ,** III, 18):

Բուզանդի այս վկայությունները բոլորովին այլ լույսի տակ կներկայանան մեզ, եթե նկատի ունենանք, որ Արծրունիների կալվածները Հաղամակերտում (Բաշկալա)՝ Աղբակի շրջանում, գտնվում էին Հայաստանի, Ատրպատականի և Ադիաբենի (Նոր Շիրական) սահմանների վրա: Նույն դրությունը չէ՞ր մոտավորապես Խոսրով Կոտակի շրջանում Բզնունյաց և Աղձնիքի վերաբերյալ, և կամ նույն Արծրունի նախարարությունից Մերուժանը չէ՞ր, որ Արշակ II-ի ժամանակ գլխավորում էր պարսկական հոսանքը և գործում էր որպես պարսկական բանակի առաջնորդ:

Եթե իրականություն են Բուզանդի հաղորդած այս վկայությունները Հայր Մարդպետի մասին, ապա միանգամայն հասկանալի է դառնում, թե որքան շահագրգռված պիտի լիներ Արշակունիների թագավորությունը հռոմեական ազդեցության սահմանի մոտ Ռշտունիների կալվածք Մոկաց աշխարհի և պարսկական Ադիաբենի (Նոր Շիրականի) սահմանի վրա Արծրունիների կալվածների գրավումով ամրապնդելու թագավորության դիրքը:

Մամիկոնյան նախարարությունը ոչ միայն հավանություն չի տալիս Տիրանի այդ ներքին քաղաքականությանը, այլև դրանում իրավամբ տեսնում է «հայրենի տերերի», ազնվականների առանձնաշնորհումների ոտնահարումը, և, ինչպես Բուզանդն է վկայում, «գնացին իրենց երկիրը՝ Տայքի բերդերը… և երկար տարիներ չէին խառնվում հայերի խորհրդակցություններին» (**Բուզանդ,** III, 18): Արշակունի թագավորության հետ Մամիկոնյանների այս գժտությունը հետագա ուժեղ պայքարների մի օղակն էր միայն:

Պարսիկների կողմից կուրացված Տիրան թագավորի որդին՝ Արշակ II-ը, ներքին ուժերի կոնսոլիդացիայի քաղաքականությամբ է սկսում իր իշխանությունը: Քեն արած Մամիկոնյաններին կրկին գործի են քաշում:

Բուզանդը վկայում է.

«Յայնմ ժամանակի խնդիր ելանէր արքայն Արշակ տոհմին զօրավարաց ազգին քաջացն Մամիկոնենից… Եւ կացոյց արքայն զՎարդան զերէց եղբայրն ի նախահետուութեանն ազգին իւրեանց, և զՎասակ զմիջին եղբայրն զիւր դայակն ի սպարապետութիւնն զօրավարութեան յիրս պատերազմացն, սոյնպէս և կրտսերն ի պէտս զօրացն կացուցանէր» (**Բուզանդ,** IV, 2):

Տիրանի շրջանում հունական հոսանքի ներկայացուցիչ հոգևորականության չեզոքացումից հետո Արշակ II-ը այդ հոսանքի ներկայացուցիչներից հայտնի Ներսեսին կաթողիկոսական աթոռն է բարձրանում (**Բուզանդ,** IV, 3, 4): Բուզանդն ուրախությամբ արձանագրում է.

«Եւ նորոգեցաւ զուարթացաւ տէրութիւնն թագաւորութեանն Հայաստան երկրին որպէս և զառաջինսն» (**Բուզանդ,** IV, 2):

Եկեղեցին լայն հնարավորություն էր ստանում պրոպագանդայի նուրբ եղանակներով ժողովրդական մասսաներն իրեն կողմը գրավելու: Ներսես

կաթողիկոսը եռանդուն գործունեության է ձեռնարկում: Վերակառուցվում են ավերված եկեղեցիներն ու կործանված խորանները: Հունարեն և ասորերեն լեզուներն ուսուցանելու համար դպրոցներ են բացվում: Կառուցվում են աղքատանոցներ, հիվանդանոցներ և կուսանոցներ (**Բուզանդ,** IV, 4, 12):

Եթե եկեղեցին աշխատում էր այս կերպ իր հեղինակությունը բարձրացնելու, ապա Արշակունի թագավորությունն ավելի պակաս չէր մտահոգված իր դիրքն ամրապնդելու: Այս ուղղությամբ Արշակ II-ի հիմնական միջոցառումներից մեկը պիտի համարել Արշակավանի խնդիրը, որի մասին այնքան ատելությամբ, լուտանքներով ու թշնամությամբ է խոսում Բուզանդը.

«Իբրև ել հրաման յարքայէն, ժողովեցան այնուհետև յայն տեղի ամենայն գողք և աւազակք, արիւնահանք, սպանողք, սուտք... բազում ծառայք զիւրեանց տերանց զգանձս ըմբռնեալ, փախուցեալք անդր անկանէին. բազում աւանդառուք զաւանդս լի զպահեստս բարձեալ անդ անկանէին…» (**Բուզանդ,** IV, 12)[1]:

«Արշակի կողմից Կոգ գավառում հիմնված Արշակավան ազատ քաղաքում, անշուշտ, ոճրագործներ, ավազակներ, գողեր և այլ սրիկաներ չէին, այլ բազմաթիվ շինականներ (hörige Bauern), որոնք չէին կարողանում տանել կալվածատերերի ճնշումը… Թագավորը հույս ուներ, որ այդ ազատ քաղաքի բնակիչներից վստահելի հենարան կստեղծի իր համար՝ ընդդեմ անհնազանդ ազնվականության»[2]:

Պատմիչի մոտ իսկապես հանդես է գալիս այդ պայքարը: Արշակավանի դեմ սկսվում է մի սոսկալի հալածանք, որը գլխավորում է հոգևորականությունը: Բուզանդիոն պատգամավոր ուղարկված[3] Ներսես կաթողիկոսի և Արշակ II-ի հարաբերությունները լարվում են:

Արշակավանի քանդումով[4] ներքին խռովահույզ դրությունը չի վերջանում: Արշակունի թագավորության կողմից հարձակում է սկսվում նախարարական կալվածների վրա: Այդ ժամանակ (359 թ.) Ներսեսն արդեն մերժվել

---

[1] Բուզանդի մոտ պատմական իրադարձությունների թվականները ճշտելու խնդիրը կարոտ է առանձին ուսումնասիրությունների: Արշակավանի կառուցման համար Հ. Աստուրյանի տված 363 թվականը հիմնավորված չէ (հմմտ. **P. Asdourian,** Die pol. Bez., էջ 155): Ավելի հավանական են գտնում Մարկվարտի կարծիքը, ըստ որի, Արշակավանի կործանման համար ընդունվում է 358 թվականը, տե՛ս **Ios. Markwart,** Die Entstehung d. arm. Bistümer, էջ 227-28:

[2] **Ios. Markwart,** Südarmenien, p. 62.

[3] Ըստ Մարկվարտի՝ Բուզանդի այն վկայությունը, թե Ներսեսն աքսորվել է Կ. Պոլիս, իրականության չի համապատասխանում: Մարկվարտը գտնում է, որ Ներսեսը մնում է Սեբաստիայում և ողորմասիրության ուղղությամբ Հայաստանում կատարած իր գործերն ընդօրինակում է Սեբաստիայի Եվստաթիոս եպիսկոպոսի գործերից: Ներսեսին Կ. Պոլիս պատգամավոր ուղարկելը դնում է 357 թվին, իսկ վերադարձը՝ 358 թ., հմմտ. **Ios. Markwart,** Die Entst. d. arm. Bist., էջ 223-228: Նույն հեղինակի Unterz. Zur Geschichte von Eran, Heft 1, էջ 221-24:

[4] Մարկվարտը, հենվելով Ամմիանիոսի (XVII, 7)՝ 358 թ. Նիկոմիդիա քաղաքի երկրաշարժից կործանված լինելու տեղեկության վրա, ենթադրում է, որ այդ երկրաշարժի ժամանակ կործանվել է նաև Արշակավանը: Անհավանական ենք գտնում այս ենթադրությունը:

էր «յարքունական բանակէն» և «ոչ ոք գոյր ընդդիմացեալ թագաւորին»:

«…Զբազումս ի նախարարացն կոտորեաց, զբազումս ազգատ արարեալ անճիտեաց, և զբազմաց տունս հատանէր յարքունիս: Բայց զտոհմս Կամսարականացն՝ որ էին գաւառաց տիարք… ազգատ առնէր, և զգաւառսն ունէր յոստան» (**Բուզանդ,** IV, 19)[1]:

Ըստ պատմիչի վկայության՝ Կամսարական տոհմի հետ խնամիացած Մամիկոնյաններից սպարապետ Վաչե Մամիկոնյանը Կամսարական տոհմից թաքցնում է մի մանուկ, «որ յետոյ լինէր ժառանգ աշխարհին» (**Բուզանդ**, IV, 19):

Երբ Հայր Մարդպետ ծրագրում էր յարքունիս գրավել 15 գավառներում կաթողիկոսի ունեցած կալվածների մի մասը (**Բուզանդ,** IV, 14) և սպանվում է Շավասպ Արծրունու կողմից, շատ կասկածելի է, որ պատմիչն այդ սպանության միակ դերակատար է հանդես բերում Շավասպ Արծրունուն. «տիրոջ բարկության դատաստանում» խառն չէ՞ր արդյոք Մամիկոնյանների և կաթողիկոսի մատը: Այս բոլորը ցույց են տալիս այն խորը հակամարտությունները, որոնք ստեղծվել էին մի կողմից թագավորական տան ու նրա սենեկապետ Հայր Մարդպետի, իսկ մյուս կողմից՝ հոգևոր ու աշխարհիկ ֆեոդալների միջև: Դեռ Մամիկոնյան նախարարությունը բացահայտ կռվի դուրս չի գալիս և աշխատում է թիկունքից հարվածել թշնամուն: Ինչքա՜ն սովորական երևույթ են Արևելքում թիկունքից մղված պայքարը և կեղծիքների քողի տակ ծածկված ոճիրները:

Պատմիչի այս վկայությունները բացահայտ ցույց են տալիս այն պայքարը, որ մղվում էր հողային սեփականությունների շուրջը: Արշակունի թագավորության «հայրենատեր» նախարարների և խոշոր հողատեր կաթողիկոսության դեմ մղած պայքարը նպատակ ուներ, ըստ էության, այդ աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների ինքնիշխանության վերջ տալ: Խոսրով Կոտակի ժամանակ ապստամբ նախարարությունների կալվածները նվիրատվության ուղիով անցնում են այլ աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների ձեռքը: Տիրանի ու Արշակի ձեռնարկումները գնում են նախարարական և հոգևորական կալվածները յարքունիս գրավելու ուղղությամբ: Եթե առաջին դեպքում «հայրենիքը» դառնում էր «պարգևականք», և այս կերպ Արշակունի թագավորը մտածում էր ամրացնել թագավորության դիրքը, ապա վերջին դեպքում հողերի ուղղակի արքունական սեփականություն դարձնելու քաղաքականությունը կենտրոնական իշխանությունն ամրացնելու նպատակ էր հետապնդում:

[1] Այստեղ Փավստոս Բուզանդին հատուկ չափազանցությունները քիչ դեր չեն կատարում: Կամսարականների ամբողջ տոհմը բնաջինջ չէր լինում, տե՛ս այդ մասին Ս. Կոգյանի ուսումնասիրությունը՝ «Կամսարական տոհմի և Արշակունյաց թեմի մասին» («Հանդէս ամսօրեայ», 1924, № 1-12, 1925 թ., № 1-12): Ուշագրավ է նաև Բուզանդի այն վկայությունը, թե Կամսարականների կալվածները գրավելուց հետո Արշակ II-ը կառուցել է տալիս Արտագերս ամրությունը (**Բուզանդ,** IV, 19):

Այս քաղաքականությանն ամենաուժեղ կերպով դիմադրում էին «հայրենատեր» նախարարները, և ուժեղ հակամարտություններ էին առաջանում թագավորական տան և առանձին ուժեղ ֆեոդալական տների միջև:

Այսպիսի ներքին կացությամբ էր դիմավորում Արշակունի թագավորությունն այն պատմական ժամանակաշրջանը, երբ Սասանյան Պարսկաստանի և Բուզանդիոնի միջև վերստին ծայր են առնում ուժեղ պատերազմները: Մինչ այս տիրում էր ժամանակավոր դադար, երբ երկու մրցակից պետությունները ներքին խնդիրներով էին զբաղված, այնպիսի մի ժամանակաշրջան էր, որը Խորենացին վարպետի գրչով, շատ սեղմ, այսպես է ձևակերպում.

«Դարձեալ յարեաւ խռովութիւն Շապհոյ ի նոյն ազգաց և խաղաղութիւն ի Յոյնս շրջեցաւ, ըստ այնմ՝ թէ փոխարկեալ միմեանց փոխարինեն. սոցա խաղաղութիւն ի նոցա խռովութեան, և նոցա խաղաղութիւն ի սոցա խռովութեանն, որ վախճան միոյն՝ միւսոյն լինէր սկզբունք» (**Խորենացի,** III, 29):

Ժամանակավոր խաղաղության հաջորդում են 350-360 թթ. նոր պատերազմները Սասանյան Պարսկաստանի և Բուզանդիոնի միջև: Մոտ երկու ու կես ամսվա պաշարումից հետո պարսիկները գրավում են Ամիդը և Միջագետքում՝ Սինգարան ու Բեղաբդ քաղաքները: Բուզանդիոնն աշխատում է թանկագին նվերներով սիրաշահել իր վասալ թագավորություններին՝ Վրաստանին ու Հայաստանին[1]:

Ստեղծվում է քաղաքական ծանր դրություն և, հավանաբար, քաղաքական դիրքավորման շուրջը՝ հակադիր հոսանքներ, որոնք ցնցում են Արշակունի թագավորությունը և աստիճանաբար նախապատրաստում այն դրությունը, որ տարիներ հետո երկու մրցակից պետությունների միջև կնքված պայմանագրության մեջ իր ցայտուն արտահայտությունն է գտնում:

Մամիկոնյան նախարարության նահապետ Վարդանը կողմնակից է պարսկական կողմը բռնելու[2], իսկ սպարապետ Մամիկոնյան Վասակը՝ հռոմայեցիների կողմը (**Բուզանդ,** IV, 16, 18, **Խորենացի,** III, 25, 26):

Ծանր դրություն էր ապրում Արշակունի թագավորությունը: Թագավորը թշնամացել էր նախարարների մեծամասնության հետ, Ներսեսը հրաժարվել էր, տիրում էր, կարծեք, այն դրությունը, ինչ որ Խոսրով Կոտակի ժամանակաշրջանում: Բուզանդիոնի և Պարսկաստանի միջև սկսված պատերազմում կողմերի փոխփակի հաջողություններից հետո վերջնական հաղթանակը

[1] «Զանք են թափում,- ասում է Ամմիանոսը,- ճոխ ու շքեղ հագուստներով և այլ բազմաթիվ նվերներով շահել մանավանդ Հայաստանի թագավոր Արշակի և Իբերիայի թագավոր Մերիբանի բարեկամությունը, այն կրիտիկական դրությունը, որի մեջ գտնվում էին, նրանք կարող էին մեծ չարիք անել, եթե անցնեին պարսիկների կողմը» (**Amm. Marcel.,** XX, 6):

[2] Վարդանը, ըստ Բուզանդի վկայության, սպանվում է իր եղբայր Վասակի կողմից (**Բուզանդ,** IV, 18) այն ժամանակ, երբ Վարդան Մամիկոնյանը Պարսկաստանի արքունիքի և Արշակի միջև հաշտության բանակցություններ էր վարում:

մնում էր Սասանյան Պարսկաստանին[1]:

Կողմերի միջև այդ փոփոխակի հաջողությունների ընթացքում Արշակունի թագավորությունը հանդես է գալիս պարսիկների դեմ: Հայաստանի հարավային մասում՝ պարսկական սահմանի մոտ, Արծրունի նախարարությունից Մերուժանն անցնում է պարսիկների կողմը, և հետագայում Հայաստանում պարսիկների կատարած արշավանքների ընթացքում Մերուժան Արծրունին պարսկական բանակի առաջնորդ է դառնում: Այդ երեք արշավանքների ընթացքում հարձակման են ենթարկվում և ահագին վնաս են կրում Հայաստանի հետևյալ երեք շրջանները՝

1. Հայաստանի վերնագավառները,

2. Միջնաշխարհը, երբ Արշակ II-ը Հայաստանի հարավում՝ Անգեղում, պատրաստություններ էր տեսնում,

3. Հայաստանի հարավային և արևմտյան մասերը[2]:

Հուլիանոս կայսեր սկզբնական հաղթանակները վերջանում են պարտությամբ, և կայսեր մահից հետո նրա հաջորդը՝ Հովիանոս կայսրը, 363 թ. հաշտության պայմանագիր է կնքում Պարսկաստանի հետ և «…համաձայնում էր անմիջապես, ինչ որ պահանջում էին»[3]:

Համաձայն այդ դաշնագրի՝ պարսիկներն ստանում են՝ ա) այն հողամասերը, որոնք 297 թ. դաշնագրով անցել էին հռոմայեցիներին՝ Աղձնիքը, Մոկսը, Ծավդեքը, Ռեհեմենն ու Կորդուքը[4]՝ 14 ամրություններով, բ) Նիմֆուսը (=Բաղման-Սուն) սահման է դառնում Բուզանդիոնի և Պարսկաստանի միջև, գ) Մաուրորում ամրությունը, Սինգարան ու Մծբինը. վերջին երկուսն առանց ազգաբնակության անցնում են պարսիկներին, դ) հռոմայեցիները պարտավորվում էին չօգնել Հայաստանին, երբ պարսիկները հարձակվելու

[1] Սկզբում պարսիկները գրավում են Ամիդն ու Միջագետքի Սինգարա ու Բեղաբդե ամրությունները (**Amm. Marcel.,** XIX, 1-9. XX, 6, 7): Միջագետքում Հուլիանոս կայսեր կատարած արշավանքի ժամանակ, Արշակը, ըստ Ամմիանոսի վկայության, Բուզանդիոնից հրաման է ստանում կռվելու պարսիկների դեմ, **Amm. Marcel.,** XXIII, 2: Հուլիսանոսը սկզբում ունեցած հաջողություններից հետո խոշոր պարտություն է կրում (հմմտ. **Amm. Marcel.,** XXIII, 5, 6, XXIV, 1, 2, 5-7, XXV):

[2] **Փավստոս Բուզանդ,** IV, 22. **Ios. Markwart,** Südarmenien, էջ 95:

[3] **Amm. Marcel.,** XXV, 7: Թե ինչպիսի ծանր դրության էր մատնված Բուզանդիոնը, որպեսզի հրաժարվեր Միջագետքից ու Հայաստանից, այս երևում է Ամմիանոսի մի այլ վկայությունից, որ իմանում ենք 357 թ. Շապուհ II-ի և Կոստանս կայսեր միջև փոխանակված գրություններից: Շապուհ II-ի պահանջը Միջագետքն ու Հայաստանն ստանալու համար Կոստանսի կողմից կտրուկ մերժվում է (հմմտ. **Amm. Marcel.,** XVII, 14):

[4] Վերը հիշված այդ հողամասերը 297 թ. դաշնագրության մեջ նշված երեք հիմնական շրջաններն են ներկայացնում՝ Աղձնիքը, Կորդուքն ու Ծավդեքը: Ծոփաց աշխարհն ու Անգեղ տունը մնում են հռոմայեցիներին (հմմտ. **P. Asdourian**, Die pol. Bez. Zwischen Rom und Armenien, էջ 153):

լինեն Հայաստանի վրա[1]:

Բուզանդը նույն դաշնագրության մասին վկայում է.

«…Ետու քեզ, ասէ, զՄծբին քաղաք՝ որ է յԱրուեստանի, և զՄիջագետս Ասորոց, և մէջ աշխարհին Հայոց. ձեռնթափ եմ, ասէ, թէ կարասցես յաղթել նոցա և արկանել ի ծառայութիւն, ես ի թիկունս ոչ եկից նոցա: Արդի ի նեղ ուրեմն անգեալ թագաւորն Յունաց, և նեղին վշտի՝ զայս ձև օրինակի բանիցն կնքէր մուրհակ, և տայր թագաւորին Պարսից. և ապա ճողոպրէր ի նմանէ» (**Բուզանդ,** IV, 21):

Ուշագրավ է Ամմիանոսի վկայության այն մասը, որ վերաբերում է պարսիկների հետագա գրավումներին.

«…Արշակը հետագայում ողջ-ողջ ձերբակալվում է, և պարսիկները, օգտվելով խռովություններից ու կռիվներից, գրավում են Արտաշատը և Հայաստանի մեծագույն մասը, որ սահմանակից էր Մարաստանին»[2]:

Վերևում տեսանք, թե ինչպիսի ծանր կացություն էր ստեղծվել Արշակունի թագավորության համար աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների դեմ իր մղած պայքարի ընթացքում: Ամմիանոսի վկայությունը լիովին հաստատում են այն փաստերը, որոնք վերաբերում են 363 թվից հետո Հայաստանում տեղի ունեցած իրադարձություններին:

Եթե երկու մրցակիցների շահերի հակամարտությունը թույլ չէր տալիս հրապարակի վրա դնելու Հայաստանի բաժանման խնդիրը, ապա 363 թ. կնքված դաշնադրությունը Սասանյան Պարսկաստանին գործելու ազատություն էր տալիս Հայաստանում: Հավանաբար 364 թ. Պարսկաստանի կողմից Հայաստանում սկսած արշավանքները, որոնք Արշակ II-ի օրով տևում են 3-4 տարի, և որոնց մասին Բուզանդը խոսում է խտացրած գույներով և իրեն հատուկ չափազանցություններով[3], Ամմիանոսն ավելի կարճ ու ճշգրիտ է հաղորդում մեզ[4]: Այդ կռիվները ոչ միայն Արշակունի թագավորությունը քայքայման դուռն են հասցնում, այլև ծանր դրության են մատնում նախարարական տները:

Բուզանդի Պատմության այս մասը ժողովրդական վեպի խորը դրոշմն է կրում, որտեղ պատմիչն իր հերոսներին բարձրացնելու համար պարտիզանական բնույթ կրող այդ կռիվներում միշտ հաղթող է հանում իր հերոսին՝ Վասակ Մամիկոնյանին և ընկում հակասությունների մեջ:

Այլ կերպ՝ ինչպե՞ս կարելի է բացատրել այդ կռիվների ընթացքում Մամիկոնյանների հաղթանակներին նվիրված երկար ու ձիգ գլուխներին հաջորդող պատմական հետագա իրադարձությունները:

---

[1] **Amm. Marcel.,** XXV, 7, 9.

[2] Նույն տեղում, XXV, 7, 8:

[3] **Փավստոս Բուզանդ,** IV, 25-43:

[4] **Amm. Marcel.,** XXVII, 12.

Արշակ II-ից բաժանվում և պարսիկների կողմն են անցնում Պարսկաստանի սահմանամերձ բդեշխներն ու նախարարները.

«…Միահաղոյն ապստամբեցին ի թագաւորէն Հայոց Արշակայ, չոգան գնացին առաջին կացին թագաւորին Պարսից Շապհոյ» (**Փավստոս Բուզանդ,** IV, 50):

Բուզանդական հողամասի իշխանները լքում են նաև Արշակ II-ին:

«…Եթող զարքայն Հայոց և գնաց Սաղամուտ տէրն Անձտեայ և ընդ նմա իշխանն մեծի Ծոփաց. և գնացին առ թագաւորն Յունաց» (**Բուզանդ,** IV, 50):

Ավելի լավ չէր դրությունը մինչաշխարհում:

«Միջնաշխարհն մնացեալքն երկուացան յարքայէն, և ոչ կամէին լսել թագաւորին իւրեանց, ոչ մի ինչ իրս՝ զոր նա կամէր: Եւ զձեցաւ թագաւորութիւնն մեծապէս» (**Բուզանդ,** IV, 50):

Դեռ 359 թ. Պարսկաստանի կողմն անցնող Մերուժան Արծրունու ուղին է բռնում Վասակ Մամիկոնյանի կրտսեր եղբայրը՝ Վահան Մամիկոնյանը[1], երբ 359 թվականին, ինչպես տեսանք, նրա ավագ եղբայրը՝ Մամիկոնյան տան նահապետ Վարդանը, ջերմ կուսակից էր Պարսկաստանին:

Ներքին քայքայումը կատարյալ էր, և երբ Ներսեսը հորդորում էր նախարարներին կռիվը շարունակել, ստանում է հետևյալ պատասխանը.

«Հապա գնասցուք, ասեն, սփռեցարուք յիւրաքանչիւր տեղիս. զի այդմ բանից մեք ինչ որ կամիմք լսել: Սփռեցան յիւրաքանչիւր տունս իւրեանց» (**Բուզանդ,** IV, 51):

Հետևանքը լինում է այն, ինչ որ պատմիչն ամփոփում է հետևյալ տողերում.

«Իսկ Արշակ արքայ թէպէտ պատերազմ կամէր տալ, այլ ոչ կամէին յանձն առնուլ այսմիկ ամենայն զօրքն աշխարհին Հայոց» (**Բուզանդ,** IV, 52):

Ներքին այսպիսի կացությունից հետո հասկանալի է դառնում դեպքերի հետագա զարգացումը՝ Արշակի կուրացվելը և Անուշ բերդում բանտարկվելը ու նրա սպարապետի եղեռնական մահը[2] (368 թ.):

Ամմիանոսի վկայություններից պարզվում է նաև այն, որ հարևան Վրաստանը, որ մինչև Շապուհի II-ի այս նվաճումները գտնվում էր հռոմեական գերիշխանության տակ, անցնում է Սասանյան Պարսկաստանին,

---

[1] Հինգերորդ դարի ոգով շարադրող Բուզանդը պարսկա-բուզանդական օրիենտացիայի շուրջն ստեղծված այդ հոսանքներին զուտ կրոնական գունավորում է տրվել: Արևելքում տեղի ունեցած սովորական մի երևույթ էր դա, որին հաճախ ենք հանդիպում: Բուրժուական պատմագրությունն ընթանում է V դարի ճանապարհով: Բաֆֆին իր հայտնի պատմական վեպը՝ «Սամվելը», վերցրել է այս էպոխայից և իր ուժեղ ֆանտազիայով ստվերի մեջ է թողել V դարի կղերական պատմիչին:

[2] **Փավստոս Բուզանդ,** IV, 52, 54. **Amm. Marcel.,** XXVII, 12.

հեռացվում է հռոմայեցիների կողմից նշանակված Սորոմաս թագավորը, և նրա տեղ պարսիկների կողմից նշանակվում է Ասբակոսը[1]:

Արշակ II-ի բանտարկությունից հետո Սասանյան Պարսկաստանի կողմից գործողություններ են ձեռնարկվում Հայաստանի լիակատար գրավման համար: Ըստ Ամմիանոսի և Բուզանդի վկայությունների՝ դիմադրում էր Արտագերս ամրությունը, որտեղ գտնվում էր Արշակունի թագավորության հարստությունը, Բուզանդի վիպական ավանդություններում այնքան մեծ դեր կատարող Փառանձեմ թագուհին ու նրա որդին՝ Պապը:

Գղակ Մարդպետի և հազարապետ Առավանի[2] միջոցով բանակցություններ են սկսվում Բուզանդիոնի հետ: Հաջողվում է Պապին փախցնել բուզանդական հողամաս, ուր Վաղես կայսրը Պոնտոսում Նոր Կեսարիան նրան է հատկացնում և թագավորական պատիվներով պահպանում[3]:

Արտագերսին օգնության գալու առթիվ Բուզանդիոնի կողմից արված խոստումները չեն իրականանում. ընկնում է և վերջին ամրությունը. Արշակունի թագավորության ամբողջ հարստությունը փոխադրվում է Պարսկաստան: Արտագերսի ամրության անկումից հետո Բուզանդի մոտ հանդիպում ենք կատարված ավերածությունների նկարագրությունը չափազանցրած և խտացրած գույներով. որ Բուզանդի մոտ դեպքերը նկարագրված են չափազանցրած և խտացրած գույներով, այդ պարզ երևում է այն ժամանակ, երբ համեմատում ենք Ամմիանոսի վկայությունների հետ: Դեպքերը տեղի են ունենում 369-370 թվականների ընթացքում: Ըստ Բուզանդի վկայության՝ հիմնահատակ քանդվում, հրդեհվում, ավերվում են Հայաստանի բոլոր «քաղաքները» և հսկայական ազգաբնակություն է տարվում որպես գերի: Ամմիանոսը շատ կարճ հայտնում է, որ Արշակի ձերբակալումից հետո գրավում են Արտաշատը, Հայաստանի մեծագույն մասը, որ սահմանակից էր Մարաստանին: Ուշագրավ է նաև այն, որ Մովսես Խորենացին ոչ միայն չի հիշատակում Հայաստանից տարված ազգաբնակության թվի մասին Բուզանդի տված վկայությունը, այլև Բուզանդի հիշատակած յոթը «քաղաքների» փոխարեն հիշատակում է միայն Վանը, Արտաշատն ու Վաղարշապատը և գերի տարված հրեա ազգաբնակությունն ու Շապուհի հրամանը՝ «քաղաքների» ամրությունը քանդելու մասին (**Խորենացի,** III, 35):

---

[1] **Amm. Marcel.,** XXVII, 12.

[2] Ուշագրավ է Ամմիանոսի վկայությունը Գղակի (Gylases) և Առավանի մասին: Ըստ Ամմիանոսի՝ սկզբում Պարսկաստանին հարող պետական բարձր դիրքերում եղող այս դեմքերն սկսում են բանակցություններ վարել Բուզանդիոնի հետ: Բուզանդը ոչ մի հիշատակություն չի անում Առավանի մասին և նրա գործունեությունը վերագրում է Մուշեղ Մամիկոնյանին, որի բաջագործությունները «շատ կասկածելի» են դառնում: Հմմտ. **Ios. Markwart,** Südarmenien, էջ 154-157: Գղակի և Առավանի մասին տե՛ս նաև **Ios. Markwart,** Unters. Z. Geschichte von Eran, Heft 1, էջ 213:

[3] **Amm. Marcel.,** XXVII, 12.

Կարծում ենք՝ Բուզանդի վկայություններում կարևոր կետն այն է, որ Հայաստանում Սասանյան Պարսկաստանի կատարած ավերածությունները գերազանցորեն վերաբերում էին ֆեոդալական բերդերի և «քաղաքների» ամրոցների քանդմանն ու ավերմանը: Այս բացատրվում է նրանով, որ Սասանյան Պարսկաստանն աշխատում էր «Հայաստանը միացնել իր մյուս երկրամասերին», ինչպես Ամմիանոսն է վկայում (XXVII, 12), իսկ իր այս նպատակի իրագործման համար հիմնական խոչընդոտներն էին ֆեոդալական այն ամրությունները, որոնք բավական երկար ժամանակ՝ մոտ յոթ տարի, Հայաստանի հողի վրա զբաղեցնում էին նրա բանակները. այս անհրաժեշտ էր նաև կանխելու հնարավոր այն ապստամբությունները, որոնք կարող էին ծագել Հայաստանում, մանավանդ, եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ Բուզանդիոնը չէր կարող անտարբեր մնալ այս իրադարձությունների հանդեպ: Եվ իսկապես, Բուզանդիոնի անմիջական հովանավորությամբ Հայաստան եկող Արշակունի Պապը ամիսներ շարունակ Հայաստանի լեռներում թաքստոցներ փոխելուց հետո[1] Բուզանդիոնից այն ժամանակ է օգնություն ստանում, երբ կատարվում են Շապուհի այս ձեռնարկումները Հայաստանում[2]:

Հավանաբար Վաղես կայսեր ուղարկած Աթենթեոս զորավարի կողմից պարսիկների դեմ տարած հաղթությունից հետո էր, որ Հայաստանը կրկին ենթարկվում էր Հռոմեական կայսրության (371): Ըստ Ամմիանոսի վկայության[3]՝ Աթենթեոսի հաղթանակից հետո հարևան Վրաստանում տեղի է ունենում ուշագրավ մի երևույթ, որը մոտ երկու տասնյակ տարի հետո կրկնվում է Հայաստանում: Վրաստանը բաժանվում է հռոմեական և պարսկական ազդեցությունների շրջանների: Պարսիկների կողմից արտաքսված Սորոմասը հռոմեական զորքով վերադառնում է Իբերիա և իշխում Հայաստանի և Լազերի երկրի սահմանակից հողամասում, իսկ պարսիկների կողմից թագավոր նշանակված Ասբակուրն իշխում է Աղվանից աշխարհի և Պարսկաստանի սահմանակից մասերի վրա: Երկու թագավորությունների սահման ճանաչվում է Կուր գետը:

Երիտասարդ Արշակունի Պապ թագավորն իշխանության գլուխ էր անցնում Արշակունի թագավորության ճգնաժամային դրության ժամանակ: Ամբողջ IV դարի ընթացքում Արշակունի թագավորության և նախարարական տների, ինչպես և օրըստօրե զորացող հոգևորականության հունական հոսանքի միջև պայքարն այնքան սուր բնույթ չէր ստացել, որքան Պապի թագավորության շրջանում:

---

[1] **Amm. Marcel.,** XXVII, 12.

[2] Անհավանական չէ նաև այն, որ Բուզանդիոնի կողմից խոստացված օգնության ուշացման պատճառով Պապը բանակցություններ սկսած լիներ Պարսկաստանի, ինչպես Ամմիանոսն է վկայում (XXVII, 12):

[3] **Amm. Marcel.,** XXX, 12.

Երկրում խաղաղության հաստատվելուց հետո երկու հոսանքներն սկսում են ուժեղ պայքարը: Առաջին հոսանքը ձգտում էր վերականգնել Արշակունի թագավորության դիրքն ու հեղինակությունը, իսկ հակառակ հոսանքն այս խնդրում տեսնում էր աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների ինքնիշխանության տկարացումը: Կրոնական գունավորումով ներկայացող ներքին այս պայքարն իր արտահայտությունն է գտնում նաև մրցակից պետությունների հանդեպ Արշակունի թագավորության բռնած դիրքի մեջ:

Բուզանդն ու ժամանակակից Ամմիանոս պատմիչն այս վերջին խնդրում հակադիր վկայություններ են տալիս: Հայտնի է, որ հռեմեական կայսեր մոտ մեղադրում են Պապին, և կայսրը նրան կանչում է Կիլիկիա: Տարսոնում, Պապը հասկանալով իրեն սպառնացող վտանգը, ըստ Ամմիանոսի վկայության[1], հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, կարողանում է փախչել:

Բուզանդը վկայում է.

«Եւ շրջեաց զմիտս իւր թագաւորն Պապ և խստորեաց զսիրտ իւր ի թագաւորէն Յունաց, և կամեցան խառնել զսէր իւր և առնել միաբանութիւն ընդ թագաւորին Պարսից» (**Բուզանդ,** V, 32):

Այնինչ Ամմիանոսը հայտնում է, որ Պապը նույնիսկ Տարսոնից վերադառնալուց հետո «շարունակում էր անդրդվելի մնալ դեպի հույներն ունեցած իր հավատարմության մեջ»[2]:

Այս հակասական վկայությունները պարզվում են, երբ քննության ենք առնում Պապի ժամանակաշրջանում նշված երկու հոսանքների միջև տեղի ունեցած սուր պայքարը:

Հռոմեական կողմը, հանձին դուքս Տերենտիոսի, Պապին մեղադրում էր Գղակ հայր Մարդպետի և Առավան հազարապետի սպանությունների համար: Արշակունի թագավորության դիրքն ամրապնդելու ձգտող հոսանքի ներկայացուցիչներն էին, հավանաբար, Գղակ հայր Մարդպետն ու հազարապետ Առավանը:

Ակնհայտնի կերպով Գղակը մի նշանակալից անձնավորություն էր, որն իրեն նպատակ էր դրել բարձր ազնվականությունն ու եկեղեցու իշխանությունը ջախջախել աստիճանաբար գրավելով նրանց հսկա կալվածները, և նա՝ որպես ներքինի, ոչ մի տոհմային արգելքներով կապված չլինելով, շատ ուժեղ հետապնդում էր այս՝ առանց ոչ մի բան նկատի առնելու:

«Հազարապետ Առավանը, ընդհակառակը, Փավստոսի հաղորդումներից բոլորովին դուրս է գցված, և նրա վաստակները վերագրվել են սպարա-

---

[1] **Amm. Marcel.,** XXX, 1:

[2] Նույն տեղում, հմմտ. նաև **Ios. Markwart,** Südarmenien, էջ 152: Ամմիանոսին հայտնի էր այն իրողությունը, որ Շապուհ II-ը ամեն կերպ աշխատում էր Աշակունի թագավորությունն իր կողմը գրավել:

պետ Մուշեղ Մամիկոնյանին»[1]:

Եթե Պապի ժամանակաշրջանում այդ պայքարը սուր կերպով արտահայտվում է բարձր հոգևորականության դեմ, ապա Պապի հաջորդի՝ Վարազդատի շրջանին է ընկնում Մամիկոնյանների հետ հաշիվը մաքրելու փորձերը:

Որ Պապի ժամանակաշրջանում Արշակունյաց թագավորության և բարձր հոգևորականության միջև ուժեղ պայքար է մղվում, և վերջապես հաղթական է դուրս գալիս Արշակունի թագավորությունը, այդ մասին ոչ մի կասկած չեն թողնում Բուզանդի վկայությունները.

«Իսկ թագաւորն Պապ… կամէր սպանանել զնա (Ներսեսին) յայտնի, բայց ի թագաւորէն Յունաց յայտնի և անարգել անգամ բանիւք չիշխէր, և ոչ սակաւ մի համարձակել ի նա, թող թէ մահու աղագաւ:… Եւ թագաւորն ոխացեալ էր ընդ նմա, և խնդիրէր սպանանել զնա. այլ յայտնի զայս և բանիւք ճառել ոչ իշխէր, թէ ոչ՝ իւր զօրքն սպանանէին զնա» (**Բուզանդ,** V, 23):

Ուշագրավ են Բուզանդի մատնանշած արգելքները հոգևորականության թշնամի հոսանքի մտադրության իրագործման համար՝ «Հունաց կողմը» և «յուր զորքը», որի սպարապետն էր Մուշեղ Մամիկոնյանը:

Այն, ինչ որ չէին կարողանում բացահայտ անել, իրագործում են դավադրության օգնությամբ: Բուզանդի վկայությամբ Ներսեսը մահանում է թունավորումից[2]:

Ուշագրավ է Ներսեսի մահից հետո Մուշեղ ապարապետի հետևյալ հայտարարությունը. «Եւ խօսէր Մուշեղ սպարապետն Հայոց և ասէր Սրբոյն աստուծոյ հեղաւ արիւն ի տարապարտուց. այսուհետև ես ոչ կարեմ երթալ ի վերայ թշնամեաց, և ոչ նիզակ ումեք ուղղել» (**Բուզանդ,** V, 30):

Ակնհայտ է հունական հոսանքին հարող հոգևորականության և Մամիկոնյան նախարարության սերտ գործակցությունը: Ինչո՞ւ էր կատարվում այդ սպանությունը: Բուզանդի հետագա վկայությունները բավական լույս են սփռում տեղի ունեցող պայքարի պատճառների վրա:

«Իսկ թագաւորն Հայոց Պապ զի թէպէտ և սպան զհայրապետն աշխար-

---

[1] **Ios. Markwart,** Südarmenien, p. 156.

[2] Մարկվարտը հակված է կասկածելու Ներսեսի թունավորման մասին (**Ios. Markwart,** Südarmenien, էջ 157-58): Թեև Ամմիանոսի կողմից չհիշատակվելուն այնքան մեծ կարևորություն չի տալիս, սակայն Կեսարիայի Բազելիոսի լուռ մնալը նրա կասկածի հիմնավորման մեջ որոշ դեր է խաղում: Ներսեսի հաջորդը, ըստ ընդունված կարգի, չի ուղարկվում Կեսարիա՝ կաթողիկոս օծվելու (**Բուզանդ,** V, 29): Մ. Օրմանյանը («Ազգապատում», I. § 158) Ներսեսի հաջորդը՝ Շահակ Ա (Բուզանդի մոտ Շահակը Հուսիկի փոխվելու մասին տե՛ս **Մ. Օրմանյան,** Ազգ., I, § 157) եպիսկոպոսական աստիճան ունենալուն է վերագրում այս: Հիմնական պատճառն այն էր, որ Շահակն ասորական եկեղեցու հոսանքին էր պատկանում, իսկ այդ հոսանքը հունական եկեղեցու գերիշխանությունը չէր ճանաչում, այդ երկու հոսանքների միջև ուժեղ պայքար է մղվել:

հին Հայոց զՆերսէս, սակայն ոչ յագեցաւ մահուամբ նորա, այլ ջանայր այսպէս՝ թէ զինչ միանգամ կարգք իցեն ուղղութեան ի Ներսէսէ եղեալ յեկեղեցւոջն, եղծեսցէ և խանգարեսցէ» (**Բուզանդ,** V, 31):

Ապա մանրամասնաբար պատմվում է, թե ինչպես են ավերվում Ներսեսի կողմից հիմնված այրիանոցները, որբանոցները, կուսանոցները, հիվանդանոցները և աղքատանոցները: Վերացնում են այն բոլոր կանոնները, որոնք դրված էին Ներսեսի կողմից և հերթանոսական սովորությունների, կենցաղի ու բարքի դեմ էին ուղղված (**Բուզանդ,** V, 31): Բուզանդի այս վկայություններում հավանաբար մենք տեսնում ենք այն երկարատև պայքարը, որ երկար ժամանակ մղվել է պաշտոնական քրիստոնյա եկեղեցու և ժողովրդի հեթանոսական պաշտամունքների միջև:

Որ Արշակունի թագավորության և բարձր հոգևորականության միջև մղվող պայքարն ավելի խոր շարժառիթներ է ունեցել, այդ մասին նույնպես հաղորդում է Մամիկոնյանների պատմիչը.

«Եւ զկարգս պտղոյն և զտասնորդացն, որ ի նախնեացն կարգեալ սովորութիւն էր տալ յեկեղեցին, վասն այնորիկ հանէր հրաման ընդ աշխարհ՝ զի մի՛ ոք տացէ» (**Բուզանդ,** V, 31):

Ուրեմն վերացվում էին հոգևորականության հասույթի հիմնական աղբյուր կազմող պտղի և տասնորդի հարկերը: Սակայն, այս բոլորը չէր.

«Եւ հատ ևս յարքունիս Պապ թագաւոր զհող եկեղեցւոյն զոր տուեալ էր թագաւորին Տրդատայ առ մեծաւն Գրիգորիւ քահանայապետիւ ի սպաս պաշտաման եկեղեցւոյն ընդ ամենայն երկիրն Հայոց: Զի յեւթն զհողոյն զհինգն հատանէր յարքունիս, և զերկունսն միայն թողույր երկուս հողս» (**Բուզանդ,** V, 31):

Այսպիսով՝ պարզվում է հակամարտության իսկական բնույթը, ինչպես և այն, թե ինչու Բուզանդի գրչի տակ Արշակունի թագավորներից Պապի պորտրետն ամենամութ գծերով է ներկայացվում: Իհարկե, խոսքը ոչ միայն Պապին է վերաբերում, այլև այն հոսանքի ներկայացուցիչներին, որոնք աշխատում էին թագավորությունն ամրապնդել:

Աշխարհիկ ֆեոդալների դեմ մղված պայքարի արձագանքներ են Բուզանդի այն վկայությունները, որոնք վերաբերում են Հայաստանի սահմանամասերում մղված պայքարներին[1]:

Արշակ II-ի շրջանում և նրա բանտարկությունից հետո տեղի ունեցած պատմական իրադարձությունները, նախարարական տների ապստամբությունները, Շապուհի արշավանքները, պարսիկների և հռոմայեցիների պատերազմների ընթացքում տեղի ունեցած դեպքերն Արշակունի թագա-

[1] Բուզանդի այդ վկայությունների (V, 9-19) չափազանցություններն ու մեծ մասի պատմական անճշտությունն ապացուցում է Աղձնիք գավառի օրինակը՝ հմմտ. **Ios. Markwart,** Südarmenien, էջ 159:

վորության համար ճգնաժամային դրություն էին ստեղծել: Կենտրոնական քիչ թե շատ կայուն իշխանություն ստեղծելը դարձել էր հրամայական անհրաժեշտություն: Այս հարցում նշանակալից դեր էր կատարում Գողակ հայր Մարդպետը: Իսկ այս առաջադրված ծրագրի իրագործումը նշանակում էր ոչ միայն ապստամբ նախարարությունների կալվածների յարքունիս գրավում, այլև օրըստօրեն զորացող կալվածատեր հոգևորականության իշխանության սահմանափակում:

«Ուստի հասկանալի է, որ Գողակ Մարդպետն, ինչպես կաթողիկոս Ներսեսի, այնպես էլ նրա մոտ բարեկամ Մամիկոնյանների աչքի փուշն էր, և զարմանալի չէ, որ նրա սպանության մասին Փավստոսի հայտնած երեք վերսիաներից մեկում որպես սպանությունը կատարող հենց նույն սպարապետ Մուշեղն է հանդես գալիս (**Բուզանդ,** V, 3), իսկ երկրորդ վերսիայում, որի գործողությունը տեղափոխված է Արշակ թագավորի ժամանակները (**Բուզանդ,** IV, 14), այն լուրջ կասկածի տեղիք է տալիս, որ կաթողիկոսն էլ առնվազն տեղյակ էր ծրագրին: Երբ Փավստոսի կղերա-Մամիկոնյան լեգենդան քննում ենք Ամմիանոսի լույսի տակ, տեսնում ենք, որ Մուշեղն իր տոհմի ու դասի փայլը պահպանելու համար Պարսկաստանի թագավորի ջրաղացին ջուր է լցնում»[1]:

Այսպես էր դատում այդ սպանությունների մասին (Գողակ Մարդպետի սպանության հետ հիշվում է նաև հազարապետ Առավանի սպանությունը) հռոմեական կողմը, հանձին դուքս Տերենտիոսի, որի գործունեությունը Հայաստանում մեզ քիչ ծանոթ է: Նա, բարեկամ լինելով Ներսեսին և սպարապետ Մուշեղ Մամիկոնյանին, նրանց կղերա-ֆեոդալական տեսակետները չէր պաշտպանում: Երկու անձանց սպանությունը Տերենտիոսի կողմից համարվեց հռոմեական կայսրության դավաճանություն, և Պապը մեղադրվեց որպես դերակատար[2]:

Ըստ վկայությունների՝ Պապը Տարսոնից փախչելուց հետո սպանվում է Հայաստանում[3]: Աղբյուրների ուշադիր քննությունից պարզվում է, որ Պապի սպանության գործում խիստ կասկածելի է դառնում Մուշեղ Մամիկոնյանը:

Պապի հաջորդ Վարազդատի ժամանակ Արշակունի թագավորությունն ամրացնելու ձգտող հոսանքը բավական տկարացել էր: Երբ հակառակորդ հոսանքին պատկանող կղերականությունը թուլացել էր, ապա մնում էին Մամիկոնյանները, որոնք ուժեղ դիրք էին գրավում, և բանակը նրանց տրամադրության տակ էր գտնվում:

Բացահայտ կռիվը նրանց դեմ կարող էր աղետալի լինել Արշակունի թագավորության համար:

---

[1] **Ios. Markwart,** Südarmenien, p. 156.

[2] **Amm. Marcel.,** XXVII, 12.

[3] Նույն տեղում, XXX, 1:

Վարազդատի ժամանակաշրջանում որպես կղերա-Մամիկոնյան հակահոսանքի ներկայացուցիչ հանդես է գալիս Սահառունի նախարարությունը, որի Բատ նահապետը պարզում է Մամիկոնյան նախարարության անցյալ արարքներն ու հետագա ծրագրերը:

«Ոչ այդ այն Մուշեղն է, զի զարքայն Պապ հրամանաւ դորա և դորին խորհրդովդ զօրավարքն Յունաց սպանին. զի դա ոխացույց և գրգռեաց զարքայն Յունաց ի վերայ թագաւորին Պապայ, մինչև ետ սպանանել: Այլ արժան է մեռանել ի ձեռաց քոց, և չէ պարտ կեալ դմա. այլ թէ ոչ աճապարեսցես, արքայ, այժ, զհայ երկիրս խորհի լնուլ քաղաքօք, և զօրանիստ առնէ աստ բնակութեան զօրացն Յունաց: Եւ այնուհետև կամ թագաւորն Յունաց հանէ ի քէն զթագաւորութիւնս Հայոց. կամ այս Մուշեղ սպանանէ, և ինքն թագաւորէ» (**Բուզանդ,** V, 35):

Սահառունի Բատ նահապետի կողմից հետևյալ ծանրակշիռ մեղադրանքներն են բարդվում հակառակ հոսանքի ներկայացուցիչ Մամիկոնյանների վրա՝

1. Պապի սպանության մեջ նրանց անմիջական մասնակցությունը և այդ նրանց խորհրդով կատարվելը,

2. հունական բանակով երկիրը լցնելու ծրագիրը,

3. Արշակունի թագավորությունը հույներին հանձնելու կամ Վարազդատին սպանելով՝ Մամիկոնյաններից թագավոր դնելու ծրագիրը:

Բնականաբար, նախարարական մրցակցությունները կարող էին միակողմանի դարձնել այս վկայությունները: Հաստատվո՞ւմ են այս մեղադրանքներն այլ գծով:

Առաջին կետի մասին կարդում ենք Ամմիանոսի մոտ.

«…Արևելքում, հանձին Հայոց Պապ թագավորի, դավադրությամբ մի սոսկալի ոճիր էր գործվում: Ահա այդ չարագործության պատճառը, որին վերահասու եղանք: Հաճախ և շատ անգամ Վաղեսի մոտ անիրավացիորեն ամբաստանում էին հազիվ չափահաս թագավորին այնպիսի մարդիկ, որոնք հասարակաց չարիքից անձնական շահ էին ակնկալում: Սրանց շարքին էր պատկանում դուքս Տերենտիոսը, որը թեև իրեն խոնարհ և երկյուղած էր ցույց տալիս, սակայն չէր դադարում, քանի կենդանի էր, խռովություններ հարուցելուց: Նա ընկերացավ մի քանի հայերի[1] հետ, որոնք երկյուղ էին կրում իրենց գործած ոճիրների համար, հաճախ նրանց նամակ էր գրել տալիս կայսեր՝ շարունակ Գղակի և Արտավանի մահվան մասին խոսելով»[2]:

«Այստեղ մատն ուղիղ դրվում է Մուշեղի վրա»[3]: Այս ձևով էր վերջանում

---

[1] Բնագիրն ունի «gentilibus», Մարկվարտը բացատրում է, այսինքն՝ «Պապի երկրացիները», տե՛ս «Südarmenien», էջ 70:

[2] **Amm. Marcel.,** XXX, 1.

[3] **Ios. Markwart,** Südarmenien, p. 70:

Պապի շրջանում երկու հոսանքների պայքարը՝ հետագայում ավելի սաստկությամբ սկսվելու համար:

Ինչ վերաբերում է Բատ նահապետի կողմից երկրորդ և երրորդ կետերում առաջադրված մեղադրանքներին, ապա այդ մասին կարդում ենք Բուզանդի մոտ, երբ նա խոսում է Մուշեղ Մամիկոնյանի ծրագրերի մասին.

«Խորհէր ևս ընդ իշխանսն Յունաց, և նոքօք ընդ կայսերն, թէ պարտ է նոցա քաղաք մի շինել յերկրին Հայոց. ի մի մի գաւառսն, որ մին մի քաղաքս, որ երկուս ամուր պարսպաւորս զօրանիստ հաստատել ընդ ամենայն երկիրն Հայոց. մինչև ի Գանձակ սահման երկիրն, որ Պարսից կուսէ էր, Հայոց սահման, և զամենայն ազատսն Հայոց կայսերական թօշակօքն զինուորել. սոյնպես և զօրացն երկիրն Հայոց, զի այսպէս ամենայն զգուշութիւն լիցի առ ի թշնամեաց ի զօրացն Պարսից» (**Բուզանդ,** V, 34):

Ուշագրավ է, որ Մամիկոնյանների այս ծրագիրը կազմվում է Պապի ժամանակաշրջանում, այսինքն՝ մի այնպիսի շրջանում, երբ Շապուհ II-ի արշավանքների ընթացքում քանդվել էին ֆեոդալական ամրությունները, ինչպես և այն ամրոցները, որոնք գտնվում էին «քաղաքներում»: Հունական կուսակցության տեսակետի վրա կանգնածները պետք է համաձայն լինեին Բուզանդի այս հաղորդածներին, սակայն, հակառակ կուսակցության կողմից ծրագրված այդ ձեռնարկումներն իրավամբ դիտվում էին որպես Արշակունի թագավորության ինքնուրույնության և նրա ամրացման դեմ ուղղված ծրագիր:

Ներքին հակամարտությունը փոխադրվում է արտաքին քաղաքականության բնագավառը. Հայաստանի դարավոր պատմության մեջ պատմական օրինաչափությամբ կրկնվող մի երևույթ:

Արշակունի-Սահառունի հոսանքը, հանձինս Մամիկոնյանների, իրենց հակառակորդներին էին տեսնում, սակայն, բացահայտ կռվի դուրս գալը վտանգավոր էր համարվում:

«Ապա խորհուրդ արարին, թէ որպէս ըմբռնել կարասցեն զնա (Մուշեղ Մամիկոնյանին - Հ. Զ.), … թէ զգայ, ասեն, մեծ պատերազմն առնէ» (**Բուզանդ,** V, 35):

Ուստի դիմում են «մեքենավարության հնարքներին» և Վարազդատի կողմից հրավիրված մի խնջույքում Մուշեղն սպանվում է, և երբ վերջինը մահվան ժամանակ հարց է տալիս թագավորին, թե այս ի՞նչ էր, թագավորը պատասխանում է.

«Երթ առ Պապ արքայ, հարց և տես՝ թէ ընդէ՞ր է այդ» (**Բուզանդ,** V, 35):

Սպարապետությունը տրվում է Սահառունի նախարարության Բատ նահապետին: Մանվել Մամիկոնյանը, Պարսկաստանից վերադառնալով, «յինքն յափշտակեաց զզօրավարութեանն զսպարապետութիւնն» (**Բուզանդ,** V, 37), և Վարազդատի ուղարկած պատգամին պատասխանում են.

«Նա մեք չեմք իսկ լեալ ձեր ծառայք, այլ ընկերք ձեր և ի վերոյ քան զձեզ» (**Բուզանդ,** V, 37):

Կարնո դաշտում երկու հոսանքի բանակները կռիվ են դուրս գալիս: Արշակունիների բանակը պարտության է մատնվում, դատվում և սպանվում է Բատ Սահառունին, և երկրից արտաքսվում է Արշակունի Վարազդատ թագավորը:

Ուրեմն Արշակունի թագավորությունն այդ ներքին պայքարների ընթացքում հասել էր այն դրության, երբ նախարարություններից ուժեղը հայտարարում էր, թե «մենք չենք եղել ձեր ծառաները, այլ ձեր ընկերներն ենք եղել և ձեզանից ավելի բարձր», և այդ հայտարարությունը հաստատում էր զենքի ուժով: Հայաստանը գտնվում էր մի այնպիսի պատմական ժամանակաշրջանում, երբ նախարարական տների մեծագույն մասի ամրությունները քանդվել էին դեռևս Շապուհ II-ի արշավանքների շրջանում, և Մամիկոնյանների ծրագիրը երկրի պաշտպանության վերաբերմամբ անիրագործելի էր մնում:

Մինչ Հայաստանում նկարագրված պայքարն իր ամենաուժեղ արտահայտությունն էր ստանում, Շապուհ II-ը պատգամավորություն էր ուղարկում Բուզանդիոն՝ Վաղես կայսեր մոտ՝ Հայաստանը բաժանելու առաջարկությամբ: Շապուհի այդ առաջարկությունը մերժվում է Բուզանդիոնի կողմից, հավանաբար տիրող քաղաքական աննպաստ կացության պատճառով, երբ Բուզանդիոնն այդ բաժանման ընթացքում չպիտի կարողանար իրեն վայել բաժինն ստանալ: Շապուհ II-ի առաջարկությանը Վաղեսը պատասխանում է, թե գոյություն ունեցող դաշնադրության մեջ ոչինչ չի կարող փոխել: Եվ երբ Պարսկաստանի կողմից հայտնվում է, որ այդ դաշնադրությունը միայն Հովհանոս կայսեր շրջանում էր ուժի մեջ, Վաղեսը 376 թ. մի հեղինակավոր պատգամավորություն է ուղարկում Պարսկաստան՝ գոյություն ունեցող դաշնադրության վրա պնդելու համար[1]:

Այդ պատգամավորությունը, առանց կայսեր համաձայնության, ընդունում է պարսիկների կողմից Բուզանդիոնին որպես բաժին առաջարկված հողամասերը, և պարսկական պատգամավորությունը Սուրենի գլխավորությամբ Բուզանդիոն է մեկնում՝ այդ առաջարկությունն անելու: Կայսրն այդ բաժանումը չի ընդունում և հետևյալ ամռանը պատերազմի է պատրաստվում: Շապուհն իր կողմից հրահանգում է Սուրենին Պարսկաստանին բաժին ընկնող գավառները զենքի ուժով հպատակեցնել: Հրահանգը գործադրվում է[2]:

---

[1] **Amm. Marcel.,** XXX, 2.

[2] Նույն տեղում: Այս ժամանակաշրջանին են վերաբերում Բուզանդի վկայությունները (**Բուզանդ,** V, 38) Վարազդատի արտաքսումից հետո կատարված իրադարձությունների մասին, Սուրենի Հայաստան գալը պարսկական բանակով և Հայաստանը Պարսկաստանին ենթարկելը: Ապա կրկին ծայր են առնում թշնամական գործողությունները Պարսկաստանի

Վաղեսը չէր կարողանում նոր զորք ուղարկել արևելյան ճակատ՝ Պարսկաստանի դեմ, որովհետև օրեցօր գոթերի հարձակումն ավելի սպառնալից էր դառնում, ուստի նա ընդունում է Պարսկաստանի կատարած գրավումը, և հռոմեական լեգեոնները քաշվում են Հայաստանից[1]:

Առանց դաշնադրություն կնքելու՝ Հայաստանը իրականում վեր է ածվում երկու մրցակից պետությունների ազդեցության շրջանների:

Բուզանդի մոտ Մամիկոնյանների և Արծրունիների պայքարը (**Բուզանդ,** V, 38, 43) զուգադիպում է այն ժամանակաշրջանին, երբ դեռևս Պարսկաստանի և Բուզանդիոնի միջև Հայաստանի բաժանման շուրջը պաշտոնական համաձայնություն չէր կայացել: Մամիկոնյան և Արծրունի նախարարությունների այդ պայքարը դրսևորում է այն հակամարտությունները, որոնք գոյություն ունեին Հայաստանի պաշտոնական բաժանման նախօրյակին:

Բաժանման պաշտոնական ձևակերպումը տեղի է ունենում 387 թվականին[2]: Հայաստանի վերաբերմամբ կատարվում էր նույնը, ինչ ոչ հարևան Վրաստանում էր տեղի ունեցել: Արշակունիների տոհմից երկու հոգի դեռևս շարունակում են թագավոր մնալ՝ Արշակ III-ը Արևմտյան Հայաստանում, իսկ Խոսրով III-ը՝ Արևելյան Հայաստանում: Արևմտյան մասում Արշակ III-ի մահից հետո (390 թ.) Բուզանդիոնի կողմից վերացվում է Արշակունի թագավորությունը, և երկիրն սկսում է կառավարվել Բուզանդիոնի կողմից նշանակված կառավարիչների ձեռքով: Իսկ Արևելյան մասում Արշակունի տոհմից թագավորները շարունակում են իշխել փոքր ընդմիջումներով, մինչև 428/429 թ., երբ այս մասում էլ վերացվում է թագավորությունը, և երկիրը կառավարվում է Պարսկաստանից նշանակված մարզպաններով:

Մարզպանական Հայաստանն իր հողամասերով հինգ անգամ ավելի ընդարձակ էր, քան արևմտյան մասում Բուզանդիոնին բաժին ընկած մասը, որը, ըստ Փարպեցու վկայության, «համեմատ էր միայն Այրարատեան գաւառին» (**Փարպեցի,** I, 6): Դրանք այն հողամասերն էին մեծ մասամբ, որոնք վաղուց գտնվում էին հռոմեական անմիջական ազդեցության ներքո:

դեմ, որոնք հավանաբար սերտ կապ ունեն Շապուհ II-ի մահվանից (379 թ.) հետո Պարսկաստանում սկսված ներքին խռովությունների և գուցե բյուզանդական մասի կողմից եղած դրդումների հետ: Մինչև Հայաստանի de facto բաժանումը Հայաստանում իշխող դիրք են գրավում Մամիկոնյանները:

[1] **Amm. Marcel.,** XXX, 2, XXXI, 8.

[2] Աղբյուրները տարբեր վկայություններ են տալիս Հայաստանի պաշտոնական բաժանման մասին: Փարպեցին դնում է Շապուհ III-ի ժամանակ (386/384-388/389), Խորենացին (III, 114)՝ Շապուհի և Արկադիոսի ժամանակ (395-408): Ըստ հռոմեական աղբյուրների՝ նախքան պաշտոնական բաժանումը պարսկական և հռոմեական կողմերի միջև երեք տարբեր թվականների բնակցություններ են տեղի ունենում (384 թ., 387 թ., 389 թ.,): Առանձին ուսումնասիրողներ տարբեր կարծիքի են. Նյոլդեկեն ընդունում է 390 թ.՝ Վռամ IV-ի ժամանակ, Գելցերը՝ 387 թ., Մարկվարտը՝ 1-ին բաժանման թվականը՝ 384 թ., իսկ երկրորդ անգամ՝ 389 թ., Հյուբշմանը՝ 387 թվականին:

Չորրորդ դարի ընթացքում Արշակունյաց թագավորության և հոգևոր ու աշխարհիկ ֆեոդալների միջև տեղի ունեցած պայքարը ցույց տվեց մեզ ոչ միայն այդ թագավորության դիրքը երկրի ֆեոդալների հանդեպ և վերջիններիի վերաբերմունքը դեպի այդ դինաստիան, որ, ըստ էության, ուրիշ բան չէր, եթե ոչ գոյություն ունեցող հավասար ուժեղ նախարարություններից մեկը, այլև այն իսկական պատճառը, թե ինչպես հարևան մրցակիցներն արմատական լուծում էին տալիս դարավոր վեճին: Ամբողջ չորրորդ դարի ընթացքում տեղի ունեցած այդ ներքին պայքարները նախապատրաստել էին այն դրությունը, որը հարևան կայսրություններն օրինականացնում էին դաշնադրությամբ: Եթե բաժանման իրավական ձևակերպումը ձգձգվում էր, ապա այդ երկու կայսրությունների շահերի հակամարտություններով էր բացատրվում:

Ֆեոդալական հասարակարգին հատուկ այդ պայքարները պատմական Հայաստանում հաճախ քաղաքականորեն հարևան կայսրություններից մեկի կամ մյուսի կողմը բռնելու արտահայտությունն էին ստանում: Այս պայքարների ընթացքում որոշ է հոգևորականության հունական հոսանքի դիրքը, որը հակապարսկական ուղղություն է բռնում. նրա վերջին ներկայացուցչի՝ Սահակ կաթողիկոսի մահով վերջանում է նաև այդ հունական հոսանքի իշխանությունը, երբ Արևելյան Հայաստանն սկսում է կառավարվել Պարսկաստանից նշանակված մարզպաններով: Շատ դեպքերում հոգևորականության այս թևի հետ է ընթանում Մամիկոնյան նախարարությունը: Ասում ենք՝ շատ դեպքերում, որովհետև պատմական իրողությունները ցույց են տալիս, որ այդ նախարարությունից քաղաքական վճռական մոմենտներում Պարսկաստանի կողմը հարողներ են եղել: Այսպես են՝ 358 թ. Մամիկոնյան տան նահապետ Վարդանի դիրքը և ապա Վահան Մամիկոնյանի Մեհրուժան Արծրունուն միանալը, ինչպես նաև Մանվել Մամիկոնյանի ժամանակավորապես Պարսկաստանին հարելը:

Եթե հռոմեական հողամասի և կամ նրա ազդեցությանը ենթարկված շրջանների անմիջական հարևան Մամիկոնյանների կալվածներն էին վրճռում քաղաքական այդ կողմնորոշումը, ապա այլ դիրքում են հանդես գալիս այն նախարարությունները, որոնց կալվածները սահմանակից էին Պարսկաստանին: Որպես այդ նախարարություններից գլխավորը՝ չորրորդ դարում հանդես է գալիս Արծրունյաց նախարարությունը, որը երեսնամյա պատերազմի ընթացքում պարսկական ուղղություն էր բռնել: Սյունյաց նախարարությունն էլ էր վայելում Պարսկաստանի վստահությունը: Այն փաստը, որ Արևելյան Հայաստանի առաջին հայ մարզպանը Պարսկաստանի արքունիքից Սյունյաց նախարարությունն էր նշանակվում, ցույց է տալիս, թե ինչ մեծ վստահություն էր վայելել այդ նախարարությունը Պարսկաստանի արքունիքում:

Այս ներքին հոսանքների արանքում Հայաստանի Արշակունյաց թագավորությունն աշխատում էր ամրապնդել իր իշխանությունը՝ պատմական

տարբեր ժամանակաշրջաններում հենվելով այդ հոսանքներից մեկի կամ մյուսի վրա: Սակայն նա նվազ մտահոգված չէր իր կալվածներն ընդարձակելու կամ «հայրենատեր» անվստահելի նախարարությունների կալվածները «պարգևական» հողամասերի վերածելու գործում: Թագավորության այս ձեռնարկումները հոգևորականության հունական հոսանքի ներկայացուցիչների և նրանց գործակցող Մամիկոնյան նախարարության ուժեղ դիմադրությանն էր հանդիպում: Արշակունիների այդ գործելակերպի մեջ խոշոր կալվածատեր հոգևորականությունն ու Մամիկոնյան նախարարությունն ապագա վտանգ էին տեսնում: Չորրորդ դարի ընթացքում տեղի ունեցած ներքին պայքարները հիմնականում այս հարցի շուրջն էին պտտվում: Այն, ինչ Մուշեղ Մամիկոնյանը հայտարարում էր Արշակունի Վարազդատ թագավորին, թե «մենք չենք էլ եղել ձեր ծառաները, այլ ընկերներն ենք եղել և ձեզանից ավելի բարձր», պայքարի սուր մոմենտում արված այս հայտարարությունը, պարզում է այդ նախարարության ամբողջ ձգտումը:

Ներքուստ ֆեոդալական պայքարներից տկարացած Հայաստանն ի վիճակի չէր դիմադրելու Սասանյան Պարսկաստանի կողմից Բուզանդիոնին արված առաջարկությանը: Եվ եթե Վարազդատ թագավորի՝ Մամիկոնյաններից կրած պարտությունից հետո (377 թ.) Պարսկաստանի կողմից առաջարկված ծրագիրն անմիջապես չէր իրագործվում, ապա այդ բացատրվում է երկու պետությունների միջև ապագա բաժինների շուրջը գոյություն ունեցող շահերի հակամարտությամբ:

Արշակունյաց թագավորության պարտությունը, Մամիկոնյան և Արծրունի նախարարությունների ներքին պայքարները 377 թվից հետո Հայաստանի դիմադրական ուժն էլ ավելի էին թուլացնում և հնարավորություն ստեղծում, որպեսզի Պարսկաստանի և Բուզանդիոնի միջև Հայաստանի բաժանման շուրջը տեղի ունեցող բանակցություններն արմատական լուծման հանգեին:

Մեր այս ուսումնասիրությունը ցույց տվեց նաև այն, որ ֆեոդալական և բուրժուական պատմագրության գնահատականը IV դարի Մամիկոնյան նախարարության վերաբերմամբ հիմնական վերանայման կարոտ է:

Սխալ պետք է համարել ավանդական այն տիրող կարծիքը, որ IV դարում Մամիկոնյանները հանդես են եկել հայ Արշակունիների իշխանությունն ամրապնդողների դերում:

Ի՞նչ դիրք էր գրավում ֆեոդալական այս պայքարների ընթացքում Հայաստանի շինական դասը և քաղաքային ազգաբնակությունը: Վերջին մասին սկզբնաղբյուրներից մեզ ոչինչ չի հասել. ինչ վերաբերում է շինական դասին, ապա այս մասին կան մի քանի արժեքավոր վկայություններ, որոնք առանձին ուսումնասիրության նյութ են կազմելու:

ԱԲՈՒ ՅՈՒՍՈՒՖ ՅԱԿՈՒԲ. ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԳԻՐՔԸ[1]

(«Կիտաբ էլ-խարաջ»)

ՀԵՂԻՆԱԿՆ ՈՒ «ԿԻՏԱԲ ԷԼ-ԽԱՐԱՋԻ» ՆՊԱՏԱԿԸ

Աբու Յուսուֆ Յակուբը ծնվել է 731 թ. Կուֆայում և վախճանել է 798 թվականին:

Հիճրեթի՝ 166 թ. Բաղդադում եղել է դաղի, ըստ ամենահեղինակավոր վերսիայի՝ առաջինն է եղել, որ ստացել է Kadi ‘l Kodat (դատավոր ընդհանուր իրավասությամբ) տիտղոսը:

Եղել է պարմեկիդ Ջաֆար բին Յահյայի դաստիարակը: Որպես դաղի՝ Բաղդադում գործել է Էլ-Մահդի, Էլ-Հադի և Հարուն ալ-Ռաշիդ խալիֆաների ժամանակ (775-798):

Յակուբին վերագրված մի քանի աշխատություններից մեզ հասել է միայն «Կիտաբ էլ-խարաջը», որը նա շարադրել է Հարուն ալ-Ռաշիդի հրահանգով: Ուրեմն «Կիտաբ էլ-խարաջը» շարադրվել է 786-798 թթ. ժամանակաշրջանում: «Կիտաբ էլ-խարաջը» ո՛չ միայն իր բովանդակությամբ խիստ ուշագրավ և հետաքրքիր մի աշխատություն է, այլև իր տեսակի մեջ առաջինն է: Կարևոր արաբ պատմաբաններ ու աշխարհագիրներ հանդես են գալիս IX դարից հետո: «Կիտաբ էլ-խարաջը», որ որոշ կետերում գրեթե նույն տեղեկություններն է տալիս, ինչ որ Տաբարին, համարյա մի դար առաջ է շարադրվել Տաբարիի հայտնի աշխատությունից:

Յակոբի բազմաթիվ աշակերտների շարքում հիշվում են հատկապես Մուհամեդ բեն էլ-Հասան Շեյբանին, Ահմեդ Բեն Հանբլն ու Բիշը բեն էլ-Վելեդ Կինգին:

Յակուբն սկզբնական բնագիրը թելադրել է իր մի աշակերտին՝ Բիշրին: Սրանով է բացատրվում բնագրի վերջնականապես խմբագրված չլինելը: Նկատվում է, որ հետագա ընդօրինակողներն անփույթ են վարվել բնագրի հետ: Թարգմանիչ Ե. Ֆագնանը «Կիտաբ էլ-խարաջը» թարգմանելիս հիմք

[1] Աբու Յուսուֆ Յակուբի «Կիտաբ էլ-խարաջը» ֆրանսերեն թարգմանել և ծանոթագրել է E. Fagnan-ը: 1921 թ. հրատարակել է Սուրիայի և Լիբանի ֆրանսական հանրապետության բարձր կոմիսարիատը: **Abou Iousouf Yakoub,** Le Livre de l’Impôt Foncier (Kitab el-Kharadj). Traduit et ànnoté par E. Fagnan, Paris, 1921:
Սուրիան իմպերիալիստական պատերազմից հետո ֆրանսական գաղութ է դարձել, և վերում նշած կոմիսարիատը “Bibliothéque Archéologique et Historique” մատենաշարով Սուրիայի պատմական անցյալին վերաբերող աշխատություններ է լույս ընծայում: «Կիտաբ էլ-խարաջն» այդ մատենաշարի առաջին հատորն է:

է ընդունել հիճրեթի՝ 1302 թ. Բուլակում հրատարակված օրինակը. համեմատության համար ձեռքի տակ ունեցել է Փարիզի №№ 2452 և 2453 ձեռագրերը: «Կիտաբ էլ-խարաջի» մի քանի ուրիշ ձեռագրեր գտնվում են Պոլսում և Բեռլինում:

Յակուբի աշխատության հիմնական աղբյուրը Ղուրանն ու նրա մեկնաբանություններն են, ինչպես նաև առաջին խալիֆաների սահմանած կանոնների մասին եղած գրավոր և մեծ մասամբ բանավոր այն վկայությունները, որ նա կարողացել է հավաքել իր ժամանակի գիտուն մարդկանցից և ծերունիներից:

«Կիտաբ էլ-խարաջն» ունի պատմական խոշոր նշանակություն: Այնտեղ մենք տեսնում ենք արտացոլումն այն հակասությունների, որոնք VIII դարի վերջերին սկսել էին խախտել խալիֆաթի դրությունը: Խալիֆա Հարուն ալ-Ռաշիդը, դիմելով իր ժամանակի հեղինակավոր գիտնականին, ցանկանում է ելք գտնել ստեղծված ներքին հակասություններից: Այդ հակասություններն արտահայտվում էին առաջին հերթին պետության ֆինանսական դրությամբ: Ուստի հողային հարկի բնագավառում ստեղծված դժգոհությունները դարձել էին կենտրոնական իշխանությանը մեծագույն մտահոգություն պատճառող խնդիր: Այս խնդիրն իր հերթին շոշափում էր խալիֆաթի ընդարձակ երկրամասերում ագրարային հարցի շուրջն ստեղծված ծանր կացությունը: Հարուն ալ-Ռաշիդի կողմից Յակուբին տրված հարցերը պտտվում են այս երկու գլխավոր խնդիրների շուրջը:

Յակուբն իր շարադրության ներածականում «Կիտաբ էլ-խարաջի» հետապնդած նպատակի մասին հետևյալն է գրում.

«… Իր հպատակներին անարդար վերաբերմունքից ազատելու և նրանց լավ դրության մեջ դնելու միակ ցանկությունից դրդված՝ հավատացյալների իշխանը … խնդրեց ինձանից գրել մի գիրք, որն իր մեջ ընդգրկեր այն բոլոր կանոնները, որոնցով պետք է ղեկավարվել հողային հարկը, դիմերը, ողորմության դիմերը, տրիբուտները (djevali)[1] հավաքելիս, և որի մեջ գրում, բացատրում և մեկնաբանում եմ այն սկզբունքները, որոնց համաձայն պետք է շարժվել: Այդ է այս գրքի նպատակը» (էջ 1):

Արաբական խալիֆաթի ներքին հակասությունների առկայությունը պարզվում է Յակուբի՝ ամբողջովին Ղուրանի ոգով գրած հետևյալ տողերից.

«Արդ, երբ մի շենք կառուցված է հիմք ունենալով ոչ թե բարեպաշտությունը, այլ ուրիշ բան, ալլահը երբեք չի հապաղի հարձակվելու նրա հիմքերի վրա և կործանելով՝ գցելու այն [շենքը] նրա վրա, որը բարձրացրել էր այն և օգտագործել իր դեմ» (էջ 1):

Ուստի խորհուրդ է տալիս խալիֆային.

---

[1] Djevali բառով հասկացվում է գլխահարկ, ինչպես և պարտված թշնամու վրա դրված զանազան տեսակի տուրքեր (**ծանոթություն թարգմանչի**):

«Ուրեմն այն իշխանությունը, որ ալլահը շնորհել է քեզ ազգի և հպատակների վրա, զուր տեղը մի՛ գործադրիր, որովհետև գործելու մեջ կարողությունն առաջանում է միայն աստվածային հաճությամբ» (էջ 2):

«Մի՛ շեղվիր ուղիղ ճամփից, որպեսզի հպատակներդ էլ չշեղվեն… Երբ խնդիրը վերաբերում էր ալլահի հրամաններին, թող բոլորը՝ մեծ թե փոքր, քո աչքում լինեն նույն աստիճանի վրա» (էջ 2):

«Զգուշացի՛ր ուրեմն քո հպատակների կորստյան պատճառ դառնալուց…, մի շենքի կործանումից առաջ է միայն, որ նրան կարելի է մույթեր դնել. քո ակտիվի կողմն է միայն քո արած բարիքը նրանց, որոնց խնամքն ալլահը վստահել է քեզ, մինչդեռ քո պասսիվի կողմը նշանակիր այն չարիքը, որի համար հանցավոր ես հանդեպ նրանց» (էջ 4):

Հարուն ալ-Ռաշիդին Յակուբի տված այս խորհուրդների իմաստը պարզ կլինի մեզ այն ժամանակ, երբ նկատի ունենանք, որ նույն խալիֆայի վերջին տարիներին Ատրպատականում ծայր էր առնում Խուրրամյան շարժումը՝ Ջավեդան իբն Սախիլիի գլխավորությամբ: 817 թ. այդ շարժման գլուխ է կանգնում Բաբեկը, և պատմության մեջ Բաբեկյան անունով հայտնի այս շարժումն ամբողջ քսան տարի զբաղեցնում էր խալիֆաթին: Օրվա հարց էր դարձել կենտրոնական իշխանությունից ֆեոդալների անջատողական ձգտումների իրագործումը: Կենտրոնական իշխանությունն սկսել էր հենվել գլխավորապես թուրքական վարձկան բանակի վրա: Օրըստօրե աճում էր խալիֆաթի դեմ եղած ներքին դժգոհությունը: Առանձին աղանդավորական շարժումները սոցիալական ցավոտ հարցերի անմիջական արտահայտություններն էին: Խալիֆաթի նվաճած երկրներում այդ դժգոհությունները շատ ավելի մեծ չափեր էին ստացել: Այդ երկրների շարքում էր գտնվում արաբական Արմինիան. այս շրջանում ծանր հարկերի ճնշումից առաջացած անտանելի դրության մասին վկայում են հայ պատմիչները: Թե ինչու հողային հարկի մասին Հարուն ալ-Ռաշիդի կողմից Յակուբին առաջադրված հարցերը խալիֆաթի համար առաջնակարգ նշանակություն ունեին, այդ պարզվում է X դարի վերջերի հայ պատմիչ Ասողիկի հետևյալ տողերից.

«Եւ Մուսէ կալեալ զիշխանութիւն ամ մի՝ սատակի. և յետ նորա Ահարոն եղբայր նորա: Սա տա զԱտրպատական և զՀայս հանդերձ Վրօք և Աղուանօք եղբօր իւրում Աւրէթլայ: Սա զԻպն Դօլկ յազգէ Հոռոմ առաքէ հարկահան ի Հայս. որոյ եկեալ ի քաղաքն Դուին՝ սաստիկ հարկապահանջութեամբ խոշտանգէր զբնակիչս երկրին: Առ որ ժողովեալ ամենայն նախարարքն և կաթողիկոսն Եսայի՝ աղաչէին թեթեւացուցանել զանուր ծանրութեան հարկին զոր պահանջէր և ոչինչ ոգտէին. այլ անդրէն յղէր պահանջողս՝ կրկին քան զառաջինն ժողովել, և տայր կնիք կապարեա դնել յամենեցուն պարանոցս և առ մի մի պահանջէր բազում զուզէս՝ մինչև հասանել մարդկան ի յետին տնանկութիւն յանհամբեր նեղութեանցն առ ի չարաշուք դահճէն:

Եւ երկոտասան հազար մարդ տարադէմ գնացին յաշխարհն Յունաց, որոց առաջնորդէր Ծապուհ ի տոհմէն Ամատունեաց և Համամ որդի նորա»[1] (**Ասողիկ,** Բ, գլ. Դ, էջ 143):

12.000 հոգի, լքելով իրենց տնտեսությունը, գաղթում են դեպի բյուզանդական հողամաս: Ահա թե ի՛նչ դրություն էր ստեղծվել: Արաբական Արմինիան մեկը չէր միայն. խալիֆաթի այլ երկրամասերում ևս առավել կամ նվազ չափով ստեղծվել էր նույն դրությունը:

Այս պայմաններում էր, որ խալիֆաթը մտահոգվել էր նոր միջոցներ որոնել իր հպատակներին սիրաշահելու համար: Յակուբին տրված հարցերը հետապնդում էին այս նպատակը: Պետք է նկատել, սակայն, որ Յակուբն իր տված պատասխաններով Հարուն ալ-Ռաշիդին մատնացույց է անում առաջին խալիֆաների ժամանակաշրջանը: Այսպիսով՝ նա անօգուտ փորձ է կատարում հետ շրջելու պատմության անիվը:

«Հուսով եմ,- գրում է նա,- որ եթե վարվես համաձայն իմ այն կանոնների, որ ես այստեղ գրել եմ, ալլահը քեզ կթույլատրի, առանց անիրավություն անելու ո՛չ մուսուլմանի, ո՛չ էլ դաշնակցի վերաբերմամբ, ավելացնելու հողային հարկի հասույթը և քո հպատակներն ավելի լավ տրամադրելու հանդեպ քեզ» (էջ 6):

Հաճախ հեղինակը բավարարվում է՝ պարզելով շուրջ մեկ ու կես դար առաջ գոյություն ունեցած դրությունը և կարևոր խնդիրներում իր սեփական կարծիքն է հայտնում այդ հարցերի լուծման մասին: «Կիտաբ էլ-խարաջի» այս մասերը պատմական առատ վկայություններ են պարունակում առաջին խալիֆաների ժամանակաշրջանի մասին:

Հեղինակը քննության է առնում իր ժամանակաշրջանի դրությունը, քննադատում է գոյություն ունեցող կանոնները. աշխատության այս մասերն առատ նյութ են պարունակում Աբբասյանների իշխանության ժամանակաշրջանի, հատկապես VIII դարի վերջին քառորդի հարկային սիստեմի և ագրարային հարաբերությունների մասին:

Ավելի մանրամասն ծանոթանանք խալիֆաթի երկրամասերում գոյություն ունեցող հարկային սիստեմին և ագրարային հարաբերություններին:

[1] VIII դարի երկրորդ կեսում՝ Աբբասյան խալիֆաների ժամանակ, Հայաստանում հարկերի գանձումից ստեղծված ծանր դրության մասին տե՛ս մեր մի ուսումնասիրությունը՝ «Արաբների հարկային քաղաքականությունն ավատական Հայաստանում» («ՀԽՍՀ պետական համալսարանի գիտական տեղեկագիր», 1926, № 2-3):

ԽԱԼԻՖԱԹԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԱՎԱՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Խալիֆաթի ֆինանսական միջոցների մեծագույն մասն սկզբից ևեթ կազմել են պատերազմական ավարառությունները: Նման պատերազմներ VIII դարում տեղի էին ունենում և կարող էին խոշոր միջոցներ հայթայթել խալիֆաթին:

Հաճախ թուրքական վարձկան բանակները խալիֆաթին մղում էին պատերազմների: Սկսած VIII դարի վերջերից՝ թուրքական այդ վարձկան բանակը դառնում է խալիֆաթի բանակի հիմնական մասը: 833 թ. այդ վարձկան զորքի թիվը խալիֆաթի բանակում հասնում էր մինչև 70.000 հոգու[1]:

Այս վարձկան բանակին շահագրգռում էին գլխավորապես պատերազմների ընթացքում կատարված ավարառությունները: Հրատապ խնդիր էր դարձել այս ավարի բաժանման հարցը: Հարուն ալ-Ռաշիդի տված առաջին հարցը այս մասին էր. Յակուբը դրան պատասխանում էր այսպես.

«Այն հարցը, որ դու տվեցիր, հավատացյալների՝ իշխան, թշնամուց վերցրած ավարի բաժանման և նրա կատարման վերաբերմամբ, որոշված է ալլահի կողմից նրա սուրբ գրքում…

Իմացե՛ք, որ ձեր վերցրած ամբողջ ավարի հինգերորդ մասը հասնում է ալլահին և նրա առաքյալին (**Ղուրան**, III, 42), (էջ 27)[2]:

Խալիֆաթի ֆինանսական դրության բարելավման հիմնական միջոց հանդիսացող ավարների $^1/_5$-ը հիմնական հարց էր, մանավանդ այն ժամանակ, երբ խալիֆաթում ֆինանսական դժվարություններն արդեն խիստ էին զգացվում: Աբբասյան խալիֆաների արքունիքը Հարուն ալ-Ռաշիդի շրջանում արևելյան բռնապետներին հատուկ պերճանքի, շքեղության և զեխության գագաթնակետին էր հասել: Բաղդադը դարձել էր արևելյան բռնապետների ճոխության ու «Հազար ու մի գիշերների» կենտրոնական վայրը: Խալիֆաթն աշխատում էր դատարկվող գանձարկղը լցնել նորանոր հարկեր նշանակելով: Հարկային ապարատի ճնշումը խորը դժգոհություններ էր առաջացրել:

Արևելյան բռնապետության հիմնական առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ այդ բռնապետության ուժն սկզբնական շրջանում կազմել է ավարից վերցրած բաժինը. պատերազմական արշավանքները կազմում են այդ բռնապետության պահպանման գլխավոր միջոցառումներից մեկը: Միապետական կենտրոնական իշխանության և ֆեոդալիզացիայի ուղին

---

[1] **J. Laurent**, L'Arménie entre Byzance et l'Islam depuis la conquête arabe, Paris, 1919, p. 228.

[2] Ոսկու և արծաթի հանքերը (rékaz), ինչպես և գտնված գանձը ենթակա էին ¼-ի հարկման:

բռնող խոշոր կալվածատերերի միջև գոյություն են ունեցել խորը հակասություններ:

Քանի դեռ բռնապետական իշխանության գանձարկղը լիքն էր, և դրա հետևանքով բանակն էլ ամուր, կենտրոնական իշխանությունը կարողանում էր խոշոր կալվածատերերի կենտրոնախույս ձգտումները ճնշել: Նման բռնապետական իշխանությունների քայքայման պրոցեսն առաջին հերթին արտահայտվում է ֆինանսական ճգնաժամերով: Վերջիններս իրենց հերթին կենտրոնական իշխանությանը հարկային ապարտի միջոցով մղում են նորանոր ճնշումների: Այսպիսի մի երևույթ ունենք, անկասկած, Հարուն ալ-Ռաշիդի ժամանակ: Հայտնի է, որ Աբբասյան խալիֆաների օրով մեծ չափերի էր հասնում հարկերի գանձումը: Այդ հարկերն իրենց քանակական ավելացումով և գանձման եղանակով առիթ էին տվել խոշոր դժգոհություններին, որոնք արտահայտվում էին կենտրոնական իշխանության դեմ ուղղված ապստամբություններով:

Աբբասյանների իշխանության հենց սկզբից՝ 755, 779, 792 թվականներին, և նաև հետո Պարսկաստանում հանդիպում ենք այդպիսի և նման այլ ապստամբությունների, որոնցից ամենագլխավորը Հարուն ալ-Ռաշիդի՝ վերջին տարիներին սկսված ապստամբություն էր, որը ինչպես նշեցինք, 817 թ. այնպիսի մեծ ծավալ էր ստացել, որ ամբողջ քսան տարի զբաղեցնում էր խալիֆաթին:

Հայաստանում 772 թ. խալիֆաթի իշխանության դեմ ուղղված ապստամբության հիմնական շարժառիթը հարկերի ճնշումների հետևանքով աշխատավոր գյուղացիության մեջ առաջացած դժգոհությունն էր: Այս և այլ ապստամբությունների օրինակների հիման վրա կարելի է ցույց տալ խալիֆաթի տիրապետության տակ գտնվող երկրամասերի դասակարգային պայքարի յուրահատուկ բնույթը:

Հողատիրական հարաբերությունների հետևանքով առաջացած հակասությունները (ստրկական աշխատանքի կիրառումը, հողօգտագործման mozâra'a սիստեմը, որի մասին խոսք կլինի ստորև) խիստ սուր բնույթ էին ստանում հարկային քաղաքականությամբ: Կենտրոնական իշխանության թուլացման զուգընթաց հարկահավաքների կամայականությունները մեծ չափեր էին ընդունում և «օրինական» պարտավորություններից ավելի ճնշիչ դառնում: Հարկերը դիֆերենցիացիայի եղանակով ո՛չ միայն քանակապես խիստ մեծ չափերի էին հասել, այլև հարկահավաքներին իրենց շրջաններում դարձել էին ինքնիշխան փոքր բռնակալներ:

Հարուն ալ-Ռաշիդի կողմից Յակուբին ուղղված հարցերի մեծագույն մասը վերաբերում է վերը նշված այս խնդիրներին: «Կիտաբ էլ-խարաջի» բովանդակության խոշոր մասը կազմում են այդ հարցերի պատասխանները: Սա ցույց է տալիս, թե ինչպիսի խոշոր նշանակություն ուներ այս հարցերի կարգավորումը:

Ղուրանի ոգու համաձայն մեկնաբանող Յակուբը խալիֆաթին ենթակա հպատակների դրությունը քննում է երկու հիմնական բաժանումներով՝ արաբներ և տիրապետվող ժողովուրդներ: Տիրապետող իսլամը դաշնագրերով հպատակություն հայտնած ժողովուրդների հանդեպ հանդես է գալիս առանձնաշնորհյալ դիրքում: Ըստ այս բաժանման՝ երկու տեսակի հողեր են նշվում՝ խարաջի և դիմի: Խարաջի հողը դաշնագրերով հպատակություն հայտնած ժողովուրդների կողմից օգտագործվողն է. նրանից գանձված հարկը կոչվում է խարաջ, իսլամի կողմից օգտագործվող հողը կոչվում է դիմի, վերջինից գանձված հարկը՝ դիմ:

Յակուբը հարկային սիստեմից առաջացած դժգոհությունների վերացման համար որպես միջոց առաջարկում է հետևյալ երկու սկզբունքների կիրառումը.

ա) հարկերի տեսակի և նրանց չափի համար վերադարձ դեպի առաջին խալիֆաների շրջանում գոյություն ունեցող դրությունը,

բ) հարկահավաքների կամայականությունների վերացում:

1. ԽԱՐԱՋ[1]

Յակուբը խարաջի չափի մասին գրում է հետևյալը.

«Օթմանը չափեց սեփականությունները և հարկ դրեց որթատունկի մի գարիբին[2] տասը դիրհեմ, արմավենիների մի գարիբին՝ ութ, շաքարեղեգի մի գարիբին՝ վեց, ցորենի մի գարիբին՝ չորս և գարու մի գարիբին՝ երկու դիրհեմ»:

«Ես Սիրիից գիտեմ, որ Օմար բեն ալ-Խաթաբը խաղողի այգիների վրա դրեց տասը դիրհեմ հարկ, արոտներին՝ հինգ և բոլոր տեսակի ոռոգելի հողերին՝ մշակված կամ ոչ, մեկ դիրհեմ և մեկ մախտում» (էջ 58):

Յակուբը խարաջի քանակի մասին բերում է բազմաթիվ այլ վկայություններ, որոնք տարբերվում են միմյանցից (հմմտ. էջ 59-61, 64-65): Սրանից կարելի է հետևցնել այն, որ խալիֆաթի տիրապետության տակ գտնըվող երկրամասերում հողային հարկի գանձումը տարբեր ժամանակներում և տարբեր վայրերում տարբեր է եղել:

---

[1] Հարկատուների պահպանությանը պետական նշանակություն էր տրվում: Գրաված հողամասերի ազգաբնակությունն իսլամի համար շահագործման օբյեկտ էր: Սավաղի հողերի բաժանման առթիվ Օմարի և զորավարների միջև տարաձայնություն էր առաջացել. զորավարները պահանջում էին գրաված հողամասերն իրենց միջև բաժանել, Օմարը հակառակում էր.

«[Պարտյալները] թող որպես [շահագործելի] նյութ մուսուլմանների համար» (էջ 57): Այս շրջանում հաղթում էր Օմարի տեսակետը:

[2] Գարիբը՝ հողային տարածության այս չափը, ընդունվում է մոտավորապես $^1/_7$ դեսյատին:

Անցյալի ավանդությունների հիման վրա խարաջի չափի մասին գոյություն ունեցող տեսակետները մեջբերելուց հետո Յակուբը հայտնում է այն տեսակետը, որ պետք է վերադառնալ հարկերի գանձման բնարդյունքային ձևին. նա առաջարկում է խարաջի vazifé ձևը (փողով կատարված վճարումը) փոխարինել mokasama-ով (բնարդյունքով կատարված վճարումը): Այս պատճառաբանում է նրանով, որ այդ ավելի արդյունավոր կլինի պետական գանձարկղի համար և ավելի թեթև՝ հարկատուների համար: Բացի այս՝ հարկահավաքման ժամանակ հարկատուները կազատվեն կառավարիչների և հարկահավաքների վատթար գործելակերպից:

Այն հարցին, թե ինչու կողմնակից է, որ խարաջը բնարդյունքով գանձվի, Յակուբը, հենվելով Օմարի վրա, պատասխանում է.

«Ապա ուրեմն, երբ տեսանք, որ այս իշխանի կողմից այս երկրի վրա դրված խարաջը հպատակների վրա ծանր էր ճնշում, այնպես որ նրանց հողերը չէին կարող ապրեցնել իրենց, և որովհետև այն պարտադրելը պիտի առաջացներ գաղթ և այդ հողերի լքում…, մենք հետևցինք այն պատվերներին և հրահանգներին, որ նա տվել էր» (էջ 129):

Առաջարկելով խարաջը բնարդյունքով գանձել՝ Յակուբը տալիս է միաժամանակ նաև նրա չափը: Սրանից պարզվում է, թե ինչ ծանր հարկ է գանձվելիս եղել հեղինակի ժամանակաշրջանում.

«Ես … եկել եմ այն կարծիքին, որ Սավադի բնակիչը, որ մշակում է ցորեն և գարի, $^{2}/_{5}$-ը պետք է վճարի բնարդյունքով, եթե այնտեղ ոռոգումը բնական է, այն հողերի համար, որոնք ոռոգվում են անիվներով (դալիյա), պետք է վճարի $^{3}/_{10}$-ը, արմավենիների, որթատունկերի, արոտների և պարտեզների համար՝ ¼-ը» (էջ 77):

2. ԴԻՄ

Այս հարկը վերցվում էր դիմի հողերից, որոնք պատկանում էին մուսուլմաններին: Եթե ոռոգումը բնական էր, պետք է գանձվեր արդյունքի $^{1}/_{10}$-ը, իսկ եթե արհեստական՝ $^{1}/_{20}$-ը (էջ 79):

Յակուբը նշում է մի շարք օբյեկտներ, որոնք, իր կարծիքով, դիմի հարկի ենթակա չեն, այսպես օրինակ՝ բանջարեղենը, անասնակերը և վառելափայտը: Այն հանգամանքը, որ հեղինակը բացասում է այս տեսակի բերքերից հարկ գանձելը, ենթադրել է տալիս, որ այդ տեսակի հարկեր գոյություն են ունեցել:

Բացի այս՝ հեղինակը գտնում է, որ միայն որոշ քանակից բարձր արտադրությունից (5 վասկից[1] բարձր) կարելի է դիմ գանձել: Հողային հարկի կողքին արաբական խալիֆաթում գլխավոր հարկը կազմում էր գլխահարկը:

[1] Ըստ Յակուբի տվյալների՝ 1 վասկը = 60 սա. 1 սան = $5^{1}/_{3}$ ռիտլ (= 1 կաֆիզ = ¼ ռոբ):

3. ԳԼԽԱՀԱՐԿ

«Գլխահարկը տարածվում է Սավադում բնակվող, ինչպես նաև Հիրայի և ուրիշ վայրերի բոլոր հպատակների վրա. լինեն նրանք հրեա, քրիստոնյա, թե մոգ…, բացառություն են կազմում միայն Բենու Տաղլեբի քրիստոնյաներն ու Նեջրանի բնակիչները: Պարտավոր են վճարել միայն տղամարդիկ, ոչ կանայք և երեխաները. հարուստը՝ 48 դիրհեմ, միջին կարողության տերը՝ 24 դիրհեմ, կարիքավորը, հողագործն ու ձեռական արհեստով զբաղվողը՝ 12 դիրհեմ» (էջ 187):

Բարձր կատեգորիային պատկանում են սեղանավորները, կերպասի վաճառականները, վարձու ագարակատերերը, վաճառականներն ու բժիշկները:

4. ՏԱՍԱՆՈՐԴ (մաքս)

Այս հարկի գանձման ժամանակ նկատի է առնվում երեք կատեգորիա՝ մուսուլմանը, խարաջին և հարբին. վերջին կատեգորիային են պատկանում խալիֆաթի տիրապետության սահմաններից դուրս գտնվողները: Մուսուլմանը վճարում է $2^1/_2$%, խարաջին՝ 5%, հարբին՝ 10%:

Տասանորդ (մաքս) կարելի է գանձել, ըստ Յակուբի, երբ ապրանքի ընդհանուր արժեքը 200 դիրհեմից բարձր է:

«Արդարև, Օմար Բին էլ-Քատտաբն է, որ հաստատեց տասանորդի զանազան մաքսերը, և նրանք գանձելու մեջ ոչ մի անպատեհություն չկա, երբ հավաքվում են առանց հպատակներին նեղելու (կեղեքել) և պայմանով, որ նրանցից չպահանջվի ավելի, քան թե պարտավոր են» (էջ 207):

Ըստ Յակուբի՝ այն առևտրականը, որ մի անգամ վճարել է տասանորդը, նույն տարվա ընթացքում նույն ապրանքը երկրից դուրս հանելիս ազատ է տասանորդի հարկից:

Սադական միայն մուսուլմաններից գանձվող հարկ էր: Աբու Յուսուֆն ասում է.

«Ալլահին և վերջին դատաստանին հավատացողին չի թույլատրում սադակայից ազատվել» (էջ 120):

5. ՍԱԴԱԿԱ (ողորմության տասանորդը)

Սադական գանձվում էր բնարդյունքով՝ հատկապես անասուններից:

Յակուբը տալիս է առաջին խալիֆաների ժամանակ գանձված սադա-

կայի հետևյալ չափերը.

«40-ից մինչև 120 մաքիից մեկ գլուխ մաքի,
120-ից » 200 » երկու » »,
200-ից » 300 » երեք » »,
Հետագա յուրաքանչյուր հարյուրին՝ մեկ մաքի…:

5 ուղտի համար		1 մաքի,	
10 » »		2	»,
15 » »		3	»,
20 » »		4	»,
25-35	»	»	մեկ տարեկանից մեծ մի էգ ուղտ,
35-45	»	»	երկու » » » » »,
45-60	»	»	մի չափահաս էգ ուղտ,
60-75	»	»	հինգ տարեկան մի էգ ուղտ,
75-90	»	»	երկու տարեկանից մեծ երկու էգ ուղտ,
90-120	»	»	երկու չափահաս էգ ուղտ,

120-ից ավելի եթե լինի, 50 գլխին՝ մի չափահաս էգ ուղտ, 40 գլխին՝ 2 տարեկան մի էգ ուղտ» (էջ 115-116):

Ձիու մասին կարծիքները տարբեր էին, Աբու Հանիֆան ընդունում է.

«Արածելու կարող յուրաքանչյուր ձիուց սադական մեկ դինար է» (էջ 117):

Յակուբիի նշած հիմնական հարկերը սրանք են: Սակայն հետաքրքրական է, որ մի շարք օբեյկտներից հարկ վերցնելը կամ բոլորովին ապօրինի է գտնում, և կամ մեջ է բերում տարակարծությունները: Յակուբի այդ բացասումներից պետք է հետևցնել, որ գոյություն է ունեցել բացասվող դրությունը:

Այսպես է ջրում եղած ձուկը հարկադրելու մասին.

«Հավատացյալների՛ իշխան, դու ինձ հարց ու փորձ արիր լճակներում և այլ հավաքված ջրերում գտնվող ձկան վաճառքի մասին:

«Ջրի մեջ գտնվող ձուկը ծախել չի թույլատրվում, որովհետև նա անստույգ է պատկանում է որսացողին…

Կան մարդիկ, որոնք արտոնում են լճակներում գտնվող ձկների վաճառքը, սակայն, ըստ մեզ, ճիշտ է այն տեսակետը, որ պարսավում է այդ» (էջ 132):

Ուշագրավ են այն վկայությունները, որոնք վերաբերում են նավթին և մի շարք այլ նյութերին: «Կիտաբ էլ-խարաջի» ձեռագրերը տարբերվում են այս կետում. ֆրանսերեն թարգմանության համար օգտագործվող օրինակում Յակուբը խալիֆային հայտնում, որ «այդ մասին ոչինչ չգիտե» (էջ 106):

Թարգմանիչը ծանոթության մեջ մի այլ ձեռագրից մեջ է բերում նույն հատվածը, որն ավելի՛ մշակված խմբագրություն է ընդունում:

«Ձյութին, աղին, արսենիկին, կարմրադեղին (կարմրահող), նուրային

(հեղուկ ձյութ), փիրուզակին, ապակի շինելու համար գործածվող նյութին, անտիմոնին, սնդիկին և ծծումբին ո՛չ խարաջ կա, ո՛չ դիմ, ո՛չ քենտ և ո՛չ էլ սադակա… Նույնպես և կարկեհանը, զմրուխտը և թանկագին քարերը, որոնք գործածվում են որպես գոհարեղեն կամ օգտագործվում են դեղեր պատրաստելու… Այս արտադրանքները նկատվում են կավից և կամ հողից առաջ եկած» (էջ 107, ծանոթ.):

Յակուբը թեև դեմ է այս օբյեկտներից, ինչպես և ջրում եղած ձկներից հարկ վերցնելուն, սակայն այլ աղբյուրներից (Բելաղորի, Իբն Ֆակի, Իբն ալ-Աթիր) հայտնի է, որ խալիֆաթի եկամուտների մեջ կարևոր տեղ էին գրավում ձկնորսությունից և հանքային նյութերից գանձված հարկերը:

Ստեփանոս Օրբելյանը, գանգատվելով արաբական խալիֆաթի ծանր հարկերի մասին, հաղորդում է հետևյալ ուշագրավ վկայությունը.

«…Եւ իւրեանց գրեսցին զլերինս և զձկունս ծովու և զփայտ անտառի և զհող երկրի և քարինք անպտուղք և երկք և քրտունք երկրագործաց» (**Ստեփանոս Օրբելյան,** գլ. ԼԲ, էջ 147, Թիֆլիս, 1910):

Գանձված այս հարկերը, ըստ Յակուբի, երեք խմբի են բաժանվում.

ա) պատերազմական ավարից, գանձերից և հանքերից վերցված $^1/_5$-ը, որ պատկանում է իմամին և նրա մերձավորներին,

բ) հողային հարկից, գլխահարկից և տասանորդից (մաքս) գոյացած հասույթը մտնում է պետական գանձարկղը,

գ) սադակայից առաջացած հասույթն առանձնացվում և բաժանվում է՝ համաձայն Ղուրանի ցուցումների:

Գոյություն ունեցող դժգոհությունների վերացման համար Յակուբը մեծ կարևորություն է տալիս արդարադատ հարկահավաքներ նշանակելու խնդրին. խիստ արգելք է դնում հարկահավաքման այնպիսի եղանակների վրա, որոնց միջոցին զանազան պատիժների և ֆիզիկական չարչարանքների են ենթարկվում հարկատուները.

«Գլխահարկը գանձելու համար,- գրում է նա,- պետք չէ պարտականներին ծեծել, արևի դեմ կանգնեցնել, դրանց նման վատ վերաբերմունքի դիմել և ոչ էլ նրանց ենթարկել ֆիզիկական խորշելի պատիժների» (էջ 189):

Խոսքն ուղղելով հավատացյալների իշխանին՝ խորհուրդ է տալիս.

«Դու պարտավոր ես, իշխա՛ն հավատացյալների, հրամայել քաղցրությամբ վարվել հանդեպ նրանց, որոնք քո մարգարեի շնորհած պաշտպանությունից օգտվում են… և հոգ տանել նրանց մասին, որպեսզի նրանք չկեղեքվեն, չճնշվեն, չվերահարկվեն ոչ էլ առանց օրենքի, որին ենթակա են, չսեփականազրկվեն իրենց ունեցածների ոչ մի մասից» (էջ 191):

Ապա մի այլ կապակցությամբ հայտնում է.

«Պարտապանին չի կարելի ծեծել իր դրամական վճարելիքների համար և կամ դատապարտել՝ երկար ժամանակ ոտի կանգնեցնելու պատիժների

ենթարկելով. ճիշտ, որ ես լսել եմ, որ պարտապաններին կանգնեցնում են արևի դեմ, անգութ ծեծի են ենթարկում, լիքը սափորներ են կախում վզից և այնպես են կապկպում, որ արգելք է լինում աղոթելուն: Սրանք ծանր գործեր են ալլահի աչքում և անպատվաբեր՝ իսլամի համար» (էջ 166):

Խորհուրդ է տալիս իրենց պաշտոնն ի չարը գործադրող հարկահավաքներին պատժել խիստ կերպով և ապա վերջացնում է հետևյալ բնորոշ խոսքերով.

«Ակա՛նջ դիր ճնշվածի տրտունջներին, որովհետև նրա ձայնը կլսվի» (էջ 169):

Յակուբը խալիֆային զգուշացնում է խալիֆաթի սահմաններում հարկերի գանձման վարձակալական սիստեմից:

«Գտնում եմ, որ դու ոչ Սավադի և ոչ էլ մի որևէ այլ գավառի հարկը վարձով տալու չես» (էջ 159):

Նշում է, որ վարձակալները սաստիկ ճնշում են հարկատուներին, գանձում են ավելի, քան սահմանված է.

«Այս վարվելակերպը երկրի ավերում ու հպատակներիդ կորուստ կառաջացնի» (էջ 159):

Անդրադառնալով հարկի վարձակալական պայմաններում կատարված ճնշումներին՝ նշում է գործ դրված խոշտանգումները՝

«Սաստիկ ծեծի ենթարկելը, արևի կիզիչ ճառագայթների տակ կանգնեցնելը, վզից քարեր կախ տալը…» (էջ 159):

Յակուբի առաջնորդող սկզբունքն է.

«Ոչինչ տնական չէ, երբ անկարգություն կա, և ոչինչ չի կորչի, երբ կարգ ու կանոն կա» (էջ 160):

Սակայն, ըստ երևույթին, հարկահավաքման վարձակալական այս եղանակը Հարուն ալ-Ռաշիդի շրջանում արդեն բավական լայն ծավալ էր ստացել. Յակուբը, դեմ լինելով նրան, միաժամանակ զիջում է անում խալիֆային՝ խորհուրդ տալով այդ ձևի կիրառումը հետևյալ կերպ.

«Հավատացյալների իշխանը թող վերուստ դրությունը քննի, ինչ որ նպաստավոր կգտնի պարտապանների համար և ինչը՝ ոչ ավելի շահաբեր արքունի գանձի համար, կարող է վարձակալությունը կիրառել հսկողությամբ» (էջ 161):

Նշում է նաև հարկահավաքման ժամանակ այլ կարգի այն բոլոր ապօրինությունները, որոնք խիստ ծանրացնում են հարկատուների դրությունը, ինչպես օրինակ՝ հավաքած հնձից պետության հասնող բաժինն անմիջապես չվերցնելը, բերքը դրսում պահելը և նրանից առաջացող վնասները: Հարկահավաքի համար ռոճիկ պահանջելը, չափելու համար ապօրինի վերցված փողը, հարկատուների հաշվին հարկահավաքի մարդկանց և ձիերի պահպանությունը, հարկատուների միջոցով պետությանը հասնող բաժնի տեղա-

փոխությունը և հարկահավաքման հետ կապված բոլոր այլ ծախքերը:

Յակուբը գտնում է, որ ոչ իսլամ հարկատուին արտաքուստ ճանաչելու համար անհրաժեշտ է նրա և իսլամի արտաքին հագուստի մեջ տարբերություն մտցնել.

«…Պետք է գլխահարկի հավաքման ժամանակ նրանց ծոծրակին կնիք խփես, և երբ բոլորն աչքի անցկացված կլինեն, միայն այն ժամանակ նրանց խնդրանքի հիման վրա կջնջես կնիքները, ինչպես արեց Օթման բին Հոնեյֆը…» (էջ 195):

«Դու պետք է հրամայես նույնպես, որ նրանցից ոչ ոք ազատ չթողնվի տարազով, հեծանելիքով և արտաքինով նմանվելու մուսուլմանին, որ բոլորը գոտկատեղում կրեն զոննար գոտին…, որ նրանց գդակները խծված լինեն, որ նրանց համետները համետի գնդի փոխարեն ունենան նռան նմանվող մի փայտի կտոր, որ նրանց ոտնամաններն ունենան կաշե կրկնակի կապեր…» (էջ 195):

Նրանց թույլատրվում է.

«Ապրել գլխավոր քաղաքներում և մուսուլմանների շուկաներում և այնտեղ գնել ու վաճառել, արգելվում է, սակայն, ծախել գինի և խոզ…» (էջ 195-196):

«Հրամայի՛ր քո պաշտոնյաներին,- խորհուրդ է տալիս Յակուբը,- գործադրելու այս, ինչպես Օմարն ասում է, հենց սկզբից նրանց զանազանելու մուսուլմաններից» (էջ 196):

Յակուբի այս ուշագրավ վկայություններից կարելի է անել հետևյալ հիմնական եզրակացությունները.

ա) Տիրապետող արաբը գրված երկրների ազգաբնակությանը դիտում է որպես իր կերակրողին: Շահագործման եղանակը լինելով դասակարգային՝ խստանում է նաև նրանով, որ հարկատուն ոչ արաբ է:

բ) Խալիֆաթի կենտրոնական իշխանությունը հանդես է գալիս առաջին հերթին իբրև իսլամի իրավունքների պաշտպան:

գ) Խալիֆաթի համար գոյություն ունի իսլամը, խարաջին և հարբին. հարկային քաղաքականությունը տարվում է ըստ այս կատեգորիայի:

դ) Հարուն ալ-Ռաշիդի շրջանում հարկային այդ քաղաքականությունը գանձված հարկերի ծանրությամբ և գանձման եղանակով ընդունել է այնպիսի ձևեր, որոնք խորը դժգոհություն են առաջացրել ո՛չ միայն ոչ արաբ հարկատուների շրջանում, այլև արաբ ազգաբնակության մեջ: Վերջինս, իր սկզբնական տոհմային կենցաղից դուրս գալով և դասակարգային ուժեղ շերտավորման ենթարկվելով, շահագործող դասակարգի ճնշումների տակ սկսել է խորը դժգոհություն տածել դեպի խալիֆաթը:

ե) Յակուբը Հարուն ալ-Ռաշիդին իր տված խորհուրդներով VIII դարի վերջին փորձում է խալիֆաթը դեպի առաջին խալիֆաների ժամանակաշրջ-

ջանի օրենքները վերադարձնել: Պատմության առաջընթացն այդ հասարակության մեջ առաջացրած իր փոփոխություններով խալիֆաթին կանգնեցրել էր սոցիալական անլուծելի խնդիրների առաջ, որոնք խալիֆաթին դեպի աստիճանական քայքայում տարան, և Յակուբի տված խորհուրդները մնացին թղթի վրա:

Հարկային քաղաքականության բնագավառում առաջացած այս դժգոհություններն իրենց խոր արմատներն ունեին այն ագրարային հարաբերությունների մեջ, որոնք գոյություն ունեին խալիֆաթի սահմաններում: Ուստի Հարուն ալ-Ռաշիդի հարցերի երկրորդ խումբը վերաբերում է այդ խնդիրների հնարավոր կարգավորմանը: «Կիտաբ էլ-խարաջի» բովանդակության կարևոր մասը նվիրված է ագրարային հարաբերություններին:

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արաբական հասարակական կյանքն ուսումնասիրելու տեսակետից խոշոր նշանակություն ունի ագրարային հարցի լուսաբանությունը:

«Կիտաբ էլ-խարաջն» այս տեսակետից խիստ ուշագրավ վկայություններ է պարունակում:

Յակուբի շարադրանքից պարզ երևում է, որ արաբական պետության սահմաններում ստրկական աշխատանքի կիրառումը բավական լայն ծավալ էր ստացել, հատկապես խալիֆայության կենտրոնական մասերում: Հողօգտագործման բնագավառում գոյություն է ունցել նաև կալվածների վարձակալության (mozara'a) սիստեմը, որի մասին ընդարձակ խոսում է Յակուբը:

Յակուբը, այս խնդրում ևս Ղուրանը որպես առաջնորդող աղբյուր ունենալով, խիստ ուշագրավ վկայություններ է բերում առաջին խալիֆաների՝ Աբու-Բեկրի, Օմարի, Օթմանի և Ալիի կարգադրություններից, որոնք հեղինակի համար ունեն օրենքի նշանակություն:

Ըստ գանձված հողային հարկի՝ գոյություն ունեին երկու տեսակի հողեր՝ դիմի և խարաջի:

«Ինչ վերաբերում է, հավատացյալների՛ իշխան, քո այն հարցին, թե ինչ է տարբերությունը դիմի և խարաջի հողերի, [ահա՞] արաբական կամ ոչ արաբական երկրի բոլոր այն հողերը, որոնց պատճառով հավատափոխ են եղել բնակիչները, մնում են նրանց ձեռքում և դիմի հող են…» (էջ 104, հմմտ. նաև էջ 94-96):

«Ոչ արաբներով բնակված վայրերը, որոնք գրավված են իսլամի կողմից, իմամի կողմից թողնված են պարտվածների ձեռքում, խարաջի հողեր են, դիմի հողեր են, եթե նրա (իմամի) կողմից բաժանված են հաղթողների միջև» (էջ 94-96):

Այս վկայություններից պարզ երևում է, որ իմամը հանդես է գալիս որպես հողերի բաժանման կարգադրիչ. խիստ ուշագրավ է այն, որ այդ բաժանված հողերը տրվում են օգտագործման համար, այդ են նշանակում «մնում են նրանց ձեռքում» և կամ «թողնվում են պարտվածների ձեռքում» դարձվածքները:

Յակուբի ժամանակ հողերը հաղթող արաբներին բաժանելն ընդունում է օրինական մի ձև, տարբեր կերպ էր դրվում հարցը Օմարի ժամանակ: Օմարը հաղթող արաբներին հող բաժանելուն դեմ էր եղել, Յակուբը գտնում է, որ Օմարին ժամանակ դա մի բարիք էր մուսուլմանների համար: Եվ այդ պատճառաբանում է հետևյալ կերպ.

«Նա որոշեց վճարել տալ խարաջը, որպեսզի նրա հասույթը բաժանվի մուսուլմանների միջև, և այս որոշումը օգտակար եղավ ամբողջ համայնքի համար, որովհետև եթե այդ հողերը պատերազմիկների ռոճկի և սննդի հա-

մար նախկին դրության մեջ չթողնվեին (immobillosé եղած չլինեին), սահմանային գավառներն ազգաբնակությամբ բնակված չլինեին, զորքը զրկված կլիներ սրբազան պատերազմ մղելու անհրաժեշտ միջոցներից, և վախ կարող էր լինել, որ անհավատները կրկին տեր կդառնան իրենց նախկին հողերին, քանի որ այդ հողերը զրկված պիտի լինեին իրենց պաշտպաններից» (էջ 43):

Յակուբը, հակառակ խարիջիդների, այն տեսակետին է, որ արաբական հողը պետք է զանազանել ոչ արաբականից, մինչդեռ խարիջիդները դեմ էին այս տարբերության: Իմամի հայեցողությանն է թողնում ոչ արաբական հողերը դիմի կամ խարաջի նկատի ունենալու խնդիրը, սակայն, գտնում է, որ Հեջազում, Մեկկայում, Մեդինայում, Եմենում ալլահի՝ մարգարեի ժամանակվանից գոյություն ունեցող դրությունը պետք է նույնությամբ պահպանել:

Յակուբի վկայություններից պարզվում է, որ գոյություն են ունեցել ֆեոդներ, որոնք տրվել են դեռևս Մուհամմեդի և առաջին խալիֆաների օրով:

«Իրաքում ֆեոդները կազմված են այն ամենից, ինչ որ պատկանում էր Կեսրային, նրա սատրապներին և ընտանիքին, և չէ գրված ոչ ոք» (էջ 85):

Այդ ֆեոդների նվիրատվությունները կատարվել են բռնագրավված հողերից: Սավադում նշում է բռնագրավված տասը տեսակի հողեր:

Ապա բերելով մի շարք վկայություններ այն մասին, թե ինչպես Մուհամմեդն ու առաջին խալիֆաները բռնագրավված այդ հողերից ֆեոդներ են տվել, Յակուբը շարունակում է.

«…Ավանդությունները ցույց են տալիս, որ մարգարեն և նրանից հետո խալիֆաները ֆեոդներ են տվել զանազան անձերի: Մարգարեն եթե այդ արել է, նրանում մի օգուտ է տեսել իսլամի համար: Խալիֆաները նույն կերպ են դատել. նրանք ֆեոդներ են նվիրել միայն նրանց, ովքեր ըստ իրենց ծառայություն էին մատուցում իսլամին և վնասում էին թշնամուն: Եթե նրանք խորհած չլինեին, որ դա լավ բան է, այնպես վարված չէին լինի. նրանք ֆեոդներ են շնորհել ոչ ի վնաս հավատացյալների և ոչ էլ ի վնաս դաշնակիցների» (էջ 93-94):

Այդ ֆեոդներից գանձվելիք հարկը որոշելուց հետո, խոսքը խալիֆային ուղղելով, հետևյալ բնորոշ խորհուրդն է տալիս.

«Ես իմ բացատրությունը վերջացրի, ո՜վ իշխան, ընտրի՛ր քո նախասիրած տեսակետը և կիրառի՛ր այն, ինչ դու կնկատես լավագույնը մուսուլմանների համար, ամենաօգտակարը՝ ազգաբնակության բոլոր դասերի համար, ամենանպաստավորը՝ քո հավատքի համար» (էջ 90):

Այդ հողային նվիրատվությունները եղել են բավական ընդարձակ: Մուհամմեդի կողմից նվիրված մի հողամաս, որ չեն կարողացել մշակել Օմարի ժամանակ, վաճառել են 8000 դինարի կամ 80.000 դիրհեմի[1] (էջ 92):

[1] Այս գումարի մասին (Յակուբի ժամանակ) գաղափար կազմելու համար համեմատենք անասունների գների հետ, որոնք գտնում ենք նրա աշխատության մեջ.

Յակուբը նման կալվածների մշակման մասին ուղղակի վկայություններ չի տալիս, սակայն, ստրուկների մասին տված նրա բավական ընդարձակ վկայություններից պարզվում է, որ ստրկական աշխատանքի կիրառումը բավական խոշոր ծավալ է ընդունած եղել: Բացի այս՝ կար նաև կալվածների վարձակալության եղանակը (mozara'a):

Ստրուկների գոյության մասին խոսում են Յակուբի հետևյալ վկայությունները: Հարկատուների հարկի ենթակա օբյեկտների մասին խոսելիս նա ասում է.

«Գալով նրանց մյուս ինչքերին և ստրուկներին՝ նրանք ոչ մի տուրքի ենթակա չեն» (էջ 185):

Արյան գնի որոշման մեջ «Կիտաբ էլ-խարաջը» տարբերություն է դնում «ազատների» ու «ստրուկների» միջև (էջ 245): Նույն տարբերությունը տեսնում ենք նաև գործած հանցանքի համար սահմանված պատժի մեջ.

«Եթե հանցավորն ստրուկ է, նա կստանա ստրուկի պատիժը, այլ կերպ ասած՝ քառասուն հարված» (էջ 256):

Սադակայից գոյացած հասույթի բաժանման մասին խոսելիս ասում է, որ նրա մի մասը հատկացվում է՝ ստրկացած իսլամին ազատելու (էջ 122):

Ստրկական աշխատանքի լայն չափով կիրառումը պարզվում է նրանից, որ խալիֆան հարց է տալիս, թե ինչպես վարվել իրենց տերերից փախած ստրուկների հանդեպ:

«Հավատացյալների՛ իշխան, դու ինձ հարց տվեցիր այն բազմաթիվ տղամարդ թե կին փախստական ստրուկների մասին, որոնք հանձնված են քո կառավարիչներին, և որոնք բանտարկված մնում են զանազան մեծ ու փոքր քաղաքներում, և ոչ ոք չի գալիս նրանց պահանջելու» (էջ 284):

Յակուբը խալիֆային հանձնարարում է վստահելի պաշտոնների միջոցով այդ ստրուկների ցուցակագրությունը, որտեղ գրանցվեն ստրուկի և տիրոջ անունները, ստրուկի ծննդավայրը, տիրոջ բնակած վայրը, ինչ ցեղի պատկանելը, ստրուկի անվան հետ ցույց տրվի նաև նրա նշանագիրը (signalement), կատեգորիան, փախուստի տարեթիվն ու ամիսը, բռնված թվականը, տարիքը: Ցուցակագրումը կատարելուց հետո բանտարկում են: Եթե վեց ամսվա ընթացքում ստրկատերը չի ներկայանում, ապա պաշտոնյան նրան բանտից հանում և վաճառում է աճուրդով, գումարը պահ է դրվում որպես արքունի գանձ՝ ցույց տալով այդ գումարի աղբյուրը: Երբ ստրուկը բանտում եղած ժամանակ տերը գալիս է նրան պահանջելու, ցուցակագրման համաձայն՝ հարցեր են տրվում նրան, երբ ստրկատիրոջ պատասխանները

---

1 ուղտն արժե 10 դինար,
1 ոչխարը՝ 5 դիրհեմ,
1 եղջերավոր անասունն արժե 5 դինար:
Այս կերպ վաճառված հողն արժե 800 ուղտ, 16.000 ոչխար, 1600 կով կամ եզ:

համապատասխանում են, այդ դեպքում ստրուկը վերադարձվում է տիրոջը:

Երբ տերը ներկայանում է ստրուկի վաճառումից հետո, և նրա բոլոր ցուցմունքները համապատասխանում են ցուցակագրման, այդ դեպքում նրան վճարվում է ստրուկի վաճառքից ստացված գումարը:

Միքայել Սուրիացու ժամանակագրությունից տեղեկանում ենք, որ VII դարի վերջին Աբդել-Մելիք ամիրայի որդու դաստիարակ Աթանաս Իուսը «ուներ չորս հազար ստրուկ» (տե՛ս Chronique de Michel le Syrien, t. II, L. XI, c. XVI, էջ 475, թարգմ. I. B. Chabot, Paris, 1902):

Փախստական ստրուկների մասին Հարուն ալ-Ռաշիդի տված հարցը և Յակուբի առաջադրած միջոցը ցույց են տալիս, թե ինչպիսի ճնշումներ են գործադրվել այդ ստրուկների վերաբերմամբ, որոնք իրենց փրկությունն աշխատում էին գտնել փախուստի մեջ:

Եթե այդ ստրուկների ապստամբությունները VIII դարի կեսին ճնշվում էին, և կամ այդ բազմաթիվ փախստական ստրուկները բանտարկվում, եթե իրենց տերերին էին վերադարձվում և կամ վաճառվում, ապա IX դարի 60-ական թվականներին Եփրատի և Տիգրիսի դաշտավայրերում աշխատող ստրուկներն այնպիսի մի ուժեղ ապստամբություն են բարձրացնում, որ ցնցում է խալիֆաթի իշխանությունը և զբաղեցնում նրան երկար ժամանակ:

Խալիֆաթի շրջանում ստրկական աշխատանքի կիրառումը Իրաքում, ինչպես երևում է Յակուբի պատմածներից, շարունակությունն էր այն դրության, որ գոյություն ուներ Սասանյան Պարսկաստանի շրջանում, նախքան այս վայրերի գրավումն արաբների կողմից:

Այս մասին ուշագրավ է այն դաշնադրությունը, որ կնքում է արաբական զորավար Խալետը Հիրայի բնակիչների հետ:

Կաղիսայի հայտնի ճակատամարտից հետո, երբ արաբական բանակը հաջորդաբար գրավում է Են-Նեճեֆը, Ուլեյսը և պաշարում է ուժեղ կերպով պաշտպանված ամրոցներ ունեցող Էլ-Հիրան, քաղաքի ազգաբնակության հետ կնքվում է մի դաշնադրություն, որի մեջ կարդում ենք.

«Նրանք պատկանող ամեն ստրուկ (խոսքը վերաբերում է Հիրա քաղաքի ստրուկներին – Հ. Զ.), որ հավատափոխ է լինում, մուսուլմանական շուկա է հանվում և վաճառվում ամենաբարձր գնով» (էջ 223):

Այս վկայությունը որոշակի ցույց է տալիս ստրուկների գոյությունն Իրաքում նախքան արաբական տիրապետությունը. արաբական տիրապետությունից հետո պահպանվում է իրերի նախկին դրությունը[1]:

Բերված փաստերը խոսում են այն մասին, որ կալվածատիրական հողերի որոշ մասը մշակվում էր ստրուկների կողմից:

Սակայն գոյություն ուներ կալվածների մշակման մի այլ եղանակ, որը,

[1] Առանձին մի ուսումնասիրությամբ մենք կանդրադառնանք արաբական Արմինիայում գոյություն ունեցող ստրկատիրությանը:

ինչպես երևում է, կալվածատիրոջ կողմից կիրառվող մի այլ եղանակ է, և որի մասին կարծիքները տարբերվում են:

Խնդիրը վերաբերում է կալվածների վարձակալական սիստեմով (mozara'a) մշակմանը: Հեջազի և Մեդինայի դատավորները դեմ էին եղել այդ սիստեմին, իսկ Կուֆայի դատավորները պաշտպանել են այն:

Գոյություն ունեցող այս երկու տեսակետներից Յակուբը կողմնակից է Կուֆայի կոլեգներին: Յակուբի՝ այս հարցի հիմնավորումը խիստ ուշագրավ է: Այդ հիմնավորման մեջ պարզվում է առևտրական կապիտալի օգտագործման մի շատ կարևոր եղանակ:

«…Ըստ իս [հողի վարձակալական սիստեմը՝ mozara'a-ն]՝ նույն բանն է, ինչ որ կոմանդիտի սիստեմը (mozara'a-ն), երբ մի անհատ մեկ ուրիշին փող է տալիս՝ շահեցնելու համար այն պայմանով, որ նա ստանա [շահի] մեկ երրորդը և կամ կեսը, մի բան, որ արտոնված է, թեև այդ շահի գումարն անորոշ է…, հողը, ըստ իս, կոմանդիտի կապիտալի նման է…» (էջ 134):

Mozara'a-ի հինգ ձև է նշում:

ա. «Նա ստանում է փոխատվության ձև (a'rié), որտեղ վարձ չկա. մի մարդ մի ուրիշին փոխ է տալիս հողը, որը վերջինս պիտի սերմանի՝ առանց վարձք վճարելու պարտավորության. փոխառուն մշակում է հողը, հայթայթում է սերմն ու լծկանները և հոգում է ծախսերը: Հունձքը հասնում է նրան, խարաջն ընկնում է հողի տիրոջը: Եթե դիմի հող է, դիմն ընկնում է մշակողի վրա»:

բ. «Հողատերը կանչում է մեկ ուրիշին կատարելու ամբողջ մշակությունը, ծախսերն ու սերմացուն հայթայթում են կես առ կես: Առաջին պարագայի նման է. բերքը բաժանվում է նրանց միջև, և երկուսը ենթակա են դիմի, եթե դիմի հող է, եթե խարաջ հող է, խարաջն ընկնում է հողատիրոջ վրա»:

գ. «Մեկ կամ երկու տարվա համար հողը որոշ գումարով վարձու է տրվում. այս թույլատրվում է»:

դ. «Կա վարձակալություն՝ բերքի մեկ երրորդ մասը կամ քառորդը հողատիրոջը տրվելու պայմանով»:

Այս խնդրում Աբու Հանիֆայի և Յակուբի միջև գոյություն ունեն տարաձայնություններ: Ըստ Յակուբի՝ վարձակալության այս եղանակը թույլատրելի է. խարաջն այս դեպքում ընկնում է հողատիրոջ վրա, եթե խարաջի հող է, իսկ եթե դիմի հող է, դիմը վճարվում է երկուսի կողմից՝ ըստ բերքից ստացած իրենց բաժինների:

ե. «Հողի, լծկանների և սերմացուի տերը դիմում է հողագործին, որ ստանում է այդ բոլորը, գործի դնում և ստանում է բերքի $^1/_6$-ը կամ $^1/_7$-ը»:

Աբու Հանիֆան չի ընդունում այս ձևը և առաջարկում է մշակողին տալ համապատասխան աշխատավարձ. «Սակայն Աբու Յուսուֆն ասում է, որ, ըստ իրեն, այս թույլատրվում է կողմերի միջև կնքված պայմաններով» (էջ

137-138)[1]:

Արաբական խալիֆաթի կենտրոնական մասերում հողօգտագործման այս եղանակի պարզաբանումը խիստ կարևոր նշանակություն ունի բոլոր այն երկրների համար, որոնց գրավումից հետո մահմեդական ազգաբնակություն է հաստատվում, և առաջանում են կալվածատերեր: Նման կալվածատերերի առաջացման փաստ կարող են ծառայել Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն Սիսական նահանգին» աշխատության միջոցով մեզ հասած մի շարք արձանագրությունները: Այստեղ նվիրատուները Փեյղամբերի անեծքին են ենթարկում բոլոր այն մահմեդականներին, որոնք կալվածները բռնի գրավելու փորձ կանեն:

Հայտնի է նույնպես, որ արաբական սիրապետության ժամանակ, սկսած VIII դարից, հատկապես Հայաստանի հարավային մասում՝ Աղձնիքում, Վանա լճի հյուսիսային մասում, Մանազկերտում, Խլաթում, Արճեշում առաջացել էին մահմեդական կալվածատերեր, որոնք IX դարում, ինչպես և հետագայում, հանդես են գալիս որպես առանձին էմիրություններ:

Կարինում, Դվինում, Նախիջևանում մեծ թվով մահմեդական ազգաբնակության գոյության մասին ունենք պատմական մի շարք վկայություններ:

Անհավանական չենք համարում, որ նշված ժամանակաշրջանից առաջացած այս փոփոխությունները Հայաստանում ևս հողամշակման և հողօգտագործման բնագավառում չառաջացնեին որոշ փոփոխություններ:

Մեր դրած այս խնդրի լուսաբանության համար IX և X դարերի պատմիչներ Թովմա Արծրունու և Հովհաննես Դրասխանակերտցու գործածած «ագարակ» բառը առանձին կարևորություն է ստանում:

Թովմա Արծրունին (III, գլ. Ի), խոսելով այն նվիրատվությունների մասին, որ X դարի առաջին տասնամյակում Դերենիկ Արծրունու որդիներն իրենց հոր հիշատակին արել են Աղթամարի եկեղեցուն, հաղորդում է.

«…Եւ ետուն ի սուրբ եկեղեցին Դ ագարակս, զվանքն Փշոց և զագարակն Աիավանք, … և զքարն Մանազկերտ և զԲերկրի և այլ բազում տեղիս, զոր ավանդեցին որդիք թագաւորին յետ մահու հօր և մօր իւրեանց ի պէտս սուրբ Խաչին Աղթամարայ»:

Հովհաննես Դրասխանակերտցին (էջ 139, Թիֆլիսի, 1912), խոսելով Աշոտ Բագրատունու շինարարությունների մասին, հաղորդում է հետևյալ ուշագրավ վկայությունը.

«…Եւ հարթահավասար ըստ իւրաքանչիւրոցն կատարէր [Աշոտ Բագ-

[1] Ուշագրավ է, որ վարձակալական եղանակը բավական լայն ծավալ է ստացել…: Այսպես՝ ջրաղացի, տների, գրաստի, նավակի վարձակալություն է գոյություն ունեցել: Այս դեպքում Յակոբն անընդունելի է համարում շահագործումից առաջացած օգուտի բաժանումը: Օրինավոր է գտնում վարձակալներին աշխատավարձ վճարելու եղանակը, ինչպես առաջարկում է Աբու Հանիֆան (էջ 138-39):

ռատունին] կարգս լեռնականաց և ջերմահովիտ բարեխառն դաշտականաց, և զամենայն տափարակ տեղիս՝ **ագարակս** (ընդգծումը մերն է – Հ. Զ.) և գոմս դնէր, և զմարմանդս յայգիս և ի բուրաստանս զարդարէր»:

Արաբական տիրապետության շրջանում Հայաստանում հողամշակության բնագավառում առաջացած փոփոխությունները երևան հանելու տեսակետից մեր մատնանշած այս խնդրի ուսումնասիրությունն առանձին կարևորություն է ստանում:

Արևելքում, ամենահին շրջանից սկսած, հողամշակության համար հիմնական խնդիր է եղել հողերի ոռոգման խնդիրը: «Կիտաբ էլ-խարաջը» բավական կանգ է առնում նաև այս հարցի վրա (էջ 143-153): Այս խնդրի շուրջը Հարուն ալ-Ռաշիդի հարցերին պատասխանելով՝ Յակուբը մեջ է բերում առաջին խալիֆաների օրով գոյություն ունեցող կարգադրությունները: Մասնավորելով խոսքը խարաջի հողերի ոռոգման մասին՝ Յակոբը հետևյալ խորհուրդն է տալիս Հարուն ալ-Ռաշիդին.

«…Դու պիտի կարգադրես վերստին փորել տալ ջրանցքները՝ ծախքը արքունի գանձարկղից վճարելով և ոչ բնիկներից (խոսքը վերաբերում է անցյալում գոյություն ունեցող ջրանցքներին – Հ. Զ.). նախընտրելի է, որ նրանց վիճակն ավելի շուտ բարգավաճ լինի, քան թշվառ, որ նրանք ավելի շուտ հարստանան, քան քայքայվեն և անկարողության մատնվեն» (էջ 167, տե՛ս նաև էջ 28, 29, 30):

***

«Կիտաբ էլ-խարաջն» իր շոշափած հարցերով, ինչպես տեսնում ենք, խիստ կարևոր մի սկզբնաղբյուր է արաբական տիրապետության շրջանում Մերձավոր Արևելքի և Հայաստանի պատմության ուսումնասիրության համար:

«Կիտաբ էլ-խարաջն» իր շարադրման եղանակով օրենսգրքի սեղմ, չափված ու ձևված ոճը չունի: Այս հանգամանքը նրա պատմական նշանակության համար մի առավելություն պետք է համարել, քանի որ հեղինակն իր եզրակացությունները հանելու համար մանրամասն պատմում է մինչև իր ժամանակաշրջանը գոյություն ունեցող փաստական դրությունը:

Սելջուկ Մելիք շահի (1072-1092) վերջին տարիներին վեզիր Նիզամ-ուլ-Մուլքի կողմից խմբագրված «Սիասետ նամեի» և Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» համեմատությունը «Կիտաբ էլ-խարաջի» հետ արդյունավոր մի աշխատանք կլիներ:

Արաբ մատենագիրների մի շարք աշխատությունները, որոնք մինչև այժմ Հայաստանի պատմության ուսումնասիրությամբ զբաղվողներից քչերն են օգտագործել, կարևորագույն սկզբնաղբյուրներ են Հայաստանի պատմության՝ VII դարից սկսած ժամանակաշրջանը լուսաբանելու տեսակետից:

«Կիտաբ էլ-խարաջի» մասին մեր մեր այս հաղորդագրումը, որով շոշափեցինք միայն մի քանի էական նշանակություն ունեցող հարցեր, կարծում ենք՝ մի նոր ապացույց կլինի այն բանի, թե ինչքան մեծ անհրաժեշտություն է արաբ սկզբնաղբյուրների առանձին մասերի հայերեն թարգմանությունը:

Հայկական ճարտարապետության պատմության մի բնագավառում (եկեղեցաշինարարություն) ուշագրավ մի երևույթ է նկատվել. այդ այն է, որ, սկսած VIII դարից մինչև IX դարի կեսերը, Հայաստանում համարյա չենք հանդիպում ճարտարապետական կոթողների. գերազանցորեն նկատելի է եկեղեցաշինարարության դադարումը շուրջ մեկ և կես դար, այսինքն՝ արաբական խալիֆաթի տիրապետության այն շրջանում, երբ նա ի վիճակի էր նվաճած երկրամասերը վարչական և քաղաքական տեսակետից ենթարկելու կենտրոնական իշխանության: Պատմական այս ուշագրավ երևույթը սխալ մեկնաբանություն է ստացել պատմագրական աշխատություններում: Ենթադրվել է, թե արաբական տիրապետության ժամակաշրջանը Հայաստանի համար համատարած տնտեսական կյանքի քայքայման ժամանակաշրջան է եղել, և դրանով է բացատրվել եկեղեցաշինարարության աշխատանքների բացակայությունը:

«Կիտաբ էլ-խարաջը» լույս է սփռում նաև ուշագրավ այս երևույթի վրա:

Խալիֆայի այն հարցին, թե ինչպես են հարկատուները պահպանել իրենց եկեղեցիները և սինագոգները մեծ քաղաքներում և այլուր, Աբու-Յուսուֆ Յակուբը պատասխանում է, որ նրանց հետ կնքված դաշնագրությունների պայմաններից[1] մեկն էր կանգուն պահել եկեղեցիներն ու սինագոգները, ապա ավելանում է հետևյալ ուշագրավ վկայությունը.

«…Գրավոր պայմանագրություններն ստիպել են նոր եկեղեցի և սինագոգ չկառուցել» (էջ 213):

Մի այլ կապակցությամբ նույն հարցի մասին կարդում ենք. «…Քաղաքում նոր սինագոգ և եկեղեցիներ թող չկառուցեն [քաղաքացիները] և սահմանափակվեն որպես տաճար օգտագործելով նրանք, որոնք հարկատու դարձնող դաշնադրությունից առաջ գոյություն ունեին, և որոնք թողնվել են նրանց [քաղաքացիներին] առանց ավերվելու» (էջ 195):

Ըստ երևույթին, Հարուն ալ-Ռաշիդի ժամանակ ոչ իսլամ ժողովուրդների պաշտպամունքի վայրերը քանդելու խնդիր է դրվել. այս են ցույց տալիս Աբու-Յուսուֆ Յակուբի հետևյալ խոսքերը, որոնք խալիֆային տված խորհուրդներ են, և միանգամայն լուսաբանում են մեր առաջադրած հարցը:

«Գալով ինձ՝ Աբու-Յուսուֆիս, չեմ կարծում, որ հնարավոր լինի ոչընչացնել կամ փոխել, ինչ որ խաղաղության դաշինքով ճանաչված է, և կարծում եմ, որ այդ տաճարների մասին պետք է հարգել, ինչ որ կարգադրել են

[1] Արաբներն իրենց գրավումների ընթացքում քաղաքների ազգաբնակության հետ դաշնադրություն էին կնքում:

Աբու-Բեկրը, Օմարը, Օթմանն ու Ալին, որոնք չեն քանդել ոչ մեկն այն շենքերից, որոնց վրա տարածվել է այդ դաշնադրությունը: Սակայն, հետագայում [դաշնադրությունից հետո] կառուցված սինագոգներն ու եկեղեցիները պետք է քանդվեն» (էջ 228):

Աբու-Յուսուֆ Յակուբի այս հետաքրքիր վկայությունները, ինչպես տեսնում ենք, լիովին լուսաբանում են առաջադրված հարցը:

Հայաստանում նոր եկեղեցիներ կառուցելու այս արգելքը եղել է՝ սկսած VIII դարից, որովհետև VII դարի վերջերում՝ արաբների գրավումներից հետո, նոր եկեղեցիներ կառուցվել են, այսպես՝

«…Գրիգոր իշխան հայոց խաղաղացոյց զաշխարհիս հայոց և շինեաց զեկեղեցին որ յԱրուճ» (**Ասողիկ,** II, Դ, էջ 122):

Կամ՝

«Աշոտ պատրիկ, այր երևելի, ուսումնասէր և լի երկիւղիւն Աստուծոյ, որ շինեաց զեկեղեցի Դարիւնից» (**Ասողիկ,** II, Դ, էջ 122, 123):

Մինչև IX դարի կեսերը գոյություն ունեցող այս արգելքից հետո, երբ խալիֆաթի ներքին հակասությունների հետևանքով Աբբասյան դինաստիան թուլանում է, և նվաճված Հայաստանը երկարատև պայքարից հետո ձեռք է բերում իր ներքին գործերն ինքնուրույն կերպով տնօրինելու և կարգավորելու ազատություն: IX դարի երկրորդ կեսին եկեղեցաշինարարությունն ստանում է նոր թափ. այդ շինարարություններով սկսվում է հայկական ճարտարապետության մի նոր ժամանակաշրջան:

Հավելված

ՆՅՈՒԹԵՐ ԿՈՎԿԱՍԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

(Կովկասը XIX դարու կիսուն՝ Հաքստհաուզենի կողմե ներկայացված)

I

ՀԱՅԱՍՏԱՆ

Ավգուստ Հաքստհաուզեն 1843 թվի օգոստոս 1-ին դեպի Կովկաս կատարած իր ճամփորդական հիշողությունները և ուսումնասիրությունները ամփոփած է "Transkaukasia" 2 հատոր աշխատության մեջ: Նախ անգլերեն, հետո 1856 թվին լրացուցիչ տեղեկություններով գերմաներեն տպագրված է[1]: Այցելած է Վրաստան և Հայաստան գլխավորաբար, մասնակի պտույտներ կատարած է նաև եզդիներու, թաթարներու և օսետներու մեջ: Հայաստանի մասին տված տեղեկությունները կգտնվին Ա հատորի մեջ: Երևանի շրջանը մնացած է օգոստոսի 22-29-ը՝ մեկ շաբաթ միայն:

Հաքստհաուզեն առաջինը եղած է, որ ռուսական համայքի (Мир) վրա մասնավոր ուշադրություն դարձուցած և վեր հանած է անոր հասարակական տեսակետե կատարելիք դերը ռուս սոցիալական կյանքի մեջ: Ռուսաստանի ներքին պայմանների մասին գրած աշխատությունովը անվանի դարձած է: Մեզ մոտ ան առավելապես հայտնի եղած է՝ Խաչատուր Աբովյանի կենսագրության մեջ հիշվելով: Ճամփորդական այդ հիշողությունները դիտված բազմակողմանի կերպով հետաքրքրական նյութեր կպարունակեն հայկական տնտեսության և ներքին հասարակական կյանքի մասին: Այս հոդվածով այդ տվյալները կքննենք՝ մասամբ վեր հանելու XIX դարու կիսուն Երևանի և շրջանի հայկական տնտեսությունը և ներքին հասարակական կյանքը:

Հաքստհաուզեն՝ ազնվական ծագումե, մեկն է այն բազմաթիվ եվրոպացի հետախույզներեն, որոնք իրենց ժողովուրդին բուն իսկ ծագումը լուսաբանելու, Արևելքի և Արևմուտքի անմիջական կապը հաստատելու տեսակետեն կատարած են գիտական ճանապարհորդություններ Արևելքի մեջ:

Հաքստհաուզենի աշխատությունը առավելապես հայտնի դարձած է անով, որ ան տակավին այդ թվականին ժողովուրդներու և համայնքներու ներքին կյանքը ուսումնասիրելու պահանջը ըմբռնած է: Իրապես ան կրցած է, հնարավորության սահմանին մեջ, այցելած վայրերու ժողովուրդներուն և ցեղերուն տնտեսությունը, բարքերը, առասպելները, ժողովրդական բանաստեղծությունը, համայնքներու ներքին սահմանադրությունը, ժողովուրդի նիստ ու կացը և բնակարանները նկարագրել և անոնց փոխադարձ ազդեցությունները վերլուծել:

[1] **August Haxthausen**, Transkaukasien, 2 Bände, Leipzig, 1856.

Հաքստհաուզեն իր ժամանակաշրջանի աշխարհայացքը կներկայացնե: Անոր մոտ տնտեսական ազդակը ժողովուրդներու ներքին-հասարակական կյանքի մեջ իբրև գլխավոր և հիմնական մղիչ ուժ չի ներկայանար: Ամեն կարգի եվրոպականացում տունեն ներս, նիստ ու կացի և բարքերու մեջ անոր մեկ տեսակ վիշտ կպատճառե՝ առանց նկատի ունենալու, որ տնտեսական կյանքը իր պատմական պրոցեսը պիտի կատարե, և սոցիալական կյանքի մեջ հայտ եկող երևույթները այս վերջիններուն արտահայտություններն են:

***

Հաքստհաուզեն XIX դարու կիսուն հայ տնտեսական և հասարակական կյանքի հում նյութերը կներկայացնե: Ներկա հոդվածով մենք պիտի աշխատենք այդ նյութերը օգտագործել մեր առաջադրած նպատակին հասնելու համար: Հարցը կբաժնենք հետևյալ երեք մասերու:

I. **Տնտեսական հիմունքները՝** 1) երկրի տարածությունը, 2) բնակչությունը, 3) հողը, 4) հաղորդակցության միջոցները, 5) իրավունք ու 6) տեխնիքը:

II. **Տնտեսությունն ընդհանուր առմամբ՝** 1) երկրագործություն, 2) արդյունաբերություն, 3) վաճառականություն:

III. **Հասարակական կյանքի հիմունքները՝** 1) հայ նահապետական ընտանիքը, 2) եկեղեցին, 3) սոցիալական շերտավորում՝ զբաղումի համաձայն՝ հողագործ, արհեստավոր, վաճառական:

I. Հաքստհաուզենի ներկայացուցած Ռուսական Հայաստանը 1843 թվին ունի հետևյալ սահմանները: Հյուսիս-արևմուտքեն ռուս-թուրքական սահմանները կկազմեն Ախուրյանը և Արարատյան լեռը, հարավեն ռուս-պարսկական սահմանն է՝ Արաքս գետը, հարավ-արևելքեն՝ Ղարաբաղ, հյուսիս-արևելքեն՝ Սևանա լիճը: Հայաստանի սահմաններեն դուրս հայ գաղթականություններ կհիշատակե Վրաստանի, Ադրբեջանի մեջ:

Հաքստհաուզենի աշխատության երկրորդ հատորին կցված, 1856 թվին պատրաստված, մեկ քարտեզի մեջ Հայաստանի տարածությունը մոտավորապես հաշված է 19.000 քառակուսի վերստ:

Ան այցելած է Թիֆլիսեն դեպի Երևան ճանապարհին վրա գտնվող տարածությունը, գլխավորաբար Երևան, Քանաքեռ և Վաղարշապատ, ուրեմն Ռուսական Հայաստանի միայն հյուսիսային մասը:

Բնակչության մասին կուտա շատ հետաքրքրական թիվեր՝ քաղելով 1838 թվին ռուս պետական խորհուրդի անդամներեն Հագեմայստերի՝ Կովկասի պայմաններու շուրջ հրատարակած մեկ գրքեն: Համաձայն այդ գրքի՝ Անդրկովկասի մեջ գտնվող հայ բնակչության թիվը կհասնի 274.000 հոգիի, որոնց մեկ երրորդեն մինչև կեսը վերջին քսան տարիներու ընթացքին Անդրկովկաս եկած են պարսկական և թուրքական Հայաստանեն: Այսպես 1829 թվականին՝ ռուս-տաճկական և ռուս-պարսկական հաշտութենեն վերջ, բազ-

մաթիվ թուրքեր և պարսիկներ Ռուսաստանի կցված հողամասերեն կգաղթեն դեպի Թուրքիա և Պարսկաստան: Ատոնց փոխարեն Ախալցխա կերթան 40.000 հայեր, Ալեքսանդրապոլ՝ 12.000, Բորչալու՝ 7000, Սևանա լճի կողմերը՝ 26.000, Երևան՝ 3900 ընտանիքներ, Նախջևան՝ 2363 ընտանիքներ և այլն: Ընդամենը՝ 110.000 հոգիե ավելի:

Այս տվյալներեն դժբախտաբար հնարավոր չէ Ռուսական Հայաստանի սահմաններու մեջ գտնվող հայ բնակչության իսկական թիվը տալ, քանի որ ներկայացուած 274.000 հոգին ամբողջ Անդրկովկասի վրա ցրված է: Նկատի ունենալով այն պարագան, որ Ռուսական Հայաստանի սահմաններու մեջ բնակչության մեծամասնությունը հայեր եղած են, տրված թվեն կարելի է եզրակացնել, որ շատ նոսր բնակչություն գոյություն ունեցած է: Այս երևույթը կարելի է բացատրել անով, որ տարիներ շարունակ այդ հողամասը թատերաբեմ եղած է անդադար կռիվներու ներքին թշնամություններու: Նոսր բնակչության պարագան կուզեինք մատնանշել այստեղ, քանի որ վերջիվերջո տնտեսական կյանքի մեջ տեղի ունեցող պայքարը բարիքներու բախշման մեջ կկայանա: Այդ պայքարը բնակչության ավելացումով կստանա սուր կերպարանք, երբ մանավանդ հողի արդյունաբերության եղանակը մնա նախնական պայմաններու մեջ, և էքստենսիվ մշակությունը չդառնա ինտենսիվ: Բնակչության քանակի և մշակելի հողերու տարածության միջև գոյություն ունեցող համեմատությունը չափանիշն է արդյունաբերության ձևի և ժողովուրդներու ներքին սոցիալական կյանքի հարաբերություններու:

Արարատի և հյուսիսային լեռներու մեջ տարածվող հովիտը ամեն տեղ հրաբխային ծագումի հետքեր ցույց կուտա՝ ունենալով լավային, բազալտի կազմություն: Հողի կազմության այս հանգամանքը մեծ ազդեցություն կընե բուսահողի խավին վրա: Վերջինս տաք և չոր է, սակայն շատ պտղաբեր, պայմանով, որ անհրաժեշտ խոնավությունը ունենա, առանց որուն խոտ մը անգամ չի բուսնիր: Բացի այս՝ կա նաև կլիմայական պարագան: Ամիսներ շարունակ չանձրևեր. չորությունը սոսկալի է:

Երկիրը անբնակ անապատ պիտի ըլլար, եթե երբեք ջրանցքները գոյություն չունենային, որոնք ոչ միայն մարգագետինները, ինչպես հաճախ տեղի կունենա, այլև արտերն ու պարտեզները կոռոգեն:

«Անդրկովկասյան հովիտներն ու բարձունքները, որոնք մինչև այն ատեն հեծելվորներու և գրաստներու համար միայն անցանելի էին, և շատ քիչ տեղերե եզներով և գոմեշներով լծված կառքեր կրնային անցնել, օժտվեցան ճամբարներով: Ճամփորդներու համար շինվեցան պոստի կայաններ: Դյուրին հաղորդակցության համար կանոնավոր պոստի ճանապարհներ շինվեցան նույնիսկ ամենահեռավոր համայնքներու մեջ»: Հաղորդակցության միջոցներու մասին այս ընդհանուր խոսքերով կբավականանա ամբողջ Անդրկովկասի համար:

Մեր հիշած քարտեզի վրա Հայաստանի գլխավոր ճանապարհները

կկազմեն՝ 1) Թիֆլիս-Դիլիջան-Երևան-Բաշնորաշեն-Նախիջևան-Ջուլֆա-Օրդուբադ՝ կերկարի մինչև Պարսկաստանի ներսերը, 2) Թիֆլիս-Դիլիջան-Գյումրի (Ալեքսանդրոպոլ)-Կարս-Էրզրում, 3) Սարդարապատ-Իգդիր-Բայազետ-Վան, 4) Սարդարապատ-Ամարատ-Սուրմալու-Կարս: Միայն 1843 թվի Ռուսական Հայաստանի սահմաններու մեջ գտնվող ճանապարհներու երկարությունը կհասնի 438 կիլոմետրի:

Թե՛ ճամփորդը և թե՛ ապրանք փոխադրող վաճառականը մեծ դժվարություններու կհանդիպեր հաղորդակցության այն նախնական միջոցներու հետևանքով: Հաքստհաուզեն անընդհատ կգանգատի կառքը կոտրելու և ճամբարները ստիպված սպասելուն համար: Այդ ժամանակվան փոխադրական պայմաններու մասին գաղափար կազմելու համար արժեր Sombart-ի նկարագրությունը կարդալ XIX դարու գերման տնտեսության պատմության մասին գրած աշխատության մեջ:

XIX դարու կիսուն դադրած էր արդեն Հայաստան Արևմուտքի և Հընդկաստանի վաճառականության համար տրանզիտ երկիր ըլլալե: Հետաքրքրական է լուսաբանել այն ենթադրությունը, որ Հայաստանի դժբախտության պատճառը Արևելքի և Արևմուտքի ճանապարհին վրա գտնվելը չէ եղած, այլ Հայաստան կորսնցուցած է իր համաշխարհային դիրքը և հետզհետե դարերու ընթացքին տկարացած է այն պատճառով, որ դադրած է համաշխարհային շուկաներու կապ ըլլալե:

Ապրանքներու փոխանակության մեջ մեծ դեր կկատարեն երկրին օրենքները: Հետզհետե զարգացող վաճառականության հետ միասին անցյալի նահապետական կարգերը տեղի կուտային ժամանակի պահանջներուն: Նախկին պարսկական իշխանությունը մեզ կպատկերացվի ավատական կարգերու բոլոր այլանդակություններով: **Կամայականությունն** է, որ տիրած է տարիներ շարունակ: Սարդարեն սկսած մինչև գյուղական ամենահասարակ պաշտոնյան սարսափ ազդած են ժողովուրդին: «Պարսկական կառավարությունը սկզբունքով և կազմակերպությունով այնքան վատթար էր, որ նույնիսկ արդարադատ և պարկեշտ մարդիկ, ինչպես Երևանի վերջին սարդարն էր, որ ամեն ուժ և իշխանություն ուներ, անկարող էր զսպելու սոսկալի բռնություններն ու պաշտոնյաներու բացարձակ գողությունները»:

Ռուս կառավարությունը իր կարգին աշխատեցավ օրենսդրական նոր կազմակերպություն մտցնել Կովկաս: Ռուսաստանի պետական պաշտոնյա Գանի կատարած երկար ուսումնասիրությունները հանգեցան Կովկասի առանձնահատուկ օրենսդրության: Իրավական գետնի վրա եղած այս բարենորոգումները միայն ժամանակի ընթացքին կարող էին ժողովուրդի խավերուն մեջ թափանցել: Նախկին նահապետական կարգերը շարունակվեցան երկար տարիներ:

Հաքստհաուզենի նկարագրած Հայաստանի մեջ գյուղապետը և մելիքը

պահած են ժողովրդի հանդեպ իրենց իրավական իշխանությունը:

Հայկական համայնքները կառավարված են պետի մը կողմե, որ ընտրված էր ժողովրդեն: Այս պետը տարիքավոր մեկն էր և կարգ-կանոնը պահպանելու պաշտոն ուներ: Ժողովուրդի մեջ ծագած սահմանային, սեփականության և այս կարգի բոլոր վեճերու մասին որոշումներ կկայացներ: Ամեն կարգի որոշում սկզբնական շրջաններուն եղած է միայն բերանացի: Ռուսական գրավումեն վերջ է, որ կառավարությունը ստիպած է տրված որոշումները գրավոր ընել: Եղած են նաև համայնքներ, ուր փոխանակ ընտրովի պետերու, ժառանգական գյուղապետներ եղած են: Այսպես՝ Քանաքեռի մեջ Աբովյան ընտանիքի ամենատարեցը վայելած է ժառանգականորեն իրավական իշխանություն: Ոճրագործական ամեն կարգի հանցանք դատել և պատժել գյուղապետի իշխանութենեն վեր եղած է: Գոյություն ունեցած են մելիքներ, որոնք իրավական լայն իշխանություն վայելած են: Հետաքրքրական է Հաքստհաուզենի տված հետևյալ նկարագրությունը մելիքներու դատարաններու մասին: Երևան Սահակ Աղամալյան մելիքի տան մեջ է, որ տեղի կունենա դատը: «Հազիվ լույսը բացված՝ այստեղ կհավաքվեին ամեն դասակարգե և հավատքե մարդիկ: Ներս կմտներ մելիքը՝ հասարակ հագված, սակայն միշտ սպասավորներու խումբը մը կհետևեր անոր: Սրահին վերևը ամբիոնի նման տեղ մը կար: Այնտեղ կնստեր բարձերու վրա և կդատեր: Մելիքին խոսքը վճռական էր դատական հարցերու մեջ: Վճիռը կարձակեր որոշ և հաստատ»:

Պարսկական տիրապետության ժամանակի դատավարությունն է այս: Հետաքրքրականը այն է, որ ոչ միայն հայը, այլև թաթարը առանց խտրության դիմած է հայ մելիքին ամեն կարգի վեճերու համար: Թեև ռուսական տիրապետության տակ մելիքները կորսնցուցած են իրենց իրավական իշխանությունը, սակայն Հաքստհաուզենի նկարագրած Հայաստանի մեջ անոնք պահած են, փաստորեն, դատաստանական իրավունքը, և հին սովորույթները պահպանող հայ գեղջուկը ավելի գյուղապետին և մելիքին դիմած է իր ներքին խնդիրներու մասին, քան թե ռուս պաշտոնյային:

Ընկերության հիմունքները ամբողջացնելու համար կմնա վեր հանել այդ ժամանակաշրջանի տնտեսական տեխնիքը:

Տնտեսական բարիքներ արտադրելու համար մարդուն կողմե գործածված ամեն արտաքին իր և միջոց, որ առաջադրված նպատակին կհասցնեն, կկոչենք տնտեսական տեխնիք: Տեխնիքը ժողովուրդի տնտեսության մեջ կկիրարկվի գլխավորաբար նախանյութերու և տնտեսական բարիքներու արտադրման և անոնց բաշխման ու տեղափոխության մեջ:

Հայաստան ըլլալով հողագործական մեկ երկիր՝ հողի արտադրությունները կազմած են այդ շրջանի նախանյութերը: Հողին տակ թաքնված բնական հարստությունները չեն շահագործված: Ուստի նախանյութերու ար-

տաղրման մեջ մեզ կհետաքրքրեն առավելապես հետևյալ հարցերը. հայ շինականը ի՞նչ միջոցներով հերկած և ոռոգած է հողը՝ նախանյութերու ձևակերպման և մեր տնտեսական անմիջական կարիքներուն բավարարություն տալու տեսակետե, հայ արհեստավորը ի՞նչ կարգի տեխնիք կիրարկած է: Վերջապես տնտեսական բարիքներու տեղափոխության համար գործածված միջոցները որո՞նք եղած են:

Հողի մշակության համար կհիշատակվեն գութանն ու արորը: Արորը քաշելու համար կգործածվին եզներ և գոմեշներ: Դժվար հերկելի հողերու համար գութանին կլծվին մի քանի զույգ եզներ: Դժվար հերկելի հողերու գոյությունը գլխավոր ազդակներեն մին եղած է, որպեսզի գեղջկական համայնքներու մեջ գոյություն ունենա համագործակցությունը: Հաքստհաուզեն երկար և մանրամասն կնկարագրե Երևանի շրջանի մեջ գոյություն ունեցող ոռոգումի ջրանցքները:

Ոռոգումը անհրաժեշտություն է նկարագրված հողի կազմության համար: Այստեղ տեխնիքի տեսակետե հայ շինականը, հիմնվելով տարիներու փորձի վրա, ստեղծագործած է ջրանցքներու ցանց մը, որ կներկայացնե բավական բարդ տեխնիք: Ջրաբաշխությունը, որ ներկայիս գիտական հիմունքներու վրա կկատարվի և մաթեմատիկական հաշիվներով միայն առաջադրված նպատակին հնարավոր կըլլա հասնիլ, այդ շրջանին և անկե շատ առաջ զուտ փորձառական կերպով կատարված է:

Նախանյութի ձևակերպման մեջ տիրած է ավանդական տեխնիքը:

Տնտեսական բարիքներու տեղափոխության և ճանապարհորդության համար գործածված միջոցները նախնական են: Կանոնավոր հաղորդակցության միջոցներու չգոյության պատճառով առավելապես կենդանիներ (ձի, ջորի) կգործածվին:

Հողային օրենսդրությունը պարզ պատկերացնելու համար պետք է հողերու հետևյալ երեք բաժանումները նկատի ունենալ՝

1. պետության պատկանող հողեր,
2. համայնքի հողեր,
3. վանապատկան գյուղեր:

Ռուս կառավարությունը հողերու որոշ մեկ մասը պետական սեփականություն դարձուցած է: Այդ հողերը վարող գյուղացին պարտավոր էր բերքին տասանորդը տալ պետության: Այդ տուրքը նատուրալ ձևով տեղի չէր ունենար, այլ պետության բաժին ինկած տասանորդին համարժեք դրամը կվճարվեր: Նշանակված է յուրաքանչյուր գյուղի համար հատուկ պաշտոնյա, որ համայնքեն ընտրված հինգ տարիքավորներու հետ տուրքի գանձումը կկատարե: Համայնքը հավանաբար պարտավոր էր նշանակված որոշ տուրքը վճարել: Տուրքի բաշխումը կկատարվեր յուրաքանչյուր գյուղացու կարողության համեմատ: Պետական հողերը փոխանակության կամ վա-

ճառքի նյութ չեն կրնար ըլլալ: Գյուղացին հողազուրկ է: Միայն հողին արտադրածներու սեփականատերն է:

Համայնքին պատկանող հողերը, ինչպես օրինակ՝ Քանաքեռի հողերը, նույնպես չեն կրնար վաճառքի կամ փոխանակության նյութ դառնալ: Բացառություն կկազմեն միայն պարտեզները: Քանաքեռի հողերը գյուղացիի տնտեսության համար ամբողջական միություններ կկազմեն այնքան ժամանակ, որքան որ ընտանիքի անդամները չեն բաժնված: Յուրաքանչյուր գյուղի վճարվելիք տուրքը նախապես սահմանված է: Այսպես Քանաքեռը պարտավոր է տարեկան 504 արծաթ ռուբլի վճարել: Բացի դրամական այս տուրքեն՝ կան նաև նատուրալ ձևով ծառայություններ. այսպես՝ ճամփաներ և կամուրջներ շինել, ինչպես և պաշտոնյաներ առաջնորդել:

Երրորդ տեսակը կկազմեն վանապատական գյուղերը: Իբրև այսպիսի մեկ տիպար գյուղ՝ կնկարագրվի Էջմիածնի գյուղը: «Գյուղը կբաղկանա 360 գյուղացիական տուներ: Տուները և պարտեզները բնակիչներու սեփականություն են: Իբրև վարձք՝ յուրաքանչյուր գյուղացիական տուն վանքին կվճարե 2-7 արծաթ ռուբլի: Ընդհանուր գումարը պիտի հասնի, սակայն, 1320 արծաթ ռուբլիի: Այս գումարը ամբողջ գյուղը հավաքաբար պետք է վճարե: Կթվի, թե ոռոգման համար գանձված տուրքերն են ասոնք, քանի որ բոլոր շինված են վանքին կողմեն և թողված են գյուղացիության: Արտերը վանքին սեփականությունն են և վարձու կտրվեն բնակիչներուն»:

Հայկական գյուղերը, ընդհանրապես համեմատած թաթար գյուղերու հետ, կբաղկանան նվազ տուներե: Մինչ թաթար գյուղերու 100-300 տուներ, հայկական գյուղերու տուներու թիվը 100-ը չանցնիր: Տնտեսությունը ընտանիքի կարիքներուն բավարարություն տալու մեջ կկայանա:

Այս ձևի տնտեսությունը էքստենսիվ մշակության վրա է հիմնված: Հավանաբար գոյություն ունեցած է Drifelderwirtschaft-ի դրությունը, այսինքն՝ մշակելի հողերը բաժնված են երեք մասի՝ գարնանացանի, աշնանացանի և հանգիստ թողված հողերու: Հարևանցի հիշատակված է հետևյալը. «Արտերը փոքր մասերու բաժնված են»: Հողի փոքր մասերու բաժանումը միատեսակ բերքերու մշակում կպարտադրե: Պարագա մը, որ բազմաթիվ անպատեհություններու դուռ կբանա, և էքստենսիվ տնտեսության մեջ առաջ եկած մեկ երևույթ է:

Քառասնական թվականներուն Հայաստանի մեջ, բացի վանապատական կալվածներե, մեծ հողատիրություն գոյություն չէ ունեցած: Դարերու ընթացքին տիրապետողներու ուշադրությունը դարձած է հնարավոր եղածին չափով հպատակներեն մեծ քանակությամբ տուրքեր վերցվելու վրա: Տնտեսական ազդակի կողքին կա նաև քաղաքականը, որ ձգտած է հայ ազնվականությունը ոչնչացնել՝ անոր հպատակները իր իշխանության տակ առնելու համար:

Գոյություն ունեցած են նաև բոլորովին հողազուրկներ: Թե ի՞նչ չափով,

այդ մասին թիվ չի տրվիր: Հողազուրկներու գոյությունը կեզրակացնենք անկե, որ եղած են օրավարձով աշխատողներ: Այսպես՝ այր մարդերու օրավարձքը ամռան եղած է կես ռուբլի արծաթ, իսկ ձմռան՝ 20 կոպեկ և սնունդ: Ծառային մը վարձքն է տարեկան 30 ռուբլի արծաթ: Կին օրավարձով աշխատողներ և վարձու աղախիններ չեն եղած:

Հայ ժողովուրդի ճնշող մեծամասնությունը երկրագործությունով կպարապի: Այգեմշակությունը և պարտիզամշակությունը բավական զարգացուցած է: Այսպես՝ Քանաքեռի բնակչությունը առավելապես պարտիզամշակությամբ կպարապի: Մեծ կարիք զգացված պարագային միայն արտեր կմշակեն: Ընդհանրապես կմշակվին ցորեն, գարի, կորեկ, եգիպտացորեն, վուշ, բրինձ և բամբակ: Մրգաստաններ մեծ թիվով գոյություն ունեցան են: Կնկարագրվի Աբովյանի պապուն մրգաստանը, ուր ամեն տեսակ պտուղներ կհասնին, և որմե ամեն անցորդ կրնա օգտվիլ: Պարագա մը ևս, որ կապացուցանե նահապետական ձևի տնտեսությունը, երբ տնտեսական շահը արտադրության մղիչ ուժը չէ եղած և միայն սեփական կարիքներուն բավարարություն տալու համար կատարված:

XIX դարու կիսու Հայաստանի արդյունաբերությունը կարտահայտվի արհեստավորությունով: Քաղաքացի բնակչության մեկ մասը կկազմեն արհեստավորները, որոնք արհեստապետական ընկերություններով հար և նման են միջնադարյան Եվրոպայի արհեստավորներու: Անոնց բնակավայրերը եղող քաղաքները արևելյան են տակավին: «Մինչ Թիֆլիսի մեջ Եվրոպան և Ասիան իրարու ձեռք կերկարեն, Երևանը զուտ ասիական քաղաք է, այնտեղ իբրև եվրոպական միայն ռուսական պետության պատկանող տուներ և փողոցներու մեջ մեկ քանի ռուսական համազգեստներ կտեսնվի»:

«...Ամենահետաքրքրականը քաղաքին խոշոր **բազարն** է: Հսկա շենք մ'է, ուր քով քովի շարված են ամեն կարգի վաճառումի և արհեստավորներու խանութները: Յուրաքանչյուր արհեստ մեկ տեղ ամփոփված է: Այստեղ դերձակներու շարք մը, այնտեղ խումբ մը կոշկակարներ: Բոլոր արհեստավորները իրենց կրպակներուն մեջ կ'աշխատին»:

Պարսկական տիրապետության օրով և պարսկական օրենքներով միևնույն արհեստ ունեցող վարպետները կազմած են արհեստապետություններ (համքարներ), որոնք գոյություն են ունեցած նաև Հաքստաուզենի ճամփորդության թվականին: Նույնիսկ բեռնակիրներ, օրավարձով աշխատողներ և հավ ծախողներ կազմած են արհեստապետական միություններ: Ինչպես նաև ամեն անոնք, որոնք առևտուրով կզբաղին:

Միայն վարպետներե կկազմվին արհեստապետական ընկերությունները: Աշակերտները և **գալֆաները** կներկայացվին վարպետներու կողմե: Համքարները ունին իրենց կողմե ընտրված **ուստա բաշին**՝ երկու օգնականներով: Ով որ համքարին չպատկանիր և կուզե իր արհեստը բանեցնել, թույլ չի տրվիր անոր:

Վարպետ ըլլալու համար հատուկ ինքնուրույն գործ չի պահանջվիր: Վարպետ տիտղոսին արժանանալու համար պետք է աշակերտը իր վարպետեն վկայագիր բերե և վճարե 10 ռուբլի արծաթ: Անոր անունը մասնավոր տոմարի մեջ կարձանագրվի: Քահանային առջև ծնրադրած կստանա իր տիտղոսը և հետո կսեղմե բոլոր վարպետներուն ձեռքերը: Համքարները ունին իրենց սեփական սնտուկը: Մասնավոր հավաքատեղիներ չունին: Կամ **ուստա բաշիին** տունը կհավաքվին և կամ եկեղեցի: Իսկ մանր խնդիրներու համար փողոցի մը անկյունը: Ունին իրենց հատուկ դատարանը և ասոր հարակից բոլոր հաստատությունները:

Հայերը և վրացիներն ալ ունին «**Կապույտ երկուշաբթի**»: Արհեստավորներու դատարանի օրն է այս: Թափորներու և հասարակական բնույթ ունեցող տոներու առիթով յուրաքանչյուր արհեստավոր իր համքարով կներկայանա:

Երևանի բազարի նկարագրությունը մեր առջև կպարզե արևելյան կյանքի դանդաղ և մեղկ պատկերը: Այլազան վաճառականներ, ինչպես՝ կերպաս, մետաքս, գորգ վաճառողներ, իրարու մոտ են: Գրեթե ամեն վաճառական ձեռքը ուներ ընտանի բազե մը, որուն հետ միշտ կխաղար:

Ընկերական կյանքը բազարի մեջ է: Այստեղ են երկրի բոլոր տարազները, կշատախոսեն, կխնդան, շարժուձևեր կընեն, խմորը կշաղվեն, հացը կեփեն, կտապկեն, բոլոր մարդերու առաջը կուտեն: Բոլոր արհեստավորները ժողովուրդին առջև կաշխատին: Կոշկակարներու, դերձակներու, դարբիններու, սափրիչներու աշխատանքը հրապարակն է: Արհեստավորներու և արվեստահետներու գաղտնիքները հրապարակն են:

Նկարագրված այս բազարը հարազատ արտահայտությունն է նախակապիտալիստական տնտեսության շրջանի, ուր տնտեսական շահի մարմաջը տակավին մեծ չափով չէ հուզեր մարդկանց մտքերը: Արդյունաբերական մեծ կենտրոններու հևասպառ կյանքը, տենդագին շարժումը կպակսի այնտեղ: Հայաստանի սահմաններու մեջ գտնվող հայ վաճառականներու և արտաքին շուկաներու հարաբերության մասին որևէ բան չի հիշատակվիր: Գաղութի հայերը, մասնավորաբար Թիֆլիսի մեջ, ուր արդեն եվրոպական ազդեցությունը զգալի դարձած է, ծանոթ են իբրև առևտրականներ: Դրացի ժողովուրդները արհամարհանքով վերաբերված են առևտուրի հանդեպ:

Հաքստհաուզեն այդ թվականի մեկ քանի կենսամթերքներու և նախանյութերու գիներ կուտա, որոնցմե որոշ կերպով կարելի է եզրակացնել, որ տեղական արտադրությունները օտար շուկաներ փոխադրվելու համար մասնավոր խնդրանք չիկա: 12 ֆունտ ցորենը՝ ամենալավ տեսակը, արժե 5 արծաթ կոպեկ, վատ տեսակը՝ 3 կոպեկ: 12 ֆունտ գարին՝ 1.50 կոպեկ: 24 ֆունտ գինին սուղ եղած տարիներուն արժի 60-80 կոպեկ, արժան տարիներուն՝ մինչև 20 կոպեկ: 1 ոչխարը կարժե 1.50-3 արծաթ ռուբլի, որմե կարելի

է 3 ֆունտ բուրդ ստանալ: 12 ֆունտ բուրդը կարժե 40-50 արծաթ կոպեկ, 12 ֆունտ բամբակը 1 արծաթ ռուբլիեն ավելի չարժեր: Լավ տեսակի կովեր մինչև 12 ֆունտ կաթ կուտան և արժեն 5-10 արծաթ ռուբլի, գոմեշը կուտա 15-16 ֆունտ կաթ և արժե 10-20 արծաթ ռուբլի: Լավ տեսակի եզան գինը 10-24 արծաթ ռուբլի է, արու գոմեշի գինը՝ 10-50 արծաթ ռուբլի:

Ցույց տալու համար, թե Հայաստանի գիները համաշխարհային գիներեն որքան ցած են, արժե հիշատակել մեկ քանի թիվեր: 1841-1850 թվի Անգլիո, Ֆրանսայի, Պրուսիո արմտիքի գիներու միջինը հետևյալ պատկերը ցույց կու տա: Մեկ կիլո ցորենը արժե 29 ֆենիգ, մեկ կիլո հաճարը՝ 12 ֆենիգ, մեկ կիլո գարին՝ 11 ֆենիգ: Նույն պատկերը կներկայացնեն նաև մսի, բամբակի և բուրդի գիները: Ուրեմն երկրի մեջ գոյություն ունեցող գիները մեծապես նպաստավոր են՝ կենսամթերքը և նախանյութը օտար շուկաներ հանելու:

Մրգաստաններով և այգիներով հարուստ, գրեթե ամեն կլիմայի հատուկ առատ բերքեր հասցնող, ալպյան արոտավայրերով օժտված Կովկասը հաղորդակցության միջոցներու կսպասեր, որպեսզի օտար շուկաներ հաներ փոխանակության համար այնքան կենսական նյութերը:

III. Տնտեսական տիրող պայմաններով կսահմանավորվի ժողովուրդի ներքին հասարակական կյանքը. 1843 թվի Ռուսական Հայաստանի տնտեսական պայմանները փորձեցինք տալ առաջին երկու մասերու մեջ: Հասարակական կյանքի կառուցվածքը ճանչնալու համար հարկավոր է վեր հանել անոր հիմունքները: Ասոր հասնելու համար անհրաժեշտ է դիտել տնտեսական կյանքի ենթակա **ընտանիքին և ժողովրդական տնտեսության մեջ**:

Հաքստհաուզեն մանրամասն կնկարագրե հայ մեծ ընտանիքը: Այս ընտանիքի վրա անմիջական ազդեցություն ունեցած են տնտեսության նախնական պայմանները:

Նահապետական այս ընտանիքի մեջ է, որ կդարբնվի սոցիալական մարդը: Ան կներկայանա իր 40-50 անդամներով իբրև հավաքական մեկ տնտեսական օրգան: Անոր տնտեսության մեջ միայն սեփական կարիքներու բավարարություն տալու՝ ժամանակաշրջանը հատկանշող հիմնական գիծը կտիրե:

Համայնքներու, որոնց բնակիչներու պարապմունքը առավելապես երկրագործությունն է, ներքին սահմանադրությունը մեծ ընտանիքի անմիջական ազդեցության տակ կգտնվի: Նախապես հիշվեցավ, որ քաղաքական բազմաթիվ վերիվայրումներու պատճառով հպատակ ժողովուրդի մեջ տիրապետողը հողային սեփականության որոշ հավասարություն մտցուցած է: Աշխարհիկ ազնվականությունը կրած է առաջին հարվածը: 1843 թվին մելիքը մասնավոր տուրքեր չի կրնար վերցնել համայնքեն: Ազնվականներու հողերը ժամանակի ընթացքին դարձած են պետական սեփականություն:

Եկեղեցին կպահպանե իր անցյալի առանձնաշնորհումներու մեկ մասը, թեև անոր կալվածներն ալ պետական հակակշիռի տակ դրված են: Հետաքրքրական են հեղինակին՝ Էջմիածնի գյուղին և վանքին մասին տված տեղեկությունները: «Արտերը վանքին սեփականությունն են և վարձու կտրվին գյուղացիներուն: Արտի բերքերեն՝ ցորեն, հաճար, բրինձ, բամբակ, պարտավոր են մեկ հինգերորդը տալ իբրև վարձք: Վանապատկան գյուղերու բնակիչները զերծ են պետական տուրքե: Պարսկական տիրապետության օրով իբրև այդպիսին ճանչցված են, այդ կարգը մինչև այժմ պահպանված է»:

«Ռուս կառավարությունը վանապատկան կալվածները մասնավոր վարչաձևի տակ դրած է: Այս կալվածները նշանակելի քանակություն կներկայացնեն: Էջմիածնի վանքի սեփականությունն էին 5 գյուղեր՝ 3459 հոգիներով, և, ասկե զատ, մինչև Վրաստանի մեջ ցրված կալվածներ՝ 917 հոգիներով»:

Տարբեր է հասարակական կյանքի դիմագիծը քաղաքներու մեջ: Այստեղ արդեն սոցիալական շերտավորումը տեղի ունեցած է զբաղումներու համաձայն: Քաղաքացիներու գլխավոր պարապմունքները եղած են արհեստավորություն և վաճառականություն: Այս պարապմունքներու այլազանությամբ առաջացած են արհեստավոր և վաճառական դասերը: Վերջինը, ինչպես ցույց տվինք, կգտնվեր նախակապիտալիստական շրջանը հատուկ պայմաններու մեջ: Ուներ լայն հորիզոններ իր առջև, սակայն անոնք իրականացնելու հնարավորությունները կպակսեին: Խանութպանական առևտուրն էր այդ դասի դիմագիծը տվողը:

Թե ինչ տուրքեր կային երկրի մեջ, այդ մասին Հաքստհաուզեն այստեղ կպատմե. «Պետությունը յուրաքանչյուր տունե կպահանջե 3 արծաթ ռուբլի. քաղաքը հավանաբար պետք է վճարե սահմանված տուրքը: Քաղաքապետը ըստ կարողության կբաշխե տուրքը բնակչության վրա: Վաճառականները պարտավոր են 500 արծաթ ռուբլի վճարել: Նույնպես բոլոր արհեստավորներն ալ 500 արծաթ ռուբլի: Քաղաքը պարտավոր է մեծ գումարներ վճարել շենքերու, կամուրջներու, ճամփաներու, ոստիկաններու, կառավարական պաշտոնյաներու, քաղաքապետին, քաղաքի բժշկին և սպասավորներուն համար: Յուրաքանչյուր խանութի վրա տուրք դրված է»:

Համեմատելով պարսկական կամայականություններուն ռուս կառավարության սահմանված տուրքերը՝ ավելի ծանր կգտնեն: Պարսիկներու օրով պարտավոր էին տարեկան ընդամենը 5000 արծաթ ռուբլի վճարել, մինչդեռ այժմ 15.000 արծաթ ռուբլի:

Վաճառականը առավելապես ճնշված կզգա, քանի որ դրված են սահմանային մաքսեր, և պարսկական կառավարությունը որոշ առանձնաշնորհումներ կուտա իր հպատակներուն:

Այս տուրքերու ծանրությունը այն ատեն միայն որոշակի աչքի կզարնե,

երբ հիշենք, թե 12 ֆունտ ցորենը կարժե 5 կոպեկ և ծառայի մը ամբողջ տարեվճարն է 30 ռուբլի:

Ներկա հոդվածով փորձեցինք ներկայացնել Ռուսական Հայաստանի տնտեսական պատկերը և հասարակական կյանքի հիմունքները XIX դարու կիսուն: Աղքատ է երկիրը: Յուրաքանչյուր քառ. վերստի վրա կա միայն 9 հոգի: Մինչդեռ այժմյան Հայաստանի մեջ յուրաքանչյուր քառ. վերստի վրա կգտնվի 52 հոգի:

Երկրագործությունը, որ ժողովուրդի գլխավոր պարապմունքն է, նախնական տեխնիքով և էքստենսիվ ձևով առաջ կտարվի: Անոր նպատակն է առավելապես սեփական կարիքներու բավարարություն տալ:

Արհեստավորությունը կգտնվի արհեստապետական միություններու կապանքին մեջ: Ամեն առաջադիմություն կբախվի անհամար դժվարություններու:

Վաճառականությունը հաղորդակցության նախնական միջոցներու պատճառով առավելապես տեղական առևտուրի բնույթ ունի:

Հասարակական կյանքի մեջ հայ մեծ ընտանիքը կկատարե խոշոր դեր: Ազնվականության հետքերը միայն մնացած են: Թեև վերջինս ժողովուրդի կողմե կվայելե հարգանք և ներքին իրավական հարցերու մեջ իրավախոհի պաշտոնը կվարե, կորսնցուցած է տնտեսական տեսակետե իր ազդեցությունը:

Մեծ հողատիրությունը ի հայտ կուգա վանապատկան կալվածներով: Կրոնական այս հաստատություններն իրենց կալվածներու վրա աշխատող գյուղացիութենեն ուղղակի տուրքեր գանձելու իշխանությունը կպահեն:

Սոցիալական կյանքի դիմագծությունը պարզված է: Զբաղումի համաձայն՝ առաջացած են գյուղացի, արհեստավոր և վաճառական դասերը:

Կառավարողներ և կեղեքվողներ կան: Ցարական Ռուսաստանը երկրագործ ժողովուրդի հողերու մեծ մասը դարձուցած է պետական սեփականություն: Ասկե առաջացած են ծանր տուրքեր, որոնք մեծապես վնասած են արդյունաբերության և անոր զարգացման: Սոցիալական կյանքի մեջ տիրապետողի հանդեպ առաջացած է խոր դժգոհություն:

II

ՎՐԱՍՏԱՆ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆ

Հաքստհաուզեն XIX դարու կիսուն Կովկասի ժողովուրդներեն գլխավորները կհիշատակե հայերը, վրացիները և թաթարները:

Ամբողջ Կովկասի մեջ կատարած ճամփորդությունը տևած է 37 օր: Անձամբ թաթարներու երկիրը չէ այցելած: Եղած է թաթար գաղութներու մեջ: Ադրբեջանի մասին տված տեղեկությունները քաղած է իրեն ընկերակցող Շվարցեն, որ մասնավորապես թաթարներու երկիրը այցելած է:

Մինչդեռ Հայաստանի մեջ ժողովուրդին հետ անմիջական շփման եղած է, Վրաստանի մասին տված տեղեկությունները գրեթե ամբողջությամբ վրաց ազնվականութենեն և ռուս պաշտոնեութենեն քաղած է:

Հաքստհաուզեն տնտեսական զարգացման պրոցեսը չընդունիր: Խոսելով խաշնարած և հողագործ ժողովուրդներու մասին՝ հետևյալ բնորոշ խոսքերը կըսե. «Ընդհանուր առմամբ թափառաշրջիկ ժողովուրդները նստակյաց հողագործ ժողովուրդներ չեն եղած, ո՛չ թե անոնց ունեցած հողը երկրագործության հարմար չէ, այլ անոր համար, որ **աստվածային օրենքը այդ ժողովուրդներու մեջ այդ ապրելակերպը դրած է**» (ընդգծումը մեր կողմեն է - Հ. Զ.):

Տնտեսական կյանքի մասին այս ձևի արտահայտություն թերևս ներելի ըլլար միջնադարյան մտածողներու համար: 1856 թվին՝ հեղինակին աշխատության հրատարակված թվականը, տնտեսագիտությունն արդեն այժմյան տնտեսական աշխարհայացքի հիմերը դրած էր:

Վրաստանի մեջ, ինչպես ըսինք, տիրող դասերու կողմե տեղեկություններ քաղած է: Անշուշտ, այս դասերը իրականությունը ներկայացուցած են իրենց դասակարգային շահերու տեսակետեն:

Հեղինակին տնտեսական աշխարհայացքը միջնադարյան ճակատագրականությունը կներկայացնե: Բայց և այնպես Վրաստանի և Ադրբեջանի մասին Հաքստհաուզենի տված տնտեսական և հասարակական տեղեկությունները ներկայիս որոշ արժեք կներկայացնեն, որովհետև հեղինակը տնտեսական և հասարակական կյանքի մասին տեսածն ու լսածը ջանացած է հարազատությամբ տալ:

***

Վրաստանի և Ադրբեջանի տնտեսական և հասարակական պատկերը XIX դարու կիսուն տալու համար հարցին կմոտենանք հետևյալ երեք բաժանումներով՝

I. տնտեսական հիմունքները,

II. տնտեսությունն ընդհանուր առմամբ,
III.սոցիալական շերտավորումը:

I. Տնտեսական հիմունքները

Վրաստանը սկիզբեն բաժնված է հետևյալ մասերու՝ Գրուզիա, Կախետիա, Իմերետիա, Մինգրելիա, Սվանետի: Վիճակագրական տախտակներու համաձայն՝ տարածությունն է 79.000 քառակուսի վերստ: Սահմանները՝ հյուսիսեն՝ Ինգուր գետը, Էլբրուս լեռը և Օսետներու երկիրը, արևմուտքեն՝ Դաղստան և Ադրբեջան, հարավեն՝ Հայաստանը և Թուրքիա, արևելքեն՝ Սև ծով և Աբխազիա:

Բնակչության թիվը կհասնի 677.000-ի: Ասոնցմե 600.000 հոգին վրացիներ են, իսկ մնացյալները՝ թաթարներ, հայեր, թուրքեր, քուրտեր, ռուսներ, գերմանացիներ և հրեաներ: Մինչդեռ հայերը և թաթարները ցրված են Կովկասի այլազան մասերու մեջ, վրացիները առավելապես մնացած են Վրաստանի սահմաններու մեջ:

Բնակչությունը նոսր է: Յուրաքանչյուր քառակուսի վերստի վրա կգտնվի հազիվ 7 հոգի: Այս թվականին Անգլիա յուրաքանչյուր քառակուսի վերստի վրա կգտնվի 100 հոգի, Գերմանիա՝ 74 հոգի, Բելգիա՝ 160 հոգի:

Վրաստանի մեծագույն քաղաքի՝ Թիֆլիսի բնակչությունը կհաշվե 25.290 հոգի, այսինքն՝ ամբողջ ազգաբնակության 3.7%-ը: Մարկոբի գյուղի մեջ կհաշվե 361 տուն գյուղացիություն:

Երկրորդ հատորին կցված քարտեզի համաձայն՝ թաթարներու կողմե բնակված հողամասի սահմաններն են՝ հյուսիսեն՝ Վրաստան և Դաղստան, արևելքեն՝ Կասպից ծով, հարավեն՝ Պարսկաստան, արևմուտքեն՝ Հայաստան: Տարածությունն է մոտավորապես 75.000 քառ. վերստ:

Ռուսական վիճակագրության համաձայն՝ Կովկասի մեջ կգտնվի 709.000 թաթար: Այս թվեն հնարավոր չէ Ադրբեջանի ազգաբնակության իսկական թիվը գտնել, քանի որ թաթարները Կովկասի այլազան մասերու մեջ ցրված են:

XIX դարու կիսուն ամբողջ Կովկասի ժողովուրդներեն Ռուսաստանի հպատակվածներու թիվը կհասնի 1.5 միլիոնի, իսկ անկախ մնացածները կհաշվին 2.5 միլիոն: Ուրեմն ընդհանուր Կովկասի ազգաբնակությունը կկազմե 4 միլիոն: XIII դարուն, երբ Բատու խանը ամբողջ Կովկասը իր տիրապետության տակ առավ, 800.000 հոգիե բաղկացած բանակ մը կազմեց: Արու բնակչության 10-են մեկը զինվոր առնված է: Այս հաշվով XIII դարուն ամբողջ Կովկասի ազգաբնակությունը կհաշվի 16 միլիոն հոգի:

Ուրեմն եղած է ժամանակ, երբ Կովկասի հողի վրա ապրած է համե-

մատաբար շատ ավելի խիտ ազգաբնակություն: Հողի կազմությունը նույնը մնացած է երկու շրջաններուն ալ: Քանդված են բազմաթիվ ջրաբաշխական ջրանցքներ, առանց որոնց Կովկասի երկրագործությունը շատ ծանր պայմաններու մեջ կմնա:

Վրաստանի և Ադրբեջանի հողը շատ արգասաբեր է: Հյուսիսի և հարավի բուսականությունը և բերքերը հավասարապես կաճին: Հաքստհաուզեն կնկարագրե վայրի այգեստաններ, հաղթանդամ ծառերով կույս անտառներ, ալպյան հրաշալի արոտավայրեր Ղարաբաղի բարձունքներուն վրա: Ինչ որ կպակսի, ջուրն է, որ դարեր առաջ զգացեր են եկող-գացող ժողովուրդները: Խաղաղ տարիներուն շիներ են զարմանք ազդող ջրանցքներ, որոնց շատերեն հետքերը միայն մնացել են: Որքան Հայաստան, նույնքան ալ Ադրբեջան պետք ունի այդ ջրանցքներուն հողամշակությունը առաջ տանելու և տեղացի ժողովուրդներուն ապրելու հնարավորություն ստեղծելու:

Համեմատաբար Ադրբեջանի, Վրաստան ավելի հարուստ է գետերով: Մինգրելիա և Իմերետիա կոռոգվին Ինգուր և Ռիոն գետերով, իսկ Կախետն ու Գրուզիան՝ Կուր գետի և անոր գետակներուն միջոցով:

Ադրբեջանի գլխավոր գետն է Կուրը, իսկ հյուսիսային կողմը՝ փոքր տարածության վրա՝ Սամուր գետը:

Ջուրի սակավության հետ նվազ դեր չեն կատարած երկու երկիրներու տնտեսական հետամնացության մեջ նախնական հաղորդակցության միջոցները:

1856 թվին Վրաստանի քարտեզին վրա կգտնենք հետևյալ ճանապարհները՝ 1. Ս. Նիկոլա-Խոնի-Զուգդիդ, 2. Ռեդուտկալե-Խոնի-Քութաիս-Գորի-Թիֆլիս-Մուղանլու, 3. Պասանաուր-Մցխեթ-Թիֆլիս-Սղնախ-Նուխի, 4. Ախալքալաք-Ճալկա-Ելիզաբեթթալ-Թիֆլիս, 5. Ախալցխա-Սուրամ:

Ամբողջ այս ճանապարհներուն երկայնությունը կընե մոտավորապես 1030 կիլոմետր: Ուրեմն 592 կիլոմետր ավելի այդ թվականի Ռուսական Հայաստանի ճանապարհներեն: Երբ նկատի ունենանք, որ Վրաստանի տարածությունը 4 անգամ ավելի եղած է Ռուսական Հայաստանեն, այն ատեն կտեսնենք, որ համեմատաբար Վրաստանի մեջ ավելի քիչ ճանապարհներ գոյություն ունեցած են:

Ադրբեջանի ճանապարհները՝ 1. Աստարա-Սալեան-Բագու-Դերբենտ, այսինքն՝ Կասպից ծովի եզերքեն երկարող ճանապարհը, 2. Մուղանլու-Գանձակ-Շամախի-Բագու՝ Ադրբեջանի կենտրոնական ճանապարհը, 3. Խուտոֆերի-Շուշի-Գանձակ, 4. Ջամակլու-Նուխի, 5. Դիլիջան-Մուղանլու: Ընդհանուրին երկարութիւնը՝ 1350 կիլոմետր:

Իբրև նավարկելի գետեր կհիշվին Վրաստանի մեջ Ռիոնը և Ինգուրը:

Հաղորդակցության համար գործածված տեխնիքը չափազանց նախնական է: Վրաստանի մեջ երկու և չորս անիվով սայլեր են՝ հաճախ գոմեշ-

ներու լծված: Գոմեշի դանդաղկոտությունով բավարարված տնտեսական փոխադրությունը չափանիշ է նույն ժամանակաշրջանի նախնական տնտեսության:

Հողի մշակության համար կգործածվի արորը՝ 8-10 զույգ եզներու լծված: Կազմված են երկրագործական ընկերություններ: Մեկը արորը, ուրիշներ եզները կբերեն, և այսպես հավաքաբար կհերկեն հողը:

Ցորենը և գարին կամնելու համար կգործածվի եռանկյունաձև տախտակը՝ կայծքարերով ծածկված մեկ կողմը, ինչպես կնկարագրե Հաքըստհաուզեն: Ասիական երկիրներու մեջ գործածված հնադարյան տեխնիքն է այս:

Այգեմշակությունը չափազանց էքստենսիվ ձևով կկատարվի: Մինչդեռ վրացի ժողովուրդը 1 դեսյատին հողե միջին հաշվով 250 դույլ գինի կստանա, տեղացի գերման գաղութը համեմատաբար ավելի զարգացած տեխնիքով մինչև 600 դույլ գինի կստանա նույն տարածությամբ հողեն:

Գինիի պատրաստության հնադարյան եղանակը կպահպանվի: Քսենոփոն Հայաստանի համար նկարագրած է՝ հողե կարասները կպահեն իրենց գոյությունը: Փոխանակ փայտե տակառներու կգործածվին գոմեշի և եզան մորթե պատրաստված տիկեր:

Թաթար ժողովուրդը առավելապես անասնապահությամբ կպարապի և թափառաշրջիկ է: Հատկանշական պարագա է, որ թաթար և հայ բնակչությամբ խառն վայրերու մեջ թաթարները կպարապին արհեստավորությամբ: Այսպես՝ հայերու հետ կգործեն գորգեր և շալեր:

Վրաստանի արհեստավորությունն ալ Հայաստանի նման համքարներու կաշկանդումներու մեջ կգտնվի: Այստեղ ալ տեխնիքը ավանդական ձևով կկատարվի:

Թե՛ Վրաստան և թե՛ Ադրբեջան ավատական երկիրներ են: Կարելի է ըսել, որ իրավունքի գետնի վրա ընդհանուր օրենսդրություն գոյություն չունի: Իշխաններու և բեգերու կամոքը իրենց շրջաններուն օրենքն է: Արդարության փոխարեն **կամայականությունն** է, որ կիշխե:

II. Տնտեսությունն ընդհանուր առմամբ

Առաջին մասով տեսանք տնտեսության տարրերը: Այժմ կջանանք ներկայացնել երկու երկիրներու մեջ ընդհանուր տնտեսությունը, որ հիմնված է այդ երկիրներու բնության տվյալներու և մարդկային ստեղծագործություններու վրա:

Տեսանք, որ հողը արգասաբեր է: Արտադրության հիմնական ազդակներեն մեկը ուրեմն առատապես գոյություն ունի: Խաղաղ պայմաններու բա-

ցակայությունը, կեղեքող դասերու սարսափելի ճնշումը, արևելյան մեղկությունը արգելքներ են ստեղծագործող աշխատանքին: Տարիներու ընթացքին մղված քաղաքական ավերիչ պատերազմները անցյալի համեմատաբար ծաղկած տնտեսության ավերակները միայն թողած են: Գյուղեր և քաղաքներ քանդված են՝ թողնելով միայն ջրաբաշխական ջրանցքներու ավերակները: Խնամված այգեստաններու տեղ բռնած են վայրի որթատունկերը:

Եթե XIII դարուն Կովկասը 16 միլիոն ազգաբնակություն ունեցած է, այդ բանը առավելապես կպարտի ջրաբաշխական ջրանցքերու: XIX դարու կիսուն Կովկասը այդ թվով բնակչություն չէր կրնար պահել, քանի որ հողի երակները մեծագույն մասով ցամքած են: Երբ նորագույն շրջանին Կովկասի այս երեք գլխավոր հողամասերը կառավարողներու կենտրոնական մտահոգությունը ըլլա հողամշակությունը ինտենսիվ հիմքերու վրա դնելու, հողի սակավութենեն գանգատելու պատճառներ տեղի չեն ունենար:

XIX դարու կիսուն Վրաստանն ու Ադրբեջանը աղքատ երկիրներ էին: Վրաստանի մեջ հողագործության կողքին որոշ տեղ կգրավե անասնապահությունը: Թաթարները առավելապես խաշնարած ժողովուրդ են:

Վրաստանի տնտեսության մասին որոշ գաղափար կազմելու համար տեսնենք, թե ի՞նչ զբաղումներ ունի վրացական քաղաքներու և գյուղերու բնակչությունը: Իբրև օրինակ վերցնենք Թիֆլիսը:

1856 թվին Թիֆլիսի ազգաբնակության թիվը կհասնի 25.290 հոգիի, այս թվեն 12.6000 հոգին պետական հողերու վրա աշխատող գյուղացիներ են, 2950 հոգին՝ վանապատկան գյուղացիներ, 4500 հոգին՝ ավատապետ իշխաններու գյուղացիներ: Ուրեմն ընդամենը 20.050 հոգի կներկայացնե գյուղացիությունը: 2670 հոգի քաղաքացիներ, որոնք զբաղած են արհեստներով ու վաճառականությամբ: Ազատ գյուղացիներու թիվը կհասնի միայն 400 հոգիի: Իմերետիայեն գաղթած դաշտի աշխատավորներու թիվը՝ 300 հոգի: Ազնվականության թիվն է 1090, իսկ կղերականության՝ 780 հոգի:

Այսպես՝ 1856 թվին Թիֆլիսի ազգաբնակության 82 %-ը կկազմեն գյուղացիությունը և դաշտի աշխատավորները, 10.6 %-ը՝ վաճառականներու ու արհեստավորներու դասերը, 7.4 %-ը՝ ազնվականության և կղերականության դասերը:

Ի՞նչ կարելի է հետևցնել այս համեմատությունեն: 1. Երբ երկրի մեծագույն քաղաքի ազգաբնակության 82 %-ը գյուղացիներ են, ուրեմն տեղացի ժողովուրդը առավելապես երկրագործությունով կպարապի: 2. Նկատի ունենալով այն հանգամանքը, որ 2780 վաճառականներեն և արհեստավորներեն 2610-ը հայեր, 60-ը հրեաներ են, և միայն 110 հոգին վրացիներ, տեղացի ժողովուրդը երկրի վաճառականության և արհեստավորության շատ չնչին բաժնով կմասնակցի:

Իբրև տիպիք գյուղեր՝ կվերցնենք Կախեթիայի շրջանի Թելավի և Սըղ-

նախի գավառները: Այս շրջանի 115 գյուղերը ունին 13.158 տուն գյուղացիներ: Ասոր դեմ կան 1556 ազնվականներ: Արհեստավորներու մասին ոչինչ կհիշվի: Հավանաբար գյուղերու մեջ գոյություն ունեցած են անոնք՝ երկրագործական անհրաժեշտ գործիքներու շինության և գյուղացիության անմիջական կարիքներու բավարարություն տալու համար:

Վրաստանի և Ադրբեջանի մեջ գյուղերը կազմված են առանձին գյուղացիական տուներե, որոնք կառուցված են բարձունքներու վրա և իրարմե հեռու կգտնվին: Կանոնավոր ճամբարներ չկան այդ մենավոր տուներու միջև: 30-100 գյուղացիական այսպիսի տուն կկազմեն համայնք մը, որուն պետն է Նազվալը: Այդ ձևի բազմաթիվ համայնքներ կկազմեն եկեղեցական համայնք մը, որուն պետն է Մավրաֆը:

Անտառային մասերու մեջ թույլ կտրվի գյուղացիներուն, որ ծառերը կտրեն, իրենց համար շինեն բնակության տուներ և մշակելի արտեր: Տնտեսության նախնականությունը հատկանշող երևույթ մ'է, որ հայտ կուգա նոսր բնակչություն ունեցող վայրերու մեջ:

Վրաստանի հողի մշակության ձևը իր ընդհանուր գծերով նույնն է, ինչ որ Հայաստանի մեջ:

Հողի սեփականատերերը թե՛ Վրաստանի և թե՛ Ադրբեջանի մեջ ավատական իշխաններն ու բեգերն են: Ասոնց իշխանութենեն դուրս մնացած հողերը գրավված են ռուս պետության կողմե: Արտադրող գյուղացիությունը սեփականազուրկ է:

Ռուս կառավարության նախաձեռնությամբ ինտենսիվ հողամշակության համար բացված են մասնավոր հաստատություններ Թիֆլիսի, Նուխիի և Շամախիի մեջ: Մասնավոր խնամքի առարկա դարձած են արմտիքի, այգիներու մշակությունը և մետաքսի պատրաստությունը: Քաղաքակրթական նոր պայմաններու մեջ ստեղծված են նոր պահանջներ, որոնց բավարարություն տալու համար պատրաստված են անհրաժեշտ արհեստավորներ:

Կախեթիայի շրջանին մեջ իշխան Աբխազովի տրված է 500 դեսյատին հող, որպեսզի այլազան բերքերու մշակության փորձեր ընե անոր վրա: Կատարելապես հաջողած է շաքարեղեգի մշակությունը: Սակայն շաքարի պատրաստության համար անոր ըրած փորձերը արդյունք չեն տված: Մշակած է նաև բամբակ, որուն արտադրությունը տեղական մանիֆակտուրի համար անհրաժեշտ հում նյութ չէ կրցած հայթայթել:

Այս ընդհանուր տեղեկություններն որոշ կերևի, որ տնտեսական զարգացումը XIX դարու կիսուն կգտնվի իր սկզբնական շրջանին մեջ: Նոր տիրապետողին հետ տնտեսական գետնի վրա սկսած են նորություններ առաջանալ:

Վրաստանի և Ադրբեջանի բնական հարստություններու շահագործումի մասին ոչ մի հիշատակություն կըլլա: Կհիշվի միայն, որ Սվանետի մեջ ոսկիի

և արծաթի հանքեր կգտնվին:

Բաքվի նավթահանքերը ձգված իրենց բախտին, բոցեր կարձակեն, որ տեղացիներու պաշտամունքին առարկա դարձած են: Այժմյան նավթի ճարտարարվեստի կենտրոն դարձած Բաքուն կնկարագրվի Հաքստհաուզենի կողմե որպես ողորմելի մեկ քաղաք:

Գանձակ և Շամախի՝ իբրև առևտրական ճանապարհի վրա գտնված կենտրոններ, կկազմեն Ադրբեջանի գլխավոր քաղաքները:

Եվրոպայի և Ասիայի վաճառականության կենտրոնական քաղաքը Թիֆլիսն է: Վրացի ժողովուրդը վաճառականության չէ հարած:

Վրաստանի վաճառականությունը կգտնվի օտարներու ձեռք: Այսպես՝ Թիֆլիսը ստացած է միջազգային քաղաքի պատկեր, ուր հաստատված են ռուսներ, անգլիացներ, ֆրանսացիներ, գերմանացիներ, պարսիկներ, թուրքեր, թաթարներ, հայեր, քուրդեր, ուզբեկներ և Կովկասի բոլոր ժողովուրդները:

III. Սոցիալական շերտավորումը

Վրաստանի և Ադրբեջանի ժողովուրդները տնտեսականորեն կապված են հողին: Գյուղացիության սեփականազուրկ ըլլալու իրողությունը հասարակական կյանքի մեջ ստեղծած է ավատական դրությունը:

Վրաց ժողովուրդի սահմանադրությունը շատ մը կետերու մեջ նմանություններ կներկայացնե միջնադարյան, ավատական Գերմանիո սահմանադրության հետ: Իշխանները թագավորը կնկատեն իբրև իրենց գերագույն ավատապետը:

Դեղեբուլիները բարձր ազնվականությունը կկազմեն:

Երկրորդ կարգի ազնվականները կկազմեն թավադները, որոնք թագավորական պաշտոնյաներ եղած են և ժամանակի ընթացքին ժառանգական դարձած են:

Երրորդ կարգի ազնվականները ազնավուրներն են: Մինչդեռ առաջին երկու ազնվականները թագավորին վասալներն են: Այս վերջինները մասամբ թագավորին, մասամբ գերադաս ազնվականության և կաթողիկոսին պաշտոնյաներն են:

Թաթարներու սահմանադրությունն ալ կճանչնա ժառանգական բեգերու գոյությունը: Գրեթե յուրաքանչյուր գյուղ ունեցած է իր բեգը: Թաթարները մեծ հարգանքով կվերաբերվին իրենց բեգերու հանդեպ:

Ավատական այս դրության մեջ Վրաստանի կղերականությունն ալ ունեցած է ազնվական կարգ:

Կաթողիկոսը կվայելե թագավորական հարգանք և պատիվ: Արքեպիսկոպոսը և 13 վանքերու վանահայրերը ազնվականության առաջին դա-

սին կպատկանին, եպիսկոպոսները՝ երկրորդ դասին և քահանաները՝ երրորդ դասին:

Ազնվականություն և կղերականություն դարերու ընթացքին արտադրող գյուղացի դասը ճնշած և կեղեքած են: Ռուսական տիրապետութենեն վերջ փոխանակ բարելավվելու անոնց վիճակը ավելի վատթարացած է: Այս բանին պատճառ եղած են մեկ կողմե Ռուսաստանի XIX դարու կիսու ներքին սոցիալական պայմանները, իսկ մյուս կողմե՝ պետության հողային գրավումները:

Վրաստանի ազնվականության ուժի մասին գաղափար կազմելու համար արժե հիշել մեկ քանի վիճակագրական թվեր:

Թիֆլիսի 25.290 հոգի ազգաբնակութենեն 1870-ը կկազմեն ազնվականությունը և կղերականությունը: 20.050 հոգի գյուղացիներեն 12.600-ը կաշխատին պետական հողերու վրա, մնացյալ 7450 հոգին ազնվականության և կղերականության սեփականությունն են: Ուրեմն յուրաքանչյուր ազնվականի և կղերականի 4 գյուղացի կիյնա: Կախեթիայի շրջանի մեջ Թելավ և Սղնախ քաղաքներն իրենց 115 գյուղերով կներկայացնեն հետևյալ պատկերը՝ 115 գյուղերու 13.158 տուն, գյուղացիութենեն 7117 տունը պետական գյուղացիներ են, 3230-ը՝ վանապատկան գյուղացիներ, 3901-ը՝ ազնվականներու պատկանողներ: Կան 1556 հոգի ազնվականներ, 182 եկեղեցիներ: Եթե յուրաքանչյուր եկեղեցու միջին հաշվով 2 կրոնավոր հաշվենք, ազնվականության հետ կունենանք 1920 հոգի: Ուրեմն յուրաքանչյուրին միայն 3.5 տուն գյուղացի: Եղած են գյուղեր, ուր 120 իշխաններու սեփականություն եղած են 30 տուն գյուղացիներ:

Այս համեմատությունները բացորոշ ցույց կուտան կեղեքումի աստիճանը, քանի որ անգործ ազնվականը և կղերականը պիտի ապրին իրենց բաժին ինկած գյուղացիության աշխատանքով, և քանի նվազ ըլլա վերջինին թիվը, այնքան ճնշումը կավելնա: Եղած են վայրեր, ուր գյուղացիության արյուն քրտինքի արդյունք եղող բերքին մեկ հինգերորդը ծծած են:

Թե գյուղացիությունը ինչպիսի ծանր պայմաններու մեջ կապրեր, ցույց կուտան գանձված տուրքերը: Ասոնք այնքան բազմազան են, որ կբավականանանք այս մասին տիպիկ օրինակ մը տալով:

Թիֆլիսի մոտ Մարկոբի գյուղը կբաղկանա 361 տուն գյուղացիութենե՝ 200 պետական գյուղացիներ, 120-ը վանապատկան գյուղացիներ և 41-ը՝ մեկ քանի իշխաններու սեփականությունը: Վերջինները չափազանց կճնշվին: Փոխանակ բերքին մեկ տասանորդին, որ պետական գյուղացիներու կողմե կվճարվի, ստիպված են վանքին և իշխանին մինչև մեկ հինգերորդ տալ: Նոր տարվան և Զատկին, այսպես կոչված, կամավոր նվերներ ստիպված են տալ: Բացի այս՝ 2-3 տարին անգամ մը գյուղացիության կարողության համեմատ 100-են մինչև 500 ռուբլի դրամական տուրք կդրվի: Պարտեզներու

և այգիներու բերքին մեկ հինգերորդը պարտավոր են տալ: Հունձքի ժամանակ պարտավոր են շաբաթը մեկ քանի օր հողատերին ծառայել: Այս բոլորեն զատ՝ կան և պետության վճարվելիս տուրքերը: Մարկոբի յուրաքանչյուր օջախե 2 արծաթ ռուբլի կգանձնվի:

Երկրի օրենքը ազնվականի կամքն է: Անոր պահանջներուն համաձայն՝ տուրքերը կենթարկվին փոփոխություններու: Պետական գյուղացիներու վիճակը համեմատաբար ավելի լավ է:

Ադրբեջանի մեջ դրությունը տարբեր չէ: Հաքստհաուզեն տասը տեսակ տուրքեր կթվե, որոնք թե՛ դրամական և թե՛ նատուրալական ձևերով կգանձվին: Բացի այս տուրքերեն՝ կան նաև բեգին մատուցվելիք այլազան ծառայություններ:

Երբեմն որոշ բերքեր դրամական տուրքերու փոխարեն կտրվին: Այդ բերքերու համար նշանակված գիները կեղեքումի մեկ ուրիշ ձևը կներկայացնեն: Այսպես՝ 24 փութ մետաքսի համար նշանակված է 200 խանական ռուբլի (6.3 խանական ռուբլի=1 արծաթ ռուբլիի), որով 1 կիլ. մետաքսի համար նշանակված է 8 կոպեկ, մեկ կիլ. ցորենի համար՝ 2 կոպեկեն քիչ բան ավելի և այս համեմատությունով՝ բուրդի, կարագի, ոչխարի գիները:

Եզրափակելով կարելի է ըսել՝ Վրաստանի և Ադրբեջանի տնտեսությունը XIX դարու կիսուն կգտնվի նախնական պայմաններու մեջ: Երկու երկիրներու ժողովուրդները կգտնվին տնտեսական ծանր պայմաններու տակ:

Դարերու ընթացքին ավերներ գործող ավատական դրությունը իր բոլոր այլանդակություններով կշարունակվի: Կվայելեն ազնվական և կղերական դասերը, իսկ աշխատավոր գյուղացիությունը հազիվ չոր հաց միայն կրնա ճարել:

XIX դարու կիսուն Հայաստանի ներքին կեղեքող տարրը հաղթահարված էր այլազան ազդակներով: Ժամանակի ընթացքին կազմված էր մանր քաղքենի դասը: Դրացի երկիրներու մեջ կշարունակվեր տակավին ավատական դրությունը: Ռուսական մեծ հեղափախությունը ահագին դեր կատարեց ամբողջ Կովկասի մեջ հասարակական տեսակետե: Ստեղծված սոցիալական պայմաններեն Կովկասի այս երեք գլխավոր ժողովուրդները ապագայի համար կարող են լավագույն ակնկալություններն ունենալ:

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԱՐԵՎԵԼՔԻ ՄԵՋ
(Պրոֆ. Հեոզի բանախոսության առիթով)

Պրոֆ. Հեոզ՝ Բեռլինի համալսարանի պատմության ճյուղի պրոֆեսորներեն, դեկտեմբերի 12-ին բանախոսեց Ռուսաստանը Արևելքի մեջ նյութի մասին: Ան վերջերս դեպի Խորհրդային Ռուսաստան կատարած է ուսումնասիրական ճամփորդություն մը և Գերմանիո մեջ ծանոթ է իբրև Ռուսաստանի պատմության մոտեն տեղյակ անձնավորություն:

Հարևանցի և ընդհանուր ակնարկով կներկայացնե ցարական Ռուսաստանի նախապատերազմյան Մերձավոր և Միջին Արևելքի մեջ վարած քաղաքականությունը: Ցույց կուտա, թե այդ առանձնապես եղած է գաղութային և աշխարհակալական քաղաքականություն, որ «այժմ պատմության կվերաբերի և իբր այդպիսին՝ ներկայիս շահեկանություն չի ներկայացներ»:

«Հետո եկավ հեղափոխությունը, որ աշխարհակալության երկաթե օղակները փշրեց[1]»,- այսպես կշարունակե, երբ կսկսի խոսիլ Նոր Ռուսաստանի մասին: Այն կարծիքը, թե հեղափոխութենե վերջ նախկին Ռուսաստանը, բաժան-բաժան եղած, չի ներկայացներ մեկ ամբողջություն, բոլորովին անհիմն կհայտարարե և ցույց կուտա Ռուսաստանի նորագույն երկաթուղային քարտեզը, ուր կտեսնվին սիբիրական և անդրկովկասյան երկիրները տանող երկաթուղագիծերը. «հսկա հաղորդակցությունները իրապես հաստատված են»:

Ընդհանուր ակնարկով կուտա վարչական կազմակերպության պատկերը: Միջին Ասիայի երկիրները, որոնք նախապես իբրև գաղութները կկառավարվեին, այժմ առավել կամ նվազ չափով ունին ինքնավարություն և անդամ են Սոցիալիստ Խորհրդային Հանրապետություններու Միության: Անդրկովկասի երկիրները կկազմեն Անդրկովկասյան դաշնակցությունը, անկախ են իրենց ներքին գործերու մեջ և համահավասար իրավունքներով կանդամակցին Խորհրդային Հանրապետություններու Միության: Վարչական այսպիսի կազմակերպության շնորհիվ Մոսկվա՝ իբրև կենտրոն ստեղծված Միության, իրեն շատ ավելի ուժեղ կապած է նախկին կայսրության բոլոր գաղթավայրերն ու երկիրները, քան անցյալի Ռուսաստանը: Խորհրդային Ռուսաստանը այժմ քաղաքական տեսակետե մեզ կներկայնա իբրև ներքնապես ուժեղացած մի ամբողջություն:

Այս իրողություններն ընդգծելե վերջ բանախոս Ռուսաստանի վարչական կազմակերպության մեջ կտեսնե նոր տեսակի գաղութային քաղաքականություն և անցյալի ձգտումներու վերակենդանացում: Բուրժուազիական իդեոլոգիայի ներկայացուցիչը միանգամայն հետևողական է իր եզրակա-

[1] Մեջբերումները եղած են բանախոսության միջոցին կատարված սղագրութենե:

ցության մեջ. չէ՞ որ դրամատիրական տնտեսության մեջ բոլոր նվաճումները քողարկումներով տեղի կունենան, չէ՞ որ բոլոր ավերիչ պատերազմները համամարդկային նշանաբաններով կկատարվին: Հին պատմության տվյալներով չէ կարելի Հոկտեմբերյան հեղափոխությունը և անոր հաջորդող վեց տարիներու տաժանելի, բայց արդյունավոր աշխատանքը դատել: Հին աշխարհի փոխարեն սկսած է նոր կառուցվիլ, իսկ այդ նորը բոլորովին նոր չափանիշներով կարելի է դատել:

Լսեք, սակայն, բանախոսը, որի կարծիքը իր իսկ խոսքերով կսրբագրվի: Ան քանիցս կխոստովաներ, որ «մայր երկիր» ասացվածքը հարմար չէր Ռուսաստանի համար, երբ Միջին Ասիայի երկիրներու Մոսկվայի հետ ունեցած փոխարաբերություններու համար կխոսեր: Ինչո՞ւ այս զանազանությունը, քանի որ Խորհրդային Ռուսաստանը գաղութային քաղաքականություն կվարե: Չէ՞ որ վայրկյան մը չէ կարելի տարակուսիլ, օրինակ, երբ կխոսվի Անգլիայի և Ֆրանսայի համար, որոնք Հնդկաստանի և աֆրիկյան գաղթավայրերու համար «մայր երկիր» են:

«Առայժմ ոչ մի գաղութային քաղաքականություն, և կոմունիզմի դրոշակի տակ Ռուսաստանը պայքար կհայտարարե Միջին Արևելքի մեջ ամերիկյան և անգլիական իմպերիալիզմի դեմ», իսկ ավելի անդին «բոլշևիզմը շատ ամուր է, բայց կհետապնդե Ռուսաստանի հին հպատակները»: Ուրեմն, առայժմ ո՛չ մի գաղութային քաղաքականություն», բայց «կհետապնդե հին հպատակները»: Բանախոսը Ռուսաստանի մասին այդ տպավորությունը ստացեր է մանավանդ մեկ ցուցահանդեսի մեջ, ուր խորհրդային հանրապետություններու երկրագործական արտադրությունները կցուցադրվեր, և ռուս գյուղացիին կըսվեր. «Այս ամենը մեզ կպատկանի՝ Ռուսաստանի բանվոր-գյուղացիական պետության»:

Մերկանտիլյան և դրամատիրական դրություններու մեջ մարդը քաղաքականության իբրև միջոց ծառայված է, և բոլոր ժամանակներու իշխողներն ու կառավարողները ան իբրև այդպիսին գործածած են: Կապիտալը իր նվաճումները կատարելու համար թաքնվեր է մարդասիրական բառերու տակ, որովհետև կեղեքողներու փոքրամասնություն մը իր կամքը ճնշվածներու բանակ մը պարտադրելու համար ստիպված էր այդ միջոցին դիմել: Այսպիսի միջավայրի հոգեբանության արտահայտությունը կգտնենք պրոֆ. Հեռզի մոտ, երբ կասկածով կվերաբերվի բանվոր-գյուղացիական պետության հանդեպ: Պրոլետարիատի հաղթանակով մարդը դադրեր է գործիք ըլլալե, և ինքը նպատակն է այլևս: Այս կասկածանքը կառաջանա պրոլետարական և բուրժուական բոլորովին տարբեր պետական աշխարհայեցողութենեն:

Պրոֆ. Հեռզ ավելի մեծ հակասության մեջ կիյնար, երբ Միլյուկովի վերջին հրատարակած գրքեն հատված կբերեր: Կադետ մտավորականը, Ռուսաստանի համաշխարհային դերի մասին խոսելով, կգրե, որ Ռուսաստանը

Եվրոպայի մեջ Ֆրանսայի հետ եվրոպական հավասարակշռությունը պիտի պահպանե, իսկ Միջին Ասիայի մեջ Անգլիայի և Ամերիկայի հետ՝ ասիական հավասարակշռությունը: Այս տեսակետը իսկ և իսկ նախկին Ռուսաստանի աշխարհակալական ձգտումը կներկայացնե: Պրոֆ. Հեռզ կհայտարարե, թե Խորհրդային Ռուսաստանը, համաձայն իր ուսումնասիրության, Եվրոպայի մեջ ավելի շուտ Գերմանիայի հետ է, իսկ ինչ կվերաբերի ասիական քաղաքականության, Կարախանի և Իոֆեի միջոցով Չինաստանի և Ճաբոնի հետ վարած բանակցություններով ան միանգամայն ցույց կուտա, որ կողմնակից է Ասիայի մեջ հաշտարար քաղաքականության և պաշտպան կհանդիսանա ճնշված ժողովուրդներու, երբ պայքար կհայտարարե անգլիական և ամերիկյան նվաճողական քաղաքականության: Անոր համաշխարհային դերը բոլորովին տարբեր է ցարական Ռուսաստանեն: Համաշխարհային հեղափոխության շնորհիվ ան կաշխատի աշխատավոր դասակարգը համախմբել և կապիտալիզմի կեղեքումներեն ազատագրել:

Եվ ճիշտ այդ պայքարը հաղթանակով պսակելու համար է, որ այժմ անցյալի ցարական Ռուսաստանի փոխարեն եվրոպական և ամերիկյան դրամատիրական երկիրներու հակադրված է Խորհրդային Հանրապետություններու Միությունը: Եվ երբ հինգ տարիե ի վեր դրամատիրական Եվրոպան, փոխանակ խաղաղության, քայլ առ քայլ կառաջանա դեպի նորանոր կորստաբեր պատերազմներ, անդին խորհրդային հանրապետությունները, լծված շինարարական աշխատանքի, «քաղաքակիրթ» Եվրոպային ցույց կուտան մարդկային ճանապարհը՝ աշխատավորության հաղթական ուղին, որու միջոցով միայն հնարավոր պիտի լինի վերջ տալ կորստաբեր պատերազմներուն:

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

«ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԱՂՈՒԹԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ»

Ալ. Մարտունի (Ա. Միասնիկյան), Պետ. հրատ., Թիֆլիս, 1924:

Ալեքսանդր Մարտունիի այս գրքի նպատակն է վերջին չորս տարիներու ընթացքին գաղութահայ իրականության մեջ առաջ եկած տրամադրությունները վերլուծման ենթարկել և տալ «ըստ հնարավորության ճիշտ որակումներ գաղութահայ հասարակական ձգտումներին և ուղղություններին»:

Իր այդ նպատակին հասնելու համար ան հետևեր է արտասահմանյան հայ կուսակցություններու տասնյակ թերթերուն, պատմաբանի խղճմտությամբ հավաքեր փաստերը, առարկայական և շատ հանդարտ ոգով այդ փաստերեն հաներ է հարկավոր եզրակացությունները: Գաղութահայության ծոցի մեջ արծարծված հարցերը վերլուծման ենթարկած և ցույց տված է աշխատավորական մասսային անոնց էությունը:

Ընթերցողի աչքի առջևեն կանցնին շարքով ռամկավար – ազատական, դաշնակցական, հնչակյան և գաղութահայ աշխատավորության մեջ վերջին տարիներու ընթացքին ծնունդ առած կոմունիստական կուսակցությունները:

Ան դասավորած է նյութը այնպես, որ ընթերցողի համար պարզ կլինի, թե ինչպես այդ կուսակցություններու շարքային մասսաները աջեն դեպի ձախ պիտի երթան կոմունիզմի ճանապարհով:

Գաղութահայ բանվորն ու գյուղացին, հակառակ ամեն խոչընդոտներու և մթագնումներու, կգտնեն այդ ուղին շնորհիվ այն հանգամանքի, որ իր դասակարգի պատկանողները, բռնելով Ռուսական մեծ հեղափոխության ուղին, ստեղծած են երկրի սահմաններու մեջ խաղաղ պայմաններ, վերականգնած՝ տնտեսությունը և մեծ զարկ տված կուլտուրական կյանքի բարգավաճման:

Անալիզը, որ ըրած է Ալ. Մարտունի, միանգամայն առաջնորդած է ան ճիշտ եզրակացություններու: Իր այդ անալիզի ամենահետաքրքիր և ուսուցանող մասը կկազմե այն, որ ան ցույց կուտա, թե ինչպես «ընկերվարական» դաշնակցության ծոցի մեջ կհնչեն «ջոջերու»՝ ռուս բուրժուազիայի մարտական կոչերը, և թե ինչպես անոնց կպատասխանե Հունաստանի թրքահայ գաղթականության՝ տառապող մասսայի գիտակից ձայնը:

Հեղինակը երկար կանգ առած է դաշնակցության վրա: Համարձակ, որոշ և կտրուկ դրած է բոլոր այն հրատապ հարցերը, որոնք այժմ կհուզեն գաղութահայությունը: Այնտեղ են օրիենտացիայի, Ազգերու լիգայի, գաղթականության, զինված ապստամբության, «անկախ և ազատ» Հայաստանի հարցերը: Այդ հարցերուն պատասխանելու ժամանակ ան դեմ հանդիման կդնե դաշնակցական մի շարք օրգաններ, որոնք բացորոշ կհայտնաբերեն

մեկ շատ կարևոր երևույթ: Այդ այն է, որ միևնույն կուսակցության բերանները միևնույն հարցի մասին կարտահայտվին բոլորովին տարբեր կերպ: Մեկ շատ ուշագրավ երևույթ, որ ի հայտ կուգա ամեն մեկ կուսակցության քայքայման նախօրյակին, սա կնշանակե, որ այդ անվանապես մեկ կուսակցության շարքերու մեջ գտնվող անհատներու մոտ կպակասի բացարձակապես միակերպ մտածողություն:

Ինչո՞վ կբացատրվի այս երևույթը.

«Անհրաժեշտ է նկատել»,- կըսե հեղինակը,- «որ դաշնակցությունը բաղկացած է երկու տարբեր տարրերից. առաջինը նրա ջոջերն են, ինտելիգենտները, իդեոլոգները և առևտրա-կապիտալիստական շերտը. երկրորդը այն բանվորներն ու գյուղացիներն են, որոնք մինչև այժմ մնացել են դաշնակցության շարքերում: Առաջինները ռուսահայ շրջաններից են, երկրորդ խավը տաճկահայերից է բաղկացած»: Պետք է լավ հասկնալ. ռուսահայի և տաճկահայի հարց չէ դրվածը, այլ բուրժուական դասակարգի, անոր իդեոլոգներու և աշխատավոր դասակարգի, այդ երկու սոցիալական հակամարտ դասակարգերու հարց: Ալ. Մարտունիի այս աշխատությունը մեծ հետաքրքրությամբ պիտի կարդացվի գաղութահայ աշխատավորության և անոր մեծագույն զանգվածի՝ ամերիկահայ բանվորության կողմե: Ան ցույց կուտա այն ճշմարիտ ուղին բոլոր անոնց, որոնց նվիրած է հեղինակն իր այդ աշխատությունը՝ «գաղութահայ տառապող աշխատավորության՝ գործարանային բանվորներին, աստանդական գյուղացիներին, նկուղների չարքաշ բազուկավորներին՝ այդ բարձրացող, ոտքի կանգնող ու մարտնչող բանակին»:

ԲԵՌԼԻՆԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ

I. Հարցադրություն

Գաղութահայ կենտրոններու մեջ հրատարակված հայ մամուլը մինչև այժմ չէ եղած իր գաղութահայ կյանքի իսկական և հարազատ արտահայտիչը: Այդ բաժինը մասնավոր հոգածության առարկա չէ դարձած և ձգված է պատահականության: Մինչև այժմ արտասահման ցրված հայերու մասին ճշգրիտ վիճակագրություն գոյություն չունի. չենք գիտեր անոնց զբաղումներու տոկոսային հարաբերությունը՝ իր երկրի գաղութահայության բացարձակ թիվի հետ, ընթերցողները չեն գտներ լուրջ ուսումնասիրություններ յուրաքանչյուր գաղթավայրի տնտեսական պայմաններու մասին. հիմնական հարցեր, որոնց լուսաբանումով միայն հնարավոր կլինի գաղութահայության սոցիալական կազմի մասին մի ընդհանուր գաղափար կազմել:

Ասոնք ո՛չ միայն ապագա պատմաբանին տալիք առաջին հարցերն են, այլև անոնք խոշոր նշանակություն ունին ներկայիս հուզվող հարցերու համար:

Գաղութահայության երեկը չի նմանիր երբեք այսօրվան: Այսօր այդ գաղութահայության աչքերը ուղղված են տարիներու բռնապետական լուծեն ազատագրված, դրացի երկիրներու հետ քաղաքական և տնտեսական կապերով ամրապես դաշնակցած և իր ստեղծագործ աշխատանքին լծված երկրի հայ ժողովուրդին:

Հարցը պետք է դնել այժմ. **այլազան երկիրներու մեջ ցրված գաղութահայության դիրքը ի՞նչ է դեպի Խորհրդային Հայաստանը**: Իսկ այս հարցի պատասխանը միայն այն ժամանակ պարզ կլինի, երբ պատասխանվին հետևյալ հարցերը.

ա) գաղթավայր ծառայող երկիրը քաղաքական և տնտեսական ի՞նչ պայմաններ կներկայացնե օտար տարրերու,

բ) գաղութահայությունը տնտեսական ի՞նչ դրության մեջ կգտնվի,

գ) ի՞նչ է անոր սոցիալական դիմագիծը:

Հարցը ընդհանուր գաղութահայության մասին այս կերպ դնելե վերջ մենք կփորձենք այս առաջադրած մեթոդով ներկայացնել Բեռլինի փոքրիկ հայ գաղութը:

II. Գերմանիա՝ որպես գաղթավայր օտար տարրերու

Մի երկիր, ուրկե պատերազմեն առաջ տեղական ժողովուրդի պրոլետարացման պատճառով հարյուր հազարավորներ Հյուսիսային և Հարավային Ամերիկաները կգաղթեին սովահարութենե չմեռնելու համար, հասկանալի է բոլորովին, որ օտար տարրերու իբրև գաղթավայր ծառայելու ո՛չ մի հարմա-

թություն կրնար ներկայացնել: Նոր գաղթողը ո՛չ կրնար հող ստանալ (ինչպես այդ պատահած է 1860-ական թվականներուն Ամերիկայի համար) և ո՛չ ալ կրնար աշխատանքի շուկայի վրա հույս դնել: Ուրեմն արտադրության երկու ազդակները՝ աշխատանքն ու հողը, ո՛չ մի հարմար պայման կներկայացնեն որևէ նոր գաղթողի համար:

Ի՞նչ կերպ էր դրված հարցը կապիտալի, մասնավորաբար հայ կապիտալի համար:

Պետք է զանազանել այստեղ կապիտալի տեսակներեն առևտրական և արդյունաբերական կապիտալները:

Առևտրական հայ կապիտալը ավելի պատեհություններ ունի հաջողության, քան արդյունաբերական կապիտալը: Հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչները, ավելի մոտեն ճանչնալով արևելյան ժողովուրդներու պահանջները և ավելի ձեռնտու կապեր հաստատելով այդ շուկաներու հետ, ունին հաջողության հավանականություններ: Ներքին շուկայի վրա հայ առևտրականը, ունենալով իր տնտեսական կարիքներուն բավարարման ավելի նվազ պահանջներ, մի կերպ կրնա ապրվիլ: Մինչդեռ երկրի արդյունաբերության մեջ հայ կապիտալը ո՛չ տեղական կապիտալի հետ մրցելու ուժը և ո՛չ ալ անոր բարդ մեքենային համապատասխան պատրաստությունը ունի:

Այս հետևությունները տնտեսական, բնականոն պայմաններու մասին են: Համաշխարհային պատերազմն իր հետևանքներով Գերմանիո տնտեսական կյանքի մեջ առաջ բերավ անարխիա, որը մինչև օրս ալ կշարունակվի: Իհարկե, այդ պայմաններու մեջ թե՛ արտադրության ազդակները և թե՛ կապիտալը դրվեցան նոր պայմաններու մեջ: Ի՞նչ կերպ անդրադարձան այդ պայմանները գոյություն ունեցող փոքրաթիվ հայ գաղութի տնտեսական կյանքի վրա:

III. Բեռլինի հայ գաղութի տնտեսական դրությունը

Վերև ըսվածներեն կհետևի, որ Գերմանիա հայկական համախմբումներ կրնան ըլլալ միայն առևտրական և արդյունաբերական կենտրոններ: Եվ իրապես Բեռլին՝ իբրև կենտրոնը Գերմանիո առևտրական և արդյունաբերական կյանքի, հայ գաղութի ամենամեծ համախմբումը կներկայացնե:

«Գաղութահայ» բառի տակ պետք է հասկանալ երկու խմբավորում, նախ այն մասը, որ ունի որոշ զբաղում և տնտեսական կապերով կապված է իր ապրած երկրի հետ, և երկրորդ՝ այն մասը, որ շարժական է. վերջին խմբավորման մեջ կմտնեն ուսանողները և այնպիսիները, որոնց մնալը կամ հեռանալը կախում ունի արտաքին պայմաններու փոփոխություններեն:

Բեռլինի հայ գաղութի վերջին տասնամյակի կյանքը ցույց տվավ, որ անոր մեջ շարժական խմբավորումը մեծ տեղ կբռնե: Այս հանգամանքը կու-

գա բոլորովին հաստատել օտար տարրերու համար Գերմանիո տնտեսական պայմաններու մասին մեր ըսածները: Այսպես՝ պատերազմեն առաջ հայ ուսանողությունը եղած է Բեռլինի գաղութի մեջ կյանք ստեղծողը: Իսկ պատերազմի պատճառով հեռացած և տարած է իր հետ այդ կյանքը: Մնացած փոքրաթիվ հայերը, որոնք գիտեցած են նպաստավորվիլ պատերազմի անբնականոն դրութենեն, դարձած են խանութպաններ, իսկ ոմանք կրցած են նույնիսկ ծխախոտի ֆաբրիկներ բանալ: Պատերազմին հաջորդող դրամի անկման անբնականոն շրջանին շարունակված է այդ դրությունը: Սկսած են նոր ուսանողներ գալ: 1922 թվին Պոլսեն և Իզմիրեն սկսած է նոր հոսանք: Այդ թվականին վիճակագրական ոչ մի ստույգ թիվ կա. մասնավորներու գնահատման համաձայն՝ այդ թիվը եղած է մոտավորապես 1000 հոգի: Այդ մասը Բեռլին ապրեցավ մի տարի և թերևս մի որոշ ժամանակ ևս ապրեր, եթե Գերմանիո տնտեսական դրության մեջ նոյեմբերյան հեղաշրջումը առաջ չի գար՝ դրամի կայունություն և ասոր հետևանք հանկարծական թանկություն: Շարժական այդ հոծ բազմության մեջ մասը գաղթեց Ֆրանսա, իսկ մեկ փոքր մասը՝ Բելգիա:

Այժմ մեր ձեռքի տակ կան բեռլինաբնակ 130 հայերու հասցեներ: Այդ հասցեներու ցուցակը չէ կարելի լրիվ համարել: Եթե նկատի ունենանք, որ անոնցմե 40-45-ը ամուսնացածներ են, և միջին հաշվով, եթե 3 հոգի նկատենք յուրաքանչյուր ընտանիք, կստանանք գաղութի մեջ մոտավորապես 220-235 հոգի: Համաձայն մասնավորներու գնահատության՝ այդ թիվը կհասնի մինչև 300-ի:

Շատ բնորոշ մի երևույթ է, որ Բեռլինի հայ գաղութը բացառաբար ծխախոտի գործով կպարապի: Ճնշող մեծամասնությունը կա՛մ ծխավաճառներ են, կա՛մ ունին ծխախոտի ֆաբրիկներ: Արդյունաբերական ուրիշ որևէ ճյուղի մեջ ո՛չ մեկ մասնակցություն ունին: Ասկե վերջ կուգան արտածման գործով պարապողներ, պաշտոնյաներ և ազատ պրոֆեսիոն ունեցողներ: Բանվորությունը կկազմե շատ չնչին տոկոսը: Ուսանողության թիվն է մոտ 20: Կա տակավին որոշ մեկ մաս, որ շարժական կարելի է համարել:

Դրամական կայունության հաջորդող տնտեսական տագնապը վտանգած է մեծագույն մասի տնտեսական դրությունը. հատկանշական է, որ ծխախոտի արդյունաբերությամբ պարապողները ամենեն ավելի վտանգված են: Կան անհատներ, որոնք դրամական անկման շրջանին գնած են տուներ, և այժմ կապրին այդ տուներեն ստացած վարձքովը:

IV. Գաղութի սոցիալական կազմը և անոր դիրքը Խորհրդային Հայաստանի հանդեպ

Ինչպես ցույց կուտա գաղութի հայերու տնտեսական պարապմունքը, անոնք կներկայացնեն առավելապես մանր բուրժուական հոգեբանություն:

Գաղութը իր ծոցեն չէ հայտնաբերած ո՛չ մի քաղաքական կազմակերպություն: Այլազան վայրերե համախմբված դաշնակցականները գաղութին մեջ դուրս չեն եկած գործելու իրենց կուսակցության անունով: 1923 թվին ուսանողությունը հայտարարեց, թե կանգնած է խորհրդային պլատֆորմի վրա: Ուսանողության այդ հայտարարությունը վրդովմունք առաջ բերավ տեղվույն դաշնակցականներուն մեջ: Այդ հասկանալի էր, որովհետև անոր գործունեության դաշտը Եվրոպայի ուսանողական քաղաքներու մեջ եղեր է անցյալեն ի վեր ուսանողական շարքերու մեջ: Համահավասար ուժեր ներկայացնող այս երկու հոսանքներեն դուրս գտնվող գաղութահայության դեմքը հայտնի չէր մինչև վերջերս: Ուսանողությունը ներքնապես կազմակերպվելե վերջ բացորոշ հրապարակ իջավ:

Երկու երևույթներ:

Ուսանողության կողմե հրավիրված առաջին գաղութային ժողովին մեջ այդ երկու հոսանքները առաջին անգամ ճակատեցան, և այնտեղ պարզվեցավ երկու հոսանքներու քաղաքական աշխարհայացքը:

Ուսանողության կողմե հրավիրված երկրորդ ժողովի մեջ կազմվեցավ ՀՕԿ-ի Բեռլինի մասնաճյուղը: Ընդունվեցավ հետևյալ թեզիսը.

«ՀՕԿ-ի անդամ կրնան ըլլալ միայն անոնք, որոնք բարեկամ են խորհրդային կառավարության, և ան կճանչնան Հայաստանի իբրև միակ օրինավոր կառավարությունը»:

Ավելի հատկանշական էր երկրորդ երևույթը: Բեռլինի հայ գաղութը մինչև վերջերս անտարբեր էր Հայաստանի խորհրդայնացման տարեդարձերուն:

Այս տարի Հայաստանի խորհրդայնացման տարեդարձը տոնվեցավ մասնակցությամբ Բեռլինի հայ գաղութի, Խորհրդային Միության և խորհրդային կարգերու բարեկամ ուսանողության:

Օրվան տոնի պատմական նշանակության մասին զեկուցող ընկերներու և ողջույնի խոսքերե վերջ ժողովը ընդունեց հետևյալ ողջույնի հեռագիրը.

«Բեռլինի հայ գաղութը, Խորհրդային Միության ուսանողության և խորհրդային իշխանության բարեկամներու հետ դեկտեմբերի 1-ին տոնելով Հայաստանի խորհրդայնացման չորրորդ տարեդարձը, իր ջերմագին ողջույնները կուղարկե Հայաստանի խորհրդային կառավարության անոր քաղաքական, տնտեսական և կուլտուրական ճակատներու վրա կատարած նվաճումներու համար: Այս ուղին կգտնե միակ ճշմարիտը հայ ժողովրդի բարգավաճման համար և կմաղթե հաջողություն նույն ուղիով խորհրդային իշխանության առաջիկայի նորանոր նվաճումներու համար»:

Գաղութը արդեն սկսած է շարժիլ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵՆ: ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՇԵՐՏԱՎՈՐՈՒՄԸ
(էջ 15)

Գրված է 1920-1922 թվականների ընթացքում Բեռլինի համալսարանի քաղաքատնտեսության ֆակուլտետում ուսանելու տարիներին: Իր «Die soziale Gliederung des armenischen Volkes im Mittelalter» («Սոցիալական շերտավորումը միջնադարյան Հայաստանում») խորագիրը կրող դոկտորական ատենախոսության մի ընդարձակ հատվածն է:

Լույս է տեսել 1922 թվականին Վիեննայում հրատարակվող «Արեգ» գրական-գիտական ամսագրում (Ա տարի, N 2, էջ 125-130, N 5, էջ 315-322, N 7, էջ 440-448, N 10, էջ 631-640, N 11, էջ 699-704): Ատենախոսությունը ավելի ուշ որպես մենագրություն լույս է տեսել Լայպցիգում (1927, 116 էջ):

Արտատպվում է «Արեգ»ամսագրում լույս տեսած թարգմանությունից:

ԱՐԱԲՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՎԱՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
(էջ 52)

Գրված է 1927 թ. Երևանում: «Սոցիալական շերտավորումը միջնադարյան Հայաստանում» իր ավարտական շարադրանքի մի ընդլայնված հատվածն է:

Լույս է տեսել «Երևանի պետական համալսարանի գիտական տեղեկագրում» (1927, N 2-3, էջ 319-348):

Արտատպվում է այս հրապարակությունից:

ԱՐԱԲԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԵՎ ԳՅՈՒՂԻ ՄԻՋԵՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
(էջ 80)

Գրված է 1927 թ. մայիսին Երևանում: Նախապես զեկուցվել է նույն թվականի մարտի 26-ին և ապրիլի 9-ին ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի պատմական-հասարակագիտական բաժնում: Այնուհետև լույս է տեսել «ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի տեղեկագրում» (1927, N 2, էջ 180-202; 1928, N 3, էջ 3-38):

Արտատպվել է այս հրատարակությունից:

ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ X ԴԱՐՈՒՄ
(էջ 142)

Գրված է 1928 թ. հունիսին Երևանում: Լույս է տեսել «Երևանի պետական համալսարանի գիտական տեղեկագրում» (1928, N 4, էջ 83-105):

Արտատպվում է այս հրատարակությունից:

СОСТОЯНИЕ АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ
(էջ 166)

Գրված է 1930 թ. Երևանում: Նախապես որպես զեկուցում կարդացվել է 1928 թ. դեկտեմբերի վերջին Մոսկվայում հրավիրված մարքսիստ-պատմաբանների համամիութենական առաջին կոնֆերանսում: Այնուհետև լույս է տեսել «Труды первой всесоюзной конференции историков-марксистов» ժողովածուում (т. I, Москва, 1930, стр. 469-481):

Արտատպվում է այս հրատարակությունից:

ՀԱՅ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՆՑԵՊՑԻԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ
(էջ 179)

Գրված է 1931 թ. Երևանում: Լույս է տեսել գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական, տնտեսական և գիտական «Նոր ուղի» ամսագրում (1931, N 3, էջ 73-90):

Արտատպվում է այս հրատարակությունից:

ՎԵՐՋԻՆ ՏԱՄՆԱՄՅԱԿԻ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
(էջ 199)

Գրված է 1932 թ. Երևանում: Լույս է տեսել «ՀԽՍՀ մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տեղեկագրում» (1932, N 1, էջ 15-61):

Արտատպվում է այս հրատարակությունից:

ԱՌԱՋԱԲԱՆ
(էջ 251)

Գրված է 1933 թ. մայիսի 28-ին Երևանում: Լույս է տեսել որպես առաջաբան պրոֆ. Աստվածատուր Խաչատրյանի՝ «Հայաստանի սեպագրական շրջա-

նի քննական պատմություն (հիմնված արձանագրական տվյալների վրա 3000-600 նախքան մ. թ.) մենագրության» (Երևան, 1933, էջ III-VII):

ԱՌԱՋԱԲԱՆ
(էջ 255)

Գրված է 1934 թ. օգոստոսին Երևանում: Լույս է տեսել ՀԽՍՀ կուլտուրայի պատմության ինստիտուտի կողմից հրատարակված, Ֆիրդուսու ծննդյան հազարամյակին նվիրված ժողովածուում (տե՛ս «Ֆիրդուսի», ժողովածու, Երևան, 1934, էջ V-VII):

Արտատպվում է այս հրատարակությունից:

ԱՐՏԱՇԱՏԻ, ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ԵՎ ԴՎԻՆԻ ՊՐՈԲԼԵՄԸ
(Մի խնդիր պատմական Հայաստանի ֆեոդալիզմի վաղ շրջանից)
(էջ 258)

Գրված է 1934 թ. հունիսին Երևանում: Լույս է տեսել ՀԽՍՀ կուլտուրայի պատմության ինստիտուտի «Աշխատությունների» Ա հատորում, Երևան, 1935, էջ 55-84):

Արտատպվում է այս հրատարակությունից:

ԳԵՂԱՐԴԱՁՈՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՊԵՂՄԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
(էջ 290)

1932 թ. նոյեմբերին որպես զեկույց ներկայացվել է ՀՍԽՀ կուլտուրայի պատմության ինստիտուտի նախագահության նիստում: Լույս է տեսել նույն ինստիտուտի «Աշխատությունների» Ա հատորում (Երևան, 1935, էջ 129-133):

ՆԵՐԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅ ԱՐՇԱԿՈՒՆԻ
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ (330-387 թթ.)
(Պատմական Հայաստանի բաժանումը Սասանյան Պարսկաստանի
և Բյուզանդիայի միջև)
(էջ 295)

Գրված է 1936 թ. Երևանում: Լույս է տեսել «ՀՍԽՀ պատմության և գրականության ինստիտուտի տեղեկագրում» (1936, N 1, էջ 47-80):

Արտատպվում է այս հրատարակությունից:

ԱԲՈՒ ՅՈՒՍՈՒՖ ՅԱԿՈՒԲ: ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԳԻՐՔԸ
(«Կիտաբ էլ-խարաջ»)
(էջ 322)

Գրված է 1937 թ. Երևանում: Նախապես զեկուցվել է ՀԽՍՀ պատմության և գրականության ինստիտուտի պատմության բաժանմունքի՝ 1936 թ. հունվարի 11-ի նիստին: Լույս է տեսել «ՀՍԽՀ պատմության և գրականության ինստիտուտի տեղեկագրում» (1937, N 2, էջ 143-170):

Արտատպվում է այս հրատարակությունից:

ՆՅՈՒԹԵՐ ԿՈՎԿԱՍԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ
(Կովկասը XIX դարու կիսուն՝ Հաքստհաուզենի կողմե ներկայացված)
(էջ 347)

Գրված է 1923 թ. Բեռլինում: Լույս է տեսել գրական, գիտական, հասարակական «Արեգ» երկշաբաթաթերթում (Բեռլին, 1923, N 3, էջ 177-189, N 4, էջ 231-240):

Արտատպվում է այս հրատարակությունից:

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԱՐԵՎԵԼՔԻ ՄԵՋ
(պրոֆ. Հեոզի բանախոսության առիթով)
(էջ 368)

Գրված է 1924 թ. Բեռլինում: Լույս է տեսել «Արեգ» ամսագրում (Վիեննա, 1924, N 1, էջ 25-28):

Արտատպվում է այս հրատարակությունից:

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ
Ալ. Մարտունի (Ալ. Միասնիկյան), Կուսակցությունները գաղութահայության մեջ, Թիֆլիս, 1924
(էջ 371)

Գրված է 1924 թ. Բեռլինում: Լույս է տեսել «Արեգ» ամսագրում (Վիեննա, 1924, N 18, դեկտեմբեր, էջ 1145-11470):

Արտատպվում է այս հրատարակությունից:

ԲԵՌԼԻՆԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ
(էջ 373)

Գրված է 1924 թ. Բեռլինում: Լույս է տեսել «Արեգ» ամսագրում (Վիեննա, 1924, N 17, նոյեմբեր, էջ 1069-1073):

Արտատպվում է այս հրատարակությունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հակոբ Զորյան. մարդը, քաղաքացին և հայրենասերը - Պ. Հ. Հովհաննիսյան 3

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵՆ: ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՇԵՐՏԱՎՈՐՈՒՄԸ 15

1. Հայաստանի նախաբնիկները 15

2. Ընդհանուր ակնարկ 20

3. Ազնվականություն 28

4. Կղերականություն 37

5. Անազատներու դասը 46

ԱՐԱԲՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՎԱՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 52

ա. Օմայադների շրջանը 59

բ. Աբբասյանների շրջանը 62

գ. Բագրատունիների շրջանը 69

ԱՐԱԲԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԵՎ ԳՅՈՒՂԻ ՄԻՋԵՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ 80

I. Արաբական նվաճումի անդրադարձումը ֆեոդալական հողատիրության փոխհարաբերությունների վրա 81

II. Քաղաքների բարգավաճումը 92

III. Արհեստավորական արտադրությունը ֆեոդալական Հայաստանի ապրանքափոխանակության շրջանում 105

IV. Առևտրական և վաշխառուական կապիտալ 122

ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ X ԴԱՐՈՒՄ 142

СОСТОЯНИЕ АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ 166

ՀԱՅ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՆՑԵՊՑԻԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ 179

ՎԵՐՋԻՆ ՏԱՄՆԱՄՅԱԿԻ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 199

ԱՌԱՋԱԲԱՆ 251

ԱՌԱՋԱԲԱՆ 255

ԱՐՏԱՇԱՏԻ, ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ԵՎ ԴՎԻՆԻ ՊՐՈԲԼԵՄԸ 258

ԳԵՂԱՐԴԱՁՈՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՊԵՂՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 290

ՆԵՐԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅ ԱՐՇԱԿՈՒՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ (330-387 ԹԹ.) 295

ԱԲՈՒ ՅՈՒՍՈՒՖ ՅԱԿՈՒԲ. ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԳԻՐՔԸ («Կիտաբ էլ-խարաջ») 322
Հեղինակն ու «Կիտաբ էլ-խարաջի» նպատակը 322
Խալիֆաթի ֆինանսական միջոցները 326

Հավելված
ՆՅՈՒԹԵՐ ԿՈՎԿԱՍԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ (ԿՈՎԿԱՍԸ XIX ԴԱՐՈՒ ԿԻՍՈՒՆ՝ ՀԱՔՍՏՀԱՈՒՋԵՆԵ ԿՈՂՄԵ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ) 347
I. Հայաստան 347
II. Վրաստան և Ադրբեջան 359

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԱՐԵՎԵԼՔԻ ՄԵՋ (ՊՐՈՖ. ՀԵՈՋԻ ԲԱՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ) 368

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 371

ԲԵՌԼԻՆԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ 373

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 377

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱԿՈԲ ՁՈՐՅԱՆ

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համակարգչային ձևավորող՝ Կ. Չալաբյան
Կազմի ձևավորող՝ Ա. Պատվականյան
Հրատ. խմբագիր՝ Մ. Հովհաննիսյան

Չափսը՝ 70x100 $^{1}/_{16}$: Տպ. մամուլը՝ 24:
Տպաքանակը՝ 100 օրինակ:

ԵՊՀ հրատարակչություն

ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

Հակոբ Զորյանը ծնվել է 1894 թ. օգոստոսի 25-ին Տրապիզոն նահանգի Օրդու գյուղաքաղաքում: 1900-1908 թթ. սովորել է ծննդավայրի, իսկ 1908-1912 թթ.՝ Կ. Պոլսի Պերպերյան վարժարանում, 1919-1920 թթ.՝ Լոզանի (Շվեյցարիա) համալսարանի փիլիսոփայության, իսկ 1920-1925 թթ.՝ Բեռլինի համալսարանի քաղաքատնտեսության ֆակուլտետներում, մասնագիտացել սոցիոլոգիայի, քաղաքատնտեսության, փիլիսոփայության ու պատմագիտության մեջ: Հ. Զորյանը Ս. Թեհլերյանի հետ գործուն մասնակցություն է ունեցել Թալեաթ փաշայի սպանությանը (1921 թ. մարտի 15-ին):

1925 թ. Հ. Զորյանը Բեռլինի համալսարանում պաշտպանել է ատենախոսություն և ստացել փիլիսոփայության դոկտորի աստիճան: 1926 թ. ընտրվել է ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի թղթակից անդամ, 1931 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1925 թ. աշնանը Հ. Զորյանը հրավիրվել է ԵՊՀ և մինչև 1937 թ. համալսարանում դասավանդել Հայ ժողովրդի պատմություն և Քաղաքատնտեսություն առարկաները: 1929-1937 թթ. եղել է Հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, 1931-1937 թթ.՝ Պատմության ֆակուլտետի դեկան: 1927-1929 թթ. համատեղությամբ վարել է նաև Հանրային գրադարանի, 1932-1935 թթ.՝ Կուլտուրայի պատմության ինստիտուտի և 1936-1937 թթ.՝ Հայաստանի պատմության պետական թանգարանի տնօրենի պաշտոնները: Գործուն մասնակցություն է ունեցել մարքսիստ-պատմաբանների հանրապետական ընկերության ստեղծման (1928) աշխատանքներին, եղել նրա առաջին նախագահը: Զգալի է նրա ավանդը պատմաբան մասնագետների պատրաստման գործում:

Հ. Զորյանի ուսումնասիրությունները վերաբերում են հին և միջնադարյան Հայաստանի հասարակական-տնտեսական պատմությանը:

1937 թ. Հ. Զորյանն անհիմն մեղադրանքներով ձերբակալվել է: Վախճանվել է 1942 թ. բանտում: Արդարացվել է հետմահու:

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2014